

ԶՈՆԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅՈՑ ԳԱՂՏՆԻ ՌԻՒՏ

Պատմավեպ

Նվիրում եմ հոգով Արիական հայերին

ՅԵՂԻՆԱԿ

ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 891. 981-31 Մելիքյան
ԳՄԴ 8437-44
Մ 490

Մելիքյան Զ.
Մ 490 Յայոց գաղտնի ուխտ: Պատմավեպ /
Չոնիկ Մելիքյան.- Եր.: Յեղինակային
հրատարակություն, 2003 - 284 էջ:

«Յայոց գաղտնի ուխտ» պատմավեպում դեպքերը ծավալվում
են 14-րդ դարում, երբ Լանկ-Թամուրի հորդաները ներխուժեցին Յա-
յաստան:

Սովոր, չաղաթայների վայրագությունները օրիասի առաջ
կանգնեցրեցին հայ ժողովրդին, դրվեց ժողովրդի լինել-չինելու
հարցը:

Յայերը օրիասական ճիգեր էին գործադրում գոյատ-ելու հա-
մար, երկու ճակատամարտերում հայերը կարողացան պարտու-
թյան մատնել լանկթամուրյան հորդաներին:

Վեպում հիշեցում կա թուղթակեցիների շարժման, կրոնա-փի-
լիսոփայական գաղափարների մասին: Քրիստոնեության Էթոնիո-
գեբանական աշխարհայացքի ու գաղափարաբանության մասին:

Ի վերջո Լանկ-Թամուրի ու Թուրքիայի սուլթան Բայազետի հա-
կամարտությունը, չաղաթայների կողմից Թողթամիշ խանի դեմ մղ-
ված կռիվները ջլատեցին հորդաներին: Այդ իրադրության մեջ հայե-
րն իրենց անձնագործ կռիվներով փրկվեցին ֆիզիկական ոչնչացու-
մից:

Վեպում տեղ է տրված աշխարհասասան Լանկ-Թամուրի կեր-
պարին, նրա ստեղծած բռնապետական պետության մասնատման
ու կործանման սկզբին:

ԳՄԴ 8437-44

ISBN 99930-4-148-3

. ՄԵԼԻՔՅԱՆ ՉՈՆԻԿ
2003

«Պատմութիւն Լանկ-Թամուրայ եվ յաջորդաց իւրոց»

Պարտ է գիտել ուսումնասիրաց - բանասիրաց անձանց զի ժամանակն բաժանի յերեք՝ յանցեալն, ի ներկայն - յապառնին: Եւ վարդապետաց եկեղեցւոյ պիտոյ է վասն երից գիտելոյ. վասն անցելոյն պատմել, վասն խօսիլ, վասն ապագային իմանալ - զգուշացուցանել: Նմանապէս - մեզ պարտ է սակավ մի համառօտաքար վասն ներկայիս, զոր ի մերում ժամանակիս եղեւ, պատմել, զոր չար թագաւորքն անհաւատք Արեւելից կորուստ բերին Յայկագեան սեռիս ի վերջին ժամանակիս, - ամենայն օտարացեղ ազգաց ցուցանել...

Թռվմա Մեծոբեցի

* * *

Արաքսը հեղեղվել էր:

- Դո՞ւմ, դո՞ւմ, դո՞ւմ,- զարկում էին գուշերը: Ոնզային ոռնում էին կառնայները: /Գուշ-մեծ թմբուկ, Կառնայ-երկար, լայնաբերան շեփոր/:

Սարսափով հեղեղվել էր Յայոց գետը:

Վյդ աշխարհի տիրակալ Լանկ Թամուրի գորքերն են գետանցում Արաքսը - ճար ու հնար չկա դեմն առնելու:

Չաղաթայ զինվորները աշխարհ տիրած, աշխարհի երեսին թքած, նա- իրիուալով գետն են անցնում: Ասում են՝ Չաղաթայը /Չաղաթայ են կոչել ի պատիկ Չինգիզ խանի որդի Չաղաթայի/ դեռ չծնված զինվոր է, հարկ չկա նրան սովորեցնել սպանելու արհեստը:

Չինվորների հետ-ից գալիս է հսկա գումակը՝ դատարկ սայլեր են, որ պիտի բեռնվեն Յայոց աշխարհից հանված թալանով:

Սայլերի ճռճռոցը, ավագների խռպոտ հայիոյանքները, սառ ջուր մտած ձիերի խրխինջն ու վրնջոցն աններդաշնակ աղմուկով լցրել են շրջապատը:

Մարդիկ իրար չեն լսում, - հարկ չկա լսելու, քանզի աշխարհն է լսում տիրակալին: Բավական է նրա իրամանը՝ մի մարդու նման նետ-վում են սպանելու, թալանելու:

Լանկ Թամուրը կանգնել էր բլրակին, նժույգն ասես տեղյակ էր հեծյալի խոհերին, անշարժացել էր, չեր խանգարում տիրոջը խորհելու:

Գարնանային սառը քամի էր փչում, սակայն տիրակալը չեր մրսում: Նա դամասկոսյան նուրբ օղազրահի վրայից ուղտի բրդից չեք-մեն է հագել: Տիրակալի հայացքը սառն էր, այն սաստում ուներ իր մեջ, չի ժպտում տիրակալը, սակայն ո՞ր տիրակալն է սիրում ժպտալ, ժպի-տը մտերմություն է տրամադրում, իսկ Թամուրին կույր հնազանդություն է պետք, սառն է Թամուրի հայացքը:

Զանի-քանի երկրներ է տիրել, իր զինվորների հետ անցել է ավերելով ու այրելով, սակայն նայում է նրանց ու չի հիշում անունները: Նրա

համար անուն չունեն գիւղորները: Դա ոյուրին է դարձնում նրանց մահվան ուղարկելը: Զինվորը ի՞նչ, զինվորը կտրող, խոցող սուր է միայն, միայն այդքան, այլ կերա չի խորհում տիրակալը:

Իսկ սրանց ամենքին էլ գիտե, սրանք նրա մտերիմներն են. զորավարները, մերձավորները, ահա Շահ Մելիքը, Զինգիզհան Սուլթան Մահմեդը, Իբրահիմ Խանը, Շեյխ Նուր-Ադինը, Սուլեյման շահը, իշխաններից Շահապը, Սահրեդինը. Մեհմետինը, Թաճիրեթը, Ահմադը, Ուլյուկբեկ թոռը, Խալիլ շահն ու Էլի Եր-Ելիներ, որ կանգնել են մի քանի քայլի վրա՝ պատրաստ կատարելու նրա հրամանները:

Մռայլվել է տիրակալը, իսքև Էլ չգիտե դժգոհության պատճառը, հասու չե: Մի՞թե սա հզոր երկիր է, մի՞թե բանակներ են դեմ ելնում, բնավ, իցիվ ճակատեին մի հարվածով վերջ կտար, սակայն դեմ ելնող զորքեր չկան, սակայն կան բերդեր, ամրոցներ, դիմադրում են: Օրպակաս մարդիկ են այս հայերը, կրվում են մինչ-վերջին շունչը, մինչ-վերջին սուր բռնողը: Ի՞նչ է, հասո՞ւ չեն, որ փրկություն չկա, կուրացե՞լ են, խլացել: Չե՞ն տեսնում, որ զորքերս հեղեղել են երկիրը:

Ճանկարծ զգաց, որ գետին և այելով, կտրվել է գետից, զորքերից, մեծամեծներից: Գետը հուշերը ետ է գլորել, իրեն քեշում է տեսնում, ծննդավայրում՝ Մավրինահրամ, Օքսուզ գետի ափին:

Ջիշ մնաց հռհռար, հիշեց այս գուշակությունները, որ կապում էին նրա ծննդյան հետ, իբր- գետինը ցւցվել է, երկինքից երկու արևոտ ձեռքեր են հայտնվել, ասել է թե՝ նա կամ ոստիկան պիտի դառնա կամ ավազակ:

«Դարձա Էլի: Քաղցած էի, ոչխար գողացա՝ նետահարեցին: Վերքս դեռ չի սպիացել, կսկծում է: Անիծյալ հովիվը թույնել էր նետը: Ազադարձա ախոռապետ, ամուսնացա թագավորի քրոջ հետ,- զարմացավ,- անիծյալ գետ, հիշել է ստիպում: Յա՛, կնոշս սպանեցի, փախա,- նորից նայեց գետին, որ ս-ացել էր բյուրավոր սմբակների տակից պոկված տիղմ ու ավազից,- դարձա սպարապետ, դավեցի, սպասիր, սպասի՛ր, ի՞նչ դավ, այդպես էր պետք: Ես հաղթեցի, հաղթողն արդար է Ալլահը վկա: Տիրեցի Օքսուզ գետի երկրներին: Միացա Ալի Շիրինին, գնացի Բադարիսշանի վրա...»:

- Ի՞նչ կա,- կտրվեց խոհերից, խոժոռ նայեց Շահ Մելիքին:
- Տիրակալ, հեծելազորն անցավ, բարի նշան է, հետիոտն ու սայլերն են անցնում:

- Լավ է,- մօմօացրեց Լանկ Թամուրը, մոռացավ Շահ Մելիքին:

«Ինչի՞ վրա կանգ առա, հա, հասա Բադարիսշան՝ հաղթեցի: Այդ օրվանից իմ առաջ բացվեց փառքի ճամփան: Ես սովորեցի հաղթել ոչ միայն մարտի դաշտում: Յաղթանակը սովորական դարձավ ինձ համար,- հանկարծ հիշեց թողթամիշին, - անախորժեց, դարձավ Շահ Մելիքին:

- Թո՞ղ աճապարեն,- գոռաց, զարմացրեց Շահ Մելիքին, նորից հու-

շերի հորձանուտը մտավ, զայրացավ: Նա չէր կարող անպատճ թռողնել թշնամուն: Ամենքն էլ պիտի կործանվեն նրա ճանապարհին, սակայն չեմ կարող զարկել Թողթամիջին, զորքերը հոգնել են... Այն ժամանակ թշնամացանք են ու Ալի Շիրինը՝ սպասեցի նրան: Չամբիկի հոտից խենթացած հովատակ էր Ալին, սակայն նա ծնվել էր Ենթարկվելու համար, իսկ նա հանդգնեց դեմ խոսել մեզ: Ինչպես երկար տարիներ խորհել էր սեփական անձի մասին՝ Մենքով... Ալլահը մեզ աշխարհ է ուղարկել տիրելու: Դա է մեր առաքելությունը,- հուշերը եկան շարե-շարան, գրաված քաղաքները՝ Խորեզմ, Սամարղանդ, Դամասկոս, Բուխարա: Ճանկարծ հիշեց գլխատված թագավորներին՝ տասնութ թագավոր էր գլխատել: Թվաց, թե կարող էր նորից հոհուալ,- Օ՛, Ալլահ, կյանքս հիշում եմ պատերազմներով, սպանություններով... իմ մեծամեծներից շատերը արյուն չեն սիրում,- Գլուխը թափ տվեց, դարձյալ հիշեց սպանված թագավորներին,- ո՞վ է աշխարհի մեծերից այսքան թագադիր գլուխներ կտրել: Ո՞չ ոք, անգամ Ալեքսանդր Երկեղութը չէր կարող այսքան գլուխներ կտրել՝ թագադիր գլուխներ... Այո, փառապանծ ճանապարհ եմ անցել,- կապ ընկավ,- ինչպե՞ս թե անցել,- կատաղեց, ուզեց թքել գետի մեջ, որ իրեն այդպիսի հուշեր էր հուշում: Ես, ես, ոչ՝ Մենք դեռ միայն կես ճանապարհ ենք անցել: Մենք դեռ ի հաճույս մեզ ու ի հեճուկս աշխարհի, երկար ճանապարհ կանցնենք, թող տնքան ճամփաները մեր նժույգի սմբակների տակ... Ասում են՝ այս հայերը անհանգիստ ժողովուրդ են»: Նայեց Շահ Մելիքին:

- Կանչել տուր պատմիչ Շամսետինին: Նա պիտի որ իմանա սրանց պատմությունը,- նայեց զորքերին, դարձյալ չտեսավ զինվորներին, աչքերին զանգվածներ էին եր-ում, հուշերը վարագուրել էին առջ-ում փուկած տարածքը, կորցրեց ժամանակի զգացողությունը: Դարձյալ հիշեց անցած-գնացած այն օրը, երբ մենակ ընկած էր փոսի մեջ, չէր կարողանում պոկել ազդրին ցցված նետը:

- Օ՛ֆ,- ասես նորից վերապրեց այս հրեշավոր ցավը, երբ նետի հետքաշեց, պոկեց մկանից մի կտոր: Մինչ՝ օրս վերքը թարախակալում է, կաղում է՝ աշխարհին հայտնի է կաղ Թամուր անունով...

- Տիրակա՞լ, Շամսետինը եկավ,- ասաց Շահ Մելիքն ու տեղը զիշեց պատմիչին: Սա իր այծային մորուքով, սպիտակ խալաթով առանձնանում էր մասցածներից: Պատմիչը ճանաչել էր տիրակալի հորը, թեր-սդա էր պատճառը, որ հանդուրժում էր ծերունու անկախ պահվածը, հակառակ պարագայում՝ կպատժվեր, քանզի նրա համար հեղինակություններ գոյություն չունեին: Նա էր երկրի վրա Ալլահի փոխանորդը, մասցածները մի՞թե մարոիկ են...

- Երեկ բաներ էիր խոսում այս երկրի, ժողովորի մասին, կրկնի՞ր:

- Տիրակալ, հայերը, այսպես են կոչում իրենց քնիկները, մենք՝ օտարներս, նրանց կոչում ենք արմեններ՝ Ղրմենիա-Ճայաստան անունով: Հայերը շինարար ժողովուրդ են, սակայն նա- կրվել գիտեն...

- Սպասիր, ի՞նչ կռվող, երբ ծնվել են Բայազետի լծի տակ,- արհամարիանքով ասաց Թամուրը,- մենք զորքեր չենք տեսնում դեմ ելնող: Ասում ես՝ կռվող, ասել է թե հայերը հոգում հաշտվել են ստրկության հետ...

- Տիրակալ, այն, ինչ կասեմ, թեր-ս զարմացնի քեզ, նա- մյուս լսողներին, Յայաստան Լեռնաշխարհը արիական ազգերի օրրանն է, հայերը՝ արիական նախահայրերը,- խոր շունչ քաշեց,- դու չես մոռացել շեյխ Ամարի պատմությունը արիների մասին,- տեսնելով Թամուրի զարմացած հայացքը, շարունակեց,- այո՛, այո՛, հենց իսկ այդ արիները ծնվել են Յայաստան Լեռնաշխարհում, ապա իրենց մարտակառքերով, երկաթյա սրերով հողմի պես տարածվել են աշխարհի չորս ծագերը, տիրել են աշխարհներ, տարածել են իրենց Արիական հավատքը...

- Այո, հիշում ենք շեյխ Ամարի պատումը արիների մասին, սակայն նա չասաց արիների օրրանի մասին: Այո՛, զարմացած եմ, նա- ուրախ, որ կարող եմ ինազանդեցնել այդ հզոր, երբեմսի հզոր ժողովրդին,- զայրացավ,- լինելով արիական, ինչպե՞ս են հաշտվել ստրկության հետ...

- Տիրակալ,- Շամսետինը շոյեց մորուքը,- հայերը արիական հզոր արքաներ են ունեցել, հզոր թագավորություն, ահռելի բանակներ, տիրել են հար-ան երկրներին, նրանց տարածքները ողողել են երեք ծովերը: Նրանց արքաները կրել են արքայից արքայի տիտղոսը...

- Պատմիչ, - այդ ամենից հետո ծվարել են Բայազետի ծնկի տակ, հասու չեմ, ի՞նչ եղավ նրանց արիական հզոր Ոգին, ինչո՞ւ այդչափ տկարացան,- մտրակով զարկեց ոտքին,- արիական հզոր ժողովուրդ են եղել ու չեն զորել պահելու իրենց թագավորությունը: Տե՛ս է, կռվել են Յանմի ու Պարսկաստանի դեմ, որպես հավասարը հավասարի, իսկ արդ, Շամսետին, պարզիր մեզ այս պարագան, ո՞րն է պատճառը այս նվաստացման...

Մեծամեծները պետք մոտեցան տիրակալին ու պատմիչին: Չրուցը նրանց էլ հետաքրքրեց: Ամենքն էլ մեծ իմաստաներ եին համարում Շամսետինին, իսկ այսօր, ինչպես եր-ում է, դա հաստատում է նա- տիրակալը, քանզի այդքան հետաքրքրված է նրա պատմությամբ հայերի մասին: Նրանց էլ Յայաստանը նոր լուսի տակ դիտվեց: Ասես լեռներն ավելի խրոխտացան, գետերը փրփրադեզ ալիքներ ափ նետեցին:

- Տիրակալ, հայերը երեքհարյուրական թվականներին ճակատագրական սխալ թույլ տվեցին, ընդունելով քրիստոնեությունը: Այդ օրվանից հայերը ուժագրկվեցին, դարձան հարկատու, զրկվեցին անկախությունից, ապա դարեր անց, նա- թագավորությունից: Քրիստոնեությունը մեղմություն, ներողամտություն է քարոզում: Նրանց աստծո պատգամներով անգամ թշնամուն պետք է ներեն...

- Այո՛,- մռմռացրեց տիրակալը,- այդ է պատճառը այսօրվա վիճակի: Ուկուկբեկը ցանկացավ մոտենալ պատմիչին ու հարցեր տալ նրան, սակայն խոսեց տիրակալը, լռեցին:

- Յայերը գեղեցիկ քաղաքներ ունեն, հարկ է սրանց արհեստավորներին քշել Սամարդանդ, թող մեզ համար կառուցեն: Յա, ի՞նչ է այս դաշտի անունը, հարկավ գիտես, քանզի դրանով ես հացդ վաստակում - ոչ միայն հորս ճանաչելով,- այս խոսքերի վրա ծիծաղեց:

Մեծամեծները ժպտացին, ավելին անելը անհմաստ համարեցին, անգամ վտանգավոր: Նման պարագայում հօհօացող մեկի վրա զայրացել էր տիրակալը:

- Ի՞նչ ես հովատակի պես երախոդ բացել,- գոռացել էր այդ մարդու վրա:

- Դու ոչինչ չասացիր վաճառականների մասին: Ե՛, ծերանում ես, Շամսետին,- անկախ իրենից խորհեց ծերության մասին, ապա ետ մղեց այդ դավաճանական միտքը, քանզի իրեն հզոր էր զգում, որպես զորական, նա-՝ որպես այրմարդ:

- Դաշտը կոչվում է Շարուր, իսկ այս մեծ երկիրը՝ Այրարատ, ի պատիվ այս հսկա լեռան: Դաշտը բարեբեր է...

- Իրոք, դաշտը մեծ է, տեղեկացել ես, ցրտաշո՞ւնչ են ձմեռները,- տեսավ, թե ինչպես լարվեցին մեծամեծները, քչփչացին: Թամուրը հասկացավ, որ նրանք հետաքրքրվում են այս տարվա ձմեռանցի վայրով:

- Ձմեռը ցրտաշունչ չէ, սակայն խոտը չի բավարարի մեր բազմբյուր հեծելազորին: Ավելին ար-ելք Արցախ աշխարհն Ե՝ Յայոց թագավորների ձմեռոցը, այստեղ կարելի է ձմեռել...

Թամուրը բարձրացրեց մտրակը, պատմիչը լռեց:

- Ի՞նչ հեծյալ է,- մտրակը ուղղեց գետին,- սուրհանդա՞կ է:

Այդ պահին մոռացավ պատմիչին, թեր-ս ոչ, քանզի Թամուրը կարողանում էր միաժամանակ խոսել, խորհել: Նա այդ ամենը ներկայացնում էր՝ որպես աստվածատուր շնորհը:

- Ես տեսնում եմ գլխանոցի փնջիկը, սուրհանդակ է,- ասաց Շահ Մելիքը: Սուրհանդակը՝ երկարամորուք մի զինվոր, ծնկեց տիրակալի առաջ:

- Խոսի՛ր, ի՞նչ լուրեր ես բերել:

- Տիրակալ, Խալիլ սուլթանը խոնարի ողջույններ է հղում Ալլահի փոխանորդին, երկար տարինների կյանք մաղթում: Յայտնում է, որ պաշարել է Ալանջիկը: Առաջին օրերին զոհեր տվեցինք: Չորավար Խալիլ սուլթանը խնդրեց քո աստվածային վճիռը՝ գրոհե՞նք, թե՞ պաշարումը պահենք միևնույն սովամահ լինեն: Չորավարն ասաց. Ալլահին հաճո կլինի զոհեր չտանք...

- Կեցցե՛ս, իմ թոռ,- ծիծաղեց Թամուրը, դարձավ Շամսետինին,- գրի՛ր, որ մեր հետևորդները իմանան ինչ խելացի թոռ ունի Եմիր Թամուրը: Չի ուզում զոհեր տալ: Իմաստուն վճիռ է հուշում մեզ՝ սովամահությամբ գրավել բերդը: Բա՞ն ունես ասելու,- մոտ կանչեց գաղտնապահ Մեհմետ Զահիրին:

Սա մոտեցավ, խոնարհվեց:

- Տիրակալ, Ալանջիկում են Զելահիյանների գանձերը: Սուլթանը գանձերի պահպանումը հանձնել է որդուն՝ Թահիրին: Թուրքերից զատ, բերդում հայ զինվորներ կան՝ նրանք կկռվեն մինչ- վերջ:

- Շատ ես նման հորդ,- քրթմնջաց Թամուրը:

«Տարօրինակ մարդիկ են Ալլահի կրոնն ընդունած օտարները: Նախկին այլադավները կաշվից դուրս են գալիս տերերին հաճոյանալու համար, սակայն Զահիրը չգիտե, որ աստծուն է երկրպագել հայրը, - իարկ ել չկա իմանա: Կան գաղտնիքներ, որոնց բացահայտումը հաճու չէր մարդկանց: Թող Զահիրը չիմանա իրենց ընտանիքի գաղտնիքը»:

Զահիրը չհասկացավ, թե ինչ էր ուզում դրանով ասել տիրակալը, սակայն ոչ մի քան չհարցրեց, կարգն էր՝ հարց կարող էր տալ միայն տիրակալը, մնացածները պիտի պատասխանեին:

- Յրաման մեր թոռանը՝ սաստկացնել պաշարումը, դադարեցնել գրոհները: Կտրել բերդի ջուրը, ճանապարհները, ոչ մի կապ դրսի հետ, - լրեց մի պահ, - թող արժանի լինի մեր թոռ կոչվելուն, - չգիտես ինչու, այդ պահին խորհեց իր ասվիճելի իրավունքի՝ մարդկանց մահու տալու իրավունքի մասին: Գոհ մնաց, - Մենք Ալլահի փոխանորդն ենք երկրի վրա, օրեն է, որ մարդկանց ճակատագրերը տնօրինենք:

- Գևա՛, - արձակեց սուրիանդակին: Սա ձին չափ գցած, գևաց դեպի գետ: Նրան երեք զինվոր էր հետ-ում: Աղվանքում մի քանի սուրիանդակ զոհ տալուց հետո տիրակալը հրամայել էր յուրաքանչյուր սուրիանդակի հետ ուղարկել երեքական պահուրդ զինվոր: «Եթե Զելահիյանների գանձերը բերդում են, հարկավ, մեծ կայազոր կունենան, բերդն ել ականջալուր եմ, անառիկ ե: Սուլթանը ընտրելու ժամանակ ե ունեցել: Որդուն ել բերդապահ է կարգել: Պատիր հույսեր, մենք կգրավենք բերդը: Քանի-քանի բերդեր են ընկել մեր ճանապարհին, - նայեց պատմիչին, խոհերը այլ հունով գևացին: Իրեն հզոր ու անպարտ զգաց, հայացքը լցվեց արհամարհանքով այս ամենի՝ այս գետի, երկրի, զորքերի, մեծամեծների նկատմամբ, քանզի իր իշխանության տակ են, կամքին ենթակա, Ալլահը նրան անսահման իշխանություն է տվել, նա՝ աստվածային առաքելություն: Նորից նայեց պատմիչին:

- Ինչո՞ւ թուրքերը Ալլահի կրոնին չդարձրեցին հայերին, թե՞ նրանց երկիրն էր պետք, առանց ժողովրդի:

Շամսետինը շոյեց մորուքը, խոսեց ոգ-որված, զարմանք պատճառելով տիրակալին:

- Յայերը ազատատենչ ժողովորդ են, չկամեցան ուրանալ իրենց աստվածներին, ոիմադարձ կանգնեցին: Մինչ այդ հայերին փորձել են իրենց կրոնին դարձնել պարսիկները, անօգուտ: Տե՛ր իմ, հայերը դարեր առաջ ուրացան իրենց բնիկ աստվածներին, կործանեցին նրանց տաճարները, ընդունեցին Զրիստոսի կրոնը: Թեր-ս, ա՛րդ, հասկացել են իրենց սխալը, - կատաղում են, երբ մի անգամ ել փորձում են այլ կրոն

պարտադրել: Երբ հայերը կանգնում են օրիասի առաջ, նրանց մեջ հառնում են արիական նախնյաց հոգիները: Ես շատ մատյաններ եմ ընթերցել, Յայոց պատմիչներից, այո՛, տիրակալ, հայերը փառապանծ պատմություն ունեն: Նրանք առաջինն են ընդունել խաչալի կրոնը: Տիրակալը զարմացավ – այդ զարմանքը ոչ հայերի անցյալին էր վերաբերում, այլ պատմիչին: Սա այնպիսի հպարտությամբ էր խոսում, ասես այդ ամենը սեփական ժողովրդին էր վերաբերում: Նա չհասկացավ, որ պատմիչի մեջ խոսում էր մարդ արարածի՝ բարձրագույն գոյի գնահատանքը: Ծամսետինը հպարտ էր, քանզի հայերի անձնագործության մեջ մարդկային նվիրում էր տեսնում:

Լինելով ազնիվ մարդ, հարգում էր հայերին:

- Սպասի՛ր, Ծամսետին, մենք անիմա չենք կրոնի գործերում, մենք ել գիտենք քրիստոնեության մասին: Առաջինը քրիստոնեությունը ընդունել են Յռոմում: Չե՞ որ դու ես պատմիչը, դու եիր այդ մասին պատմում:

- Այո՛, տիրակալ, Յռոմում ավելի վաղ են ընդունել քրիստոնեությունը առանձին մարդիկ, իսկ Յայաստան աշխարհում այն որպես պետական կրոն են ընդունել, ապա տարիներ անց ընդունել է Յռոմը, այնպես որ...

- Անմիտ, երիցս հայեր, դեռ կրվում են Զելահրյանների գանձերը փրկելու համար, որ իրենցից են խլել, երիցս անմիտ հիմարներ,- մտրակեց նժույգն ու գետը մտավ:

«Խաչալի կրոնը ընդունելուց հետո հայերը մանրացել են, դարձել հարկատու, կորցրել են թագավորությունը: Այո՛, Խաչալի կրոնը մեզ շատ ձեռնտու է, ինազանդություն է քարոզում, ներողամտություն: Եթե նրանց տիրոջ պատվիրանները ասում են՝ մի՛ սպանիր, հապա ինչո՞ւ են սպանում, ինչո՞ւ են այսքան դարեր սպանել, ասել է թե այդ պահին նրանց հոգիներում հառնում են արիական նախնիք, այսպես ասաց, կալանված մենակյացը, զարմանալին այն է, որ չեր վախենում մահից, անընդհատ խոսում էր նախնյաց փառքից, իսկ երբ ասացի, որ հալեցրած արճիճ պիտի լցնենք բերանը, մի պահ սպասեց, ապա ասաց, որ ես ել մնացած բռնակալների պես եկել եմ ու գնալու եմ, որ մնալու է Յայաստան աշխարհը, իրենց այս հսկա լեռները... Խեղճ Ծամսետին, նա հասու չե, որ իրեն դիմելուց առաջ խոսել եմ մի քանի իմաստասերների հետ... Ոչ Ծամսետինը, ոչ ել այդ վանականները հասու չեն, որ իմ կրոնը գլխիցս վեր ֆռֆռացող սուրս է, հետ-իցս եկող գորաց բազմությունը, իսկ Ալլահը,- հռհռաց,- թող հավերժ լինի նրա գահը երկնքում, այստեղ հաստատուն է իմը՝ երկրայինը... Սպասի՛ր, ինչո՞ւ եմ ինձ կաշկանդված զգում,- կողքանց նայեց Կրարատներին, որոնք դաշտի տափից վեր էին խոյանում,- թեր-ս սրանք են ճնշում: Ծամսետինն ասաց սրանք կոչվում են Կրարատներ..., - ինչպես ամեն տափաստանաբնակ, սարսռաց: Նա սովոր էր տեսնել անծայրածիր հորիզոնը, իսկ այստեղ

ամեն պահ իորիզուսը փակվում է լեռներով: Դա վախ է ծնում, անհայտություն,- եթե Ալլահը կործաներ այս լեռները, մենք մեզ ապահով կգգայինք:

Գլուխը թափ տվեց, բարձրացրեց մտրակը, սակայն չզարկեց: Նժույգը հզոր կրծքով պատռելով ալիքները, փնչացրեց, դուրս եկավ Արաքսի ձախ ափ:

* * *

- Կպրաջահեր վառեք պարիսաների վրա, զարկե՛ք զանգերը, թող մոլորյալները, նավաբեկյալները կոզի լողան: Տեր Աստված, դու հասիր նեղյալներին: Այս ինչ ահավոր թարթառ է:

Զարկեցին վանքի զանգերը:

- Չընգ, զընգ, զընգ...

Այսպիսի սովորույթ եղել է հեթանոս մեհյաններում՝ թարթառի ու ձևաբքերի ժամանակ զարկել գուշերը, շահեր վառել ճանապարհը ցույց տալու, փրկարար ձայներին կանչելու համար:

- Սրբազան, վաղուց այսպիսի թարթառ չեր եղել,- խոսեց երկնագույն աչքերով աբեղան, որ մի քայլ առաջ էր կանգնած իր ընկերներից: Թովմա աբեղան էր: Կորոշվի, շնորհունակ, ուսյալ հոգ-որ էր՝ եպիսկոպոսի աշակերտներից ամենահարգվածը: Ամենքն էլ հարգում էին թովմային, քանզի ճշմարտախոս էր, հետամուտ իմաստության ու հոգով առի, ոչ մի պարագայում չեր կորցնում իրեն- թարթառի ուժգնությունը ձմռան խստության մասին է գուժում:

- Ե՛,- ձեռքը թափ տվեց եպիսկոպոսը,- անհարիր է այլ բան խորիել, երբ երկիրս է վտանգված, հավատքի սյուներն են երերում, չաղաթայ զորքերը հեղեղել են Յայաստանը, ավեր ու արյուն է ամենուր: Օ՛, Տեր ամենակալ, որ արարեցիր քո եր-ելի ու աներ-ույթ արարածներին, հոդինվածքներ կազմեցիր սուրբ Յոգու միջոցով: Դու, որ ոչնչից ամեն ինչին եռլթյուն տվեցիր - քո հրամանով են վարվում եր-ելի ու աներ-ույթ բոլոր զորությունները երկրի վրա ու երկնքում: Տե՛ր, որ ջրով հեղեղեցիր անօրեն պղծալից մարդկանց ու փրկեցիր քո սիրելի Նոյին, սատար արա ցեղիս հայկազյան, փրկիր անօրեն ու պիղծ թամուրից: Մի՛ փորձիր փորձվածներիս,- ձեռքերը վեր կարկառեց Յովհաննես սրբազանը

- Սակայն սրբազան, թամուրը չի վնասում վանքերին,- լսվեց մեկի անհամարձակ ձայնը:

Վանահայրը դառնացավ, նայեց հանդիմանությամբ:

- Եկ մի՞թե կգոհանա հոգիս վանքերի փրկությամբ, երբ հոտն է ստրկացվում, երբ այրվում են քաղաքներն ու շեները, երբ նորագույն Ներ կարապետը կործանում է բերում ազգիս Յայկազյան, երբ մանկանց ու կանանց քշում են Սամարդանդ: Թամուրը խորամանկ է, լա՛վ ի միտ արեք, նա չի ցանկանում, որ եկեղեցին սրբազան պատերազմի կոչի ժողովրդին: Յասու եմ նրա խորամանկությանը - նրա արածը չեմ

համարում բարություն, – դուք մի եղեք հանց ոչխար մոլորյալ: Այս ամենը խաբկանք է: Մեր շատ հոգ–որներ սխալ են մեկնում այս պարագան – ավա՞ն մեզ...

- Սրբազնն, կանչեր եմ լսում: Ասես մեկը օգնություն է կանչում: Աղաղակներ եմ լսում,- ներկաները լարվեցին, համակ ուշադրություն դարձան, սակայն ոչինչ չլսեցին:

- Ականջներդ ձենի են, Յայր Մկրտիչ,- ասաց աբեղաներից մեկը, հազիվ զսպեց ծիծաղը,- այդ է պատճառը, որ լսում ես անլսելին: Առավոտից թուղուրեկի գագաթը կորել էր ամպերի մեջ, իսկ դա հայտնի նշան է...

Սակայն Աստված սիրեք, կարծյոք, ես ել լսեցի: Ներող եղիր, Յայր Մկրտիչ:

- Ես ել,- նրան միացավ Թովման,- զանգերը խանգարում են, արձագանքը ականջներում է, հարկ է դադար տալ, լսելք:

Ամենքն ել լարվեցին, ականջները ձայնի պահեցին:

- Այո՛, այո՛,- խոսեց վանահայրը,- Թովմա, մարդ ուղարկիր, թող դադար տան կոչսահարությանը:

Երիտասարդ հոգ–որներից մեկը արագ հեռացավ սրահից, քիչ անց, զանգերը լռեցին: Ալիքների շառաչը ավելի զնագուն դարձավ, ինչոր թույլ ձայներ կային համատարած դղրոյունի մեջ, որ ստիպում էր լարել լսողությունը: Վերջապես Յայր Մկրտիչը չհամբերեց:

- Չե՞ք լսում, ախր կանչում են՝ օգնե՛ք, օգնե՛ք, պարսկերեն են կանչում...

- Ես ել եմ լսում, սակայն հասու չեմ, թե ինչ են կանչում,- Մկրտչին միացավ ներկաներից մեկը:

- Ծեր եմ, չեմ իշխում, եթե պնդում եք, որ ծովում մարդ կա, մեծ լաստանավը ծով իշեցրեք, պարանով կապեք ցցափայտին, շատ մի հեռացեք ափից: Զգույշ եղեք, – թող Տեր Աստված հասնի վտանգվածներին: Մկրտի՛չ, Թովմա՛, դուք մնացեք: Կզան երիտասարդները, մենք կաղոթենք նրանց գործի հաջողության համար, - դուրս եկան սրահից, մոտեցան պարսպապնեկին, տեսան, ինչպես մի քանի հոգի մեծ լաստանավը հրեցին ծովի ծառս-ծառս եղող ալիքները: Լաստանավը սկսեց հեռանալ՝ օրորվելով ալիքների փրփրաբաշ գագաթներին: Ցցափայտին կապած պարանը դեռ չէր ծգվել, լաստանավը դեռ չէր հեռացել պարանի երկարությամբ:

- Տեր Աստված, որ պատռեցիր Կարմիր ծովն ու անցկացրեցիր քո ժողովրդին, փրկիր նավաբեկյալներին,- աղոթեց վանահայրը:

Յանկարծ ծովից պարզ ձայներ լսվեցին, սակայն դրանք օգնության կանչեր չեին, այլ հուսադրող խոսքեր: Այդ օգնության շտապողներն եին ձայն տալիս նավաբեկյալներին:

- Գտա՞ք, փրկեցի՞ք,- պարսպից ձայն տվեց Թովման:

- Յայր սուրբ, պարանը իրենք են ծգում, ափ են լողում, իլացնելով

թարթառի ոռևոցը, պատասխանեցին ցածից:

Ակնակիր մութք խանգարում էր տեսնել լաստանավը, որ կռվելով ալիքների հետ, ափ էր լողում: Եվ ահա՝ ճեղքելով մթան պատը, լաստանավը քթամասով խրվեց ափի խճերի մեջ: Մի քանի հոգի վազեցին, լաստանավը ափ քաշեցին, կառանեցին:

- Մեկին փրկեցինք,- լսվեց ծովափից,- կարծյոք, հայ չե՞, սակայն...

- Վեր բերեք փրկվածին,- կանչեց վանահայրը,-ով էլ լինի՝ Աստծոն փրկածն է:

Յոդ-որևերը գրկած ներս բերեցին թոշված մի մարդու, ինչպես եր-ում էր, լավ լողորդ էր, որ կարողացել էր այսքան ժամանակ դիմանալ: Նա ուշագնաց էր: Փրկվածը միջահասակ, ս- մազ ու մորուքով մարդ էր: Նրան չեր կարելի հայ չհամարել, արծվաքիթ, գիսագանգուր, սակայն թանկարժեք խալաթը, շքեղ դաշույնի ու սամարդանոյան սրի պատյաններն ասում էին, որ հասարակներից չեր: Այն, որ չաղաթայ էր, ամենքն էլ հասկացան, սակայն ո՞վ էր այդ մարդը, ի՞նչ էր կորցրել հայոց ծովում, ովքե՞ր էին հետի մարդիկ, ինար չկա՞ր փրկելու մնացյալներին:

Վերջապես փրկվածը բացեց աչքերը, խոսեց պարսկերեն:

- Փառք Ալլահին, որ փրկեց կյանքս, Ձեզանից շնորհակալ եմ, որ կատարեցիք Ալլահի կամքը: Ես ո՞ւր եմ ընկել, փնտրածս Մեծորքա վանքն է: Փոթորիկի ժամանակ մեր նավը խորտակվեց: Ուղեկիցներս խեղովեցին.. Որտե՞ղ եմ ես: Ես աշխարհի տիրակալ Լանկ թամուրի մերձավորներից եմ, անունս Չահիր է, ծնունդով Բուխարայից եմ: Փնտրում եմ Մեծորքան, ուզում եմ տեսնել Յովհաննես աբեղային:

Վանահայրը ցևցվեց: Յոդ-որևերը մեկ վանահորն էին նայում, մեկ չաղաթային: Բնական էր նրանց հետաքրքրությունը, ինչ-որ նմանություն կար նրանց մեջ: Եթե նրանց մեջ մեկը լիներ ավելի տարիքով, հիշեր վանահոր երիտասարդությունը, կասեր, որ իրոք շատ նման են:

- Դու Մեծորքայում ես, չաղաթայ զորական: Ես եմ, Յովհաննես Եպիսկոպոսը: Ո՞վ ես դու, որտեղի՞ց գիտես անունս:

Փրկվածը ուզեց բարձրանալ, սակայն ուժերը լքեցին նրան, նորից պառկեց կապերտին: Նրա լայն բացված աչքերում հետաքրքրություն կար, նա- զարմանք: Ապա կախեց գլուխը: Նա ինչ-որ հարց էր պարզել իր համար - դա այսքան հասկանալի էր, որ ներկաներն ել զգացին դա: Չաղաթայ զորականը վանահորը նայելով, նրան նմանեցնում էր մեկ այլ մարդու - արդ, հաստատվելով կասկածի մեջ, պարզեց ով էր դեմք կանգնած:

Չաղաթայը այս զննության ժամանակ գտավ այն, ինչ փնտրում էր, եթե փնտրտուքի մեջ ուրախություն կար, ապա հայտանգործությունը հակառակ ազդեցություն արեց նրա վրա: Տրտմտել էր չաղաթայը, խոսե՞լ այդ մասին, չեր ցանկանում, ո՞րն էր ցանկալի, գտնե՞լ, թե՞ գաղտնիքը գաղտնիք պահելը...

- Որդիք, մեզ մենակ թողեք: Թովմա, դո՛ւ մսա: Դուք գնացեք երեկոյան աղոթքի:

Յոգ-որևերը, դժգոհ այս բանից, որ Ներկա չեն լինելու գաղտնիքի բացահայտմանը, դուրս գնացին, մնաց միայն Թովման:

- Յայրս մեռնելուց առաջ ասաց՝ գնա Յայաստան աշխարհ, գտիր Մեծորա վանքը, աբեղա Յովիաննեսին, ցույց տուր կրծքիդ խալը, նա կասի ծննդյանդ գաղտնիքը: Ես ամեն բան հասկացա: Դու շատ ես նման հորս,- զորականը փակեց աչքերը,- լիահույս եմ, մնացածը դու կասես: Իմ մասին այսքանը կավելացնեմ, որ Լանկ Թամուրի գաղտնապահն եմ:

Յովիաննես եպիսկոպոսը մոտեցավ Զահիրին:

- Այո՛, որդի, դու եղբորս՝ Վրթանեսի որդին ես: Ձո մորը չեմ տեսել: Վրթանեսին գերի տարան, երբ տասնինգ տարեկան էր,- դաստառակով սրբեց երիտասարդի ճակատը, ուզեց գրկել, զգիտես ինչու չհամարձակվեց,- դու հայ ես, սակայն ապրում ես որպես չաղաթայ, որպես մեր ժողովորի թշնամի, Թամուրի գինակից, ցավ է ինձ... Ես Աստծուն կաղոթեմ հոգուրդ փրկության համար: Որդի, մի՞թե քո մեջ, երբ մտար Յայոց հողը, ոչ մի հյուկե չշարժվեց, թեկուզ սրտի թրթիռ, թեկուզ ափսոսանը այս ավերումների, անմեղ զոհերի համար: Մի՞թե քո մեջ հայի արյունը չընդունվեց այս ամենի դեմ: ՉԵ՞ որ հայրը ի սկզբանե բարի է, իսկ քո տերը... Չշարունակեց, լրեց երիտասարդի թախանձական հայացքից ազդված:

Միևնույն գինի էր խմեցնում Զահիրին, վանահայրը խոհերի հետ էր, ավեր ու արյուն էր տեսնում, տեսնում էր եղբորը, որին բռնել էին գինվորները, իսկ ինքը օգնել չէր կարող, իրեն էլ բռնել էին մի քանի հոգ-որևեր՝ անմտածված քայլ չանելու համար: Ծանր էր հիշելը: Եղբոր արտասվախառն աչքերն էր հիշում, որոնք մեծանում էին, փակում հորիզոնը, տևքաց:

- Որդի, այսօր Աստծո զորության վկայության օր է: Ես քեզ գտա, ասացի ծննդյանդ գաղտնիքը, իսկ արդ, ցույց կտամ ապացույցը,- ասաց ու մերկացրեց կուրծքը, ամողջովին սպիտակ մազերի մեջ մի խալ էր եր-ում՝ արծաթե դրամի մեծությամբ,- մի՛ զարմացիր, այս խալը դաշված է իմ կրծքին: Մեր տոհմում շատերն են ծնվել այս նշանով, իսկ ով չի ունեցել Աստծո կողմից պարզ-ած նշանը, դաշել են, որպեսզի մեր տոհմակիցները իրար ճանաչեն,- հոգոց հանեց,- իսկ մեր տոհմը շատ հին է, այսքան հին, որքան այս սուրբ հողը:

- Ես հայ եմ, սպասի՛ր, հորեղբայր,- մորմոքեց Զահիրը,- իսկ մայրս, մի՞թե նա էլ է հայ եղել,- հուշերը կսկծացրեցին հոգին, զգաց, որ միևնույն պահը կույր է եղել: Յիշեց մորը, որը շատ բարի կին էր, երբեք դուրս չէր գալիս տնից, մեչետ չէր գնում: Օ՛, Ալլահ, նա հայ է եղել: Մայրս չէր խոսում հար-անների հետ, ոչ ոքի տուն չէր ընդունում մուրացկաններից զատ: Կերակրում էր նրանց... Զահիրը նստել էր աթոռակին, խոր-

հելու հետ օրորվում էր, ասես վերապրում էր մանկության օրորոցը:
Հանկարծ վեր թռավ:

- Ես թլփատված եմ, ես մահմեդական եմ...

Վանահայրը նայեց գորովանքով, այդպես միայն հայրը կարող է նայել որդուն:

- Որդի, հայրդ հարկադրված է եղել, հակառակ դեպքում հորդ կսպանեին - ոչ միայն նրան: Թլփատումը եղել է ոչ ծնողիդ կամոք, այս պարագան ազատում է քեզ մահմեդականությունից: Դու կապաշխարես ու Տեր Աստված կների քեզ, դարձի կգաս...

- Գիտեմ, ձեր Աստված բարի է, ներում է մեղավորներին, սակայն ես մահմեդական եմ, չաղաթայ, ինչպե՞ս դավաճանեմ տիրակալին, ես ուզում եմ օգնել ձեզ...

- Որդի, քեզ մի տանջիր, ամեն բան Աստծո ձեռքին է, կանխավ ոչ մի խոստում մի տուր մեզ օգնելու, քեզ մոտ կգա Թովման: Նա իմ մտերիմ աշակերտն է: Նա կիասնի քեզ, կսատարի,- խոր շունչ քաշեց,- լսողաց եմ, որ Լանկ Թամուրը մինչ-օրս պահում է Չինգիզ Խանի պատգամը՝ վանքերին ու Եկեղեցիներին ձեռք չի տալիս, եթե չեն դիմադրում...

Չահիրը հասկացավ, որ Եպիսկոպոսը անավարտ թողեց միտքը, չզորեց ասել խնդրանքը:

- Դու ուզում ես փրկեմ վանքդ,- հարցրեց, հանգիստ նայեց հորեղբոր:

- Դա հղի է Վտանգներով, կաղ սատանան,- խաչակնքեց իրեն,- կկամենա իմանալ խնդրանքիդ պատճառը:

- Եթե վանքդ... Մի խոսքով այդ ամենը կախված է ձեր ինազանդությունից,-տեսավ, ինչպես ցևցեց Թովման, աչքերը կրակվեցին: Չահիրին թվաց, թե աբեղայի աչքերից կապույտ ցոլքեր դուրս թռան:

- Մենք գրա՞ստ չենք, ո՞չ մարդ անիմա, ո՞չ նվաստ ոչխար՝ կարող ենք կռվել,- մռմռացրեց աբեղան, առաջին անգամ միջամտեց խոսակցությանը,- հայերը կռվել գիտեն, նա- պատվով մեռնել...

- Հարկ է ապրել սովորել, դիմանալ այս արհավիրքին: Դիմանալ, իսկ ո՞ր ժողովուրդն է մեզանից ավելի տոկացել, իսկ արդ, դարձյալ արհավիրք է բարձրանում մեր ժողովրդի ճակատագրի վրա: Լիահույս ես՝ Աստծով կդիմանանք:

- Այո,- խոսեց Թովման,- սրբազան, կդիմանանք Աստծով, սակայն Չահիր եղբայրը եր-ի չգիտե մեր ժողովրդի անցյալը, չգիտե, որ մենք արհական ազգերի նախահայրերն ենք, որ արիները արարվել են Հայաստան լեռնաշխարհում ու այստեղից սփռվել աշխարհով մեկ:

Չահիրը զարմացած նայեց աբեղային, քմծիծաղ տվեց:

- Այդ մասին մի անգամ պատմիչ Շամսետինը խոսեց տիրակալի հետ, Տիրակալը խիստ զարմացել էր՝ իմանալով հայերի անցյալը, այնպես, որ նրա շրջապատում էլ խելացի մարդիկ կան, սակայն դա չի

խանգարում, որ տիրակալը խտիր չոնի միջոցների մեջ,- երկար լռել էին նա- եպիսկոպոսն ու Թովման:

Լռությունը խզեց Չահիրը:

- Տաժանելի ծանր է նորից մարդ ու հայ զգալ... Ներիր հորեղբայր, որ ժամանակ խնդրեմ խորհելու: Ես մահմեդական եմ, ինչպես մոռա- նամ Ալլահին, սրբությունները մեր...

- Գնա՞՛, որդի՞՛, Աստված քեզ ելք կհուշի: Գիտցիր, վանքիս դռները բաց են քո առաջ: Ինձ հետ կապ պահպանիր Թովմայի միջոցով: Գնաս խաղաղությամբ:

* * *

Չաղաթայների նժույգների սմբակների տակ դղրդում էին հայոց ճամփաները: Ավերմունքի փոշի եր բարձրանում հայոց երկնակամարն ի վեր: Արյուն ու ավեր եր՝ վերջն աշխարհի... Սարդիկ քնում էին վա- խով, արթևանում էին ծանր երազներից... Յրդեհների բոցերից լուսա- վորվում եր անգամ տիեզերքը: Մահ տարածամ եր, վերջերի վերջը... Կապրեհն հայերը, լինել-չլինելու հարց եր...

* * *

Մոլեգնում եր քամին, խուժում ամենուր: Կարմրավուն փոշի ից- կում մարդու բերանը, ատամների տակ խշխշում էին ավազահատիկ- ները:

Որքան ել քամին սաստկանար, չեր կարող սասանել Շահապունքը, որի միջնաբերդը թառել եր ութսուն կանգուն բարձրության ժայռին, այստեղից հսկում եր Յայոց հեռուները:

Ահասարսուռ եր բերդանիստ ժայռը, այն հանց հսկա առյուծ ուսել եր միջնաբերդը: Յեռուն, շատ հեռուներն եր եր-ում միջնաբերդից, սա- կայն այն, ինչ տեսնում եր Պռոշյան իշխանը, կսկծացնում եր հոգին:

Առջ-ում, շատ փարսախներ հեռվում եր-ում եր հրդեհներից այր- վող հորիզոնը: Յայոց վշտից ու անզորությունից հրդեհվել եր տիեզեր- քը...

- Մի՞թե վերջն է Ազգիս,- տևքաց ծերունազարդ իշխանը, նայեց կողքին կանգնած Յովհաննես Տաթ-ացուն,- Յայոց աշխարհը երբեք այսչափ անպաշտպան չի եղել: Այս ի՞նչ պատուիաս եր, Տեր Աստված, ո՞ր մեղքերի համար ես տանջում բարեպաշտ ժողովրդիս...

- Սպասի՛ր, Յայկարամ իշխան: Խոսքերդ վայել են հոգ-որականի - ոչ մարտիկ իշխանի, որի գոռ ձայնից դղրդում են մարտի դաշտերը, ի՞նչ պատահեց, ինչո՞ւ կոչ չես կոչում իշխաններին՝ ամենքին: Ինչո՞ւ ոտքի չեք հանում համայն Ազգը:

- Սրբազան, շատվոր են անօրենները: Այսչափ մեծաքանակ զոր- քեր երբ-է Յայաստան չեն մտել: Այս ինչ պատուիաս է, մի՞թե մեռնելու է ժողովուրդը մեր, լեզուս չորանա: Յասու չեմ, ի՞նչ կարելի է անել...

Իշխանի կրտսեր եղբայրները նրանց կողքին կանգնած, նայում էին այրվող դաշտավայրին: Ամենքն էլ գլխաբաց էին, քամին ցրում եր նրանց մազերը, քանզի անհարկի եր սրբազանի ներկայությամբ գլխանցներ դնել: Ամենքն էլ զրահված էին, մարտի պատրաստ, սակայն այս ի՞նչ պատերազմ է, ի՞նչ անհույս ու անհասկանալի սպասում: Ընկճված են, մռայլ: Չորս եղբայրներ են, շատ նման իրար, միայն տարիքով են տարբերվում իրարից: Միաշահասակ, լայնալանջ զորականներ են: Նրանց հակապատկերն է Տաթ-ի վանահայրը, սպիտակ, երկար մորուքով, բարձրահասակ, արդեն կռանալ սկսող: Տաթ-ացուն ծեր չես համարի: Իմաստատերի աչքերում այնպիսի կրակներ կան, որ կարող են այրել իմաստության կրակներով:

- Նախճավանը, կայծյո՞ք, գրավել են,- խոսեց Պռոշյաններից կրտսերը՝ Խաչիկը,- հարկ է դեմ ելնել, բերդում մնալով ամենքս էլ կկործանվենք,- ոչ ոքի չոհմելով՝ ասաց նա:

Պռոշյան իշխանը շփոթվեց եղբոր խոսքերից: Խաչիկը համեստ Եղիտասարդ է, եթե նա այսչափ վրդոված է, դուրս է եկել պատշաճից ու իրավունքից, ասել է թե ամեն ինչ շուր է եկել: Խաչիկը խոսում է հոգ-որի ներկայությամբ, - նրա խոսքերը հանդիմանական են երեց եղբոր հասցեին, քանզի նա պիտի վճռի անելիքները:

- Մենք սխալվեցինք, այլ-ս ոչինչ չենք կարող անել: Սա աղետ է, կործանում, միթե՝ կարող ենք դեմ առնել Լանկ Թամուրի մեծաքանակ հորդաներին: Նրանք հզոր են իրենց բազմությամբ: Մեր ամեն զինվոր կարող է կրվել երեք-չորս չաղաթայի դեմ, սակայն նրանք հազար-հազարներ են, իսկ մենք մասնատված, ուժագրկված: Մի կողմից թուրքերն են նեղում, մյուս կողմից այս պատուհասը եկավ գլխներիս: Պետություն չունենք, թագավորություն, որ դեմ կանգնի արհավիրքին. Միթե կործանվելու ենք,- մռմռացրեց իշխանը, նայեց եղբորը, չտեսավ նրան, քանզի նայում էր նրա միջով, տեսնում էր հրդեհների ցոլքերից արևագույն Քայոց հորիզոնը,- թեր-ս իրավացի ես, գրավել են Նախճավանը...

- Երբեք ուշ չէ դեմ ելնել թշնամուն, Զաղաթայները գալիս են ստրկացնելու մեր ժողովրդին, ավերելու մեր լույսի խորանները՝ մեր տաճարներն ու Եկեղեցիները, այրելու մեր ծաղկած մատյանները, Տաթ-ը մեր անձեռակերտ, որ այս մթին դարում լույս է սփռում աշխարհին: Ո՞չ, երբեք ուշ չէ: Ես ծեր եմ, սակայն պատրաստ եմ կրվելու... Իսկ ո՞ւր են մեր իշխանները, մեկին թուրքն է խաքել, փակել բերդում, մյուսը կարկամել է վախից, երրորդին իր շահն է նետում տիրակալի գիրկը, չորրորդին գոռողությունը ետ է պահում ազգի գործերից, սպասում են, որ իրենց խնդրեն, մռանալով, որ չաղաթայները ոչ մեկին չեն խնայի: Ցավ է ինձ, որ շինականն է ընկել սրի բերանը: Անպաշտպան է, կոտորվի: Մենք չենք կրվում, իսկ Զելահրյանները ետ են քաշվում, ճանապարհ են տալիս հավատակիցներին, մասկամիտներին, հասու չեն, որ հարկ է միացյալ ուժերով դեմ ելնել: Լանկ Թամուրը հաշվի չի առնում

կրոնի պարագան: Նրա համար ամենքն էլ մեկ են՝ կկոտորի, հիշեք խոսքերս, միայն հևազանդները կփրկվեն, իսկ սա ստրկություն է, հոգու կորուստ – ի՞նչ կմա հոգին սատանային ծախելուց, ոչինչ, ունայնություն: Աստված մեզ պատժում է մեր մեղքերի համար, չմիավորվեցինք թուրքերի դեմ, կորսույան մատնեցինք Անին, Կարսը, ժողովրդին: Մեր գոռզության, անհեռատեսության, անմիաբանության պատճառով թուրք սելջուկները տիրեցին Երկրին, քանացան մեր կամքին, իսկ դա կրկնակի ստրկություն է: Իսկ արդ, արդեն, ինդրեմ, Լանկ Թամուրի հորդաները...,- մի պահ լրեց,- նրա դեմ Ելսել միայն սուլթան Բայազետը կարող է: Նա էլ իր հերթին է սպասում, որ Թամուրը թուլանա Յայաստանում ու Վրաստանում: Ի զորու չեն հասկանալու, հարկադրված կլինեն Երկար սպասել, քանզի անպարտելի են հորդաները: Կարճամիտ չեն սուլթանը, ոչ էլ անիմա ռազմի գործերում, սակայն այս պարագայում սիսալ է գործում: Ես նրան կործանում եմ գուշակում:

Իշխանը հարգանքով նայեց կորովի հոգ-որին:

- Սրբազնան, այդ ամենը հասկանալի է ու ընդունելի, սակայն մենք ձեռքից բաց ենք թողել ժամանակը, միացյալ ճակատ կազմելու հևարավորությունը: Չենք հասկացել Վտանգի մեծությունը: Ես ինձ էլ եմ մեղադրում: Ո՞ւշ է, խոսենք այսօրվա անելիքներից,- իշխանը չհասցրեց շարունակել: Նայեց սենեկապետին, որ ոլորապտույտ աստիճաններով աշտարակ էր բարձրանում, սիրտը վատ բան գուշակեց:

- Ահարոն, ի՞նչ կա,- հարցորեց, տևքաց:

- Գուման եմ, տեր իմ,- խոնարհվեց սենեկապետը,- Նախճավանից բերդ հասավ գորական Յարությունը, չաղաթայները գրավել են քաղաքը, կոտորել բնակիչներին:

- Կանչե՛ք, գա,- ձեռքով արեց իշխանը:

Չինվորները թ-երև ընկած, աշտարակ բարձրացրեցին ավագին:

- Մենք պարտվեցինք, Գ-որդ իշխանը զարկվեց մարտում: Չաղաթայները գրավեցին քաղաքը, այրեցին այն, բնակիչներին սրի քաշեցին: Մի տասնյակից ավելի մարդ այրեցին խարույկի վրա: Իշխանի ընտանիքը սրի քաշեցին: Աղջկան հոր աչքի առաջ...- ձեռքը թափ տվեց, ցավից տնքաց,- մի բան է մնում՝ մտնեմ չաղաթայների մեջ զարկեմ, մինչ-զարկվելս: Վայրագ բորենի են, ասես մայր չի ծնել,- հոգնած լրեց:

Սենեկապետը գինի խմեցրեց նրան: Աշտարակ բարձրացած բուժը, կապեց ավագի ուսի վերքը:

Ավագի տեսքը ազդել էր ներկաների վրա:

Լուրը ծանր էր, Նախճավանը ավերվել էր, զոհվել էր քաջարի Գ-որդ իշխանը:

Մի իշխան էլ պակասեց Յայոց գահնամակից, հուշ դարձած գահնամակից... իսկ կվերականգնվի Երբ-Է, կլինե՞ն գահ ու թագ, արքայական մական... իսկ արդ, լինել-չլինելու հարց էր չոքել Յայոց ճակատագրին, իսկ գահնամակը մի լուսավոր հուշ էր դարձել, անցած-գնացած

փառքի օրերի...

- ՏԵ՛Ր իմ, քիչ անց չաղաթայները այստեղ կլինեն: Ես այդպիսի կռվողներ չեմ տեսել, հաղթում են քանակով, շատվոր են: Գալիս են հազար-հազարներ, խեղդում են իրենց դիակներով, դիակների վրայով ել առաջանում են: Չորականի ձեռքը հոգնում է զարկելուց, սակայն վերջ ու պրծում չկա... հեծյալ են, ուր որ է կհասնեն:

Իշխանը դարձավ եպիսկոպոսին:

- Սրբազն, ներիր, որ անտեսում եմ հյուրընկալության կարգը, ուզում եմ լսել վճրիդ:

- Ես մենակ չեմ թողնի աշակերտներիս՝ Տաթ-ը: Արի եղեք որդիք: Լավ ի միտ արեք, Լանկ Թամուրներն ու Բայազետները կգան ու կերթան, կմնա ժողովուրդը: Կովենք, տոկանք, Աստված արդարների հետ է:

- Խաչիկ, սրբազնի հետ ուղեկցող տաս զինվոր դիր, թող տեղ հասցնեն: Վտանգաշատ են ճամփաները:

- Աստված պահապան ու զորավիգ,- խաչակնքեց սրբազնը: Ծանր գավազանով թիսկթիսկացնելով աստիճաններին, իշավ աշտարակից:

Իշխանը մոտ կանչեց Վազգեն Եղբորը:

- Սեպուհ, տագնապի շեփոր հնչեցրու, թող քաղաքացիները միշնաբերդ բարձրանան: Քաղաքը չի դիմանա: Քաղաքացիներին զինեք, կարգեք պարիսպների վրա:

Սեպուհը վազքով հեռացավ կատարելու իշխանի իրամանը:

Բերդում չարագուշակ հնչեց շեփորը:

Պռշյան իշխանը մենակ էր աշտարակի վրա: Քաղաքը ոտքերի տակ էր, այն սկսել էր աղմկել: Քաղաքացիները բռնեցին միշնաբերդի ճամփան:

- ՏԵ՛Ր իմ,- մոտեցավ թիկնապահը,- դաշտով զորքեր են շարժվում, գալիս են շահեր վառած, օտար զորքեր են, ճանապարհը չգիտեն:

Խոլ դորդում էր Ծարուրի դաշտը: Չորական մութ զանգվածներ էին շարժվում, գալիս էին իրար զուգահեռ մի քանի զորասյուներով:

- Սկսվեց, ուշացանք: Ես ինձ չեմ ների... Սակայն ի՞նչ կարող էինք անել: Չլսեց Գ-որդ իշխանը, մենակ գնաց թշնամու դեմ, իսկ մնացածնե՞րը, դարձյալ նույն ցավն է, դարձյալ անմիաբան ենք, անշատ-անշատ, դարձյալ ուշացանք...

Մեղավորության զգացմունքն այնքան մեծ ու խորն էր, որ իրեն պատկերացրեց սուրը ձեռքին սպանված: Ստիպեց իրեն կողքին դիտողի պես նայել, քմծիծաղ տվեց,- սա վերջերի վերջն է...

- Յանգստացի՞ր,- խոսեց աշտարակ բարձրացած Պարսամ Եղբայրը,- այլ-ս ինչ օգուտ սեփական անձը դատափետելուց,- իշխանը հասկացավ, որ բարձրաձայն էր խորհել:

- Պարսամ, սիրելիդ իմ Եղբայր, ոչ մի նոր բան չկանքում:

Նոյնն է եղել, վտանգի պահին միակամ, միաբռուսցը լինեհնք, կվանեհնք թուրքերին, այսօր էլ մեզ արժանի պատասխան կտայինք Լանկ Թամուրին: Մի՞թե չեն եղել պահեր, եղել են, միակամ ու մոլեգնած զարկել ենք թշնամիներին: Չմոռանակը Ազգի հզորության գերազույն պահը՝ Մեծն Տիգրանի զահակալությունը: Նրա բանակները, մոռանում ենք հեթանոս ժամանակների մեր հզորությունը... Մոռանում ենք, որ Վրիական Ազգ ենք, այ թե՛ որտեղ է մեր սխալը,- մռնչաց,- մենք սկսեցինք ուժագրկվել, երբ ընդունեցինք քրիստոնեությունը, ավա՛ մեզ...

Ազգի մեծերից մեկի ուշացած իմաստափրություն՝ մի բռնկում, ավա՛ ու, ուշացած բռնկում, խեղճ հայեր, ե՞րբ պիտի խելքի գանք...

Դորոյունը մոտենում էր, այս իր մեջ կուտակել էր Շահապունքի դառը սպասումը, տիրակալի կամքը՝ սպանել, ավերել...

Մի ժամ էլ չանցած չաղաթայները պաշարեցին Շահապունքը: Քաղաքի դռները խորտակեցին, քաղաքը դատարկ գտնելով, վայրագ ոռնացին, աչքերը չոած ահռելի միջնաբերդին, առաջացան մինչ- բերդանիստ ժայռը, կանգ առան:

Մութ էր, ճանապարհը չգտան, խարիսափեցին՝ ինչպես մարդը խարիսփում է սեփական ճակատագրի բավիղներում – որքան էլ ստույգ համարի ընտրած ճանապարհը, դարձյալ աչքը զգում է մյուս ճանապարհին, թեր-ս այս ճիշտ ու ընդունելի էր...

Խարույկները վառեցին, միջնաբերդը ահազնացավ, երերացող, տատանվող, իրար եկող, իրարից վանվող ստվերները ընկան չաղաթայ զորքերի վրա, սարսափ ու սարսուր բերեցին:

- Գիշերս չեն հարձակվի,- ասաց Պարսամը, - առավոտյան վրա կտան...

Չասված բառերի մեջ դրեց սպասված վտանգված ավելին, որ նա-ամենքի մեջ կուտակված հուսահատությունն էր:

Ի՞նչ է հուսահատությունը, երբ այլընտրանք չկա, վճռված է կռվել մինչ- վերջ, կռվել մինչ- կործանում... Այլ-ս ինչ սպասում, իսկ եթե նա-այլ ելք կա, դեռ Յայաստան աշխարհում չփորձված ելք... Դեռ ոչ ոք չի դիմել Լանկ Թամուրին, չի խնդրել խնայելու իրեն: Իսկ մի՞թե օրեն չէր որ իրենք խնդրեն, գունե փրկեն երեխաներին, կանանց ու ծերերին, սա-կայն այս ամենի մասին չեն խորհում, վճռել եմ կռվել, իսկ կռվի ելքը՝ պարզից պարզ է...

Չաղաթայները կկործանեն Շահապունքը ու սրի կքաշեն ժողովրդին, ո՞ւմ վրա է այս անմեղ արյունը...

Վերադարձան Խաչիկն ու Վազգենը:

- Միջնաբերդը պատրաստ է դիմադրելու,- գեկուցեց Վազգենը,- ծանր մարտ է սպասվում,- չասաց անհույս մարտ, չասաց, որ վաղը չա-ղաթայները կգրավեն բերդը, չասաց. ապավիսել էր իր սրին ու անհույս սպասումից հերոսացած, հերոսությունից խենթացած, սպասեց...

Սպասեց, ինչ որ է, պատմությունը կասի իր խոսքը, կգևահատի այս խենթությունը, թեր-ս անմտությունը, որ կարելի է նա- ինքնասպանություն կոչել, իսկ կա՞ ելք, ինչո՞ւ չապրել, թեկուզ նվաստացման գնով, գլուխ խոնարհելով... Ոչ մի հերոսացմամբ չես արդարացնի երեխաների, կանանց ու ծերերի մահը, ավա՛ղ մեզ...

Իսկ ինչպիսի՞ վճիռ կկայացնեին մեր արիական նախնիք այս պարագայում, հարց էր, թե ո՞վ կպատասխանե...

- Մրգազանին ճամփու դրեցի,- ասաց Խաչիկը, մոտեցավ պարսպապուկին,- սրա դեմ Բայազետի զորքերն ել են սակավ: Սա հեղեղ է: Չուր տիկնանց ու երեխաներին չուղարկեցինք Տայք, այստեղ...

- Տայքն ել չի փրկվի: Անհույս է, միակ ուժը Բայազետն է: Նա ել սպասում է, որ Թամուրը այստեղ թուլանա, քանզի գիտե, որ ոչ մի բերդ, քաղաք ու շեն առանց կռվի չի հանձնվի: Սուլթանը խելացի զորավար է: Նա պարզ հաշիվ է անում, սպասում է իր ժամին: Նա մեր կնքահայրը չէ, որ գա մեզ սատարելու: Կայծակնային Բայազետ, խաչակիրներին շարդող Բայազետ,- իշխանը չգիտես ինչու, սկսեց թվել սուլթանի հայտնի անունները: Ամենքն ել գիտեին Բայազետ սուլթանի զորավարական հօչակը, նրա արագ կողմնորոշվելու ընդունակությունը: Չուր չեին Եվրոպայում սարսափում նրանից: Այստեղ դեռ թարմ էր պարտության կակիծը: Դյուրին չեր նոր խաչակրաց արշավանք ձեռնարկել, իսկ արդ, սուլթանը աչքը գցել է Բյուզանդիային: Դժվար թե տկարացած կայսրությունը դիմանա Բայազետի բանակների ճնշմանը: Միակ ուժը, որ կարող է զապել սուլթանին, Լանկ Թամուրն է, թեր-ս աստվածների իրենց երկրային խորհուրդում վճռեն երկուսից մեկին առաջնություն տալ, սակայն այսպես՝ հաղթողը չկործանի իրենց արարած աշխարհը: Եթե հաղթի Լանկ Թամուրը, ապա նրա դեմ կհանեն Թողթամիշին, որ նստած է Սարայում, սրա դեմ ել Ռուսիային: Մի խոսքով, ամենահմուտ զորավարները աստվածներն են, նրանք են վճռում պատերազմի ելքը - ավա՛ղ մեզ...

Իր հերթին Բայազետի հետ հանդիպումը ձգձգում է Թամուրը: Խելացի է տափաստանի ծեր գայլը: Նա ուզում է թիկունքը մաքրել հայերից, վրացիներից, մնացած լեռնականներից:

Աշխարհում չի կարող լինել երկու տիրակալ: Մեկը պիտի զիշի առաջնությունը, ո՞վ կլինի զիշողը, ցույց կտա ժամանակը...

- Աշխարհը հեղեղվել է մահմեդական զորքերով,- գլուխը թափ տվեց Պոռշյան իշխանը,- ավելի լավ է միասին լինենք: Յույսներս Աստված ու մեր սուրը,- հիշեց հորը, նրա նախատինքով լի հայացքը, սարսաց. «Ճայր, մի՞թե սա է վերջը...»: Յիշեց հոր խոսքերը կյանքի ունայնության մասին, այդ հիշողությունը ոչ թե հուսահատեցրեց, այլ զարգուց,- մնացինք մենք ու մեր սուրը: Նա- այս հավատը, որ ես ու այս բերդը դեռ կանք: Կռիվ ենք ելնելու, հնարավորին չափ կնվազեցնենք չաղաթայներին: Սա էլ մի բան արժե: Աստված արդար է, մի դուռ կբա-

նա...»:

Վաղ առավոտյան Լանկ Թամուրի գորքերը սկսեցին Շահապունքի գրոհը...

* * *

Շահիրը մի կողմ նետեց այծենակաճը, դուրս եկավ յուրտից /Վրա-նից/: Դիմացը, ժայռի գլխին ահագնացել էր հրդեհված Շահապունը: Հայացքը տեղափոխեց տիրակալի տաղավարի կողմը, որ մյուսներից տարբերվում էր իր մեծությամբ ու թիկնազորի եռակի պաշտպանությամբ: Նրա տաղավարի մոտ էին Մեծ թագուհու՝ Մելիքեի քեպրինի տաղավարը, որ իր մեծությամբ չէր զիջում տիրակալի տաղավարին: Ապա մնացած կանաց տաղավարներն էին՝ Սաղր Մելիքեիի՝ Զինգիզ Խանի տոհմից, Թումանը՝ տափաստանի տռփալից «զամբիկը» Վեռջապես Յելիան տիկնոց տաղավարը, Յելիանը հավատարիմ է մնացել հելենական սովորույթներին, թե գույներով, թե շքեղությամբ նրա տաղավարը տարբերվում է մնացած տաղավարներից: Այս մի փոքր հելենական աշխարհ է, որտեղ մտնողը այլ աշխարհ է ընկնում, որ նման չէ մահմեդական աշխարհի ստիպողական շքեղությանը, այն նրբությամբ է զարդարված: Տաղավարը տիկնոցը հիշեցնում է նրա հայրենիքը, որտեղից վաղուց է հեռացել:

Թիկնազորի եռաշար պաշտպանությունից թեաետ դուրս են մնացել մեծամեծների տաղավարներն ու յուրտաները, սակայն նրանք ել են պաշտպանվում:

Շահիրը իրեն խորթ զգաց այս շրջապատում, քանզի այս ամենը իրենը չէ, այս ամենը խորթացել է իրեն, օրեն չէ, որ ինքը լինի սրանց հետ: Սրանք իր ժողովրդի թշնամիներն են:

Այս զգացմունքը մի քանի օր առաջ կզարմացներ նրան: Այս պահին այն բնական է՝ ինքը հայ է, չէ՝, հայ չէ, ծնողներն են հայ, ինքը մամեդական է, ինքը չաղաթայ է, թլփատված է... Նա տիրակալի գաղտնապահն է, բոլոր գործերի՝ գաղտնի գործերի կատարողը: Նրան բարձր է գնահատում տիրակալը, հաշվի է նստում հետը: Անվերապահորեն հավատում է նրա բերած լուրերին:

Երեկ այդ ամենը համարում էր Ալլահի պարգ-, իսկ տիրակալին մեծ գորավար, թագավորների թագավոր, մեծարման արժանի միապետ, պաշտամունքի կուռք: Արդ, այդ ամենը այլ կերպ է ընկալում:

Մենք եկել ենք ոչչացնելու հայերին, թեկուզ այս բերդաքաղաքը: Այսպիսի արծվանիստ բերդ թեր-ս չկա աշխարհում: Երեկ բերդի կործանումը ուրախություն կբերեր, այսօր միայն ափսոսանք, սեփական արժանապատվության կորուստ, քանզի կործանվում էր բնության ու մարդու արարումի այս հրաշքը: Երեկ կիրավիրեր մեծամեծներից որ-է մեկին, կիյուրասիրեր ընտիր գինիներով, ավելին՝ գերուհիներից մի եր-

կուսին կրերեին, գիշերը խելահեղ վայելք կանեին: Սա Թամուրի մեծամեծների համար հաճելի զբաղմունք է: Տիրակալը գիտեր այդ մասին, չեր արգելում, քանզի կտրվել են Սամարդանդից, իսկ պատերազմում որքան ասես գերուհիներ կան: Թամուրը թե- շրջապատված է թագուհիներով, սակայն իրեն չի զրկում նմանօրինակ հաճույքներից...

Այսօր այդ գերուհիները իր քույրերն են... Օ՛ Ալլահ, որքան դյուրին ընդունեցի այս ամենը, ո՞չ, ես տանջվում եմ, հայտնագործությունը, հանց կայծակ՝ զարկեց հոգուս մեջ: Այ, ասում եմ, որ հայ եմ, իսկ սիրտս կակծում է, չե որ պիտի մոռանամ մեր սրբությունները... Օ՛, Ալլահ, եթե հայ եմ, ինչպես ապրեմ: Մի՞թե այս հայտնագործությունը ինձ քո դեմ կիանի, մի՞թե խաչապաշտ կդառնամ... Անմեկնելի են Աստծո ճանապարհները, ո՞ր Աստծո: Չեմ զորում վճիռ դնել, հորեղբայրս խնդրեց սատարել հայերին, եթե փորձեմ, ախր ինչպես դեմ գնամ հորս, իմ բարերարին, ինչի՞ համար, որպեսզի հա՞յ կոչվեմ: Այսպես որ գնա, ես ինք ինձանից կզգվեմ, քանզի պիտի դեմ գնամ այն ամենին, ինչին հավատացել եմ: Վախեցավ կրկնել քիչ առաջ խորհածը: Չե, ես հայ եմ ծնունդով, հարկ է օգնեմ հայրենակիցներիս...

- Ի՞նչ կա,- նայեց Շահ Մելիքի թիկնապահին:

- Տերս, գիշերը հրավիրեց,- խոնարհվեց թիկնապահը: Նա լավ գիտեր Շահ Մելիքի ու գաղտնապահի մտերմության մասին,- գեղեցկուիի գերուհիներ են լինելու,- անձայն հռհռաց, սղալելով ցանցառ բեղերը: Նախանձով նայեց Զահիրի ս- բեղ ու մորութին:

- Յաճո է ինձ Շահ Մելիքի հրավերը, ափսոս ուսիս վերքը բացվել է: Բուժք ասաց, որ պիտի երկու օր պառկեմ: Իմ խորին շնորհակալությունը հայտնիր տիրոջդ,- թիկնապահը հեռացավ,- Օ՛, Ալլահ, ուժ տուր վճիռ ընդունեմ...

* * *

Վաղուց, շատ վաղուց սովորույթ էր դարձել Թամուրի մոտ, նոր երկիր մտևելիս հավաքվել Մեծ թագուհու մոտ: Սովորույթ էր, սակայն կա՞ր դրա կարիքը: Ի՞նչ օգուտ այդ հավաքույթներից, մի՞թե առանց հավաքույթների մասնակիցների չգիտեր իր անելիքները: Ո՞չ, սա միայն սովորույթ է, որին հավատարիմ է, դրանից զատ մեկ-մեկ կարիք ունի բոլորին միասին տեսնելու: Տեսնես Երկեղորավորը նույնական չե՞ր վարդում, չե՞ որ նա էլ մտերիմներ ու հարազատներ ուներ: Թե- գիտեր Մեծն Ալեքսանդրի կյանքի պատումը մանրամասներով, գիտեր, որ Ալեքսանդրը զավակներ չուներ: Ո՞չ, զուր է հիշում Ալեքսանդրին, նայեց թռներին ու կանացն: Խոսելու տրամադրված չեր, սակայն թռան՝ Ուլուկբեկի ներկայությունը պարտադրում էր խոսել: Խելացի ու խոհեմ է Ու-

լուկրեկը: Նրա ամեն հարց խորհել է ստիպում: Ուլուկրեկին այսօր միացել է նա- Խալիլ սուլթանը, սա մռայլ կախել է գլուխը: Մեկ-մեկ կումիսի գավաթը մոտեցնում է շրթունքներին, դժգոհ է, քանզի չի կարողացել գրավել Ալանջիկը: Թե- Խալիլը պապի կկողված աչքերում նախատինք չի տեսնում, սակայն չի կարող իրեն ներել: Դա ավելի վատ է, քան պապի մեղադրանքը: Թեր-ս տանելի լիներ այդ պարտությունը, այո՛, այո՛, նա ռազմական անհրաժեշտությունից բերդաքաղաքը պաշարելը պարտություն է համարում:

Այդ է պատճառը, որ այս պահին ամեն ինչ կորցրել է նրա համար իմաստը: Սովորական գույները, վառ կարմիր պաստառները թվում են՝ ս-, ոսկե ու արծաթե սպասքները թվում են՝ կավե անթիրծ անոթները, խորթ մայրերը, ասես դոդոշներ լինեն, իսկ Մեծ թագուհին, դուրս ցցված այտոսկրներով, պառաված կով է հիշեցնում: Պապին վախենում է նայել, վախենում է նրան Ել ինչ-որ կենդանու նմանեցնել: Չե՛, չի ուզում այդպես խորհել պապի՝ Մեծ Պապի մասին, իսկ գայթակղությունը մեծ է, թափ տվեց գլուխը, նա Ել տափաստանի ծերացած հովատակ է, որ փորձում է երիտասարդ զամբիկների հետ-ից վագել: Գտած համեմատությունը ժայտ բերեց նրան: Զապեց իրեն, նորից խորհեց պարտության մասին: Այո, հայերն են մեղավոր, որ թահիր արքայազնը տրորեց քիթը: Ա՛խ, ինչպիսի հաճույքով սուլթանի որդուն կախ կտար աշտարակից, ափսոս, պապը արգելեց գրոհները: Նա չի ցանկանում գոհեր տալ, ինքն Ել գրկվեց մի բերդի գրավելու վառքից:

Յանկարծ հասկացավ, որ պապը իրեն հարց է տվել, սպասում է պատասխանի: Նրա աչքերում դժգոհություն տեսավ:

- Ներիր, տիրակալ, մտքերի հետ Եի,- կումիսի գավաթը դրեց դաստարիսանին /ցածր սեղան, որի առաջ նստում են կումիս ու թեյ խմելիս/:

- Իսկ դու սովորիր լսել, խորհել, խոսել - այդ ամենը անել միաժամանակ: Դա ամենքին չի հաջողվում: Յարկ է ինքո՞ք վարժեցնես տարիների ընթացքում: Մի ստիպիր հարցս կրկնել,- քմծիծաղ տվեց, աչքի տակով նայեց Մելիքեիին սա ժպտում էր. «Տե՛ս Ե, պառավ, քմծիծաղ է տալիս: Սպասում է, որ թոռը դիմի իր օգևությանը...»: Նայեց նորից, թագուհին ժպտաց, աչքերը կորան խորշումների մեջ:

- Կարո՞ղ են Զելահիրյանները գանձերը հեռացնել բերդից, խորհե՞լ ես այս պարագայի վրա...

Խալիլը ազատ շունչ քաշեց: Ամեն բան պարզ դարձավ: Առաջին բերդադրումը չէր, գիտեր, ինչով կարող է արդարանալ պապի առաջ: Յանկարծ պահանջ զգաց պապին հասկացնելու, որ ինքն Ել որպես զորավար արժեք ու կշիռ ունի...

- Տիրակալ, ես ամեն բան կարգադրել եմ: Ամրոցից հեռու հեծյալ շոկատներ եմ կարգել, եթե գանձերը հեռացնեն, կընկնեն իմ հեծյալների ձեռքը: Խուզարկել եմ տվել բոլոր ձորակներն ու խանդակները: Եթե գաղտնութիներ կան, կգտնեն, չեն կարող հեռանալ, շրջակայքում այլ

բերդ չկա:

Պատասխանը խելացի էր, չեր կարող զգոհացնել տիրակալին:

- Մի՛ մոռացիր, որ ամեն գանձատեր խորհում է ապահով պահել գանձերը, քնում է վախը սրտում:

- Ալանջիկից ապահով տեղ չի կարող լինել Զելահրյանների գանձերի համար,- ծիծաղեց Ուլուկբեկը,- գանձերը պահպանում են աշխարհի տիրակալի զորքերը,- Թամուրի հայացքը շերմացավ, ժպտաց:

- Խելացի է մեր միրզան,- իր հերթին ծիծաղեց Մելիքեին: Տիրակալի ժպիտը թուլատրում էր մացածներին Ել ժպտալ,- լավ է, որ թոռներից մեկը միրզա է, թե- մեկ-մեկ ծիծաղում է մեզ վրա, որ գիր ու մատյաններ չգիտենք,- մթնոլորտը մեղմեց, դարձավ մտերմիկ:

- Ինչպիսի՞ շռայլություն,- խալիի ականջին փսփսաց Ուլուկբեկը,- այս երեկո պապը լավ է տրամադրված: Թեր-ս մտքում վճռել է մի նոր խաղ խաղալ աշխարհի գլխին: Պա՛պը,- մատը վեր տնկեց,- նոր առշավանք է մտմտում: Թոռը սկսել էր հասկանալ պապին, նրա զորավարական խորամանկությունները: Նայեց պապին, սա ժպտում էր Մեծ թագուհուն, իրոք, այդ երեկո պապը շատ էր շռայլ, ժպտում էր, այս ել քանի անգամ: Կանանցից միայն Մելիքեին իրավունք ուներ խոսելու, մնացածները պիտի պատրաստ լինեին պատասխանելու տիրակալի հարցերին:

Տիրակալը ակնածում էր Մելիքեից: Միասին էին անցել կյանքի բովով, արյուն ավերածություններ սփռելով աշխարհով մեկ: Միասին էին հասել փառքի գագաթին: Արդ, հարգում էին մեկմեկու: Դա ամենքն էլ գիտեին, անառարկելիորեն ընդունում էին Մելիքեի իշխանությունը:

Մեծ թագուհին այլոց համար անհայտ թելերով իրեն էր կապել թամուրին՝ ոչ մարմնականով, որից վաղուց էր զրկվել, այլ հոգեկան կապով, որ քանի գնում ամրանում էր, միով բանիկ՝ ինչպես լինում է միասին ապրած, միասին ծերացած ամուսինների մոտ: Մելիքեին տիրակալի խորհրդականն էր, սակավ չէին դեպքերը, երբ խելացի մտքեր էր հուշել ամուսնուն: Նա ևախկինում էլ գերեցկուիի չեր եղել, սակայն նրա մեջ կար մի անբացատրելի բան, որ մարդկանց ստիպում էր հարգել իրեն, ունկնդրել նրան: Թեր-ս ունեցածը խելքն էր, գումարած անսահման իշխանությունը, ել ի՞նչ կարող էին անել մնացած կանայք, որոնց մոտ տիրակալը գնում էր որպես այրմարդ...

Մեծ թագուհու մեջ վաղուց էր մեռել կինը, խանդի զգացումը: Նա չեր մոռացել, ինչպես թամուրը զայրույթի պահին սպանեց առաջին կնոջը՝ սուլթան Յուսեինի դստերը:

Խելացի կին է Մելիքեին, գիտե գործն առաջ տանելու պահը: Լավ է ճանաչում ամուսնուն, գիտե ինչը երբ կարելի է խոսել, երբ կարելի է խնդրել: Երիտասարդ կանայք դեռ չեն հասել այդ իմաստությանը, քանզի դա գալիս է տարիների հետ: Ստույգ է, նրանցից Շահունիսի մայրը ծերացող կին է, նա ել միայն նրանով է պարծենում, որ Չինգիզ Խանի

սերնդից է: Այուսներից Թումանը դեռ գեղեցիկ է, նրանով կարելի է որպես կնոջ հետաքրքրվել, իսկ ինչ վերաբերում է Յելիան տիկնոջը, ապա սա կարող է ուզածդ այրմարդուն խելքահան անել: Սրան Մելիքեին համարում է թեթ-ամիտ, դե, ինչ կարող ես սպասել մի կնոջից, որ զորապետերին յուրտի վարագույրի ճեղքից է նայում: Խորհում եր, որ նա մի օր գլխին փորձանք է բերելու: Յելիանը խանդում է ամուսնուն, իսկ Մեծ թագուհին վաղուց է դադարել խանդելուց:

Մելիքեին համար հաճելի է տիրակալին գեղեցկուիի ընծայելը, պատկերացնում է, ինչպես են կատաղում Թումանսն ու Յելիանը: Երկուսն ել բարի պտուղը չեն: Թագուհին գիտե ինչ չպարզված հանգամանքներում են մեռնում գերուիիները: Այդ ամենը չի հետաքրքրում տիրակալին: Նա ժամանակ չունի պատիր բաներով զբաղվելու:

- Այս երկրներից մեծ ու հարուստ է Յայաստանը, իսկ Վրաստանը անհամեմատ փոքր է Յայաստանից,- միտքը շարունակեց Թամուրը,- արհեստավորներին կըշենք Սամարդանդ, եթե ինազանդ են, թող ապրեն: Ով դեմ ելավ, սրի քաշել: Սրանց քաղաքները լավ են պաշտպանված, քարից են պարիսպները, զոհեր ենք տալիս... Մեզ ինազանդ երկիր է պետք, որպեսզի Բայազետի վրա գնալուց թիկունքից հարված չստանանք,- ներկաները սրվեցին, սպասեցին, որ տիրակալը ասեր՝ երբ է գնալու սուլթանի վրա: Թամուրը տեսավ նրանց լարված դեմքերը, ժպտաց դառնությամբ,- վաղ է դեռ, պատրաստ չենք: Առանց նվաճելու Յայաստանը, առաջ գնալ չենք կարող: Յայեղը անհնագանդ ժողովուրդ են: Մեծ-մեծ բաներ են երազում, ուզում են վերականգնել կորցրած թագավորությունը, թուրքերին քշել իրենց երկրից: Յասու չեն, որ ընկել են Բայազետի պես բազեի ճանկը: Արդ, մեր հերթն է, կվերցնենք մեր բաժինը: Մեր տիրույթները պիտի տարածվեն մինչ- Կոստանդնուպոլիս, ավելի հեռուները, իսկ հետո...,- ետ ընկավ բարձերին,- Յնդստան, Ճենաց երկիր...

Ներկաները շունչները պահեցին, Տիրակալը աչքերը փակ երազում էր...

* * *

Յովիաննես Եպիսկոպոսը ծանր հիվանդ էր: Յազը խեղդում էր: Ծեր ու հոգնած էր Եպիսկոպոսը: Կենաց մահու սահմանագծին հասած դեռ տոկում էր, քանզի դեռ շատ անելիքներ ուներ սրբազանը:

Յոզ-որները եկել, հավաքվել էին նրա մոտ: Նոր էին առել Նախճավանի ու Շահապունքի կործանման լուրը: Մռայլ էին, շփոթված, մի՞թե կործանվելու է ողջ երկիրը: Իսկ եթե սա աշխարհի վերջն է, Աստծո դատաստանի օրն է սկսվելու: Տիան մարդիկ չեին, գիտեին Յայոց պատմությունը, իսկ այսպիսի արհավիրքի մասին ոչ մի մատյանում պատում չկար: Յար-անները հարձակվել էին, զարկել ու զարկվել, սակայն խոր-

հել էին, որ վաղը հաշտվելու էն, մի քանի տարի հաշտ են ապրել, ապա նորից... իսկ սրա՞նք...

Այ, գրավել են Շահապունքը, սրի են քաշել բնակիչներին, զոհվել են Պռջան եղբայրները, միևնույն այդ էլ չաղաթայները կործանել են Նախաճաշանը: Ամեն տեղ արյուն ու ավեր է: Ս- է կապել Յայոց Երկրնակամարը: Ի՞նչ է, սովոր չե՞նք պատերազմի ու արյան, որ առաջին անգամն է - ոչ էլ վերջինը, ո՞վ կսատարի... Եթե բարձրաձայն խորհեին, կասեին, որ ապավինեն Աստծուն, սակայն մտովի մեղա գալով, հոգում ծնվող կասկածի համար մեղա էին գալիս... Ո՞վ կսատարի, լինել-չլինելու հարց էր...

- Թովմա', - հազը նորից խեղդեց եպիսկոպոսին, սպասեց մի պահ, հազը մեղմեց, - կգնաս, կհանդիպես եղբորդուս, կիմանաս ո՞ւր են զարկելու չաղաթայները: Չե՞ն գալու ծովակալի կողմերը: Ծանր է, որդիք, վիճակը: Մեր շատ կորովի իշխաններ են զարկվել, հարյուրավոր մարդիկ են սրի քաշվել, գերի տարվել Սամարդանդ: Զաղաքներ ու շեներ են ավերվում, - սա սկիզբն է Ներ Կարապետի ոճիրների, - ծանր շունչ քաշեց: Յոգ-որևերից մեկը թուրմի գավաթը մոտեցրեց նրան,- Եզնիկ, որդի, չի օգնում, - անձկացավ, - իմ օրերը հաշված են, - հոգոց հանեց, - Ես իմ մեջ մահվան կոչեր եմ լսում, սակայն լիահույս եմ, որ Աստված մի քանի օրվա կյանք կտա, ես դեռ պիտի տոկամ, ես ազգափրկիչ գործեր եմ ուզում ձեռնարկել, - նորից դարձավ Թովմային, - կտեսնես եղբորորդուս, կասես, որ օրինում եմ նրա Վերադարձը իր ժողովրդի գիրկը: Նա պարտ է օգնել իր ժողովրդին, - ձեզ ամենքդ պատգամ ինձանից՝ սիրեք այս սուրբ հողը: Ես ձեզ ուսանել եմ Պղատոնի, Արիստոտելի, Շիրակացու, Սոկրատեսի, այլոց գործերը: Նա- այս մասին, որ Մեր Լեռնաշխարհում արարվել են Յայարիները - սփռվել են աշխարհի չորս ծագերը... Երկար լրեց, ապա, - Այսօր - դեռ շատ ու շատ ժամանակներ մեզ պետք են գենք ու զորք, - Աստծո խոսքն ասված ժողովրդին, հարկ է զենքի կոչել հանուն մեր սրբությունների, հանուն Յող Յայրենիի: Այսօր պետք է խոսք ասել ըմբռստացման, կոչ կոչենք հայերին՝ ի գեն: Զգարմանաք, որդիք, հավատացեք ծեր հոգ-որիս - ընդունեք պատգամս, աղոթեք նա- հոգուս փրկության համար: Յանուն Յոր, Որդվո ու Յոգվուն Սրբո, ամեն, - թույլ ձեռքով խաչակնքեց ներկաներին, - ես դեռ կտոկամ...

Գիշերը չխանգարեց Թովմային դուրս գալու վանքից: Խաղաղ գիշեր էր, աստղերը խաղաղ ժպտում էին երազելու տրամադրում: Աբեղան կրծքի տակ հաճելի տրոփք զգաց: Յասկացավ, որ առ Աստված ունեցած սերը չեր: Նրա հոգում Աստծո սերը կար ու անխախտ էր, իսկ այս սերը անհասկանալի էր: Սա չգիտակցված սպասում էր...

Խաղաղ գիշեր էր, մարդ չեր կարող հավատալ, որ ինչ-որ տեղ հրդեհներ են բռնկվում, մարդիկ են սպանվում, որ մահը խելահեղ պարի մեջ է առել մարդկանց, անհավատալի էր այդ ամենը թվում: Պատերազմի սարսափներին լսողաց էին, ոչ զգացած:

Թովման կծկվեց գարևանային ցրտից: Նրա նիհար մարմիսը սովոր էր ցրտի, միայն մի պահ սրթարթաց, սեղմվեց փարաջայի մեջ, ձգեց գոտու տեղ կապած պարանը: Ծուռ ժպտաց ծովակին, նրա խաղաղ երեսին ընկա լուսնի արտացոլմանը: Քայլեց Արճեշի կողմը: Վճռեց գևալ Զարիշատ, այստեղից արքայական պողոտայով գնալ, փնտրել Զահիրին, չգիտեր որտեղ, ինչպես գտներ, սակայն ապավինել էր Աստծուն: Չեր վախենում սատանայի բոլոր որոգայթներըից, հզոր էր առ Աստված ունեցած իր հավատքով:

Լուսակն ծամն էր, հասավ Արճեշի պարիսավներին, կանգ չառավ, աղմուկ լսեց, շարժվեց աղմուկին ընդառաջ: Սկսեց լուսանալ, սկսեցին զանազանվել շրջապատի թփերը, ճանապարհը: Ար-ը դեռ չկար, դեմ էր առել Արարատներին, խռոված մոր պես զավակներից թաքցնում էր լուսեղեն դեմքը:

Խուլ բվկոց լսեց, ինչ-որ մթամած զանգված էր գալիս, հասկացավ, զորք չեր: Կանգնեց ճանապարհի մեջտեղը, հակասական մտքեր խուժեցին հոգին, սպասումը նորից գլուխ բարձրացրեց, ինչի՞ սպասում էր, ի՞նչ էր ուզում...

Մոտեցան մի խումբ մարդիկ, կապոցներով էին: Նրանց հետ-ից խուռներամ բազմություն էր գալիս՝ կանայք, երեխաներ, ծերեր: Յետները տանում էին ով ինչ կարող էր: Մի քանի սայլեր կային:

- Ովքե՞ր եք, որտեղի՞ց,- հարցրեց Թովման:
- Փախստական ենք, տեր հայր,- պատասխանեց կապոցի ծանրության տակ կքած մի նիհար մարդ,- Յերի կողմերից ենք, գնում ենք Տայոց աշխարհ: Նեղում է անիջալ չաղաթայք, փրկություն չկա:

- Փախչում ենք, ինչ օրի հասանք,- նրան միացավ մի ծերունի,- գունե երեխաներին փրկենք: Տայքում կպատսպարվենք, մինչ- անցնի արհավիրքը...

Մեկի տևքոցը լսեց, որ ավելի ստույգ մռնչյուն էր:

- Փախչելով՝ երկիր ու ժողովուրդ չես փրկի,- մռմռացրեց մի հսկա երիտասարդ, ինչպես եր-ում էր, արհեստավոր էր, հյուսն էր, իր գործիքների արկղն էր տանում,- փախչում ենք, հանց նապաստակ: Այսր տեսել եմ դրանց, մերկ ձեռքերով կիսեղդեմ, սակայն փախչում ենք սարսափահար: Զկա մեկը ասի՝ ետ դարձեք...

- Դու էլ ե՛տ դարձիր,- զայրացավ մեկ ուրիշը,- ի՞նչ ես սպասում, ո՞ւմ ես սպասում:

Հսկան կատաղեց, փնչացրեց, սեղմեց բռունցքները:

- Զե՞զ եմ սպասում, իշխանին, թագավորին, զորավարին, տե՛ր Յորս եմ սպասում,- հայինյեց: Թովման հսկայի աչքերության կողքին թախիծ տեսավ, չհասկացավ, քանզի անհարիր էր զայրույթն ու թախիծը իրար կողքի,- չորսին զարկեցի ու վերջ: Բա ո՞ւր են երկրի տերերը, իշխանները: Անտեր երկիր է, ով ուզում է՝ գալիս, ավերում է, ժողովրդին փչացնում...

- Մի՛ գևացեք երեխաների հետ մեսակ մի թողեք,- համարյա ճշաց մի կին,- շատվոր են անիծյալները, թիվ ու համրանք չկա, աշխարհի վե՛րջն է...

Ասացին, Թովմայի կողքով անցան գևացին: Թովման մնաց ճաևապարհի մեջտեղը կանգնած: Գալիս էին փախստականները, շրջանցում էին նրան, ինչպես գետի մեջտեղը ընկած քարին, իսկ նա խռովահույզ մտքերի հետ էր, կանգնել էր գլուխը կախ, պանակեն թաղվել էր մորուքի մեջ, չեր եր-ում:

«Արդար է կշտամբանքո, շինական եղբայր, հարկ է ոտքի հանել մարդկանց, պաշտպանվել է պետք: Աստված կռվողներին միշտ էլ սատարել է... իսկ նրանք, մեր առհավական նախնիք՝ Արիական հայերը, կիանդուրժեհն այս Վիճակը»: Ցնցվեց, մի կին էր կանգնել, խոնարհված:

- Օրինիր մեր ճամփան, Յայր սուրբ,- կինը տեսել էր պանակեն, հասկացել էր, որ աբեղա է:

Ի՞նչն օրիներ, փախուստի ու ետ գալու անհույս տանջա՞նքը, ի՞նչ ասեր այս կնոջը, որ ևայում էր հույսով, ևա-՝ անհույս:

- Բնավեր ենք, տնավեր ենք, Յայր սուրբ, Աստված էլ է մոռացել...

Անցավ, գևաց, առանց օրինանք առնելու: Թովման դարձյալ մեսակ մնաց, սակայն էլի մարդիկ եկան, անցան, մի կով, այծեր, ոչխարներ: Մի ծի անցավ, գլուխը երկարեց աբեղային կծելու, սակայն հեծյալը քաշեց անձը, ևայեց մեղավոր, կոռքին տեսավ հսկա հյուսնին: Այս անգամ առանց արկդի էր:

- Յայր սուրբ, եսպես չի լինի: Մեկը լինի իրար գլխի հավաքի, եսպես չի լինի, մինչ- ե՞րբ, մինչ- ո՞ւր...

Թովման ուզեց գրկել հսկային, գլուխը դնել նրա կրծքին, հարցնել.

- Մինչ- ո՞ւր, մինչ- ե՞րբ: Անունդ ի՞նչ է,- հարցրեց:

- Փայլակ է, Յայր սուրբ:

- Ո՞վ ունես, Փայլակ, հայր, երեխաներ:

- Ունեմ ու չունեմ: Յայրս, մորս հետ, կնոջս ու Յայկարամիս առել, գևացել են Նախճավան... ասում են գերիներին քշում են գումակի հետ: Ի՞նչ անեմ, Յայր սուրբ: Ասա, մարդ Աստծո, գիր ու պատմություն գիտես: Իմ գիտեցածը ես կացին է, ի՞նչ անեմ,- հանկարծ բռնեց աբեղայի ուսը,- կանգնել ես ճամփի մեջտեղը, միտք ունես ետ դառնալու: Ես էլ գամ հետդ:

Թովման հասկացավ, որ հսկան ասելիք ուներ՝ կացնով ասելու ասելիք, աչքերը շողում էին, Թովման քիչ մնաց ճշար:

- Ուսս թող, տնաշեն, կփշրես,- Ժպտաց մռայլարեմ,- իմ ճամփան Աստված գիտե, հասու չեմ ուր կտանեն ճամփաները... Ես վտանգի բերան կերթամ, չաղաթայների դեմ կերթամ...

- Ես էլ գամ, ապահով կլինի,- ասաց ու լոեց:

Փայլակը իր վշտի մեջ ամփոփել էր ողջ աշխարհը, ելք էր փնտրում

ու չեր գտնում, ծանր փնտրութիւն մեջ եր հսկան:

Թովման քիչ մնաց ասեր, որ ինքը այլ նպատակ ունի, որ չի կարող ի-
րեն ընկերանալ, հասկացավ, որ տեղին ու ժամանակին չեր լինի խոսքը,
Փայլակն էլ, որ վշտի տեր էր, չեր հասկանա, կվիրավորվեր:

- Եթե չես վախենում զրկանքներից, չոր հաց կրծելուց, նա- անհաց
մնալուց, մահու երեսին նայելուց, գնանք, Աստված մի դուռ կրանա:

Փայլակը ետ վազեց, բերեց արկող, ափսոսանքով նայեց, վերցորեց
միայն մեծ կացինը, խրեց գոտու տակ, թիկունքի կողմից: Արկող դուց
թփի տակ:

- Խաղաղ կյանքս վերջացավ...

Փախստականների հոսքն ավելանում էր: Մի քանի զինվոր եկան,
հեծյալ էին, վիրավոր ու մահացու հոգնած տեսք ունեին:

- Որտեղի՞ց եք,- հարցրեց Թովման:

- Յայց աշխարհից,- մօայլ պատասխանեց զինվորը, ապա տեսնե-
լով, որ հարցնողը աբեղա է, հանեց սաղավարտը, խաչ քաշեց դեմքին,-
Նախճավանից ենք երկուսս, մնացածներն ել տարբեր վայրերից են:

Փայլակը ճանկեց զինվորի ձիու սանձը:

- Եղբայր, պատմի՞ր Նախճավանի մասին, ախր ընտանիքս ենտեղ
Ե...

Զինվորը ավելի մօայլվեց, թափ տվեց գլուխը:

- Ի՞նչ պատմեմ, քաղաքը ավերեցին, մարդկանց սրի քաշեցին: Մի
մասին ել գերի տարան,- հոգոց հանեց,- ես եղ ժամանակ վիրավորվե-
ցի,- գլուխը օրորեց, զայրացավ,- չհասցնես ծերոնց մասին, այնքան
դիակ եմ տեսել, որ կասեմ՝ կենդանի մարդ չթողեցին, ել չհարցնես,- նա-
յեց աղաչական,- հրեշ են, մարդ չի ծնել դրանց... Մասկանց զարկում են
քարերին, փշրում են գլուխները,- Փայլակը տևքաց,- կանանց բռնաբա-
րում են փողոցում, մարդկանց աչքի առաջ, պիղծ ու անամոթ ցեղ են...
Լավ էինք կռվում, ի՞նչ կարող ես անել, գալիս էին հորդաներով, գալիս
են հազարներով:

- Կարդան ավագ, գնանք, ուշանում ենք,- ասաց զինվորներից մեկը:

- Մենք ուշացել ենք, ուշացել ենք ազգովի,- դարձավ Թովմային,-
գնալու ո՞ր կողմն է, Յայր սուրբ, երեկոյան անօրենները եստեղ կլինեն: Թե
առաջ ես գնալու, գնա Թոնդուրեկի փեշերով Անգղ, դեպի Բագարան: Ախր
մինչ- ե՞րբ վագենք, եսպես զարկված ու ամոթահար:

- Գնանք միասին,- ասաց Թովման:

- Գնում եմ Մանազկերտ, ենտեղից եմ: Գոնե ընտանիքիս հետ կլի-
նեմ: Ամենքս ել Յայստան աշխարհում վտանգված ենք...

Աշխարհն է վտանգված, անարգված, վիրավոր, գլուխը կորցրած,
մինչ- ե՞րբ...

Անցան, գնացին, փախստականների հոսքը չեր կտրվում:

- Ո՞ւր ենք գնում, տեր Աստված, հանց ոչխար սպասում ենք, որ
մորթեն, Տեր, ինչո՞ւ ես մոռանում քեզ ապավինածներին: Մինչ- ե՞րբ...

իշխանները թառել են իրենց բերդերը, կովում են միայն իրենց բերդերի համար, ժողովրդին անպաշտպան են թողել հորդաների առաջ: Եսպես փախեփախ մինչ- ո՞ւր, մինչ- աշխարհի ծայրը... Որտե՞ղ է այս: Մեծն համարող Անանիան ասում էր, որ աշխարհը ծայր չունի, կլոր է աշխարհը, համամիտ եմ, քանզի մեծ է հայ իմաստասերը, ափսոս, նա- Աստծո մասին հերծվողական մտքեր ունի... զգաց, որ բարձրածայն էր խոսում, որ հսկան չի հասկանա իրեն:

- Գևանք Անգղ, Աստված Էնտեղ մի դուռ կբանա:
- Գևանք,- գլխով արեց Թովման, քայլեց առաջ, Փայլակը հայտնվեց կողքին:

Աբեղան կշարունակեր ճամփան, եթե կանգ չառներ հմայված, զարմացած նա-:

Սայլ էր անցնում կողքով, մի երիտասարդ կին կուրծք էր տալիս մանկանը: Մեծ, սպիտակ կուրծքը, երեխայի երանելի ժպիտը կարկամեցրել էին Թովմային: Ուրիշների համար սովորական, աբեղայի համար առաջին անգամ տեսած ու դեռ չգիտակցված հրաշք էր: Կնոջ կուրծքը շլացրել էր աբեղային:

Երեխան կշտացած, բերանը ետ քաշեց, ժպտաց լիացած: Նրա հայացքում անմեղություն կար, մոր հայացքում՝ գորովանք: Թովման պատրաստ էր այստեղ, ճանապարհի փոշու մեջ ծնկի գալու, աղոթելու այդ կնոջը, որպես Մայր Աստվածածնի...

Կինը ամոթիսած ծածկեց կուրծքը: Սայլի կողքով քայլող շինականը խոնարվեց աբեղային: Թովման շերմորեն խաչակնքեց երեխային, ձեռքը դրեց մոր գլխին:

- Թող Աստված ձեզ հետ լինի:
- Սայլն անցավ: Աբեղան երկար ժամանակ նայում էր ոյութված: Նրան թվաց, որ վանքի պատին դրվագված Մայր Աստվածածինը իշել էր պատից, մարդացել էր, մայրացել, կուրծք էր տալիս մանկան:

- Կապրի հայ ժողովուրդը, կապրի, մայրերը երեխաներ են ծնում, կապրի', կապրի'...

Փայլակը քաշեց թ-ից:

- Գևանք, մթնում է, ի՞նչ է լինելու սրա վերջը:
- Ոչ մի բան էլ չի վերջանում, մեկի վերջը մյուսի սկիզբն է: Ամեն բան փոփոխական է,- տեսնելով Փայլակի զարմացած հայացքը, ասաց,- գևանք, Էստեղ կանգնելով օգուտ չենք տա, գևանք:

Զայլեցին, սկսեցին մոտենալ Թոնդուրեկին, փախստականների հոսքը պակասում էր: Վերջապես ճանապարհը դատարկվեց: Սկսվեցին լեռան կածանները:

- Չբարձրանանք գագաթ, ուժ չվատնենք զուր տեղը:
- Փայլակը քայլում էր գլխահակ, լուր էր:
- Ապավինիր Աստծուն, նա ամեն բան տեսնում է:
- Սա՞ Էլ է տեսնում,- Փայլակը ցույց տվեց հեռացող փախստական-

Ների վերջին խումբը, - ախր ինչո՞ւ չի պատժում անհավատներին, - ասելիքը ծամծմեց, թեր-ս զգուշացավ աբեղայից, դեռ հասու չեր ինչ մարդու հետ էր ճամփա ելել:

Գիշերվա դեմ շուր եկան լեռան հյուսիսային կողմը: Առջ-ում աղոտ ծեգծեզացին Անգղի լույսերը:

- Եստեղ կգիշերենք, գիշերս վտանգավոր է, լեռան լանջին ձորեր կան, խորխորատներ, կընկնենք, շարդ ու փշուր կլինենք:

Ճարմար տեղ ընտրեցին, քարանձավ գտան, որտեղ տաք էր, քանզի լեռը շնչում էր դավադիր ջերմությամբ, ընդերքից գոլորշիներ էին բարձրանում:

Խարույկ վառեցին: Լույսն ահագնացավ, նրանց կտրեց շրջապատից:

- Գարունը շատ երկարեց, ցուրտ է անում, - խոսեց Փայլակը:

- Կողմանանք, միայն թե չաղաթայները ետ քաշվեն:

Առավոտյան արթնացան քաղցած, հոգնած: Բռնեցին ճամփան դեպի Գայլատու: Լճի կողքով անցան ցերեկը: Նորից փախստականներ տեսան, սակայն, ո՞վ զարմանք: Սրանք նման չեն երեկվա փախստականներին: Գնում էին մօայլ ու զայրալից: Մեծ մասամբ այրմարդին էին: Գնում էին Բարդող լեռան կողմը: Այո՛, այո՛, սրանք նման չեն երեկվա փախստականներին, ասես գիշերվա մեջ հրաշք էր կատարվել, մարդիկ կատաղել էին, դարձել վճռական, նա- անզուսպ: Իսկ ի՞նչ պատահեց մի գիշերվա մեջ, ի՞նչ աստվածային ներշնչանք էր ստիպել մարդկանց հավաքվել իրար գլխի:

- Ո՞ւր եք գնում այսպես շտապով, - հարցրեց Թովման:

Մի երիտասարդ և այցեց զարմացած:

- Յայ սուրբ, գնում ենք կռվելու չաղաթայների դեմ, - Թովման զգաց Փայլակի ծանր ձեռքի սեղմումը:

- Տեսա՞ր, ասում էի, չե՞...

- Մենք Սյունիքից ենք, - շարունակեց երիտասարդը, փախչելով եկել ենք, հասել եստեղ, ել տեղ չմնաց, կամ կռվենք, կամ չաղաթայները մեզ ել կորսան նապաստակների պես, - ամաչեց, լուց: Թեր-ս ամաչեց, որ լինելով սյունեցի, փախստական է դարձել:

- Սպասի՛ր, - ձեռքը երիտասարդի ուսին դրեց մի տարեց սյունեցի, - Յայր սուրբ, գնում ենք Մարտիրոս տանուտիրոջ կոչին: Գնում ենք Բարդողի վրա կռվելու: Գոնե կփրկենք մնացածներին, անհջալները հեծյալ են, կհասնեն, կկոտորեն, այլ ելք ու հնար չկա, կռվելուց զատ:

- Յա, - նրան միացավ մի ծերունի Զարհ-անից, - եղել են ու կան մեր մեջ քաջ ու կռվող այրեր: Արդ, հատնել է ժողովորի համբերանքը ու ելել է տանուտեր Մարտիրոսը, կոչ է կոչել ժողովորդին, եսպես է քանը:

Թովման հուզվեց, ուզեց գրկել ծերունուն: Ահա այս, ինչին ձգտում էր աբեղան, ինչին հավատում էր ու չեր հավատում կործանմանը, իսկ այս ծերունին, որ իմաստուն է հարյուրավոր իմաստաերներից, ասաց

այս, ինչ այսօրական է, ինչը կորստյան դեմ առևելու հուսկ միակ միջոցն է: Փառք շատ, Տեր Աստված, սա է հուշածդ ելքը փրկության...

- Գնում ենք, սակայն քաղաքներն ու շեները չդիմացան, մենք ինչո՞վ ենք կռվելու...

- Չենք որ չճարվեց, քար կա ու կա,- խոսակցությանը միացավ մի անգեղցի,- այս ձեռքերով երկուսին խեղդեցի: Ոչինչ, մեր նման մարդիկ են...

- Քեզ ինչ, Պողոս, դու արջ էլ կիսեղես, քեզ չաղաթայ չի դիմանա:

Պողոսը հետաքրքրությամբ նայեց ձեռքերին, ասես առաջին անգամ էր տեսնում, ասես նա չէր խեղդել չաղաթայներին:

- Այ, կհասնենք Մարտիրոսին, թ- ու թիկունք կդառնանք: Ժողովրդով պիտի սար բարձրանանք ու ժողովրդով էլ պատասխան տանք, փրկենք կանանց ու երեխաներին: Թե բախտ վիճակվի, կապրենք, միասին կլինենք,- խոսքը կիսատ թողեց,- նայեց կանանցից մեկին, որ ուսին նիզակ էր դրել, այնպես, ասես դաշտ էր գնում ու փողիս պիտի աներ: Նրա տեսքը մի փոքր ծիծաղելի էր, սակայն նա- վախեցնող:

Թովման տեսավ, որ ամենքն էլ զինված են, սյունեցիները երկար դաշույներ էին կրում, որ կարող էր փոխարինել սրի: Խմբում երեխաներ ու կանայք կային, որ կամեցել էին միասին լինել իրենց այրմարդկանց հետ, իրենց ամուսինների, հայրերի հետ: Ամենքն էլ ճամփա էին բռնել Բարդող: Այո՛, Յայց ճամփաները Բարդող էին տանում...

«Թեր-ս Բարդողը անմահանա Յայց պատմության մեջ,- խորհեց Թովման, առանց իմանալու, որ մարգարերություն էր անում»:

Մարտիրոսի կոչը բավականին հեռուներն էր հասել, թողած ամեն ինչ, հյուսները իրենց վրա դրած, գնում էին Մարտիրոսի կոչին: Բարդողը ահագնացել էր Յայց ճակատագրի ճամփին, դարձել փրկության լեռ...

Ուշ երեկոյան հասան լեռան փեշերին: Իմացան, որ տանուտերը լեռ էր բարձրացել: Ուղեկից տվեցին: Ոլոր-մոլոր կածանով բարձրացան լանջն ի վեր: Ամեն տեղ շինականներ կային, զինված էին, ով ինչով կարողացել էր: Քարեր էին հավաքում ծորի եգրերին, դեմ գերաններ կապում: Այնպիսի տեղերում էին քարկապեր դրել, որ գերանները քանդելուց՝ քարերը գլորվեն ցած:

Մրայլ, զով, ավելի ստուգ՝ ցուրտ երեկո էր: Այն մարդկանց սթափ ու գգոն լինելու էր տրամադրում:

Լինում են պահեր, երբ բնությունն ու մարդը միաձուլվում են, այդպիսի պահ էր լեռան վրա: Լեռը հուշում էր ինչով կռվել, ինչպես կռվել: Լեռը հարազատացել էր մարդկանց, քանզի այլ պաշտպան չունեին, լեռան էին ապավինել, նա- իրենց բազկին:

- Քարերի երկիր է, քարերով էլ կկռվենք,- ասաց Փայլակը:

- Նետածիգներ էլ ունենք,- լսվեց մի բամբ ձայս:

Խարույկի կողքին բարձրահասակ, լայնալանջ մարդ էր կանգնած:

- Երեխաներին ու կանաց տարեք անձավսերը, Էնտեղ տաք Է: Այրմարդիկ ամենքն էլ կկովեն: Յակոբ, Պարուսակ, Վարդգես, Նարեկ, Նորեկներին բաժանեք շոկերի: Ամեն մեկը իր տեղն իմանա: Նայեք, ով զենք չունի, կարգեք քարկապերի մոտ: Չարն էլ գենք Է: Ես հայ շինական չգիտեմ, որ պարսատիկով քար նետել չկարողանա,- մի պահ ծայնը լուց:

Լուլ էին նա- շրջապատում, լսում էին բամբ ծայնի տիրոջը:

- Տեսնում եմ, ձեր մեջ հոգ-որ կա: Առաջ արի, պարզիր սանդ, մեզ հոգ-որ հովիվ եղիր:

- Աքեղա եմ, Մեծորա վանքից,- ասաց Թովման, մոտեցավ խարուկին:

- Ես Կողբա տաևուտեր Մարտիրոսն եմ: Առաջ արի, նստիր քարին: Տեսնենք իրար, նա- իիշենք: Վաղը ժամանակ չենք ունենա, վաղը եստեղ կիլինեն չաղաթայները: Եր-ացել են Արուճի մոտերը:

- Շա՞տ մարդ է հավաքվել, տեր Մարտիրոս,- հարցրեց Թովման, նայեց շուրջը:

- Մարդիկ անձավսերում են, դիտակետերում: Այս պահին քիչ մարդ կա դրսում: Առավոտյան կեր-ան, երբ տեղ հասնեն չաղաթայները,- զայրացած սեղմեց բռունցքները,- նրանք դեռ հայ շինականի չեն հանդիպել: Վաղը կտեսնեն ինչի է ընդունակ հայ մարդը:

Այնպիսի հավատով խոսեց շինականի մասին, որ Թովման ակամա պատկառեց, զգաց, որ նրա հավատը վարակիչ է, ինքն էլ անկախ իրենից ոգ-որվեց: Յասկացավ, որ Մարտիրոսի հավատը կբավականացներ այստեղ հավաքվածներին:

Գիշերը, ինչպես լինում է լեռներում, հանկարծակի մթնեց: Խարուկներ վառեցին: Մարտիրոսի մոտ հավաքվեցին շեների ավագները, գյուղապետերը:

Սյունեցիներից եկան ծերունի Յակոբն ու հսկա Վարոսը: Սրանք ամենքն էլ Մարտիրոսի հանձնարարությունները կատարելուց հետո եկել էին գեկույցի:

- Տե՛ր Մարտիրոս, գրավել ենք լեռան կածանի մուտքը, Էնպես ենք փակել քարերով, որ չաղաթայները չեն անցնի: Չառասուն նետաձիգ դիրք են գրավել քարակապի մոտ:

- Ապրե՛ք, սյունեցիք, ձեր գործը դյուրիին է, դուք արդեն կռվել եք: Մերունց գործն է դժվար, առաջին անգամ են կռվելու: Խակ տղաներ են,- հոգոց հանեց,- ոչինչ, կռվի մեջ էլ կսովորեն, այլ ինար չկա: Յա՛, Վարդան, տղաներին ուղարկիր լեռան թիկունքի ծերպերն ու կածանները, թող նայեն, չաղաթայները շատվոր են, կարող են լեռը գրոհել ամեն կողմից:

- Տեր Մարտիրոս,- ուզեց խոսել կողբեցիներից մեկը:

- Սպասի՛ր, Կիրակոս, Էստեղ ո՛չ տեր կա, ո՛չ ծառա: Ամենքն էլ Ազգի ծառա ենք: Եղբայր ենք, Էսպես էլ իրար Եղբայր ասենք ու իրար թի-

կունք պահենք: Կռվում Եղբայր կոչելը հայերի համար նորություն չէ, այն գալիս է արիական դարերից: Յայարիները ամենքն ել իրար Եղբայր են կոչել...

- Եղբայր Սարտիրոս,- քաշելով սկսեց Կիրակոսը,- լեռը բարձրանալու մի կածան կա, են ել կապել ենք ու կպահենք...

- Թամուրը աշխարհ է տիրում: Նա շատ երկրներ է տիրել, քաղաքներ, բերդեր: Դյուրին չէ նրա հետ կռվելը: Յարկ է ամեն բան ես գլխից խորհել, վճռել:

Դրա համար տղաներին ուղարկեցի լեռան թիկունք: Թամուրի բանակում շատ լեռնագնաց զինվորներ կան, մողեսի պես ժայռ են մագլցում: Ամեն տեղ քարակապեր դրեք:

- Եղբայր Սարտիրոս, մթերքները չեն բավականացնի, թե- մարդիկ իրենց ունեցածը բերում են կամովին... Եսքան մարդ ո՞նց ենք կերակրելու,- խոսեց սյունեցի ծերունին,- երեխա, կին...

- Մթերքը քիչ-քիչ տվեք, տեսնենք, Աստված մի դուռ կբացի, հետո ել Թամուրը մի բուռ շինականի համար բանակը չի պահի լեռան տակ: Մեզանից ի՞նչ պիտի վերցնի գլխներից զատ... Դեռ կռվենք, հետո կեր-ա:

Ավագները ավելի մոտեցան Սարտիրոսին: Եղբայր բառը մտերմացրեց մարդկանց, հարազատացրեց վտանգի առաջ

- Կռվել-չկռվելը մեզանից չի կախված, մենք պատասխան տվող ենք, անիջալները շատվոր են: Յեղեղեցին Սյունիքը, այրեցին, ավերեցին: Արյան ծարավի են հանց բորենի, ինսայել չգիտեն... Դուք երիտասարդ եք, չգիտեք, Թամուրի հայրն եր, թե հորեղբայրը՝ Չինգիզ Խանը, աշխարհին ավերեց: Նրա հորդաները հասան Սյունիք: Ելանք մեծով, փոքրով, զարկեցինք, զարկվանք: Վահագն Աստված սատարեց մեզ, վերջ ի վերջո վանեցինք մեր հողից, սակայն շատ ժողովուրդ փչացրեցին: Որդիներից երկուսը զարկվեցին, մեկին ել գերի տարան,- խոր հոգոց հանեց,- Ե՛, որդիք, նոր բան չկա ես անտեր աշխարհում, ելի ավեր ու արյուն: Ամեն անգամ մենք ենք արյուն տվողը...

Թովման ցցցվեց, և այց չարահայաց, բարձրացավ տեղից:

- Նա- արյուն ենք առել թշնամիներից,- չհասկացավ, ինչպես շարունակեց խոսել, հզոր ենք եղել, անկախ, ճակատ ենք իշել Յօնմի լեգիոնների դեմ, ճակատել ենք պարսից հսկա բանակների հետ, կռվել ենք հոների, արաքների ու զանազան լեռնականների դեմ - դեռ ապրում ենք, շինական եղբայր: Ապրում ենք ու կանք: Կորցրեցինք թագավորությունը, սակայն Աստծո օգնությամբ դարձյալ կունենանք թագավորություն: Յայց հողում դարձյալ ազատ կապրեն հայերը, որ արիական նախնյաց արժանի հետևորդներն են, չեն լինի այս թուրքմանները: Մի՛ մոռացեք՝ անցել ենք բազմաթիվ ճակատամարտերով, բյուրավորներ ընկան, վկայելով ապրելու մեր իրավունքը, հիշեք, որ այստեղ Յայաստան լեռնաշխարհում ծնվել են Յայարիները, տարածվել են աշ-

խարիի բոլոր ծագերը... Մեր առհավական նախնիք այս սուրբ հողն են մեզ ավանդել, եղել ու կլինի Մայր Յայաստանը, մեր մեջ դեռ կհառնեն Յայարիական մեր նախնյաց հպարտ ու հզոր հոգիները, - այսօր մենք պատրաստվում ենք կրիվ ելնելու Թամուրի հորդաների դեմ, վասն մեր սրբությունների, վասն Յոդ Յայրենի, քանի խոսում, ծայն այնքան կարծրանում էր, զնում էր,- վաղը կելնենք չաղաթայների դեմ, շատվոր են, խոսք չունեմ, տիրել են աշխարիի կեսն ու եկել, դեմ են առել մեր Բարդողին, որ Ազատն Մասիսի կրտսեր եղբայրն է, սակայն ոչ պակաս ըմբոստ ու անկախ: Մենք կիաղթենք, քանզի արդար ենք ու մեզ հետ է արդարադատ Աստված, որ կապրեցնի մեզ, մարտի կիանի ի դեմ մահմեդական սատանայի, որ հոգու բռնություն է բերում:

Լիահույս եմ՝ կապրենք, քանզի մի ժողովուրդ, որ այսքան տոկացել է, կապրի...

Գիշերը խորանում էր, խարույկները թեժացրեցին: Յեռվից նայողին կթվար, որ լեռը հրաբխացել է, հրդեհվել է, - քարանձավների բաց երախներով թրթռացող լուսերը լուսավորում էին Յայոց վշտին ու տառապանքին անտեղյակ ու անտարբեր տիեզերքը:

Շատերը չընեցին: Մարտի սպասումը տանջում էր անփորձներին: Չընեց նա- Թովման, սակայն մարտի մասին չէր խորհում: Նա մեկընդմիշտ հաշտվել էր մահվան գաղափարի հետ: Եթե հոգին անմահ է, այլ-ս ինչո՞ւ վախենալ հոգու կեղ-ի՝ մարմնի համար: Վախը նվաստացնում է անմահ հոգին, այլ-ս ի՞նչ վախ, ի՞նչ սոսկում, երբ մահվանից հետո հոգին հառնելու է, միանալու է համաշխարհային հոգուն, ապա շարունակելու է հոգու անմահ շրջապտույտը, այն հառնելու է այլ մարմնի մեջ: Պղատուի ու Արիստոտելի մտքերը համաշխարհային հոգու մասին Թովման ընդունում էր ու դրանով առանձնանում էր հոգ-որսերի մեջ, թեր-ս այս հարցով է, որ Յովիաննես սրբազնը նրան առանձնացնում է մնացած աշակերտներից:

Սթափվեց, նայեց Մարտիրոսին:

- Ի՞նչ ասացիր, ներող եղիր, չըսեցի: Այլ-ս ինչ քսել, լուսանում է: Դուրս գանք, արդեն եր-ում է Բարդողի գագաթը, ուր որ է ար-ը դուրս կգա:

Դուրս եկան անձավից, զարմացան՝ շատերն էին ելել ար-ագալը դիմավորելու:

- Յայր Մեր, որ յերկինս ես..., - սկսեց Թովման ու կապ ընկապ:

- Օ՛, Արամազդ աստվածահայր, առավոտ լուսո, սուրբ առավոտ, - ինչող ծայնով ձոն ձոնեց մի երիտասարդ կին:

Ծնկի իշան ամենքն էլ, երեսները դարձրեցին դեպի լեռան գագաթը: Կնոջ ծայնը ինչեղ է, նա- զորեղ: Կսես տասնյակ քրմուհիներ էին նրան ծայնարկում, ասես միացել էին նրա ձոներգին:

- Օ՛, Մայր Ար-, զորացրու բազուկները մեր, փրկյա որդիներիդ, առավոտ լուսո, սուրբ առավոտ...

Թովման ինքնամոռաց, ոգ-որված կրկնում է ձոևի բառերը: Նրան թվում էր, որ այդ բառերը հոգու խորքից են դուրս թռչում, ինչ-որ հզորացման զգացում ուներ, մոռացել էր թե սանը, թե ուր գտնվելը...

Ար-ը պոկվեց լեռան գագաթից, ցոլաց, շողարձակեց մարդկանց աչքերի մեջ: Կնոջ աչքերը փայլեցին այսպես տամուկ, որ Թովմայի սրտի տակ խլրտուն ընկավ: Նրան այդպես էլ վիճակված չէր Յայր Մերը մինչվերջ ասելու - ոչ էլ կնոշը՝ ավարտելու ձոևերգը:

Լեռան ստորոտից աղմուկ բարձրացավ: Մարդիկ նետվեցին ձորապառունկ: Լեռան ստորոտում հայտնվել էին չաղաթայները:

- Եղբայրներ, եկավ ժամը փորձության: Չերկէսէ՛ք, թշնամու բազմությունը նրա տկարության նշանն է,- բարձրագոչ ձայնեց Մարտիրոսը:

Նրա այտը ցնցվում էր, գունատվել էր, թեր-ս քաջ մարդկանց մոտ այդպես է լինում, գունատվում են վտանգի պահին,- տեղերում, մոտենում են, քա՛ջ եղեք: Աստված մեզ հետ է:

Չաղաթայները մոտեցան կածանին, կանգ առան անհանգստացած: Փորձիր գրոհել այս ուղղաձիգ ժայռերը, որ երկու հարյուր կանգուն բարձրություն ունեն, շուրջբոլորել են լեռը, միայն մի կածան կա, որ իսկույն գտան:

Չեկուցեցին տիրակալին, որ հայերը քարերով փակել են կածանը, հասկանալի է, հայերը դարան են սարքել:

Թամուրի տրամադրությունը ընկել էր, մեծամեծները սսկվել էին:

- Մի հարյուր նետածիգով կարելի է փակել գնդի ճամփան: Թե ինչ-լահաս զորականներ ել եղան, քարկապեր կղնեն ու անհնար կղառնա բարձրանալ: Սակայն լեռը թողնել մեր թիկունքին, ուր զորքեր են կուտակվել, չենք կարող: Յը, ի՞նչ կասեք,- Թամուրը նայեց մեծամեծներին, սրանք իրենց հերթին նայեցին Շահ Մելիքին: Նա պիտի առաջինը խոսր, որպես տիրակալի օգնական ու մտերիմ:

- Տիրակալ, աշխարհը կզարմանա, որ չզորեցինք մի լեռ գրավել, հետո էլ...

- Յետո էլ,- նրա միտքը շարունակեց Թամուրը,- լուրը կհասնի նրան, ով մեր անհաջողությամբ կուրախանա,- քահ-քահ ինսդաց,- կասի մի քոստ լեռ չգրավեց, մեզ հետ չափվել է միտում,- ներկաները հասկացան, տիրակալը խոսում էր Բայազետ սուլթանի մասին:

Շրջապատում հասկացան, որ կատարվելու էր մի բան, որ անգամ տիրակալը չէր ցանկանա, սակայն պարզից պարզ էր. զինվորներին քշելու էին մահվան բերանը, այն էլ ամենասարսափելի՝ քարչարդի...

- Շահա՛ա իշխան, գրոհի՛ր,- հրամայեց տիրակալը: Նստեց յուրտի մոտ դրված բարձերին,- գնա՛, թող Ալլահը հաղթանակ պարգ-ի քեզ:

Նրա բարեմաղթանքներում ավելի շատ անհանգստություն կար, քան հաղթանակի մաղթանը, քանզի փորձված զորավար էր, լավ էր հասկանում թե ուր է ուղարկում զորապետին - ինչու: Նա մահվան էր

ուղարկում մարդկանց, իսկ ափսոսանք չկար: Նրա համար ամենքն էլ հլու-հնազանդ գիւղորներ են, ուրիշ ոչինչ: Ալլահի կամքն է, կարող է փրկել, կարող է զարկվել:

Շահաա իշխանը խոնարհվեց, քայլեց դեպի թիկնապահը, որ սանձից բռնած պահում էր նրա նժույգը: Զաջ իշխանը, որ բազում երկրների նվաճման էր մասնակցել, գնում էր մի անհույս գրոհի, իսկ չգնալ չէր կարող, տիրակալի իրամանն էր, այն համազոր էր Ալլահի կամքին:

Շահաաի գունդը աղմուկ-աղաղակներով նետվեց կածանն ի վեր, կանգ առավ, կոտրեց գրոհի թափը, քանզի կարող էին շարժվել միայն հծաշարուկով, մեկ-մեկի հետ-ից: Գունդը ձգվեց, նմանվեց վեր սողացող օձի:

Եռև անարձագանք էր, լուռ, իսկ դա գոռոցից էլ վատ էր ազդում զիւղորների վրա: Նրանք սովոր էին գոռում-գոչունների: Սսկվել էին, ազդեցի լեռան խորհրդավոր լուրջունից: Ահա կածանի այն հատվածը, որ անհայտացել է քարերի տակ: Յեծյալները հավաքվեցին իրար գլխի, քանզի այստեղ մի փոքր տարածք կար: Շահաաը հասկացավ, որ սա հայերի հարձակման պահն էր, ուշ էր: Յեռվից դղրոյուն բարձրացավ, սկսեց մոտենալ: Անհասկանալի էր դղրոյունի պատճառը: Տարակուսած իրար նայեցին, սպասեցին, սակայն ամեն ոք դղրոյունը կապում էր վտանգի հետ, անգամ խորհեցին ետ դառնալու մասին:

Յանկարծ քարակույտի գլխին ծուխ նկատեցին:

- Ի՞նչ է,- հարցրեց, վախեցած իրար նայեցին:

Զարակույտի գլխից պոկվեց մի մեծ գունդ, կլիներ ձիու չափ, ընկավ հեծյալներից մեկի վրա, սա այսպես ճչաց, որ ընկերները սոսկացին: Օգնել իրենց այրվող ընկերոջը չէին կարող, քանզի նորանոր գնդեր թռան նրանց վրա: Գոռում-գոչուն բարձրացավ: Նժույգները խրինչացին, խառնվեցին իրար, ծառս-ծառս եղան:

- Փախե՛ք, փրկվե՛ք, ի սեր Ալլահի, ճամփա՛ տվեք...
- Ե՛տ, Ե՛տ, ծուղակ է, - սկսեցին իրար հրմշտել:
- Ե՛տ դարձ, - գոռաց Շահաաը, ով էր լսողը:

Տեղ հասավ դղրոյունը:

- Օ՛, Ալլահ, լեռը փլվում է, փախե՛ք, փրկվե՛ք...
- Փրկի՛ր, Ալլահ...

Զորապոնկից փլվեց, հեծյալների վրա թափվեց քարե հեղեղը:

- Ա՛, ա՛, ա՛,- ոռնաց խելագարվող զորականը:

Զարե հեղեղը իր մեջ առավ չաղաթայներին, գլորեց կածանով ցած, շատերին կածանից դուրս նետեց անդունդ:

Սարսափելի էր այդ գլորվող փոշու զանգվածը, քար ու կրակ, ծուխ ու բոց, արյուն, մարդկանց մարմսի մասեր, խեղված դիակներ, կենդանի ու մեռած իրար խառնված, ոռնացող, աղաղակող, ճչացող զանգվածը ահազնանալով, ճանապարհից քարեր պոկելով, իր մեջ առնելով կածանի ողջ երկարությամբ ձգված գունդը, թափալգոր գնաց ցած:

Այսպիսի դրույուն էր բարձրացել, որ մարդ կարող էր խելագարվել, – ինչպես չխելագարվես, եթե տեսնում ես դեպի քեզ գլորվող հսկա ժայռը – հնար չկա խույս տալու, իսկ ժայռը գլորվում է, շարդ ու փշուր անելով մարդկանց: Աջ դառնաս, ողորկ ժայռ է, չես մագլի, ձախ դառնաս՝ անդունդ է, իսկ ժայռը գլորվում է, գալիս է քեզ վրա...

Թամուրը մօայլ նայում էր գլորվող այդ սարսափին, որ կանգ չառավ լեռան ստորոտում, քարերը թափ առած անցան առուն, մի քան, երեսուն նիզակաչափ վեր գլորվեցին, տիրակալի յուրտին չհասած, կանգ առան, մի քանի անգամ շուր ու մուր եկան, անշարժացան:

Փոշու միջից հայտնվեցին հրաշքով փրկված մի քանի հեծյալներ, առանց հեծյալների ծիեր, մի քանի խեղդված, հետ-ակ դարձած չաղաթայներ: Սրանք այն սակավ երջանիկներից էին, որ փրկվել էին քարշարդից: Սարսափելի վիճակում էին, վիրավոր, կիսախելագար: Մի տասնյակ ծիեր նետվեցին տիրակալի յուրտի կողմը: Թիկնապահները հազիվ հեռացրեցին կատաղած ծիերին:

Մեծամեծները զարմացած դիմավորեցին հետիոտն դարձած Շահապ իշխանին: Սրա հայացքը պղտոր էր, նա- ապշահար: Չեր կարողանում հավատալ, որ ողջ է, որ այն սարսափի մեջ է եղել ու փրկվել է:

- Յրա՛շք է, ինչպե՞ս փրկվեցիր,- հարցրեց Շահ Մելիքը:
- Խրախճանք պիտի տաս փրկությանդ համար,- ծիծաղեց Թուսայի իշխանը,- Ալլահն է քեզ փրկել...

Տիրակալի յուրտի առաջ բուժք վիրակապեց իշխանին, գիսի խմեցրեցին: Իշխանի հայացքը կամաց-կամաց պարզվում էր:

- Եթե պատը փլվեց մեզ վրա, նժույզու փշրված գլխով անդունդ ընկավ, ինձ քար զարկեց, շպրտեց ժայռի վրա, Ալլահի կամքն էր, կախ ընկա մասրենու թփից, մնացի կախված, մինչ- անցավ հեղեղը: Չգիտեմ, հասու չեմ, ի՞նչ է մնացել գլոդից...

Թամուրը թափ տվեց ծեռքը: Յարկ չկար պատմել, ամեն ինչ կատարվել էր նրա աչքի առաջ: Նա չէր կարող անպատիծ թողնել լեռան պաշտպաններին, չէր կարող ներել նրանց՝ իր գլուխութեան մեջ կորուստը: Նա չի կարող անպատիծ թողնել Լեռը...

- Մեհմետ ֆարին, հետ-ակներիդ գրոհի տար: Բաց արա լեռան կածանը: Ամոթ մեզ, որ աշխարհ տիրելով, եկել ենք կանգ առել այս քոստ լեռան առաջ: Տար գրոհի, թող նետածիգները անընդհատ նետահարեն, ինար չտան հայերին մոտենալու ծորապոնկին,- «Իսկ եթե Ելի՞ քարակապեր կան», - զայրացավ,- գևա՛,- ասաց, զգալով, որ սրանց էլ է ստույգ մահվան ուղարկում

Մեհմետի գինվորները նետվեցին առաջ: Խալաթները փեշերը գոտու տակ մտցրած, արագ վազքով հասան այն տեղին, ուր փոքրիկ քարակույտեր էին մնացել քարե հեղեղից: Առաջին գինվորի ոտքի տակից մի քար գլորվեց, զարկվեց մի ուրիշ քարի, սա էլ իր հերթին մեկ ուրիշ քարի զարկվեց: Քարեր գլորվեցին, սակայն վնաս չտվեցին: Վերջապես

զինվորները հասան կածանի սկզբին, որտեղից սկսվել էր քարե հեղեղը:

Այստեղ քարերի տակ մի քանի տասնյակ զինվոր ու ձի կար թաղված: Սևացծները կոտորվել էին կածանի երկարությամբ կամ գահավիժել էին անդունդ: Մեկը զինվորներից դեռ ողջ էր: Նրան հանելու համար հարկ էր հսկա քարակույտը մաքրել: Ժամանակ չկար - ոչ էլ դյուրին գործ էր... Փարինը ժամանակ չուներ: Նա պիտի արդարացներ տիրակալի վստահությունը:

Զինվորներն անգամ երեսները շուր չտվեցին, երբ ավագներից մեկը, գորապետի հրամանով, դաշույնով գարկեց վիրավորի կոկորդին: Զինվորը նույնիսկ չխռիսաց: Ոչ ոք այդ քայլը անբնական չհամարեց, թալանից մի բաժին ավելացավ: Յետո ինչ, որ մի կին այրիացավ կամ մի քանի երեխաներ որբացան: Ոչ ոք չխորհեց այդ մասին, աշխարհ են տիրում...

Մի ձին, որին քարերը սեղմել էին ժայռին, թուլացած վրնջում էր ,մարդկանց նայում էր այնպիսի աղաքական հայացքով, որ գորապետը երեսը թեքեց: Ազագը, որ իրենց խղճով մարդ էր համարում, սրով գարկեց ձիու կոկորդին, կենդանին խռիսաց, հանգավ:

- Ափսոս, Կարաբայիր էր, աչք ունեի վրան, ափսոս...

Զինվորին ոչ ոք չխղճաց, սակայն ձիուն՝ ափսոս, աչք ուներ վրան...

Մարդուն չխղճացին, իսկ ձիու համար մի քանիսի աչքերը թրչվեցին՝ լավ ձի էր, ափսոս: Շահաստանում զնգուն ոսկի կտային, իսկ մարդուն՝ ի՞նչ գին, ավա՛ղ...

Ազագի խոհերը անավարտ մնացին, սուլելով մի քանի նետեր թռան: Զինվորներից մեկը սպանվեց, երկուսը վիրավորվեցին:

- Նետահարե՛լ,- գոռաց Մեհմետը: Նետածիգները անմիջապես մի հարյուր նետ արձակեցին հայերի կողմը, չեին տեսնում հայերին, իսկ սրանք, թաքնված քարերի արանքում, անվրեա նետահարում էին:

- Անիծյալ հայեր, կյանքումս այսքան երկար նետեր չեմ տեսել, մեր նիզակների չափ են,- փևթփևթաց ավագ Գարինը,- շատ մեծ են սրանց աղեղները, վա՛յ մեզ: Մեհմետ պետ, հայերը չեն եր-ում, ար-ը ընկնում ե մեր աչքերի մեջ...

- Նետահարե՛լ,- նորից հրամայեց Մեհմետը,- շատ ես խոսում...

Զկարողացավ շարունակել: Երկու նետ միաժամանակ գարկեցին վահանին: Յարվածը այնքան հզոր էր, որ վահանի փոկերը կտրվեցին, վահանը մի կողմ ընկավ: Չորապետը խլեց կողքին կանգնած զինվորի վահանը, ծածկվեց վահանով: Անպաշտապան մնացած զինվորը զոհ գնաց հայերի երկրորդ նետերի պարսին: - Տղայք, լավ նշան բռնեք,- նետածիգերին խրախուսում էին Մարտիրոսն ու Թովման,- խնայեք նետերը: Զարկեք բաց դեմքերին, գլուխներին: Փայլա՛կ, արագացրո՛ւ: Ժամն է քարկապի կապերը կտրելու, բաց թող գերանները:

Նետածիգները պիտի հեռանային քարկապի ճանապարհից, սա-

կայս չաղաթայները այսպես էին մոլեգնել, այսպես էին մագլցում, որ ճար ու հնար չկար հեռանալու:

- Եղբայր Մարտիրոս, թող տղաները պաշտպանվեն այս մեծ վահաններով,- ասաց Փայլակը, ցույց տվեց ճյուղերից պատրաստած մեծ վահանները:

- Ազրե՞ս, ե՞րբ հասցրեցիք: Վահե՛, Վարդա՞ն, Յակո՞բ, դու՝ սյունեցի տղա, քարեր բերեք: Երկուական մարդ բռնե՞ք վահանները, մնացածներդ, պաշտպանվելով վահանների հետ-ը, մոտեցեք քարակույտին, քարերը գցեք չաղաթայների վրա: Ազրե՞ք, ա՛յ, այդպես,- քահ-քահ իսնդաց տանուտերը:

Վածում վայնասուն բարձրացավ, միաժամանակ սաստկացավ նետահարությունը: Ամեն վահանին մի քանի նետ ցցվեց: Մի երիտասարդ զարկվեց, որ ձորի պռնկին էր մոտեցել առանց վահանի:

- Խեղճ տղա, ես տարի էր նարոտ կապել,- ճակատի քրտինքը սրբեց մի ծերունի,- մեր Վարդանն է, հար-անիս տղան, ափսո՞ս...

- Ափսո՞ս քաջաց, հազար ափսոս,- ո՞վ ասաց, թե՞ լեռը տևրաց...

- Խելքով պիտի կռվել,- զայրացավ Թովման, մի մեծ քար նետեց ցած: Մեկը ցածում ճչաց,- աճապարե՞ք,- գոռաց քար բերողներին, ապա խլելով երիտասարդներից մեկի պարսատիկը, ործաքար դրեց թաթպանի մեջ, պտտեց, նայելով մագլցող չաղաթայներին, տեսավ մեկին, որ ատամների մեջ կեռ թուր էր բռնել: Բարակ, կախ ընկած բեղիկները, շեղ աչքերը միսվեցին աբեղայի հոգու մեջ,- ա՛խ, դո՞ւ, մեհմեղական վիժվացք, ա՛ռ քեզ,- գոռաց ու բաց թողեց քարը: Ինքն իր թափից զարկվեց Մարտիրոսին: Քարը տժաց, զարկեց ավագ Գարինի ճակատին, սա անշունչ տապալվեց:

- Աջդ եմ համբուրում, հայր սուրբ,- հռհռաց Մարտիրոսը,- ա՛յ, իսկական հոգ-որ: Ամենքի անունից քեզ կարգում եմ Բարդողի եպիսկոպոս, մեր պաշտելի սրբազնան:

- Տղանե՞ր, ե՞տ քաշվեք, պարաները կտրում եմ,- գոռաց Փայլակը,- հեռու գնացեք, գալիս է քարի հեղեղը:

Նետաձիգները արձակեցին վերջին նետերը, մի կողմ նետվեցին քարերի ճանապարհից: Փայլակը կտրեց պարաները: Գերանը ասես կպել էր քարերին, չէր շարժվում: Մարդկանց շունչը կտրվեց: Չե, գերանը չէր շարժվում:

- Դե՛, ձեզ մատաղ,- գոռում էին մարդիկ, ասես կարող էին խնդրանքով շարժել քարերը: Փառք Աստծո, քարերը կամաց-կամաց շարժվեցին, սողացին, դեմ առան առաջին քարկապից մնացած քարերին, դարձյալ կանգ առան: Մարտիրոսը այսպես սեղմեց Թովմայի ուսը, որ սա ճչաց:

- Ձե՛զ մատաղ, Յայոց քարեր,- ծնրադիր աղոթում էր մի ծերունի,- հաց չեք դառնում, բերք չեք տալիս, ժամ է, որ մահ դառնաք թշնամու գլխին:

Զարկապը ահագնանում էր կածանի վրա: Փլվելու հնարավորությունը ակնհայտ էր, սակայն որքա՞ն սպասել, իսկ չաղաթայները մագլցում են, ուր որ է ձեռնամարտի կնետվեն:

Թովման մի հաստ ճյուղ վերցրեց, նետվեց առաջ:

- Կա՛ց, Յա՛յր սուրբ,- գոռաց Մարտիրոսը,- Փայլա՛կ, փրկի՛ր աբեղային:

Փայլակը չհասցրեց մոտենալ Թովմային: Սա ճյուղը մտցրեց քարերը պահող ժայռաբեկորի տակ:

- Տե՛ր Աստված, ո՞ւժ տուր քո ծառային,- նա լավ էր հասկանում, որ կարող էր մնալ քարերի տակ, քարի հեղեղելը կանցներ նրա վրայով, սակայն նա այլ ելք չէր տեսնում: Աչքերը չովեցին լարումից,- Տե՛ր Աստված...

Տեսավ՝ ինչպես ժայռաբեկորը շարժվեց, քարերը ահագնացան նրա գլխի վրա, Փայլակը ետ-ից գրկեց նրան, մի կողմ թռավ, քարերը դղոդացին նրանց կանգնած տեղում:

Խուլ դղոդաց Բարդողը, շարժվեց, որոտաց Բարդողը՝ Մասիսի կրտսեր Եղբայրը՝ անընկճելի Բարդողը... Քարերը դղոդյունով ցած թափվեցին: Այս հեղեղը ավելի սարսափելի էր, քան նախորդը: Քարե հեղեղը սրբեց չաղաթայներին, քշեց կածանով ցած, հասավ մինչ-տիրակալի յուրտի մոտերքը: Նրան խնդրեցին ետ քաշվել: Թամուրը կահեց հայացքը, որպեսզի մեծամեծները չտեսնեին այստեղ բուն դրած սարսափը:

- Անիծյալ լեռ, երկու գունդ կործանեց,- մռմռացրեցին մեծամեծները:

Այլ-ս ոչ մի գիևվոր գրոհի չի գնա, քանզի այս լեռան վրա Ալլահին էլ չգիտե, թե քանի քարկապ կա: Այս խոսքերը հասնում էին տիրակալին: Վերջապես համարձակվեցին խնդրել նրան դադարեցնելու գրոհները: Անմտություն էր գրոհել մի լեռ, որի պաշտպանները կռվում են միայն քարերով, իսկ այս երկրում որքան ասես քար կա...

Իսկ այդ միջոցին լեռան վրա՝

- Ի՞նչ կասես, Յայր սուրբ,- ծիծաղեց Մարտիրոսը,- Երեկոյան կգրոհե՞ն:

Տանուտիրոջ հայացքում ինչ-որ մանկական չարաճնի բան էր հայտնվել:

- Ապավինենք Աստծուն, ամեն բան էլ լավ կավարտվի:

- Նա- մեր բազկին,- աբեղայի միտքը շարունակեց սյունեցի Յակոբը,- առանց կռվի գործ չի շինվի: Այլ-ս չեն հարձակվի: Երկու անգամ փորձեցին Յայոց քարերի կարծրությունը, այլ-ս չեն փորձի: Ոյ, թե այսպես դիմադրեցին ամեն տեղ, եթե ամեն տեղ մի Մարտիրոս լիներ...

- Կկռվենք, հայրի՛կ,- նրանց մոտեցավ Փայլակը, որ դարձել էր Մարտիրոսի օգնականը,- /Եղբայր Մարտիրոս, ես ասացի, որ նույն տեղերում նոր քարկապեր դնեն: Մարդիկ քար են կրում: Նետերի գործն է

դժվար, քիչ է մնացել: Չաղաթայների նետերը մեր աղեղներին չեն գալիս: Պարսատիկավորների գործը կավելանա:

Մարտիրոսը գրկեց Փայլակի ուսը:

- Ապրե՞ս, Փայլակ եղբայր, Աստված քեզ ինձ օգևական ուղարկեց, - դարձավ հավաքվածներին, որ դարձել եին ջոկերի ավագներ ու պետեր,- Խաչիկ, մեր տղաներին ուղարկիր, թող զնան լեռան ար-ելլ ան կողմը: Արագավագ տղաներ ուղարկիր: Թող նայեն, ար-ելյան կողմից չե՞ն գրոհում չաղաթայները: Յակոբ, կերակրեք մարդկանց, Վիրավորներին վիրակապեք, - Նրա խոսքերից հետո մարդիկ հասկացան որ քաղած էին: Ավագները զնացին կատարելու Մարտիրոսի հրամանները: Մարտիրոսն ու Թովման մնացին ձորի պռնկին, նայեցին ցած: Լեռան ստորոտում փոշին դեռ չեր նստել: Եր-ում էին զորքերի կուտակումները:

- Տեսեք, դիակները չեն հավաքում, - ասաց Նրանց կողքին կանգնած սյունեցիներից մեկը, - Վայրենի մարդիկ են: Բա սրանց մեջ մարդկություն չկա՞ , ախր իրենց ընկերներն են, գոնե հավաքեն, թաղեն:

- Չե՞ն թաղի, գիտեն, որ իրենց հեռանալուց հետո մենք կթաղենք, որպեսզի վարակ չտարածվի: Սրանք եկել են, կգնան, մենք ենք մնալու մեր երկրում, մենք պիտի հոգանք մեր երկրի հոգսերը:

- Այո, Նրանք ել կանցնեն, կգնան, ինչպես հայոց պատմության մեջ եղել են շատ անգամներ: Գալիս են, ավերում, իրենցից հետո միայն անեծք են թողնում, - մռայլ ասաց Մարտիրոսը:

Նրանց մոտեցավ Խաչիկը, ուղղեց ուսի Վիրակապը, ինչպես եր-ում եր նախկին զինվոր եր:- Եղբայր Մարտիրոս, Տիգրանը եկավ, ասելիք ուսի: Լեզուս չի գորում, - կախեց գլուխը, ես քաշվեց:

Թովման հետաքրքրված նայեց Մարտիրոսին, ապա Խաչիկի կողքին կանգնած մարդուն, որին մինչ այդ չեր տեսել: Սրա փոշոտ հագուստներն ասում էին, որ հեռվից է գալիս, Տիգրանը մռայլ եր, Տանուտերը առանձնացավ Նրա հետ: Մարտիրոսը նստեց քարին, Տիգրանը ինչոր բան եր պատմում: Մարտիրոսը կախել եր գլուխը: Ներկաները Թովմայից զատ հասկացան Նրանց, գլուխները օրորեցին:

- Ի՞նչ է պատահել, - Թովման դիմեց կողքը կանգնած Յակոբին:

Սա հոգոց հանեց:

- Կինս ու Երեխաները ընկել են չաղաթայների ձեռքը, Տիգրանը զնացել եր լուր բերելու, տեսնում եմ, հուսադրող չեն լուրերը... Ե՛, ողջ ժողովուրդն է գերի կաղ սատանայի ձեռքին: Տե՛ր Աստված, դու մեզ պահապան, - Թովման վճիռ դրած՝ մոտեցավ Մարտիրոսին:

- Ներող Եղիր, Մարտիրոս Եղբայր: Ես հնար կգտնեմ իմանալու ձերուց տեղը: Դու ասա անունները, տարիքը, -լրեց:

- Ես չկարողացա պարզել, - խոսեց Տիգրանը, - միայն այսքանը՝ գերի են տարել: Տեղը չիմացա, հնար չկար:

- Ես կտեղեկանամ, կգտնեմ տեղը, դուք փախցրեք, կամ փրկագ-

Նեք: Աստված անմեղների կողմն Ե,- ասաց, գլուխը կախեց: Վերջերս նրա մեջ տարօրինակ բան էր կատարվում, սկսել էր քննել Աստծո գործերը, վատն ու լավն էր իրար կողքի դնում ու այդ համեմատությունից սարսափ էր ապրում: Ընկնում էր հոգեկան տվայտանքի մեջ ու այդ վիճակի մեջ չեր կարողանում տեղավորել իր նվիրվածությունն ու կատարած եզրահանգումները: Դա ապշեցնում էր, դող բերում, նա- կասկած, որ անքուն գիշերների պատճառ էր դառնում: Խորհում էր ու պատասխան չեր գտնում: Ի՞նչ կարող էր եզրահանգել երիտասարդ հոգ-որը, երբ այս պարագայի վրա գլուխ էին կոտրում աշխարհի իմաստասերները - ավա՞ղ...:

- Ես ինար կգտնեմ,- ասաց, հույս ուներ Զահիրի միջոցով պարզելու գերիների տեղը, միայն թե տեսներ նրան, սակայն ինչպե՞ս, որտե՞ղ:

Միևնույն ժամանակ էլք էր փնտրում, տապակվում էր ինքն իր մեջ, լեռան ստորոտում չաղաթայների մոտ անհասկանալի բաներ էին կատարվում: Երկու գունդ էլ ոչնչացվել, անսպասելի ելք պատերազմի ընթացքում... Լանկ Թամուրը կատաղած հրաժարվեց ճաշից: Մեծամեծները ստիպված մնացին նրա մոտ: Աչքի տակով նայում էին իրենց յուրտերի կողմը, որտեղ խոհարարները ճաշ էին պատրաստում: Հեռանալ տիրակալից չէին կարող, ամեն պահ կարող էին պետք գալ ու վայ նրան, ով մոտերքում չեղավ...

Վաղուց Թամուրը այսպես կատաղած չէր եղել, կանգ առնել աշխարհի ամենամեծ բանակով ինչ-որ լեռան տակ, երբ աշխարհն է ծնկի գալիս նրա առաջ, աննախադեպ վիճակ էր, ամենաքիչը՝ վիրավորական: Այստեղ, այս լեռան տակ ավելի զինվոր զարկվեց, քան մինչ- այստեղ գալը:

... Մարդ ուղարկեք, պատգամս տարեք հայերին, թող իշնեն լեռից, այլ-ս չեմ սպասի,- ցնցվեց, մոռացավ ներկաներին, աչքին պատկերացավ Բայազետ սուլթանը: Նրան չեր տեսել, սակայն այս պահին պատկերացրեց որպես տիտան, որ հրհոռում էր ակնակուր գահին բազմած, իսկ խոսքերը: Օ՛, Ալլահ, խելագարվել կարելի է, հրհոռում է, ո՞ւմ, Լանկ Թամուրի երեսի՞ն, իսկ նա՝ աշխարհի տիրակալը, կանգնել է սուլթանի առաջ: Այո՛, այո, այդ նա է կանգնած խոնարհված, գլխիկոր, եմիր Թամուրը նորից լսեց. «Դու չզորեցիր մի քոսոտ լեռ գրավել, - միտում ես մեզ հետ չափվել, դու՝ տափաստանի քոսոտ գայլ: Ո՛չ, դու գա՛յլ չես, դու շնագայլ ես,- հրհոաց,- մեր հպատակները շարդում են քեզ...»:

Թամարը մեծ ճիգով իրենից հեռացրեց ատելի պատկերը, ստիպեց իրեն խոսել:

- Թող ցած գան, հակառակ պարագայում, դիակներով կլցնեմ կածանը, դիակների վրայով կբարձրանամ, կմորթեմ բոլորին: Եթե ցած իշնեն, կներեմ,- տեսավ Զահիրի քմծիծաղը,- դո՞ւ, մատը տնկեց գաղտնապահի վրա,- գտիր մեկին, որ հրամանս տանի հայերին,- Զահիրը խոնարհվեց: Դժվար չեր տիրակալի հրամանը կատարել: Գերիների մեջ

շատ կային տեսքով, շնորհքով մարդիկ: Թիզ անց Զահիրը մոտեցավ տիրակալին: Նրա հետ գալիս էր սպիտակամազ, պատկառելի մի մարդ: Թեր-ս ազնվական էր, սակայն ինչպես բոլոր ազնվականները, թաքցրել էր իր ով լինելը, ասել էր, թե արհեստավոր է:

Զահիրին դժվար էր խարել, ևս մարդկանց լավ էր ճանաչում, եթե արհեստավոր է, ապա անվիճելիորեն արհեստավորաց դասի ավագներից է:

-Տիրակա՞լ, այս մարդը կարող է գնալ իր հայրենակիցների մոտ,- իսկ եթե չվերադառնա՞,- մռայլորեն նետեց Թամուրը,- պատասխան կտա՞ս:

- Տիրակալ, մարդու հոգին Ալլահն է քննում: Ընտանիքը գումակում է: Ես չեմ կարող հավատալ սրան, սակայն ամենքից տեսքովը սա է,- ասաց Զահիրը: Տիրակալը մեկ հային էր նայում, մեկ՝ Զահիրին, մտրակով գարկում էր ոտքին: Ինչ-որ մռմռացնում էր, ապա մտրակը մեկնեց Զահիրի կողմը:

- Դու, Զահի՞ր, կգնաս հետը: Դո՞ւ, հա՞յ, կասես ձերոնց իշնեն լեռից: Ալլահով եմ երդվում, ազատ կարձակեմ:

Զահիրը հազիվ զսպեց քմծիծաղը: Նա բազում դեպքեր էր հիշում, երբ տիրակալը երդվել էր Ալլահով ու խարել:

Յայը խոնարհվեց, ապա բարձրացրեց հայացքը, այն սառն էր, որից Թամուրը անախորժեց: Նա գերու աչքերում քմծիծաղ տեսավ, մի ակնթարթ անց՝ նա- ատելություն, զայրացավ, ձեռքով արեց, քրթմանցաց. «Մեզ չեն սիրում... Ինչո՞ւ սիրեն, մենք գոհ ենք ինազանդությունից»:

Զահիրը երկու գիսվորի հետ հային առաջներն արած՝ բարձրացան կածանով: Զինվորները նիզակներին սպիտակ լաթեր էին կապել, բարձր բռնել, հաճախակի ճոճում էին, հայերի ուշադրությունը գրավելու համար:

Յասան քարակույտերին, ստիպված էին քայլել դիակների վրայով:

- Յե՞յ, հե՞յ,- գոռաց Զահիրը, - ընդունեց աշխարհի տիրակալի պատգամախոսին,- ոչ մի պատասխան չլսվեց, ոչ մի նետ չթռավ: Ասել է թե՝ համաձայն են լսելու պատգամախոսին: Յայը սկսեց մոտենալ կածանի սկզբին: Թովման, որ մոտ էր կանգնած, ճանաչեց Զահիրին, ուրախացավ: Արդ, ինար կար պարզելու Մարտիրոսի ընտանիքի տեղը, սակայն ինչպես խոսել Զահիրի հետ:

- Եղբայր Մարտիրոս, սա այն մարդն է, որի միջոցով կարող եմ պարզել ընտանիքի տեղը, վճոիր, ի՞նչ անենք: Մարտիրոսը նայեց զարմացած:

- Յայր սուրբ, ինչ ճանաչել եմ քեզ, չեն դադարում զարմանալուց, հոգ-որ ես, քաջ մարդ: Նորից ես զարմացնում՝ ճանաչում ես չաղաթայ զորականին: Ուզում ես զարկենք զինվորներին, դու ազատ կիսուն զորականի հետ: Նախ լսենք հային, օրինավոր մարդ է եր-ում:

Ասես նրա խոսքին եր սպասում, հայրը խաչակնքեց:

- Եղբայրներ, ընտանիքս գերի է չաղաթայների մոտ: Ինձ ուղարկեցին, որ ձեզ համոզեմ իշնեք սարից, խոստացան ազատ արձակել: Չհավատաք, Թամուրը ամենքիդ էլ սրի կքաշի: Ես ետ չեմ դառնա: Ես դառնամ ել, թե չդառնամ, մեկ է, սպանելու են ամենքին: Ես ձեզ հետ կկռվեմ սուրբ ձեռքիս: Ես Նախճավանի արհեստավորաց դասի ավագն եմ, անունս Գեղամ է:

- Խաչիկ, Գեղամ Եղբորը տար քարկապի մոտ, թող կռվում վկայի հայ լինելը,- ասաց Մարտիրոսը, ձեռքը որեց Գեղամի ուսին,- գևա՛, Եղբայր, ուրախ եմ, որ մարդ ու հայ մնացիր: Գևա՛, իսկ չաղաթայներին պատասխան կտա Յայր սուրբը:

Թովման ժպտաց, Ելքը գտնվել էր: Նրան պարանով իշեցրեցին ցած: Չահիրը հազիվ զսպեց ուրախության ճիշը, մոտեցավ նրան:

- Ես աշխարհի տիրակալ Լանկ Թամուրի գաղտնապահն եմ,- ասաց Չահիրը բարձրածայն,- զգուշ, կարծյոք, սրանցից մեկը հասկանում է պարսկերեն: Դուք մնացեք տեղում,- հրամայեց զինվորներին:

- Չորապետ, սրանք խարդախ մարդիկ են, մեկ էլ տեսար գարկեցին:

Չահիրը զայրալից թափ տվեց ձեռքը, զինվորը մնաց կանգնած, ինչպես եր-աց լսողությունը լարած, կասկածանքով նայեց Թովմային:

- Բար- Թովմա, սիրելիս, կցանկանայի գրկել քեզ Եղբայրաբար, սակայն սրանք միամիտներից չեն: Լսիր ինձ, տիրակալը լեռը շրջանցելու համար զորք չի ուղարկել, եթե մի օր ել դիմանաք, կհանի պաշարումը: Ձեզ վրա ժամանակ չի վատնի: Ես կաշխատեմ հուշել նրան թողնելու լեռը: Յա՛, մենք Մեծորայից զատ այլ վայրում չենք կարող հանդիպել,- ավելի ցածրացրեց ձայնը,- ես ինքս կգտնեմ քեզ, գոնե մի օր դիմացեք...

- Բարի՛,- ասաց Թովման,- ականջ արա, ձեզ ուղարկված հայը ազնիվ մարդ է, մնաց մեզ հետ կռվելու: Դու տիրակալին ասա, որ հային սպանեցին, հակառակ դեպքում կսրատեն նրա ընտանիքը: Խնդրանք ինձանից, նա- տանուտեր Մարտիրոսից: Նրա ընտանիքը գերի է ընկել Նախճավանում, կնոշ անունը Յայկանուշ է, երկու աղջիկներ կան հետք: Փնտրիր ու լուր ուղարկիր Մեծորա: Դե, դու այդ բաները ինձանից լավ գիտես:

- Եթե ողջ են, կգտնեմ, լուր կուղարկեմ տանուտիրոջը, դժվար գործ չէ: Խորհուրդ կտամ տիրակալին մի այլ հայ ուղարկի, սա դավաճան է, ցած նետեք ժայռից: Դե՛, հեռանանք: Գևաս խաղաղությամբ, Եղբայր իմ: Ալլահը մեզ հետ,- մեղավոր ժպտաց,- սովորույթ է...

- Աստված մեզ հետ,- ասաց Թովման, հազիվ զսպեց Չահիրին գրկելու ցանկությունը:

- Գևացինք,- Չահիրը նայեց զինվորներին,- հային սպանել են վայրենիները: Գևացինք, մենք այստեղ անելիք չունենք:

Նա գոհ էր, հանդիպել էր Թովմային, որին սիրեց եղբոր պես, դրանից զատ հնարավորություն կար Մարտիրոսին օգնել, որին պատկերացնում էր, որպես անհասանելի հերոս, որ կարողացավ պարտության մատնել Լաևկ Թամուրին, մի բան, որ վաղուց չեր եղել: Իսկ ամենագլխավորը՝ գնում էր կյանքի մեծ սիրանքին, վճռել էր օգնել հայրենակիցներին: Թե չէ, ինչ է եղել կյանքը, հզորացրել է հզորներին, իսկ արդ, պիտի օգնի իր ժողովրդին, վկայի իր հայ լինելը: Յասկացավ՝ դժվար էր հայ լինելը...

Տիրակալին գեկուցեց, որ պատգամախոսին հայերը սպանեցին, որ նա գտել է մեկ ուրիշի, որը շատ ավելի ճարտար լեզու ունի, թերս կարողանա համոզել հայերին վայր դնելու գենքը:

- Փորձի՞ր, սակայն լավ ի միտ արա, եթե հայերը սրան էլ սպանեցին, կամ մերժեցին կատարել հրամանս, գրոհով կվերցնեմ լեռն ու բոլորին ցից կհանեմ,- զայրալից ասաց Թամուրը, հրամայեց նժույգը մոտեցնել, հոգնել էր նստելուց:

Չահիրը լեռ բարձրացավ ուրիշ գինվորների հետ: Այս անգամ նա իր հետ տանում էր դավաճան հային, սա վախեցած տեսք ուներ: Դավաճանելով հայրենակիցներին, հիխորտում էր, երբ տեսավ, որ տանում են ըմբոստ ու ազատասեր հայերի մոտ, վախեցավ: Սա չեր հասկանում, թե ինչու են կրվում հայերը, մի՞թե մեկ չէ, թե ով է տերդ: Ավելի լավ է տերդ լինի հզոր, իսկ Թամուրը աշխարհ է տիրում: ՉԵ՛, մերոնք հիմար են, որ կրվում են Թամուրի դեմ, ախր ինչի՞ վրա են դրել հույսները, մեկ է՝ կարատեն բոլորին: ՄԵԾ-ՄԵԾ են բրդում, անկախ են ուզում լինել, ապրել է պետք, խմել, վայելել, իսկ սրանք... Սիակ բանք, որ չեր հասկանում, դա երիտասարդ չաղաթայի վերաբերմունքն էր, ախր նա օգնում է տիրակալին, իսկ նրա հայացքն այնքան սառն է... Վախենում է: Չահիրը ոչ մի բառ չփոխանակեց հայի հետ, մինչ- հասան կածանին:

- Յայերին կասես, որ տիրակալը հրամայեց վայր դնել գենքը, իշնել լեռից:

Դու կստանաս վարձդ,- վերջին բառը այսպես սառը ասաց, որ հայի մարմնով դող անցավ: Զորապետի հայացքում այնպիսի ատելություն տեսավ, որ պատրաստ էր գոռալու, որ այս չաղաթայը դավաճան է, որ իրեն մահվան է տանում:

- Գևա՛,- գինվորներից մեկը նիզակով հրեց նրան,- շո՛ւն հայ, ասած ձերոնց ցած իշնեն,- սպասեց, որ զորապետը խրախուսի իրեն, սակայն Չահիրը չարձագանքեց անգամ:

Պատասխանին երկար չսպասեցին: Լսվեց մի աղեկտուր ճիչ, տեսան, ինչպես դավաճանին ցած նետեցին ժայռից:

- Գևա՛նք, մենք այլ-ս գործ չունենք այստեղ,- ասաց Չահիրը ու գոհ իր առաքելությունից՝ սկսեց իշնել կածանով: Զինվորները վահանները գցել եին թիկունքներին, վախենում էին հայերի նետերից: Սակայն ի զարմանս նրանց՝ ոչ մի աղեղ չճայթեց, ոչ մի նետ չթռավ:

- Տիրակալ,- խոնարհվեց Զահիրը,- հայերը չընդունեցին այս հային, ասացին ցած չեն իշխի, չեն հանձնվի,- մի պահ լռեց, խոր շունչ քաշեց, ինչպես անում էր ծանր զարկ տալուց առաջ, շարունակեց, առանց թաքցնելու հեգնանքը,- այսքան զոհեր տալ ինչ-որ քոստ լեռան համար, անմտություն է - Զահիրը գնաց կյանքի գերագույն սիրանքին, կամ կփրկեր հայերին, կամ կյանքը կավարտեր դահճի տապարի տակ: Վտանգն այսքան ակնհայտ էր, որ մեծամեծները սառեցին, իրար նայեցին տարակուսած:

Այն, ինչ ասաց Զահիրը, անվիճելի էր, սակայն խոսել այդ մասին բարձրածայն, մեղադրել տիրակալին զոհեր տալու համար, ասել, որ դա անմտություն է, սա ամենաքիչը սեփական դատավճիռը հուշելն է: Վերջ՝ գաղտնապահը կքառապատվի, ամբողջովին կեփվի կաթսայի մեջ, ցից կիանվի, կկախվի կեռից...

Կողոված աչքերով, հեգնախառ, Զահիրին էր նայում տիրակալը, Ալլահի փոխանորդը երկրի վրա, մեծ զորավարը, թագավորների թագավորը: Նայում էր, ու նրա աչքերում գաղտնապահը քառատվել էր, գլխատվել, եփվել էր կաթսայի մեջ, ցից էր հաևվել, այրվել խարույկի վրա, կտոր-կտոր արվել, կախվել կողոսկրից, նա- դեռ չփորձված մահերի ենթարկվել...

Միևնույն այդ տիրակալի վստահությանը հասած, նրա գաղտնի գործերի հավատարմատարը հանդգնել էր մեղադրել զոհեր տալու մեջ – այդպես կարող էր խոսել միայն մահապարտը: Այստեղ ինչ-որ բան կա, խորհում էր թամուրը...

Եվ կատարվեց այն, ինչ չեր եղել վաղուց, չեր եղել մեծամեծ շահերի ու թագավորների նկատմամբ, թամուրը ժպտաց.

- Զահիրը իրավացի է, այս քոստ լեռան համար չարժե զոհեր տալ: Հանել պաշարումը, գնում ենք առաջ...

Թեր-ս թամուրը չըմբռնեց պահի ու իրամանի հետ-անքները, չհասկացավ, որ այս լեռան տակ թաղվեց նրա անպարտելիության գաղափարը... Չկա՞ն, չեն եղել անպարտելի բռնակալներ... Եվ փառք մարդկային անձնազոհությանը, որով մարդը հաստատեց իր մարդ լինելը...

* * *

- Մարտիրոս եղբայր, չաղաթայները հեռանում են,- հե-իհ- անձավ մտավ սյունեցի երիտասարդներից մեկը:

Մարտիրոսն ու Թովման նետվեցին դուրս: Առավոտյան ծեգծեգացող ար-ով շերմացող լեռան ստորոտից հեռանում էին չաղաթայները:

- Տեսնես զորքեր կթողնե՞ն, թե՞ իսպառ կիանեն պաշարումը: Եթե հեռացան, կածանով կիշնենք, իսկ եթե զորքեր թողեցին, կիշնենք ար-ելյան լանջով:

- Փա՛ռք Աստծո, որ լսում է մեր աղոթքները, փրկում մեզ,- աղոթեց

Թովման: Լեռան պաշտպանները հավաքվել եին կածանի մոտ, նայում եին հեռացող հորդաներին:

Թշնամին հեռանում էր, հեռանում էր պարտված մի բուռ հայերից, մի ապառաժոս Բարդողից, մի Սարտիրոսից, որ կարողացավ ի մի բերել մի քանի շեների բնակիչների, փրկել նրանց:

Վերջապես լեռան ստորոտը դատարկվեց գործերից, մնաց զորակայանի աղտոտությունը, խորույկների հետքերը: Լեռան ստորոտը նմանվել էր արտաքննողի, մեզի հոտը լեռան գագաթ էր հասնում, դրան գումարած մեռելահոտը, որ սրտիսառնոց էր առաջացնում, միևնույն դաշտում չեղած էր գործությունը չեղած դարձրել, իսկ այս պահին...

- Սրանք սելջուկ թուրքմաններից ել պիղծ ու կեղտոտ են,- խոսեց մի կին:

- Իրավունքը քոն է, Վարդենի մայրիկ,- ասաց Խաչիկը,- սրանք ել թուրք են, ինչ տարբերություն, ամենքն ել մահմեդական են...

Վերապրելով մահվան վտանգը, փրկվելով, այս պահին հոգս էին գտել իրենց համար հայերը...

Սարտիրոսը լեռան ժայռի ելուստին հենված՝ մռայլ նայում էր ցած: Նրա աչքերում, ուր քիչ առաջ ուրախություն կար, դարձյալ վիշտ էր կուտակվել: Ամենքն ել գիտեին այդ անձնազոհ մարդու վիշտը, իսկ ինչո՞վ կարող էին սատարել նրան: Տանուտերը խորհում էր ընտանիքը փրկելու մասին: Ո՞վ գիտե՞, ամեն բան Աստծո ձեռքին է, հույս էր հղում առ Աստված ու հույսով սպասում Թովմայի ձեռնարկելիք գործի հաջողությանը:

Ուրախության առաջին ալիքն անցավ, խոսեցին ցած իշնելու մասին, սակայն գիտեին, որ վճիռը կայացնելու էր Մարտիրոսը: Նայեցին նրան, իսկ նա այս պահին հեռու էր Բարդողից, իր Եղբայրներից: Նա մտովի չաղաթայների գումակում էր, մեկ կնոջն էր տեսնում բռնաբարված, մորթված, մեկ՝ դուստրերին՝ պատվագրկված... Քանի կրիվ էր, թաղված էր կռվի հոգսերի մեջ, ժամանակ չուներ նրանց մասին խորհելու, իսկ երբ չաղաթայները հեռացան, հիշել էր գերեվարված ընտանիքը:

- Եղբայր Մարտիրոս, տուր վճիռդ: տար մեզ քեզ հետ,- ասաց սյունեցիների ավագը՝ Յակոբը:

- Ո՞ւր տանեմ ձեզ, իմ Եղբայրներ ու քույրեր, ահա Մայր Յայաստանը, որ հոշոտվում է չաղաթայների կողմից, ո՞ւր տանեմ ձեզ: Ահա, մի լեռ կանգնեց նրանց ճանապարհին ու հաղթեցինք: Ամենքդ ել տեսաք, որ կարող ենք կռվել: Գնացեք ձեր շեները պատմեք այս կռվի մասին, թող քաշվեն լեռները, փակվեն քաղաքներում ու բերդերում, թող կռվեն ամենուր: Մի տեղ Տեր Աստված ճամփա կբանա հայերիս համար...

Այս ել քանի դար է այս հույսով ու անհույս տոկում ենք հայերս - դեռ որքան պիտի տոկանք, գիտե Աստված, գիտե՞ արդյոք... Իսկ Յայրիները, մի՞թե նրանք կինազանդվեին ճակատագրին, ո՞չ, տիեզերա-

կան պատումերում նրանք հոգով ըմբոստ են եղել, ճակատագիրը ի-
րենք են կուել, այսօր նրանց հոգիները հառնեցին Բարդողի պաշտպան-
ների մեջ ու հաղթեցինք:

- Նախքան լեռը թողնելը, սուրբ աղոթարանի առաջ գոհության ա-
ղոթք հղենք առ Աստված, Որդուն ու Անհահ Յոգուն,- ասաց Թովման,
ձեռքերը երկինք կարկառեց,- Տեր Աստված, դու մեզ փրկեցիր ստորա-
ցուցիչ գերությունից, դու մեր մեջ հավատ ծնեցիր մեր ուժի հանդեպ, քո
կոչով մեր մեջ հառնեցին առհավական մեր նախնյաց հպարտ հոգինե-
րը, ու մենք հաղթեցինք... Մենք հավատում ենք քեզ ու մեր հավատը
անխախտ է, անկաշառ: Քեզ ենք դիմում, գոհություն հայտնում փրկու-
թյան համար: Աղերսում ենք հետայսու անպաշտպան չթողնես մեր
սուրբ ցեղը Յայկազյան, Յանուն Յոր, Որդվո - Յոգվույն Սրբո: Կմե՞ն:

- Կմեն կրկնեցին լեռան պաշտպանները միասին: Նայեցին իրար,
Նայեցին վերջին անգամ, քանզի լեռից իջնելուց հետո բաժանվելու էին:

Երիտասարդները արդեն մաքրել էին կածանը, սակայն ոչ ոք չէր
ուզում ցած իջնել Նվիրական լեռան լանջից: Չէին ուզում բաժանվել ի-
րարից, այս ընկերությունից, եղբայրությունից, այս միակամ ուժը չէին
ուզում ցրել: Ի՞նչ կմնար այս ըմբոստ մարդկանցից, երբ մենակ մնային
չաղաթայների դեմ...

Իրենց հզորությունը թողած լեռան գագաթին՝ իջնում էին երկիր,
անտեր մի երկիր, մասնատված, թուրքերի կողմից կեղեքվող... Ո՞վ պի-
տի մաստի հաներ նրանց թշնամու դեմ, ո՞վ պիտի փրկեր աշխարհն
Յայոց...

... Յայե՛ր, հայե՛ր, այս ել քանի դար է ընկել եք հզորների միջ-, ապ-
րում եք արյուն տալով, արյուն առնելով, մեռնում եք ու հառնում ասթաղ
նահատակների հոգիներից: Չեր մեջ հառնում են հզոր ու ըմբոստ նախ-
նյաց հոգիներն ու նորից են կռվի ելնում... Ասորիները գրում են իրենց
«հաղթական» արձանների վրա, որ կործանեցին Ուրարտու-Արարատը,
սակայն մենք կանք ու ապրում ենք: Յռոմը հիխորտում էր, որ չկա այլ-ս
Արմենիան: Սասանյանները խնջույքների ժամանակ գավաթ էին բարձ-
րացնում Տիգրիս-Եփրատ ազատ տարածքների համար, ուր այլ-ս չկան
արմենները, այդ ըմբոստ ու բարբարոս ժողովուրդը, սակայն կանք ու
կլինենք հավերժ... Եկան արաքները, որ դեռ իրենց վրայից չէին թափ
տվել անապատի ավագը, որ դեռ խառնամբոխ էին, իրենց զորքերով
հեղեղեցին Յայոց աշխարհը, սակայն ի՞նչ, մենք կանք ու կլինենք: Ե-
կան թուրք սելջուկները, տիրեցին, այրեցին, սակայն մենք կանք ու կլի-
նենք... Արևածոր մարմինը մեր դեռ կարողանում է ըմբոստանալ, դեռ
կարողանում է ուժ ու զորություն դառնալ, պաշտպանել իրեն... Տեր
Աստված, մինչ Ե՞րբ փորձես մեզ, որ աշխարհում առաջինը ընդունե-
ցինք կրոնը քո, ծնկի իշանք քո առաջ, վկայեցինք քո հզորությունը, ին-
չո՞ւ ես լքում մեզ, սատար արա, մի լքիր մեզ. Տեր Աստված...

Կանցնեն օրեր, տարիներ, դարեր արհավիրքի պահին հայերը կի-
-

շեն և այս մարդկանց, լեռը Բարողող, կիհշեն Լանկ Թամուրի և վաստացումը ու Յայ դյուցազուները կհառնեն անձեռակերտ շիրիմներից, կելնեն պաշտպան Յոդ Յայրենիին, կելնեն՝ վկա Ար- Աստված...

* * *

Սուլթանը տհաճորեն նայեց վեզիրին, սրա հինայված մորուքը զգվանք պատճառեց նրան, սակայն վազիր Ալիին չեր կարող իրենից հեռացնել, քանզի ծերունին իմաստուն մարդ էր, կյանքի փորձով իմաստնացած, հմուտ էր պետական գործերի մեջ: Նա կարողանում էր նատեղեկություններ ստանալ հար-ան երկրների մասին, գիտեր վիճակը Յայստանում, Վրաստանում, Աղվանքում, Բաղդադում, Սուլթանիայում, Եվրոպայում:

Անգևահատելի էին այն տեղեկությունները, որ նա ձեռք էր բերում Լանկ Թամուրի մասին: Վեզիրը հետ-ում էր կաղ շեյթանի յուրաքանչյուր քայլին: Թամուրի ամեն խոսք հասնում էր սուլթանին:

Վեզիրը նրբանկատորեն կարողանում էր զսպել սուլթանի տաքարյունությունը, օգնում էր ճիշտ կողմնորոշվել բարդ իրադրություններում:

Դա էր պատճառը, որ սուլթանը աչք էր փակում վեզիրի կաշառակերության վրա, անտեսում էր նրա անառակությունը՝ այս տարիքում այդպիսի մեծ կանանց պահել: Յասու չեր, ինչպես կարող է այդ ծեր մարդը.. Դեռ ասում են կանանցում մի քանի դեռահաս տղաներ ել է պահում, թո՛ւ, զգվելի ծերուկ. ՉԵ՛, ինչպես եր-ում է, դեռ պիտի ապրի Ալին, խելացի մտքեր է հուշում: Նրա խուզարկուները հասնում են մինչ-Մոսկվա, Բոսպոր, Սամարա: Ամեն տեղ աչքեր ու ականջներ ունի:

- Կազ շեյթանից ի՞նչ լուրեր ունես: Ի՞նչ է մտմտում: Ի՞նչ նոր հարձակումներ ե նախապատրաստում,- սուլթանը շտկեց մեջքը, ուժգին լարեց մկանները, մկանները հաճելիորեն ճռճռացին: Իրեն նայող վեզիրի հայացքում նախանձ տեսավ, քմծիծաղ տվեց. «Յարկավ, կնախանձես,- խորհեց վեզիրի մասին,- դու ծեր ես, մենք երիտասարդ: Դու ավարտում ես կյանքդ, իսկ մենք նոր ենք սկսում ապրել, վայելել: Դու օրքան էլ ճգնես, չես կարող հաճելի լինել կանանց, իսկ դա այրմարդու համար համազոր է մահվան: Դու լիսկել ես, վեզիր Ալի: Սակայն չմեղանչեմ ճշմարտությանը, խորամանկ ես օձի պես զայրացավ, թե- այդ ամենը գծագրվեց դեմքին, տեսավ վեզիրի վախեցած դեմքը, իսկ խղճալ նրան չկամեցավ: Խղճալը նշանակում է լիարժեք մարդ չհամարել վեզիրին, դա կստիպեր սպանել նրան: Բայազետ սուլթանի մոտ խիղճ գոյություն չուներ: Նա հզոր էր ու չեր կարող ընդունել թուլությունը: Ով թույլ է, չի կարող նրա կողքին լինել»:

- Լանկ Թամուրը հմուտ զորավար է, բազմաթիվ երկրներ է գրավել,- շարունակեց կիսատ թողած միտքը,- նա խաչակիր չէ, որ գլուխը խոթի առյուծի երախը: Կաղ շեյթանը խորամանկ է, հաշվենկատ: Յասո՞ւ ես, վե-

զիր, մեր սահմանները քանի գնում մոտենում են իրար, իսկ հարձակվել՝ չի համարձակվում: Ի՞նչ կասես, վեզիր, խոսի՞ր:

- Տեր իմ, Ալլահի փոխանորդ Երկրի Վրա, ո՞վ անզուգական զորավար, որ կարողացար կոտորել խաչակիրներին: Չեզանից սարսափում են Եվրոպայում: Չուր չեն այստեղ հրաժարվում նոր արշավանքից: Սուացել են Տիրոջ գերեզմանը փրկելու իրենց Երդումը, վախենում են...

- Սպասի՞ր, սպասի՞ր, վեզիր, ստո՞ւգ է, որ հրաժարվում են միանալ Գերմանիայի թագավորին, որ նախկին պարտության վրեժն է ուզում առնել մեզանից:

- Ո՞վ իմաստուն մեր տեր, խուզարկուները գեկուցում են, որ ստույգ է այդ լուրը: Կաճառականները պնդում են, որ Եվրոպայի թագավորները զբաղված են իրար միս ուտելով կամ զվարճություններով: Չենքի ու զորքերի կուտակումներ չեն նկատել, այլ-ս ինչ պատերազմ...

- Լա՛վ, լա՛վ, այս պարագայի վրա կիսունք վաղը, ասա, ի՞նչ լուրեր կան կաղ շեյթանից: Շուկաներում պակասել են գերիները, մի՞թե չաղաթայները սրատում են գերիներին կամ բոլորին քշում են Սամարդանդ, Բուխարա: Եթե չես կարող պարզել այս պարագան, նոր մարդիկ ուղարկիր, պարզիր:

- Տեր իմ, իրավացի ես՝ պակասել են գերիները: Դա կախված է հայերի դիմադրությունից: Բարդող լեռան վրա հայերը պարտության են մատնել չաղաթայներին: Երկու գունդ իսպառ ոչնչացրել են...

Սուլթանի ունքը վեր թռավ, կեռվեց աչքի վրա: Զարմացավ, ուրախացավ, քանզի Լանկ Թամուրի յուրաքանչյուր պարտություն, անհաջողության հոկյ էր ներշնչում, որ կթուլանար տափաստանի ծեր գայլը:

- Յարկ է ստուգել լուրը: Երկու գունդ ոչնչացնելը, առավել քան զարմանալի է: Ստուգել է պետք լուրը:

- Տեր իմ, ինչպես կարող եմ անստույգ լուր հայտնել իմ տիրոջը: Խուզարկուն անձամբ է եղել զորքերի մեջ:

Սուլթանը ինչ-որ քան մոռմոացրեց քթի տակ, ապա.

- Թող ջարդեն, դա մոտեցնում է մեր հաղթանակը: Թող Ալլահը մեզ համբերանք տա սպասելու: Պատերազմը հասունանում է, անկասելի է այն,- սուլթանը ընկավ խոհերի գիրկը. «Այո՛, պատերազմը հասունանում է: Թամուրի հետ մուկ ու կատու չես խաղա: Նա ո՛չ անհավատ հայ է, ո՛չ Վրացի, ո՛չ Բաղդադի խալիֆ, ոչ Ել խաչակիր: Նրա դեմ հարկ է բանակ հանել, հակառակ պարագայում կխայտառակեմ անունս: Կաղ շեյթանը տափաստանի օձ է: Նրա դեմ զորավարական հաշիվ է պետք, - նայեց վեզիրին: Սա վիզը ծռած, հլու, ինազանդ նայում էր: Վեզիրի վիզը այսքան հարմար թվաց կտրելու համար, որ քիչ մնաց դաշույնը դուրս քաշեր: Եթե Ալին իմանար սուլթանի խոհերը, կիսելագարվեր:

- Որքա՞ն զորքեր ունի կաղ շեյթանը, որտե՞ղ են կայանել, որքա՞ն ժամանակ է հարակավոր դրանք մի տեղում գումարելու: Պատասխան տալուց առաջ չմոռանաս ճանապարհների մասին: Միով քանիվ, ամեն

բան հաշվի առ ու պատասխան տուր, եթե պատրաստ չես կսպասեմ մինչ- վաղը:

- Տեր իմ, քո ծառան կանխավ ամեն բան քննել է, պատրաստ է գեկուցելու...

- Տե՛ր իմ, Լանկ Թամուրը կարող է յոթ հարյուր հազար զինվոր գումարել իր դրոշների տակ...

- Որտեղի՞ց այդքան զինվոր,- մռայլվեց սուլթանը, որտե՞ղ են կայանել, ճշտե՞լ ես:

- Տեր իմ, նրա ձեռքի տակ եղած մեծ բանակը, դրանից զատ կարող է բերել տալ Սամարդանդի, որդիներից Շահումինի ու Մահմեդ սուլթանի զորքերը, դրան գումարած Մավրինահրում ցրված զորքերը...

- Ի՞նչ ես խոսում, մի՞թե չի վախենա քոչվորներից՝ չինաց ասպակներից: Ինչպե՞ս կարող է բաց թողնել սահմանները:

- Պատերազմի պահին բաց կթողնի սահմանները, ապա կպատժի քոչվորներին - թե չինաց ասպակներին: Ներող եղիր, տեր իմ, կաղ շեյթանը ախոյան է: Նրա բանակի մեջ կմտնեն գրաված երկրների զորքերը: Մենք, հարկավ, կհաղթենք, սակայն արյունալի կլինի այդ պատերազմը, մեծ զոհեր կտանք երկուստեք...

Սուլթանը մտքում հաշիվներ էր անում: Գտնում էր, որ վեզիրի բերած թվերը, փաստարկները իրատեսական են:

- Վեզիր, մենք ել այդքան զորքեր կգումարենք մեր դրոշների տակ: Մեր զորքերը գտնվում են Պոնտական ու Տավրոսյան լեռների տարածքներում, տարածված են մինչ- Դամասկոս, իսկ Բալկանները, մի՞թե քիչ զորքեր ունենք այստեղ: Մեր դրոշի տակ կանցնեն Դամասկոսի սուլթանը, սերբերը, Մակեդոնիան: Դամասկի սուլթանը թեկուզ այս պահին պատրաստ է բանակ հանել, քանզի այս ել քանի անգամ Թամուրը ավերում է նրա հողերը,- տեսնելով, որ վեզիրը խոսել է ուզում, գլխով արեց:

- Տե՛ր իմ, իմաստուն ես, քան...

- Խոսի՛ր առանց ծռմռվելու, ի՞նչ առարկություններ ունես:

- Տեր իմ, մեր զորքերը շատ հեռու են իրարից, իսկ սերբերն ու Մակեդոնիան ամեն պահ պատրաստ են ապստամբել մեր դեմ, նրանց վրա հույս դնել...

Սուլթանը կատաղած ոտքի ելավ, վեզիրը կծկվեց: Նա չէր սպասում այդպիսի բռնկում:

- Արյան մեջ կխեղդեմ, թող փորձեն այդ լակոտները անտեսելու իրաման: Յրաման ամենքին՝ պատրաստ լինել,- զարմանալի բան կատարվեց, հանգստացավ, ասես զայրացել էր միայն սերբերին հայիոյելու համար, երկար լռեց, ապա նետեց անձկությամբ,- չի կարող տիեզերքում երկու տիրակալ լինել: Մենք պատերազմում կվճռենք առաջնության իրավունքը: Մենք մեր հողերի վրա ենք, կաղ շեյթանը եկվոր է: Ամեն անգամ ետ է քաշվում Սամարդանդ...

... Թուրքը գրավել է Յայոց, Բյուզանդիո ու Սիրիայի հողերը, սեփականել է, իրեն է համարում: Բայազետը լավ է հասկացել աշխարհի հզորների արդարացնող՝ «Սահման քաջաց գենք յուրյանց, որքան հատանե, այսքան ունի» ասացվածքը: Ինչ կարող ես անել, տիրել է, մոռանալով, որ ինքն էլ է եկվոր, թեր-ս դարեր հետո մոռանան, որ եկվոր են այս տարածքներում...

- Տե՛ր իմ, սահմանների վրա հանգիստ է: Թամուրը ամեն կերպ խրախուսում է դարա-դոյունլի ցեղերին /ս-ախոյ թուրքեր/ հանում է մեր դեմ, կամենում է թուլացնել ներ ուժերը, սակայն չես կարող մեղադրել, ամեն բան արվում է գաղտնի: Դրա համար Մահմադը հազիվ է զսպում, որդուն հոր դեմ է լարում: Նրանց գումարած՝ Զելահիրյանները: Սրանց հետ Թամուրը իր հաշիվներն ունի, սուլթանի գանձերը պաշարել է Ալանջիկ բերդում: Սուլթանը որդուն՝ Թահիրեին, կարգել է գանձերի պահապան: Բերդն անարիկ է, այստեղ մեծ թվով հայ զորականներ կան:

- Այո,- մռմռացրեց սուլթանը,- Փոքր Ասիան նվաճելու համար մեծ ուժեր են պետք, ևա- միջոցներ: Երբ Լաևկ Թամուրը ետ քաշվեց հարկատու կդարձնեմ հայերին, վրացիներին, աղվաններին, ամենքին, ամենքին: Եթե Ալլահը մի փոքր էլ երկարացրեց կյանքս, կավերեմ Սարայը, թափ կտամ Թողթամիշին, ապա կանցնեմ Մավիրհաններ,- լռեց: Վաղուց վեզիրի հետ չեր խոսել ծրագրերի մասին:- Մեր կիսալուսինը պիտի փայլի ողջ աշխարհում, սա է մեր գերագույն առաքելությունը: Արդ, մենք վտանգ չենք սպասում կադ շեյթանից, թե- վադ, թե ուշ իրար ենք զարկելու: Յարկ է զգույշ լինել, Թամուրը կարող է հանկարծակի զարկել ու շահել պատերազմի առաջին պահը: Չորքերը պիտի զորաշարժվեն, գումարվեն սահմանների վրա, այնպես, որ զսպիչ պատվար դառնան Թամուրի հորդաների ճանապարհին,- լռեց, սկսեց քաշքշել մորուքը, ապա խոսեց վերջնական եզրահանգում արած մարդու վճռականությամբ,- համոզված ենք՝ դեռ չի հասունացել Մեծ Պատերազմը:

- Սակայն, տեր իմ...

- Յասկացա քեզ: Չինվորը հարկ է կռվի, արյուն հեղի,- քմծիծաղ տվեց,- դրա համար կան այդ սուլթանները, իշխանները: Կզարկենք Նրանց, կընդարձակենք մեր հողերը, կմոտենանք Թամուրին: Պատերազմի հրամայականը սա է, մոտենում է ընդհարման պահը: Տա Աստված, յաչակիրները չխառնեն հաշիվներս,- զայրացավ, մտովի հասավ Եվրոպա, մտավ թագավորական պալատները, սակայն, ինչպես գեկուցել եր վեզիրը, պատերազմի պատրաստություններ չտեսավ.

«Տիրոջ գերեզմանի փրկիչներ, թո՛ւ, ես ծեր: Այդ ամենը հնարել են անիմա մարդկանց համար: Խաչակիրները շահամոլ են, ընչաքաղ: Ի՞նչ գերեզման, շահն է Նրանց առաջնորդում: Նրանք իրենց վահանների, ու թիկնոցներին խաչ են կրում, իսկ հոգիներում խիղճ ու խղճտանք չկա, թքել են խաչի վրա: Ծա՛հ, շա՛հ, դարձյալ շա՛հ, ահա թե ինչ

Ե հարկավոր դրվագել Նրանց վահաններին, ուսկեպաշտ համբակ-ներ...»:

* * *

Գաղտնապահների մուտքը տիրակալի մոտ ազատ էր, քանզի հա-պաղումը կարող էր անցանկալի հետ-անքներ ունենալ:

Արդ, Խոչա Յաֆիզի գործերը սկսել են շտկվել: Նա, որ վերջերս ետ էր մղվել Զահիրի կողմից, այսօր կարող է վերականգնել տիրակալի վս-տահությունը: Զահիրը լեռան հայերի հետ հանդիպման ժամանակ անզգուշություն է թույլ տվել, խոսել է հայերի հետ այնպիսի բաների մասին, որի համար գլուխը կգնա: Զահիրի հետ եղած զինվորը, որ հաս-կանում է պարսկերեն, պնդում է, որ Զահիրն ո հայ հոգ-որը ծանոթ են եղել: Սկզբում Յաֆիզը երկմտում էր, իսկ երբ քննեց գործը, հասկա-ցավ, որ հնարավոր է Զահիրի ու հայ հոգ-որի ծանոթությունը: Կաս-կածները հաստատվեցին, երբ իմացավ, որ Զահիրի հետ լեռ բարձրա-ցող առաջին հայը չի սպասվել հայերի կողմից: Ասել է, թե Զահիրը խա-բել է տիրակալին: Երկրորդ սխալը, որ թույլ է տվել Զահիրը, դա այն է, որ երկրորդ անգամ հետք տարել է մի այլ հայի, որին գերիները դավա-ճան են համարում, իսկ լեռան հայերը նրան անդունդ են նետել: Իսկ հիմնականը սա է, որ Զահիրը տիրակալին խորհուրդ տվեց հանել լե-ռան պաշարումը: Որքան խորհում էր Յաֆիզը, այնքան համոզվում էր, որ Զահիրը դավաճան է: Նրա մեջ եռ է գալիս նախանձը, քանզի Զահի-րը իր խելացի խորհուրդներով Յաֆիզին գցել է տիրակալի աչքից: Ամե-նադժվարին գործերը տիրակալը վստահում է Զահիրին, դա նա չի կա-րող ժխտել, Զահիրը խելացի մարդ է, պահին պատեհ մտքեր է հուշում տիրակալին: Իսկ արդ, Յաֆիզը մի հարվածով վերջ կտա այդ լակոտին, այդ անբարտավան բուխարացուն: Ինքը կմնա միակ գաղտնապահը: Այդ ժամանակ նրա փառքը կհասնի Սամարդանդ: Այդ ամենն անցավ նրա մտքով, երբ չոքել էր տիրակալի առաջ:

- Խոսի՞ր, ի՞նչ գործ է քեզ բերել: Նոր բան կա՞ Բայազետի պալա-տում, թե՞ Սարայից ես լուրեր բերել:

- Ներող եղիր, տիրակալ, ասելիքս Զահիր բուխարացու մասին է: Կասկածում եմ, որ դավաճան է, կապված է հայերի հետ...

Յաֆիզը տեսավ, ինչպես մռայլվեց տիրակալը, նայեց չարահայաց:

- Ապացուցեցիր՝ կգլխատվի, չապացուցեցիր, դու կգլխատվես: Չո մեջ նախանձն է խոսում, Յաֆիզ: Դու ծեր ես, նա՝ երիտասարդ: Դու ար-դեն խառնում ես գործերը: Յասու չես ռազմի գործերին... Ո՞վ է այդ պա-րագան պնդում, ունե՞ս ապացույց:

- Տեր իմ, հետո բերել եմ զինվորին, որ լսել է Նրանց խոսակցությունը լեռան հայ պատգամախոսի ու հայ հոգ-որի հետ...

Թամուրը ծափ գարկեց, ներս մտած թիկնապահին հրամայեց.

- Կանչե՞ք զիսվորին,- դարձավ Յաֆիզին,- անունը:

- Թուսայի:

- Զիսվոր Թուսայուն, շտա՞պ:

Զիս անց ներս մտավ Թուսային, փովեց գորգերին:

- Ստես՝ կգլխատվես: Ասա ճշմարտությունը Զահիրի մասին: Դու նրա հետ ես եղել լեռան վրա,- լեռան անունն անգամ տիրակալը չէր արտասանում, ասես այն անեծք լիներ, ամենքն էլ խուսափում էին Բարդողի անունը տալուց: Բարդող կամ թակաթալա անունը տալուց տեսնում էին, ինչպես է մռայլվում տիրակալը:

- Տիրակալ, գաղտնապահը հայի հետ խոսում էր պարսկերեն, ես հասկանում եմ, Զահիրն ասաց, որ դու զորքերը չես ուղարկի լեռը շրջապատելու, եթե մի օր էլ դիմանան, կհանես շրջապատումը: Յայը խնդրեց փնտրել հայերի գլխավորի՝ տանուտիրոջ ընտանիքը: Խնդրեց փրկել նրան: Երդում են Ղուրանով,- ավարտեց զիսվորը իր խոսքը:

- Դու գնա, լեզուդ ատամներիդ տակ պահիր,- նայեց Յաֆիզին, - անելիքդ գիտե՞ս:

- Գիտեմ, տիրակալ,- խոնարհվեց գաղտնապահը:

- Ի՞նչ գիտես, ի՞նչ հասկացար,- զայրացավ Թամուրը:

- Գնաց Զահիրի գլուխը,- կմկմաց Յաֆիզը:

- Ազանակ, ոչինչ էլ չհասկացար,- նորից զայրացավ Թամուրը,- Մեզ Զահիրը պետք չէ: Նա մեր ձեռքին է: Դու տանուտեր Մարտիրոսի գլուխը բեր: Խորիիր այդ մասին, ինչպես հետ-ես Զահիրին: Եթե զիսվորը չի սխալվել, ապա նա կդիմի գերիների պահապանին, թեր-ս կաշառի կամ փախցնի Մարտիրոսի ընտանիքը,- երկար նայեց Յաֆիզին,- դու ի զորու չես...,- ձեռքը թափ տվեց, ծափ զարկեց,- շտապ կանչեք Սահարին:

Թիկնապահը դուրս գնաց: Թամուրը մոռացավ Յաֆիզին, միտքը թռավ Բայազետի պալատ: «Յասյալ չէ ժամը Մեծ պատերազմի, վաղ է դեռ: Անհնար է ըմբոստ հայերին թողնել թիկունքում ու առաջ գնալ: Նրան գումարած Ղարա-Մահմեդը: Կզարկեն մեզ՝ ի հաճույս սուլթանին,- հասկացավ, որ հայերի նկատմամբ ատելությունը թեժանում էր,- հարկ է զարկել վրաց թագավորին...

- Ի՞նչ կա,- դժգոհ նայեց թիկնապահին:

- Սահարը եկավ:

- Ներս թող,- ասաց, դժգոհ էր, կտրել էին մտքի թելը:

Նայեց առնական զորականին, զայրացավ, քանզի այն, ինչ հանձնարարվելու էր, վայել չէր ազնիվ զորականին, այլ վայել էր խորամանկ ու նենգ մեկին, սակայն ոչ Սահարին, որ քաջ ու ազնիվ զորականի համբավ ուներ:

«Ոչինչ, սա էլ խորամանկել կսովորի, աշխարհ ենք տիրում, միջոցների մեջ խտիր չդնենք: Յարկավ, մարտի դաշտում դյուրին է, իսկ այստեղ հարկ է խորամանկել, նենգել: Մենք Սահարին այսպիսի գործերում չենք

փորձել: Յաֆիզը ծեր է, կիսառնի ամեն ինչ,- մեկեն դեմ առավ,- իսկ մենք,- սպասեց, ասես մեկը պիտի պատասխաներ հարցին,- մենք ծեր չենք,- թիշ մնաց գոռար,- Ալլահը մեզ պայծառ միտք է տվել, իշխելու իրավունք, իսկ որպես այրմարդ ցանկալի եմ իմ կանանց, իսկ գերուհիները մեզ համար հանց տատրակ արծվի համար»:- Խորհելուց անգամ հաճույք զգացնայեց Սահարին:

- Դու, Սահար, Յաֆիզի հետ կիետ-ես Զահիրին, կասկած կա, որ կապված է հայերի հետ, դավում է մեզ, ուզում է փրկել տանուտեր Մարտիրոսի ընտանիքը: Կիետ-եք, կիմանաք, երբ են փորձելու փրկել, դա կանի Յաֆիզը, դու կսպանես նրան: Այդ ամենը պիտի արվի խիստ գաղտնի: Գաղտնիքի բացահայտումը մահ է... Յաշվի առեք ամեն մանրուք, պահեք գլուխներդ, եթե գլուխ են, ոչ դդմաչներ: Գնացեք, Ալլահը ձեզ օգնական:

Ուշ երեկո էր: Սահարն ու Յաֆիզը այս էլ երկրորդ գիշերն է սպասում են Զահիրին: Պառկել են գերիներին քարավանի պետ Թահիրի յուրտի թաղիքների տակ, նրանց այսպես են ծածկել, որ իրենք չեն եր-ում, սակայն կարող են լսել յուրտում ամենաթեթ- շշուկն անգամ: Թահիրին զգուշացրել են, որ այս ամենը արվում է տիրակալի հրամանով: Թահիրը միացավ խաղին, թե- դեմ չեր խաղալ մենակ, իսկ արդ, ոսկի կլցվի տիրակալի գանձարանը: Մի խոսքով, մնում է տիրակալի բարեհաճ վերաբերմունքը, դա էլ թիշ բան չարժե: Մոտենում էր պայմանավորված ժամը: Գիշերապահները ազդարարեցին կեսգիշերվա ժամը: Դարանակալները սթափվեցին: Յուրտի դռան թաղիքը շարժվեց, Զահիրը արագ ներս մտավ, ծածկեց թաղիքը:

- Ալլահը մեզ օգնական, գործը պիտի արագ գլուխ բերենք,- ասաց Զահիրը, ծալապատիկ նստեց դաստարխանի դիմաց:

- Խմիր, թարմ է,- կումիսի գավաթը մեկնեց Զահիրին: Սա վերցրեց գավաթը, նայեց գավաթի մեջ, սակայն չխմեց:

- Խորհե՞լ ես առաջարկիս մասին: Շահավետ գործ է: Չսան ոսկին մի ամբողջ հարստություն է...

- Թանկ գերիներ են,- մռմռացրեց Թահիրը, իսկ մտքում. «Ինձ ինչ, տիրակալի գանձարանն է լցվելու», - Ախր վտանգավոր է,- փորձեց չեմ ու չում անել: Մեկ էլ տեսար գերիներից մեկն ու մեկը բերանը շաղ տվեց, տիրակալը կաշիս կքերթի...

- Կաշիդ քերթելու շատ առիթներ կան: Այս պահին էլ կա,- զայրալից վրա բերեց Զահիրը,- ուզում ես հիշեցնեմ: Ի՞նչ է, առաջին անգա՞մ ես գերի վաճառում...

- Սպասի՞ր,- լրջորեն վախեցավ Թահիրը, վախեցավ, որ դարանակալները կլսեն,- համաձայն եմ:

- Ե՞րբ,- կտրուկ հարցրեց Զահիրը,- սպասել չեմ կարող:

Թահիրը վճռեց արագացնել գործը:

- Վաղը կեսգիշերին:

- Խո՞յ,- /ձեռքսեղմումի փոխարեն ընդունված, միևնույն օրս պահպանված բառ/- Եստեղ քան ուսկի կա: Վաղը կեսգիշերին ես կրերեմ ձիերը: Դու գերիներին հասցրու ավերակների մոտ, մնացածը քո գործը չէ...

* * *

Թովման Մեծորա հասավ ծովով, Ասողիկը, մանկության ընկերը, իր նավակով նրան վանք հասցրեց: Բաժանվելուց առաջ Թովման ձեռքը դրեց Ասողիկի ուսիխ:

- Ինձ վաղը կսպասեն կարմրավուն ժայռի մոտ, հիշո՞ւմ ես քարանձավը:

Ասողիկը ծիծաղեց, ապա տրտմտեց, քարանձավում նրանք պահ էին տվել մանկության ու պատասեկության չարաճի հուշերը: Տրտմտեցին երկուստեք: Այդպես է հաճախ պատահում, երբ անցյալը ուրախ է եղել, իսկ ներկան հոգսերի ու վտանգների մեջ է:

Վանականները ուրախ դիմավորեցին Թովմային, ուղեկցեցին վանահոր մոտ: Յովհաննես սրբազնը պառկած էր խշտյակին, հազում էր:

- Եկա՞՞ր, որդի: Աստված չցանկացավ, որ մեռնեի առանց քեզ տեսնելու: Ի՞նչ լուր ես բերել, ի՞նչ է անում ժողովուրդը, տեսա՞՞ր եղբորորդուս, այլ-ս ի՞նչ կյանք, հոգիս տոկում է, սակայն մարմինս հրաժարվում է կյանքից: Աստված ուժ տա դիմադրելու այս արհավիրքին: Գիշերս Երազ տեսա, Գաբրիել հրեշտակապետը նստել էր մոտս, ժպտաց հայրաբար, ասաց՝ Ժամ չէ, Յովհաննես, տոկա միևն- անօրենները հեռանան Յայոց աշխարհից...

- Սրբազն,- առանց նախաբանի սկսեց Թովման,- Բարդող լեռան վրա Կողբացիները, փախստական սյունեցիների հետ կռվեցին չաղաթայների դեմ: Ես մասնակից դարձա կռվին, չաղաթայները չզորեցին գրավել լեռը, ամոթահար ետ քաշվեցին: Մենք հաղթեցինք, չաղաթայների երկու գունդ իսպառ ոչչացրեցինք, քարշարդ արեցինք... Աստծո Որդին կռվի ժամանակ մեզ հետ էր, սատարում էր մեզ: Նա էր, որ մեզ ուժ էր տալիս շարժելու ժայռերը: Այդպիսի սարսափելի շարդ չէր տեսել Թամուրը: Աստծո առաքելությամբ մեր կռիվը գլխավորում էր հայ ոյուցազուն Մարտիրոս տանուտերը: Վաղուց Յայոց հողը այսպիսի դյուցազուն չէր ծնել,- Թովմայի աչքերը ճառագում էին:

Ներկաները գրկախառնվեցին: Ուրախություն լցվեց խուցը, այստեղ տեղ չգտնելով՝ դուրս հորդեց: Վաղուց ուրախալի լուրեր չեին լսել վանքում, իսկ արդ, հաղթանակ: Յայերի համար վաղուց մոռացավ խոսք ու գործ՝ հաղթանակ...

- Որդի, ամոքեցի՞ր հոգիս, բուժեցի՞ր անձս: Ես վաղը գոհացողական պատարագ կմատուցեմ ի պատիվ Բարդողի հերոսների, ի փառս Յոր, Որդվո ու Անմահ Յոգվույն, Ամե՞ն:

Տեղապահը, որ ներս մտնելով, վերջին պահին լսել էր սրբազանին, վախեցավ:

- Սրբազան, մի անսա ծեր հոգ-որիս խնդրանքը: Մի առ ժամանակ հետաձգիր պատարագը: Ականջալուր կլինի կաղ սատանան, կավերի վանքը:

- Յայր սուրբ, այլ-ս ինչ վանք, երբ Լանկ Թամուրը ավերում է Յայստան աշխարհը: Այլ-ս ինչ վանք ու Եկեղեցի, երբ Վտանգվել է ժողովուրդը: Եթե կոտորվելու է ժողովուրդը, որն է Նա- Յավատքի Վեմը, այլ-ս ի՞նչ վանք ու Եկեղեցի, ո՞ւմ են պետք մեր իմաստասիրությունները, մատյանները մեր ծաղկած:

Լույսի այս խորանը «Եկեղեցին առանց ժողովրդի, հովիվն առանց հոտի», ունայնություն է: Անսացեք այս պարագան: Ժողովուրդը, ահա ում պիտի ապավինենք: Բռնակալները կգան ու կերթան, ժողովուրդն է մնալու, որ Աստծո գորության վկայարանն է Երկրի Վրա,- թույլ ժատաց,- ցավ է ինձ, Յակոբիոս, որ անիմա ես ճշմարտության այս: Դու գնա, խոսելիք ունեմ Թովմայի հետ:

Տեղապահը վիրավորված դուրս գնաց: Վասահայրը նայեց Թովմային:

- Տեսա՞ր, Եղբորորդուս, ի՞նչ կարող է անել մեզ համար:

Թովման ժպտաց, վանահայրը սրտապնդվեց:

- Ողջույններ է հղում, գրկում ու համբուրում է հորեղբորը: Նա իր մասն ունի մեր հաղթանակում: Նրա խորհրդով Թամուրը գործերը ետ քաշեց Բարդողից: Զահիրը խոստացավ գտնել Մարտիրոսի ընտանիքը, կինն ու դուստրերը գերի են ընկել: Զահիրը կարող է փրկել նրանց: Նա մեծ հեղինակություն է վայելում, Թամուրը լսում է նրան:

- Ես վախենում եմ նրա համար: Զահիրը վտանգված է, սպասի՞ր, սպասի՞ր, ինչո՞ւ Զահիր, հարկ է դարձի բերել, հայի անունով մկրտել,- շոյեց մորուքը, հոգոց հանեց,- Եվ ապրում է բացահայտման վախը սրտում...

* * *

- Եղիազար, թաքնվենք, մարդ է գալիս, աճապարի՞ր,- խոսողը Երիտասարդ հոգ-որ էր, հավաքեց փեշերը, անցավ պատի Վրայով,- աճապարի՞ր:

Նրա ընկերոջ գործը ավելի դժվար էր, պարարտ փոր ուներ, տարիքով մարդ էր: Սա հազիվ սողաց պատից ցած, երբ ավերակների մոտով անցավ մի հաղթանուամ զորական: Կանգ առավ ավերակներից մի քանի քայլի վրա:

- Սա հո Մարտիրոսն է, Կողբաց տանուտերը,- ուրախացավ Երիտասարդը,- ինչո՞ւ է մենակ, ձայն տանք...

- Սը՞ս,- սաստեց հասակավորը,- մարդ է գալիս:

Լոեցին: Մարտիրոսն էր գալիս՝ երկար գլխանոցով՝ քոլոզավոր մի մարդ:

Դերվիշ էր, հոգ-որևէրը զարմացած իրար նայեցին: Սա նույնաեւ բարձրահասակ մարդ էր, եթե աղքատիկ հագնված չլիներ, կարելի էր զորականի տեղ դնել, քայլը հաստատուն էր, տեսքը՝ առնական:

Դերվիշը նկատեց Մարտիրոսին, որը դեռ նժույգի վրա էր, մոտեցավ նրան: Յոգ-որևէրը վճռեցին սպասել: Ի՞նչ ուներ հայ տանուտերը դերվիշի հետ: Այստեղ մի բան կար, խորհեցին ու սպասեցին:

Առաջինը բար-եց դերվիշը, բարին ցանկացավ հայ զորականին: Մարտիրոսը հարգալից պատասխանեց նրա բար-ին:

- Ի՞նչ ունես այս կողմերում, դերվիշ բաբա,- հարցրեց Մարտիրոսը:

- Ե, զորական եղբայր, դերվիշը աշխարհ է շրջում, մարդկանց օգնում: Յոգնել եմ,- ասաց, ծոցից հանեց դաստառակը, սրբեց ճակատը, թափ տվեց այն, այնպես, որ զորականը տեսներ դաստառակի երկու անկյունների հանգույցները: Այդ ամենն արեց ցուցադրաբար:

- Դու գտար նրան, ում փնտրում էիր,- ասաց Մարտիրոսն ու իշավ նժույգից: Մոտեցան ավերակին, նստեցին պատի տակ ընկած գերանին: Մարտիրոսը բռնել էր նժույգի սանձը, դերվիշը՝ իր անբաժան ցուաը:

Յոգ-որևէրը լույսի տակ տեսնում էին երկու բարձրահասակ մարդկանց, որ նստել էին առերես հանգիստ, սակայն զգացվում էին նրանց լարվածությունը, նստել էին հանգիստ, սակայն մի ակնթարթ կարող էին կրվի նետվել, այն, որ դերվիշը դաշույն ուներ հագուստի տակ, գաղտնիք չէր:

- Ես Սահար զորապետի մտերիմն եմ: Ուղարկեց քեզ հանդիպելու, տվեց դաստառակը, սա Զահիր բուխարացու նշանն է:

- Դերվիշ բաբա, քեզ կսագեր քո մտերիմի տեղը գրավել Լանկ Թամուրի զորակայանում,- հեգնեց Մարտիրոսը,- դու խաղ ես ուզում, ինչ կա՝ համաձայն եմ: Ես ել Մարտիրոսի եղբորորդին եմ՝ Յակոբը: Խոսենք, դերվիշ, ի՞նչ ասաց Զահիր բուխարացին:

- Ի՞նչ ասաց,- ծիծաղեց դերվիշը,- եթե ես դերվիշ եմ, դու ել Յակոբն ես: Չխաբենք իրար, մենք զորական ենք, իրար կհասկանանք: Ես Սահարն եմ, դու տանուտեր Մարտիրոսը: Խոսենք գործից: Զահիրն ասաց, որ այս ճանապարհով են գերիներին տանելու, կինդ ու աղջիկներդ Թահիրը կբերի հետը, երբ հասնեն ավերակներին, նրանք աննկատ ետ կմնան: Դու քո ընտանիքը կստանաս, ես իմ ոսկիները: Զանի որ Զահիրն է գործը բռնել, պարտավոր ենք իրար հավատալ: Կեսգիշերին կգաս մենակ: Զահիրը ինքը ծիեր կբերի, քեզ մնում է ոսկին տալ ու հեռանալ: Այսքան, դու ասելի՞ք ունես, եթե բան չունես ասելու, բաժանվենք - կհանդիպենք կեսգիշերին:

- Ա՛ռ, ոսկին բերել եմ:

- Մենք փերեզակ չենք: Ոսկին հետո, երբ գործը ավարտենք,- ասաց

Սահարև ու քայլեց եկած ճանապարհով:

Մարտիրոսը մի պահ կանգնեց, ապա նժույգը նստելով, վարդեց գյուղից դուրս: Յոզ-որները տեսան, որ նրան գյուղից դուրս մի խումբ հեծյալներ միացան:

- Ի՞նչ կասես,- հարցրեց Երիտասարդ հոգ-որը: Ոտքերը ծուռ ու շիտակ դնելով,- ո՛ւֆ, մզմզում է, չեմ կարող քայլել:

- Գիտես, Յակոբիոս, չեմ հավատում չաղաթային: Նրանք ամենքն ել խարդախ են, խորամանկ՝ իրենց անապատների օձերի պես:

- Մարտիրոսը հավատաց, չաղաթայը ցույց տվեց ինչ-որ նշան, ասաց Չահիրի մասին, որին երկուստեք հավատում են, հետո ել տեսա՞ր, չաղաթայը ուսկին չվերցրեց, ասել է, թե ազնիվ մարդ է:

- Իսկ եթե դավ է, ու այս հանդիպումը խաղ է, խարդախ խաղ, հարկ է զգուշացնել Մարտիրոսին:

- Նա մեզանից խելացի է, հետո ել՝ տեսա՞ր, հետը հեծյալներ կան:

- Եթե չաղաթայները շատվոր լինեն, կալանեն Մարտիրոսին: Յասո՞ւ ես, ինչ դժբախտություն ժողովորդի համար: Մարտիրոսը մեր փառքն է, մեր հույսը...

- Վանահայր Վարդենիկը շատ կուրախանա, եթե Մարտիրոսը փրկի ընտանիքը:

- Գիտես, Յայր Եղիազար, արի Էստեղ հանգստանանք, մեր աչքով ել կտեսնենք Մարտիրոսի գործի հաջողությունը, լուր կտանենք Կաղզական:

- Սպասենք, սպասենք, ինչպես Տեր Աստված սպասեց հարության օրվան, ինչպես սպասում ենք դատաստանի օրվան:

- Այո՛, սպասենք: Մենք՝ հոգ-որներս, սովոր ենք սպասելու, քանզի սպասել մեզ պատվիրել է Տեր Աստված, սակայն մարդ աստծո, ես քաղցած եմ: Մի կտոր հացն ու մի գավաթ ջուրը կամ գինին կամրապնդեն ուժերս:

Երիտասարդը ծիծաղեց, նայեց ընկերոց պարարտ փորին: Մախաղից հանեց չորացած լավաշներ, պանիր ու մի փոքրիկ կուլա ջրախառը գինի:

- Գոհանանք Աստծոն տվածով, ավելին չունենք – պետք ել չե:

- Լիներ, չեի մերժի,- փորը քորեց ծեր հոգ-որը,- Ե՛,- հոգոց հանեց,- բավարարվենք Աստծոն տվածով:

Կերան, կշտացան, լի աչքով Երկինք նայեցին:

Կեսգիշերին մոտ էր: Լուսինը դժգովն ու մօայլ լուսավորում էր ավերակները: Գիշերը մօայլվել էր շրջապատի վրա, մօայլվել էին նահոգ-որները:

- Սիրտս վատն է գուշակում, զուր չզգուշացրեցինք Մարտիրոսին:

- Նա աշխարհիկ իշխանավոր է, մեզանից խելացի է, անշուշտ: Առանց օգնականների չի գնա: Սպասի՛ր, ձայներ եմ լսում: Գերիներն են, Յակոբիոս, մեծ բազմություն է, տեսնո՞ւմ ես:

- Ար՞ս, մի գոռա: Մեզ Էստեղ որ բռնեն, կսրատեն ու վերջ: Մի՛ շարժվիր: Ես Ել եմ վախենում, մենք այս գիշեր Վատ բաների ականատես ենք լինելու:

- Լեզուդ չորանա, քիչ ենք տեսել,- լռեց, ավերակի մոտով գերիներ էին անցնում: Չաղաթայները, հանց անասնահոտ, քշում էին գերիներին, մտրակում էին ետ մնացողներին:

- Կա՞նգ առեք, ձիերը ջրեք,- հոգ-որները լսեցին ծանոթ մի ձայն, իրար ձեռք բռնեցին, դերվիշի ձայնն էր:

- Սկսվեց, - շշնչաց Եղիազարը,- ախոր սիրտս...

- Լոի՛ր, կլսեն, - շշնչաց, աղերսեց Յակոբիոսը:

- Գյուղամիջում աղբյուր կա, ձիերը ջրեք, գերիներին Էլ ջուր տվեք, չսատկեն, մինչ- Սամարդանդ ենք քշելու:

Քարավանը կանգ առավ: Մարդկային խոլ տևքոց լսվեց, տրտունջ: Չխոսեցին, գերիներին արգելված էր բարձրաձայն խոսելը, զանցառուներին մտրակում էին: Գերիները փռվեցին գետնին, լսվեցին տևքոցներ, շառաչեցին մտրակները, զինվորները հայինեցին: Գերիները մի պահ լռեցին, սակայն չտևքալ անհնար էր, նորից շառաչեցին մտրակները:

- Աստված իմ, ինչ դժբախտ ժողովուրդ ենք,- տևքաց Յակոբիոսը:

- Ար՞ս, չաղաթայ է գալիս, չշարժվես:

Զինվորը մոտեցավ պատին, դեմքով դարձավ գերիներին, միզեց, շառաչուն կերպով օր բաց թռողեց: Ընկերները հրհռացին, չգիտես ինչ խոսեցին հայերը, նորից շառաչեցին մտրակները: Չաղաթայները չեին սաստում, մտրակում էին:

- Այսր ինչո՞ւ ենք քարշ տալիս, սրի քաշենք, պրծնի գնա...

- Եշի գլուխ, քո խելքի բանը չէ: Տիրակալի հրամանն է: Սրանց մեջ արհեստավորներ կան, ճանապարհին միայն նրանց ենք կերակրելու, մնացածներն ել... թե ապրեցին՝ կիասնեն, թե մեռան... Յեռու Է Սամարդանդը, չեն հասնի:

Խոսողը փորձառու զինվոր էր, նա արդեն մի քանի քարավան էր ուղեկցել Սամարդանդ: Նա ճանապարհը հիշելու կարիք չուներ, մարդկանց ոսկորները ցույց էին տալիս ճանապարհը, որ գիշերները սպիտակ ոսկորները թույլ լույս էին առկայժում: Մեռածները ողջերին հոգու լույսով ճանապարհ էին ցույց տալիս:

- Տիրակալը ամեն անգամ նոր երկիր նվաճելիս ժողովուրդներին տեղահան է անում, փոխում է բնակավայրերը,- զինվորների խոսակցությանը միացավ Սահարը,- դրանով փակում է ըմբոստացման ճանապարհը, աշխարհի ենք տիրում, ծոր տվեց,- հայերը անխելք մարդիկ են, դառնան մեր կրոնին, կապրեն: Բավական է, Թահիր, դուք գնացեք:

- Յա՛, կարծյոք գործը շինվում է,- լսվեց Թահիրի ձայնը:

- Յա, ինչ գործի ձեռք եմ զարկում, Ալլահի օգնությամբ հաջողվում է, սրանց թողեք ինձ մոտ: Զինվորները արդեն շրջապատում են շենք,

այնպես որ, մուկ անգամ դուրս չի պրծնի: Տանուտերը կգա իր մարդկանցով: Գիտեմ լեռնականներին, մեկին, որ սիրեցին, կյանքները կտան նրա համար:

- Տիրակալի կամքը սուրբ է ինձ համար,- ասաց Թահիրը, լսվեց, ինչպես մտրակով զարկեց երկարածիտ մուճակին,- ամեն բան Ալլահի ձեռքին է, նա- իմ ստանալիք ոսկին,- հրհոաց նա:

Հոգ-որևերը սեղմվեցին իրար:

- Ծուղակ է,- լացակումեց Եղիազարը,- ձեռքից գնաց մեր Մարտիրոսը: Ի՞նչ անենք: Մարտիրոսը հեռու է, մենք՝ ոտքով: Վայ մեզ, երից վայ, որ կորստյան է մատնվում մեր հերոսը,- Եղիազարը գրկեց ընկերոջը, լաց եղավ:

- Տեր Աստված, ե՞րբ ես նոր Մարտիրոս ուղարկելու մեր ժողովրդին:

Տեսան, ինչպես չաղաթայները ծիերին նստեցրեցին երեք գերիների, վարդեցին շենից դուրս:

- Վազենք, գոռանք, թեր-ս կարողանանք զգուշացնել,- ասաց Հակոբինը, թող ինձ զարկեն, փուլյթ չէ, միայն փրկենք Մարտիրոսին:

- Գոռաս էլ՝ չի լսի: Նա չի հրաժարվի գերիներին փրկելուց:

Դուրս եկան ավերակների միջից՝ քայլեցին պատերին քսվելով:

Սահարի հետ նժույգավարում էր քարավանի պետ Թահիրը: Եթե հոգ-որևերը լսած չլինեին նրանց խոսակցությունը, ամեն բան օրինակոր էր, խոստացել էին, արդ, տանում են գերիներին հանձնելու Մարտիրոսին: Շենից դուրս հեծյալներ եր-ացին, մոտեցան, կանգ առան: Նրանցից առաջ եկավ մեկը, ճանաչեցին՝ Մարտիրոսն էր:

- Եղբայր Մարտիրոս, փախի՛ր, քեզ խաբել են, կնոշդ ու աղջիկների վաղուց են սպանել,- ճչաց գերիներից մեկը: Մնացածը ցավի աղաղակ էր՝ սրախողիսող արեցին գերի կնոշը:

- Ստոր թուրքմաններ,- գոռաց Մարտիրոսն ու մերկացրեց սուրբ,- տղայք, մեզ խաբել են, ե՛տ, ե՛տ...

Այստեղ կատարվեց այս, ինչից վախենում էին հոգ-որևերը: Չաղաթայների մի մեծ ջոկատ շեն լցվեց: Նրանց աղմուկ-աղաղակներից խաթարվեց գիշերային անդորրը, որին հետ-եց մարտի աղմուկը, սրերի զնզվածոցը, վահանների բարախումները, տեգերի վժվժոցը:

Հայերը կովում էին հուսահատ կատաղությամբ, սակայն ինչ կարող էին անել, մեկը քսանի, երեսունի դեմ... Զարկվեցին հայերը, ոչ մեկին չհաջողվեց դուրս պրծնել չաղաթայների մահվան շրջապատումից: Մարտիրոսին գերեցին, կապակեցին:

- Բռնվեցիր, շուն հայ,- գոռաց Սահարը,- Թահի՛ր, դու քո գործն արեցիր: Ձո՞ք բաժինը կստանաս տիրակալից: Ինձ թող յոթ զինվոր, հասիր քարավանիդ:

Մարտիրոսին այնպես էին կապակել, որ մատն անգամ շարժել չէր կարող: Նրա մոտ հայտնաբերված ոսկին տվեցին Սահարին:

Մարտիրոսին այս պահին հետաքրքրում էր այս կնոջ անունը, որ փորձեց գգուշացնել իրեն, ի՞նչ են եղել կինն ու դուստրերը: Դիմեց Սահարին:

- Դու ինձ խաբեցիր, ինչ արած, թող աստվածները մեզ դատեն: Չո մեջ ասպետություն չկա: Դու Ներքինի չես, ոչ վաճառական, դու զորական ես: Վայել չեր քեզ այդպես վարվել զորականի հետ: Ես թքել եմ քո երեսին, թե- գիտեմ մարտի չես հրավիրի, քանզի ստոր ու գծուծ մարդ ես, ինչպես ձեր պիղծ ազգը, գոնե մի անգամ մարդ եղիր: Ասա, ի՞նչ է եղել ընտանիքս: Կոյիմանամ ամենածանր օարկին: Մարդ եղիր...

Սահարը մոտեցավ Մարտիրոսին:

- Ստոր հայ, դեռ հոխորտում ես: Ես քեզ կտոր-կտոր կանեմ:

- Դժվար չէ քեզ պես «քաջի» համար, սովոր ես կապկապած մարդու տանչել: Այն ժամանակ, երբ ձեռքիս սուր կար, չհամարձակվեցիր մոտենալ, զինվորներիդ ուղարկեցիր, տեսար, ինչպես չորսին զարկեցի: Ես թքել եմ քեզ վրա, քո տիրակալի վրա: Աշխարհի՝ տիրակալ,- հեգնեց Մարտիրոսը,- մի լեռ չզորեցիք գոավել, քանզի հանդիպեցիք մի բուռ քաջ հայերի, իսկ երբ ստորաբար գերեցիր, հոխորտում ես, ստոր թուրքման:

Սահարը կատաղեց, բռնեց Մարտիրոսի մորուքը, ծիգ տվեց, սակայն ոչ մի տևքոց չկորզեց հայ դյուցազնից: Կատաղած թողեց մորուքը, նստեց գետնին: Չինվորները շրջան կապած, մեկ նրան էին նայում, մեկ՝ Մարտիրոսին: Սահարը հասու չեր ինչ էր կատարվում իր հետ: Յայի խոսքերը դադում էին նրան. «Սահարի, ասպետ չես» բառերը դադում էին նրան, քանզի նա իրեն ասպետ էր համարում՝ փակա-ան: Եթե Մարտիրոսը չհիշատակեր Բարդողի կոիվները, թեր-ս Սահարը այլ կերպ վարվեր, սակայն Բարդող-Թակաթալան ծանր վիրավորանք էր դարձել չաղաթայների համար: Այս մի հայը կարողացավ ցրիվ տալ չաղաթայների անպարտելության առասպելը...

Վրեժինդրությունը գլուխ բարձրացրեց Սահարի մեջ, վճռեց գերուս տանչել սպանելուց առաջ:

- Յարցնում ես կնոջ ու դստերդ մասին: Ինչ կա, կպատմեմ: Կնոջդ բռնաբարեցի: Գիտե՞ս, տանուտեր, կինդ բավականին լավն էր, դեռ մարմինը չեր լիսկել, իսկ աղջիկներդ, Ալլահի պարգ-ը՝ Զեննեթի փերիներ էին,- զգաց, ինչպես ձեռքի տակ պրկվեցին Մարտիրոսի մկանները,- հը՝, կպա՞վ սրտիդ, շուն հայ, ախր երկու գունդ կոտորեցիք... Ասպե՞տ չեմ, հա՞,- մռմռացրեց, զգաց, որ այն չեր անում, ինչ կցանկանար, սակայն պիտի աներ այն, ինչ հաճելի կլիներ հետագայում լսելու տիրակալին: Գիտեր, որ այստեղ ասված ամեն բառ հասնելու էր նրան,- ասպե՞տ չեմ, հա՞:

- Սահա՞ր, շո՛ն ես դու, շուն է քո տերը, որին աշխարհն է անխօնւմ:

- Սպասի՞ր, ես դեռ չեմ ավարտել, ասպետ չեմ, հա՞... Երբ բռնաբարեցի մեծ աղջկադ, չեի ասի, թե մեծ հաճույք զգացի: Դե, աղջիկ էր, ոչինչ,

միայն տևքում եր ցավից, - Վրեժիսնդրությունից Սահարը հաճույք էր զգում: Նա կարող էր հագուրդ տալ Վրեժին - ոչ միայն սեփական Վրեժին, այլ - բոլոր զոհված ընկերների համար... Այո՛, Թակաթալան ս- խարան էր բոլորի ճակատին: Սահարը հիշեց, ինչպես են խարանում ձիուն շիկացած տոհմադրոշով, ինչպես է ձին խրխնջում ցավից - այրվածքի հոտը երկար ժամանակ դուրս չէր գալիս քթածակերից: իսկ արդ, իրեն վիրավորող հայը ընկած է ոտքերի տակ: Ինչպես Վրեժ չլուծի, քաղցր է Վրեժը անգամ կույսի համբույրից:

- Մարտիրո՛ս, զարմանալի բան կատարվեց կրտսեր առջիկո, որ նոր էր սկսել հասկանալ կին լինելը, գիտե՞ս, մի՛ ոռնա, դեռ չեմ ավարտել խոսքս: Մեծ հաճույք զգացի նրանից: Ասել է թե կնոջ մարմսում եղած կիրքը տարիքի հետ կապ չունի, այլ Ալլահի պարզ-ն է: Չես պատկերացնում, աստվածային հաճույք զգացի: Դու քացի-քացի մի տուր, մեկ է, չես վնասի: Գիտե՞ս, մի բան էլ պատմեմ, երբ բռնաբարում էի կնոջ, չեմ ստում, վերջին պահին կինդ, չեմ ստում, վերջին պահին պատասխանեց գգվանըներիս, - հռհռաց, - գրկեց ինձ, դու մի՛ կատաղիր ու մի էլ զարմացիր, կինը դրան արժանի չէ: Ալլահի կամքն է, կինը կին է մնում, - Սահարը լռեց, չգիտես ինչու, խղճաց Մարտիրոսին, կռացավ նրա ականջին, - գիտե՞ս, ես, իրոք, ասպետ չեմ, ա՛յ, տե՛ս, - ու դարձավ զինվորներին, - դրանց սրատեք:

Զինվորները ոչ առանց ափսոսանքի, սրատեցին աղջկներին, ոռուց մեծ հաճույքով կլլկեին, սակայն հրամանը հրաման էր: Զարկածները ոչ մի ծպտուն չհանեցին: Զաղաթայները սովոր էին գերիներ զարկելուն, ոչ մի ծպտուն...

- Տեսա՞ր, - տևքաց Եղիազարը:

- Տեսա, - շշնչաց Յակոբիոսը, - ափսոս զինվոր չեմ, ափսոս չեմ սովորել սպանելու արհեստը...

- Մի՛ պղծիր լեզուդ, որդի: Մենք քրիստոնյա ենք, Աստծո ծառա:

- Մենք ոչխա՞ր ենք...

- Լոհի՛ր, Աստված սիրես, - շոյեց Երիտասարդի ուսը, - սպասիր դեռ:

Զաղաթայները օղապարաններով բռնեցին հայերի ծիերը, մեծ ավար էր, գոհ էին: Մարտիրոսին, որ ուշակուրուս էր, կապեցին նժույգի թամբին: Վարգեցին Արաքսի կողմը:

- Ո՞ւր են տանում, ի՞նչ անենք, - Վշվշացրեց Յակոբիոսը:

- Չենք կարող օգնել, Աստված էլ է մեզանից երես թեքել, - տևքաց Եղիազարը, - մեկը ելավ ժողովրդին պաշտպան, գերեցին: Գնանք, մենք վկա ենք լինելու ոճրագործության: Թող Աստված ուժ տա դիմանանք այս տանջանքին, այս անզորությանը, - առանց ընկերոջը սպասելու, հավաքելով փեշերը, վազեց զինվորների հետ-ից: Տեսավ, որ Յակոբիոսը կողքին է:

Նրանք տեսնում էին չաղաթայներին, ինչպես եր-ում էր, Սահարը չէր շտապում, իրեն ապահով էր զգում Յայոց հողում:

Վագելը քանի գևում դժվարանում էր, Եղիազարը մի կողմ նետեց մաշիկները, իսկույն հասկացավ, որ սխալ էր թույլ տվել, ոտքերը ար-նոտվեցին:

Զի՞ս անց գետը փայլեց լուսնի դժգույն լույսի տակ: Չաղաթայները կանգ առան:

- Սողանք,- ասաց Յակոբիոսը:

- Չեմ փորձել, սակայն... տնքաց Եղիազարը, սողաց Յակոբիոսի կողքով:

- Զրահեղծ արեք,- լսվեց Սահարի հրամանը:

Երբ զինվորները Մարտիրոսի գլուխը մտցրեցին ջուրը, սա սթափ-վեց, ուժ տվեց, չկարողացավ ոտքի ելնել:

- Չո՞ւրը նետենք,- հարցրեց զինվորներից մեկը:

- Չե՞,- վախեցավ Սահարը,- մինչ- ջրահեղծ չկանչի, մինչ- չհամոզ-վենք... Սրանք դիմացկուն են:

Զինվորները Մարտիրոսի ոտքերից բռնած գլուխը իշեցրեցին ջրի մեջ:

- Նասի՞ր, ա՞յ տղա, ուս է խփում, ա՞յ այրմարդ...

- Ամո՞ւր բռնիր, պղպջակները պակասում են: Խեղդվում է, այ հսկա:

- Պրծավ, Էլ չկա տանուտերը: Տեր իմ, վերջացավ, Էլ չկա տանուտերը, ես աստվածահաճ գործի համար մեզ մի քանի արծաթադրամ կհասնի՞:

- Շատ ես խոսում,- զայրացավ Սահարը,- դիակը գետ նետեք, սպասե՞ք, ոտքերին քար կապեք:

Միևս զինվորները Մարտիրոսի ոտքերին քար կկապեին, հոգ-որևեռը ավելի մոտեցան, այլ-ս չեին խորհում նկատվելու մասին: Տեսած ոճ-ռագործությունը նրանց հանել էր բնական վիճակից, պատրաստ էին անխոհեմ քայլի:

- Երբ հեռանան, դիակը կհանենք, կտանենք Կաղզվան, Էնտեղ քրիստոնեաբար կթաղենք:

- Պատրաստ է, տեր իմ, քար կապեցինք,- լսեցին հոգ-որևեռը:

- Գե՞տը նետեք, վե՞րջ:

Զինվորները դիակը գետի մեջ իրեցին, տեսնելով, որ դիակը սուզ-վեց, թռան ձիերի վրա:

- Գնացինք,- ասաց Սահարը, մտրակելով նժույգը: Զինվորները հետ-եցին նրան: Սահարը ընթացքի ժամանակ մոտ կանչեց զինվորներից մեկին:

- Յը՝, դեռ գալի՞ս են:

- Ետ մնացին: Նրանք գետի ափին կլինեն, դիակը կհանեն:

- Յա, մենք ել նրանց կսպասենք վանքի ճանապարհին: Ավելի մոտակայքում այլ վանք կամ շեն չկա՝ Կաղզվան է: Սրանք փուչ մարդիկ են, չեն կարող մեզ խաբել: Նասիր, դու ամենքից աչքաբաց ես, ետ մնա:

Կիետ-ես նրանց, մեզ լուր կրերես, երբ շարժվեցին: Թաքնվիր շամբուտում: Գևա՛,- ասաց ու քշեց առաջ:

Այդ պահին Եղիազարն ու Յակոբիոսը մոտեցան գետին: Ահա սմբակներից տրորված ափը, ահա Մարտիրոսին ջրահեղձ անելու տեղը: Ափի կանաչը տրորված էր: Պարզ եր-ում էր դիակը քարշ տալու հետքերը:

- Եստեղ Է,- ասաց Եղիազարը:

- Սպասի՛ր, ես ծովափին եմ ծնվել, լողորդ եմ,- ընկերոջ թ-ը բռնեց Յակոբիոսը - կսուզվեմ, կհանեմ դիակը:- Յանեց հագուստները, գլխիվայր նետվեց գետը, մի պահ եր-ացին նրա կրունկները, անհայտացան: Եղիազարը շունչը պահած նայեց: Մի քանի պղպջակներ եր-ացին ջրի երեսին, անհայտացան:

- Խորն Է,- գլուխը ջրից հանեց Յակոբիոսը,- Եթե ջուրը չի տարել, կգտնեմ,- խոր շունչ քաշեց, նորից սուզվեց:

Սկսում էր լուսանալ: Յանկարծ Եղիազարը սարսափահար ընկրկեց: Մարտիրոսին տեսավ, որ իրեն էր մղվում ջրից. այդ Յակոբիոսն էր տանուտիրոջ ոտքերից բռնած ջրից դուրս հրում ուղղակի Եղիազարի ոտքերի տակ:

- Բռնի՛ր, ի՞նչ ես կանգնել,- լսվեց Երիտասարդի ծայնը: Եղիազարը բռնեց Մարտիրոսի թ-ատակերից, Յակոբիոսի հետ ափ քաշեցին:

- Դիակը շալակած չենք կարող տանել, Կաղզվանը հեռու Է: Մեզ ձի կամ ջորի Է պետք: Սպասենք, մինչ- լուսանա:

- Խեղճ Մարտիրոս,- վշվացրեց Եղիազարը,- Աստված մեզ լքել Է, - ծերունին լաց եղավ,- Տեր Աստված ամենազոր, խղճա՛ ազգիս հայկացան, ապրեցրու մեզ...

- Բա՛վ Է,- զայրացավ Յակոբիոսը,- չե՞ս տեսնում՝ Աստված խիղճ չունի...

Չարմանալի բան էր կատարվում ծեր հոգ-որի հետ: Նա, որ ողջ կյանքում աղոթել էր Աստծուն, սպասել դատաստանի օրվան, չցնցվեց անգամ Երիտասարդի աստվածուրաց խոսքերից, չանհծեց նրան: Գլուխը դրեց նրա ուսին:

Նրանք, ինչպես հայր ու որդի, այդպես նստեցին իրենց հարազատի դիակի մոտ, մինչ- դուրս եկավ ար-ը:

Խնդուն օր բացվեց: Շամբերից օդ բարձրացան անթիվ, անհամար, բադեր, սագեր, ճայեր, սուրացին ջրերի վրա: Ծիծեռնակները վեր սուրացին, սլաքի նման թ-երով ճեղքելով օդը: Ամեն բան սովորական էր, գեղեցիկ, իսկ այս դիակը, մի՞թե խաթարում է բնության գեղեցկությունը: Ար-ը ջերմացնում էր, ինչպես քաղցրաշուրթ կինը, ժպտում էր սիրո խոստումի խնդությամբ, եթե չլիներ տանուտիրոջ դիակը, եթե չլիներ տեսած ոճրագործությունը, եթե չլինեին վկա սպանության, կիհանային Ար-ով, որ զարթոնքի էր կոչում բնությանը, քանզի Ար-ի մեջ ջերմություն կար, հայրական գորով, սակայն դիակը խաթարում էր բնության

գեղեցկությունը...

Ամեն մահ տգեղ է, այս չի կարող գեղեցիկ լինել... Թեր-ս Երկար նստեին այդպես, եթե թիկունքին ձիու խրխինչ չլսվեր: Ոչ միայն հոգ-որները սթափվեցին, ևա- Նասիրը, որ Նրանցից մեկը Նետընկեց եր հեռու որպես՝ փորձված հեծյալ, անմիջապես մատները մտցրեց ձիու քթածակերը, սեղմեց, որպեսզի ձին չպատասխաներ խրխինչով, չմատներ իրենց տեղը:

Հոգ-որներին մոտեցան Երկու հեծյալներ: Զիերից ու հագուստներից պարզ դարձավ՝ տեր ու ծառա էին:

- Բարի լույս, հոգ-որ հայրեր,- բար-եց հեծյալներից ավագը, խաչքաշեց դեմքին,- ո՞վ է սպանվածը,- իշավ Նժույգից, սանձը Նետեց ծառային:

- Կողքա տանուտեր Մարտիրոսը:
- Օ՛Փ,- տևքաց հեծյալը:

- Նոր հանեցինք ջրից, թուրքմանները ջրահեղձ են արել: Օգնենք, տանենք Կաղզվան, քրիստոնեաբար հողին հանձնենք:

Հեծյալը ծնկեց դիակի առաջ, առավ Մարտիրոսի աջը, համբուրեց:

- Ես փնտրում եի Մարտիրոսին, ափսոս, ուշացա: Դվինից եմ, գնում եմ Կաղզվան: Դիակը կապեք Վարդանի ձիու թամբին, գնանք արագ: Այստեղ չաղաթայների ջոկատներ են շրջում: Նրանք մեծ խմբերով են, իսկ մեզանից միայն ես ու Վարդանն ենք սուր բռնող:

Մարտիրոսի դիակը կապեցին ձիու թամբին: Վարդանը բռնեց ձիու ասպանդակն ու վազեց ճանապարհով: Հեծյալը նույնպես իշավ թամբից, արագ քայլերով գնացին Վարդանի հետ-ից, սակայն Նրանց վիճակված չեր հասնել Կաղզվան: Նասիրը մեծ պտույտ կատարելով, հասել էր Սահարին:

Երբ թափորը անցավ գետի կեռմանը, կանգ առան, չաղաթայները փակել էին ճամփան:

- Կանգ առեք, շներ, ո՞վ է թույլ տվել հանել դիակը: Դիակը վայր գցեք: Կապեք բոլորին,- գոռաց Սահարը: Չինվորները վրա տվեցին, սակայն դվինցին ծառացրեց Նժույգն ու տապալելով հարձակվողներից մեկի ձին, սլացավ Կաղզվանի ճանապարհով: Մի քանի հեծյալներ Նետվեցին Նրա հետ-ից, անմիջապես ել հասկացան, որ հայի Նժույգը վազկան է: Սևացած գինվորները հարձակվեցին հոգ-որների վրա: Ի՞նչ կարող էին անել անզեն մարդիկ: Յակորինոսը մերկ ձեռքերով ճանկեց չաղաթայի թուրը, սա թուրը թափով ետ քաշեց, հոգ-որի մատները թափվեցին գետնին: Մեկը զարկեց հոգ-որի գլխին, սակայն Երիտասարդը միտք չուներ անփառունակ մեռնելու: Ճանկեց ու չաղաթային ցած քաշեց ձիուց, սկսեց խեղդել: Չաղաթայները հասան օգնության իրենց ընկերոջը, սրատեցին Յակորինոսին: Վերջին զարկը տվեց Սահարը, հոգ-որի գլուխը կախ ընկապ կրծքին: Եղիազարին գցեցին ձիերի սմբակների տակ, սպանեցին ծերունուն: Սմբակների տակ շախչախ-

ված ալեգարդ գլուխը ուրիշների մոտ սոսկում կառաջացներ, սակայն չաղաթայները սովոր եին: Նրանց համար ծեր ու մանուկ մեկ հաշիվ եր: Նրանց հիշողությունը կտրվել էր տանից, ընտանիքից, ծնողներից, զավակներից: Սպանությունը արհեստ էր, աշխատանք: Նրանց մեջ մերել էր հիշողությունը...

Չաղաթայների գործը դժվար էր Վարդանի հետ, որը հմուտ սրամարտիկ էր: Նա չաղաթայներից մեկին ծանր վերք հասցրեց: Սրանք հասկանալով, որ գործ ունեն քաջ զորականի հետ, նրան նետահարեցին մի քանի քայլ հեռավորությունից: Մի նետ զարկվեց Վարդանի ճակատին, երկուսը կրծքին: Վարդանը ընկավ սպանված, վերջին պահին անգամ բաց չէր թողել սուրը, թշնամու արյամբ ցողված սուրը:

Փա՛ռք քաջին, երիցս փառք, այսպիսին են եղել մեր արհական նախնիք, չեն նվաստացել, կռվել են մինչ- վերջ, փա՛ռք քաջին...

- Դիակները կտոր-կտոր արեք, զցեք գետը: Վե՛րջ, տիրակալի հրամանը կատարված է...

- Տեր իմ, իսկ փախստականը:
- Հա, վաստ եղավ, շեյթան էր, մերոնք կիասնեն:
- Չե, չեն հասնի, նժույգը վազկան էր:
- Թքա՛ծ, գնացի՛նք,- զայրացավ Սահարը:

* * *

Թամուրը մռայլ նայում էր համրիչին, հատիկները չեր քաշում: Ուշըն ու միտքը խուզարկուների բերած լուրերն եին: Սուլթան Բայազետը զորքերը սկսել ե նախապատրաստել պատերազմի, անգամ Բալկաններում, ուր զորքերը մինչ այդ անուշադրության եին մատնված, արդ, ժամանակին պարենավորվում են, զինվում: Մեծ պատերազմի ե նախապատրաստվում, հասկանալի է ում դեմ: Բայազետը իրենից զատ ախոյան չունի: Նա շարդել է խաչակիրներին, այդ ասպետներին, որոնց երկաթյա գլուխներում խելքի հյուկե չկա: Տկարամիտներ, եկան - հասան Տիրոջ գերեզմանին ու սկսեցին իրար միս ուտել, փոխանակ միակամ ու միասնական լինեին: Միացյալ ճակատ կազմեին: Բայազետը նրանց ցրեց ինչպես բազեն ճնճուկներին, սակայն այս պահին ելել է տափաստանի բերկուտի դեմ - կպատուհասվի: Խորհեց, որ երկուստեք Ալլահի ստեղծածն են, քմծիծաղ տվեց, քանզի կրոնը նրա համար նշանակություն չուներ, այս միայն վարագույր էր, թաքցնելու համար սեփական նպատակները, միայն այդքան...

Այդ ամենն ունայն բաներ են, իմ զինվորները կոտորում են անխտիր բոլորին: Սա Ալլահի կամքն է, խորհեց մի պահ, կամքս է, քանզի Ալլահի փոխանորդն եմ երկրի վրա: Ել ի՞նչ Բայազետ կարող է կանգնել

ճանապարհին: Նայեց յուրտում հավաքվածներին: Սրանց ներկայությունը նրան ետ բերեց խոհերի հորձանուտից, ստիպեց խոսել, խորհել այսօրվա դեպքերի մասին: Եվ, ցավոք, այսօր դռան ի օգուտ իրեն չեն: Յայերի դիմադրությունը քանի գնում սաստկանում է: Տանուտեր Մարտիրոսի մահն ատելության նոր ալիք է բարձրացրել: Իրավացի է Շամսետինը, հայերը արիականների նախահայրերն են եղել, դա հասկացվ, քանզի սարսափը հակառակ ազդեցություն արեց հայերի վրա, փոխանակ սակագեցին, կատաղեցին, ստիպված է պատժել, սակայն ավելանում են զոհերը, ստույգ է, ավելանում են Սամարդանդ ուղարկվող գերիների թիվը, ոսկին ու թանկարժեք իրերը: Յարուստ երկիր է Յայստանը, գումակները լցվում են հանված հարստություններով, սակայն որքան խորանում է երկրում, այնքան ավելանում են զոհերը: Ասես հայերը նոր են ուշքի եկել, դիմադրում են, այո՛, իրավացի է Շամսետինը, հայերը, իրոք, արիական են, իսկ գնալ առաջ, թիկունքում թողնել հայերին, անմտություն է... իսկ ինչո՞ւ չեմ խորհում Վրաստանի մասին, մոռացել եմ այդ երկիրը: Ի՞նչ գիտեմ այդ երկիրի մասին: Նայեց Շահ Մելիքին:

- Ասա, թող կանչեն Ահմետ Թեպինին: Նա պիտի որ իմանա Վրաստանի մասին,- խուսափեց իրավիրել Շամսետինին, սա եթե գար, հարկավ, պիտի խոսեր հայերի արիականության մասին - գուր տեղը պիտի իրեն զայրացներ, ինչ կա որ, Թեպինը Դուրան կարդալուց գատ, նապատմիչ է:

Պատմիչը իրեն երկար սպասել չտվեց:

- Պատմիր Վրաստանի մասին, պարտ ես իմանալ այդ երկիրի մասին:

Պատմիչը խոր խոնարհվեց: Ապա շտկելով մեջքը, սղալեց մորուքը:

- Տեր իմ, մասնատված երկիր է: Ստույգ է, թագավոր ունի, սակայն գորական ուժերը ցրված են: Վրաստանի մեջ են մտնում, - նայեց ձեռքի մագաղաթին: Ինչպես եր-ում էր, Շահ Մելիքը ժամանակ էր տվել պատմիչին նախապատրաստվելու գեկուցի,- Վրաստանի մեջ են մտնում Մեգրելը, Աբխազը, Իմերեթը, Դրալը, Սօնքը, Մցիւթը: Ամեն տեղ զորական ուժեր կան, թեպետ փոքրաքանակ են: Գավառապետերը հաճախ են իրար դեմ կրվի ելսում, թագավորը կարողանում է հաշտեցնել նրանց: Թագուհին՝ Կիր Աննան, հունաց աշխարհից է, գեղեցիկ կին է: Մեծ ազդեցություն ունի թագավորի վրա: Նրանց երեց որդին խելացի, մեզ համար վտանգավոր զորական է, մնացած եղբայրները ենթակա են նրան: Վրաց թագավորը խելացի զորական է, մի քանի ճակատամարտերում հաղթանակ է տարել, քաջ կովող է:

Թամուրը զայրացած շարժվեց տեղում: Նրան դուր չեկավ վրաց թագավորին տրված գնահատականը:

- Ինչպե՞ս են ամրացված քաղաքները, բերդերը: Մե՞ծ են կայազորները:

- Վրաց քաղաքները Յայաստանի քաղաքների նման քարե պարհսպներ ունեն, աշտարակներ, ամրացված են: Երկրի տարածքը քարքարոտ է, երկրում նա- բարեբեր դաշտեր կան, հյութալի մրգեր են աճում: Կանայք գեղանի են, հաճույքով գևում են միջագետքի շուկաներում: Այրմարդիկ առևական են, ինքնասածի, ենթակա են սրատման,- մի պահ լոեց, սպասեց, խոր շունչ քաշեց, ասես դրանով դատավճիռ եր կայացնում,- ենթակա են ոչնչացման, ստրկություն չեն ընդունում, փախչում են...

- Ասել է թե գերեվարման ենթակա են միայն կանայք ու երեխաները,- Թամուրը ձեռքը թափ տվեց, ասես վճռեց Վրաստանի ճակատագիրը,- մի քիչ զոր տվեք գլուխներիդ, հիշեք, երբ նվաճեցինք Աղվանքը, միայն փոքրիկ ծուղաներ էին սարքում մեր ճանապարհներին, զոհերը աննշան էին, իսկ երբ մտանք Յայաստան, ամեն բան փոխվեց, դիմադությունը սաստկացավ: Այս երկրում ամեն քաղաք, ամեն շեն ու վանք դիմադրում են, նա- Լեռ... Մեծանում է զոհերի թիվը,- ձեռքը նորից թափ տվեց, չուզեց ավելի մտերմիկ խոսել ներկաների հետ: Կաարծեն, որ Լանկ Թամուրը խորհուրդների կարիք ունի, իբր- տկարացել է մտքով: Նրա մեջ այդ միտքը հրահալու ցանկություն առաջացրեց,- մենք դեռ զորեղ ենք մտքով, կարող ենք անգամ մեր Ուլուկբեկ թոռանը զարմացնել,- ցանկացավ տեսնել Միրզա թոռանը, սակայն տեսավ, որ տաղավարում միայն զորապետներն են, թոռներից միայն Խալիլ սուլթանն եր ներկա: Նա ել զորական է, խելացի զորական: Նրա մեջ դաստիարակները սրել են զորավարական շիղը... Արդ, - դեռ երկար ժամանակ պետք են զորականները, իսկ Ուլուկբեկը, ինչպես Տատն է ասում, գիշերները երկինքն է քննում աստղերի հետ: Նա ակամա պատկառում է թոռանից, քանզի շատ բաներ գիտե, որ իրենից թաքցրել էր կյանքը: Նրանց ինչ, այդ լակոտներին կրթել են լավագույն դաստիարակները, գիտնականները, իսկ իրեն՝ տափաստանը: Գողությամբ է հաց վաստակել, սպանությամբ ու կողոպուտներով: Իսկ թոռները ապրում են ամենահարուստ սուլթաններից հարուստ ու շքեղ: Թող ապրեն, իմանան, որ այդ կյանքը նրանց համար Թամուր պապն է ստեղծել, իմանան բարեկեցիկ կյանքի արժեքը: Թեպետ նա դժգոհելու պատճառ չունի, թոռները լսող են, խելացի, իսկ որդինե՞րը: Մռայլվեց, որդիները հասուն զորավարներ են, սակայն սկսել են տափաստանի անսանձ հովատակների պես ծառս-ծառս լինել, ուզում են անկախ լինել, հիմարներ, չգիտեի, որ անմիջապես կուլ կգնան իրենցից հզորներին, եթե մնան առանց հոր օժանդակության: Յասկացավ, շեղվել էր այսօրական խոհերից, նայեց հավաքվածներին:

- Չորքերը դարձնում ենք Վրաստան: Ճանապարհին բոլոր քաղաքներն ու բերդերը ավերել, այրել, արհեստավորներին քշել Սամարդանդ, Մավրիսահր: Ով պետք չէ, սրատել: Վանքերին, եթե չեն դիմադրում, չավերել: Գևացեք: Կշարժվենք երկու օրից:

Մեծամեծները խոր խոնարհում անելով, դուրս գնացին: Թամուրը մնաց մենակ: Ետ նայեց, հանդիպեց թիկնապահ Զինգիզի շլացուցիչ հայացքին: Ինչ մտել էր Յայաստան, այդ թիկնապահին իրենից չեր հեռացնում: Սա, ինչպես ասում էր Մեծ Տատը, շատ նման է Զինգիզ Խանին: Թիկնապահը մի արատ ունի, ատամները չեն փակվում, վերին շրթունքը կարճ է, ժպտում է անգամ զայրույթի պահին: Թամուրը խուսափում էր հաճախակի ու երկար նայել նրան, գիտեր, որ զայրույթի պահին տեսնելով նրա ժպիտը, կարող է գլխատել տալ հավատարիմ թիկնապահին: Ելավ տեղից, ոտքի ցավից տևքաց: Զախս էլ էր ընդարմացել, ոտքը թափով զարկեց գորգին: Ներս ընկան մի քանի հոգի մեծամեծներից: Առջ-ում ծահ Մելիքն էր: Նայեցին հարցական: Թամուրը գլխով հեռանալու նշան արեց, իսկ մտքում: «Նվիրված է շան պես: Նրանից ավելի նվիրված մարդ չկա: Ստույգ է, նա էլ իր շահն ունի,- ծիծառեց մտքում, - Ե՛, ո՞վ առանց շահի է ծառայում: Ծառայության վարձը շահն է: Մենք էլ սկզբում ծառայում, ապա հասկացա, որ ինքս կարող եմ իմ տերը լինել: Դրա համար հարկ էր կռվել, նա- տքնել,- զայրացավ, ոտքի մզմզալը չեր կտրվել: Նորից ոտքը ուզեց զարկել հատակին, գլուխը թափ տվեց, գիտեր, որ ներս կգային: Ոտքը կամաց դրեց գորգին, ամուր սեղմեց: Կրկնեց մի քանի անգամ, մզմզոցն անցավ - այո, տեր դառնալ, իշխանության հասնել, իսկ դա դյուրին գործ չեր: Սպանում էի, ինչ կա որ: Ալլահը չի արգելում... Ամեն բան արվում է Ալլահի փառքի համար,- ծիծառեց ծերունավարի, մանր-մանր,- լավ է ասված, իսկ սրանց կրոնը արգելում է սպանել: Կռվում են միայն այն ժամանակ, երբ հարձակվում են նրանց վրա, երբ այլ ելք ու ճար չկա: Յիմարներ, կորցնում են հանկարծակի հարձակվելու առավելությունները: Չե, հայերը ոչխար չեն, հպարտ ու կռվող ժողովուրդ են, վկան՝ Թակաթալան,- հանկարծ հիշեց պատանեկության տարիները, իր քաղցած կյանքը, վճռեց գնալ Մելիքի մոտ, գիտեր, որ այստեղ կհանդիպի թոռներին: Քայլեց Մելիքի յուրտի կողմը: Ճանապարհին միտքը փոխեց, ուզեց գնալ Յելիան տիկնոց մոտ: Պատկերացրեց նրա գեղեցիկ մարմինը, փաղաքշանքները, գալարվող մարմինը... «Յելիանի հարստությունը մարմինն է, ափսոս, հոգի չունի: ՉԵ՛, այսօր հոգնել եմ, հանգիստ է պետք: Մելիքին խելացի կին է, կին էլ չի արդեն: Մյուսների պես անկողին չի քարտալիս իրեն: Նրա հետ կարելի է խոսել: Նրա մոտ հանգստանում է հոգով ու մարմնով: Դրանից զատ, չինաց աշխարհից բերած բուժքը զորացնող թուրմեր է պատրաստում: Այդ թուրմը խմելուց հետո գնում է կանանցից որ-է մեկի մոտ, իսկ դա խանգարում է գործերին: Յանկարծ անհարկի բան հիշեց, չեր պատժել Զահիր բուխարացուն: Անգամ կանգ առավ: Իսկ ինչո՞ւ պատժել: ՉԵ որ նա միջոցով կարողացավ պատժել տանուտեր Մարտիրոսին: Թեր-ս նրան հետ-ելով, կարելի է նա- ուրիշներին էլ գտնել, պատժել: Մի քանի օր առաջ Մելիքին հիշեցրեց Զահիրի մասին: Ինքը զայրացավ, ասաց, որ սպասելիքներ ունի նրանից:

Թքա՛ծ, և ա դեռ պետք է: Տեսավ, որ հասել է թագուհու յուրտին: Պահապանները խոնարհվել եին, ներքինները փռվել եին գետնին: Մտրակով բարձրացրեց յուրտի դռան վարագույրը: Ներս մտավ, անմիջապես հասկացավ, որ իր այցելությունը հանկարծակի չէր բերել թագուհուն: Մելիքեին մինչ- տիրակալի յուրտը մարդիկ ուներ կարգած, որոնք նրա գալու մասին հայտնում եին նրան:

Կինը խոնարհվեց մինչ- գորգերը, ապա ծանրորեն ուղղվեց, ցույց տալով, որ իր տարիքի կնոջ համար դժվար է խոնարհվելը, սակայն և ապատրաստ է իր տիրակալի ու ամուսնու առաջ մինչ- գորգերը խոնարհվել:

Թամուրը ժպտաց: Մելիքեին բռնեց նրա ձեռքը, նստեցրեց կաշվե բարձերին, «Ալլահը վկա, Մելիքեին խորամանկությամբ գերազանցում է անապատի բոլոր օձերին միասին վերցրած: Չորացող թուրմն ինքն է պատրաստել տալիս որպեսզի գնամ երիտասարդ կանաց մոտ, դրանով իր վարկն է բարձրացնում, հաստատում է իր իշխանությունը: Թեր-ս ինչ-որ տեղ վիրավորվում է կանացի ինքնասիրությունը, ոչինչ, Մելիքեի համար իշխանությունը ավելի բարձր է, քան կանաց գործերը: Այդ կորուստն այլ-ս չի հոգում նրան: Նրա համար կար-որ է, որ թուներն իր միջոցով շնորհներ ստանան, կապվեն իր հետ»: Այդ ամենը խորհեց՝ կնոջ աչքերի մեջ նայելով, ավելի ստուգ, նայելով ծերունական խորշումների մեջ կորած ակնախռոչներին: Թե- չէր եր-ում կնոջ աչքերի գույնը, սակայն իհշում էր, որ դրանք ավագի գույնի են - տարիներ առաջ կարողանում եին այրել:

- Կումիս բեր,- ասաց անտարբեր, թեք ընկավ բարձերին:

Կինը հասկացավ՝ թամուրը միտք չուներ երիտասարդ կանաց մոտ գնալու, հակառակ պարագայում կումիս չէր խմի: Նա լավ էր ճանաչում ամուսնուն, զգաց, որ թամուրը կարիք ունի կիսվելու, ինչ-որ քան էր տանջում նրան: Այդպես լինում էր վճիռ ընդունելուց առաջ:

- Օ՛, Ալլահ, հոգնել եմ,- տնքաց թամուրը,- այս ել քանի տարի է կրվում եմ: Քիչ երկրություն չեմ գրավել՝ բերդեր, քաղաքներ, շեներ: Անհնագանդ ժողովուրդներ սանձահարել: Յազարավոր գերիներ եմ ուղարկել Սամարդանդ, Բուխարա, Կագան: Իմ դիզած ոսկին ուղտաբեռներով է չափվում,- երկար լրեց, շփեց ոտքը,- իմ դեմ մնացել է միայն Բայազետը,- աչքերը կլոցեց,- մեկ ել թողթամիշը,- զայրացավ, նայեց կնոշը, սակայն նրան չտեսավ,- հասունանում է ժամը: Նրան էլ կչոքեցնեմ, ինչպես ուղտապանը չոքեցնում է ուղտին, կչոքեցնեմ նրան,- սպասեց, որ կինը հարց տար: Իսկ սա գիտեր, որ չի կարելի հարց տալ, գիտեր, որ թամուրը շարունակելու է ասելիքը, չսխալվեց:

- Մեր զորքերը բավականին զոհեր են տվել, հայերի դիմադրությունը քանի գնում սաստկանում է: Դեռ լավ է, որ սրանց իշխանները խուսափում են միավորվելուց, չեն ուզում կորցնել իրենց կարծեցյալ անկախությունը: Դա լավ է, կռվում են անշատ-անշատ: Վատն այս է, որ սկսել են

կովել հասարակները՝ շինականը: Յետաքրքիր է սրանց կոհիվը, կովում են մինչ- գոհվելը, հիմարներ... Լցրո՞ւ,- մեկնեց գավաթը,- գիտե՞ս, ես նոր եմ հասկանում հայերին, Շամսետինը բացեց աչքերս, սրանց մեջ արիական հոգի կա, որ ամեն անգամ հառնում է արիավիրքի պահին: Ալլահը հեռու պահի սրանց կատաղելուց...

ՄԵԼԻՔԵՒՆ բարձրացավ տեղից, կումիս լցրեց:- Ի՞նչ ես վճռել, Ե՞տ քաշվել,- նայեց ամուսնուն, ժպտաց,- դու տիրել ես Ղղվանքը, Յայաստանը, իսկ ի՞նչ է, Վրաստանը թողնելո՞ւ ես: Կում են՝ հարուստ երկիր է, ստույգ է, շատ փոքր է Յայաստանից: Ի՞նչ կա, մենք մի շաբաթում կտիրենք Վրաստանը: Նրանք սարսափահար սպասում են մեր հարձակմանը: Վախը կոտրել է նրանց կամքն ու քաջությունը: Կտեսնես, վրացիները չեն կռվի...

Թամուրը ուշադիր նայեց կնոջը: Գիտեր, որ թագուհին իր հերթին լուրեր է հավաքում հար-ան երկուների մասին, որպեսզի կարողանա օգնել իրեն:

- Դժվար չի լինի երկիրը գրավել, ասում են վրաց թագավորը խելացի մարդ է, մի՞թե կոհմադրի: Չեմ ուզում գոհեր տալ: Կճզմեմ,- զայռացավ Թամուրը:

- Իմ տիրակալի առաջ ոչ մի թագավոր էլ ի գորու չէ կանգնել,- խոնարհվեց ՄԵԾ թագուհին:

* * *

Եկեք թողնենք Լանկ Թամուրին իր աշխարհակալ ձեռնարկների մասին զրուցելիս, մենք մի քանի օրով ետ տաև մեր պատումը...

... Վերջին պահին դվինցին ցատկեց նժույգի թամբին, տեղից պոկվեց կատաղի քառատրոփով: Ետ նայեց. իինք չաղաթայներ ծիերը չափ գցած գալիս էին կրնկակոյն: «Մինչ- Կաղզվան մնացել է երկու փարսախ: Եթե նրանց ծիերի մեջ կարաբայիր չկա, չեն հասնի իմ Նախշունին»: Խորհեց Վահեն, Խորհ ետ նայեց: Տարածությունը նրանց միջմում էր անփոփոխ, սակայն նրա փորձված աչքը ջոկեց՝ առջ-ից սլացող նժույգը կարաբայիր էր:

- Կիասնեն,- դառնացած խորհեց,- ափսոս, նետ ու աղեղը մնաց կարդասի նժույգի թամբին: Խեղճ տղա, կզարկեն չաղաթայները, շատվոր են: Գոնե Մարտիրոսի դիակը փրկենք,- նետ սուրաց ականջի տակ,- վրիպեց չաղաթայը: Անշնորհք,- մոմոացրեց քթի տակ,- ես չեի վրիպի,- աշտանակեց նժույգը, որև առանց այն էլ սլանում էր: Նախշունի ոտքերը հազիվ էին կպչում գետնին, թռչում էր թփերի վրայով, առուներն այսպես էր անցնում, չեր հասցնում տեսնել: Չուր չեր նրա համար իինզ նժույգի գին տվել, վրան էլ՝ հայրական այգիներից մեկը: Երբ նժույգ էր գնում, հայրը ասաց, գնի համար չսակարկես: Նժույգը հոգու ընկեր է: Նեղ տեղից փոկող: Յոր խոսքերը հաստատվում էին: Կարաբայիրը եր-

կու նետընկեց ետ մաց:

- Ապրե՞ս, Նախշո՞ւն, սիրելիս,- նժույգի ականջին փսփսաց Վահեն,- քեզ տեսնեմ, իմ մարտական ընկեր,- գիտեր, որ նժույգը քաղցր խոսքերից ոգ-որվում էր:

Մտրակի հարվածից վիրավորվում էր, հակառակվում:

Մինչ- Կաղզվան մնացել էր կես փարսախ, շենի հանդիպեց, կանգ չառավ՝ չաղաթայները գալիս էին կրնկակոխ: Ծինականները ետ ցատկեցին, կպան պատերին:

- Ես ովքե՞ր են,- հարցրեց մի ծերունի:

- Չե՞ս տեսնում, չաղաթայները ընկել են հայի հետ-ից: Յե՛յ, տղա՛յք, բա մեր մեջ այրմարդ չկա՞: Ախր կզարկեն մեր եղբորը,- գոռաց Ոսկան շինականը,- մեր շենը խայտառակ կանենք աշխարհով մեկ: Ախր ես ի՞նչ կյանք ե: Վանքի պատերի տակ հայ են մորթելու: Թքա՛ց ես տեսակ կյանքի վրա: Տրդա՛տ, որդի, ձիս դուրս քաշիր, նիզակս բեր,- գոռաց որդու վրա: Սա վազքով հեռացավ, տունը մի քանի քայլի վրա էր,- նիզակս չմոռանաս, լակո՞տ,- աչքի տակով տեսավ, Վարդանը, Սեթը, Վաղոն այս ու այս կողմ վազեցին,- տղա՛յք, հայե՞ր, մարդ լինենք, զարկենք չաղաթայներին, քաշվենք լեռները մեր սուրբ Մարտիրոսի պես...

Շենում խառնվեցին իրար, հավաքվեցին իրար գլխի:

- Ախր, շատվոր են շենի գլխին պատուհաս կրերենք: Լանկ թամուրը շենը կավերի, կայրի,- ասաց Ծերունը, կաղ ոտքը քարշ տալով, հեռացավ, մի քանի հոգի հետ-եցին նրան:

- Դու՝ կաղ, թամուրը՝ կաղ հարազատ եղբայրդ է, ել ի՞նչ ունես վախենալու,- թքեց Ոսկանը,- եսպես ապրելը մեռնելուց վատ է, թե չգաք, կանասց գլխաշորերը գլխներիս,- ասաց ու թռչելով որդու բերած ձիու թամբին, մտրակեց: Վերջին պահին տեսավ որդու հիացական հայացքը, ուրախացավ որդու համար, քշեց առաջ, տեսավ, որ մենակ չէր: Մի տաս հոգի գալիս են հետ-ից,- ա՛յ տղա, մենք ին բանակ ենք,- հոհոաց,- ապրե՞ք, Վարդան, Սե՛թ, Տիկո՞, ես ձեր ցավը տանեմ, թե մեռնելու ենք, մարդավարի մեռնենք, պատվով, հայավարի, - մեկեն կանգ առավ, ընկերները խռնվեցին շուրջը,- Սե՛թ, ե՛տ մնա, շենում կասես, պատրաստ լինեն լեռները քաշվելու... Վճիռը հանկարծակի չէր, շենում այդ մասին շատ են խոսել, այս դեպքը խթանեց, կայծ էր, բռնկվեց,- քաշվենք լեռները...

- Ախր, Ոսկան եղբայր, եսպես հանկարծակի, պատրաստ չենք, - Տիկոն էր:

- Ել ի՞նչ պատրաստ, անպատրաստ, ի՞նչ է, ուզում ես գան մեր կանասց ու երեխաներին գերեվարե՞ն, շենը այրե՞ն,- ձիու գլուխը պահեց:

(Կարաբայիր, միջին ասիական ազնվացեղ նժույգ)

Վարդան, քո կսիկը պառավ է, չեն տանի,- ծիծաղեց Տիկոն:

Զարմանալի բան կատարվեց, ելել են կռվի, դեռ կատակում են, մարդ չի հասկանա այս հայերին, թեր-ս այս պահին նրանց մեջ հառնել

Են արիական և ախսիք, որ չեին ընկճվում, քանզի ընդունում էին հոգու անմահությունը, ձերբագատված են մահվան վախից...

- Իմ պառավը քո քույրն է,- զայրացավ Վարդանը:

Տիկոն լրջացավ, լուրջ ու վտանգավոր գործի էին ելել:

- Ես գնացի,- ասաց Սեթը, ձիու գլուխը շեն դարձրեց,- իրավացի է Ուկանը, շենը տեղահան անենք...

Մնացածները մտրակեցին ձիերը Ուկանին հասնելու: Դուրս եկան շենից, առջ-ում Կաղզվանն էր: Տեսան, ինչպես հայրը վանք մտավ: Չաղաթայները դեմ առնելով վանքի փակ դրանը, ետ դարձան:

Ընդհարումը անխուսափելի է: Ուկանը, որ հին զինվոր էր, բոլորից շուտ զգաց այդ վտանգը:

- Տուայք, ուզեք-չուզեք, պիտի զարկվենք: Կանգ չառնեք, թե չէ՝ կորած ենք, կզարկեն, կանցնեն: Փրկությունը դիմադարձ հարվածի մեջ է,- ապա գոռաց,- Յայկա՛ ցեղ, ձեզ մատաղ, տղայք: Ես գնացի,- գոռաց ու նիզակը առաջ պարզած արագացրեց վազքը: Այնպես էր ոգ-որվել, որ կարող էր մենակ գնալ կռվի: Քին զինվոր էր, զգաց մարտի պահը, եթե դիմադարձ չզարկեին, չեին կարող պահել չաղաթայների թափը:

Սրանք հինգ հոգի էին: Չաղաթայները անպատվաբեր համարեցին խուսափել կռվից:

- Զարկ Ալլահի թշնամիներին, թող փառավորվի տիրակալի անունը,- գոռաց Կարաբայիրի հեծյալը: Նետ արձակեց Ուկանի վրա, սակայն սա անզգուշներից չէր, կրացավ, նետը սուրաց գլխավեր-ում: Յետ-յալ պահին հայերն ու չաղաթայները իրար եկան: Նետ ու աղեղ գործ դնելու հնար չկար, դա ի օգուտ հայերի էր, քանզի միայն նիզակներով էին զինված: Իսկ հայերը լավ նիզակավորներ են, աշխարհին էր հայտնի: Ուկանը ծանր վիրավորեց Կարաբայիրի հեծյալին, սա վերջին պահին պարտքի տակ չմնաց, զարկեց Ուկանի ուսին, երկրորդ անգամ զարկել չհասցրեց: Տիկոն, որ բավականին անճար էր եր-ում խաղաղ օրերին, կրակ էր կտրել, թռավ չաղաթայի մեջքին, տապալեց ձիուց, դաշույնը միեց նրա կուրծքը:

- Ես մեկը Մարտիրոսի վրեժը,- գոռաց, սրատված ընկավ չաղաթայի վրա: Չաղաթայներից մեկը հասցրեց սրատել նրան:

- Վայ, ես ձեր եկած ճամփան,- գոռաց Վաղոն,- զարկեք, ես դրանց մերը... Չթողնեք փախչեն, կոտորե՛ք,- ինչպես պարզվեց, չաղաթայները հիմար չեին, մի զինվոր էլ զոհ տալով, փախան կռվի դաշտից: Թեկարող էին դեռ կռվել, քանզի զրահված էին, վահաններ ունեին, իսկ հայերը մերկազրահ էին: Չաղաթայները փախան, նրանք տեսել էին, որ վանքից դուրս թռավ հայ հեծյալը, աճապարեց կռվի դաշտ:

Յետապնդել չաղաթայներին անհնար էր, մթնում էր: Յայերը ձիերի վրա վեցնելով ծանր վիրավոր Տիկոյին գնացին վանք:

- Անունդ ասա՛, պատիվ արա,- Ուկանը դարձավ դվինցուն, տնքաց ուսի ցավից:

- Արագացրե՞ք,- իրամայական ասաց Վահեն,- պարապ բաներից մի խոսեք: Դու արևաքամ ես լինում: Վանքում բուժ կճարվի,- նորից զայրացավ,- դուք ձեր անմիտ քայլով պատուհաս բերեցիք շենի գլխին: Ախր ինչո՞ւ հարձակվեցիք, վտանգեցիք նա- վանքը...

- Ե՛, մինչ- Ե՞րբ,- իր հերթին զայրացավ Ոսկանը,- տեսնում եմ՝ ա- զատներից ես: Քեզ ինչ, կքաշվես բերդի, մենք բաց ենք թշնամու առաջ: Եսօր ել կզարկեն, վաղն ել, ժողովուրդը վտանգված է:

Վահեն չվիրավորվեց, ոտքից գլուխ չափեց Ոսկանին, հասկացավ, նախկին զինվոր էր, այն ել՝ հեծյալ:

- Իրավացի ես, շինկան եղբայր, ազատ եմ: Տնիմի կրտսեր որդի: Դվինից եմ, մի բանում սիսալվեցիր, բերդատեր չեմ: Ես ել քեզ պես ան- պաշտպան են: Այնպես որ, իմ ցավը քոնն է, քոնը՝ իմը: Այսօր չաղաթայ- ներին պատասխան միասին ենք տալու: Յետո տեսնում եմ՝ անվախ ու քաջ մարդ ես: Եթե բաց դաշտում ի գորու եք կռվելու, լեռներում կր- վենք ու կկռվենք: Ինչպես կռվեց Մարտիրոս տանուտերը,- Վահեն կա- խեց գլուխը:

- Ինչ է, ծանո՞թ ես Մարտիրոսին,- հարցրեց Վաղոն,- ին ազգակա՞ն չես:

Վահեն բացասական շարժեց գլուխը, հոգոց հանեց:

- Մարտիրոսը սրբոց դասը ելավ, կիիշվի դարեր,- տեսնելով որ զարմացած իրեն են նայում, ավելացրեց,- չաղաթայները խաբեու- թյամբ բռնել են ու ջրահեղձ արել... Ես տեսա Մարտիրոսի դիակը ջրից հանող հոգ-որներին: Դիակը բարձեցինք ձիուն, այդ ժամանակ չաղա- թայները վրա տվեցին: Միայն ես փրկվեցի: Գնում եի վանք մարդիկ բե- րելու, դիակը գտնենք, տանենք վանք, սգո պատարագով հողին հանձ- նեինք:

Շինականներն իրար նայեցին, ապա Ոսկանին, սա մոտեցավ Վա- հեին:

- Սուրբ գործի ես ելել, եղբայր,- խոսեց Ոսկանը,- մենք քեզ կօգ- նենք:

Մեզանից երկուսն ել ետ կերթան, շենք տեղահան կանեն, կիանեն Սոկովետ, Ենտեղ ամառանցներ ունենք, վաղուց եինք վճռել, այսօր չա- ղաթայները ստիպեցին արագացնել գործը: Ոչ մի չաղաթայ սիրտ չի ա- նի Սոկովետ բարձրանալ: Նրանք սկսել են վախենալ լեռներից: Մի նոր Բարդող կսարքենք գլխներին: Մնացածներս կզանք հետդ, գնանք, գտ- նենք Մարտիրոսի դիակը:

Երբ վանք մտան, վանականները շրջապատեցին նրանց:

- Չաղաթայները հիշաչար են, նորից կգան, շենս ել կայրեն,- ասաց հոգ-որներից մեկը:

- Վանքն ել կայրեն,- նրան միացավ մի ծեր հոգ-որ,- չաղաթայները այրում են դիմադրող վանքերը...

- Մենք չենք դիմադրել,- ասաց մի երիտասարդ հոգ-որ, որի աչքերում

արդեն վախ էր բուս որել,- Տեր Աստված, խղճա, ապրեցրու մեզ:

- Մենք դուռը բացեցինք դվինցու առաջ,- դժգոհեց առաջին խոսողը: Նրա խոսքերը սթափեցրեցին մնացածներին,- խոսողը հարգանք էր վայելում հոգ-որների շրջապատում,- թող վասահայրը վճռի անելիքը:

Վահեն, որ խոսակցության ժամանակ համարյա ատելությամբ էր նայում նրաց, չդիմացավ:

- Ուղեկցեք ինձ վասահոր մոտ,- կարծ ու հրամայական ասաց նա,- Ուկա՞ն, կգաս հետս:

Վանականները դժգոհ իրար նայեցին, քանզի վանքի ներսում աշխարհականն էր հրամայում, սակայն Վահեի տեսքն առնական էր, այնքան ազդեցիկ էր, որ նրանցից մեկն առաջ ընկավ, ուղեկցեց նրան:

Վասահոր կացարանի մոտ կանգ առան

- Սրբազնը հարգալից վերաբերմունք է սիրում,- ասաց հոգ-որը:

Ներս մտան: Առաջին բանը, որ աչք էր զարկում մատյաններն էին: Ամենուր մատյաններ էին: Վանահայրը նստել էր գրակալի առաջ, գլուխը բարձրացրեց, նայեց նրան: Վահեն հասցրեց հանգստություն տեսնել վասահոր պահվածքի մեջ: Նրանք առան վասահոր աջը, սպասեցին: Նստելու տեղ չկար, վասահորից զատ երեք հոգ-որներ կային, նստել էին աթոռակներին:

- Պատմի՞ր, որդյա՞կ,- Վահեին դիմեց վասահայրը:

- Սրբազն՝ Ես Դվինից եմ, գալիս էի Կաղզվան,- դառը քմծիծաղ տվեց,- ինչ թաքցնեմ, գալիս էի Մարտիրոսին միանալու, ուշացա, հետո գետի ափին տեսա երկու հոգ-որների, որ ձեր վանքից էին: Մեկի անունը Եղիազար է, մյուսինը՝ Յակոբին: Նրանք գետից հանել էին Մարտիրոսի դիակը...

Վանահայրը այսպես տևքաց, որ Վահեն լռեց: Վանահայրը ձեռքը սեղմել էր կրծքին: Յոգ-որները ոտքի ելան, ամենքն էլ զարմացած էին:

- Շարունակիր, որդյակ, դու ականատես ես եղել մի հրեշավոր ոճ-րագործության:

- Սրբազն, մենք դիակը դրեցինք ծիու վրա, գալիս էինք Կաղզվան, սակայն ճանապարհին չաղաթայները վրա տվեցին: Ես միայն կարողացա փրկվել: Ծառաս ու հոգ-որները մնացին, հավանական է զոհվել են: Ինձ հետապնդեցին մինչ- վանքը: Սոտակա շենից տաս շինականներ հասան օգնության, սպանեցին երկու գինվոր, մնացածները փախան: Նրանք լուր կտանեն Լանկ Թամուրին...

- Շարունակիր,- մռայլվեց վասահայրը:

- Ուկանը այդ շենից է, մարդ ուղարկեց շենը տեղահան անելու՝ Սոկովետ տանելու: Չաղաթայների հարձակումը շենի վրա անխուսափելի է:

Վանահայրը հոգոց հանեց:

- Այո՛, իրավացի ես,- նայեց Ուկանին,- դու Էլ ես խելացի վարվել: Սպասեք, սակայն ինչպես էին գերել Մարտիրոսին. զգույշ, շրջահայաց

մարդ էր:

Վահեն մոտեցավ վանահորը:

- Սրբազն, նրան գերել էին խարեւությամբ: Մարտիրոսի ընտանիքը գերության մեջ է: Նա փորձել էր փրկել... Յոգ-որևերը չասացին ում միշոցով էր Մարտիրոսը պայման դրել չաղաթայների հետ... Տանտիրոջը շրահեղձ էն արել, գցել են գետը: Յետո Յակոբիոսը դիակը հանել էր գետից վանք բերելու համար:

- Որդյակ, հարկավ, ազատներից ես,- սրբազնը հարգանքով նայեց Վահեին:

- Այո՛, սրբազն, սեպուհական տոհմի կրտսեր որդի եմ: Չորական ծառայության մեջ էի օտարների մոտ: Արդ, կցանկանայի ազգիս փրկության համար սուր մերկացնել:

- Գովելի է ցանկությունդ, աստվածահաճ է վճիռդ: Եթե ամեն հայ այդպես խորհեր, չենք ստորանա թուրքմաների առաջ, այդ բայազետների, մնացած սուլթան ու սուլթանիկների առաջ: Ափսոս, հազար ափսոս, ոչ ամենքն են հասու, որ ազգի գլխին արհավիրք է կախվել: Սակայն մենք ծգձգում ենք ձեր գործը,- դարձավ տեղապահին,- Յայր Աբրոսիմ, մեր մարդկանցից դիր Վահեի հետ, թող գնան մեր սուրբ եղբոր դիակը գտնելու:

- Ինձ հետ յոթ մարդ կա,- խոսեց Վահեն,- շինականներ են, որ արդեն կրվել են չաղաթայների դեմ: Ոսկանն է նրանց պետը:

- Ոսկանին գիտեմ,- ժպտաց վանահայրը,- մի փոքր չարալեզու է, սակայն օրինապահ քրիստոնյա է, - նայեց Ոսկանին,- սուտն ու իրականը արդ սրով են իրարից ջոկում: Ժամ է, որ ժողովուրդը ելնի կրվի: Մարտիրոսի կյանքը դրա վկայությունն է: Կսում են երկու գունդ են ջարդել քարերով,- խաչակնքեց դեմքը,- սուրբ է այն պատերազմը, որ հանուն հավատքի է ու ազգի փրկության համար: Գնացեք, որդի՛ք, թող Կստված ուղեցույց լինի ձեզ: Սպասում եմ հուսադրող լուրերի:

Ոսկանն ու հոգ-որևերը հետ-եցին Վահեին: Զահերի լուսերը նրանցից առաջ ընկած, հալածեցին խավարը: Արաքսից պաղ քամի էր փչում, կպրաջահերը ուրախ բոցկլտացին: Ոսկանը, որպես տեղացի, առաջարկեց կարճել ճամփան, առաջ ընկավ, արագ երթով խումբը տարավ Արաքսի ափ:

Գետը փայլում էր կուսնի թույլ լուսնի տակ: Քամին շշուկներ էր բերում շամբուտից, խորհրդավորվում էր շրջապատը:

- Այս շամբուտում վարագներ կան,- ասաց Ոսկանը,- Ե՛, ամեն բան խառնվեց, ել ի՞նչ որս ու վարագ մենք ենք որս դարձել...

- Սպասե՛ք,- ասաց Վահեն, կանգնեցրեց նժույգը, ցած թռակ թամբից,- ինձ ջահ տվեք, խոտերը տրորված են, սմբակների հետքերը կան,- չոքեց գետնին,- սա իմ Նախշունի հետքերն են, պայտերից եմ ճանաչում, մի մեխով պակաս են մնացածներից,- նայեց ցեխի մեջ, պարզ եր-ում էին հետքերը,- սրանք Վարդանի ձիու հետքերն են, շատ խորն

Են, ծանր մարդ էր Մարտիրոսը: Սա չաղաթայների ծիերի հետքերն են, մեխերը մերոնցից պակաս են...

- Հետքերը գետ են տանում,- ասաց Ոսկանը:

- Դու որսո՞րդ ես,- հարցրեց Վահեն:

Ոսկանը չպատասխանեց, կռացած ինչ-որ բան էր շոշափում, դեմքը համարյա կպցրել էր խոտերին:

- Արյուն է, ելի, արյուն է,- ջահը մոտեցրեց խոտերին, արյունը անբնական վառ կարմիր փայլեց խոտերի վրա:

- Բոլորին էլ սպանել են: Վարդանը լավ սրամարտիկ էր, այ, տեսեք, եստեղ Վարդանի ծին պտտվել է տեղում: Տղան կրվել է մինչ- վերջ...

- Իսձ ջա՞հ տվեք,- համարյա գոռաց Ոսկանը, որ չոքել էր գետնին,- Եստեղ արյունը շատ է, մարմինը քարշ են տվել, գցել են գետը...

- Սա ի՞նչ է,- ասաց հոգ-որներից մեկը, գետնից ինչ-որ բան վերցրեց, ործկաց, ցած գցեց: Վահեն կռացավ, վերցրեց հոգ-որի գցածը: Դրանք երեք մատներ էին, չգիտես ինչպես՝ դեռ իրար կպած:

- Կտոր-կտոր են արել, գցել են գետը,- տևքաց Վահեն:

Ներկաները սոսկացին: Կատարվել էր ոճրագործություն: Չաղաթայները հետքերը թաքցնելու համար... իսկ կա՞զ դրանց թաքցնելու անհրաժեշտությունը, չե՞ն որ նրանք աշխարհ են տիրում, արյունն ու մահը ուղեկցում են նրանց:

- Դիակի կտորները գետը տարել է, այլ-ս ի՞նչ փնտրել,- Վահեին միացավ Ոսկանը: Բորենի են Տեր Աստված, մի՞թե չես տեսնում,- մռնչաց նա,- ամենքն էլ լքել են մեզ՝ իշխանները, եկեղեցին, Աստված...

Հոգ-որները չարձագանքեցին, կարկամել էին:

- Փնտրելս անօգուտ է,- հոգնած ասաց Վահեն,- վանք գնանք:

Ետ դարձան անտրամադիր, ասես նրանցից յուրաքանչյուրը հարազատի դիակն էր կորցրել, արդ, անհույս, դառնացած աշխարհի դեմ, գնում էին անկամ ու մռայլ: Դյուցազնի դիակը կորցրած, ինչպես սեփական ապագայի հույսը, գնացին Կաղզվան, գնացին ինչ-որ բանում մեղավոր, սակայն ինչո՞ւմ...

Գիզակն ժամն էր, հասան վանք: Դռներն անմիջապես բացեցին, վանահայրը սպասում էր նրանց: Վանահայրը տեսան խաչելության առաջ աղոթելիս: Լուր կանգնեցին նրա դիմաց, կողք-կողքի: Վանահայրը նայեց, ինաչ հանեց դեմքին, ելավ, նայեց հարցական:

- Թեր-ս տեղը չգտաք,- հույսով ու անհույս հարցրեց,- առավոտյան լույսով մարդիկ կուղարկենք...

- Դիակները կտոր-կտոր են արել, գցել են գետը: Գետը տարել է Մարտիրոսի նշխարները: Յայ ժողովուրդը կորցրեց իր դյուցազունին,- Վահեն մոտեցավ վանահայրը,- սրբազն, հարկ է սգո պատարագ մատուցել, Մարտիրոսը սրբերի դասը ելավ...

- Այո՞, այո՞,- հոգոց հանեց վանահայրը,- իրավացի ես,- նայեց տեղապահին, ծերունին հոգնածությունից օրորվում էր,- առավոտյան լուր

ուղարկեք շեները, գաև սգո պատարագի: Յարգենք, ազգովի հարգենք մեր նահատակ դյուցազունին...

- Պատարագի պահին կոչ կոչենք ժողովրդին, կոչենք սրբազան պատերազմի,- մռմռացրեց Վահեն...

* * *

Բջնին դղոդում էր հարձակվողների աղաղակներից, իր մեջ կուտակված հուսահատ կատաղությունից:

Լանկ Թամուրը Վրաստան գնալու ճանապարհին դեմ էր առել Բջնին:

Չաղաթայները կատաղի գրոհում եին Բջնիի անառիկ պարիսաները: Բերդը հյուսիսից ու ար-մուտքից պաշտպանված էր հենասյուն ունեցող պարսպով, հարավից ու ար-ելքից՝ բարձրաբերձ ժայռերով:

- Բջնին Յայաստանի ամենանշանավոր բերդերից է,- խոսեց Զահիրը,- այստեղ է նս տում Յայաստան աշխարհի Այրարատ գավրի արքեպիսկոպոսը: Կաթողիկոսից հետո ամենաբարձր հոգ-որ սանը նա է կրում՝ Բջնիի Վանական արքիեպիսկոպոսը: Մեծ ազդեցություն ունի Երկրում,- լոեց, ակամա պատկառեց հոգ-որից, որ չեր լքել իր հորը, մնացել էր բերդում, դատապարտված բերդում,- դժվար կիմնի,- վերջին բառերը ասաց հարգալից տոնը թաքցնելու համար:

- Դյուրինը կումիս խմելն է,- ասաց Թամուրը, նայեց մերձավորներին, խորիեց, ում ուղարկի բերդը գրավելու, թեաետ կանխավ վճռել էր թոռանը՝ Խալիլին ուղարկել: Յիշեց, որ Ալանջիկի տակ տրորել էին թռուան քիթը: Նա մեծ հույսեր էր կապում Խալիլի հետ, քանզի շնորհունակ գորավար էր: Պապը պիտի հավասավորի թոռանը, վերականգնելու գորական պատիվը:

- Խալիլ, վերցրու Երկու թուման (թումանում տաս հազար զինվոր կա) գրոհիր: Թող ար-ելյան կողմից լեռնագնացները գրոհեն: Նախ ար-ը կընկնի հայերի աչքերի մեջ, չեն կարող դիպուկ նետահարել, Երկորդը՝ այստեղից Նրանք գրոհ չեն սպասում: Գևա՛, տեսնենք շնորհըդ,- չկարողացավ զսպել սրտում կուտակվածը,- քեզ իմացում, Խալիլ գորավար, սա Ալանջիկ չէ, սա Բջնին է: Թող Ալլահը հաղթանակ պարգ-ի քեզ:

«Ամեն բան Ալլահի վրա ենք դնում, նա- արդարացնում ենք մեր անշհորքությունը, Երբ տապալում ենք գործերը, իսկ Երբ հաջողվում է, մեզ ենք վերցնում հաղթանակի պտուղները, այլ-ս չենք հիշում Ալլահին: Նորություն չէ այս ամենը,- մտքում ծիծաղեց,- ինչ լավ է, որ վեր-ում Ալլահ կա, կարող ենք մեղքը բարոել նրա վրա...»:

Խալիլը խոնարիվեց պապին, սիրով նայեց: Նա անհաղորդ չեր պապի խոհերին: Յասկացավ, որ պապը ինարավորություն է տալիս իրեն վերականգնելու գորավական պատիվը: Պապի կկոցված աչքերում նա խրախուսանք տեսավ, նա- սատարելու պատրաստակամություն:

Գևաց դեպի նժույգը: Կենդանին զիլ վրևշաց: «Կարաբայիրի վրևշոցը հազար նժույգի միջից կշռկեմ,- այս էլ քանի անգամ խորհեց,- լավ են մեր նժույգները: Յայերն էլ լավ նժույգներ ունեն: Ասում են Ղարաբաղում մարտական նժույգներն են բազմացնում: Տեսնենք, տեսնենք,- նայեց Զահիրին, գաղտնապահի հպարտ պահվածքը, զայրացրեց նրան,- չէ, զահիրը գլխի չէ, որ մենք գիտենք նրա դավադրության մասին: Ասել է թե վախը կապ է դրել Յաֆիզի ու Թահիրի բերանին»:

- Տիրակալ, Ղարաբաղը, որ հայերը կոչում են Արցախ, Յայոց արքաների ձմեռոցն է: Խոտառատ վայրեր են, կարելի է ձմեռել այնտեղ: Մթերքներն ու խոտը կբավականացնեն: Քզոր ամրոցներ կան, սակայն չեն կարող դիմադրել տիրակալի գորքերին:

Զահիրը ինքն իրենից զգվեց, սակայն ճիգ գործեց, զսպեց իրեն: Հարկավոր էր վերականգնել տիրակալի վստահությունը: Նա լավ էր հիշում Շահ Մելիքի խոսքերը տիրակալի վերաբերմունքի փոփոխության մասին: Ա՛խ, հա՛յր, ինչո՞ւ չասացիր ծննդյանս գաղտնիքը: Արդ, կլինեի հայրենակիցներիս հետ, չեր ստորանա սատանայի առաջ...

Այդ պահին էլ Թամուրն էր խորհում Զահիրի մասին, գտնում էր, որ վաղ է Զահիրին պատժելը, քանզի խելացի է, նրա միջոցով կարող է ճնշել դիմադրությունը Յայաստան աշխարհում: Հասկացավ, որ սա վերջին արշավը չէր, դեռ չեր չափվել Բայազետի հետ, – այդ պատերազմը կլինի Յայաստան աշխարհում: Յայաստան վերադառնալը անխուսակելի էր:

Նայեց բերդին, տեսավ, թե ինչպես թումանները մոտեցան պարիսպներին, ոչ այնքան, որ ընկնեն նետահարության տակ, կանգ առան:

- Շահ Մելիք, հրաման տուր բանակի բոլոր լեռնագնացներին դնել խալիկ հրամանի տակ: Չեմ ուզում, որ խալիքը մեծ զոհեր տա: Առանց այն էլ թոռանս քիթը մի անգամ տրորել են: Բավ է, մեր թոռը պիտի հաղթական պատերազմներ վարի: Արա՛գ, արա՛գ,- հայացքը տեղափոխեց պարիսպների վրա,- միայն հաղթական պատերազմներ:

Շահ Մելիքը թիկնապահներին ուղարկեց հրամանը կատարելու:

Բանակից բազմաթիվ լեռնագնաց զինվորներ՝ ջոկատ կազմած մտան խալիկ հրամանի տակ: Լեռնագնացների հրամանատարն էր Մամեդ անունով մի նիհար զորական: Նրան նայելիս մարդու թվում էր, թե զինվորի վրա միս ու կաշի չկա, միայն մկաններ են, գալարուն, իրար փաթաթված մկաններ: Մամեդը շատ ուժեղ զորական էր, միայնակ կարող էր կռվել չորս-հինգ զինվորի դեմ: Նա էլ լեռնագնացների ոգին, այստեղ, ուր մողեսը չեր կարող բարձրանալ, Մամեդը մագլցում էր, նրա համար արգելք չկար:

- Տե՛ր իմ, հրամայի՛ր,- խոնարհվեց Մամեդը,- տիրակալը իմ հրամանի տակ է դրել բանակի բոլոր լեռնագնացներին: Որտեղի՞ց ես հրամայում բերդ մտնեմ՝ պարիսպների վրայո՞վ, թե՞ ժայռերի: Մեզ համար արգելք չկա, հրամայի՛ր:

Խալիլը շնորհակալ հայացք նետեց պապի յուրտի կողմը, որտեղ նստած էր պապը՝ աշխարհի տիրակալը, թագավորների թագավորը, Ալլահի փոխանորդը՝ մի խոսքով, Խալիլի Մեծ Պապը:

- Գրոհի՛ր ար-Ելյան կողմից: Այստեղ ժայռոտ է, հայերն այստեղ զինվոր քիչ կունենան: Կուլմ են, թե քո զինվորները կատվի պես են մագլցում: Գրոհիր, ինձանից մեծ պարգ- կստանաս: Ես ավարի հետ գործ չունեմ, դու ինձանից պարգ- կստանաս: Գևա՛, Ալլահը քեզ օգնական:

Մամեդը ձեռքը դրեց կրծքին, ապա շրթունքներին, հետո ճակատին...

Վազբով հեռացավ իր զինվորների մոտ: Սրանք տեսքով ել էին տարբերվում մնացած զինվորներից: Չինված էին կեռերով, պարաներով, հագել էին թաղիքի մույկեր, կարճ սրեր էին կրում, նետելու դաշույններ: Զլապինդ մարդիկ էին, ինձահեղ քաջության զինվորներ:

Տիրակալը ամենավտանգավոր տեղերը նրանց էր ուղարկում: Ամեն անգամ պատվով էին դուրս գալիս մարտից, ինչ վերաբերում է նրանց պետին, ապա նրա մասին առասպելներ էին պատմում:

Միևնույն լեռնագնացները պատրաստվում էին գրոհի, բերդաքաղաքում Վահան իշխանը սեպուհներին հրավիրել էր արքեպիսկոպոս Վանականի մոտ: Սա ծերության շեմին հասած, սրածայր մորուքով, բարձրահասակ, նիհար մարդ էր: Առաջին հայացքից ոչ մի արտակարգ բան չկար արքեպիսկոպոսի մոջ, սակայն դա միայն թվում էր, բավական էր նայել նրա աչքերին – մարդ կփոխեր իր կարծիքը: Հոգ-որի հայացքը հրացայտ էր, կառչուն, իմաստալից: Վանականի հայացքը մեկ հրամայում էր, մեկ՝ շոյում աստվածային բարությամբ, մեկ էլ տեսար՝ կայծակեց:

- Վահան իշխան, չեմ իշխում, դուք գորական եք, սակայն Աստծո խոնարի ծառան էլ որոշ բաներ գիտե ռազմի գործից: Գիտեմ Յայոց պատմությունը, նա- այս բերդի: Մենք՝ հոգ-որներս, արհավիրքի պահին եղել ենք ու կլինենք աշխարհիկ տերերի կողքին: Այսպես որ, մեր գիտելիքները ռազմի գործում ոչ զարմանալի են, – ոչ անվայել հոգ-որի համար: Չանգի շրջապատված ենք թշնամիներով, հույսներս պիտի դնենք Աստծո ու մեզ վրա: Լանկ Թամուրին ավելի վայրագ է, քան Զինգիզ Խանը: Ես սոսկում եմ, երբ խորհում եմ ապագայի մասին... Արդ, որդյակ, ի՞նչ վիճակում է բերդի պաշտպանությունը: Ի՞նչ ես ակնկալում Աստծո ծառաներից: Ստույգ է, ես հոգ-որ եմ, սակայն սուր կվերցնեմ հոտիս պաշտպանության համար: Թող Աստված զորություն տա, գալիքին արժանանաք մաքուր խղճով, վկայելու Աստծո ընտրյալի իրավունքը:

Վահան իշխանը հետաքրքրված նայեց արքեպիսկոպոսին, հավաքածներին: Յանկարծ այս պահին, այստեղ կանգնած, հասկացավ, թե որքան անհույս է Լանկ Թամուրի հորդաների դեմ կռվելը, կռվելու այս եղանակը, երբ կռվում են անշատ-անշատ, չկա մեկ գերազույն ուժ,

որը համախմբի հայերին ըստդեմ այս արհավիրքի...

- Զինվորների թիվը սակավ է, թեպետ հար-ան շեների բնակիչներին կարգել եմ պարհսպների վրա, զինվորների կողքին:

- Ի՞նչ է արվում բերդի հարավային ու ար-ելյան կողմերում, թեր-ս խորհում եք, որ ժայռերը արգելք կդառնան չաղաթայների համար,- քմ-ծիծաղ տվեց,- թյուր կարծիք: Լանկ Թամուրը աշխարհն է տիրում, բեր-դառումների մեծ փորձ ունի, նա- մեծ թվով լեռնագնաց զինվորներ: Նրանք կգրոհեն անառիկ թվացող կողմերից: Յամոզված եմ:

Կահան իշխանը վիրավորվեց: Յոգ-որը փորձում էր ռազմի գործ սովորեցնել նրան: Ի՞նչ է խառնվում զորական գործերին, ինքը նրան խորհուրդ չի տալիս ինչպես ծնունդ ու կսունք կատարել, ինչո՞ւ է քիթը խոթում զորական գործերի մեջ: Մի՞թե դեռ չեն կշտացել հոգ-որ-աշխարհիկ կովշտոցներից, որ ամեն անգամ ի օգուտ թշնամիների է լուծ-վում: Ամեն մարդ իր գործը պիտի անի, թող քիթը չխորթի զորական գործերի մեջ, որից գլուխ չի հանում, սակայն վանականի խոսքերում նա-ճմարտություն կա:

- Սրբազան, այս պահին չաղաթայները գորիի են պատրաստվում միայն պարհսպների հատվածում, որտեղ մենք աշտարակներ ունենք, ժայռանիստ պարհսպների կողմերում դետքեր ենք կարգել, օժանդակ շոկատներ եմ կարգել: Ընդունում եմ քո անհանգստությունը,- քմծիծաղ տվեց,- թե- հավատում եմ, որ...

- Որոյակ, հավատը Աստծո կողմից է ներշնչվում, ցավոքքիչ չեն դեպքերը, երբ մարդ իր անհեռատեսության, նա- մեծամտության պատճառով հաշվի չի առնում որոշ հանգամանքներ, որոնք պատճառ են դառնում պարտության: Ռազմի գործում դա հղի է վտանգներով,- տեսավ ինչպես մռայլվեց իշխանը, իսկ սեպուհներից մեկը փորձեց խոսել, սակայն սաստվեց իշխանի կողմից:

- Կա՛րգ չի վիճել հոգ-որ առաջնորդի հետ:

- Գևացե՛ք, որդիք, ես կգամ կրվողներին օգնելու - ոչ միայն աղոթքով,- ասաց արքեպիսկոպոսը, խաչակնքեց զորականներին:

Նրա ծայնում անթաքույց անհանգստություն կար, որի պատճառը իշխանի հանգիստ պահվածքն էր, զայրացավ, խոսեց խիստ տոնով:

Աշխարհում չկան անառիկ բերդեր: Դա բարբաջանք է, խորհում եմ, որ հասու եք այս ճշմարտությանը: Մի թերագնահատեք թշնամուն, ձեզ անից անփորձ մի կարծեք, նա- անիմա ռազմի գործում: Թամուրի ուժերն այսքան են, որ կարող է բոլոր կողմերից գրոհել: Ցավոք, մի Բջնի չի կարող կանգնեցնել Լանկ Թամուրին, չի կանգնեցնի Նրա հաղթական արշավանքը,- տեսավ զորականների դժգոհ հայացքները,- քավ լիցի, Բջնին անառիկ եք համարում: Թվեմ պատմության մի քանի օրինակ, թեր-ս չգիտեք, որ Բջնին գրավել են ու այրել թուրքերը, արաբները Մելիք Աշրաֆի գլխավորությամբ: Նրանք աստծո ընտրյալներն չեին, սակայն անցան պարհսպների վրայով, գրավեցին բերդը, այրեցին այն:

Չորական որոիք, զգոն ու աչալուրջ եղեք: Գևացեք, Աստված ձեզ հետ:

Վահան իշխանն առավ արքեպիսկոպոսի աջն ու դուրս գնաց:

- Սրբազն, կասկած ունե՞ս զորականի հմտությանը,- հարցող տեղապահը,- ասա,, կիսվիր մեզ հետ, իմասնաք, օգնենք կարելիի չափով,- Դանիել վարդապետը, որ արքեպիսկոպոսի մտերիմն էր ու կարող էր միջամտել բոլոր պարագաներում, դրանից զատ, վարդապետի խոսքերում ամենքի մտահոգությունը կար: Վահանը նայեց իր մտերիմներին, նա- հավաքածներին: Նրա մեջ գլուխ բարձրացրեց տարիների ընթացքում կուտակված դառնությունը շատ ու շատ հոգ-որևերի նկատմամբ, որոնք ի զորու չեին հասկանալու երկրի շահերը, ի զորու չեին, որ Աստծոն ծառաները հարկ է բարձր լինեն ամեն մանրութից, անձնականից, աշխարհիկ ու հոգ-որ տերերի վեճերից, զի վերջին հաշվով տուժում էր երկիրը...

- Այո՛, հոգ-որ հայրեր, կասկած ունեմ, սակայն ոչ նվիրվածությանը, իսկ իշխանը... ձեռքը թափ տվեց, զայրացավ, ձեռքերի ափով զարկեց գահավորակի արմնկակալներին,- չի խորհում, որ չաղաթայները վրա կտան ամեն կողմից, քանզի Լանկ Թամուրին սատարում են գեհենի բոլոր ուժերը:

- Իսկ ճակատքը, այստեղ էլ են զորքեր կուտակվում:

- Դու, Յայր Աղբիանոս, հմուտ ես կրոնի գործերում, քո աղոթքներն առ Աստված իմաստուն են, նա- ուսանելի, սակայն անիմա ես ռազմի գործերում,- ծերունին չվիրավորվեց,- չաղաթայները մեր ուշադրությունը շեղելու համար թեր-ս հարձակում խաղան ճակատքից: Մենք դյուրին կերպով ետ կմղենք նրանց գրոհները, քանզի պարհսպները այդ հատվածում շատ բարձր են, միով բանիկ, այս հատվածում հարձակումը կլինի խարուսիկ, իսկ բերդ կմտնեն մեկ այլ տեղից, մեկ այլ հնարքով: Թամուրը բերդառումների մեծ փորձ ունի, միջոց ու հնար կգտնեն... Այս պարագան էլ չմոռանաք, եթե Թամուրը բերդառումը հանձնեց թոռներից մեկն ու մեկին, ինչպես ականջալուր եմ, ամեն բանում կսատարի նրան: Եվ թող ռազմի գործի իմ քաշատեղյակությունը ձեզ չզարմացնի, միևն- Աստծոն ծառա դառնալս զորական ծառայության մեջ եմ եղել: Սուր եմ կրել - ոչ առանց հաջողության ու փառքի,- ձեռքը թափ տվեց,- զնացինք եկեղեցի, աղոթենք մարտից առաջ, մաքրենք հոգիներս ու պատրաստ լինենք մաքուր հոգով նահատակվելու: Թող մեր աղոթքները հասնեն Ամենակալին ու փրկություն բերեն Ազգիս Յայկազյան:

Յոգ-որևերը Վանկան արքեպիսկոպոսի գլխավորությամբ շարժվեցին եկեղեցի: Նրանց հետ-եցին քաղաքացիները, կանայք, երեխաները, ծերերը: Նրանց հետ էր Վահան իշխանի դուստրը՝ Անահիտը: Թափորի մեջ չկար մեկը, որ ետ չնայեր: Պարհսպների կողմից աղաղակներ էին լսվում:

Միևն հոգ-որևերը տեղավորվում էին սուրբ սեղանի առաջ, վանա-

կանը մտավ հարակից սեւյակ, այստեղից դուրս եկավ շքեղորեն զարդարված, բարձրացավ սուրբ սեղան:

- Տե՛ր Աստված, ամենակալ, բարեգութ Աստված, ապրեցրու ցեղս Յայկազյան: Ուժ տուր վանելու չաղաթայներին: Մենք հուր հավիտյան քոնն ենք, պաշտում ենք Ձեզ, Որդուն ու Անմահ Յոգուն: Ձավ լիցի մեզ, թե անցավոր կյանքը փոխանակենք հավիտենականության հետ, որ անանց է, քավ լիցի մեզ, թե մոռանանք քեզ: Մի՛ լքիր մեզ այս արհավիրքի պահին: Մենք կանք, ապրում ենք քո շնորհիվ: Չար աչքով չենք նայում հար-անսերին: Դու ես վկա մեր արք ու բարքին, արդ, պիոծ Թամունի զորքերը կոտորում են քրիստոնյաներին, որոնց արարել ես ապրելու համար: Ուժ տուր վանելու,- ձեռքերը երկինք կարկառեց, Փրկյա՛ տեր, Յանուն Յոր, Որդվո – Յոգույն Սրբո:

- Ամե՞ն, - ճայնեցին ներկաները, խաչակնքեցին:

Արքեպիսկոպոսը տեսավ եկեղեցի մտնող Վահան իշխանին, դիմեց Նրան:

- Վահան իշխան, մենք ամենքս ել քո գինվորներն ենք, հրամայի՛ր, իշխան:

- Տյարք, - դուք հոգ-որ հայրեր, չաղաթայներն անհաշիվ-անհամար են:

Անհնար է պահել ճնշումը, գինվորները մահացու հոգնել են: Սակայն չաղաթայները գալիս են հազար-հազարներով: Յարավային ու ար-մտյան կողմերից մագլցում են լեռնագնաց գինվորները: Ուժերը չեն բավարարում Նրանց ետ մղելու...

- Մենք գալիս ենք սատարելու գինվորներին,- ասաց արքեպիսկոպոսը, մտավ հարակից սեւյակ, այստեղից դուրս եկավ, պերճաշուք զգեստների վրայից ծանր սուր քարշ արած:

- Առա՛ջ, հոգ-որ հայրեր, լինենք մեր հոտի հետ, ինչպես Տեր Աստված մեզ հետ,- առաջ պարզեց պանակեն,- գևանք կատարելու մեր պարտքը:

Վահան իշխանը ետ ընկավ, մոտեցավ դստերը:

- Անահի՛տ, դուստր իմ, ժամ է բաժանման: Բերդը պահել չենք կարող, գաղտնութիները բռնել են: Դու պարանով կիշնես հյուսիսային պարսպից: Վաղինակն ու Արփինեն կօգնեն քեզ: Կվասաս Տայք, մորդ ու եղբորդ մոտ: Վաղինակը կլինի քեզ հետ: Գևա՛, Աստված քեզ հետ:

- Յա՛յր, ես կամենում եմ լինել քեզ հետ, չեմ լքի քեզ: Եթե անհույս է բերդի պաշտպանությունը, ինչո՞ւ զոհել մարդկանց: Մի՞թե սրբազնը հասու չէ այս ամենին:

- Բավական է, մի ճգճգիր: Գևա հանուն մորդ ու եղբորդ: Զինվորներն ինձ են սպասում: Գրկի՛ր ինձ ու բաժանվենք:

- Յա՛յր, հա՛յր, տեր Աստված մի՞թե չես տեսնում տառապանքները մեր, մի՞թե այդչափ մեծ է մեր մեղքը...

- Գևաս բարյավ, դուստր իմ,- ասաց Վահանը, համբուրեց Անահի-

տին,- գրկիր մորդ ու եղբորդ, ասա, կռվելու եմ նրանց համար...

Անահիտը զգաց, որ հորը տեսնում է վերջին անգամ: Նայեց հոր աչքերին, նրանցում բերդաքաղաքի անհույս ճակատագիրն է, ավա՞ն...

- Օրիո՞րդ, աճապարե՞նք,- մոտեցավ հսկայատիա Վաղինակը,- Եթե չաղաթայները գտան արահետը, կորած ենք,- մոտեցավ նա- Վրփենին: Անահիտը մռայլ ու անկամ գնաց նրանց հետ դեպի ժայռերը, այստեղ, ինչպես ասաց Վաղինակը, մի արահետ կար, որ դեռ չեին գրավել չաղաթայները:

Այդ պահին Խալիլ սուլթանին գեկուցեցին, որ Մամեդ պետը ինդրում է սաստկացնել գրոհը, որպեսզի ար-Ելյան կողմից բերդ լցվեն լեռնագնացները: Խալիլը գիտեր, որ հայերն այսքան զինվոր չունեն ու չեն կարող պարիսպների ողջ երկարությամբ զինվորներ կարգել: Եթե մի փոքր էլ սաստկացնեն գրոհները, ապա ժայռերի մոտ եղած զինվորները կգնան օգնելու վտանգավոր հատվածներում կրվող իրենց ընկերներին:

- Թահի՞ր,- մոտ կանչեց թիկնապահին,- հրաման գորապետերին՝ սաստկացնել ճնշումը, ընծա կտամ այն զինվորին, որ բարձրանա պարսպի վրա ու այն պահի մինչ- հասնեն օգնության:

Բերդը դղոդում էր, ծուխ ու բոց էր կապել պարիսպների վրա: Բերդը տնքում էր մասգիղոնների զարկերից: Զարանետներից նետված քարերը սուլում էին վիշապների պես, սարսափով լցնում մարդկանց հոգիները: Նետերի վժվժոցները, վիրավորների տևքոցները, մեռնողների հառաջանքները, վերջին անգամ երկինք նայող ու մարող աչքերը սարսափ էին բերում...

Դղոդում էր բերդը...

- Չաղաթայները նոր գրոհի են գալիս,- ասաց Վահան իշխանը, այստեղ անվտանգ չէ, սրբազա՞ն:

- Այլ-ս ինչ սրբազան, զինվոր եմ, իշխան, եկել եմ ըմպելու ազգիս դառն ճակատագրի թասը:

- Սրբազանն էլ եկավ, տե՛ս, Յակոր: Արքեպիսկոպոսը սուր է կրում,- ոչ առանց հեգնանքի ասաց զինվոր Ծատուրը, - կարո՞ղ է կռվել, թե են-պես կախ է տվել մեզ ոգ-որելու համար:

- Մի՛ չարախոսիր,- զայրացավ ավագը,- Ծատուր, Վանո, Դավիթ, Յակոր ծախից երեք աստիճան են դրել, չաղաթայները բարձրանում են, զարկե՛ք,- գոռաց,- հարսանիք չեք եկել, շարժվե՛ք:

Ավագի հրամանը ժամանակին էր, քանզի զինվորների ուշադրությունից դուրս էր մնացել պարսպի թեք հատվածը, իսկ չաղաթայները այնպիսի հմտությամբ էին աստիճան դրել, որ զինվորները չեին նկատել: Դրանից զատ, չաղաթայները ցածից նետահարում էին:

Ավագը, իր զինվորներով, հարձակվեց չաղաթայ առաջնամարտիկների վրա: Վահան իշխանը սրտնեղությամբ նայեց հոգ-որներին, սակայն զարմացավ, երբ տեսավ արքեպիսկոպոսին:

- Տե՛ր ամենազոր, սատար արա,- ասաց Վանականն ու մերկաց- րեց սուրբ:

Առաջին ախոյանը, միշակահասակ, շեղաչք զինվոր էր, զինված էր յաթաղանով: Արագաշարժ էր, կատվի պես ցատկեր էր անում, խույս էր տալիս հայ զինվորներից, ապա շանթում էր կայծակի պես: Արդեն մի քանի զինվոր էր վիրավորել: Նրա ու արքեպիսկոպոսի սրերն իրար ե- կան: Չաղաթայը նայեց զարմացած, սակայն դա միայն մի ակնթարթ էր, երկրորդ ակնթարթին յաթաղանով զարկեց հոգ-որների ազդրին: Չուր էին շրջապատում թերագնահատում արքեպիսկոպոսին: Նա սրի մի այնպիսի հարված տվեց չաղաթային, որ սա պարսպից ցած շպրտ- վեց: Չաղաթայի աղեկտուր ճիշը ցնցեց մարդկանց, սակայն դա մի ակնթարթ էր միայն, մարդիկ սովորել էին ճիշ ու աղաղակների:

- Չարկե՛ք անօրեններին,- գոռաց ոգ-որված Վանականը, նետվեց առաջ, իսկ նոր ախոյան գտնել չհաջողվեց նրան, քանզի այդ պահին մարտ մտավ Վահան իշխանը, իսկ նրան ախոյան գտնել չաղաթայնե- րի մեջ անօգուտ էր: Իշխանը Յայց ամենահմուտ սրամարտիկներից էր: Անգամ չաղաթայները հետաքրքրված նայեցին իշխանին, որն անս- պատակ հարված չէր տալիս: Ամեն զարկ փորձված էր հարյուրավոր մարտերում: Իշխանի ծանր սուրբ իր գործն արեց, երեք չաղաթայներ սրատված, այլանդակված մարմիններով ցած ընկան պարսպից:

- Ծո՛ւր տվեք աստիճանները, սեպո՛ւ Առնակ, քեզ այստեղ եմ կար- գում, ես գնամ... - տևքաց ցավից, նետ ցցվեց ուսին, - շուն թուրքմա՞նե-, հայինեց, պոկեց նետը, - Ե՛տ դարձիր, սրբազան: Ներիր ինձ քեզ չհա- վատալու համար: Ափսո՞ս, հազար ափսոս, ուշ հասկացա ով լինելո, ափսո՞ս...

- Աստված մեզ դատավոր: Մենք դեռ շատ կրիվներ ունենք կռվելու, ավա՛ղ...

- Տեսա՞ր, փորձված կռվող է սրբազանը, - Ծատուրն էր, - ա՛յ հոգ-որ:

- Իրավունքը քոն է, զինվոր Ծատուր, եթե ամեն հայ սուր բռներ, - հո- գոց հանեց ավագը- Երկիրը լցրել են վեղարավորներով: Ո՞վ է հասարա- կիս լսողը: Երկրին կռվողներ են պետք, - զայրացավ, - ի՞նչ եք բերաններդ բացել, աստիճան դրեցին, շուր տվեք. ես դրանց մերը...

Զինվորները նետվեցին կատարելու ավագի հրամանը:

Ծատուրը հրիաց:

- Պողոս ավագ, անուշ հայինեցիր, քեզ մատաղ, մի հատ էլ ասա, - նորից հրիաց...

Զորավար Խալիլին լուր հասցրեցին, որ հայերի հոգ-որ առաջնոր- դը անձամբ է կռվում: Խալիլը հրամայեց գերել հայերի շեյխին:

Բերդի այս հատվածում կռիվը այնքան թեժացավ, որ պարզ դար- ձավ՝ այստեղ էր լուծվելու բերդի ճակատագիրը: Որքան էլ հայերը կռվեին անձնազոհաբար ու հմտությամբ, որքան էլ աստիճաններ շուր տային,

հնար չկար դեմ առնել չաղաթայներին: Չորավարը մի նետաձիգ վաշտ էլ ավելացրեց, արդ, հազար նետաձիգներ անընդհատ նետահարում էին հայերին: Նետերի պարսերից փրկություն չկար, ինար չկար մոտենալու աստիճաններին: Նետաձիգները կարողացան հայերին նետահարությամբ հեռացնել պարսպապապներից:

- Անհույս է, սրբազան, բերդը չենք կարող պահել,- ասաց Վահան իշխանը, ուսով հենվեց արքեպիսկոպոսին,- ճարակում է մեր Բջնին:

Իշխանի աչքերում ափսոսանք կար, նա- ցավ.- «Բերդը կայրեն, կավերեն, իսկ եթե հանձնե՞ին,- խորհեց նա: Մի՞թե չեինք փրկի ժողովրդին, չե՞ որ կարի կար-որ է փրկել ժողովուրդը, սակայն Բարդողի կռվից հետ հայերը չեին կարող ընդունել Թամուրի գերիշխանությունը, կռվել են ուզում հայերը, կռվելով ապրել... Նրանց մեջ հառնել էր հպարտ Յայրիների հոգին... Կռվել, ապրելով, սպրելով կռվել, ու մեր պատումը հասցնել սերունդներին...

- Կռվե՞նք, իշխան, պատվով մեռնելը հավիտենական կյանքին արժանանալու հուսկ միակ միջոցն է,- դարձավ Երիտասարդ նիզակավոր վանականին,- Յայկարա՞մ, որդի, կպահվես գաղտնարանում, երբ չաղաթայները հեռանան, լուր կտանես Յայաստան աշխարհի բոլոր գավառները: Կտանես կոչս ժողովրդին հայոց՝ Ելի՛ր ի դեմ մահմեդական սատանայի՝ Լանկ Թամուրի: Թող ելնեն ազգովի՝ մեծով, փոքրով... զգաց ինչպես ցևցվեց իշխանը, տեսավ՝ իշխանը ընկավ, ձեռքով սեղմեց փորը, մատների արանքից արյուն էր հոսում: Թիկնապահները բռնեցին թ-ատակերից, ետ քաշեցին պարսպապապներից:

Կռվողների գլուխն անցավ արքեպիսկոպոս Վանականը:

- Յայկազո՞ւն որդիք, զորանանք սուրբ հավատքով, կռվենք ի մահ՝ թող ապրի Յայրենին: Յանո՞ւն Յոր, Որդվո – Յոգվույն Սրբո, ամեն,- ծանր սուրբ վրա բերեց չաղաթայի գլխին, սա անշունչ ընկավ:

- Սրբազան,- ճշաց Յայկարամը, չհասցրեց վահանափակ անել արքեպիսկոպոսին, չաղաթայի նետը ցցվեց Վանականի կրծքին: Յոգ-որը տևքաց, ընկավ կռվողների թ-երին: Յոգ-որները կատաղի վրա տվեցին, զարկեցին մոլեգնած, չաղաթայները ետ տվեցին շարքերը: Սրանք ծնված օրից կռվի մեջ են, միտք չունեն անմիտ կռվի, նրանք չեն ուզում զոհվել, դեռ որքան բերդեր կան: Նրանք ուզում են վաղվա կռվի մեջ կռվել այսօրվա անավարտ մնացած կռիվը, աշխարհ են տիրում...

- Սրբազանին ու իշխանին ե՞տ տարեք, վիրակապե՞ք,- իրամայեց Առնակ սեպուհը,- Օ՛ֆ,- տևքաց, նիզակահար Երերաց, ընկավ պարսպից խանդակի մեջ: Ի՞նչ փուլթ, ի՞նչ ցավ, զոհվեց -ս մեկ հայ, զոհվեց հանուն հայրենյաց, հանուն այս ար-ի, որ արյուն ավերի մեջ ժպտում է, ժպտում է, երբ արյուն է հեղվում, - ավա՛ղ...

Խալիլ սուլթանին ուրախալի լուր հասավ, գերել են բերդապահ իշխանի դստերը: Ուղեկցող զինվորը զարկվել է, իշխանուին հետ է աղախինը:

- ԳԵՂԵԳԻ՞Կ Ե,- հարցրեց ուրախացած, սակայն անմիջապես Էլ մոռա-
ցավ իշխանութուն, ուշըն ու միտքը կռիվն էր: Չլսեց պատասխանը:

Մոտեցավ մեկ այլ զինվոր:

- ՏԵՇ զորավար, բերդապահ իշխանը վիրավոր Ե, հայ շեյխը
սպանված Է: Մամեդի լեռնագնացները բերդ են մտել, ուր որ Ե՝ կբացեն
դռները:

- Ապրի՛ Մամեդը: Ես նրան թանկարժեք ընծա եմ տալու, որ չմոռա-
նա այս բերդը,- նայեց հրամանատարներին, ցանկացավ այնպիսի մե-
կին ուղարկել, որ զորավիգ դառնար Մամեդին: Պապը կմոռանա Ալան-
շիկի անհաջողությունը,- Ալիմարդան, գևա՛, օգնիր Մամեդին, բավա-
կան է զոհեր տանք,- Ժպտաց իր մտերիմներին,- Ալլահը քեզ օգնական,
գեղանի իշխանութիւն կընծայեմ: Մամեդը բերդ է մտել, նրան օգնական
զորքեր են պետք:

Ալիմարդանը թեպետ փորձված զորապետ էր, սակայն ստիպված
մի քանի զինվոր զոհ տվեց, մինչ- պարիսպ բարձրացան:

- Առա՛ջ, չաղաթա՛յ քաջեր, Ալլահը մեզ օգնական,- գոռաց՝ սամար-
դանոյան սուրը ճոճելով գլխից վեր:

Ալիմարդանը բարձրացավ պարիսպի այն հատվածը, որտեղ կր-
վում էր Վահան իշխանը, արքեպիսկոպոսի հետ, ուր արդեն հասել էր
Մամեդը իր արևախում զինվորներով: Այստեղ էր վճռվում Բջնիի բախ-
տը, այստեղ էր գտնվում բերդի գլխավոր դուռը: Չաղաթայները իրենց
ու հայերի դիակների վրայով անցնելով՝ հայերին սեղմեցին Եկեղեցուն:

Անհավասար մարտում ընկան վերջին հայ զինվորները, ընկան, որ-
պեսզի փառքի պսակ դառնան անանուն Յա Զինվորի...

Վահան իշխանին ու Վանականին տարան Եկեղեցի: Այստեղ մեծ
թվով կանայք, երեխաներ, ծերեր կային:

Դուռը դիմացավ առաջին զարկին: Մամեդը խալաթով սրբեց յա-
թաղանը, Ժպտաց՝ ցույց տալով սպիտակ ատամնաշարը:

- Խալիլ սուլթանը խոսքի տեր մարդ է, ես տեսնում եմ իմ ընծան:
Մի տարի անհոգ կապրեմ ընծան վաճառելով: Խոսքը մեր մեջ մնա,
տաժանք դժվար բերդ էր այս Բջնին: Իմ մարդկանցից տասը զարկվեց:
Երեցին իշխանութու թիկնապահը զարկեց, ա՛յ, զինվոր, ա՛յ հսկա: Սո-
տեսալու հնար չկար, ստիպված դաշույն նետեցի դեմքին, մինչ- սրբեց
դեմքը, թոցրեցի գլուխը, քաջ զինվոր էր, արժանի ախոյան...

- Յա, դու եղ տեսակ բաների մեծ վարպետ ես: Դու օձի պես խորա-
մանկ ես, հովազի պես ճարպիկ...

- Դու ել պակաս չես,- փոխադարձ հաճոյախոսությամբ պատասխա-
նեց Մամեդը, երկուստեք Ժպտացին, թե- բանակում գիտեին նրանց փո-
խադարձ ատելության մասին, սակայն առերես բարեկամ էին ծ-անում:
Այդ ամենը խալիլի մոտ ժախտ էր առաջացնում, սակայն նրանց մշտապես
իրար հետ էր մարտի ուղարկում, դրանից մարտը շահում էր, իրարից ա-
ռաջ ընկնելով հրաշքներ էին գործում:

- Ասաց Եկեղեցին,- մռմռաց Ալիմարդանը,- հայերի շեյխը Ներսում է:
- Հոգ-որները փուչ մարդիկ են...
- Ավանու դեմ չելար հայերի շեյխին: Զեզ Էնպիսի դաս տար, որ մոռանայիր Սամարդանդի ճամփան:

- Սպանել են:

- Վիրավոր է, հարկ չկա սպանել, թող տիրակալը տեսնի: Նրա կամքն է, թող սպանի, եթե կիաճի:

Եկեղեցուց Եկող աղմուկը ընդհատեց նրանց գրույցը:

- Կեցցե՞ն զինվորներս, Մամեդ պետ, տե՛ս, թիկնապահ բերում է Նժույգս,- ասաց Ալիմարդանը, թռավ թամբին:

Բերդը ծնկի էր գալիս: Բերդականները վիրավոր, տանջահար, խումբ-խումբ հավաքվել էին չաղաթայների հսկողության տակ, սպասելով տիրակալի վճռին, գիտեին, իրենցից շատերին մահ էր սպասում, կանաց անպատվություն, մի մասին էլ կըշեն Սամարդանդ, Բուխարա, Կագան: Այդ քաղաքների անունները հայերը սարսափով էին տալիս, որպես դժոխքի հանգրվանների:

Յանկարծ բերդում գարկեցին թմբուկները, ոռնացին կառնայները:

- Տիրակա՞լը, Ալլահի փոխանորդը, ժողովուրդների տերը, խոնարհում ու հնագանդություն:

Թմբուկները լռեցին, վերջին անգամ ոռնացին կառնայները: Լռություն իշավ բերդի վրա:

Յանդիսավոր բերդ էր մտնում Լանկ Թամուրը: Թը՛րիսկ, թը՛րիսկ, Նժույգի հանդիսավոր քայլքի ձայնն էր, որ խախտում էր, եղծում համատարած լռությունը:

Մարդիկ, որ խլացել էին մարտի դղրոյունից, այս պահին սարսացին այդքան անսովոր լռությունից:

Լանկ Թամուրը գալիս էր շրջապատված մեծամեծներով:

Խալիլ սուլթանը ցած թռավ Նժույգից, ծնկեց պապի առաջ:

- Բջնին գրաված է, տիրակալ: Յրամայի՞ր: Ի՞նչ անենք գերյալներին,- Թամուրը, որ մռայլվել էր պարհսպների տակ ընկած ոդակների տեսքից, մի փոքր մեղմեց, թռօանը նշան արեց ոտքի ելնել:

- Շա՞տ են գերիները,- հարցրեց, նայեց խումբ-խումբ կանգնած հայերին:

- Զինվորները կոտորվել են կռվի ժամանակ, մնացածները սրանք են, երեխաներ ծերեր, կանայք, հրամայի՞ր, տիրակալ:

- Սպասի՞ր, Խալիլ, ինչո՞ւ չես գրավել Եկեղեցին: Որտե՞ղ են սրանց շեյխն ու բերդապահը: Երկիրը տիրելու համար հարկ է սպանել ժողովրդի ոգին, իսկ սրանց ոգին հոգ-որներն են: Լսողաց եմ, քաջ մարդ է շեյխը: Նա պիտի այրվի խարույկի վրա: Դա կկոտրի այս անհնագանդ ժողովրդի ոգին,- Խալիլը հասկացավ, որ պապը տեղյակ էր բերդառման մանրամասներին: Թամուրը մտրակը ուղղեց Եկեղեցուն:

- Յանուն Ալլահի, բացե՛ք դռները, առ ոտս բերեք շեյխին: Կամենում

Եմ տեսնել նրան,- զայրացած գոռաց,- շտա՞պ: Այսքան ժամանակ վատ-նել ինչ-որ քոստ բերդի վրա,- տիրակալի զայրույթը շինծու էր, դրանով նա իրեն էր զայրացնում, որպեսզի մեծամեծներից ոչ մեկը սիրտ չաներ խոսել գոհերի մասին: Շրջապատում հասկացան, կոտորած էր սպաս-վում:

Թամուրը աշ ձեռքով, որի երեք մատները չկային, քաշքում էր մորու-քը, իսկ ձախով, զգալով ցավն անգամ, զարկում էր ոտքի վերքին:

Խալիլը հասկացավ, Եկեղեցու գրավման ձգձգումը կարող է զայ-րացնել պապին:

Յրամայեց կոտրել դուռը:

Եկեղեցու դուռը դիմացավ առաջին զարկին, թե- փայտյա էր: Եր-կաթագամ էր՝ դրվագված ծաղիկներով: Կենտրոնում գեղաքանդակ մեծ խաչ կար:

- Խորտակե՛լ դուռը,- գոռաց Խալիլը, հոգում ափսոսանք զգաց հո-յակերտ խաչի, ծաղիկների համար,- Թահի՛ր, քեզ Եմ հանձնում Եկեղե-ցու գրավումը, շղթայե՛լ բոլորին:

Թահիրը, ճոճելով սուրը, Նետվեց առաջ, մի քանի քայլ էլ չէր արել, ասես պատի դեմ առավ, Ետ նայեց:

- Ի՞նչ կա,- հարցրեց Խալիլը:

- Երգո՞ւմ Են, - զարմացած, նա- վարանոտ, ասաց զորապետը:

Խալիլը տևքաց, բեղի ծայրն առավ ատամի տակ:

- Մեռնում Են Երգելով, այլ-ս ի՞նչ ընկճել: Մարմինը սպանում Ենք, հոգին ապրում է,- քիչ մնաց ձեռքով փակեր բերանը,- Աստված մի ա-ռասցե լսեր տիրակալը:

Զինվորները գերան վերցրեցին, Թահիրը բարձրացրեց սուրը:

- Մե՛կ, Երկո՞ւ, Երե՞ք, առա՞ջ,- զինվորները թափ առած՝ գերանը զարկեցին դրանը: Դուռ ծխնիները դուրս թռան, Եկեղեցում Երգը ուժգ-նացավ, -ս մեկ զարկ, դուռը խորտակվեց, խաչը փշուր-փշուր եղավ, ծաղիկները՝ ոտնատակ,- առա՞ջ,- Նորից հրամայեց Թահիրը, կանգ ա-ռավ, ապա սկսեց Ետ-Ետ քայլել:

Ներկաների առաջ մի թափոր հայտնվեց՝ ահազնացավ, առաջ Եկավ անկասելի, պատկառազդու: Երգելով՝ վառված բուրվառներով հայերը դուրս Եկան Եկեղեցուց: Առջ-ից, մեծ փայտյա խաչը բռնած, գալիս էր մի հաղթանդամ հոգ-որ: Նրա դեմքից արյուն էր հոսում, լերդանում էր կրծքին, սակայն նա գալիս էր հանդիսավոր, պատկառազդու:

Խաչակիր հոգ-որի հետ-ից գալիս էին Երկու այլ հոգ-որներ, թե-րից բռնած բերում էին արքեպիսկոպոս Վանականին: Նրա Երկար, սրածայր մորուքը ամբողջովին արյան մեջ էր: Վանականի տեսքն ազ-դեց Թահիրի վրա - ոչ միայն նրա վրա: Խալիլ սուլթանը հարգանքով նայեց թափորին: Ինչ-որ սարսացուցիչ ու վեհ բան կար այդ մարդ-կանց մեջ: Նրանք անցել էին աներ-ույթ այս սահմանը, որ կար կյանքի ու մահվան միջ-: Դա ակամա պատկառանք էր Ներշնչում: Չաղաթայ-

Ները կամաց-կամաց ետ քաշվեցին: Յայերը պատգարակի վրա պառ-կած բերում էին Վահան իշխանին: Յետ-ից գալիս էին կանայք, երեխա-ները, ծերերը: Թափորը կաշկանդում էր կամք ու միտք, չաղաթայները ճամփա տվեցին: Թափորը առաջանում էր, կրայլեին հայերը մինչ ան-մահություն, եթե դեմ չառնեին Լանկ Թամուրին:

Խալիլ սուլթանը ուշքի եկավ ոյութանքից, իրամայեց փակել ճամ-փան: Յայերը կանգ առան, իսկ երգը շարունակվում էր: Այն, արդ, մար-դակոչի էր նման: Թամուրը, գլուխը ծախ ուսին թեքած, լսում էր երգը: Ծրջապատում քարացել էին: Ծահ Մելիքը նայում էր բացբերան: Անսա-խաղեա բան էր կատարվել, անլուր հանդգնություն, կանգնել են տիրա-կալի առաջ, դրանից զատ, նա- երգել: Սպասում էին, – այդ սպասումը սարսափ էր բերում: Վերջապես երգն ավարտվեց, լռեցին հայերը:

Այնպիսի լռություն իշավ, որ պարզ դարձավ՝ լռությունը սկիզբ էր ահեղ պայթյունի...

- Վերջացրեցի՞ք,- պարսկերեն հարցրեց Թամուրը,- խոսք չկա, լավ եք երգում: Սոտ բերեք շեյխին,- իրամայեց նա:

Ծահ Մելիքը ազատ շունչ քաշեց, արդ, ամեն բան պարզ էր, չկար այն անհայտությունը, որ սարսափ էր բերում, ամեն բան պարզ էր՝ ա-րյուն էր հեղվելու, սակայն նա հոգու խորքում դեմ էր, ատում էր այդպի-սի տեսարանները, սակայն... Նրա իրամանով մի քանի զինվոր մոտե-ցան հայերին, մի կողմ հրեցին հոգ-որներին, արքեպիսկոպոսին քարշ տվեցին տիրակալի մոտ:

- Չեմ ժիստում, քաջ մարդ ես, սակայն նա- անմիտ, քանզի չես հաս-կանում, որ աշխարին է ծնկի եկել մեր առաջ: Չեր անմտության պատ-ճառով այսքան զոհեր տվեցինք: Եթե բացեիք դռները, այսքան զոհեր չեին լինի: Իշխանին էլ մոտեցրեք, մոտս բերեք,- Վահան իշխանին բարձրացրեցին պատգարակից, թ-ատակերից բռնած, մոտեցրեցին տիրակալին: Իշխանը ուսուվ հենվեց Վանականին: Երկուստեք վիրա-վոր, տանջահար, սակայն նա- հպարտ, ինչպես կարողանում են հպարտ լինել հայ և ահատակները...

Թամուրը մռայլ նայում էր նրանց, գիտեր, որ քիչ անց իրամայելու է կոտորել, իսկ ինչո՞ւ է դանդաղում, ինչո՞ւ չի իրամայում այրել, սրա-տել, գլխատել, քառատել... Տիրակալը սպասում էր իր մեջ ծնված հար-ցի պատասխանին. «Ինչո՞ւ են սրանք այսքան տոկուն, ինչո՞ւ այսքան համառ, չե՞ որ գիտեն վախճանը...»:

Այդպես էլ հարցրեց առանց նախաբանի:

- Ո՞րն է ձեր համառության պատճառը, լիահույս եմ, գիտեք ձեր վախճանը: Գիտեք նա- , որ ինազանդվողներին ներում եմ: Էլ ինչո՞ւ եք դիմադրում, խոսի՛ր, շե՛յիս, խոսի՛ր, իշխան:

Մեծամեծները ավելի մոտեցան տիրակալին: Անսախաղեա էր այս ա-մենը, տիրակալը խոսում էր գերիների հետ: Ինչո՞ւ է սրանց հարցում ա-նում, մի՞թե կա մի բան աշխարհում, որ չիմանա տիրակալը:

- Թուրքմանե թագավոր,- խոսեց Վանականը,- քեզ, տիրակալ են կոչում աշխարհի ու տիեզերքի, գոնե մեկ անգամ չե՞ս ցանկացել, որ քեզ բարերար կոչեն:

Թամուրը զարմացավ. «Ինչո՞ւ բարերար, մի՞թե վատ է տիրակալ կոչվելը, երբ ինձանից սարսափում են... ինձ սեր պետք չե՞... իսկ շեյխին հարկ է այրել, քանզի խորունկ մտքեր ունի, նա- վտանգավոր, այդ մասին խորհելն իսկ հարցականի տակ է դնում մեր մեծությունը...»: Նորից լսեց հոգ-որի ձայնը, որ մեկ մարում էր, մեկ ինչում հզոր, ահեղ:

- Քեզ իմացում, թուրքմանե թագավոր, մենք դարեր ենք տոկացել, պաշտպանել ենք մեր սուրբ հողը,- տանջալիորեն հազար, ապա ձայնը նորից հզորացավ,- դու ել անց կկենաս քո խուժադուժ հորդաներով: Մենք՝ հայերս, արիական ենք, այս արիավիրքին ել կդիմանանք... Պատմության փոշին կնստի քո այսօրական սին փառքին, - դու զուր հույսեր մի փայփայիր, դու բարի խոսքով չես հիշվի: Սարդիկ կանիծեն քեզ: Ճետնորդները մեր ու ձեր կթքեն գերեզմանիդ: Դու, թուրքմանե թագավոր, անցողական ես, կգնաս, քո կյանքը տիեզերական անհունության մեջ ակնթարթ է, մի ս- կետ, կանցնես, ինչպես մնացած ժանտ հրեշտերը, իսկ մեր ժողովուրդը կապրի իր օրրանում... Յարցնում ես՝ ինչո՞ւ ենք դիմանում, տոկում ենք, օրեն չե մեզ հանց ստրուկ ապրել, զի ազատ ենք հոգով, որպես Արիական Ազգ, դու դա չես հասկանա...

- Լոի՛ր,- որոտաց Թամուրի ձայնը,- հե՛յ, սրանց կապեք իրար, այրեք, եստեղ, աչքիս առաջ, իսկ սրանց ամենքին սրատեք, թող այրվելուց առաջ տեսնեն, ինչպես են այրում այդ «արիականներին»:

Զիշ ժամանակ պահանջվեց, որ մի հսկա փայտե խռիվի բյուր կուտակվեր: Վանականին ու իշխանին կապեցին սյունից, որ կանգնեցրեցին խարույկի կենտրոնում:

- Մոտ բերեք գերիներին,- իրամայեց Թամուրը: Նա շարունակում էր մտրակով զարկել ոտքին, ցավը նրա մեջ հուշեր էր ծնում, նա- վրեժ այն հովվի նկատմամբ, որ տարիներ առաջ զարկել էր իրեն թունավոր նետով, իսկ վրեժն առնելու է այս մարդկանցից, ի՞նչ փույթ, ով էր նրանցից նետ արձակել: Նա արյան ծարավ ունի, վրեժի ու արյան: Նա չէր կարողանում մոռանալ նա- Թակաթալայի զոհերը: Նա այդ բոլորի համար վրեժ կառնի այս մարդկանցից, վրեժը սուրբ է, Ալլահն ել խրախուսում է վրեժը:

Գերիները, տեսնելով Վանականին ու իշխանին, ողբ բարձրացրեցին:

- Վա՛յ մեզ, որ այրում են մեր հոգ-որ առաջնորդին,- ծղրտաց մի կին,- տե՛ր Աստված, չե՞ս տեսնում...

Շարունակությունը միայն ճիշ էր, զինվորներից մեկը սրով զարկեց կնոշը:

- Լի՛րբ,- հոհոաց նա, երիտասարդ լինեիր, մի քիչ խաղ կանեի հետդ, ափսո՞ս, շատ է լիսկել,- նորից հոհոաց:

- Տևաշեն քեզ հագենալ չկա: Չանիսի՞ն ես բռնաբարել, օքսուզի հովատակ...

Ընկերները ծիծաղեցին:

- Ամեն բան Ալլահի կամքով է, նա- այս...,- զիսվորը անվայել շարժում արեց, նորից արժանացավ ընկերների խրախուսանքին, ծիծաղեցին:

- Չարկե՛ք,- զայրացավ հրամանատարներից մեկը:

- Տիկին Սաթենիկ, իմ խեղճ տիրուհի,- ճչաց տիկնոց նաժիշտը, մի գեղեցիկ առջիկ:

ՉԵ, սրան չզարկեցին: Ալին ճանկեց աղջկա ուսը, հիացավ աղջկանով, շրթունքները թքախառը, վավաշոտ խցկեց աղջկա կուսական շրթունքների մեջ, կրծտացրեց ատամները: Աղջիկը թքեց զիսվորի դեմքին:

- Կեղտոտ թուրքմանե,- խոսքը կիստա մնաց: Ալիի ընկերներից մեկը դաշույնով զարկեց աղջկան: Աղջիկը ճչաց:

- Յայե՛ր, ինչո՞ւ ենք ոչխարի պես սպասում, որ մեզ մորթեն: Չարկե՛ք, մարդավարի մեռնենք- գոռաց մի ծերունի, հագուստի տակից դուրս քաշեց դաշույնը, սակայն զարկեցին գլխին: Ծերունին ընկավ ծնկներին: Ինչպես եր-ում էր զիսվորը զարկել էր սրի տափակ կողմով, ծերունին միայն շշմել էր: Անասելի աղմուկ բարձրացավ: Տիրակալը, որին զարմացնելը թվում էր անհնար, զարմացավ:

Յայերի համար հերոսացման պահ էր, նրանց մեջ հառնել էին հպարտ նախնիք՝ Յայարիները: Իրարից առաջ էին ընկնում, փրկում էին իրար առաջին զարկից, ապա ընկնում էին սրատված, նիզակահար, դաշունահար: Դեմքերին ուրախություն կար, աստվածային լույս, որ առաջացել էր մերձավորին փրկելու, երանություն նա-: Յայերը զարկում էին անգամ մերկ ձեռքերով, իրար փրկում էին միայն առաջին զարկից, քանզի գործ ունեին փորձված մարդասպանների հետ: Անսախադեպ էր այս ամենը, չտեսնված, չլսված թամուրի ու նրա մերձավորների համար... Ի՞նչ մարդիկ են սրանք, այս հայերը, մի՞թե արժե ուրիշին փրկելու համար սեփական կյանքը զոհել - մեռնել գոհունակ դեմքով: Անմեկնելի էր մեռնող հայերի դեմքի ժպիտը, որ նա- արհամարհական էր, այս անգամ ահ էր առաջացնում չաղաթայների մոտ, անգամ մահը չէր կարող եղծել այդ ժպիտը: Ժպտում էին կովող, մեռնող հայերը... Չարմանալին այն էր, որ պակասում էին տիրակալի զիսվորները: Երբ դա հասկացավ տիրակալը, կատաղեց.

- Կոտորե՛ք,- գոռաց իրենից ելած,- չե՞ք տեսնում՝ ծաղրում են մեզ...

...Օ՛, Աստվածներ սուս ու իրական, մի՞թե չեք տեսնում ձեր արարած մարդը զազանից էլ զազան է, չե՞ որ ի լուր տիեզերքի հայտնում եք, որ ձեր տեսքով եք արարել մարդ եակին...

Աղմուկը սաստկացավ, զիսվորները կատաղեցին, սկսեցին կոտորել անխնա, արյուն ցայտեց դեմքերին: Կտրատված մարմիններից ա-

ոյունը շատրվանում էր, ցողում գիևորսերի դեմքերը, արյունը ներկեց գետինը, հասավ տիրակալի նժույգին: Նժույգը վրևաց, ետ-ետ քաշ-վեց: Թամուրը չէր մտրակում, չէր ստիպում նժույգին կանգ առնել, սահմուկել էր աշխարհի տիրակալը:

Լանկ Թամուրը հասկացավ, որ այստեղ էլ մի պարտություն կրեց, կրեց մի բուռ անպաշտպան հայերից սա Բարդողի կռվից պակաս ծանր չէր նրա համար:

- Չարկե՞ք, հայե՞ր, զարկե՞ք հանուն մեր հայ աստվածների,- պահի հերոսացման մեջ հեթանոսացած, գոռում էր արևաներկ ծերունին, որ ուշքի էր եկել, կանգնել էր ողջ հասակով մեկ: Նրա մեջ ինչ-որ վեհ, աստվածային պահվածք կար, որ ոգ-որում էր մարդկանց: Ծերունին մի աներ-ույթ ուժով տիրել էր վիճակին, մարդկանց հոգիներին: Դարձել էր այս մի բուռ մարդկանց առաջնորդն ու ընտրյալը:

- Աղջիկս, մո՞տ արի, մի՛ հերացիր ինձանից,- աղմուկի մեջ կանչում էր մի մայր դստերը,- Տեր Աստված, ինչո՞ւ գեղեցիկ արարեցիր սրան, ախր կպղծեն հրեշները,- մայրը անհույս փորձ արեց փրկելու աղջկան:

Զինվորներից մեկը տեսել էր գեղեցիկ աղջկան, մոտ վագեց, քաշեց աղջկա թ-ից:

- Թո՞ղ,- ճշաց աղջիկը, շոշագգեստը պատռվեց, կուսական կուրծքը ցոլաց, թրթռաց հագուստի պատռվածքի մեջ: Զյունասպիտակ կուրծքը, ցից ստինքներով կարող էր հրաշք թվալ սիրահար մեկին, սակայն այստեղ գագաններ էին..

Աղջիկը թողեց մոր ձեռքը, բնագդական շարժումով ծածկեց կուրծքը: Ասես ար-ը վարագուրվեց... Դա ավելի ոգ-որեց գիևորին, որը ինձահեղ հեշտանքով, արբեցած, սրով զարկեց աղջկա մորը, արյունը ցողաց անբախտ աղջկա կրծքին: Մայրն ընկավ, իր հետ քարշ տալով աղջկան: Զինվորը իրեն կորցրած համբուրում էր աղջկա կուրծքը... Առյուն, համբույր, լորձոտ շրթունքներ, արյուն, դարձյալ արյո՛ւն, արյո՛ւն...

- Տեր Աստված, մի՞թե սրանց էլ ես մարդ արարել,- ծերունին ողջ թափը դրեց մի հատիկ զարկի մեջ, դաշույնը միսրճեց չաղաթայի թիկունքը: Սա անծպտուն ընկավ: Ծերունուն էլ զարկեցին, գլորվեց, նորից ելավ, քայլ արեց դեպի Թամուրը, առաջ պարզեց մկանուտ ձեռքերը:

- Թամուր թուրքման, քեզ շուն է ցնկնել, հողն անգամ քեզ չի ընդունի, կայրվես հավերժական կրակների մեջ...

Տիրակալը հասցրել էր հաղթահարել հոգեկան խօսվքը: Նրա առաջ մի քանի հայեր կային, հոգ-որ ու մի իշխան - այս ծերունին, որին այս էլ քանի անգամ զարկում են, սակայն չեն կարողանում սպանել: Ծերունին դեռ ողջ էր, դա վիրավորական էր գիևորների համար:

- Կարապետ դարբին, ի՞նչ ես անում, չես տեսնում, սրանք հրեշներ են,- խոսեց Վահան իշխանը, խոսեց պարսկերեն:

- Դարբին, - հետաքրքրվեց Թամուրը, - որ արհեստավո՞ր ես: Ես քեզ չեմ սպանի, կստիպեմ մեզ համար գենք կռել, որպեսզի քո կռած գենքով կոտորեմ քո հայրենակիցներին: Չեզ կտանեն Սամարդանդ...

- Չե՛, չաղաթայ իրեշ: Ես չեմ հեռանա իմ մայր հողից: Յոգին ազատ է, կամքս սուրբ է, չես կարող բռնանալ հոգուս: Դու հասու չես, ի զորու չես հասկանալ հայի հոգին: Խորհուրդ ինձանից, ձեռք մի տուր սրբազնին ու իշխանին:

Թամուրը քմծիծաղ տվեց:

- Յիմար ծերուկ, նրանք ձեր առաջնորդներն են, որ դարձան իմ զինվորների մահվան պատճառը, նրանք կայրվեն:

Ծերունին, որպեսզի ընկնի, ոտքերը չուց, գերմարդկային ճիգով մնաց ոտքի վրա:

- Թուրքման Թամուր, ես անցել եմ ահն էլ, մահն էլ: Ինձ վախ չկա: Լավ ի միտ արա, նա-օղ ականչիդ, հայ ժողովուրդը նոր Վանականներ ու Վահաններ կծնի, դու դարձյալ փախս կտաս մեր երկրից, ինչպես Բարդողի Մարտիրոսից...

- Վե՛րջ տվեք,- Մարտիրոսի անունը լսելուց կատաղած, գոռաց Թամուրը:

Զինվորները նետվեցին առաջ, զարկեցին, ծերունին ընկավ ծնկների վրա, մի տաս սուր ու յաթաղան իշան գլխին: Դարբինը կտոր-կտոր եղած, ընկավ գետնին, հողին, որ պաշտպանելու համար ծառացել էր արար աշխարհի դեմ..

- Այրեք սրանց,- Թամուրը ուզեց շուր տալ նժույգի գլուխը, քանզի ազնվացեղ նժույգը զգվում էր արյան հոտից, փոշտում էր: Մարդ չէ, չէր կարող տանել արյան հոտը: Թամուրը կանգ առավ, երբ լսեց Վանականի խրոխտ ձայնը:

- Կանգ առ, թուրքման թագավոր, մոլորյալ ես քանց տափաստանի հովիվ: Դու մեզ սպանելով ժողովրդին չես սպանի ու կստիպենք քեզ ծնկի գալու Աստծո դատարանի առաջ,- հազար, ծուխը խեղդում էր,- Ներ Կարապետ, դու քո պատիժը կստանաս,- քանի գնում ձայնը նվազում էր, իսկ խարույկի բոցերը բարձրանում էին ու բարձրանում, ասես ուզում էին լիզել Աստծո ոտքերը, այս ամենը դիտող ու անտարբեր Աստծո ոտքերը,- Տեր Աստված, միևնէ Ե՞րբ կույր մնաս,- այսքան պարզ լսվեց խարույկի միջից, որ Թամուրը սոսկաց:

«Սրանք մոլագարներ են, հարկ է հեռանալ Յայաստանից, գնալ Վրաստան, այստեղ զոհեր եմ տալիս...»:

* * *

Յայկարամը չոքել էր մոխիրների մեջ:

- Տե՛ր Աստված, ինչո՞ւ չպաշտպանեցիր Յայոց սրբերին... Գունե մի նշխար գտնեմ հորիցս, իմ միակ սրբից:

Երկու օր Ե՝ փորում է մախիրները ու չի գտնում ոչինչ, չի հասնում գետին: «Մեծ» խարույկ են վառել չաղաթայները Յայոց հոգ-որ առաջնորդի ու իշխանի պատվին,- եթե գտնեմ հորս պանակեն, կտանեմ Յայոց աշխարհով մեկ, ամենուր կպատմեմ նրա քաջության մասին, կոչ կկոչեմ ժողովրդին, կգոչեմ՝ Ելի՛ր, Յայկազուն ժողովուրդ, Ելի՛ր ընդդեմ բռնակալ մահմեդականի, Ելի՛ր Յոդ Յայրենիին ապավեն,- մատների տակ կոշտ բան զգաց:

- Պանակեն Ե,- համարյա ճչաց, չեր վախենում ոչ ոքից, ումի՞ց վախենար:

Բջնիում միայն դիակներ եին: Տեղ-տեղ դեռ ծխում եին տները: Երիտասարդն ուրախացավ, գտել եր պանակեն: Երկյուղածությամբ հանեց, մաքրեց ձեռքի ափով, փշեց, մաքրեց մոխրից, համբուրեց Աստվածածնի պատկերը, որ հրաշքով անվնաս եր մնացել: Պանակեն սեղմեց կրծքին, ոտքի ելավ: Ամուր կապեց գոտին, որից քարշ եր առել արքեպիսկոպոսի սուրը: Սուրն ու պանակեն տանում եր, որպես հայոց մեծ սրբություններ:

Զայլեց դեպի բերդադուռ: Զանի ուշքն ու միտքը խարույկ պեղելն եր, չեր դիտել շրջապատը: Արդ, նայեց չորս կողմը, պակուսիչ տեսարան եր, ամենուր դիակներ եին՝ հայերի, չաղաթայների: Ընկած եին տարբեր դիրքերում: Մարդիկ, որ զարկվել եին կրվելիս, տարբերվում եին մնացածներից, ասես, նրանց մեջ հպարտություն կար: Չենքը ձեռքին զարկվածի դիրքը անկախ եր, հպարտ ու խրոխտ: Իսկ սա, թե- երիտասարդ Ե, սակայն ընկած է խեղճացած, ասես վերջին պահին խնդրել է, աղաչել է խնայել իրեն...

Այս դիակին նայելիս ակամա պատկառեց, չոքեց, համբուրեց զոհվածի ձեռքը: Արհեստավոր եր, վերջին պահին ձեռքից բաց չեր թողել դաշույնը, ոտքերի տակ չաղաթայ եր ընկած... Ահա մի կնոջ դիակ, սրատել են մինչ- գոտին: Ծանր սուր է ուսեցել չաղաթայը, նա- ոչ այրմարդկային հոգի... Տեր Աստված, անպաշտպան կնոջ են սրատել... Մի՞թե խղճի մտոք է այս ամենը... Երեխա է ընկած սալահատակին, թվաց, թե ողջ Ե, մոտ վագեց, սարսռաց, կանգ առավ, ագռավ թռավ դիակի վրայից, մանկան աչքը տարավ: Զստմնելի եր, շուր տվեց դիակը, որպեսզի մանուկը դատարկ ակնապիճներով երկինք չնայեր, չմեղադրեր...

Երիտասարդս եր, հոգով նվիրված Աստծուն, սակայն այն, ինչ տեսնում եր փոթորկում եր հոգին, անանցանելի վիի բացում... Չեր ուզում քննել Աստծու գործերը: Օրեն չեր, սակայն այս ամենի բացատրությունը... Չոքեց սալահատակին:

- Մեղա՛, Տեր Աստված, մեղա՛ մեղավորիս, սակայն այսքան արյուն, այսքան զոհեր... Ինձ պատժիր հոգումս ծնված կասկածի համար, սատար արա հայոց աշխարհին: Մինչ- Ե՞րբ փորձես հավատքը մեր, ասեմ, ոչ երկնչեմ՝ բավ Ե, խաչվել ենք, մորթազերծ Եղել, մինչ- Ե՞րբ,- ոչ տարիներով, այլ ապրած կյանքով իմաստացած, նա- շփոթ հոգով, բողոքը

կրծքի տակ անթեղած՝ շշնչաց,- Տեր Աստված, չԵ՞ որ գերագույն Եռթյունդ բարությունն է... Մեղա՛, մեղա՛,- լաց եղավ Երիտասարդ հոգ-ո-ռը:

Ականջին ձայներ հասան: Քիչ անց մոտեցան, շինականներ էին: Գալիս էին պատկառազդու մի մարդու գլխավորությամբ: Բահեր էին ուսել, մի քանի սայլ կար: Շինականները կանգ առան, ազդվել էին սրակիր հոգ-որի տեսքից:

- Ո՞ւր եք գնում,- հարցող, հասկացավ, եկել են դիակները թաղելու:

- Յայր սուրբ,- խոսեց գլխավորը, որ տանուտեր էր,- կարգն է առհավական նախնյաց, պիտի թաղենք զոհվածներին,- մի պահ սպասեց,- նա- չաղաթայներին: Տաքերն ընկան Վարակ կընկնի աշխարհս... Փառք Երկնավորին, փրկվել ես,- Յայկարամը տևքաց, հիշեց արքեպիսկոպոսին:

- Կռվի ժամանակ Վանական արքեպիսկոպոսը, որ հոգ-որ հայրս էր, հրամայեց թաքնվել գաղտնարանում: Կռվից հետո լուր տանել հայոց աշխարհի գավառները, կոչ կոչել ժողովորին Ելելու չաղաթայների դեմ: Արքեպիսկոպոսին ու Վահան իշխանին այրեցին խարույկի վրա: Գտա Վանականի պանակեն ու սուրբ,- ցույց տվեց պանակեն,- սա կրում էր մարտի պահին,- համբուրեց պանակեն, սուրբ Վեր պարզեց, գոչեց,- հայեր, հանուն Յոր, Որդի Սուրբ Յոգու, Ելե՛ք սուրբ պատերազմի ընդդեմ անօրեն չաղաթայների, ազատե՛ք հայոց սուրբ հողը: Ահա այս մի բուռ մոխիրն եմ տանում, պիտի շաղ տամ հայոց աշխարհով մեկ: Զանի շունչ կա բերանումս, քանի կարող եմ քայլել ու խոսել, պիտի գոչեմ՝ Ելի՛ր Յայկազուն ժողովուրդ, Ելի՛ր սուրբ պատերազմի...

Երիտասարդ հոգ-որի տեսքն ազդեց:

- Լանկ Թամուրը ձեռք չի քաշի Յայաստանից, մեր հարստություններից: Պատիր հույսեր, մի՛ մոռացեք, հայոց հողը տնօրւմ է մահմեդականների լծի տակ: Պատգամն է սուրբ Վանականի. կռվելով՝ ապրել, ապրելով՝ կռվել: Ես կմնամ ձեզ հետ, մինչ- թաղենք դիակները:

* * *

Շատ Երկրների նվաճման էր մասնակցել, բերդառումներ, քաղաքների գրավում, արյուն ու ավերմունքներ, ամեն ինչ տեսել էր, սակայն արդ, այդ ամենն այլ կերպ էր ընկալում: Յակասական զգացումները սկզբում տանջում էին, ապա կամքի գերագույն լարումով հասավ իր համար ընդունելի միակ ճշմարտությանը՝ ես հայ եմ... Յարկ է վկայել հայ լինելը, թեկուզ կյանքի գնով, հասու չեր, որ մարգարեություն էր անում:

Կանցնեն օրեր, ամիսներ, տարիներ, – եթե Աստված չկտրի կյանքի թելը, հայ լինելու մասին կասի Լանկ Թամուրին, կասի հպարտությամբ:

Կնայի նրա դեմքին, արհամարհական, վիրավորական խոսքեր կշպտի նրա երեսին – այդ ամենը մահից առաջ, իսկ արդ, դեռ որքան գործեր կան անելու...

Ուզում է սպանել տիրակալին, ապա դաշույնը վարսել սրտի մեջ, վերջ տալ այս տվայտանքին, որ նա- կյանք է կոչվում, սակայն գիտե, որ դրանից հետո սրի կքաշվեն հազարավոր հայեր, Յայաստանը կավերեն, անապատ կդարձնեն... Դառը խոհերի հետ էր, ներս մտավ Շահ Մելիքի ծառան:

- Տերս, թող Ալլահը երկար տարիների կյանք տա նրան, գիշերս հրավիրեց խրախճանքի: Մահմեդ պետից հայ իշխանուհի է գնել, նաժիշտի հետ...

Չահիրը ցլցվեց:

- Իշխանուհին տիրո՞ջդ է հասել,- զարմացած հարցրեց, ապա տիրապետեց իրեն,- Շահ Մելիքին ասա, որ հաճո է հրավերքը նրա, կզամ:

- Տերս ասաց,- ծառան պարզ- էր ակնկալում,- որ տիրակալը իշխանուհուն ընծայել է Խալիլ սուլթանին, սա ել կանաց ընծայել է Մահմեդ պետին: Իմ տերը Մահմեդից գնել է կանաց, գիշերս կանաց կբերեն յուրտ, ու դուք...

Լուց, իբր- անհարիր էր բարձրաստիճան գորապետի մոտ խոսել այդպիսի բաներից: Ապա այնպես լկտի ժպտաց ցանցառ բեղերի տակ, որ Չահիրը ցանկացավ դաշույնը նետել նրա դեմքին:

- Կզամ,- ձեռքը թափ տվեց:

Ծառան դուրս գնաց, դժգոհ էր, պղնձադրում էլ չստացավ:

«Իշխանուհուն պիտի փրկեմ», - կայծակեց մտքում, - բա՛վ է, այլ-ս համբերանք չմնաց: Կփրկեմ ու կտանեմ Մեծորա, այլ-ս չեմ կարող դիմանալ: Ծուրջս ինչ-որ անհասկանալի բաներ են կատարվում, հասու չեմ: Տիրակալը գործեր չի հանձնարարում... Ես հայ եմ, պիտի օգնեմ Եղբայրներիս,- սակայն հասկացավ, որ անհանգստացած էր տիրակալի վերաբերմունքի փոփոխությամբ: Թե- Թամուրը ոչինչ չէր ասում, սակայն Չահիրը զգում էր նրանից, որ տիրակալը խուսափում էր աչքերին և այլուց: Դա անհանգստացնում էր, իսկ ի՞նչ կարող էր ձեռնարկել պարզելու պատճառը: Վճռեց սպասել դեպքերի զարգացմանը: Իսկ եթե հապաղեմ, թակարդ կընկնեմ: Լավ էր հասկանում, որ Մարտիրոս տանուտիրոջ հետ կապված գործի մեջ Սահարի դերը պատահական չէր, այն, որ Յաֆիզի միջոցով էր թակարդ գցել Մարտիրոսին, պարզել էր, սակայն ինչպե՞ս եղավ, որ այս հարցում տիրակալը անտեսեց իրեն: Դա էր անհանգստացնում: Չեր ցանկանում հեռանալ, առանց այդ պատճառը պարզելու, թե- գիտեր, որ լինում են պահեր, երբ ամեն ինչ հարկ է թողնել ու հեռանալ, անհապաղ հեռանալ: Չատ էր ականատես եղել նմանօրինակ դեպքերի, երբ իր հետապնդած մարդը միայն մի ժամ վաղ հեռանար, կփրկվեր:

Արդ, վճռվելու էր իր ճակատագիրը: Գաղտնապահը իր փորձով էր

դա գգում: Վճռեց խոսել Շահ Մելիքի հետ, տիրակալի վերաբերմունքի փոփոխության մասին կպարզեր, այդ ամենը կապելով Յաֆիզի դիրքերի ամրապնդմամբ, նա- Սահարի «հաջողության» հետ:

Յարցը վճռված համարելով, հանգստացավ, կանչեց ծառային:

- Յրամայի՞ր, տե՛ր իմ:

- Փարվիզ, բեր ամենագեղեցիկ խալաթս, սանդղակս, մեծը չէ, փոքրը, որի մեջ ոսկիներ կան: Բերանդ ի՞նչ ես բացել, գնալու ենք Շահ Մելիքի մոտ,- տեսավ, ինչպես ծառայի աչքերը փայլեցին:

«Յիմար», - խորհեց ծառայի մասին, իսկ ի՞նչ կլինի, եթե Փարվեզին հետս տանեմ: Ջրիստոսի կրոնին կդարձնեմ, դեմ առավ,- սպասի՞ր, չէ որ ես պիտի դարձի գամ: Յայրս ու մայրս ջրիստոնյա են եղել, ասել եթե ես ել եմ ջրիստոնյա, սակայն ես թլապատված եմ, իսկ դրանից ի՞նչ է փոխվում, մի կտոր կաշի են կտրել ու խնդրեմ՝ պաշտիր Ալլահին ու Մուհամեդին՝ Լյա Իլա, Իլ Ալլահ, Մուհամեդ Ռասուլ Ալլահ... Ամեն կրոն ել կարող է նույնը ասել, որ իր Աստված միակն է... Ես գիտեմ անելիքս, պիտի դարձի գամ ու պաշտեմ Ջրիստոսին, իսկ նա հայ չէ, հրեա է... Յայերը առաջինն են ընդունել այդ կրոնը... Այդ մասին հայրս հպարտությամբ եր խոսում, մայրս արցունքներն եր սրբում: Աստված իմ, կույր եմ եղել, չեմ տեսել, չեմ լսել, հասու չեմ եղել այդ ամենին...

- Տե՛ր իմ, կեսգիշեր եր, շեփորն ազդարարեց, - Փարվիզն եր:

- Բերի՞ր, - տեսավ սանդղավակը, բացեց, ոսկին փայլեց աշտանակի լույսերի տակ: Մեծ չեր նրա հարստությունը, պատրաստ եր ամբողջ ոսկին տալու, միայն թե փրկեր իշխանուհուն: Ունեցածը հարյուր ոսկի եր, մի քանի մատանի, ապարանջաններ, մարգարիտներ: Սոսկաց. «Այս ամենը թալանված է իմ քույրերից:- Առաջ այդ մասին չեր խորհում... - Այս ոսկիների վրա նրանց արյունն է, իսկ ոսկին ազգություն չունի, ոսկին ինքն է ազգ ու խիղճ, այդպես է ասել մարգարեն, իսկ ի՞նչ է ասել այդ մասին Ջրիստոսը, չգիտեմ, չհարցնե՞մ Թովմային, - հիշելով աբեղային՝ սիրտը շերմացավ, - ա՛յ, թե, ով կտա բոլոր հարցերիս պատասխանը: Իմաստուն մարդ է, նա- քաջ: Ես շատ բան ունեմ նրանից սովորելու...»:

Տեսավ, որ ծառան հազած կապած սպասում է: Յագավ խալաթը, գոտու տակ խրեց դաշույնը, թեր-ս մի քանի օր առաջ վերցներ զարդարուն յաթաղանը, զզվանքով նայեց գենքին, ասես նրանից արյուն է կաթում, թուրքմանի գենք է: Գևաց Շահ Մելիքի յուրտ: Թեր-ս մի քանի օր առաջ հպարտանար Շահ Մելիքի հետ ունեցած մտերմությամբ, այս պահին դա միայն անհրաժեշտություն էր: Յուրտի մոտ կանգնած թիկ-նապահը բարձրացրեց յուրտի դռան վարագույրը: Ներս մտավ: Շահ Մելիքը հրավիրել եր մի քանի մտերիմների: Դաստարիսանի վրա մի կահույր սամարդանդյան գինի կար, նա- հայկական արարատյան դառը գինի, որ մեծամեծները խմում էին մեծ հաճույքով: Իսլամը գինի խմելն

արգելում է, սակայն պատերազմում այս մասին ո՞վ է հիշում, գիտին մոռացում է բերում, տիրակալն էլ չի արգելում:

Մեծամեծները շատ եին խմում, դառն ու քաղցրը իրար խառնելով ուզում են մահվան սարսափը խեղել իրենց մեջ, ևա- դուրս վանել: Չորականները իրարից այդ թաքցնելով սպասում են մահվան, - այդ սպասումը հաճախ թաքցնելու համար խմում են, դառնում անտարբեր ամեն ինչի նկատմամբ...

Ծառաները դաստարիսանի վրա հորթի եփած միս դրեցին, սամարդանոյան հոչակավոր կոլորակ, որ պատրաստում են ուղտի սապատի վրա ծեծած մսից: Ճահ Մելիքը գավաթի մեջ նուռ մզեց, լիզեց նռան հյութը, որ շիթել էր ձեռքին: Աչքով արեց Զահիրին: Սա հասկացավ նրան, որ հյուրերը գնալու են, իսկ հետո Զահիրը մնալու է գիշերային խրախճանքի: Յավաքվածները Ճահ Մելիքի սովորական հյուրերն եին՝ զորապետներ Թաճիրեթը, պատմիչ Ճամսետինը, նկարիչ Ապտինը, հասկանալի է, յուրտի տերը նրանց գիշերային խրախճանքի չեր հրավիրել: Նրանք չեն կարող համեմատվել Զահիրի հետ, որի հետ Ճահ Մելիքը կապված էր անխախտ ընկերությամբ, քանզի մարտերից մեկի ժամանակ Զահիրը փրկել էր նրա կյանքը:

Զահիրը իր համար արարատյան դառը գինի լցրեց, խմեց մի շնչով: Նայեց հյուրերին, որ սկսել եին հարբել: Կար-որ էր, որ նրանք նկատեին տանտիրոջ հորանշելը: Վերջապես դա ել հաջողվեց, հյուրերը զգացին, որ հարբել են, բարի գիշեր մաղթեցին, գնացին:

- Զահիր, այս գիշեր անգամ արքաները մեզ կնախանձեն: Մահմեդից գնել եմ Խալիլի ընծայած հայ իշխանուհուն ու նաժիշտին: Երկուսն ել լավն են: Նաժիշտը ավելի հասուն է: Ջենսեթի փերիներ են: Մենք այս կյանքում արդեն Ջենսեթի վայելք կապունք: Ես կվերցնեմ իշխանուհուն, նաժիշտին քեզ եմ տալիս երեք տիկ արարատյան գինով,- հրաց,- տես, գինին անպայման դառը լինի, որ գիշերվա քաղցրությունը հիշենք,- ոլորեց բեղերը:

Ճահ Մելիքը գեղեցիկ այրմարդ էր, միայն աչքերի տակի պարկերն եին փշացնում պատկերը: Բուժն ասել էր, որ Ճահ Մելիքը անբուժելի հիվանդ է, այսպես տաևզվելով ել գնալու է Ջենսեթ: Այն, որ Ջենսեթը նրա համար ապահովված է, տանտերը հավատում էր: Ծիծաղում էր այդ մասին խոսելիս, սակայն աչքերը դառնում եին թախծոտ: Նա գիտեր, որ օրերը հաշված են, իսկ թախծոտը օրեն չեր, որ եր-ար դեմքին, քանզի մարդիկ նրան նայելով պիտի իմանային տիրակալի տրամադրությունը: Մեփական մտորումների արտահայտությունը անթույլատրելի էր նրա համար: Նա տիրակալի ստվերն էր, անփոխարինելի օգնականը, մտերիմը:

Արդ, ինքն իր հետ է, ազատություն է տվել սեփական զգացմունքներին, թողել է սովորական լարվածությունը: Մարդ է դարձել, ոչ ստվեր, թեկուզ պատվավոր ստվեր...

- Խնդրանք ուսեմ, գորավար,- սկսեց Զահիրը, շփեց ձեռքի դաստակի սպին, որ սկսում էր մզմզալ հուզմունքի պահին: Շահ Մելիքը գիտեր ընկերոջ այդ վիճակը, զարմացած նայեց նրան:

- Յայ իշխանուհուն ինձ վաճառիր, ահա ինչ ուսեմ, բերել եմ,- դաստարիանի վրա դատարկեց ոսկիները:

Տանտերը զարմացած նայեց ոսկիներին, որոնցից մի քանիսը գլորվել էին հատակին:

- Ինչի՞ն է պետք իշխանուհին, նաժիշտը ավելի լավն է,- ապա զայրացավ,- մեր մեջ ի՞նչ հաշիվ, ի՞նչ առ ու ծախ: Դու կյանքս ես փրկել, վտանգելով սեփականդ... Ես եմ նրանց քեզ ընծայում, գիտես, որ հարուստ եմ...

Զահիրը հասկացավ, որ սխալ էր թույլ տվել, արդ, հարկ էր խելացի նահանջել, իսկ նահանջը խանգարում էր դաստարիանի վրայի ոսկին:

- Մի փոքր ավելի եմ խմել, իսկ ոսկին բերեցի հենց այսպես, ների՞ր,- զգաց, որ համոզիչ չեր: Վճռեց այլ կերա փրկել դրությունը:

- Վերջապես իշխանուհի է, նաժիշտն էլ հետը...

Շահ Մելիքը նայեց, կկոցեց աչքերը, այդ պահին նմանվեց տիրակալին: Զահիրը պատրաստ էր հռհռալու: Տանտերը ոսկին հավաքեց դաստառակի մեջ, հանգուցեց, մի կողմ դրեց.

- Գնալուց հետդ կվերցնես, ինձ ոսկին պետք չէ:

Ներս մտավ ծառան, փսխսաց տիրոջ ականջին: Շահ Մելիքը ձեռքով արեց, զայրացած: Ներս մտավ տիրակալի թիկնապահներից մեկը:

- Տիրակալը հրամայեց գալ գիշերային խորհրդի,- ասաց ու ձեռքը կրծքին դրած, դուրս գնաց:

Յրավերքը անսպասելի չեր: Թամուրը իր մեծամեծներին հաճախ էր քնից հանում – վայ նրան, ով չներկայանար: Տանտերը բարձրացավ տեղից, կապեց սուրը, նայեց ծառային:

- Յայ իշխանուհուն ու նաժիշտին ուղեկցիր Զահիրի յուրտ,- ծիծառեց,- շատ բարձր ես գնահատում հայերի ազնվականներին,- հանկարծ ինչ-որ բան հիշելով, նստեց աթոռակին, նայեց Զահիրին, մի պահ լռեց, ապա խոսեց ցածրացնելով ձայնը:

- Ալլահը վերջերս մթագնել է միտքդ: Մտամոլոր ես մաս գալիս: Վաս է, անգամ տիրակալն է նկատել,- անցավ շշուկի,- ի՞նչ է, չես նկատել վերաբերմունքի փոփոխությունը: Խելացի մարդ ես, չե՞ս տեսնում, որ Յաֆիզին իրեն է մոտեցրել, նա- Սահարին: Աչքերդ բաց արա, խորհի՛ր, թե որտեղ ես սխալ թույլտվել, վրիպել ես ինչ-որ բանում, իսկ Յաֆիզը օգտվում է դրանից, - ապա մեղմեց, գրկեց Զահիրի ուսերը,- Ես միևնէ գերեզման, որ բավականին մոտ է ինձ,- քմծիծաղ տվեց,- շնորհակալ եմ քեզանից, նա- քեզ հավատարիմ ընկեր եմ: Իսկ այս կեղտը,- ցույց տվեց ոսկին,- ցանկալի է ամենքին, սակայն ոչ ինձ պես մեկին,- ծիծառեց,-

Լ չիմես: Խմած մարդը կնոշ մոտ առյուծ չի կարող լինել, այն ել կույս աղջկա մոտ: Յավատա, այդ գործերից լավ եմ գլուխ հանում,- հոհօաց, ապա լրջացավ,- ասած ականջիդ օդ արա: Խորիիր, որտեղ ես սայթաբել... Ես գնացի:

Չահիրը Շահ Մելիքի մոտից գնաց իր յուրտը: Փարվիզը դաստարխանի վրա միս, գինի, խորտիկներ դրեց: Ներս մտավ Շահ Մելիքի ծառան, նրա հետ-ից ներս մտան երկու կին: Ծառան սովոր շարժումով որսաց օդում արծաթադրամը, դուրս գնաց, խոնարհվելով:

- Նստի՞ր, իշխանուիկի՞,- պարսկերեն ասաց Չահիրը,- Լիահուս եմ, գիտես ձեր հար-անի լեզուն:

Անահիտը գլխով արեց:

- Նստի՞ր, իշխանուիկի՞,- գեղեցիկ շարժումով, նորից հրավիրեց Չահիրը:

- Ես իշխանուիկ չեմ, իշխանադուստր եմ, օրիորդ,- ասաց Անահիտը, ուշադիր նայեց Չահիրին: Սրա ս- մորուքը, արծվենի քիթը, ս- աչքերը զարմանք առաջացրեցին նրա մեջ: Տանտիրոջ ասպետական շարժուճ-ը ստիպեցին ենթարկվել, նստեց: Նաժիշտը մնաց կանգնած: Փարվիզը քաշեց աղջկա թ-ից:

- Սպասի՞ր, ո՞ւր ես տանում,- ճչաց Անահիտը, - խղճա, թուրքմանե զորապետ: Կույս աղջիկ է, փեսացու ունի...

- Ինձանից հո լավը չէ,- ծիծաղեց Փարվիզն ու ծանր ապտակից մի կողմ թռավ:

- Անպատկա՞ն,- զայրացավ Չահիրը:

- Ներող եղիր, տե՛ր իմ, - խեղճացավ Փարվիզը:

- Գևա՛, նայի՞ր, որ յուրտին մարդ չմոտենա,- երբ ծառան դուրս գնաց, դարձավ Անահիտին,- իշխանուիկ, ես ձեզ գնեցի Շահ Մելիքից,- լրեց մի պահ, թեր-ս մտքերը հավաքելու համար, ավելի ստույգ դեռ չէր վճռել անելիքը: Անահիտը նայեց արհամարհական:

- Ի՞նչ փույթ, դու թե նա: Ամենքդ ել թուրքման եք: Ես Բջնիի բերդապահ իշխան Վահանի դուստրն եմ: Չուր ես ասպետություն խաղում... Դուք այրեցիք հորս... Ինչպես կարող եմ դառնալ ձեզանից մեկն ու մեկի սիրուիին,- ծիծաղեց, զարմանք պատճառելով Չահիրին,- ոսկիներդ կորան, զորապետ,- հույս չունենաս, ատամներով կկրծեմ երակս, կթույնեմ ինձ...

Չահիրը հիացած նայում էր աղջկան: Նրա հայացքն այնքան խոսուն էր, որ Անահիտը մի պահ շփոթվեց:

- Իշխանուիկի՞,- ես միտք չունեմ բռնանալու: Ոչ ել ցանկանում եմ քեզ սիրուիի պահել,- Չահիրը թափով ոտքի ելավ. հասավ վարագույրին, ետ տվեց, բռնեց ականջից ու ներս քաշեց ծառային:

- Տիրակալս ասում ե՛ եթե գող է ծառան, առաջին հերթին կգողանա տիրոջը,- մի ծանր հարվածով ծառային դուրս նետեց յուրտից, - մի՛ զարմացիր, տիրակալը ամեն տեղ ականջներ ունի: Ես նրա գաղտնա-

պահն եմ,- մոտեցավ Անահիտին,- ես ձեզ կփրկեմ, կտանեմ Մեծոքա,- գևաց նստեց բարձերին:

Անահիտը ապշահար նրան էր նայում:

- Տիրուիի՛, ի՞նչ ասաց թուրքմանը, ինչ-որ չհասկացա,- առաջին անգամ խոսեց Արփենին: Նա լավ չէր հասկանում պարսկերեն:

- Այս մարդը կամ ազնիվ է, կամ անազնիվ խաղ է խաղալու գլխներին:

- Չեմ կարող հասկանալ,- ասաց Անահիտը,- նա խոստանում է մեզ ազատել, սիրտս վկայում է, որ ազնիվ մարդ է: Նայիր, ասես հայ լինի: Թուրքմանների մեջ քիչ կան այսպիսի մարդիկ, հայի դեմք ունի...

- Լուսանում է,- ասաց Զահիրը, - դուք կմնաք յուրտում: Ես դուրս կգամ մի փոքր շրջեմ: Յուշ կար-որ վճիռ պիտի ընդունեմ, որից կախված է ոչ միայն ձեր կյանքը...

Դուրս գևաց յուրտից:

Արփենին մոտեցավ Անահիտին, աղջիկը դողում էր:

- Անհաղորդակից եմ զորապետի մտքերին: Փորձանք չբերի գլխներին,- ասաց Անահիտը: Նստեց դաստարիսանի առաջ,- Արփենի, արի ճաշակենք մեր հյուրընկալի սեղանից, մեզ ուժ է հարկավոր այս ամենին դիմանալու համար: Էցո՞ւ,- Արփենին մի գավաթ գիսի լցորեց տիրուհու համար: Սա մի կում արեց,- դու ել խմիր: Չաղաթայը լավ գիսի ունի: Նա գաղտնապահ է, ասել է, թե տիրակալի մերձավորներից է: Եթե ցանկանա, կփրկի մեզ: Ես նրան փրկագին կառաջարկեմ: Մայսու կտա մեր ունեցած ոսկին, միայն թե ազատի մեզ..., Երկար նայեց գավաթի մեջ,- գիտե՞ս, Արփենի, սիրտս վկայում է, որ ազնիվ մարդ է... Արփենին զայրացած վրա տվեց:

- Ի՞նչ ազնիվ, մարդը ոսկուց կիրաժարվի՞: Միայն թե հեռանանք այս անիջյալ մարդկանցից, այնպես են նայում, ասես մերկացնում են: Թուրքմանի համար կինն ու գրաստը մեկ են:

Անահիտը չէր լսում նրան, գիսի եր խմում կում-կում, աչքի առաջից չէր հեռանում Զահիրի դեմքը: «Ասես սյունեցի լինի, շատ է նման հայի: Շենքերն ել թողեց յուրտում: Կամ մեզանից չի վախենում, կամ վստահում է: Կամ ել մենք նրան ի՞նչ կարող ենք անել, որ վախենա... Ահա սուրը, ահա յաթաղանը, նետերի կապարճն ու դաշույնը» :

Արփենին որսած տիրուհու հայացքն ու խլեց դաշույնը:

- Յենց ներս մտավ, կզարկեմ...

- Պետք չէ, նրա հացն ենք ուտում:

- Վարձը մարմինս է լինելու, ել ի՞նչ հաց:

Վարագույրը ետ գևաց, ներս մտավ Զահիրը: Արփենին ետ թռավ, բարձրացրեց դաշույնը, սակայն Զահիրը բնավ չազդվեց:

- Ցափում եմ, օրիորդ, որ չհավատացիր ինձ,- գլուխը թափ տվեց,- մարդիկ պիտի հավատան իրար: Ձեր քրիստոսը ասում է՝ սիրիր անգամ թշնամուդ,- զայրացավ,- իսկ դու, աղջի՛կ, տեղը դիր դաշույնը: Ե-

թե զարկես էլ, զորակայանից չեք կարող հեռանալ,- ծուռ ժպտաց,- այնքան էլ ոյուրին բան չէ զորականին զարկելը: Ես ծառային հեռացրեցի, որ ազատ խոսենք: Չեզ ասի՝ դաշույնը տե՛ղը դիր, - այնպես սպառնալից նայեց Արփենիին, որ սա դաշույնը գտեց,- գնա՞յ յուրտի անկյուն, նստիր ու մեզ մի խամգարիր, - նայեց Անահիտին,-մո՛տ նստիր: Առավոտյան, սովորույթի համաձայն Շահ Մելիքը հետաքրքրվելու է, թե ինչպես եմ անցկացրել գիշերը, իսկ դու մի շառագունիր, սա չաղաթայների բանակ է: Այստեղ այլ են: Կպառկես անկողնում, իբր- վատառողջ ես, իսկ ես պիտի խորհեմ, ինչպես ձեզ ուղարկեմ Մեծորա: Մի՛ զարմացիր - մի՛ փորձիր ինձ մատնել, ամեն բան կփշացնես: Ստիպված կլինեմ հանուն այն գաղտնիքի, որ կա իմ մեջ, սպանել քեզ: Ես այլ ելք չունեմ: Հանգիստ քեզ, յուրտին կհետ-ի իմ մարդկանցից մեկը: Դուք նրան չեք տեսնի, սակայն կարող եք ծայն տալ նրան: Նա կկատարի ձեր ցանկությունները:

* * *

Հովհաննես սրբազանը մեկ նամակին էր նայում, մեկ՝ Վահեին: Վարդենիկ վանահայրը գուժում էր Մարտիրոսի նահատակության մանրամասները, ապա Վահեին ներկայացնում էր, որպես հայրենաբերի, խորհուրդ էր տալիս վստահել նրան: Հույս էր հայտնում, որ երկրում կգտնվեն քաջ այրեր, որոնք կելնեն չաղաթայների դեմ, դրանցից մեկը անշուշտ կլինի Վահեն:

- Որդյակ, Վարդենիկ վանահայրը գրում է Բարդողի կռիվների մասին, որ մենք ականջալուր ենք, լսել ենք այդ մասին կռվի մասնակցից, սակայն այն մասին, որ Մարտիրոսը ծուղակն է ընկել, սպանվել է՝ այդ մասին իմացանք նամակից: Նա այն հայ դյուցազուներից էր, որ կենդանության օրոք արդեն սրբերի դասը ելան: Ցավ է ինձ, որ սպանվեց խաբված ու չարժանացավ գերեզմանի - հաղորդման: Ողբամ զքեզ, ազգ Հայկազուն, որ քաջազուն որդի կորցրեցիր,- Թովմայի տևքոցը ցւցեց Եպիսկոպոսին: Թովման ներս գալով, լսել էր վերջին խոսքերը:

- Ներիր, Հայր սուրբ, Վարդենիկի նամակը քեզ չկարդացի,- սիրով ու վշտով նայեց Թովմային,- նա գրում է, որ՝ Հայ դյուցազուն, որի հետ կողք-կողքի կռվել ես Բարդողի վրա, այլ-ս չկա: Չաղաթայները խաբեությամբ ծուղակել են, ջրահեղձ արել: Երբ Կաղզվանի երկու հոգ-որներ դիակը հանել են, վրա են տվել, չաղաթայները, սպանել են հոգ-որներին, Վահեի ծառային կտոր-կտոր են արել, դիակները գցել գետը: Ահա ողջ պատումը: Վաղը մենք սգո պատարագ կմատուցենք ազգի ազնիվ ու քաջ զավակի պատվին: Թող եկեղեցիներում հետայսու պատարագի ժամանակ սրբերի անունների հետ հիշեն քաջ Մարտիրոսի անունը: Հանուն Հոր, Որդվո ու Հոգվույն Սրբ: Ամեն:

- Ամեն. կրկնեցին ներկաները, խաչակնքեցին:

Թովման սրբեց աչքերը, մռայլ վճռականությամբ դիմեց սրբազանին:

- Սրբազան, հարկ է սրբազան պատերազմի հանել ժողովրդին: Ազգովի պիտի ելնենք, այլ ելք ու հևար չկա փրկության: Թագավորություն չունենք, մենք՝ հոգ-որներս, պարտ ենք ժողովրդին կոչելու սրբազան պատերազմի...

Կանահոր դեմքը պայծառացավ, բարձրացավ տեղից, հուզմունքից դողդողում էր: Իսկ այդ պահին Վահեն հետաքրքրված նայում էր Թովմային:

«Ղիա թե ով է եղել այն քաջ աբեղան, որ կռվել է Մարտիրոսի կողքին, որ հաղթության պատարագ է մատուցել լեռան վրա: Ասել է թե այս աբեղային է Մարտիրոսը կռչել Բարդողի եպիսկոպոս: Կեցցե՞ս, աբեղա»:

Ոչ միայն Վահեի վրա էր ազդել Թովմայի խոսքերը: Սրբազանը նրա խոսքերում գտավ այն վճիռը, որ փնտրում էր, սակայն ի զորու չեր վճռել, աբեղայի խոսքերից հասկացավ՝ սա էր հուսկ միակ միջոցը փրկության...

Ներս մտավ դպիրներից մեկը, ինչ-որ բան ասաց եպիսկոպոսի ականջին: Սա նայեց տագնապած: Բարձրացրեց ձեռքը: Ներկաները լռեցին, համակ ուշադրություն դարձան:

- Որդի՞ք, գումկան է ժամանել: Յող ցանենք գլխներիս, -ս մեկ բերդ ընկավ, - տնքաց վանահայրը:

Ներս մտավ Յայկարամը՝ հոգնած, փոշոտ, դաժանացած, նամարտական: Յայացքը վառվում էր սրբազան կրակով, լուր խոնարհվեց եպիսկոպոսին:

- Գումի՞ր, որդյա՞կ, գիտեմ՝ գույժ ես բերել: Ասա՛, ի՞նչ նոր արհավիրք է, ի՞նչ նոր զոհեր Յայոց աշխարհում, ո՞վ ընկավ, ո՞ր բերդը, քաղաքը, ո՞վ զարկվեց մեր իշխաններից, հոգ-որներից, տուր գույժը:

- Բջնին զարկվեց, ժողովուրդը կոտորվեց: Նահատակվեցին հայոց արքեպիսկոպոս Վանականը, - Յովհաննես սրբազանը, որ ոտքի վրա էր, փլվեց բազմականուն:

- Տե՛ր Աստված, փրկյա՛ մեզ, - շշնչացին ծերունու շրթունքները:

- Պատմի՞ր, հայր սուրբ, - գումկանին դիմեց Թովման, - ո՞վ ես, որտեղից է գալդ, մանրամասները պատմիր:

- Աբեղա եմ Բջնիում, մի շաբաթ առաջ զարկվեց Բջնին: Զաղաթայները հանկարծակի պաշարեցին բերդը: Բերդապահ Վահան իշխանն արեց կարելին, անգամ անկարելին, սակայն կասեցնել թշնամուն անկարող եղանք: Սրբազանը կռվում էր սուրը ձեռքին, ահա այդ սուրը, որ կրում եմ, նա- պանակեն: Ես այն հանեցի մոխիրների միջից... - Յոգոց հանեց: Զար լռության մեջ շարունակեց, - Թամուրը արքեպիսկոպոսին ու Վահան իշխանին այրեց խարույկի մեջ: Այս քսակի մեջ մեր սրբերի նշխարներն են: Կռվի պահին սրբազանը, որին հայր եմ կռչել, կտակ ա-

վասնեց՝ տարածել Բջնիի կործանման լուրը, կոչ կոչել ժողովրդին՝ Ել-Նելու սրբազն պատերազմի ընդդեմ սատանայի մահմեդական: Փրկության հուսկ միակ միջոցը՝ կրիվն է, ազգի ըմբոստացումը,- հոգ-նած լռեց, նայեց վասահորը,- արքեպիսկոպոսի պատգամն է՝ մեջք չծ-ռել թշնամու առաջ, չհավատալ նրան, կոչել ժողովրդին սրբազն պա-տերազմի: Ես ամեն տեղ պիտի գոչեմ՝ Ելի՛ր, ժողովուրդ, սրբազն պա-տերազմի,- գոչեց աբեղան, մերկացրեց սուրը, պանակեի հետ պարզեց գլխից վեր,- սա է սուրբ հորս ու իշխանի պատգամը ողջերին, մեռած-ներին, այսօր ապրողներին, վաղը Եկողներին, բոլորին-բոլորին....

Վասահայրը մոտեցավ, համբուրեց պանակեն ու սուրը, ապա մոտե-ցավ Վահեն, մերկացրեց սուրը դրեց վասականի սրի վրա, ասաց.

- Երդվում եմ այս սուրբ պանակեով ու սրով, կկռվեմ Ազգիս փրկու-թյան համար մինչ- արյանս վերջին կաթիլը, թող ոսկորներս անթաղ մնան, եթե դոժեմ երդում:

- Հայր սուրբ, որդյակ, ծանր գործ ես ուսել, քանի՞ տարեկան ես: Մազերդ սպիտակել են, որդի, սակայն տեսնում եմ՝ երիտասարդ ես:

Հայկարամը ձեռքը ակամա տարավ մազերին, թեր-ս չեր ել տեսել մազերի սպիտակելը:

- Չգիտեմ, սրբազն, թեր-ս հազար, թեր-ս միայն քսան, չգիտեմ, սրբազն: Շատ ծեր եմ, թեր-ս ծնվել եմ փառապանձ Հայարիների հետ... Ասում ես, սպիտակել են մազերս: Չեմ տեսել, չեմ զգացել սպի-տակելս,- գլուխը կահեց, - Վասական արքեպիսկոպոսը հայրություն է արել ինձ, որբ եմ եղել, դարձյալ որբ մնացի: Հոգվույս պարտք եմ վերց-րել Աստծո առաջ, կատարել սրբազնի պատգամը: Շատ տեղերում եմ եղել, պատմել եմ Բջնիի կործանման մասին, կոչ եմ կոչել սրբազն պատերազմի: Գիտեմ, կմեղադրեն, որ կրում եմ արքեպիսկոպոսական պանակեն, զի չունեմ այդ իրավունքը, - հանկարծ զայրացավ, ի՞նչ իրա-վունք, մի՞թե այսքան գոհերը իրավունք չեն տալիս ինձ, մի՞թե քսան տարեկանում ծերանալս իրավունք չեն կոչելու ժողովրդին...

- Հանգստացի՛ր, որդյա՛կ, դու քո պարտքը ես կատարում: Վաղը մենք սգո պատարագ կմատուցենք մեր սրբերի պատվին, դու սուրն ու պանակեն դիր սուրբ սեղանին: պատարագից հետո կարող ես շարու-նակել քո առաքելությունը: Աստված քեզ հետ:

Հայկարամը մոտեցավ սրբազնին, քսակից մի պտղունց մոխիր լցրեց նրա ափի մեջ:

- Թող այս մոխիրը ծխա ամեն հայի հոգում,- ուզում եր դուրս գալ, սակայն ինչ-որ բան իիշելով, ետ դարձավ,- բերդից փախչելիս գերել են Վահան իշխանի դստերը՝ Ասահիտին: Նա գերյալների մեջ է, հարկ է մի-ջոց գտնել նրան փրկելու: Սուրբ հոր դուստրը արժանի է, որ նրա մա-սին հոգա հոգ-որ դասը:

- Հայր սուրբ,- Թովմային դիմեց վասահայրը,- Հայկարամին տար քեզ մոտ: Իրավացի ես, Հայկարամ, որդի: մենք պարտ ենք խորհելու

Վահան իշխանի դստերը փրկելու մասին: Դուք գնացեք, ինձ մենակ թողեք: Ես պիտի աղոթեմ, ծանր է ընկերոջս մահը,- Ներկաները հուշիկ քայլերով դուրս գնացին:

Ծերունին ծնկեց խաչելության առաջ:

- Տեր Աստված, ինչո՞ւ...

Այս «ինչուն» անգամ ապաշխարել էր պարտադրում: Ոչ միայն սրբազնի հոգին էր տվայտանքի մեջ, շատերի հոգիներում հարց էր ծնկել՝ զի Աստված բարություն է – ոչ մի բան երկրի վրա չի կատարվում առանց նրա կամքի, անգամ ծառից տեր– չի ընկնում: Յավատամ խոստովանիմ, սակայն այս ամենը, այս արյունը, ավերը, եկեղեցիների կործանումը, այրված քաղաքները, մորթոտված մանուկները, ծխացող հայոց երկնակամարը... Ինչո՞ւ Տեր Աստված...

Թովմայի ու Յայկարամի հետ խուց մտան Վահեն, Ուկանը, Փայլակը, Կսողիկը: Թովման նրանց ծանոթացրեց: Խուցը լցվեց մարդկանցով, նստեցին իշտյակին:

- Վահեն Դվիչից է: Նա վերջինն է տեսել Մարտիրոսի դիակը: Ուկան եղբայրը նրա հետ է եղել, երբ գնացել են Մարտիրոսի դիակը փևութելու: Ուկանենց շենի քնակիչները հեռացել են Սոկովետի ամառանոցները: Սա մանկությանս ընկերն է՝ Կսողիկը, ծկնորս է: Փայլակի մասին գիտեք, միասին ենք կռվել Բարդողի վրա: Մարտիրոսի օգնականն էր կռվի ժամանակ: Սա էլ Յայկարամն է, մեր կործանված Բջնից: Ահա մենք, - շեշտեց վերջին բառը, այդ բառի մեջ մեծ, շատ մեծ իմաստ որեց, - երկու հոգ–որ, մեկ ազատ, մեկ արհեստավոր: Երկու մարդ ել շինականներից: Ասել է թե հայ ժողովուրդն ենք ներկայացնում, - լոեց, նայեց խորհրդավոր, - կո՞չ կոչենք ժողովորդին: Բա՛վ է, հարկ է որ ամենքն ել ոտքի ելնեն, քաշվեն լեռները Չաղաթայները քաշվում են Այրարատ. ասել է թե միտք չունեն Տարնո կողմերը գնալու: Այնտեղ ժողովուրդը կոդիմադրի, ցավոք այստեղ անտեղյակ են չաղաթայների վայրագությունների մասին: Յարկ է, որ մենք գնանք Յայոց գավառները, պատմենք Բարդողի, նա– Բջնիի մասին. նա– ազգի զոհերի մասին:

Յավաքվածները, որ դեռ չեին հասկացել իրենց առաքելությունը, հանկարծ հասկացան աբեղային, որ իմաստուն հոգով, մտքի գորությամբ առաջ էր անցել իրենցից, որ իրենց փոխարեն վճիռ էր կայացրել, կազմել մի ընկերություն, մի եղբայրություն: Դեռ այս չեր գիտակցված, թեր–ս միայն Թովման գիտեր ինչի համար է ելել, ուր է գնում, սակայն ոչ, Վահեն գրկեց նրա ուսը:

- Իրոք, իմաստուն մարդ ես, Բարդողի եպիսկոպոս...

- Յամամիտ եմ քեզ հետ, սուրբ հայր, - խոսեց Յայկարամը, - ոչ ոք երկնից, ու երկրից չի կարող խաթարել իմ երթը, ես իմ առաքելությանն եմ հավատարիմ, – պատրաստ եմ տալու արյանս վերջին կաթիլը: Ես կկատարեմ իմ առաքելությունը:

- Մենք ել շեներում կպատմենք Բարդողի ու Բջնիի մասին,- ասաց

Ոսկանը:

- Ծովակի ափամերձ բոլոր շեներում կիմանան կռվի մասին,- ասաց Ասողիկը:

Փայլակը ձեռքը դրեց Թովմայի ուսին:

- Ես չգտա ընտանիքս: Չեմ բաժանվի քեզանից: Միասին կռվեցինք Բարդողի վրա, միասին կլինենք, եթե Բարդողի եպիսկոպոսը չի հրաժարվի ինձ պես հասարակ մարդուց...

Թովման գրկեց հսկային:

- Մենք այստեղ Բարդողի վրա իրար եղբայր կոչեցինք: Եղբայր կլինենք, քանզի Բարդողի եղբայրությունը սուրբ է:

Յսկան հուզվեց, համբուրվեց Թովմայի հետ, հիշել էր ընտանիքը, Բարդողը, Մարտիրոսին: Իրոք, Բարդողի կռվի մասնակիցները մինչ-կյանքի վերջ սրբությամբ պահպանեցին Բարդողի եղբայրությունը: Չմորացան ոչ Մարտիրոսին, - ոչ Էլ Բարդողի եպիսկոպոս հռչակված Թովմային...

Իսկ որ այս մարդիկ առանց պայմանավորվելու հավաքվեցին իրար գլխի, Աստծո նախախնամությունն էր: Բարձրյալը չէր կարող անպաշտպան թողնել Յայոց աշխարհը...

Դուան թակոցը ընդհատեց խոսակցությունը:

Ներս մտավ շահակիր Պետրոսը:

- Յա՞յր սուրբ, հաճիր գալ սրբազանի մոտ:

- Ի՞նչ կա, Պետրոս:

- Յիշո՞ւմ ես չաղաթային, որին փրկեցինք խեղդվելուց, նա է եկել...

- Ի՞նչ, - Թովման ոտքի թօռավ, շունչը կտրվեց ուրախությունից:

- Յետև Էլ երկու կին կան: Մեկը, կարծյոք, իշխանուհի է, շքեղ է հագնված: Բջնիից են:

Յավաքվածները իրար նայեցին:

- Իցիվ Անահիտը լիներ,- ուրախացավ Յայկարամը,- սիրտս վկայում է, այսօր հայտնության օր է:

- Երանի հուսացելոց,- խաչակըցեց Թովման, համարյա վագքով գնացին վանահոր օթ-ան, այստեղ արդեն շատ մարդ էր հավաքվել:

- Իշխանուհի՝, Անահի՛տ, քույր իմ,- ասաց Յայկարամն ու գրկեց աղջկան,- ուրախ եմ, օրիորդ, շնորհակալ լինենք Աստծուն փրկությանդ համար, իրաշք է, փրկվել ես, ուրախ եմ... Արփինե, դու Էլ ես այստեղ, Փա՛ռք Երկնավորին:

Անահիտը ապշեց, երբ Զահիրն ու Թովման գրկախառնվեցին:

- Եղբայր Թովմա,- չգիտես որտեղ սովորած հայերենով ողջունեց Զահիրը:

Յովհաննես սրբազանից զատ ամենքն Էլ զարմացած էին: Անահիտը բացբերան նայում էր Զահիրին, իսկ երբ վանահայրն Էլ գրկախառնվեց Զահիրի հետ, Անահիտը լաց եղավ:

- Տե՛ր Աստված, շնորհապարտ եմ, որ փրկվեցի հայի ձեռքով:

- Այո՛, որդյա՛կ, քեզ ազատել է եղբորս որդին՝ Զահիրը, որ այսքան ժամանակ եղել է չաղաթայների մեջ, վերջապես Աստված կամեցավ, որ նա վերադառնա իր ժողովրդի գիրկը: Փառք քեզ, Տեր Աստված, շնորհապարտ եմ այս ուրախության ու երջանկության համար, քանզի վկայեցիր քո բարությունն ու ողորմածությունը:

Յավաքվածները շնորհավորեցին Զահիրին: Կատարվել էր ուրախալի փաստ՝ մի կտոր ար- մթամած երկնակամարում, մեկ տարագիր հայ վերադարձել էր իր ժողովրդի գիրկը:

- Ծնորհակալ եմ, Զահիր եղբայր,- խոնարհվեց Անահիտը, - թող Աստված հատուցե:

- Ներո՞ղ եղիր, քույր իմ, քանզի չեմ կարող հայերեն պատասխանել,- Ժպտաց Զահիրը, - Ներիր, որ ճանապարհին չասացի ով լինելս, չեր հավատա, իսկ հայերեն ես կսովորեմ,- այս ամենն ասաց պարսկերեն, որ բոլորն ել հասկանում են:

- Իշխանուհուն ուղեկցեք հյուրերի օթ-ան,- կարգադրեց վանահայրը:

Անցավ երեք օր: Այդ միջոցին Յովիաննես սրբազանը երկար խորհրդակցեց Թովմայի ու Վահեի հետ, իրենց գրուցներին հրավիրեցին Զահիրին: Իսկ Թովմայի խցում ընկերները երկու գիշեր անքուն մնացին, վիճելով, ապա ծանր գործն ուսելու վճիռ կայացրեցին:

Թովմայի առաջարկը ժողովրդին չաղաթայների դեմ հանելու մասին, այդ երեք օրերի ընթացքում նա- Յովիաննես սրբազանի մոտ վերշապես վճիռ դարձավ: Եպիսկոպոսը վճիռ դրեց՝ անցնելով այդ ճանապարհին շատ ու շատ արգելքներ, հաղթահարելով շատ խոչընդոտներ: Ծեր իմաստասերը բախտորոշ վճիռ կայացնելուց առաջ երեք գիշեր չեր ընել: Նա լավ էր հասկանում, որ ծանր վճիռ է կայացնում, որ վտանգի տակ է դնում հոգ-որ դասը, կատակ բան չէ Լաևնի Թամուրի դեմ ելնել: Ի՞նչ անել, ինչպե՞ս փրկել վանքերն ու եկեղեցիներն ավերումից ու կործանումից:

Ելքը հուշեց Թովման: Կապույտ աչքերը վանահորը հառած, հասրակ ու հանգիստ ասաց:

- Միակ միջոցը Ուխտը գաղտնի պահելու է...

Սրբազանը գրկեց Թովմային:

- Որդի, իրոք իմաստուն մարդ ես,- սակայն ինչպե՞ս անել: Ասա նա-այդ, զուր չեր քեզ Բարդողի Եպիսկոպոս կարգել Մարտիրոս սուրբը...

Արդ, հավաքվել են վանահոր մոտ Թովման ու ընկերները:

- Յուսս դուք եք՝ Թովմա՛, Վահե՛, Ասողի՛կ, Ոսկա՞ն, Յայկարա՞մ, Փայլա՛կ ու Զահի՞ր: Միով բանիվ դուք եք Յայոց հույսը: Դուք պիտի ոտքի հանեք ժողովրդին: Ես ծեր եմ, ի զորու չեմ սուր կրելու: Ես ծեզ հետ կլինեմ իմ աղոթքներով ու խորհուրդներով, - դադար տվեց, հոգոց հանեց, - Զահիրը կարող է մեզ ստույգ տեղեկություններ հայտնել Լաևն Թամուրի զորքերի մասին: Ի՞նչ է վճռել կաղ սատանան,- խաչ քաշեց

դեմքիս:

- Եղբայրներ, Լաևկ Թամուրը գնում է Վրաստան, որից հետո չաղաթայները կծմեռեն հայոց արքաների ձմեռոցում՝ Ղարաբաղում, որ դուք կոչում եք Արցախ: Գարնանը նորից կգան, քանզի տիրակալը երբեք չի հրաժարվի Բայազետի հետ չափվելուց: Նա չի կարող կիսել իշխանությունը սուլթանի հետ: Տիեզերքում մի տիրակալ պիտի լինի: Այս անգամ Թամուրը վճռեց, որ դեռ չի հասունացել պատերազմը: Դրանից զատ Նրան խանգարեցին հայերի ըմբոստացումը, որն անսպասելի էր Թամուրի համար: Բարդողի դեպքերը բացեցին նրա աչքերը, հասկացավ, որ Բայազետի դեմ պատերազմի դեպքում հայերը կզարկեն թիկունքից: Այդ պարագան ստիպեց գնալ Վրաստան: Այս Հայաստանից փոքր է, զորական ուժերը սակավ են: Ի տարբերություն Հայաստանի, Վրաստանը թագավոր ունի: Դիմադրելու դեպքում՝ ամենքն էլ կկռվեն – հակառակը՝ կինազանդվեն բոլորը,- նայեց ներկաներին, այս մասին տիրակալն ասաց մի զրույցի ժամանակ: Բայազետի հետ ընդհարումը անխուսափելի է, սակայն այս անգամ հայերը խառնեցին Թամուրի հաշիվները: Զմոռանանք, որ կա նա- Սարայի Թողթամիշ խանը, որը պատրաստ է հարձակվելու Թամուրի զավթած երկրների վրա: Նա էլ իր բաժինն է ուզում հափշտակել...

Պարզից պարզ էր՝ Վրաստանի գլխին արհավիրք կախվեց, իսկ հետո՝ իսկ այդ հետոն ոչ ոք չգիտեր, բնությունը իր կամքն էր թելադրում, գալիս էր Հայաստանի դաժան ձմեռը:

- Ասել է թե մեզ հանգիստ կթողնեն: Իցիվ գարնանը մի փոքր ուշացնեին հարձակումը, վար ու ցանքս անեինք: Դա ինար կտար սովոր խուսափելու: Աստված մի արասց, վաղ հարձակվեն, սով կընկնի: Դեռ որքան ցավեր ու ահեր են գալու մեր գլխին,- հոգոց հանեց Թովման:

- Ապավինենք Աստծուն...

- Նա- մեր սրին, - զայրալից վրա բերեց Վահեն,- մի՛ անտեսեք այս պարագան: Ժողովուրդը տեսել է, զգացել է ուժը Բարդողի վրա, նա- Բջնիում: Զաղաթայներն էլ են հասկացել, որ մենք աղվան չենք, չենք նվաստանա, կկռվենք: Հույսներս Աստված ու մեր սուրը: Գործել է պետք - ոչ ձեռքերս ծալած սպասել:

- Եվ ի՞նչ կարելի է անել այս պահին,- վանահայրը նայեց Վահեին,- ստույգ է, չաղաթայները հեռանում են, սակայն նրանք դարձյալ կգան: Գիտեմ՝ մեզ հանգիստ չեն թողնի: Կգան գարնանը: Դուք երիտասարդ եք, սով չեք տեսել... Ծանր է սովոր աչքերին նայելը: Ուտում են ամենքան, անգամ առնետներ... Աստված մի արասցե...

«Հույսներս Աստված,- մօմոացրեց Վահեն,- մարդիկ հուսահատված են: Եթե այս այլ հուսով մղվի, կարող է կատաղություն ծնել, հուսահատ կատաղություն»: Նայեց Փայլակին, որի նկատմամբ առանձնահատուկ հարգանք էր զգում ինչ-որ բանով նրանց ճակատագրերը նման էին: Երկուստեք կորցրել էին ընտանիքները: Նրանք վեր էին ելել մանր-մունք

հոգսերից...

Կելսեն կամ չեն ելնի հոգ-որսերը, ինչ փույթ: Նրանք իրենց համար վճիռ կայացրել են՝ կյանքները դնել Ազգի գոհասեղանին: Յոգ-որսերը փորձում են փրկել հոգին, փորձության են հանում հոգու գործերը... Չաղաթայները իսլամ են պարտադրում, ի՞նչ անի հայը, երբ մի կողմից Բայազետն է իսլամ պարտադրում, մյուս կողմից՝ Լանկ Թամուրը, մի՛թե երկրնտրանք կառաջանա հայի մեջ, չե՞ որ դարեր առաջ հայերին մի անգամ նոր կրոն պարտադրեցին՝ քրիստոնեությունը, – երբ քննում են վիճակը, ազգի գործերը՝ եզրահանգումները, գլուխիդ պտտվում է, ուզում են գոռալ՝ ի՞նչ արեցիք հայեր... Ոչ, այլ-ս թույլ չենք տա ցնցահար անել մեր հոգին... Տեր Աստված, մինչ- ե՞րբ փորձես մեզ՝ հայերիս...

* * *

Անահիտն ու Արփենին մենակ էին: Անահիտը խոսելու ցանկություն չուներ: Մի քանի օրվա ընթացքում այնքան բան էր տեսել, որ կորցրել էր գլուխը: Չաղաթայների գերությունից ազատվելը ընդունեց շնորհակալական խորին զգացումով, ընդունեց որպես Աստծո բարության վկայություն: Նա քոյրական սիրով էր խորհում Չահիրի մասին: Առաջին անգամ խորհեց այրմարդու մասին, սակայն ոչ Չահիրի մասին, նրա ուշքն ու միտքը թովման էր: Աբեղան գեղել էր աղջկան, թե- այդ ամենից անտեղյակ էր: Մի քանի անգամ էին հանդիպել, սակայն աղջկան թվում էր, որ տարիների ծանոթ են: Նա խոր թախիծ էր տեսել արեղայի աչքերում: Խորհում էր, որ այդ կապույտ աչքերը չեն կարող չճառագել սիրով: Վախենում էր, որ Աստծո նվիրումի թախիծն է, սակայն նա արեղայի աչքերի խորքում նրա կյանքի սեր էր տեսնում, երջանկության ու սիրո սպասում, միջահասակ, մկանուտ, սպիտակող քունքերով, որ առանձնակի շուրջ են տալիս նրա դալով դեմքին: Աղջկը նրան նմանեցնում էր վանքի սրբապատկերներին...

- Որքան թախիծ կա նրա աչքերում, - ասաց, հոգոց հանեց:
- Ո՞ւմ աչքերում, - ուրախանալով, որ տիրուիին ուշքի է եկել, հարցուց Արփենին: - Աբեղայի՞, որի՞, մեր Յայկարամի՞, թե՞ վասահոր մտերիմի: Ո՞ւմ մասին է խոսքդ:
- Թովմա է անունը, որ գրկախառնվեց Չահիրի հետ:
- Ես երջանիկ եմ, որ մեզ հայ է փրկել: Ես առաջին պահից հասկաց, որ նա հայ է... ինչ այրմարդ է, - հանկարծ վախեցավ - վատ մի խորհիր իմ մասին, սակայն, իրոք, շատ գեղեցիկ այրմարդ է, - նորից շառագունեց Արփենին:
- Յետո ինչ, որ իսլամ է ընդունել, - հասկանալով նաժիշտի չասածը, շարունակեց, - նա վերջերս է իմացել ծննդյան գաղտնիքը: Մահմեդական սովորույթով նրան թլփատել են...
- Մեղա՛, մեղա՛, - խաչակնքեց Արփենին:
- Այլ-ս ի՞նչ մահմեդական, երբ դարձի է եկել, - երկար լոեց, ապա հարցուց համարյա շշուկով, - ինչու են այդքան դալկադեմ արեղաները,

Մի՞թե պատճառը ծոմապահությունն է ու պասերը կամ աղոթքները:

- Թովմա աբեղան նման չէ մնացածներին: Նա կրվել է Բարդողի վրա: Նրան Բարդողի եպիսկոպոս է կոչել ինքը՝ Մարտիրոս դյուցազնը: Նրա մեջ ինչ-որ աշխարհական բան կա, նրա աչքերի թախիծը...

Անահիտը սիրով նայեց Արփենիին: Նա խելացի աղջիկ է, ասել է թե, իրոք, նա հաճելիորեն տարբերվում է մնացածներից – անսխալ է նրա ընտրությունը: Տեր Աստված, ի՞նչ ընտրության մասին է խոսքը: Վախեցավ շարունակել, սակայն սիրո կարոտ հոգուն չես ստիպի լոել, ստիպել չերագել:

- Դո՞ւ ել ես նկատել: Նրա աչքերում ինչ-որ աստվածային իմաստ կա: Նրա աչքերի կապույտը հարգի կլիներ որ-է իշխանազունի, քան Աստծոն ծառայի,- գլուխը թափ տվեց,- արի վերջ տանք այս խոսակցությանը: Ծնորհակալական աղոթք հղենք առ Աստված, աղոթենք մեր նահատակների՝ հայրիկի ու մնացածների համար, որ ընկան մեր սիրելի Բջնին պաշտպանելիս: Երբ մի փոքր հանգստանաք, կխնդրեմ վասահորը մեզ ուղարկի Տայք: Զգիտեմ ինչպես պիտի մայրիկին պատմեմ հայրիկի գոհկելու մասին, լեզուս չի գորի, վախենում եմ չղիմանա, առանց այս ել տկար ե...

- Մենք՝ հայերս, տոկուն ենք, ասում եր Վաղինակը: Այսքան դիմացել ենք, ելի կդիմանանք, կդիմանա նա- մայր իշխանուիին, քանզի եղբայրդ դեռ պատանի է, պարտ է դիմանալ, մինչ- եղբայրդ կապի իշխանի սուրը:

- Իրավացի ես, Արփենի: Մեզ դժվար կյանք է բաժին ընկել, շատ դժվար...

* * *

Ուշ աշուն եր: Չամին ոռնում եր Տփիսիսի փողոցներում: Մարդիկ հույսով, նա- անհույս երկինք էին նայում, սպասում էին ծյալն գալուն:

Լանկ Թամուրի հորդաների հարձակման լուրը տակն ու վրա եր արել երկիրը: Մինչ- Վրաստան հասնելը չաղաթայները գրավել էին Յայաստանն ու Աղվանքը: Արդ, Լանկ Թամուրը գալիս է Վրաստան: Երկրի վրա մահվան սպառնալիք եր կախվել: Մարդիկ երկինք էին նայում, աղերսում էին Աստծուն ծյուն գար, բուք ու բորան աներ, կարծում էին ձմեռը կարող եր փակել չաղաթայների ճամփան:

Վրաց ավագանին տագնապի մեջ եր: Դեմ ելսել չաղաթայներին անհիսար եր: Ականշալուր էին, որ Աղվանքում նրանց չեին դիմադրել, միայն Յայաստանում եր, որ հայերը, խենթ ու խելառ հայերը, դեմ ելան, իսկ իրենք ի՞նչ անեն: Լանկ Թամուրը չգնաց Բայազետ սուլթանի վրա, թիկունքում չեր կարող թողնել հայերին: Տիրակալի կողմից ոչխար կարծած հայ շինականները խառնեցին նրա հաշիվները: Թամուրը

հասկացավ, որ հայերը լուրջ հակառակորդ են:

- Հայերը թագավոր չունեն, ամեն իշխան, ամեն տանուտեր ինքն է վճռում իր ապրելու, մեռնելու հարցը, իսկ աստ, նախնյաց իրավունքով մենք ենք նստած գահին: Մենք պիտի վճռենք երկրի ու ժողովրդի ճակատագիրը: Հայերը կռվեցին, վկայեցին ազատ ապրելու իրենց իրավունքը: Նրանք կան - փառք նրանց, իսկ մենք...

Թագավորը մատներով թմբկահարում էր գահի արմսկակալները, նայում որդիներին՝ Գեորգին, Կոստանդինին, Դավթին: Սթափվեց, երբ Կիր Աննան քնքշորեն շոյեց ձեռքը:

- Այո,- միտքը շարունակեց թագավորը,- ուր որ է, Լանկ Թամուրը կիայտնվի Տփիսիսի պարիսալների տակ: Դեմ ելսել, ճակատել չենք կարող, հզոր են իրենց ահավոր բազմությամբ...

- Տե՛ր արքա, դիմիր Յոռմին, Բյուզանդիային,- անհամարձակ ասաց թագուհին, լրեց, թեր-ս անօգուտ ու ուշացած համարեց առաջարկը:

Թագավորը նայեց կնոշը, մի դառը ժպիտ խաղաց դեմքին:

- Սիրելի՞ս, Բյուզանդիան խեղճացել է Բայազետի մահացու գոկախառնման մեջ, ամիսների հարց է, քաղաքը կընկնի: Այո՛, այս վիճակում երկար չի դիմանա Կոստանդնուպոլիսը: Այլ-ս ինչ խոսենք մնացածներից, թեր-ս միայն Թողթամիշը:

- Մեր թշնամու թշնամին մեր բարեկամն է,- Դավիթն էր, կրտսեր ողոին,- տեր արքա, մի՞թե չեն օգնի:

Թագավորը զայրացավ:

- Սպասի՛ր, մեր հար-աններից ամենազորեղը Բայազետն է, սակայն ի՞նչ ակնկալությամբ կելսի Թամուրի դեմ, երբ սա ամեն անգամ խույս է տալիս պատերազմից: Այո՛, դեռ այդ առյուծները չեն քզկտելու իրար: Հայերը խառնեցին նրանց հաշիվները: Թամուրը կարծում էր հայերը աղվանների պես կինազանդվեն, սակայն չարաշար սխալվեց: Սա առաջին դեպքը չէ, երբ հայերը կրծքով պաշտպանում են մեզ, իսկ մե՞նք... Ավա՛ղ, հաճախ մոռանում ենք այս պարագան:

Դավիթը ցանկացավ խոսել: Գեորգը բարձրացրեց ձեռքը, կրտսեր եղբայրը լրեց:

- Եթե Բայազետն ու Թամուրը պատերազմեն, թեր-ս մենք փրկվենք...

Թագավորի ձեռքերը բռունցքվեցին, մռայլվեց:

- Այդ պատերազմում ես Լանկ Թամուրին հաղթանակ եմ գուշակում, սակայն այստեղ կա մի հանգամանք, տիրակալը երբեք չի մնում զավթված երկրում: Ետ է քաշվում, իսկ եթե հաղթի Բայազետը, դա կկործանի միջազետքի ժողովուրդներին: Ափսո՞ս, սակավ են մեր ուժերը,- գլուխը կախեց:

- Հայ՞ր արքա, ի՞նչ ես վճռել, ասա՛ վճիռդ, - Գեորգն էր:

- Ի՞նչ եմ վճռում,- զայրացավ թագավորը, - ազնաուրները մի գլուխ

խորհուրդներ են տալիս, մի կողմից էլ կաթողիկոսը: Նա ել իր վանքերի մասին է խորհում, - ոտքի ելավ: Յաղթ ուսերը գծագրվեցին աշտանակների լուսերի մեջ,- ո՞վ կփրկի ժողովրդին: Ակսեց շրջել գահասրահում, որդիները ոտքի ելան, ձեռքով ևշան արեց նստել:

- Սիրելին իմ, Բագարատ, տեր Վրաստանի, դու պիտի անես այն, ինչ ձեռնտու է երկրին, ժողովրդին: Ճակատել չաղաթայների դեմ չենք կարող: Յարկ է հնազանդվել ճակատագրին, փրկել երկիրը կործանումից...

- Մայր թագուհի, ի՞նչ ես խոսում,- Դավիթն է, ամեն ինչում համարձակ ու աճապարող, - մի՞թե պիտի նվաստանանք:

- Դու լրի՛ր,- սաստեց երեց Եղբայրը, - Մայր թագուհին իրավացի է: Աղյատ է խորհում նա- Վրաստանի հզոր արքան: Ես հասկանում եմ քեզ, հայր, դու պատրաստ ես անգամ կյանքդ տալու, սակայն...

Թագավորը սիրով նայեց Կիր Աննային:

- Վրաստանի թագուհին ոչ միայն գեղեցիկ է, նա- խելացի,- Ժատաց թագավորը: Ժպիտը չստացվեց, կծկվեց դեմքը,- Վճիռը մեր մեջ ծնվեց այն ժամանակ, երբ չաղաթայները լցվեցին Պարսկաստան, ծնկի բերեցին նրան: Ես հասկացա, որ այդ արհավիրքը չոքելու է նա- մեր դրանը: Չինգիզ Խանի հորդաներից հետո աշխարհի այսպիսի մեծաքանակ բանակ չի տեսել,- մռայլ նայեց որդիներին, - կգա ժամը, չգիտեմ երբ կիհնի, երկու գազանները իրար կհոշոտեն: Ողջ մնացածի հետ թեր-ս հնար լինի լեզու գտնել: Կարծյոք, այդ պատերազմում կիաղթի Լանկ Թամուրը: Մի մոռացեք, որ կա նա- Թողթամիշը, սա նույնական կցանկանա իր հաշիվները մաքրել Լանկ Թամուրի հետ, սակայն չմոռանաք, որ հաղթողը կարողանում է շարունակել պատերազմը, երբ մի փոքր դադարից հետո համալրում է ուժերը: Եթե հաղթի Թամուրը, ապա ախորժակը կբացվի ու կգնա Ռուսիայի վրա, իսկ դա կործանում է նրա համար, չմոռանանք մի հանգամանք Էլ՝ նա ծեր է - ոչ անմահ: Նրա մահից հետո չաղաթայների պետությունը կմասնատվի, որդիներն ու թոռներն իրար մեջ կբաժանեն պետությունը: Այդ ժամանակ էլ ոտքի կելնեն ստրկացված ժողովուրդները...

- Տարիներ են պետք դրա համար, իսկ վաղը չոքել է դռներս,- թագուհին դաստարակը տարավ աչքերին:

Թագավորը զայրացած բռունցքը վեր պարզեց:

- Այո՛, վաղը եկել է: Մենք կփրկենք Վրաստանը... Մեզ կհանձնենք Թամուրի ձեռքը...

- Ո՛չ, հայր, Թամուրը բորենի է, նա քեզ կհոշոտի, Վրաստանն էլ հետդ:

- Մենք թագավոր ենք, հպատակների հայր, իսկ հայրը պիտի ապրի զավակների համար: Այլ ելք չենք տեսնում:

Ներս ընկավ արարողապետը: Նրա հետ էլ թիկնապահներից մեկը: Յասկանալի դարձավ՝ առանց թույլտվության ներս գալը պատճառ ու-

Ներ: Թագավորը բարձրացրեց ձեռքը:

- Տե՛ր արքա, Լանկ Թամուրի հորդաները մտան Վրաց հողը:

Թագավորի այտը շղաձգվեց, բարձրացրեց մականը:

- Վաղև առավոտյան ազնաուրներին, զորապետներին հրավիրենք խորհրդի,- երբ արարողապետն ու թիկնապահը դուրս գնացին, դարձավ որդիներին,- Լանկ Թամուրը ոսկեպաշտ է: Նա ժառանգաբար չի հասել իշխանության, դա նշանակում է նրա Աստվածը ոսկին է: Ճոխ ընծաներ, ընտիր նժուգներ, գենքեր, գոհարեղեն, թանկարժեք դիպակներ կտանենք: Լիահույս եմ՝ չի ավերի երկիրը, - գլուխը կախեց, զգացվեց, որ չեր հավատում իր իսկ խոսքերին:

- Եթե քեզ գերի տարավ, երկիրը անտեր կմնա,- ձեռքը կրծքին տարավ թագուհին:

- Եթե գերի տարավ, մեզ հետ կլինի մեր որդին՝ Դավիթը: Դու՝ Գեորգի, Կոստանդինի հետ կմնաք երկոում, կքաշվեք լեռները,- ձեռքը թափ տվեց,- ինչ եք կռավում հանց ագռավ, մի՞թե ես առաջին վրաց թագավորն եմ, որ բարձրանալու եմ գողգոթա: Գնացե՛ք, մեզ մենակ թողեք: Լույսը կբացվի, բարին հետը: Թող Տեր Աստված փրկե երկիրը Հայրենի...

* * *

Տագնապած հոգով ծնկել էր խաչելության առաջ: Առաջին անգամ առ Աստված հիված աղոթքը շշուկ էր դարձել:

- Տե՛ր Աստված, մեղավոր եմ, փրկյա՛ հոգիս, հասու եմ անգամ ապաշխարանքը չի օգնի,- աբեղան ցածրացրեց ծայնը,- Տե՛ր Աստված, չԵ՞ որ ընդունում ես երկրային սերը... Ների՛ր, լինելով կուսակրոն, կին անրշեցի, որ բարձր է ինձանից իր մաքրությամբ, կրած տառապանքներով, ապրած վախերով: Նա իշխանուիի է, ես՝ քո ծառան: Ես փուշ եմ, նա վարդ... Ողբամ վիճակս, ողբամ ու հազար անգամ մեղա գամ, զի մոռացա սանս, անրշեցի այդ կնոշը: Ինչո՞ւ հոգիս պղտորեցիր, չԵ՞ որ երդվել էի անմասցորդ քեզ նվիրվել ու ազգիս փրկության գործին: Ների՛ր, տեր Աստված, որ մի պահ մոռացա ով լինելս, ցանկացա կին առնել, ամուսնանալ առագաստ անրշեցի այս ժամանակ, երբ ազգիս գոյությունն է վտանգված, հավատքն է փորձության դրված, նա- հայ լինելը, որ մենք վկայում ենք խարույկների վրա, մարտի դաշտերում: Վտանգված է քրիստոնեությունը, որի կուրծքն են բզկտում մահմեդական յաթաղանները:

«Այդ ամենը հոգու կործանում է բերում, տաժանք», - խցում քամի զգաց:

Մարդ էր Ներս մտել, դուռը բաց էր, ետ նայեց:

- Անահիտ իշխանուիի՞,- ապշեց, չոքած էր, ուզեց հօհոալ,- Տեր Աստված, ինչո՞ւ ես ծաղրում երջանկության խարկանքով, - ոտքի ելավ, տեսիլք մնաց, խարկանք չեր:

- Յայր սուրբ, Եկա խնդրանքով: Սրբազնն ասաց, որ վանքի գոապահոցը քեզ է հանձնված, եթե բարեհաճեիր, կնայեի մատյանները:

Թովման ուշքի Եկավ: Կարողացավ միայն գլխով անել, լեզուն առնվել էր: Անահիտը կանացի բնագդով հասկացավ աբեղայի հոգում կատարվածը, օգնության շտապեց:

- Կցանկանայի մի անգամ Էլ ընթերցել Մեծ Զերթողի «Յայոց պատմությունը»՝ հատկապես Ողբը: Սրբազնն ասում է գրապահոցում կայսնպիսի մի օրինակ, որ հիացնում է ծաղկողի անզուգական վարպետությամբ, ճաշակով, դժվար թե մարդու հանճարը մի նոր այդպիսի հրաշք արարի...

- Այո՛, օրիորդ: Ցավոք, ծաղկողի անունը հայտնի չէ, համեստ մարդ է եղել:

- Նկարները ոսկեզօծ են, գունավոր: Գլխատառերը թռչնակերպ են, արված են այնպիսի կատարելությամբ, ասես կենդանի լինեն,- Թովման սիրած նյութի մասին խոսելիս տիրապետեց իրեն, ժպտաց, որից աչքերի կապույտը ավելի խտացավ: Աղջկան թվաց, թե ծովակն է լողում նրա աչքերում, որ կարող էր սուզվել աբեղայի աչքերի լաշվարդի մեջ: Թովման ետ գրկեց գլուխը, լույսը ընկավ գլխին, մազերն ասես հրդեհվեցին:

- Ողբում եմ քեզ, հայոց աշխարհ: Ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնիդ, որովհետ- վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ: Վրորվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությունը, չարափառությամբ, - աբեղան լրեց, ոչ նրա համար, որ անգիր չգիտեր ողբը, ո՞չ, ևա կարող էր ամբողջ մատյանը հիշողությամբ արտասանել: Նա հուզված էր օրիորդի համար, որին անգամ հոր մահը, գերությունը, հոգեկան տառապանքները չեին կարողացել ընկճել, կտրել հայոց պատմությունից:

- Խղճում եմ քեզ...,- շարունակեց Անահիտը ու չհասկացվեց ո՞ւմ էր խղճում՝ աբեղայի՞ն, նրա անհույս զգացմունքնե՞րը, թե՞ շարունակում էր խորենացու պատմությունը: Լռեց, հայացքով շոյեց աբեղային, որի աչքերում նորից թախիծ էր բուն դրել: Իսկ թախիծի խորքում, շատ ու շատ խորքում սեր էր ծնվում: Մի անհույս սեր, որ իր եռթյամբ երկնային էր, քանզի ներշնչված էր աստվածներից: Աղջիկը այրում էր ու այրվում: Նրանց միշ- մի գրկաչափ տեղ կար, որ լցվել էր գրկախառնման տեսչանքով, սակայն երկուստեք վախենում էին անցնել այն: Ծանր կլիներ այդ քայլի արժեքը:

Չգիտես ինչպես եղավ կամ որտեղից ձեռք բերված քաջությամբ աղջիկը քայլ արեց, դա դեմ էր քրիստոնյա օրիորդաց սովորույթին, թեր-ս նրա մեջ հառնել էր արիական քույրերի ըմբոստ հոգին, որ կա ամեն հայի մեջ: Անահիտը բարձրացրեց ձեռքը, շոյեց աբեղայի այտը:

Թովման քարացավ: Աղջիկն ինքն իր արածից ապշահար, ետ քաշ-

Վեց, ձեռքերով ծածկեց դեմքը, լաց եղավ

- Ներիր, հայր սուրբ, քո թախծոտ աչքերը նմանեցրեցի սրբապատկերի աչքերին, ասես ձեռք տվեցի սրբապատկերի...

- Եթե այդպես ես խորհել,- կերկերուն ձայնով ասաց Թովման,- ապա չես մեղանչել, զի այդ ամենը Տիրոջ կողմից քեզ փորձելու համար է, խարկանք է՝ կանցնի, ինչպես ամեն բան անցողական է այս կյանքում, ունայնությունը,- Թովման ավելի մոայլվեց,- մեր կյանքը թաղված է աղոթքների մեջ...

Անահիտը զարմացավ, նայեց հետաքրքրվեց.

- Սպասի՞ր, հայր սուրբ, այդ ի՞նչ ես խոսում: Մի՞թե ես լսում եմ Թովմա քաջ աբեղային՝ Բարդողի եպիսկոպոս հռչակված հոգ-որին: Ի՞նչ ես բարբառում ունայնության մասին, ապրել է պետք, աբեղա՛, կրվել ազգի համար: Ուշքի եկ, Յայր սուրբ: Մի կարծիր ինձ անիմա ազգի ու կրոնի պատմության: Ես քիչ բան գիտեմ կյանքում, սակայն հայոց պատմությունը լավ գիտեմ: Գիտեմ, որ ազգը կրվելով է ապրել, արդ, նույն է մեզ պարտադրված՝ ապրել կրվելով: Սա հորս խոսքերն են, որ ասաց մարտից առաջ, իսկ ևս իմաստուն մարդ էր, հայր սուրբ, ունայնությունը քարոզելով ազգ չես փրկի: Մի՞թե դու Թովմա աբեղան ես, որին Լանկ Թամուրը կտոր-կտոր կանի Բարդողի վրա հաղթանակի պատարագ մատուցելու համար,- նայեց ուշադիր, ինչ-որ բան անցավ մտքով, - թե՞ ուզում ես ինձ ետ պահել վտանգներից, զուր ես չարչարվում - մի կարծիր ինձ փափկասուն: Ես կարող եմ սուր կրել: Ես այն հայ օրիորդներից եմ, որոնք կրվի դաշտ իշան Ավարայրում, իրենց արյամբ ներկեցին դաշտը սուրբ... Գիտցի՞ր, ես արիական օրիորդ եմ ինձ համարում - ինձ անիմա մի կարծիր մինչ քրիստոնեությունն ունեցած մեր ազգի պատմության... - քմծիծաղ տվեց,- կանայք ինձանից խուսափում եին, քանզի խառնվում եի այրմարդկանց գործերին: Կարող եմ կրվել նիզակով, սրով, իմ նետը չի վրիպում թիրախից: Չուր չեն ինձ հոգով ըմբռստ հռչակել: Այդ մասին կարող ես հարցնել Յայկարամին: Նա գիտե, որ ինձ ըմբռստ է կոչել Վանական արքեպիսկոպոսը:

Թովման հիացած, մի փոքր էլ ընկճված նայում էր օրիորդին:

- Ների՞ր, օրիորդ: Ես իրոք ուզում եի քեզ հեռու պահել վտանգներից, զի դու առանց այս ել շատ ես տանչվել, կորցրել ես հորդ... Ես սուկ աբեղան եմ, դու՝ իշխանուիի: Ազգին եմ նվիրված, ազգի ծառա...

- Այլ-ս ի՞նչ սոսկական, երբ ազգի ծառա ես կոչում քեզ: Ազգի ծառան պիտի նման լինի հորս, որ սուր էր կրում խաչի հետ: Դա է փրկության պայմանը հայոց, - աղջիկը ետ քաշվեց աբեղայից, նստեց աթոռակին:

Արդեն այլ կերպ էր նայում աբեղային, որը դեռ կանգնած էր նրա առաջ:

- Մի քանի օրից գնալու եմ Տայք, մորս մոտ, - հանկարծ ժպտաց չարաճի,- գնանք միասին, կտեսնես Տայքը, մարդկանց, կպատմես Բար-

դողի կռիվների մասին:

- Անահի՞տ, Ներող Եղիր, իշխանուիի: Ինձ ծանր գործ է սպասում: Ես պիտի ազատ լինեմ ամեն տեսակի կապվածություններից ու պարտքից: Աստծո - մեր սուրբ գործից զատ...

Վաղուց եր խորհել այդ առաքելության մասին, նվիրվել Ազգի փրկության գործին, նրա ըմբռստացմանը, սակայն այստեղ, խոսելով օրիորդի հետ, հասկացավ՝ վճիռը հաստատ էր, - իր կյանքի նպատակը Ուխտ կազմելն է:

- Եվ քո սրտում տեղ չպիտի՞ թողնես կնոջ սիրո համար,- հարցորեց աղջիկը:

Թովման չլսելու տվեց աղջկա վերջին խոսքերը: Նա այլ բան էր խորհում: Երեկոյան ընկերներով պիտի գնային երդում տալու սուրբ սեղանի առաջ, կազմելու Յայոց Գաղտնի Ուխտը: Ինչպե՞ս գնային երդում տալու սուրբ սեղանի առաջ, կազմելու Յայոց Գաղտնի Ուխտը: Ինչպե՞ս ասեր աղջկան, իսկ ասելու համար հարկ էր ուսենալ ընկերների համաձայնությունը: Իսկ եթե չհամաձայնվեին, այս ամենը խորհել էր տալիս, անհանգստացնում:

Յավաքի ժամը մոտենում էր: Աբեղան վճռեց գնալ վճռական քայլի, նախ երդվեցնել աղջկան խաչելության առաջ

- Օրիորդ, Երդվիր խաչելության առաջ, հորդ, նահատակ Վահան իշխանի հիշատակով, որ ասածներս գաղտնի կպահես, որպեսզի շատ ու շատ մարդկանց մահվան պատճառ չդառնաս, նա- իմ, - լոեց, ամեն ինչ խառնվել էր, աղջկա նկատմամբ ծնված սերը, նրա այրական առարջների մասին լուրերը...

- Երդվում եմ սուրբ հիշատակով, մեր նախնյաց փառքով, որ կմեռնեմ, սակայն կպահեմ գաղտնիքը: Երդվում եմ,- ասաց, համբուրեց խաչելությունը:

Թովման սկսեց քայլել խցում, ավելի ստույգ դրանք շրջադարձեր էին, քանզի խուցը փոքր էր, չորս քայլ երկարությամբ, այդքան էլ լայնըով:

Կանգ առավ աղջկա առաջ:

- Կեսգիշերին հավաքվելու ենք սրբազանի մոտ: Այստեղ կլինեն Վահեն, Ռոկանը, Յայկարամը, Ասողիկը, Փայլակը,- Ժատաց մեղավոր, զգաց, որ մի պահ մոռացել էր Զահիրին,- հարկավ մեզ հետ կլինի Զահիրը: Եախսկոպոսի սուրբ օրինանքով կստեղծենք Յայոց Գաղտնի Ուխտը ընդդեմ Լանկ Թամուրի, ահա - ողջ գաղտնիքը: Մենք պիտի գործենք Ուխտի անունից, սակայն Ուխտի անդամների անունները պիտի գաղտնի մնան: Սպասենք մի փոքր, թեր-ս ընկերներս համաձայնվեն քեզ վերցնել Ուխտի մեջ, - այդ ամենը պիտի արվի նա- սրբազանի թույլտվությամբ,- սիրով նայեց Անահիտին, այդ հայացքը զարմացրեց աղջկան, շառագունեց, քանզի աբեղայի աքերում նա դեռ միևն այդ սեր չէր տեսել: Անահիտը քայլ արեց, սակայն Թովման բարձրացրեց ձեռ-

քը,- ես երազում եմ գրել մեր օրերի պատմությունը, Լանկ Թամուրի արշավանքների ու ժողովրդյան դիմադրության մասին: Իսկ գրել մեր Ուխտի մասին չեմ կարող, հարվածի տակ կդնեմ Ուխտի անդամներին:

Անահիտը սիրով նայեց աբեղային:

- Ազգանվեր գործ ես ձեռնարկել, հայր սուրբ

Լուցին, դրսից ձայներ լսվեցին: Ներս մտան Վահեն ու Ասողիկը: Զարմացան աբեղայի մոտ Անահիտին տեսնելով: Վահեն ցանկացավ բացատրություն պահանջել, թովման կանխեց նրան:

- Անահիտը մեր քույրն: Ես նրա մասին էի ուզում ձեզ հետ խոսել:

- Սպասեք մեր եղբայրներին,- խոսքը չէր ավարտել՝ ներս մտան Ուկանն ու Փայլակը, նրանց հետ-ից եկան Զահիրն ու Յայկարամը:

- Եղբայրնե՞ր, մեզ հետ է Բջնիի նահատակ իշխանի դուստրը՝ Անահիտը, - սպասեց, ասես ուզում էր, որ ամենքն էլ հասկանային, որ օրիորդի այստեղ հայտնվելը պատահական չէր, - նստե՞ք, եղբայրներ, մինչ-սրբազանի մոտ գնալը հարկ է քննենք մի հարց,- ձեռքով նստելու հրավիրեց ընկերներին:

Մրանք զարմացած էին, եկել էին սրբազանի մոտ գնալու, ինչպես չզարմանային, երբ այս ուշ ժամին աբեղայի մոտ տեսան օրիորդին: - Աստծոն նախախնամությունը մեզ մոտ է բերել Անահիտին: Նա կամենում է մեզ հետ լինել Ուխտի մեջ:

- Թովմա՛, ուշքի եկ,- խոսեց Ասողիկը, - սա այրմարդու գործ է: Մենք կովի ենք ելուում...

Մթնոլորտը տիաճորեն սրվեց:

- Սպասի՛ր, Ասողիկ, մի՛ աճապարիր: Դու չես ճանաչում օրիորդին, - Ժպտաց Յայկարամը, - Լուսահոգի Վանական արքեպիսկոպոսը նրան ըմբոստ հոգի եր կոչել այրմարդկային արարքների, գենք կրելու համար,- աբեղայի միջնորդությունը տեղին եր, ժամանակին:

Թովման հարգանքով նայեց Յայկարամին: Նրա միջնորդությունը մի փոքր մեղմեց մթնոլորտը:

- Ծնորհակալ եմ Յայկարամ եղբայր: Ես կարող եմ պատասխանել իմ եղբորը: Ասողիկ եղբոր զարմանքը ընդունում եմ, սակայն կնոշ նկատմամբ կասկածը՝ ոչ: Դու, թեր-ս, լավ չգիտես հայոց պատմությունը, կամ մոռացել ես, քիչ չեն եղել դեպքեր, երբ հայ կանայք ու օրիորդները կովի են ելել Յոդ Յայրենիի համար: Վարդանանց օրերին կովի դաշտ իշած գնդերի թվում կանանց գունդ կար: Յայ կանանց արևաներկ գիսակները փուլեցին մարտի դաշտում, մատաղ կրծքերը խոցվեցին պարսից սրերից ու նիզակներից, սակայն նա- այդ արյան գնով փրկվեց Յայրենին: Օրեն չէ,, Ասողիկ եղբայր ինձ գրկել Յայրենյաց կովից:

Անահիտի հայացքը վառվում էր սրբազան կրակով, ասես հուշ դարձած արիական դիցուհի լիներ, ներկաները ազդվեցին:

- Ներող եղիր, քույր Անահիտ, - Ասողիկը մեղավոր Ժպտաց, - քույր

Եղիր մեզ համար: Յը, ի՞նչ կասեք, եղբայրներ:

Սրանք ճարահատյալ ժպտացին, այլ ելք չկար, քանզի օրիորդն արդեն տեղյակ էր Ուխտի մասին: Մի՞թե օրեն է կնոշը ետ պահել հայրենյաց կռվից, Թովմային, որին առաջին պահին մեղադրում էին, հասկացան, որ օրիորդի մասնակցությունը գործին վնաս չի տա: Օրիորդի օգտին էր նա- Յայկարամի խոսքերը⁹:

- Ծանր գործ ենք ուսելու, քույր Անահիտ,- խոսեց Վահեն, - պատրա՞ստ ես կիսելու զրկանքները, պատրա՞ստ ես,- հապաղեց մի պահ, ապա հարցրեց սառը, խիստ ձայնով, - պատրաստ ես նահատակվելու հանուն հայրենիի:

- Պատրաստ եմ, Վահե եղբայր: Երդվում եմ սուրբ հորս հիշատակով, նա- հայոց նահատակներով, նրանց շիրիմներով: Երդվում եմ...

- Ապրե՞ս, - հասկանալով կատարվածը, հուզվեց Զահիրը, համբուրեց աղջկա ճակատը:

Ուխտի անդամները մոտեցան Անահիտին, համբուրեցին նրան:

- Դու մեր Ուխտի դիցուհին ես՝ Անահիտ, - ինքն իր ասածից զարմացած, պահի ոգ-որանքի մեջ հեթանոսացած, ասաց Յայկարամ աբեղան, - որքան ուրախ կլիներ լուսահոգի Վահան իշխանը:

Երբ հերթը հասավ Թովմային, սա մի պահ կարկամեց: Շառագունած Անահիտը ճակատը մոտեցրեց համբույրի: Թովման դողդոջ ձայնով ասաց.

- Ուխտդ ընդունելի, օրիորդ, - հազիվ շրթումքները հաեց աղջկա ճակատին:

Մի ակնթարթ, բոլորի համար աննկատ, աղջիկը սեղմվեց աբեղայի կրծքին:

Սակայն ոչ, Վահեն որսաց այդ շարժումը, ժպտաց քթի տակ:

- Իմաստուն նկատեց Յայկարամ եղբայրը, դու մեր Ուխտի դիցուհին ես: Գևացինք, եղբայրներ, անհարկի սպասել չտանք սրբազնին:

Մտան սրբազնի օթ-ան: Յովիաննես եպիսկոպոսը հագնված էր տոնականորեն, ինչպես լինում է հաղթության պատարագի ժամանակ: Նա երիտասարդացել էր, մոռացել տկարությունը: Նրա հետ էին մերձավորները՝ Թորգոմ ու Վրթաննես աբեղաները: Սրբազնը նրանց վստահում էր, ինչպես ինքն իրեն:

- Ձեզ հետ տեսնում եմ օրիորդ Անահիտին, փարատեք տարակուսանքս: Ի՞նչ առիթով է նա ձեզ հետ,- սրբազնի հարցն ուղղված էր Վահեին, որին ընկերները անխոս համաձայնությամբ իրենց գլխավոր էին ընտրել:

- Անահիտը մեր քույրն է, Ուխտի անդամ, - ասաց Վահեն, - նա երդվել է:

- Ընդունելի՝ է,- ժպտաց սրբազնը: Չնեց նրանց մեկիկ-մեկիկ, հոգոց հանեց,- որդիք, մեզանից զատ ոչ ոք չպիտի իմանա Յայոց Գաղտնի Ուխտի անդամներին – այն պարագան, որ Ուխտը կազմվել է

հոգ-որ դասի կողմից, - խոր շունչ քաշեց, ասես զսպելու համար սրտի ծակոցները, - նստեք եղբայրներ,- ցույց տվեց աթոռակները,- նորություն չէ - ոչ ել ասեմ զարմացնելու համար, երկիր մտած յուրաքանչյուր նվաճող առաջին հերթին պարզում է դիմադրության գլխավորներին: Լավ ի միտ արեք, որդիք, հայ ժողովուրդը կորցրել է գահը, երկիրը մասնատված է, միակ համախումբ ուժը հոգ-որ դասն է, որ ի զորու է ժողովրդին հանել սրբազն պատերազմի: Եթե Հանկ Թամուրը իմանա, որ Ուխտը կազմել է հոգ-որ դասը, կոչնչացնի հոգ-որներին, կավերի եկեղեցիներն ու վանքերը: Ժողովորին կթողին առանց հոգ-որ առաջնորդի, իսկ դա մահ է, լիահույս եմ, հասկանում եք այս վտանգը: Այ, տեսք, Վրաստանը թագավոր ունի, տեր ու տևորեն, սակայն թույլ է հոգ-որ դասը, - մատը վեր տնկեց, - հայերս կորցրեցինք թագավորությունը, սակայն կա հոգ-որ դասը, որ հզոր է առ Աստված իր ունեցած նվիրումով ու երբեք չի լքի իր հոտը,- հայացքը խստացավ, - որդիք ոչ մի մագաղաթ չպիտի գրվի, ոչ այսօր, ոչ վաղը, - նայեց Թովմային, - Յայր սուրբ, գիտեմ՝ նոթեր ես գրում մեր օրերի պատումի մասին: Թովմա՛, սիրելիս, ես կուգեի, որ ժողովուրդը իմանա ճշմարտությունը, ոչինչ մի գրիր Ուխտի մասին, իսկ եթե գա ժամը, ժողովուրդը կասի իր երախտիքի խոսքը... Յուսանք, կռվենք ու սպասենք Աստծո Որդու գալստյանը: Յանուն Յոր, Որդվո ու Յոգվույն սրբո, ամեն:

Թորգոմ արեղան սրբազնին մեկնեց ոսկեզօծ ավետարանը:

- Երդվենք, սիրասուն որդիք, - դու՝ հայոց օրիորդ, որ կամոքն Աստծո ու մեր հոգու թելադրանքով կազմեցինք Յայր Գաղտնի Ուխտը ընդդեմ Հանկ Թամուրի հորդաների: Երդվենք հավատարիմ մնալ, եթե Աստծո կամոք նահատակվենք հանուն սուրբ գործի, երջանիկ լինենք, տանելով մեր խաչը այս կյանքում: Յանուն Յոր, Որդվո ու Յոգվույն Սրբո, ամեն:

Յամբուրեց ավետարանը: Ուխտի անդամները ձեռքերը երկարեցին ավետարանի վրա:

- Երդվո՛ւմ ենք, - արտասանեցին միաձայն: Ծեր հոգ-որը հուգվեց, սիրով նայեց Ուխտի անդամներին:

- Սիրելիներս, ձեզ իմացում, մեզ մի հաճելի գործ է սպասում, - ծերունին ժպտաց հայրաբար, նայեց Զահիրին, - ի հաճուս հավատքի ու ամենայն հայի՝ հարկ է մկրտենք եղբորորդուս, տանք հային արժանի անուն:

Զահիրը հանկարծակի եկած, շփոթվեց, ապա շերմորեն համբուրվեց հորեղբոր հետ:

- Գևանք, եղբայրներ: Գևանք եկեղեցի, վկայեն եղբորորդուս դարձի գալը, մկրտենք նրան:

Թե- գիշերը տարածամել էր, սակայն մեծ թվով վանականներ հավաքվեցին: Զահերի լույսերով ողողված թափորը մտավ եկեղեցի: Յովհաննես եպիսկոպոսը բարձրացավ սուր սեղան, ձեռքը երկարեց Զահի-

ոին:

- Արդ, հրաման է Աստծուց մկրտել քեզ, որպեսզի ընդունես աստվածապարգ- ավետիսները - կենաց խոսքը: Դու, որդյակ, հարկ է խոստովանես մեղքերդ ու մաքրվես Աստծո առաջ - և քեզ թողություն կտա: Ես, որպես վաևահայր ու հորեղբայրդ, քեզ համար ընտրում եմ Զաքարիա անունը, որ կրել են հայոց եկեղեցու երկու կաթողիկոսներ, մեկը Երուսաղեմի, մյուսը՝ Զագեսցի կաթողիկոսը: Նա- շատ ու շատ հոգ-որ ու աշխարհիկ հայեր, ու փառաբանել են այդ անունը ազգանվեր գործերով: Զանք ոիր, արժանի եղիր այդ սրբերի հիշատակին ու արժանապես կրիր այդ պատվավոր անունը:

Զահիրը ծնկի իշավ:

- Աստծո, նա- Զրիստոս Որդու, իմ սուրբ հորեղբոր ու իմ նվիրյալ եղբայրների ու քրոջ առաջ խոստովանում եմ, շատ մեղքեր եմ գործել, սպանել եմ մարտում, կատարել եմ տիրակալի հրամանները: Նպաստել եմ նրա հաղթանակներին, սակայն երբեք ձեռք չեմ բարձրացրել Երեխաների, կանանց, ծերերի վրա, քանզի հայի հոգիս փրկել է ինձ նմանօրինակ մեղքերից: Աստծուց, Որդուց ու Սուրբ Հոգուց աղերսում եմ մեղքերիս թողություն: Ներկաները զարմացան Զահիրի խոսքերի վրա, ասես մեկը թելադրում էր պահին պատեհ խոսքեր, թեր-ս, ինչու ոչ՝ հոգին, հայի հոգին էր թելադրում:

- Մեղքերիդ թողություն, դարձդ ընդունելի,- ասաց Հովհաննես Եպիսկոպոսը, - արդ, քեզ կնքահայր է պետք, կարգն է այդպես, - Զահիրը նայեց ընկերներին:

- Ես եմ կնքահայրը,- աջը բարձրացրեց Վահեն,- կիևս ու ընտանիքս զոհ գնացին չաղաթայներին, մենակ եմ մնացել,- մռայլվեց, նորից բարձրացրեց աջը, - Ես եմ կնքահայրը:

- Ընդունելի՞ Ե,- ասաց սրբազնը, ապա երեք անգամ օրինեց ավագանի ջուրը, դիմեց հավաքվածներին:

- Դարձե՛ք ար-մուտք,- կարդաց հրաժարեցման աղոթքը, - դարձեք ար-Ելք: Կրկնե՛ք ինձ հետ՝ հրաժարիմ ի սատանայի - ամենայն խաբեություն Է, նորա ի պատրանս նորա, ի խորհուրդ նորա ի չար հրեշտական նորա...

Զահիրը դժվարությամբ կրկնեց հրաժարեցման խոսքերը: Եպիսկոպոսը վերցրեց ավետարանը, ընթերցեց, խաչով երեք անգամ օրինեց ջուրը, ապա սրբալույս մեռոն հեղեց օրինված ջրի մեջ - կոչեց ընծայողի անունը Զաքարիա, ապա հարցրեց կնքահորը, թե ի՞նչ է խնդրում մկրտվողի համար:

Վահեն բարձրացրեց աջը:

- Հավա՛տք, իո՛ւս, սե՛ր ու մկրտություն,- այս խոսքերը կրկնեց Երեք անգամ: Եպիսկոպոսը վերցրեց Զաքարիայի ձեռքերը, իրար միացրեց, մտցրեց ջուրը, ապա ջուրը վերցրեց, հեղեց Զաքարիայի գլխին:

Դրոշմ արեց, ձեռքը քսեց ճակատին, աչքերին, սրտին, թիկունքին,

ոտքերին, ասաց.

- Խաղաղություն ընդ քեզ, փրկյալդ Աստծո, խաղաղություն ընդ քեզ, օջալդ Աստծո,- օրինված ու սրբագործված խաչը կախեց Զաքարիայի պարանոցից, տվեց սուրբ հաղորդում՝ նշխար դրեց Զաքարիայի բերանը, որից հետո առաջինը համբուրեց եղբորորդուն։ Մոտեցան Ուխտի Նվիրյալները, համբուրեցին նրան։

- Փա՛ռք քեզ, Տե՛ր Աստված, մի անմեղ հայի հոգի էլ փրկվեց...

* * *

- Ի՞նչ կասես, Խալիլ թոռ,- նայելով Տիֆիսի պարիսպներին, հարցուեց տիրակալը,- Բժնիից հետո չե՞ս կամենում գրավել այս քաղաքը, որ Վրաստանի մայր քաղաքն է, հարկավ, ուժեղ կայազոր ունի,- կտրուկ ետ նայեց, փնտրեց Զահիրին, ափսոսաց... «Յավալի է, երբ դավաճանում են խելացիներն ու Նվիրվածները։ Ոչինչ, մենք դեռ կգտնենք լակոտին, ցից կհանեմ։ Կնայեմ, ինչպես է գորտի պես թփրտում ցցին, իսկ այս անատամ մարդուկից օգուտ չկա։ Սա ի՞նչ գաղտնապահ, - նայեց Յաֆիզին,- ցավալի է, երբ դավաճանում են խելացիներն ու Նվիրվածները, - և նորից խորհեց Զահիրի մասին»։

- Կանչե՛ք Սահարին։

Սա այնքան արագ հայտնվեց, որ հասկանալի դարձավ, սպասել էր հրավերքի, ծնկեց տիրակալի առաջ։

- Քեզ կարգում եմ գաղտնապահ։ Իմացիր քաղաքի մասին, խուզարկուներ ուղարկիր, իմացիր վրաց թագավորի մտադրությունները։

- Թույլ տուր խոսեմ, տիրակալ,- ծնկած տեղից խոսեց Սահարը,- Ես մարդիկ եմ ուղարկել քաղաք, գիտեմ վիճակը։

- Կեցցե՛ս, - սառը ծիծաղեց Թամուրը։ Նայեց Շահ Մելիքին, - դու նկատե՞լ ես, որ դավաճանում են խելացիներն ու Նվիրվածները,- տեսավ, ինչպես սա ցևցվեց։ Տիրակալը ծիծաղեց, - լա՛վ, լա՛վ, դա քեզ չի վերաբերում։ Գիտե՞ս, այսօր լավ եմ տրամադրված։ Դե՛, ասա՛, ի՞նչ ես պարզել, - նայեց Սահարին։

Սահարը հասկացավ, որ այս պահից փոխվում է իր կյանքը, որ մտնում է տիրակալի մտերիմների խմբի մեջ, իսկ ի՞նչ կտա իրեն այդ բարձրացումը։ Նա այդ պահին չէր խորհում այն մասին, թե որքան բարձր լինի դիրքը, այնքան մեծ է անկման ուժը, չէր խորհում այդ մասին...։

- Տե՛ր իմ, վրաց թագավորը վճռել է մեծագին ընծաներով գալ հնագանդվելու աշխարհի տիրակալիդ, - այս պահին խորհեց, որ գուր չէր իր մարդկանցից երկուսին գոհել։

- Տեսա՞ր, Խալիլ թոռ։ Ալլահը բարի օր է մեզ ուղարկում, թե չէ շատ բարձր են քաղաքի պարիսպները։ Կսում են վրաց թագավորն էլ կովող մարդ է, ասում են նա- խելացի։ Դրան անվիճելիորեն հավատացինք,

քանզի հասկացել է՝ մեկ է, քաղաքը կգրավենք, Շահ Մելիք, հրաման տուր, թող պաշարեն քաղաքը...

Չեր հասցրել ավարտել խոսքը, երբ քաղաքի վրա տարածվեց Եկեղեցիների զանգերի ղողանջը: Նժույգը ցցեց ականջները, խլշկտաց, սմբակով դոփեց գետինը:

Թամուրը ականջ դրեց: Նա ձայների մեջ ինչ-որ ներդաշնակություն էր փնտրում: Մեծ զանգերի մեջ փոքր զանգերի ձայներ էին լսվում, որ մեղմ էին, տխուր մեղեդու աես: Չընգ, ընդմիջում, զընգ, զընգ, զընգ, զընգ: Ձեռքով նշան արեց Շահ Մելիքին:

- Սպասե՞ք մի փոքր, Շահ Մելիք, սրանց զանգերը լաց են լինում, - սպասեց, - Հայաստանի Եկեղեցիների զանգերը խրոխտ էին, առևական, մարտի էին կոչում: Վրաց Եկեղեցիների զանգերը լալկան են, ասես աղերս են անում...

Հանկարծ, անհարի բարձր, տհաճորեն ճռաց քաղաքադուռը, ամենքն էլ նայեցին դռանը:

Բացվեց Տփխիսի դուռը: Զաղաթայները համրացան գրոհի սպասման մեջ, մի հրաման ու նրանք ներս կլցվեին քաղաքը, սակայն հրաման չկար:

Քաղաքից դուրս Եկավ սպիտակ նժույգ նստած մի խրոխտ զորական: Տեսքը հպարտ էր, հասկացան՝ քաղաքից դուրս էր գալիս վրաց թագավորը:

- Սպասեք մի առ ժամ, - ասաց տիրակալը, մտավ յուրտ: Թեք ընկավ բարձերին,- վաղուց թագավորի խոնարհված գլուխ չէի տեսել: Թագավորների կտրված գլուխների մեջ սա իր արժանավոր տեղը կգրավի: Շահ Մելիք, քանիսն են՝ թագավորները, ավելի ստույգ՝ գլուխները, - ուրախ ծիծաղեց Թամուրը:

- Տասնո՞ւթ, - ասաց Շահ Մելիքը:

Թամուրը հիշեց Սահարին, որի բերած լուրերը ստույգ էին:

- Ապրե՞ս, Սահար: Կանչել տվեք Մեհմետին՝ Ագիլի որդուն, ուզում եմ ճատրակ խաղալ,- շիեց ոտքի վերքը,- թող վրաց թագավորը դրսում ուզում եմ ճատրակ խաղալ, - ծիեց ոտքի վերքը,- թող վրաց թագավորը դրսում, սպասի: Եթե Ագիլի որդին հաղթեց, կյանք կպարզ-եմ Վրաց թագավորին, տեսեք, հա՛,- մատը թափ տվեց,- բան-ման չասեք Մեհմետին: Վրաց թագավորի ճակատագիրը կախված է ճատրակի զինվորներից...

Ներս մտավ Մեհմետը, ճատրակի տախտակը դրեց դաստարխանի վրա, ինքը ծնկեց, շարեց զինվորներին, փղերին, բերդերը: Նա գիտեր, որ տիրակալը ինքն է շարում իր զինվորներին, մի անգամ ասել էր՝ «Մենք ինքներս ենք մարտի տանում զինվորներին»:

- Անցյալ անգամ դու պարտվեցիր, Մեհմետ, գիտես՝ երբեք հաճոյանալու համար չես պարտվում: Դու իսկական խաղացող ես: Քեզ համար կա միայն ճատրակի տախտակն ու իմաստուն գլուխսդի: Դու չես

խնայում անգամ մեզ: Դու երբեք չես քծում: Վրաստանի թագավորը կանգնած է յուրտի առաջ, սակայն այս պահին կար-որը մեր ու քո խաղն է: Շահ Մելիք, ի՞նչ է անում վրաց թագավորը: Ինչ հաճելի լոռություն է: Վաղուց լռությամբ հանձնվող քաղաք չենք տեսել: Լավ երկիր է, նման չէ Հայաստանին, որտեղ քաղաքները հուր ու բոց են ժայթքում: Արժե այս լռության համար արժանին մատուցել թագավորին: Ի՞նչ են անում վրացիները:

- Տիրակալ, վրաց թագավորը, ավագանին կանգնած են մեր զինվորների հսկողության տակ: Թագավորի տեսքը խրոխտ է: Ավագանին սկսել է տրտնջալ...

- Սկսի՞ր, Ագիլի որդի: Մենք այսօր բարի ենք: Շահ Մելիք, ի՞նչ է անում վրաց թագավորը, որտե՞ղ է թագուհին:

Շահ Մելիքը ուսերը թոթվեց:

- Ների՞ր, տիրակալ, ես տեղյակ չեմ, թեր-ս, կանչենք ամենագետ Սահարին:

- Կանչի՞ր, թող ամեն անգամ ներս գա մեծամեծների հետ: Սահարը ներս մտավ, ծնկեց ճատրակի սեղանի առաջ:

- Տիրակալ, Կիր-Աննա թագուհին պալատում է, Դավիթ որդու հետ: Թագավորի մյուս երկու որդիները քաղաքում չեն, հեռացել են Եգերաց աշխարհ: Վայրենի երկիր է, այնտեղ ճանապարհներ չկան, միայն իրենք գիտեն լեռնային արահետները, մեկ էլ արխարները /Վայրի այծեղը/: Նրանք իրենց շեներից դուրս են գալիս հաղ-ան երկրները ասպատակելու համար:

Թամուրը հետաքրքրված նայեց Սահարին: Նրան դուրս եկավ Սահարի առևական տեսքը, սակայն, չգիտես ինչու, հասկարծ մռայլվեց: Նրան թվաց, որ Սահարը թե- ծնկած շատ անկախ էր, հպարտ, սակայն ասաց.

- Ապրե՞ս, Սահա՞ր, դու իսկական գաղտնապահ ես, իսկական թումանապետ, ինչպես իմ այս թումանապետը, որ հարձակվում է Մեհմետի բերդի վրա, - տիրակալը ճատրակի տախտակի վրա շարժեց փողոսկրե թումանապետին, - Շահ Մելիք, ի՞նչ է անում վրաց թագավորը:

Սա դուրս գևաց, արագ վերադարձավ, խոսեց զայրացած:

- Տիրակալ, Բագարատ թագավորը իշել է սժույգից, կանգնել է գլխիկոր: Վրացիները ամենքն ել հետիոտն են...

Թամուրը չհասկացավ Շահ Մելիքի զայրույթի պատճառը, ուզեց խորհել, պարզել այդ պարագան, սակայն տարվեց ճատրակի տախտակով:

- Դու իմ շահին ես սպառնո՞ւմ, ա՞ն, դո՞ւ, շեյթա՞ն: Ուզում ես գլխատել զորքերս: Իմ շահը հարվածի տակ է, սպասիր, Շահ Մելիք: Մենք այստեղ պարտվում ենք, իսկ դու վրաց թագավորի մասին ես խոսում: Սպասի՞ր, Ագիլի որդի, ես կարող եմ զոհել թագուհուն...

- Տիրակալ, իմ թումապետերը փակել են թագուհուդ ճամփան: Տի-

բակալ, թագուհին զոհ գնաց, բերդու անզոր է, զինվորներու չեն կարող պաշտպանել բերդը: Շահի անզոր է, նրան մնում է հանձնվել հաղթողի ողորմածությանը: Տիրակա՞լ, մա՞տ, դու պարտված ես...

Տիրակալը տեսավ, ինչպես Մեհմեդը իր շահին պառկեցրեց տախտակի վրա, մռայլվեց:

- Ագիլի որդի, եթե ասեիր՝ Ներիր, տիրակալ, մենք քեզ գլխատել կտայինք: Ապրե՞ս, դու փրկեցիր Վրաց թագավորի կյանքը: Շահ Մելիք, ի՞նչ են անում Վրացիները:

- Տիրակալ, սպասում են ողորմածությանդ...

Թամուրը բարձրացավ տեղից, մի քանի քայլ արեց յուրտում, սկսեց շփել ոտքի վերքը, ապա մռայլ նայեց հավաքվածներին: Յանկարծ մտրակով զարկեց ոտքին, տևքաց, կատաղեց: Մեծամեծները հասկացան, ծանր վճիռ էր կայացնելու տիրակալը:

- Ճատրակ խաղալիս մենք պարտվեցինք Ագիլի որդուց, որն անզուգական խաղացող է, ինչպես հայրն էր՝ Ագիլ Մեծ վարպետը: Մենք մեր պարտությունը կփոխատուցենք մարտի դաշտում: Շահ Մելիք, գրավե՛լ քաղաքը, ավերել եկեղեցիները, հանել բոլոր զարդերը, թանկարժեք իրերը: Զաղաքն ավերել: Կալանել թագավորին, թագուհուն: Վրաց ավագանուն ազատել միայն մեծ փրկագնով: Ալլահը մեզ օգնական, գնացե՛ք:

Յանկարծ լռությունը, որ տիրել էր շրջապատին ճատրակ խաղալիս, մեկեն պայթեց ահավոր դղրոյնունով, չաղաթայները խուժեցին Տիկիսիս:

Սկսվեց մի անսախաղեա կոտորած: Ոչ մի այրմարդ կենդանի չթողեցին, գերեվարեցին միայն կանաց ու երեխաներին:

Տիկիսիսը դարձավ մեռյալների քաղաք: Փողոցներում արյունը հոսեց, խառնվեց Կուր գետին:

Զաղաքում մահասարսութ ոռնում էր քամին չաղաթայների սրերից հալածական, մեռնում էր Վրաց մայր քաղաքը, մեռնում էր իր մահով՝ հաստատելով Լանկ Թամուրի մեծությունն ու վայրագությունը, որուք համարժեք էին:

- Տիրակալը ճատրակ է խաղում տիեզերքի հետ,- ծիծաղում էին չաղաթայները:

* * *

Գուժ ու գումարկանի սովոր էին, այս մեկն էլ չզարմացրեց:

- Չաղաթայները գրավել են Տիկիսիսը. Բագարատ թագավորին, թագուհու, արքայազն Դավթին գերել են,- գումարկանին վայել լրջությամբ, ասաց Թորգոմ արեղան, - Չարիշատի Յարություն վաճառականը գումարեց, անձամբ է եղել Տիկիսիսում: Կստծո նախախնամությունն է, որ ցրտերը ընկան, թե չէ համաճարակ կընկներ Վրաստանում, կանցներ Յայստան:-

Յասու չեմ, ինչպես կարող եր Բագարատի պես ռազմասեր թագավորը առանց կովի հանձներ մայրաքաղաքը:

- Սրբազն, Բագարատը մեծագին ընծաներով գևացել է առ ոտու Լանկ Թամուրի: Տիրակալը չի ընդունել նրան, այդ պահին զորքերը խուժել են քաղաք, կոտորել են բնակիչներին, թալանել են եկեղեցիները, պալատները: Մեծ ավար են հանել Վրաց մայրաքաղաքից, արդ, չաղաթայները գնում են Արցախի կողմերը:

Լոռություն իշխավ, լռություն, որ հարկադրում էր խորհել, նա- զարմանալ, ինչպես կարելի է մայր քաղաքը չպաշտպանել: Դա նշանակում է սպանել հպատակների հավատը թագավորի հանդեպ: Թեր-ս եղել են տարածայնություններ, թեր-ս ավագանին հարկադրել է թագավորին... Մի՞թե մեր դիմադրական կրիվների մասին չեն լսել, ինչո՞ւ են այդքան նվաստացել, իսկ եթե այդ քայլի տակ մի նոր ելք ու փնտրտուք կա: Չե՞, որ թագավոր ունեն, անտեր չեն մեզ պես, մի՞թե գերադասելի է լինել անտեր ու ամեն բան վճռել սեփական խղճով, սեփական շահերից ել-նելով:

Լուցին: Աթափվեցին, երբ լսեցին Զաքարիայի խոսքերը, որին Թորգում աբեղան թարգմանեց բերած լուրը:

- Եթե Թամուրը չիշխավ Փայտակարան, ապա կծմեռի Արցախում: Տիրակալը շատ է հավանել Յայոց արքաների ձմեռանցը,- «Մեր ձմեռոցը» մտքում կրկնեց այդ քառը, որից հպարտություն զգաց, հազիվ գսպեց հուզմունքը:

- Մեկնի՞ր միտքդ, Զաքարիա, - խնդրեց եպիսկոպոսը:
- Զաքարիան իրավացի է: Ես որպես զորական, համամիտ եմ նրա հետ,- Կահեն հարգանքով նայեց սանիկին՝ Զաքարիային, - չաղաթայ-ները եթե մնացին Արցախում, գարևանը կհարձակվեն Այրարատի վրա, այս բանը անվիճելի է...

- Սպասե՞ք, որդի՞ք, մենք զորական չենք, պարզեք վիճակը զորական տեսակետից:

- Ո՞վ չգիտե երկորի վիճակը,- Կահեն նայեց հոգ-որևերին, - ո՞վ չգիտե, որ Յայաստանը ընկել է թուրքերի լծի տակ: Այ, Լանկ Թամուրը կգնա Արցախում ձմեռելու, կթուլանա մեզ խեղդող օղակներից մեկը: Կմնան Բայազետն ու Մասցած ամիրաներն ու սուլթանիկները, որին հիշենք՝ Տուրուբերանում նստած Ղարա-Ղոյունլի թուրքմաներ սուլթան Ղարա Մահմեդը: Քաջբերություն, Տարրոնում, Սասունում դարձյալ նրանք են: Ավելի հեռու՝ դարձյալ թուրքմաններն են՝ Զելահիրյաններն են: Ուր շուր գաս, նրանք են, իսկ որտե՞ղ ենք մենք՝ հայերս: Թուրքերի տիրույթների արանքում մի հայ իշխան, մի տանուտեր բերդաքաղաք, մեր հողերում, ամեն ինչից զրկված, նա- ուժագուրկ, - հոգոց հանեց,- Բաղեշում նստել է Կմիր Շարաֆը, Արծեկում՝ Սահանդ իշխանը, Վանում՝ Կմիրան Եղդին՝ ազգությամբ հայ Արծրունի: Մի հայ, մի թուրք, մի եզդի, կտոր-կտոր Յայաստան:

- Զմոռանանք Զելահրյաններին, որոնք նստած են Եջիսկա բերդում, իրենց Թահիր սուլթանիկով: Նա պաշտպանում է հոր գանձերը, տիրում են Նախճավանին, Սյունիքի մի մասին,- ավելացրեց Թովման:

- Ե՞րբ ենք փրկվելու իսլամի ճիրաններից,- մօմօացրեց Եպիսկոպոսը: Ներս մտավ սարկավագ Պետրոսը:

- Սրբազն, Յարություն վաճառականը տեսություն է խնդրում: Վանահայրը ձեռքով արեց:

- Յրավիրիր, լսենք ականատեսին: Խելացի մարդ է, աշխարհ է շրջում: Յարկավ, թարմ լուրեր կունենա:

Ներկաների հայացքները դարձան դռանը: Ներս մտավ կարճ մարուքով, լայնալանջ, միջահասակ մի մարդ, որի տեսքն ավելի զորականի էր, քան վաճառականի: Մոտեցավ, առավ սրբազնի աջը, կանգնեց, սպասեց սրբազնի հարցերին: Մինչ ներկաները դիտում էին վաճառականին, սրա հայացքը կանգ առավ Վահեի վրա, հասկացավ, որ ներկաներից ամենաազդեցիկը այս մարդն է, ապա գլխով բար-եց Ասողիկին, որին վաղուց եր ճանաչում, իսկ երբ Զաքարիային նայեց, զարմացավ, քանզի նրան տեսել եր այլ հանգամանքներում: Սակայն չհասցրեց այլ բան խորհել, քանզի հասկացավ, որ սրանք, տարբեր զբաղմունքների տեր մարդիկ, գուր չեն հավաքվել Մեծորբայում: Նա համոզված էր, որ Յովհաննես սրբազնը չաղաթայների առաջ գլուխ չի ծռի: Ներկաներն ել գոհ մնացին իրենց զննումից, վաճառականի տեսքը համապատասխանում էր նրա հրչակին: Նրան շատ ու շատ երկրներում էին ճանաչում: Յաճախ էր լինում Յնդկաստանում, անգամ Չինաց երկրում: Նրա քարավանը շատ անգամներ էր ենթարկվել հարձակումների, սակայն ոչ մի անգամ չէր թալասվել, մեծ պահևորդախումբ ուներ, նա- հմուտ էր ռազմի գործերին: Մտոք բանիվ, քաջ ու հաջողակ վաճառական էր: Ասում են, թեր-ս չարախոսում են, իբր- Լանկ Թամուրը իր պայզան՝ կնիքն է տվել նրան, երեք օղակով եռանկյունի կնիք, սակայն ազատ ճամփաներին կնիք ով է հարցնում, առաջ գլուխն են կտրում, եթե պատահաբար գտան պայզամ, մի լավ կիրհուան ու վերջ...

- Որդյա՛կ, պատմի՛ր, ասում են եղել ես Տիֆիխոսում, ականատես ես քաղաքի ավերմանը: Ե՛, մենք սովոր ենք, գումարի՛ր, որդյակ: Թե- մենք արդեն լսել ենք այդ մասին: Նստի՛ր, որդյակ, նստի՛ր:

Վաճառականը թեթ-ակի խոնարհվեց, սակայն չնստեց:

- Լանկ Թամուրը գերի տարավ Բագարատ թագավորին ու Կիր-Անսնա թագուհուն Դավիթ արքայազնի հետ: Գահաժառանգ Գեորգին ու Եղբայրը՝ Կոստանդը փախել են Եգերաց աշխարհ: Զաղաթայները կոտորեցին բնակիչներին, թալասեցին քաղաքը: Կուր գետը խեղողվում էր դիակներից: Ահավոր տեսարան էր, շատ մահեր եմ տեսել, սակայն այն, ինչ տեսա Տիֆիխոսում..., - ձեռքը թափ տվեց,- բորենիների ոհմակ է, ո՛չ զորք... Մի քանի երեխաներ գնեցի չաղաթայներից, հանձնեցի վրաց ավագանուն: Կանանց չեն վաճառում, խորհում եմ, որ կձմեռեն Արցա-

իում...

- Թամուրը կանաց պահում է Արցախում ձմեռելիս զինվորներին հանձնելու համար,- մռայլ ասաց Զաքարիան,- միշտ էլ նույն կերա է վարփում: Վաճառականը, որ առաջին պահին միայն կասկածել էր Զաքարիային, արդ, ապշեց:

- Մրբազա՞ն, եթե չինեի Մեծոփայում, կասեի, որ այս մարդուն տեսել եմ չաղաթայների մոտ: Այս մարդը Լանկ Թամուրի մերձավորներից է, մի շատ ազդեցիկ գորական: Լեզուս չի գորում...

Եպիսկոպոսը ժպտաց, բարձրացրեց ձեռքը:

- Նա մեր եղբայրն է, իմ հարազատ եղբորորդին: Մի՛ զարմացիր, որ տեսել ես նրան չաղաթայների մոտ:

- Ներո՞յ եղիր, գորական,- վաճառականը թեթ-ակի խոնարիվեց Զաքարիային, ապա նայեց Եպիսկոպոսին,- գորականը իրավացի է, ավելին կասեմ՝ Սամարդանդ ուղարկվող գերիներից առանձնացվում են գեղեցիկ կանայք, ուղարկվում են Արցախ: Հաստատ է՝ կծմեռեն Արցախում: Գարնանը մթերքների պակաս կզգան, ամենամոտ երկիրը, որտեղ կարող են պարենավորվել Այրարատ աշխարհն է ու Սյունիքը, կզարկեն մեզ, հավատացած եմ... Վտանգ կա, ասում են, թե կարող է շարժվել նա- Թողթամիշը: Խանը չի կարող երկար ժամանակ անշարժ պահել գորքերը: Թե ուր կզարկի, հասու չեմ: Յը՛, գորական,- նայեց Վահեին:

- Դերբենդի անցքով կմտնի Աղվանք, ապա Պարսկաստան: Ոուսիայի վրա չի գնա, ատամները կփշրեն: Եթե գարնանը Թողթամիշը զարկեց Թամուրին, Բայազետի ձեռքերը կազատվեն, կարող է զարկել Կոստանդնուպոլսին:

Վաճառականը հարգանքով նայեց Վահեին:

- Բայազետը շարժվեց, դարձյալ մենք ենք տուժելու, մեզ են զարկելու...

- Իրավացի ես,- խոսակցությանը միացավ Թովման,- մեր երկրով են անցնելու նրանց ճամփաները: Մենք հարկ են, որ ըստրություն ամենք, ըստրենք չարյաց փոքրագույնը:

Վաճառականը նայեց Թովմային, ապա Եպիսկոպոսին:

- Փարատիր կասկածներս, սրբազնան... Կապույտ աչքեր, երկար, ոսկեգույն մազեր, միջահասակ, նիհար... Մի՞թե այս մարդը Բարդողի Եպիսկոպոս հոչակված հոգ-որն է: Չեմ հավատում աչքերիս,- Եպիսկոպոսը ժպտաց, գլխով արեց: Վաճառականը վերցրեց Թովմայի աշը, տարավ շրջունքներին:

- Խոնարհաբար համբուրում եմ աշդ Բարդողի Եպիսկոպոս,- շտկեց ուսերը,- ո՛չ, չենք կորչի՝ Մարտիրոսներ ունենք, Բարդողի Եպիսկոպոսներ, մենք արհական ենք, սրբազն, չենք կորչի,- դարձավ Եպիսկոպոսին,- եթե իմ կարիքը զգաս, իմաց տուր, եթե երկրում եղա, կգամ կոչիդ...

* * *

Ասողիկի տունը ծվարել էր ծովափին: Ինչպես ամեն ձկնորսի տուն, մացածներից տարբերվում էր բակում չորանալու, վերանորոգվելու համար կախված ցանցերով, ուռկաներով: Ամենուր ձկնահոտ էր:

Խեղճ Շողեր, ինչպես է տանջվում, փրկություն չկա, ձկան հոտը չի քաշվում տանից: Հար-ան կանայք ծիծաղում են:

- Ձկով ենք ապրում, այ' Շողեր, ձկան հոտը ո՞րն է: Յետո ինչ, որ Գառնիից ես: Դու Ենտեղ ձկան հոտ չե՞ս առել...

- Լա՛վ, լա՛վ, քիթդ շատ մի՛ տևկիր, մարդդ, որ մտնում է ծոցդ, հեշ ձկան հոտ չե՞ս առնում,- հրհռում են:

Շողերին գեղեցիկ չես համարի, եթե չնայես աչքերին: Այդպիսի աչքեր հազվադեպ են ունենում կանայք: Վայը տարել է այդպիսի աչքեր ունեցող կնոջ ամուսնուն: Այդպիսի աչքեր ունեցող կանացից այրմարդիկ աշխատում են հեռու մնալ, սակայն անրջում են... ասում են՝ փորձանքից հեռու, իսկ գիշերները չեն քնում, խաժ աչքերը գիշերը լույս են տալիս, կանչում են, խոստանում են... Այդպիսին են Շողերի աչքերը...

Ասողիկը տարիներ առաջ գնաց Գառնի ուխտի ու...

- Անծանո՞թ, չնայես Շողերի աչքերին,- ծիծաղել էր գիրուկ աղջկա կողքին կանգնած գեղեցկուիին, որից ջուր էր խնդրել Ասողիկը:

Զուրը թափվում էր կրծքին, անտեսել էր գեղեցկուիու խորհուրդը, նայել էր Շողերի աչքերին: Նրան թվում էր, որ աղջկա աչքերից լուս հյուլեներ են դուրս թռչում, լցում են հոգին: Խեղճ տղա, թրջված, ժպտացող, չի ել հասկանում, որ հիմար տեսք ունի:

- Խեղճ տղա, ես գիշեր չես քնի,- ծիծաղել էր Շողերի ընկերուիին,- քանի՛-քանիսն են քեզ պես վառվել նրա աչքերի կրակներից: Գնա, ուխտու ընդունելի,- իսկ Ասողիկը միտք չուներ մացածների պես վառվելու միայն, նա ել ծովափի ամենանշանավոր տղան էր, բարձրահասակ, շատ ուժեղ: Երբ ծովափին կռիվ էին սարքում, կողմերը ետ-ետ էին քաշվում, ճամփա էին տալիս նրան: Կռիվ չեր սիրում, ինչպես ամեն ուժեղ մարդ, ազնիվ մարդ, սակայն, Աստված մի արասց, զայրացնեին... Ամենքն էլ նրան զինվորացու էին համարում, իսկ նա սիրեց ծովն ու կապեց ծովի հետ, երբեք չդավաճանեց այդ սիրուն: Չի ել հասկանում, որ հիմա տեսք ունի:

Տուն դարձավ Գառնիից նիհարած, տանջահար, երեք գիշեր չեր քնել: Տան էլ նույն էր, քունը փախել էր աչքերից: Շողերն անգամ գիշերներն էր ժպտում նրան: Ասես երկնքի աստղերի փոխարեւն Շողերի աչքերն էին փայլում: Դրանք կանչում էին, շողարձակում էին:

Աղոթում էր Ծովինար Աստվածուիուն, փրկություն խնդրում այդ

սիրուց, սակայն ինչ խնդրանք ինքն իրեն սիրահարված Աստվածութիւց... ավելի էր բորբոքվում սերը: Ախր գառնեցիների մասին ասում են՝ շատ հանդուգն մարդիկ են, ապրում են հեթանոս սովորույթներով... Չե՛, Աստղիկին փրկություն չկա այդ հեթանոս աչքերից:

Յայրն ու մայրը ուրախացան, որ որդին սիրահարված է, իրենց պապ ու տատ պատկերացրեցին, որքան եղավ նրանց հիասթափությունը, երբ իմացան, որ աղջիկը Գառնիից է: Յայրը զայրացավ, որ աղջիկը հեռվից, մայրն ու քույրը փսխացին: «Ախր գառնեցի աղջիկները մի փոքր հեթանոս են... Ախր նրանց մեջ ար-որդիների արյուն կա...»:

- Որդի՛, մի՛ քանդիր մեր տունը...

Լոեցին, սակայն տղայի վիճակը անհանգստացնում էր նրանց: Մեկ էլ տեսար՝ աղջիկը մարդու գնաց: Զդիմացան, գնացին Գառնի: Ծանոթ ունեին, գործը գլուխ բերեց: Ամուսնացրեցին Աստղիկին: Երկու օր հետո մայրը կույս, անարատ հարսի պատվին մոմեր վարեց, Աստծո սեղանի առաջ մեղա եկավ...

Ծովափին լուր տարածվեց, որ Աստղիկը ամուսնացել է գառնեցի հրաշք աչքերով աղջկա հետ: Եկան, տեսան, քթերի արյունը սրբելով ետ դարձան: Ծանր էին Աստղիկի բռունցքները:

Առաջնեկը տղա էր: Պապը ուրախությունից քիչ մնաց ունեցած-չունեցածը եկեղեցուն ընծայեր: Պապը ուրախությունից լաց էր լինում, տատը գառնեցի աղջկա գովքն էր անում ծովափին:

Տասնինգ տարի է անցել, Աստղիկը հինգ տղաների հայր է: Երբ Շողերը գույգ տղաներ ունեցավ, ծովափի տղաները սկսեցին Գառնիից աղջիկներ ուզել: Լավ աղջիկներ էին, սակայն ոչ մեկը Շողեր չէր, ոչ մեկը Շողերի աչքերը չուներ: Կսում էին՝ մոր կողմից Շողերը սերվում է Անահիտ աստվածուհուց: Յավատում էին, երբ նայում էին աչքերին: Նրանցում ամեն ոք աստվածային կրակներ էին տեսնում:

Շողերը իր հետ հաջողություն բերեց ծովափի: Ինչի ձեռք էր զարկում Աստղիկը, հաջողության էր հասնում: Շողերի ձեռքի տակ նրանց փոքրիկ այգին դրախտ դարձավ: Խնձորի շիվեր էին գալիս նրանց այգուց տանելու, ասում էին՝ Անահիտ աստվածուհու քույր, որ իշել էր ծովափ մարդկանց երջանկացնելու – առաջին հերթին Աստղիկին: Սա, իրոք, երջանիկ էր, – ինչպես երջանիկ չլիներ, երբ տասնինգ տարի է, ինչ մեղրամիսի մեջ է: Այդպիսի սիրող գույգ թեր–ս միայն աստվածների մեջ է եղել, մեկ էլ նրանց ընտրյալների, հենց դա է, որ կա...

Պապն ու տատը մեռան, պատվով, հարգանքով թաղեցին: Տալը ամուսնացավ մի լավ տղայի հետ, Աստղիկն ընկերներից էր: Դարձյալ Շողերի ձեռքի գործն էր:

Ծանր էր ձկնորսի կին լինելը՝ ձուկ չորացնել, աղել, ապիստել: Մի խոսքով, դժվար է, ստուգ է՝ ավագ որդին օգնում է, սակայն երկվորյակներից դեռ ոչ մի օգուտ չկա: Յակոբն ու Յուսիկը ծովափի ուրախու-

թյունն են: Նրանք այսքան նման են, որ մայրն անգամ շփոթում է, անմիջապես նայում է խալին, Յուսիկը խալ ունի: Երբ տղաները հասկացան խալի նշանակությունը, սկսեցին սատանայություն անել, ածուխով խալ էին նկարում: Դե արի ու ճանաչիր: Երկվորյակները չարաճնի էին, ուրախ ու բարի:

Ապրում էր Շողերը ծովափին, գոհ էր, երջանիկ: Նրա երջանկությունը ընտանիքն է, երեխաները, այս ծովակը: Անահիտ աստվածուինու քույր լինելու պարագան ընդունեց, երբ եկավ ծովափ, սկսեց երազին տեսնել աստվածուին: Յիշում էր՝ Գառնիում տեսել էր մի օտարականի, որ ծնկած ավերակների մոտ, ձեռքերև ար-ին կարկառած՝ աղորել էր, մոտեցել էր, օտարականը տեսնելով աղջնակի աչքերը, ասել էր՝ դու Անահիտ Աստվածուին քույրն ես, ամեն գիշեր քնելուց առաջ խնդրի՞ր Մեծ Աստվածուին քեզ այցելի երազում – նա՝ կգա... Մի՛ մոռացիր, մենք հայերս արիական ենք...

Այդ օրվանից շատ բան փոխվեց: Սկզբում այդ ամենը խարկանք էր թվում, իսկ երբ երազները կրկնվեցին, երբ աստվածուին ձեռքը դնում էր նրա գլխին, սկսեց հավատալ, որ քույրն է... Յավատաց, երբ Յուսիկը հիվանդացավ, երբ հույսները կտրեցին, երբ երեխան կանգնել էր կենաց մահու սահմանագծին, գիշերը երազին այցելեց Անահիտ Աստվածուին: Այդպես էլ չհասկացավ՝ երա՞զ էր, թե՞ արթմնի հրաշք: Աստվածուին ձեռքը դրեց երեխայի գլխին, ժպտաց Շողերին:

- Որդիդ կապաքինվի, քույրի՛կ, - ասաց ու աներ-ույթացավ:

Առավոտյան Յուսիկը վագում էր ծովափ, զարմանք պատճառելով հար-անսներին ու Ասողիկին: Իսկ երբ կինը պատմեց հրաշքի մասին, Ասողիկը գառ մորթեց ծովափին, շնորհակալական ձոն ձուեց Անահիտ ու Շովինար աստվածուիներին:

Շողերը վերջերս անհանգստացած է, շատ է փոխվել Ասողիկը: Յաճախ շատ հեռուներն է գնում, ի՞նչ է տանում, ի՞նչ է բերում, կինը ոչինչ չգիտե:

Նրա առագաստանավը հաճախ հայտնվում է ծովի ամենահեռավոր ու մեկուսի ծովախորշերում: Տանը հավաքվում են ծանոթ, անծանթներ: Յաճախ Ասողիկը որսի դուրս չի գալիս, սակայն ընկերները նրա բաժինը բերում են: Ի՞նչ գործի վրա է ամուսինը, չգիտե, ախր եթե ձկնորսությունը թողեց, ի՞նչ պիտի անեն, ուրիշ արհեստ չունի:

- Յայրի՛կը, հայրի՛կը,- լսվեց բակի խորքից:

Շողերը տեսավ Ասողիկին մի հսկա մարդու հետ, նրանց հետ-ից գալիս էր Թովմա աբեղան: Շողերը առավ աբեղայի աշը: Սա մոտ կանչեց Երկվորյակներին: Երեխաները միևն- աբեղային մոտենալը, մի քանի անգամ տեղերը փոխեցին, այսպես, որ աբեղան չէր կարող չշփոթել նրանց: Տղաները մոռացել էին, որ լողանալուց հետո դեռ խալ չեին սարքել Յուսիկի դեմքին:

- Աստված պահապան, դու Յակոբն ես, դու Էլ՝ Յուսիկը,- անսխալ

ասաց աբեղան: Տղաները կոտր ընկան: Զիշ էր պատահում, որ այսաւս անսխալ ճանաչեին նրանց: Փայլակը ծիծաղեց:

- Մարդ զստծո, սրանց հո չես տարբերի:

- Չեմ էլ տարբերում,- ասաց Ասողիկը,- տղաներ են՝ հինգ տղա: Երշանիկ մարդ եմ, Փայլակ եղբայր: Յինգ տղա, հինգ ձկնորս, հինգ զինվոր: Մնացած ամեն բան ունայնություն է, սա է մարդու երջանկությունը,- տեսավ, որ Փայլակը մթնդեց: Խորհեց, որ անհարկի էր սեփական երջանկությունը ցուցադրել, երբ կողքիդ դժբախտ մարդ կա: Տիրեց Փայլակի համար, երբ այս ամենն ասաց Թովմային, սա գրկեց նրան:

- Այդ ամենը քո բարությունից է: Դու ուզում ես, որ ամենքն էլ երջանիկ լինեն:

Ասողիկը հյուրերին տուն հրավիրեց: Ներս մտան: Երկու սյուների արանքում կապված օրորոցում ճղճում էր հինգերորդը՝ Արշակը:

- Կաղինակիս հար-անը իրենց տուն տարավ, - ժպտաց Շողերը:

- Դու, քույրիկ, մի անհանգստանա: Մենք քաղցած չենք, դու գավաթներ բեր, կոկորդներս չորացել են, - ասաց Փայլակն ու մախաղից մի մեծ կուժ հանեց,- օրինիր, հայր սուրբ,- լցրեց գավաթները:

Թովման բարձրացրեց ձեռքը:

- Հայր մեր, որ Երկինս ես,- սկսեց Թովման, մի մեղմ ժպիտ լուսավորել էր դեմքը: Ներկաները առաջին անգամ էին լսում, «Հայր մեր» չեր, սա Տերունական աղոթք չեր, Թովմայի շրթունքներից Ար-ի անունը լսեցին, նախնյաց, Հայարիհական նախնյաց ձոնը լսեցին Ար-ին, - թող Ար-Աստված հեռու պահի այս տունն ու հայոց աշխարհը փորձանքներից,- աղոթքն ավարտեց աբեղան:

Խմեցին լուռ, ամենքն էլ անսովոր աղոթքի ազդեցության տակ էին: Չարմանալին այն էր, որ Շողերը լսում էր այն ամենը, ինչ չասաց աբեղան, այս ամենը, եթե արտասաներ մեկ այլ աբեղա, կհամարեին սրբապղծություն, սակայն այդ ամենը լսում էր Բարդողի եպիսկոպոսի շրթունքներից...

Այդ աղոթքը հարազատ էր Շողերին, ևա ել չէր հասկանում, թե որտեղից գիտեր այդ բառերը, որտե՞ղ էր լսել Ար-ի մասին, հայարիների մասին, այն հոգեհարազատ էր, վճռեց, թե Անահիտ Աստվածուիին դարձյալ գա երազում, կհարցնի, ինքն իր խորհածից չզարմացավ, այս ամենը իրական համարեց...

- Դու գնա քո գործերիդ, - ասաց Ասողիկն ու նրանից վերցրեց ճղճանին:

Երեխան անմիջապես լռեց, ժպտաց, բռնեց հոր մորուքը: Շողերը դուրս գնաց:

Երկինքը ամպել էր: Ս- ամպերը Թոնդուրեկից շարժվում էին Արճեց, Չարիշատ, ամենն էլ գիտեին արագ շարժվող ամպերը թարթառ էին բերում: Շողերը նայեց ծովակին:

«Զրերը ս-ացել են, ձկան որսը կդժվարանա,- տեսավ, որ Էլի մար-

դիկ տուն մտան, ախր ի՞նչ Են խոսում, ի՞նչ ուսեն Ասողիկի հետ: Են երկուսը ազատներից Են, Ելի մի հոգ-որ Եկավ, Են մեկի հազն ու կապը այլազգի մարդու Ե: ՉԵ, Էսօր կհարցնեմ Ասողիկին, թող ասի՝ ի՞նչ գործի վրա Ե: Ինչ Ե, կույր Եմ, չեմ տեսնում...»:

Զիշ անց հավաքվածները հեռացան, գևացին մեկ-մեկ, գևացին տարբեր կողմեր: Մնացին Երեքը, հսկան, Թովման ու անծանոթ արեղան: Շողերն ուրախացավ՝ ասել է թե ամուսինը այս գիշեր տանը կմնա: Վերջերս շատ սակավ էր տանը լինում: Վճռեց այսօր անպայման խոսել Ասողիկի հետ, գևաց ցանկապատի կողմը: Աչքն ընկավ հսկային, անունը լսել էր՝ Փայլակ էր: Սա, ցանկապատին հենված՝ նայում էր ծովակին: Շողերը քար կտրեց, հսկան անձայն լալիս էր: Կինը սարսաց, ուզեց ինչ-որ սփոփիչ բան ասել, սակայն ի՞նչ...

- Փայլակ եղբայր, Աստված..., - մնացածը ինչ-որ պիտի ասեր, չասաց, չգտավ ասելիքը, ի՞նչ ասեր:

Փայլակը հասկացավ Շողերին, որ ցանկանում էր սփոփել, սակայն ինչպե՞ս, ինպե՞ս սփոփեր որդեկորուս հորը...

- Ըստանիքս կողորեցի, կնոշս ու ծնողներիս սպասել Են, որդուցս տեղեկություն չունեմ, թեր-ս սպասել Են, թեր-ս գերի Են տարել: Գեղեցիկ երեխա էր, թեր-ս ինայել Են, գերի տարել, չգիտեմ, ի՞նչ է մնում ինձ: Անձս դրել Եմ սուրբ գործին, - զայրացավ, սեղմեց մեծ, մազմզոտ բռունցքները, - այնպես կկռվենք չաղաթայների դեմ, որպեսզի ոչ ոք, ոչ քո որդիներին, մեր քույրերին ու նրանց զավակներին դառը ճակատագիր բաժին չընկնի: Ես, քո Ասողիկը, ամենքս Ել անձերս Ենք դրել սուրբ գործին, որ կարողանանք փրկել ժողովուրդը: Այս ամենը գաղտնի Ե, սակայն քեզանից՝ Անահիտի քրոջից, ի՞նչ գաղտնիք...

- Աստված անխախտ անի ձեր ուխտը, ուժ ու կորով անի ձեզ...

«Յուսներս առ Աստված, սակայն ..., - այս մի հատիկ բառն անգամ կասկած էր ծնում, այս ալեկոծում էր հոգին... Փրկյա՛, քույր իմ Անահիտ: Ներիր մեզ՝ հայերիս, որ մոռացել Ենք քեզ, մեղա..., - մոռացավ աստվածների արանքում իր չունեցած կրիվը... - ՉԵ, Ասողիկը լավ ընկերներ ունի»:

Յանկարծ վախ զգաց ամուսնու համար: Նոր միայն հասկացավ շրջապատի վերաբերմունքի փոփոխությունը: Այս կանայք, որ առաջ միայն բար-ում էին, այսօր իր մտերմությունն Են փնտրում, թեր-ս ոչ ոք ոչինչ չգիտե, միայն այն, որ Ասողիկի շրջապատում այսքան անծանոթ մարդիկ Են հայտնվել, խորհրդավորում Ենրա կյանքը, ակամա պատկառանք ներշնչում... Ասողիկ, Ասողիկ, մի՞թե արժանի չեմ հետո խոսես գործերիդ մասին, մի՞թե գառնեցի կինը չի կարող պաշտպանել իր բաժին մի կտոր երկինքը...

* * *

Սուլթանը թույլ տվեց իրեն հազընել: Նա այսօր բարի է, ինչպես այրմարդը, որ գիշերը անց էր կացրել կույս աղջկա հետ: Գոհ է իր այրմարդկային ուժից, առնականությունից: Գոհ է, առավոտյան կարճ աղոթքի պահին Ալլահին իր գոհունակությունը հայտնեց, քանզի դեռ գիշերվա ազդեցության տակ էր, անգամ աղոթքի պահին աչքի առաջից չեր հեռանում կույս աղջիկը: Լսում էր նրա ճիչը, որ խեղդվեց այրմարդկային կրծոտ համբույրի մեջ: Աղջիկը տասներեք տարեկան է: Իսկը ժամանակն է, ասում է Ռեշեր Ներքինին, իսկ նա մեծ գիտակ է այդ գործերում: Դե՛, ինքն էլ պակաս չէ իր փորձով: Ռեշերը այդ ամենը լսել է այրմարդկանցից, իսկ ինքը՝ իր փորձով, հարուստ փորձով... Լավիկն է հայուհին, շենսեթի հուրի է... Նա գիտե, որ մի քանի օր չպիտի գնա նրա մոտ, թող խելքը գլուխը գա, իրեն կին զգա, ապա մի քանի օրից ինքը կցանկանա... Չե, մի քանի օր կծգծի նրա մոտ գնալը: Մինչ այդ կգնա կանանցից մեկն ու մեկի մոտ: Սրանք փորձված կանայք են, ծգտում են իրեն, այն էլ ինչպես են ծգտում...

Այդ ամենը պատկերացրեց, ռուսգերը հովատակի ռուսգերի պես բաց ու խուփ եղան, դողաց հաճույքի սպասումից: Նա հայուհու մոտ կգնա ցերեկով, երբ կին դարձած նախկին կույսը ամաչում է իր մերկությունից, նա- ծգտում է մերձեցման, որի մեջ խառնված է վախն ու այրմարդու հետ մերձենալու նոր ծնվող – դեռ չգիտակցված ցանկությունը: Դա է պահի գերագույն հաճույքը: Ցավոք, դրանից հետո ամեն ինչ դառնում է արհեստական, ծգտումը փոխվում է սովորութի...

- Տե՛ր իմ, մեծ վեզիրն է սպասում ընդունելության:

Սուլթանը ափսոսանքով նայեց կանանցի կողմը, ցանկացավ գնալ հայուհու մոտ, ապա հիշեց վճիռը, ծեռքով նշան արեց ծառայապետին: Սրանք արագ ավարտեցին հազընելը: Թիչ անց արդեն գահարահում էր: Նստեց Մեծն Խալիֆ Օմարի գահին: Վեզիրը խոնարհվեց նրա առաջ:

- Խոսի՛ր, վեզիր, հարկավ, լուրեր ունես, որտե՞ղ է կադ շեյթանը:

- Տե՛ր իմ, Ալլահի փոխանորդ Երկրի վրա, Լանկ Թամուրը գրավել է Վրաստանի Տփխիս մայր քաղաքը, թագավորին, թագուհուն, արքայազներից մեկին գերեվարել է, տարել է Արցախ՝ Ղարաբաղ, Տփխիսը ավերել է:

- Միտք ունի Ենտե՞ղ ձմեռելու:

- Տեր իմ, որ իմաստությամբ խամրում ես աշխարհի բոլոր իմաստաերներին բոլոր արքաներին: Բարեհաճեցիր իմաստուն նկատել: Ամեն ինչից եր-ում է՝ ձմեռելու է Ղարաբաղում: Յայց արքաների ձմեռոցը խոտառատ է, մեծ գորակայաներ կան, բերդեր:

- Դա վատ է, վեզիր: Խորհե՞լ ես այս պարագայի վրա «Մեծ» վեզիր,- եթե սուլթանը շեշտում է «Մեծ» տիտղոսը, ասել է թե ինչ-որ բանում վեզիրը թերացել է կամ սխալ թույլ տվել: Ինչի՞ց է դժգոհ սուլթանը: Նա պատրաստ է պատասխանելու նրա բոլոր հարեցրին: Այդ ամե-

Նը գալիս է ռազմի ու պետական գործերի իմացությունից:

- Տեր իմ, գարնանը, ճանապարհները չորանալուն պես, չաղաթայ-ները կմոտենան մեր սահմաններին:

Սուլթանը քմծիծաղ տվեց:

- Իրավացի ես, վեզիր, սակայն դա հասկանալու համար մեծ խելք պետք չէ ունենալ: Իսկ ի՞նչ է անում Թողթամիշը, միտք չունի՞ Մոսկվայի վրա գնալու,- զայրացավ,- խոսի՛ր առանց ծռմովելու:

Սուլթանը երբեք Թողթամիշին «Մեծ» խան չեր կոչում, թե- սահյունի էր այդ տիտղոսով:

- Տեր իմ, Թողթամիշը Ռուսիայի վրա չի գնա...

- Ինչո՞ւ,- հարցրեց սուլթանը,- մի՞թե չեն մոռացել Մամայ խանի պարտությունը: Դիմիտր իշխանի հարվածից հետո Սարայի խաները սկսել են խելքի գալ: Խոսք չունեմ, Դիմիտրին արժանի հակառակորդ էր: Լավ, ասենք Ռուսիայի ճամփան վակ է, ի՞նչ է մնում Թողթամիշին, չե՞ որ գարնանը զորքերը հարկ է շարժի տեղից, ձմռանը հանգստացած զինվորներին: Ո՞ւր կըշի զորքերը:

- Ռուսիայի վրա չի գնա, ուռուսները կշարողեն ատամները,- քմծիծաղ տվեց, ձեռքերը երկինք կարկառեց,- թող Ալլահը հեռու պահի իսլամի զորքերին պարտությունից,- կեղծ բարեպաշտությամբ ձեռքերի ափերը մոտեցրեց դեմքին, մտքում աղոթք մրմնաց: Եթե վեզիրը չվախենար պատժից՝ կիռհօար, իսկ չգնահատել սուլթանի երկերեսանությունը չեր կարող: Սուլթանը կարողանում էր միամիտների երեսին թող փչել,- մնում են Պարսկաստանը, Սիրիան: Յամոզված եմ, կանցնի Դերբենդի վրայով, կզարկի Պարսկաստանի հյուսիսային գավառներին, իսկ ճանապարհին նստած է կաղ շեյթանը: Ալիսուսափելի է նրանց ընդհարումը: Եթե մեր գաղտնադեսապանը ասի Թողթամիշին, որ մենք ել այստեղ կսեղմենք Լանկ Թամուրին, ապա պատերազմը նրանց միջկղառան անխուսափելի,- հարցն ավարտված համարելով, թուլացրեց իրեն, իիշեց գիշերվա կույսին: Նրա դիմադրելու անմիտ փորձերը, որով սուլթանի հաղթանակը ավելի հաճելի դարձրեց, ցանկալի,- լավիկն է, ինչպես էին մատաղ կրծքերը թրթռում, ինչպես էին սարսափից չռվել աչքերը... Իսկ մի քանի օրից այդ թերը, որ դիմադրում էին, օղակելու են իր պարանոցը, միաձուլվելու անհագ ցանկությամբ, գիտեր, շատ անգամներ եր այդպես եղել: Մեծ փորձ ուներ: Յետաքրքիր է, մեծ վեզիրը, որ դեռ մեծ կանանց է պահում, կարողանո՞ւմ է զգալ սիրո այդ պահի բերկրանքը, թե կանանցը պահում է միայն նրա համար, որ չկորցնի այրմարդ կոչվելու իրավունքը,- հոհոաց: Վեզիրն էլ ծիծաղեց:

- Դու ինչո՞ւ ես ծիծաղում,- հարցրեց, նորից հոհոաց:

- Տեր իմ, քո ուրախությունը ամենքին է...

- Չե՛, վեզիր, այս անգամ չկռահեցիր: Այն, ինչ ասացիր Թողթամիշի ու մացածների մասին, ընդունելի է մեզ, նա- խելացի, իսկ այս հարցը միայն մեզ է վերաբերում: Դու ուրախացար նրանով, ինչից զրկվել ես,- նորից

հոհոաց,- ասա՛, վեզի՛ր, կանայք գո՞հ են քեզանից:

Վեզիրը սփրթնեց, ծանր հարված էր: Նախկին վեզիրին պաշտոնից հանել էր նմանօրինակ մի հարցի համար: Վճռեց ասել ճշմարտությունը: Կծկվեց մի պահ, պատրաստ էր օձի պես թռիչք կատարելու, սակայն ո՞ւմ դեմ, սուլթան Բայազետի⁹, ծիծաղելի կլիներ...

- Ներո՞ղ եղիր, տե՛ր իմ, ինչ թաքցնեմ քեզանից, միշտ չե, որ գոհ են մսում: Ապրում եմ ինքս ինձ հետ կոհվ տալով - այդ ամենն ի սպառումն այրմարդկային շնորհների...

Սուլթանը այսպես հոհոաց, որ վարագույրները շարժվեցին:

- Կեցցե՞ս, վեզի՛ր, այրմարդու վայել պատասխան տվեցիր: Ապրե՞ս, չեմ սիրում այս մարդկանց, որոնք խոսք ու գրուցի ժամանակ առյուծ են, իսկ կանանց մոտ պոչերը ոտների տակ են քաշում, կատու են դառնում, թո՛ւ:

Լռություն տիրեց, սուլթանը մոռացավ ուրախության պատճառը: Նա իր խոհերի հետ էր, վեզիրն էլ իր հերթին այրվում էր հետաքրքրությունից:

«Իչո՞ւ է հետաքրքրվում կանանցին մասին: Եստեղ մի բան կա, կվտարի պաշտոնից: Սպասի՛ր, խոսեմ Թողթամիշի մասին: Յակառակ պարագայում կկարծի, որ տկարացել եմ մտքով»:

- Տեր իմ, իմաստուն խոսեցիր, հարկ է գաղտնադեսապան ուղարկել Թողթամիշի մոտ: Յամոգենք անցնի Դերբենդի անցքով: Մենք եստեղ կսկսենք նեղել չաղաթայներին, խորհուրդ կտանք Զելահրյաններին ու Ղարա Մահմեդին ընդարձակելու իրենց տիրույթները...

- Սպասի՛ր, միտքս ես կրկնում, իսկ այդ ամենը իղի չե՞ վտանգներով:

Բնա՛վ, տեր իմ, դրանք մանր տիրույթներ ունեն, դրանք միայն սուլթանիկներ են, ուզածդ պահին կանցնեն մեր կողմը, քո հրամանի տակ:

Սուլթանը նորից լռեց, ապա:

- Այո՞,- մռայլ ասաց,- ուզում ես ասել, որ գարնանը մեր մեջ պատրազմ չի լինելու: Դու ի՞նչ է, գուշա՞կ ես: Ասա՛, իչո՞վ ես ապացուցում ասածդ: Եթե պատերազմ եղավ, առաջին հերթին քեզ կգլխատեմ, ապա կգնամ փրկելու կայծակնային Բայազետի պատիվը: Այնպես որ, ծեր շեյթան, հաշվի առ, սթափ խորհիր, խորզարկուներ ուղարկիր ամեն տեղ՝ Սարայ, Ղարաբաղ, ամեն տեղ. Տես՝ ուր են ուղարկում մթերարարներին, որ ուղղությամբ են ծանրացնելու հարվածը:

- Տեր իմ, պատերազմ լինելու-չլինելու հարցը քեզանից է կախված, քո աստվածային կամքից: Եթե խոստանաս չխանգարել նրան, ապա Մեծ խանը կոհվ կելսի Լանկ Թամուրի դեմ: Դա հաստատ է, քանզի Ոտուսիան ամուր փակել է Թողթամիշի ճամփան, զրկել է թալանից, զինվորները դժգոհ են: Միակ ելքը Թամուրի գրաված երկրների վրա հարձակվելն է: Ոչ թե պատերազմ, այլ թալանն է պետք խանին: Թալան, որ կարողանա լցնել բանակի անհատնում որկորը: Նա այլ ելք չունի:

- Այո, - մոլտացրեց սուլթանը,- իսկ այդ պահին թող մասր-մուսր սուլթանիկները իրար միս ուտեն:

- Ավելի լավ, դա կապացուցի, որ դու չես առնչվում նրանց հետ ու Թամուրը կամ Թողթամիշը չի կարող քեզ մեղադրել, իսկ երբ նրանք իրար ջարդեն, կգա քո աստվածային ժամը, կամքդ կթելադրես ողջ տիեզերքին:

- Ալլահը վկա, վատ չես խորհում Մեծ վեզիր, եթե կարողանաս այդ ամենը խելացի կերպով նախապատրաստել...

* * *

Թովման շփոթվեց, երբ սրբազանի մոտ տեսավ Անահիտին:

- Նստի՛ր, հայր սուրբ,- իրավիրեց Եպիսկոպոսը,- հարգիր խնդրանքս, որդյակ: Ես չգիտեմ մեկին, որին կարելի լինի վստահել այս գործը, չեմ ցանկանա ճակատագրի քմայքին հանձնել օրիորդին: Անահիտը ցանկանում է գնալ Տայք, մոր մոտ: Չեմ պարտադրում, քո կամքն է, սակայն ես կցանկանայի, որ Ուխտի անդամներից մեկը լիներ Տայքում: Պատմեր չաղաթայների վայրագությունների մասին, Բարդողի կրիվների մասին: Օրիորդը չցանկացավ մնալ Մեծոբայում: Ինչ կարող ես անել, ամեն ոք Աստծոն կամոք իր ճանապարհն է ընտրում: Խնդրանքս Ե՝ ուղեկցես օրիորդին... Մինչ- գնաս-գաս, գարունը կբացվի: Ընկերներդ այստեղ, առանց քեզ գործը կանեն: Ամենքն էլ կգնան գավառները, կոչ կոկչեն ժողովրդին,- հիգոց հանեց,- գիտեմ, ձմռան ճանապարհները դժվար են, բուք ու բորան, հնարավոր են ավազակներ: Միով բանիվ, հույսս դու ես,- ժպտաց, սիրով նայեց աբեղային,- դու բարի աստղի տակ ես ծնվել...

Թովման հանկարծակիի եր եկել: Սրբազանը առաջարկում եր սիրելի եակի հետ երկար օրեր միասին լինել: Չե, նա չի խորհում ճանապարհի վտանգների մասին: Անահիտի հետ լինելը մեծ երջանկություն Է՝, նա- տառապանք: Ինչպե՞ս կպահեն իրենց մարդկանցից հեռու: Չե՞ն մատնի իրենց սերը Արփենիին, չ՞որ ինելացի աղջիկ է: Նրան չես խաբի, նա էլ կարող է այդ մասին պատմել Անահիտի մորը: Ուշքի եկավ՝ լսելով վանահոր խոսքերը:

- Զորիները սովոր են ձմեռային ճանապարհներին, դիմացկուն են,- ուշադիր նայեց Թովմային, ապա Անահիտին, - որդյակ, մի անգամ Էլ խորիիր, Ե՛կ քարը փեշիցդ թափիր, մնա վանքում: Ինչո՞ւ ես վտանգում կյանքդ: Մեր ձմեռները կատակ չեն սիրում: Մի վերջին անգամ խորիիր:

- Սրբազան, դու ասացիր Ուխտի անդամներին գավառներ ուղարկելու մասին, սակայն մոռացար, որ ես Էլ Եմ Ուխտի անդամ - ուսեմ նմանօրինակ առաքելություն: Եթե ուղեկից չտաս, գոհ կմնամ ջորիների համար: Ների՛ր, չեմ կարող մնալ վանքում, պատճառը հայտնի է միայն Աստծուն:

Վանահայրը մի պահ խոժոռվեց, սակայն հաղթեց սթափ մարդը,

դրանից զատ ևա հասցրել էր ճանաչել օրիորդին, գիտեր, որ ասածը կանի:

- Ինչ արած, քո բախտից է, որ Թովման է ուղեկցելու քեզ: Նա լավ գիտե ճամփաները, փորձառու ճանապարհորդ է: Միայն ափսոսում եմ, որ Ուխտի երկու անդամ գնում են նույն գավառը, թեր-ս սա է Բարձրյալի կամքը,- նայեց Թովմային, - Ես կարգադրել եմ տնտեսին, պաշարներ կտա, իսկ դու անձամբ ընտրիր ջորիները: Պաշարները կբարձես մի ջորու վրա: Ինչ ասեմ, որդի, դու այդ ամենը ինձանից լավ գիտես: Տեր Աստծուն եմ հանձնում ձեզ: Գնացեք, քանի ծնաբքերը չեն սկսվել: Պատսպարվեք շեներում, վանքերում, մինչ- եղանակները բացվեն: Չուր մի վտանգեք անձերդ,- Թովման ի նշան համաձայնության խոնարհվեց, աչքի տակով տեսավ, թե ինչպես ժպտաց Անահիտը:

- Սրբազն,- Անահիտը չարաճնի ժպտաց, նայեց Թովմային,- թեր-ս Թովմա աբեղան այլ անհետաձգելի գործեր ունի վանքում...

- Ես Ուխտի ծառան եմ,- խոնարհվեց Թովման, դրանով վերջ տվեց նրա համար տհաճ խոսակցությանը:

Թովման ու Անահիտը դուրս եկան վանահոր մոտից: Ծովակից սառը քամի էր փչում: Անահիտը սրթարթաց, փաթաթվեց մուշտակի մեջ:

- Յուրատ է, հայր սուրբ, - ուզեց ասել՝ Թովմա, զսպեց իրեն, միայն այդքանը, իսկ ցանկանում էր ասել՝ Թովմա՝, սիրելի՞ս, Ես ուրախ եմ, որ միասին ենք լինելու, հանկարծ իրեն բռնեց այն մտքի վրա, որ հիշեց իրեն սիրահետող սեպուհներին ու իշխանազուն երիտասարդներին, որոնց մերժեց առանց երկար-բարակ խորհելու, ասել է թե սպասում էր այս մեկին, որ իր հետ սեր է բերում: Սիրեց աբեղային ու իրեն դատապարտեց տաևշանքների ու անորոշության, սակայն գիտեր, որ աբեղան կարող է ամուսնանալ կարգաթող լինելու պայմանով, իսկ մայրը, դա ել արգելք էր, սակայն դա այնքան ել չէր վախեցնում նրան, քանզի, իրոք, ըմբռստ էր հոգով, կկոտրեր մոր համառությունը: Գիտեր, որ երշանկությունը հաճախ գալիս է տառապանքների միջով: Կողքանց նայեց Թովմային: «Նա ինձ մոռացել է, առաջ է ընկել, հասել Տայք՝ կոչ է կոչում ժողովրդին: Նա հաստատ է իր երդմանը, իսկ Ես մոռացել եմ պարտք ու այս երկաթե մարդուն եմ անշջում: Ախր, Տե՛ր Աստված, ի՞նչ եմ գտել այս աբեղայի մեջ, ստույգ է՝ գեղեցիկ է, աչքերում աստվածային թախիծ կա: Մտքով գորեղ է, թեր-ս սա է գերում, թեր-ս որպես այրմարդ...., - շառագունեց, - Ես ուզում եմ զավակներ ունենալ...»: Յասկացավ, որ մոռացել էր իրենց սպասող փորձությունները, անշջում էր անհարկի ու անպատճե:

- Թովմա՝, ասաց, շառագունեց,- Ներո՞ղ եղիր, հայր սուրբ,- բռնեց աբեղայի ձեռքը,- ուշ է, գնանք: Դու ել շատ գործեր ունես: Զորիներ պիտի ընտրես: Ես ել ունեցած-չունեցածս հավաքեմ, թեպետ ինձ հետ ոչինչ չունեմ, միայն զարդերս են, որ Զաքարիան վերցրել է ծահ Մելիքից,- զգաց, որ աբեղայի ձեռքը դողում է, սակայն երկուստեք անկարող

Եին ձեռքերը բաժանել:

- Ցուրտ է, գնանք,- ասաց Թովման:
- Այո՛, ցուրտ է, - ասաց Անահիտը ու փարվեց Թովմային,- գնանք, իմ սիրելի աբեղա: Թող վաղվանից Տեր Աստված տևորինե մեր ճակատագրերը,- մի անգամ էլ սեղմվեց Թովմային, սա հազիվ զայեց աղջկան գրկելու ցանկությունը:
- Գնանք, գիշերը տարածամել է, վաղ առավոտյան պիտի ճամփա ելնենք,- ասաց Թովման դողդող ձայնով:

Անահիտը, որ այլ բան էր սպասում, հոգոց հանեց:

* * *

Յելիան տիկինը իր տաղտուկ կյանքում մխիթարանք էր գտել: Եղք իմացավ, որ վրաց թագուհին հելենուիի է, սկսեց ամեն օր ընդունել նրան: Կիր Աննան գեղեցիկ էր, թե- երեք չափահաս որդիների մայր էր: Յելիանը նրան նայելիս հպարտանում էր: Ամեն անգամ Մէլիքէիի մոտ շեշտում էր, որ հելենուիիները գեղանի են, առարկելն անհնար էր, քանզի երկուսն էլ գեղանի կանայք էին: Ստույգ է, Յելիանը ավելի երիտասարդ էր, ավելի թովիչ: Այդ խոսակցությունները Մէլիքէիի մոտ ծիծաղ էին առաջացնում: Սակայն խորամանկ կինը նրան մտերմության մեջ կասկածելի բաներ էր տեսնում: Մեծ թագուհին խորհում էր, որ վրաց թագուհին, ազատ ելումուտ անելով, կարող էր ինչ-որ նպատակ հետապնդել: Իսկ ի՞նչ դեռ չէր կարող հասկանալ: Իսկ տրամաբանությունը, կյանքի փորձը հուշում էր՝ թե վրաց թագուհին ինչ-որ ակնկալիքներ ունի, ապա ի՞նչ, եթե ոչ ազատություն, իսկ դա նշանակում է Բագարատին վերադարձնել գահը: Իսկ տիրակալը ոչ մի անգամ չի ընդունել վրաց թագավորին: Դա խորհել էր տալիս, թեր-ս Բագարատը վճռել է կնոջ միջոցով վերադարձնել գահը: Յելիանը անիմա էր – ոչ հասու պետական գործերին, սակայն ճարտար է անկողնում, իսկ տիրակալը իգասեր է... Յելիանը, որպես կին, այրող խարույկ է: Նա կարող է անգամ զառամյալ ծերունուն իրդեհել սիրո կրակով: Նա կարող է տիրակալին խնդրել անելու այն, ինչ ինքը չի կարող արգելել, կանխել...

Այդ պահին Կիր-Աննան մտավ Յելիանի տաղավար, խոնարիվեց վայելչությամբ թագուհին ափսոսաց, որ մյուս թագուհիները չեն տեսնում, գոնե մեկը տեսներ, թե հելենուիին ինչ վայելչությամբ է խոնարիվում: Չե որ խոնարիվողը նույնպես թագուհի է, ինչ փուլյթ՝ պարտված թագուհի, թե- մարտի դաշտում չի պարտվել վրաց թագավորը:

- Յաճիր նստել, սիրելի տիկին,- ոչ պակաս գեղեցիկ շարժումով հրավիրեց Յելիանը: Իրար նայեցին սիրով: Կիր Աննան լարված էր, որքան էլ Յելիանը պարզամիտ էր, դարձյալ կարողացավ նկատել, որ վրաց թագուհին ինչ-որ նպատակ ունի: Նա չէր սխալվում:

Կիր Աննան պարանոցից հանեց ոսկյա հաստ շղթան՝ ակնակուռ խաչով, մեկնեց Յելիանին: Սա ետ քաշվեց, և այեց զարմացած: Նա շատ անգամներ էր նախանձով նայել ադամանդակուռ խաչին, պատկերացրել էր այն իր պարանոցից քարշ արած, անգամ զգացել էր խաչի աստիճանաբար տաքացող մետաղը կրծքերի արանքում: Վրաց թագուհու ընծան հանկարծակիի էր բերել նրան:

- Ի՞նչ ես անում, տիկին, ինչպե՞ս կարելի է հրաժարվել այսպիսի շքեղ խաչից, - առանց թաքցնելու զարմանքն ու ուրախությունը, ասաց Յելիանը:

- Ես այն ընծայում եմ իմ հելենուհի քրոջը, - ասաց Կիր Աննան, թեր-ս ժպտաց, սակայն ժպիտը չստացվեց: Դյուրին չէր հրաժարվել հոր ընծայից, սակայն, այն, ինչի համար զոհաբերում էր հոր ընծան, արժեր այդ զոհաբերությանը:

Կինը ընդիանրապես դժվարությամբ է հրաժարվում կրած զարդերից: Կնոջ համար դա ողբերգություն է, սակայն վրաց թագուհին կամային կին էր, մեծ ճիգով տիրապետեց իրեն, արիաբար հրաժարվեց խաչից:

- Ինչպե՞ս կարելի է, ինչպե՞ս կարելի է, - գլուխը կորցրեց Յելիանը, - իսկ ես դեռ ոչ մի բան չեմ արել քեզ համար, ոչ մի ընծա չեմ տվել, - առանց հասկանալու, որ այդ խոսքերով պարտավորություն է վերցնում, - ասաց նա: Կիր Աննան հասկացավ, եկել էր վճռական պահը:

- Ների՞ր, տիկին, մենք՝ հելենուհիներս քույրեր ենք, հարկ է օգնենք իրար, - կախեց գլուխը, ոչ խորհելու, այլ նայելու խաչի բացակայության պատճառով կրծքերի արանքում գոյացած դատարկությանը, ինքոց հանեց: Նա իր բոլոր զարդերը տվել էր մեծամեծներին կաշառելու համար, - որպես քույր խնդրանք ունեմ, օգնիր, խոսիր տիրակալի հետ, թող թույլ տա վերադառնալու Վրաստան: Երկիրն առանց թագավորի կործանվում է: Բազարատը կարող է խաղաղեցնել Երկիրը, մնացած գավառները՝ Դրալը, Օսեթը, Իմրելը, Մեկրելը, Աբխազը դնել հարկի տակ: Դրանք այսօր ըմբռստ են, վեսանում են տիրակալի գործերին: Տիրակալը քեզ չի մերժի: Սիրելի՛ տիրուհի, այստեղ մնալը անտանելի է – ոչ անվտանգ: Յամող գեհի՛ր տիրակալին, - լրեց:

Յելիանը սկսեց խորհել, ինչպես համոզեր տիրակալին, որպեսզի Մելիքեին չխանգարեր: Խաչը, որ կրում էր, պարտադրում էր խորամանկել: Վճռեց այդ գործում դեմ ելնել Մելիքեին: Տիրակալը սիրում է իրեն, կիհշեցնի նրան, որ առաջին անգամ է դիմում խնդրանքով:

Իրոք, այդպես էր: Յելիանը մեկուսի կյանք էր վարում, չէր խառնվում պետական գործերին, չէր սիրում հանդիպել տիրակալի մնացած կանանց հետ, որոնց պառակ դոդոշներ էր համարում, հատկապես Մելիքեին, որ ցցված այտոսկրներով, իրո՞ք, նման էր դոդոշի:

Նա առաջին անգամ պատրաստվում էր միջամտել պետական գործերին, ցանկացավ իրեն թագուհի զգալ: Յանկարծ հասկացավ, որ կարող էր կրիվ սկսել առաջինը թագուհիների մեջ լինելու համար – կարող

Եր անցնել պառավ դոդոշից: Այդ ամենը տիրական պահանջ դարձավ, վճռեց կովի ելնել Մելիքի դեմ, ավա՛ղ, չգիտեր, որ այստեղից էլ սկսվելու էր կյանքի ամենամեծ դժբախտությունը: Սակայն առաջ չընկնենք, դեպքերը նկարագրենք հերթականությամբ...

* * *

Գևացին Թոնդուրեկի կողմը: Զամին դադում էր դեմքերը: Ճանապարհը կարճելու համար գևացին դաշտով: Ջունը սառել էր, ջորիները վարգում էին առանց դժվարությամբ: Զախից Նեխ-Մասիք լեռներն էին: Կանգ առան հանգստի, թե- օրը կիսվել էր, Անահիտը ասաց, որ չի հոգնել:

Թովման գնում էր պահեստի ջորու սանձը թամբից կապած: Այդ կենդանին մնացածներից ավելի էր բարձած, սակայն այդ ջորին մնացածներից ավելի ուժեղ էր, դիմացկուն:

Թովման մեկ-մեկ աչքի տակով նայում էր Անահիտին, սա սառնամանիքից շառագունել էր: Չեր անհանգստանում կանանց համար, քանզի նրանք մուշտակներ էին հագել, ինքն էլ ծանր այծենակաճ էր գցել ուսերին: Թամբի կերին հենած՝ տանում էր հոնի ծանր մահակը, նա մեծ հստությամբ էր տիրապետում մահակակռվի հնարջներին: Նա ու Ասողիկը պատանեկության տարիներին շատ էին իրար շարդել, նա- ուրիշների, այնպես որ, նրա համար մահակը բավական հուսալի գենք էր: Կարող էր պաշտպանել իրեն ու կանանց:

Նրանց խոսակցությանը Արփենին չեր մասնակցում: Խեղճ աղջիկը կորցրել էր եղբորը, մնացել էր մենակ: Նրա հույսը Անահիտն էր, որին սիրում էր քույրական սիրով, – որքան էլ զբաղված լիներ ծանր խոհերով, չեր կարող չնկատել Անահիտի հետ կատարվածը: Անձկությամբ հասկացել էր՝ տիրուհին սիրահարված է աբեղային: Դժգոհ էր, քանզի հիշում էր, թե ինչպիսի հշխանազուն երիտասարդներ էին խնդրում նրա ձեռքը, – այդ ամենից հետո սիրել աբեղային, ո՛չ, այդ ամենը նրա գլխում չեր տեղավորվում: Դրանից զատ, նա այնպիսի տուն էր ցանկանում ընկնել, որպեսզի ապահով ապրի: Ստույգ է, աբեղան նման չէ մնացածներին, եթե հաշվի չառնենք սանն ու պատկերացնենք զորական հարդերձների մեջ, կամ ազատի կերպ մտած, բնավ էլ չի զիշի հշխանազուններին: Ցավոք, այս պահին սա Ե՝ այս ձմեռային ցուրտ ու սառած ճանապարհը, այս շորորուն ջորիները, անհայտություն տանող ճանապարհը... Ոչինչ, թող այս աղունիկները դեռ դունդունան, հշխանուիկն Անահիտին հշխանազուն փեսա կգտնի ու աբեղան կմոռացվի, ո՞վ գիտե, մեկ էլ տեսար իր բախտն էլ բացվեց...

Որքան էլ Թովման զբաղված լիներ խոսակցությամբ, չեր կարող չնկատել քամու ուժեղացումը

- Օրիո՛րդ, - բռնելով ջորու սանձը, ասաց Թովման,- եթե քարանձավ

չգտնենք, կորած ենք, չենք հասնի Դալարից:

Անահիտը բնավ չանհանգստացավ, ևա իրեն երջանիկ էր զգում, քանզի Թովմայի կողքին էր, որ իր երկնագույն աչքերով անրջելու էր տրամադրում, ևա- շերմացնում:

- Ի՞նչ քարանձավ,- ուշքի եկավ, - ձյունը ամեն ինչ ծածկել է, ոչինչ չի եր-ում, իսկ ինչո՞ւ անհանգստանալ, մեր ջորիները շատ ուժեղ են...

- Ես քարանձավի տեղ գիտեմ, մեծ քարանձավի, ուր մեզ ու մեր գրաստներին տեղ կլինի: Նեխ-Մասիք լեռները հարուստ են քարանձավներով: Աստված չանի բուքը սաստկանա, միայն թե հասնենք քարանձավ:

Չուր չեր ասել վանահայրը, որ Թովման ծանոթ է ճանապարհներին. քիչ անց փոքրիկ խումբը կանգ առավ քարանձավի մուտքի առաջ, որ կիսով չափ փակել էր ձյունը: Թովման ոտքերով, ձեռքերով մաքրեց ձյունը, սանձից բռնած ներս տարավ Անահիտի ջորուն: Արփենին ինքն իր ջորուն ներս քաշեց: Քարանձավը այսքան մեծ էր, որ կարող էր երկու հարյուր մարդ պատսպարել: Դրանից զատ անցքեր կային, որ տանում էին ուրիշ քարանձավներ: Թովման ջորիներին տարավ հար-ան քարանձավը, հանեց թամբերը, ծղոտ տվեց, որ հովիվները աշնանը կուտակել էին քարանձավում ճանապարհորդների համար: Կանանց մոտ բերեց մթերքի մախաղները:

Ամեն ինչում եր-ում էր, որ հովիվները, հավատարիմ նախնյաց սովորութեաներին, մեծ քանակությամբ փայտ, խօհիվ ու քակոր էր կուտակել: Թովման խարույկ վառեց: Արփենին ընթրիքի պատրաստություն տեսավ, ապիստած միս, պանիր, քամած մածուն, լավաշ դրեց խարույկի մոտ փոած փսիաթի վրա: Վասքի տնտեսը բարեխողորեն էր կատարել վանահոր պատվերը: Մի խոսքով նրանց արքայական ընթրիք էր սպասում:

Քարանձավը սկսեց տաքանալ, ծուխը, քսվելով պատերին, վեր բարձրացավ, դուրս եկավ տանիքի անցքից, որ ամբողջովին ս- էր: Յայտնի չէ քանի-քանի սերունդներ են օգտվել քարանձավից:

- Լեռը շատ քարանձավներ ունի: Ասում են, թե ինում մի ամբողջ շեն է պատսպարվել քարանձավներում:

- Ումի՞ց,- հարցրեց Անահիտը, որ տաքանալով սկսել էր հետաքրքրվել շոշապատով: Նա սիրով նայեց Թովմային: Նրա կապույտ աչքերի մեջ խայտացող կրակներին: Թովման խաչ հանեց դեմքին, մի պահ սպասեց:

- Այստեղ պատսպարվել են ար-որդիները: Պատում կա այդ մասին, երբ Գրիգոր Լուսավորիչը կործանեց մեհյանները, փախստական հեթանոս հայերը պատսպարվեցին այստեղ: Սևացին մի քանի ամիս, ապա բռնեցին Պարսկաստանի ճամփան: Սեփական երկրից հալածված հայերը գնացին... Ասում են, թե Մեծ Յայքի սահմանների վրա դեռ կան ար-որդիների շեներ, թեր-ս այստեղ պատսպարվածների հետնորդ-

Ներև Են...

Դրսից ինչ-որ ձայներ լսվեցին: Թովման խլեց մահակն ու դուրս թռավ: Կանայք չէին հասցրել խոսել, ձայները մոտեցան: Արփենին ճշաց, Անահիտը դուրս քաշեց դաշույնը, թիկունքով հենվեց պատին: Մինչ նա կվճռեր անելիքը, ներս մտավ մի ծնակոլոլ մարդ, բռնեց գայլ-իւղող շան վզից:

- Մի վախեցեք, սա իմ եղբայրն Ե,- ասաց ծնակոլոլ մարդը: Նրա թիկունքին հայտնվեց Թովման: Նրա տեսքը հանգիստ էր, կանայք հանգստացան:

- Սա խենթ Կայծենն է, սա ել նրա շունն է: Կայծեն, դու շանը հեռու պահիր, դու ել հեռու նստիր խարույկից, թե չէ վրայիդ ձյունը կհալվի, կքշի, կտանի մեզ:

- Սպասի՛ր, հայր սուրբ,- ասաց Կայծենը, մտավ անցքերից մեկը, դուրս եկավ հետ-ից քարշ տալով մի մեծ փսխաթ, զցեց Անահիտի ոտքերի տակ Մի խուրց խոտով փակեց առաստաղի անցքը, ծուխը դուրս գնաց մեկ այլ անցքից, որ Թովման չէր նկատել: Խարույկը ավելի ուրախ բոցավառվեց, ճարճատեց:

Անահիտը հետաքրքրությամբ նայում էր Կայծենին, որի մազախնիվ տեսքը այլ պարագայում կարող էր վախեցնել: Նրա չորչորուկ մարմինը, կարկատաններով պատված կապան, ասում էին այն մասին, որ տերը երկար ժամանակ ծածկի տակ չի եղել: Կայծենի գլխի մազերը այնքան խիտ էին, որ գլխանցի կարիք չէր զգում: Ամենահետաքրքրիրը Կայծենի աչքերն էին, որ վառվում էին ինչ-որ հիվանդագին փայլով:

- Քա՞ց կեր,- հրավիրեց Թովման:

Անահիտը մի մեծ կտոր միս զցեց շանը, սա օդում որսաց միսը, մոմոացրեց, սկսեց ուտել, թվաց, թե շնային լեզվով շնորհակալություն է հայտնում Անահիտին:

- Քա՞ց կեր,- նորից հրավիրեց Թովման, տեսնելով, որ Կայծենը ձեռք չի տալիս ուտելիքին, լավաշի մեջ միս ու պանիր դրեց, տվեց նրան: Կայծենը ամաչելով սկսեց ուտել, փոքրիկ կտորներ էր պոկում մսից, շատ քաղցած էր, չէր ուզում միանգամից իրեն զրկել ուտելու հաճույքից:

- Կայծենը Թոնդուրեկ շենից Է,- ասաց Թովման,- շենի բնակիչները վաղուց, շատ վաղուց հեռացել են, ապրում են այլ վայրերում, իսկ Կայծենը ման է գալիս Թոնդուրեկի փլատակների մեջ, ի՞նչ է փնտրում, զգիտեմ: Խենթ է, Աստված զրկել է խելքից, խեղճ մարդ, սակայն ասում են, թե մեկ-մեկ խելքը տեղն է գալիս, սկսում է այնպիսի բաներ խոսել, որի համար կարող են լեզուն կտրել... Իսկ ի՞նչ կարող է խենթը խոսել, ո՞ւմ է հայինյում, ո՞ւմ է անիծում, այլ-ս ի՞նչ պատիժ, Աստված արդեն պատժել է...

- Քա՞՛, հա՛յր սուրբ, կերանք, խմեցինք, կշտացանք ես ու շունս, մեկ ել շենս կշտացավ, մենակ եկեղեցին է, որ չի կշտանում, հի՛, հի՛, հի՛,-

հոհոաց Կայծենը, աևկուշտ Եկեղեցին...

Թովման գլուխն օրորեց:

- Սստված կպատժի, այդպես մի՛ խոսիր:

Կայծենը կուլ տվեց հացի վերջին պատառը, ժպտաց խելացի, իմաստալից աչքերով, նա- հեգնանքով, որով զարմանք պատճառեց Թովմային:

- Մեր բախտից խելքը գլուխն է Եկել: Ես շատ եմ հանդիպել Կայծենին, սակայն զարմանալին այն է, որ այս անգամ ինչ-որ այլ կերպ է խոսում: Չրուցենք, տեսնենք, ի՞նչ կասի: Քարկավ, չարալեզու է, ի՞նչ կարող ես անել, տուն ու տեղը կորցրած մարդ է...

- Իրավացի ես, հայր սուրբ, ես ել ասելիք ունեմ, այս ել քանի տարի է, հաշվի՛ր, երեք հարյուր տարի է, ինչ կործանեցին մեր շենք,- հեգնախառը ժպտաց,- ինձ ո՞վ է լսողը,- հեգնախառը ժպտաց, - ինձ ո՞վ է լսողը... Ես միշտ չեմ, որ այսպես եմ Եկել: Ես ել տուն ու ընտանիք ունեի... Չկա՛, Աստված պատժեց, իլեց ամեն ինչ, քանզի հորդորում էի մերուց ետ գալու, շենացնելու մեր Թոնդուրեկը,- գլուխն առավ ափերի մեջ,- մի Թոնդուրեկ ու մի աշխարհ, որ Եկել էր մեր դեմ՝ պապիս պապի դեմ... Ելել էր մի ամբողջ աշխարհ, զորք ու իմաստասեր մի մագիստրոս... Մեկը լիներ հարց տար, որ զորավար ես ու հաղթող, ինչո՞ւ լքեցիր հայրենիքդ, ինչո՞ւ հեռացար, ինչո՞ւ դեմ չելար Անին ծախողներին, Գրիգոր մագիստրոս Պահլավունի,- մատը վեր տնկեց,- Դու լսո՞ւմ ես, Թովմա աբեղա, Բարողոհի Եպիսկոպոս, որ առանձնացար քո Եղբայրներից, հայացար, մարդ դարձար, դու լսո՞ւմ ես, Թովմա՛ աբեղա, այս ել քանի Գրիգոր է մեր խեղճ ու կրակ ազգի գլխին կրակ թափում: Մեկը՝ սուրբ կոչեցյալ Գրիգորը, Աստծո կրոնը տարածեց, մի ամբողջ ժողովուրդ լցորեց գետն ու բռնի դարձի բերեց: Մյուս Գրիգորը մեր շենք այրեց: Գիտե՞ս, օդիորդ, մեր շենից այսօր ել ծուխ է Ելսում՝ հույսի ծուխ, որը չի մարում... Թովման զարմացած նայեց Կայծենին, հետո Անահիտին

- Անհավատալի է,- խաչ հանեց դեմքին, - խենթը խելացի բաներ է պատմում:

Այդ ամենը գրված է մատյաններում, որտեղի՞ց գիտե խենթը

- Նա քնակ էլ խենթ չէ,- ասաց Անահիտը:

- Կայծեն, Կայծեն, դու որտեղից գիտես այդ ամենը, դու գիր գիտե՞ս...

- Ի՞նչ գիր,- հեգնեց Կայծենը,- միթե՞ չգիտեմ Աստծո պատգամները, մեր նախահոր՝ Մեծն Սմբատի խոսքերը, պատգամները, մի՞թե այդքան անիմա եմ,- Թովման ավելի զարմացավ, այն, ինչ կարդացել էր մատյաններում Թոնդրակյանների մասին, այդ խենթ հոչակված մարդն է պատմում, որպես սեփական շենի ու գերդաստանի պատմություն: Նրան թվաց, թե դեմք մի նոր Սմբատ Զահր-անցի է կանգնած, սարսուաց սրբազն սարսուռով:- Տե՛ր Աստված, փրկյա՛ մեզ սատանայից ու նրա փորձություններից...

- Ի՞նչ ես սատաևայից ու փորձություններից խոսում, աբեղա՛, թե-պետ քեզ չեմ մեղադրում, քանզի ազնիվ մարդ ես, քեզ Բարդողի եախ-կոպոս է հռչակել նորօրյա Սմբատը՝ Մեր Մարտիրոս եղբայրը,- լռեց, լռել էր նա- Թովման, նա սպասում է Կայծենի խոսքին, - ես ինձ այսօր կուշտ ու ապահով եմ զգում... Յիշողությունս տեղն է, ասես այսօր են կատարվել այն աշխարհասասան դեպքերը: Ներող եղիր, օրիորդ, ես մեռել եմ ու հառնել, հառնել եմ նախնյաց գերեզմաններից: Տեսնում եմ հզոր Թոնդուրեկը, Սմբատ նախահորը, որ սուրբ կրակով վառեց մեր սրտերը... Ես հուր ու սուր եմ տեսնում, հարձակվող զորքեր, սրերի շա-ռաչ, իրդեհներ, դիակնե՛ր, դիակնե՛ր, դիակնե՛ր, դիակնե՛ր,- Անահիտը սարսափահար փարվել էր Թովմային: Սա իր հերթին դյութված, նայում էր խենթ կոչված, սակայն ոչ խենթ մարդուն, որ ասես ինքը հայոց պատմությունը լիներ, որ բացել էր իր արևոտ եշերից մեկը: Կայծենի աչքերը վառվում էին զայրալից ու ահեղ բոցով: Նրանցից նա- իմաս- տություն էր առկայժում: Նա ասես ինքը՝ Մեծն Սմբատը լիներ, որ հառ-նել էր երեքդարյա պատմության մոխիրներից ու կոչ էր անում՝ քննելու հայոց պատմությունը, անգամ Աստծուն Էր դատի քաշում, մերժում էր՝ մերժվելով... Մերժում էր ամեն ինչ, որ միշնորդ էր Աստծո ու մարդու միջ-:

Ես ընդունում եմ Աստեսանելի ու անշոշոփելի Աստծուն,- գոռում էր ահեղաձայն, գոռում էր Սմբատի փոխարեն, - Ես, ազատ կամքով ըն-դունում եմ Աստծուն, տիեզերական անվախճան Աստծուն, մնացածը խաբեություն է: Ես ընդունում եմ մեր նախնյաց՝ հզոր հայարիներին, այսինքն այն, ինչը մերն, ինչը մերը չէ՝ չեմ ընդունում: Ի՞նչ Որդի, Զրիս-տոս կոչեցյալը չի եղել, ստում են արծաթապաշտ հոգ-որևերը, ստում են մարդկանց մոլորեցնելու համար, իրենց լցնելու համար: Չկա՛, չե՛ն ե-ղել, սուրբ է միայն հայ ազգը, իսկ մնացածները Աստծո ստեղծածներն են, ենթակա են մահվան ու մոռացման, սուտ Ե...

- Սպասի՛ր, խենթ,- ինքն էլ վատ զգաց խենթ բարի համար,- սպա-սի՛ր, Կայծեն,- ուզեց ասել Սմբատ, - սպասի՛ր, սակայն կա Աստված ու Նրա Որդին, նա- Անմահ Յոգին,- Թովման անգիտակցորեն ավելի ու ա-վելի ուժեղ էր սեղմում Անահիտին իր կրծքին, ասես ցանկանում էր Նրան պաշտպանել սրբապիղծ խոսքերից:

- Եթե եղել է, ապա մարդ է եղել, մի պղծեք երկինքը այդքան աստ-վածներով ու սրբերով... Սուրբ Սմբատ, սուրբ Մարտիրոս, դու՛՝ Էլ ես սուրբ, աբեղա, սակայն իշնելով Բարդողից, դարձյալ եղծեցիր քո սրբու-թյունը...

- Կայծեն, դատաստանի օր կա... Կայծենի աչքերը վառվեցին:

- Թող գա՛ օրը դատաստանի, առաջին հերթին պատժվելու են հոգ-որևերը, քանզի դարերով խաբել են մարդկանց, խաբել են անդրշի-րիմյան կյանքով, չկա՛,- գոռաց քարանձավով մեկ,- մարդը նյութեղեն է, մեռնելուց հետո նյութը մեռնո՞ւմ է, ոչինչ չի մնում, նոր բան ստեղծել

ոչչից - անհնա՞ր է: Վե՛րջ տվեք խաբեռլթյանը...

- Կայծեն, մի՛ պղծիր քեզ սրբապիղծ խոսքերով, մի՛ հերձվեցիր:

Կայծենը ոտքի ելավ, կանգնեց հանց ահեղ դատավոր::

- Ո՛չ, աբեղա՛, այդ դուք՝ հոգ-որևերդ եք պղծում կրունը, իսկ ես՝ Սմբատ Զահր-անցիս, ազատ կյանքի կոչ եմ անում ձեզ՝ մարդի՛կ, ոչ թե մեռնելուց հետո, այլ այս կյանքում կոչ եմ անում ապրել հայարիների պես, հպարտ ու անկախ: Ես դեմ եմ եկեղեցուն, խաչին, ձեզ՝ հոգ-որևերդիդ, որ կեղծ միջնորդ եք Աստծո ու մարդկանց միջ-: Այդ հոգ-որևերդ սպանել տվեցիք ինձ Մանազկերտի ամիր Աբու Բարդիի ձեռքով, իսկ Գրիգորը, հիշի՛ր, որդի՛, քանի շեն ավերեց: Չե՞ս հիշում, երիտասարդ ես, իսկ ես, որ երեք հարյուր տարեկան եմ, կասեմ՝ Թուղուրեկը, Խնուրունը, Կաշենը, Թուլայը: Դո՞ւ, աբեղա՛, չգիտես, սակայն ես կասեմ քեզ: Ես ազատ մարդ եմ: Մի՛ մոռացիր, որ Աստված մարդկանց հավասար է առարել, իսկ դուք անգամ այս ճշմարտությունը եղծեցիք... Իսկ նա քնել է:

- Ո՞վ, - զարմացավ Թովման:

- Օրիորդը, խեղճ աղջիկ, սիրում է հոգ-որի, որ այրական սիրո փոխարեն հոգին լցնելու է սին աղոթքներով, ունայնություն քարոզելով: Դե, պառկեցրո՞ւ այծենակաճի վրա: Դու ել աղջիկ, ի՞նչ ես աչքերդ չռել, օգնի՛ր տիրուհուդ,- Արփենին ուշքի եկավ, ծածկեց Անահիտին այծենակաճով:

- Ամենքս ել հավասար ենք,- մանր-մանր ծիծաղեց Կայծենը,- ևա կընի մուշտակի վրա, իսկ այս աղջիկը, որին Աստված հավասար է ստեղծել իր տիրուհու հետ, կընի մերկ գետնին: Արի հեռանանք խարույկից,- ասաց Թովման, - սակայն ոչ շատ հեռու: Ես մեռնելուց հետո դեռ չեմ տաքացել: Ես ամեն օր ինքս ինձ հետ խոսում եմ, քիչ անց կակսեմ պատմել ինչպես սպանեցին ինձ: Այդ պահին ել կդիվուտեմ: Եթե չես ուզում, որ մեռնեմ, այս գդալով դուրս քաշիր լեզուս բերանից, իսկ եթե, որպես պատիժ հերձվողական խոսքերիս... Կարող ես թողնել, որ մեռնեմ... Ճանս տիրություն կանես: Նա ինձանից երջանիկ է, քանզի չգիտե կյանքի ճշմարտությունը: Գիտե՞ս, աբեղա՛, ես շատ ծեր եմ, հոգնել եմ կյանքից... Արդեն երեք դար է, ինչ ապրում եմ... Այ, մարմինս մեռել է, իսկ անունս ապրում է մարդկանց հուշերում,- լոեց խոսքի կեսից, նայեց շանը, որ դեպի ելք էր գնում, սակայն խելացի կենդանին չէր հաջում:

- Սը՞ս,- սաստեց Կայծենը,- գազան կա, գայլ չէ, կոռնար, եթե մարդ է, Բրդոտը կհաչեր: Թեր-ս հովազ է կամ քուն չմտած արջ է: Ես քին ամեն կենդանի տաք տեղ է փնտրում: Յը՛, Բրդո՞ւ, ի՞նչ կա,- արագ շարժումով, որ չէր համապատասխանում նրա հյուծված մարմինն, մախաղից մի ծանր տապար հանեց: Գնաց շան հետ-ից: Կամաց մի կողմ քաշեց դուան փսխաթը, շունը դուրս թռավ: Կռվշտուկի, կաղկանձի ձայներ լսվեցին: Կայծենը դուրս թռավ: Թովման մահակը ձեռքին հետ-եց Կայ-

ծեսին:

Զարանձավի մուտքի մոտ Բրդոտը կռվում էր հովազի հետ: Կայծենը պտտվում էր նրանց շուրջը, հարմար պահի էր սպասում զարկելու, սակայն զարկը տվեց Թովման: Մահակը ողջ թափով զարկեց հովազի գլխին: Գազանը շշմեց, երկրորդ զարկը տապարի բութ կողմով տվեց Կայծենը:

Հովազն անշարժացավ:

- Փառավոր որս արեցինք,- շունչը ետ բերեց Կայծենը:
- Արի ներս տանենք,- ասաց Թովման:

Գազանին քարշ տալով տարան քարանձավ: Կանայք ճշացին: Գազանը անսովոր մեծ էր, մորթին շատ գեղեցիկ էր: Կայծեն մորթազերծ արեց գազանին, մարմինը դուրս նետեց:

- Գայլերին կեր, մինչ- առավոտ չեն անհանգստացնի: Ես մորթին ինձանից ընծա իշխանուհուն, որ իհշի խենթ Կայծենին, որ խենթ է միայն խենթերի հետ:

- Ծնորհակալ եմ, Կայծեն եղբայր, - Ժպտաց Անահիտը, - արքայական ընծա է:

Թովման նստեց խարույկի մոտ, փայտ ավելացրեց կրակին, նստեց այնպես, որ շերմությունը հասներ կանանց: Զարանձավի ելքը փակեց Բրդոտը: Նրա կողքին պառկեց Կայծենը: Թեր-ս կուշտ լինելն էր, որ գիշերը հանգիստ քնեց: Գիշերվա մնացորդն անցավ խաղաղ: Խարույկի բոցերը խաղում էին քարանձավի պատերին՝ իրենց հետ տարութերելով Թովմայի ստվերը: Յանկարծ Թովման իր վրա հայացք զգաց, սթափվեց դառը խոհերից, տեսավ Անահիտի մեղմ հայացքը: Նրա աչքերում այնքան սեր կար, որ աբեղան տևքաց: Սակայն բնությունը թելադրում էր իր կամքը, աղջկա աչքերը կամաց-կամաց կուլ գնացին գիշերվա հրամայականին, քնեց: Թովման չկարողացավ քնել: Նա կանգնած էր անհայտության շեմին, ի՞նչ էր բերելու ճակատագիրը նրաց խռովահույզ հոգիներին...

* * *

Վերջապես կայացավ վրաց թագավորի ու Լանկ Թամուրի հանդիպումը:

Նրանք մենակ են, չհաշված թիկնապահին: Սա կանգնած է տիրակալի թիկունքին. մերկ սուրը ձեռքին՝ Ժպտում է Վրաց թագավորին: Եթե Կիր Աննան զգուշացրած չլիներ, թիկնապահի Ժպտի պատճառի մասին, թեր-ս, զարմանար: Յիշելով կնոջ խոսքերը՝ այլ-ս ուշադրություն չդարձրեց թիկնապահին: Նրան էր նայում աշխարհի տիրակալը՝ Լանկ Թամուրը, Տիկիսը կործանողը, բնակիչներին կոտորողը...

Տիրակալը նայում էր կկոցված աչքերով, մտովի թագավորին համեմատում էր իր հետ, որից նրա մեջ նախանձ էր ծնվում, քանզի Բագարա-

տը մի քսան տարով երիտասարդ էր, առևական, գեղեցիկ այրմարդ էր, այդպիսիններին կանայք սիրում են մինչ- խոր ծերություն:

- Ի՞նչ խնդրանքով է մեզ մոտ եկել վրաց նախկին թագավորը,- առանց նախաբանի, շեշտելով նախկին բառը, հարցրեց տիրակալը,- խոսի՞ր:

Բագարատը խոր շունչ քաշեց

- Ասեմ, ոչ երկնչեմ տիրակալ. վերադառնալ տուն, տիրել գահին, որ ժառանգաբար մերն ե,- դիմացավ տիրակալի ծակող հայացքին,- ի՞նչ օգուտ մեզ այստեղ պահելուց, երբ Վրաստանի կեսն ըմբոստ է: Քեզ իմացում, տիրակա՞լ, մենք կարող ենք գավառները խաղաղեցնել, հարկատու դարձնել քեզ...

- Առանց քեզ ել աշխարհը մեզ է հարկատու:

Բագարատ թագավորը վճռեց գնալ քայլի, որին դեմ կլիներ թագուհին: Նա իրեն վիրավորված էր զգում, չուզեց ոչ զայրույթին, ոչ լեզվին պատվար դնել:

- Ո՞չ բոլորը, աշխարհի մի մասը տիրում է Բայազետ սուլթանը՝ կայծակսային Բայազետը, մյուսին՝ Ոսկե Յորդան՝ Մեծ Խան Թողթամիշը, նրանից հյուսիս Մոսկվան Է՝ Ռուսիան: Այստեղ ոչ մի սուր չի գործի, դեպի ար-Ելք Յնդկաստանն է, ապա Չինաց Երկիրը: Մեծ է աշխարհը, տիրակալ,- ծիծաղեց Բագարատը,- ամենքին ել բաժին կհասնի, մեկը լինել տիրակալների մեջ,- զայրացավ, շուկեց ուսերը, ասես մարտահրավեր էր նետում տիրակալին,- ցնորք է, անիրագործելի...

Վաղուց տիրակալը չէր լսել ընդդիմադիր խոսք, չէր տեսել այդքան հպարտ պահվածք: Կճռեց պարզել ի՞նչ կա այդ մարդու մեջ:

- Ինչո՞ւ,- սպասածին հակառակ,- շատ հանգիստ հարցրեց Թամուրը:

- Չի եղել ու չի լինի: Ա՛յ, Չինգիզ Խանը, որի հորդաների պես հզոր աշխարհը չէր տեսել, իսկ ի՞նչ մնաց այդ հզորությունից... Դու հազիվ կարողացար մասնատված Երկիրը նվաճել... իսկ քո մահից հետո որդիներդ բաժան-բաժան կանեն տիրույթներդ: Ներող Եղիր, տիրակալ, ի սկզբանե այդպես է եղել, դու բացառություն չես: Ալեքսանդր Մակեդոնացին աշխարհ էր տիրում, ի՞նչ մնաց՝ ոչինչ: Նրա նվաճած Երկրները մնացին իրենց սահմաններում, այսինքն իրենց տերերին... Ստրկության դեմ է հանում նվաճված Երկրների ժողովուրդներին, չանսանք այս պարագան - ոչ էլ արհամարհենք: Դա է, որ անհնարին է դարձնում աշխարհին տիրելը: Իսկ դու չե՞ս խորհել այս մասին...

Այս ամենը հանդգնություն էր որ կարող էր ավարտվել Բագրատի գլխատմամբ, սակայն վրաց թագավորը, որ այսքան ժամանակ իրեն նվաստացած էր զգացել, վճռեց հպարտ մեռնել: Փառք քաշին...

Թամուրը ս-եռուն նայեց Բագարատին, մտովի հիացավ նրանով, նրա համարձակությամբ, ապա զայրացավ, որ նա այդքան հանդգնում է, սակայն վերջ ի վերջո հաղթեց սթափ միտքը, նա տիրակալ էր, չէր

կարող անպատիծ թողնել անհնազանդ գերուս, թեկուզ թագաղիր գերուս:

- Լւել էի, որ քաջ մարդ ես: Բավական է մի նշան տամ Զինգիզին, գլուխսդ մի զարկով կթողնի,- ոչ տապարի տակ՝ դահճի, այլ այստեղ՝ ոտքերիս տակ: Մի՛ խարբիր սրա ժպիտին, սա այսպես ժպտալով էլ կգլխատի քեզ, մի զարկով:

- Դու դա չես անի, տիրակալ,- հանգիստ ասաց Բագարատը, - անհմաստ է, զուր կկատաղեցնես առանց այն էլ կատաղած հպատակներիս: Գիտե՞ս, կա նա- այդպիսի զգացում՝ ինչպիսին է նվիրվածությունը: Ջո մարդիկ կոտորածներից զատ ոչինչ չեն տեսնում: Ջո մարդիկ խորհում են վտանգի մասին: Յամընդհանուր վախ կա քո մեծամեծերի մեջ: Դու սպանել ես տվել տասնութ թագավորների: Նրանցից շատերը, եթե ողջ լինեին, թեր-ս քեզ ավելի օգտակար լինեին, քան այն սարսափը, որ տարածվել է այդ անհեթեթ սպանություններով... Դու կարող ես մի գլուխ էլ ավելացնել այդ փառահեղ շարքին, կասկածում եմ, որ դա հաճո լինի Ալլահին:

Թամուրը անհանգիստ շարժվեց բարձերին, վիրավոր ոտքը երկարեց, տևքաց ցավից:

- Կարող եմ հիմնահատակ կործանել երկիրդ, ոչ մի կենդանի շունչ չթողնել: Մի՞թե հասու չես այդ վտանգին:

Սառը արհամարհանք ծնվեց Բագարատի դեմքին:

- Ինչու պիտի ավերես երկիրս, չե՞՞ որ դիմադրելու են ու դու զոհեր կտաս, իսկ քեզ ուժեր են պետք Բայազետի կամ Թողթամիշի հետ չափվելու համար: Թողթամիշը ուր որ է կլցվի Դերբենդի անցքից: Դու դեռ չես չափվել Բայազետի հետ: Ասել է թե դու պատրաստ չես պատերազմի... ի՞նչ օգուտ իմ երկիրը ավերելուց, շատ-քիչ մի քանի հարյուր զինվոր զոհես կամ հազար,- ի՞նչ է, քիչ զոհեր տվեցիր Յայաստան աշխարհում: Մի զարմացիր, որ հանդգնում եմ այդպես խոսել: Ականջ արա, տիրակա՞լ, մնացած մարդիկ ել հաշվել գիտեն: Ես զորական եմ, ես ել եմ հաշվում, իմ գլուխս էլ թագակիր ե...

- Չկա այդ գլուխը, ես քեզ գլխատել կտամ:

- Սակայն կա մի երկիր, որ չես կարող առանց զոհեր տալու տիրել,- Բագարատը նստեց գահավորակին:

Տիրակալս ապշեց: Նրա մոտ դեռ ոչ ոք չեր նստել առանց նրա թույլտվության, սակայն նստողը թագավոր էր: Դժվար չեր նրան սպանելը, իսկ նրա ասածները չես կարող չընդունել - այդ ամենն ասում է պարտված թագավորը, սակայն նա մարտի դաշտում չի պարտվել: Նա խելացի վարվեց: Իսկ ի՞նչ կլինի, եթե կոտորեի Վրաստանի բնակչությունը, չե՞, օգուտ չկա, երբ Բայազետի վրա գնամ, հայերին կմիանան նավրացիները, կզարկեն թիկունքիս, եթե այդ ամենը չհասկանա Բայազետը, ապա կհուշի վեզիր Ալին: Իսկ Վրաստանը ավերելուց միայն թալան կհանի,- հանկարծ հիշեց, որ այդ մասին խնդրել է Յելիան տիկինը,

ինորել է ազատ արձակել Բագարատին: Կարելի է ազատ արձակել, սակայն ինչպես ապահովել նրա հավատարմությունը: Պատանդ վերցնելը ելք է, հարկավոր է խորհել այդ մասին:

Վրաց թագավորի ասածները նրա համար նորություն չեր, իսկ եթե հասունացել է պատերազմը, ո՞ւմ զարկել ... Ապշեց, երբ լսեց Բագարատին:

- Դիմիտրի իշխանը մի անգամ լավ շարդ է տվել Մամայ խանին...
- Դու իմ խոհերի հետ գործ չունես,- Փշացրեց Թամուրը,- ասա՝, ի՞նչ գիտես վիճակի մասին:

Բագարատը մորուքն առավ ափերի մեջ, նայեց քմծիծաղով:

- Եթե Ռուսիան փորձի շարժվել Ոսկե Յորդայի վրա, դու կարող ես ճակատել Բայազետի հետ, սակայն Մոսկվայում էլ գործերը խառնակ են, այստեղ էլ իրար միս են ուտում, կրիկ է իշխանության համար:

- Այլ-ս ի՞նչը կարող է զապել Թողթամիշին, նրա ծերքերն ազատ են:

- Իրավացի ես, տիրակալ, մեր վաճառականներն ել ոչ մի հուսադրող լուր չեն բերում Ռուսիայից, ոչինչ չի արվում միավորվելու, միացյալ ուժերով Յորդային զարկելու...

- Խելացի ես, Վրաստանի թագավոր,- անկեղծորեն ասաց Թամուրը,- Բավականին տեղյակ ես հար-անսերիդ գործերին:

Բագարատը ժպտաց, տիրակալը զայրացավ:

«Սա այսպես ժպտալով ուզածդ կնոջը խելքից կհանի, սակայն ես կին չեմ, նա ինձ չի կարող ծուլակել»:

- Տիրակալ, դու ինձ թագավոր կոչեցիր, դա չի նշանակում, որ համաձայն ես ազատ արձակելու,- հարցը ուրիշի համար հանդգնություն էր, սակայն Բագարատը տիրակալի մոտ էր մտել թագը գլխին,- Ես մարդ չեմ անգո ու անշնորհակալ: Ես քո սրի տակ կդնեմ Դրալը, Օսեթը, Իմերելին, Մեկրելին, Ափխազը, Մեսխին, մի խոսքով ողջ Վրաստանը: Վճռի՛ր, տիրակա՞լ կամ կտրիր գլուխս, կամ վերադարձրու ազատությունս: Իմ առաքելությունը հայրենիքիս փրկությունն է,- Բագարատը ոտքի ելավ, կանգնեց հպարտ, առևական, եթե Թամուրի մեջ նախանձ չլիներ, կիհանար վրաց թագավորով,- թեկուզ ենթակա, միայն թե փրկեմ երկիրը:

«Խելացի ես, վրաց թագավոր, սակայն տափաստանի ծեր գայլը գիտե ինչպես վարվել: Ազատություն կստանաս մեծ զոհաբերության գնով...»:

Երկար, երկար նայեց Բագրատին: Այն, ինչ պիտի ասեր, այն պայմանը, ինչ պիտի դներ վրաց թագավորի առաջ, ուզածդ մարդուն կհաներ հավասարակշռությունից, մարդ կարող էր անգամ խելագարվել:

- Պայմանս է՝ իսլամ ընդունել, վե՛րջ,- արագ, համարյա գոռաց տիրակալը, կառչուն հայացքը մինեց Բագարատի աչքերի մեջ, սա, որքան էլ կամային մարդ լիներ, չկարողացավ չընցվել, ասես տապարով զարկեցին ճակատին: Նայեց այսպիսի հայացքով, որ թիկնապահ Չինգիզը

քայլ արեց, խոր շունչ քաշեց, տիրակալը հասցրեց բարձրացնել ձեռքը, եթե մի ակնթարթ ուշանար, թագավորի գլուխը կթռչեր կայծակնային զարկից:

- Քաջ մարդ ես, Վրաստանի թագավոր, իցիվ այդպիսին լինեին իմ զորապետները: Խորհիր պահանջիս վրա, երբ համաձայնվեցիր, իմաց տուր Յելիան տիկնոց միջոցով,- քմծիծաղ տվեց,- Գևա՛, թող Ալլահը քեզ բարի միտք հուշի: Դու թագավոր ես, երկիրը քոնն է, դու՝ երկրինը...

* * *

Սասունում Սոսը հայտնի է որպես «Սիրտը վառված մարդ», թուրքերը սպանել են կողը ու երեխաներին, այլ-ս ի՞նչ կյանք: Սոսին վրեժից զատ ոչինչ չի մնում կյանքում:

Սա ի՞նչ կյանք է, Տեր Աստված, այս ի՞նչ կյանք ես բաժին հանել մեզ՝ հայերիս, երկու հայից մեկը կրակված է հոգով, մեկի կողը են սպանել, մյուսի՝ երեխաներին, ծնողներին, հարազատներին, ազգականներին: Ինչ անապահով կյանք է, ամենքն էլ վրեժի տեր են, մի՞թե սա է աստվածային արդարադատությունը...

Նա վրեժ է առնում թուրքերից ու ամեն տեսակ կեղեքիչներից: Ասում են՝ հոգով թոնդրակյան է, հերձվածող, երեսին խաչ չի հանում, եկեղեցի չի գնում: Ինքն իրեն ազատ է համարել Աստծուց անգամ: Ոչ ոքի հաշվի չի առնում, ինքն է իր գլխի տերը: Ասում են, սակայն արի տես, որ նա այդ ամենը հերքում է, ասելով, որ զոպարտում են իրեն, որ ինքը եկեղեցու նվիրյալ զավակն է, որ խաչը ամենամեծ սրբությունն է նրա համր այդ պահին այնպիսի շերմեռանդությամբ է խաչակնքում... Դե, արի ու հավատա մարդկանց: Վիր սրա պես աստվածավախ մարդ չկա, ել ինչ հերձվածող: Այդպիսին է Սոսը: Յայրը նրա անունը փոխ է առել Սիս սարից: Ասում են՝ հայրն էլ բարի պտուղը չէր: Խութում հայտնի էր որպես չարալեզու, նույնպես հերձվածող, ավելին՝ շատերը զարմանում էին, իրեն հայարիական էր համարում: Ասում են, թե կովի ժամանակ սպանել էր թուրքերի հրամանատարներից ամենավայրագին՝ Յասանին, մի հսկա մարդու:

Սոս կամ Սիս, մեկ է նրա համար, ըմբռստ հոգով, Սիս լեռան պես, որքան ել խաչ հանի դեմքին: Մեկ է, ամենքն ել գիտեն, թե ով է նա, ինչ կա հոգում: Երբ կար ընտանիքը, դեռ հավատք կար հոգում, իսկ երբ զրկվեց ընտանիքից, թքեց ամեն ինչի վրա, դարձավ վրիժառու: Թուրքերը կոչում են հարամի, փնտրում են, որ ձեռքերն ընկավ՝ կտոր-կտոր կանեն, սակայն արի տես, որ բռնել չեն կարող, ասես ձուլվել է Սասոն լեռներին, մտել է սասունցիների ու խութեցիների հոգու մեջ: Չկա՛, չենք տեսել, չենք ճանաչում, քմեղանում են հայերը, իսկ մի օր անց Սոսը չոքում է թուրքի բկին, կամ հարկահանի հոգին է հանում, քսակի պարունակու-

թյունը բաժանում է աղքատներին: Եթե մոտերքում թուրք կամ ծախու հայ չկա, ասում են՝ մեր թոնդրակեցին, հպարտանում են նրանով, երդվում են նրա ար-ով:

- Այս, Սոս եղբայր, մի՛ նեղացիր, երբ մոտերքում թուրք կամ «հայուկ» կա, ասում ենք ավազակ ես, հարամի, հետո ել եկեղեցում քո հոգու փրկության համար մոմ ենք վառում, մեր եղբայր...

- Դու իմ հոգու հետ գործ չունես, չկա հոգու անմահություն, ես է, մենք ենք ու մեր սարերը,- տարածում է ձեռքերը,- կովենք մեր Սասունի ու Խութի համար, ապրենք այսօր, հույս մի դրեք հանդերձյալ կյանքի վրա: Ես կյանքում ապրեք մարդավարի: Ազատ եղեք հոգով, դա ընդունելի է Աստծու... Մի՞թե շինական մարդը համոզված է, որ չկա հանդերձյալ աշխարհ, թե՞ կրկնում է ինչ-որ մեկի խոսքերը, թե՞ նրա մեջ հառնել են ըմբոստ թոնդրակյանները, որ չեն խոնարհվել հոգ-որների առաջ: Յապատ ու անկախ են ապրել, նա- հոգով ազատ: Ասում են, երբ սպանեցին Սմբատին, թոնդրակեցիների հոգիները կրակեցին ու դեռ ծխում են մինչ-օրս, դեռ կրակը մլմլում է, մեկ էլ տեսար դուրս է ժայթքում, լուսավորում է մարդկասց հոգիները...

- Մեղա՛, տեր Աստված, մեղա՛ - խաչ է հանում դեմքին զրուցակիցը:

- Ես էլ մեղա՛,- չքմեղանում է Սոսը, հօհօռում:

- Մենք ին գիտենք մեր եղբորը:

- Լա՛վ, լա՛վ,- փնթփնթում է Սոսը:

... Սոսը Սասունից եկել է Խութ, ապա իջել Մշո դաշտ: Դժվար ճանապարհ է, սակայն սովոր է դժվար ճանապարհներին: Չգիտես ինչպես, ականջալուր է Գաղտնի Ուխտի մասին, որ կոչ է կոչում՝ դեմ ելնել չաղաթայներին, ամեն տեսակ թուրքմաններին: Ստույգ է, այս տարի չաղաթայները չհասան Սասուն, սակայն սասունցիները լսել են չաղաթայների վայրագությունների մասին: Գիտեն, լսել են - հպարտացել են Մարտիրոսի գործերով:

Սասունցիները կրվող ժողովուրդ են: Չկա Յայաստան աշխարհում մի թշնամի, որ իր վրա զգացած չլինի սասունցի ասպետների ուժը: Նրանց մասին գիտեն, նրանցից սարսափում են անգամ Եվրոպայի թագավորները: Խաչակիրներն անգամ զգացել են նրանց ուժը: Նրանք անզիջում են մարտում:

Ըմբոստ է Սասունը այսօր, վաղը, հավիտյանս հավիտենից: Սասունցիների մեջ հառնել են հայարիների հոգիները, Սասնա ծռերի հոգիները: Սասունցիները ի լուր աշխարհի հայտարարում են որ արիականք արարվել են Սասն լեռներում ու տարածվել են աշխարհով մեկ: Ասում են, որ արիները արարվել են իրենց նախահայրերից՝ Սանասարից ու Բաղդասարից...

Յայոց Գաղտնի Ուխտը հույս էր ծնել Սոսի մեջ, արդ, կմիանա Ուխտին ու կրեծ կառնի թուրքմաններից ու չաղաթայներից կամ ազգացակ հայուկներից... Ստքով տարված չեր նկատել, որ անցնում էր Մշո դաշ-

տով: Քամին կամաց-կամաց ուժ էր հավաքում: Նա լավ գիտեր, որ Յովազը՝ հավատարիմ նժույգը, իրեն տեղ կհասցնի, չի թողնի ճանապարհին:

Անցավ դաշտով, առաջին շենք, որ պիտի հանգստանար, Առաքելոց վանքի շենքն էր: Առջ-ում կիսավեր բերդ կար, անցավ բերդի կողքով, գնաց Թիլի կողմը, այնտեղ ընկեր ուներ: Կգիշերեր Մհերենց տանը, առավոտյան կշարունակեր ճամփան: Մյուս օրը հույս ուներ հասնել խլաթ, այնտեղից ծովակի ափով պիտի գնար Արճեց, գտներ ձկնորս Ասողիկին, ցույց տար երկու տեղով հանգուցված դաստարակը: Այդ նշանվ ձկնորսը պիտի հավատար նրան, ասեր նրա անելիքը:

Այդ նրան հայտնել էր մի երիտասարդ հոգ-որ, որի հետ, ինչպես սկզբում թվաց հանդիպել է պատահաբար: Նրանց մոտեցել էր մի հոգ-որ ու փսփսացել էր երիտասարդ, սպիտակամազ հոգ-որի ականչին, որ Սոսը՝ «Վառված» մարդ է, վստահելի, այնքան բարձր էր խոսել, որ այդ ամենը լսել էր Սոսը: Սպիտակամազը գրկել էր նրան, առանց երկար-բարակ խորհելու տվել էր ձկնորսին գտնելու նշանը: Սոսը սկզբում այդպես հապշտապ իրեն վստահելը համարել էր անզգություն, արդ, հասկացավ, որ երիտասարդը իրեն հավատալու հիմք ուներ:

Եթե հոգ-որները այդպիսի սուրբ գործի են լծվել, նա պատրաստ էր փոխելու կարծիքը նրանց վերաբերյալ: Սոսը պատրաստ էր անգամ սատանային ընկերանալու, միայն թե զարկի թուրքմաններին: Նա գերդաստանի ավագ որդին էր, նստել էր մի փոքրիկ հողակտորի վրա, իսկ կրտսեր եղբայրները ցած իշան լեռներից, զինվոր դարձան: Իրեն ել թուրքմանները կտրեցին հողից, զրկեցին երջանկությունից, մենակ մնաց: Վրեժ է սուրբ է, թուրքմանների գլխին պատուհաս դարձավ... իսկ արդ, հեռու մնալ երկրի գործերից չի կարող: Ամեն սասունցի երկու որդի է, պարտք է համայնքին՝ կրվելու, ապրելու, ապրեցնելու...

Մոտեցավ Թիլին, երբ բուքը սաստկացել, զարկում էր թիկունքին: Նրա բախտից Մհերենց տունը շենի ծայրին էր: Թակեց դուռը:

- Ո՞վ է, - լսվեց մի բամբ ձայն:

- Ես եմ՝ Սոսը: Բաց արա, Առջ ախապեր:

«Առջ ախապերը» Ներգործեց: Դուռը ճռաւալով բացվեց: Մհերը, որ հսկա մարմնով փակել էր դուռը, ճանապարհ տվեց: Ներսում գրկախառնվեցին:

- Ողջ առողջ ես, փա՛ռք Աստծո,- ասաց Մհերը, բամբ ձայնի մեջ մեղմություն մտցնելու անհաջող փորձ արեց: Նրա ձայնը տանը բոլորին ոտքի հանեց: Տղաները երեքն էին, փաթաթվեցին Սոս հորեղբորը: Նրանցից ամենամեծը՝ Տիգրանը, մեծավարի սեղմեց հյուրի ձեռքը, այնպես, որ սա զգա, թե գործ ունի այրմարդու հետ:

- Տիգրան, այ տղա, ես ինչ ես դարձել, - անկեղծորեն ուրախացավ Սոսը, - ա՛յ տղա, շենի աղջիկները հանգիստ չեն տալիս, հա՛, հա՛, հա՛, - տեսավ տղայի շիկնելը, - Ելի՛, իսկը ժամանակն է...

- Երեխին ճամփից մի հանիր,- իբր սրտնեղեց Միերը:

Սուը այսպես լավ էր զգում իրեն ընկերոջ գերդաստանում, որ ազատ կարող էր լաց լինել, կարող էր հօհռալ, իրեն զգալ ինչպես սեփական տանը: Չթողեց, որ Միերի կինը համբուրեր ձեռքը, համբուրեց հարսի ճակատը:

- Ապրե՞ս, հարս իմ,- դու երկրին տղաներ հասցրու, - ծիծաղեց, տեսնելով, որ Գոհարը դարձայլ երեխայի է սպասում, - չորս տղա...

- ՉԵ՛, ես մեկը աղջիկ եմ,- համոզված ասաց Միերը, - տղա եղավ՝ դեմ չեմ: Անունը Սոս կրնեմ ու Առաքելոց վանքում արջառ կմորթեմ: Երեխեք, դուք գնացեք,- ասաց Միերն ու ընկերոջը ներս հրավիրեց:

Ներս մտավ Միերի մայրը, գերդաստանի Մեծ Սայրին: Սուը ակնածանքով համբուրեց նրա ձեռքը: Սա գրկեց նրան: Սուը անկեղծորեն, որդիաբար սիրում էր այդ կնոջը, ակնածում նրանից:

- Քաջառո՞ղջ ես, Մեծ Սայր,- հարցրեց Սուը, նայեց երբեմսի գեղեցիկ կնոջը, որի մասին առասպելներ եին պատմում: Նա բերդատեր հայր էր ունեցել, սիրել էր Միերի հորը՝ Բաղդասարին, որին սպանել եին թուրքերը: Երիտասարդ կինը մնացել էր ամուսնու հարկի տակ, պահել, մեծացրել էր մինուճարին՝ Միերին: Ծեր կինը մեծ հարգանք էր վայելում շեներում: Մեծ Սայրին խելացի կին էր, նրան շատերն եին դիմում, անգամ թուրքերը: Նա կարողանում էր հաշտեցնել մարդկանց:

Շատ դառնություններ էր տեսել ծեր կինը, թուրքերը սպանել եին ամուսնուն, նա ել վրեժ առել, սպանել էր ամուսնուն սպանող շեյխին, սարսափ գցել թուրքերի մեջ, իսկ երբ սրանք վճռել եին հաշվեհարդար տեսնել խիզախ սասունցի կնոջ հետ, հանդիպել եին Սասունի համընդհանուր դիմադրությանը: Վերջիվերջո գտել եին, որ հայ կինը հրավունք ուներ վրեժի, խաղաղվել եին:

- Ասում են, որդի՞՝, կրվում ես թուրքերի դեմ,- գլուխը թափ տվեց,- մի ծաղկով գարուն չի գա, միացե՞ք, միասին զարկեք: Լսողաց եմ՝ հայոց հողում քաջ այրեր կան, ինչպես երանելի Մարտիրոսը: Ժողովուրդը կարոտ է պաշտպանության: Որդի, գիտե՞ս, ես գիր ու պատմություն գիտեմ, նոր բան չկա կյանքում, ա՛յ, Լաևկ Թամուրը ուզում է թուրքերի ձեռքից ազատվածներին ել ինքը կոտորի, ուզում է Հայոց արմատը հանի, տասի օտար հողում տևկի կամ ճանապարհին քոռ ու փուչ անի,- քսծիծաղ տվեց,- տեսնում եմ՝ ծյուն-ձմռանը ճամփա ես ելել: Աստված բարին տա: Գիտեմ՝ հերձվածող ես,- մանր-մուսր ծիծաղեց,- չեմ մեղադրում, հոգին ազատ ե: Ես հոգ-որ չեմ, գլխիդ խրատ չեմ կարդա: Դու, մեկ էլ՝ Տեր Աստված գիտեք քո ճամփան... Լավ ի միտ արեք, ամեն բան սկսվում է փոքրից, մեկ երդումից, մեկ վրեժից, մեկ մարդուց: Գնացե՞ք, գումարվեք, զենք ու զորք դարձեք: Աստված բարին տա ձեզ ու մեր տառապյալ ժողովրդին,- Մեծ Սայրին ասելիքն ավարտելուց հետո գնաց երեխաների մոտ: Սրանք թափվեցին գլխին, խնդրեցին հեքիաթ պատմել:

- Տեսա՞ր, գտավ գնալուր նպատակը,- ծիծաղեց Մհերը:
- Յա՛, իմաստուն կին Ե,- տրտմեց Սոսը, չգիտես ինչ անցավ մտքով:
- Լավ, գնա քնիր, Յովազին Տիգրանը ներս է քաշել ծածկի տակ, գարի է տվել: Չնիր, լույսը կգա, բարին հետք:
- Եդ հույսով քնում ենք, անհույս արթևանում,- մռմռացրեց Սոսը,- իսկ բարին չկա ու չկա...

* * *

Վրաց թագավորը թագուհու ու արքայորդու հետ ապրում էր երկու փոքրիկ յուրտում: Որքան էլ նվաստացուցիչ լիներ գերիների վիճակը, դարձյալ նրանք իրենց ազատ էին զգում, հատկապես թագուհին: Ծառաները հսկողությունից դուրս էին մնացել, ապրում էին ինչ-որ գետնախորշում:

Գիշեր էր, մթամած գիշեր, անգամ ծյան սպիտակությունը ի գորու չէր լուսավորելու շրջապատը:

Բագարատը կնոց ու որդու հետ նստել էր վառարանի մոտ, փայտ էր գցում վառարանի մեջ: Թագուհին անհամբեր սպասում էր նրա խոսքին: Թագավորը նոր էր վերադարձել տիրակալի մոտից: Վերջապես կայացել էր այդքան ծգծգված հանդիպումը, որ հաջողվեց միայն կաշառքի շնորհիկ:

Թագուհու համբերությունը սպառվեց, ձեռքով դիպավ ամուսնու ձեռքին, սա նայեց մեղավոր, ծուռ ժպտաց:

- Ներիր, մտքերի հետ էի, ինձ թվաց, թե ամեն բան պատմել եմ, ու դուք խորհում եք իմ փոխարեն, վճռում երկրի ճակատագիրը:

Նայեց կնոշը, ապա որդուն, տիրեց նրանց փոխարեն:

- Չտանչեմ ձեզ, մի զարմացեք, Լանկ Թամուրը համաձայնեց ապատել, սակայն:

- Ի՞նչ պայման դրեց,- համարյա ճշաց կինը,- թեր-ս անընդունելի է պայմանը: Ասա՛, մի՛ տանչիր, մենք կդիմանանք:

Թագավորը զայրացած ոտքի ելավ:

- Իսկ ես կդիմանա՞մ: Դու դեռ չգիտես պայմանը: Այդ կաղ սատանան, դժոխաց ծնունդը... Նա այլընտրանք չի թողնում... Ես պիտի իւլամ ընդունեմ, հակառակ դեպքում...

Թագուհին փաթաթվեց ամուսնուն, ասես ուզեց պաշտպանել նրան: Դավիթը գլուխը առավ ափերի մեջ, ուսերը ցնցվում էին, չգիտես լաց էր լինում, թե աշխատում էր զսպել կատաղությունը:

- Կաղը պիտի պատասխան տամ, այլ-ս ի՞նչ ընտրանք: Մի գիշեր ունեմ խորհելու: Վրաստանի թագավոր Բագարատը թլպատված է Լանկ Թամուրի հրամանով... Ամո՞թ, խայտառակություն... Մահմեդական Բագարատ թագավոր...

- Ո՛չ, հա՛յր, - որդին ոտքի ելավ,- թող ինձ թլփատեն քո փոխարեն,

մի՞թե սակավ է արքայազնի թլփատումը այդ հրեշի համար, թող ինձ պատանդ պահի, թող գլխատի: Միայն ոչ քեզ, հայր, երկիրը քեզ է սպասում:

Բագարատը գրկեց որդուն:

- Ծնորհակալ եմ, որդի, - խանդաղատանքով ասաց,- ես սպասում եի այդպիսի առաջարկի, հպարտ եմ քեզանով, սակայն այդպիսի առաջարկով չեմ կարող գևալ տիրակալի մոտ:

- Նա չի էլ համաձայնվի,- մրմնջաց թագուհին, - ների՛ր, նա Վրաստանի թագավորի նվաստացումն է ուզում... Յասու եմ նրա խորամանկությանը: Տիրակալը հաճույքով կընդունի քո մերժումն ու կգլխատի քեզ, բռնել կտա որդիներիդ, կավերի երկիրը, ահա րա նպատակը: Այսօր Վրաստանը ըմբոստ է, որդիներդ լեռներում են, տիրակալի ձեռքերը չեն հասնում նրանց: Վրաց ժողովուրդը ապրում է, կռվում է...

- Տեսա՞՞ր,- թագավորը սիրով նայեց կնոջը,- ահա թե ինչ ասել է Վրաստանի թագուհի: Որդի, ես հպարտ եմ, որ Աստված ինձ այդպիսի կին է ընտրել,- նստեց աթոռակին, գլուխը կախեց, - դժվար է թագավոր լինելը, կարեվեր դժվար...

Թագավոր լինելը նշանակում է կռվել, մեռնել երկրի համար - դա պատվավոր մահ է...

- Մի՛, մի՛,- լացակումեց թագուհին,- մի՛ հուսահատվիր, դու դեռ փառքով կմտնես Տփիխս...

- Այո, սիրելի իմ թագուհի, ես պիտի թլփատվեմ,- թագուհին հեկեկաց:

Բագարատը փակեց աչքերը. «Բագարատ որդի», - հայրն էր դեմք կանգնած,- այսօր դու դառնում ես Վրաստանի թագավոր, քանզի նրա համար բարձրանում ես գողգոթա...: Յայր,- չե՞ որ ես արդեն զոհաբերել եմ, մի՞թե մոռացար Թինային: Ես քո պահանջով ամուսնացա Կիր Աննայի հետ, սակայն Թինան մնաց սրտումս, մի՞թե դա զոհաբերություն չեր: Իսկ արդ, ինդրեմ, վճռվում է Վրաստանի ճակատագիրը: Ես դարձալ պիտի զոհաբերեմ: Կհասկանա՞ն, որ հանուն երկրի շահի գևացի այդ քայլին...»:

- Այո՛, հայր, ես կփրկեմ Վրաստանը,- պատասխան տվեց իր խոհերին,- ասաց բարձրաձայն: Թագուհին բռնեց նրա ձեռքը:

- Յայր իմ, ժողովուրդը կհպարտանա քեզանով,- ասաց Դավիթն ու հոր ձեռքը տարավ շրթունքներին:

- Նա- քեզանով, որ դժվար առաքելություն ունես կատարելու:

Թագուհին ու արքայազնը իրար նայեցին:

- Ի՞նչ ես վճռել,- հարցրեց թագուհին:

- Ասեմ,- ձայնը ցածրացրեց թագավորը,- դու պիտի գևաս Վրաստան, գտնես եղբայրներիդ, պատմես ամեն ինչի մասին: Նամակ չեմ գրի, Աստված մի արասցե բռնեն: Կասես, որ առերես եմ իսլամ ընդունել,- զայրացավ,- թող զորքեր գումարեն, պատրաստ լինեն դիմադրե-

լու:

- Նա չի կարող անսկատ հեռանալ, մեզ հետ-ում են:
- Իրավացի ես, թագուհի: Դավիթը կհեռանա Թահիրի հագուստները հազած: Նրանք իրար բավականին նման են: Թահիրը նրա գնալուց հետո կմնա մեր յուրտում, կճաշի մեզ հետ, կընի Դավթի անկողնում: Ծառաները նրան կդիմեն որպես արքայազնի: Իսկ կհա՞սնի Վրաստան, դա է մտահոգիչը:
- Հայր իմ, մի անհանգստանա: Ես կապացուցեմ, որ քո արժանի որդին եմ:
- Ազրե՛ս, որդի՛, կեսգիշերին կհեռանաս զորակայանից:
- Գլուխն առավ ափերի մեջ:
- Տե՛ր Աստված, ընդունիր ողջակեզս, փրկյա հայրենին...

* * *

Աստառից դուրս եկան: Աստառի եզրով բանուկ ճանապարհ երանցնում, որ ամրացել էր ձիերի սմբակների տակ, տեղ-տեղ սահնակի հետքեր էին եր-ում:

Զորիներն ասես ուժ առան, արագացրեցին երթը:

Երկար զրկանքների ու փորձություններից հետո, Թովման իր փոքրիկ խումբը հասցրեց Բողբերդի մոտերքը: Երկու օր տ-ած բուքը դադարել էր, ամպերը ցրվեցին, դուրս եկավ ար-, սկսեց շերմացնել:

Ճանապարհով երկու հեծյալ էին գալիս, զորականեր էին: Սրանք, երբ հավասարվեցին խմբին, նրանց նայեցին կասկածանքով, հատկապես կանաց:

- Բար-՝, հայր սուրբ,- տեսնելով Թովմայի կրծքի պանակեն, ասաց հասակավոր զորականը, դարձյալ նայեց կանաց, որոնք երկար ժամանակ դրսում մնալով, թիւացել էին, շրթունքները ճաքճել:

- Ի՞նչ բերդ է առջ-ում, Բողբերդը չէ՞:
- Բողբերդն է, հայր սուրբ, ո՞ր աշխարհից եք, եսպիսի ժամանակ, միայնակ, տանջահար: Բա ձմռանը ճամփա կելնե՞ն:
- Ես Մեծորայից եմ, աբեղա եմ, կանայք Բշնից են...
- Բշնիի՞ց,- տարեց զորականը ցած թռավ նժույգից, այժենակաճի տակից եր-աց սրի երախակալը, օղազրահը,- Մարդ աստծո, ի՞նչ օրի եք, տեսնում եմ ռամիկներից չեք,- հայացքը կանգ առավ Անահիտի վրա, աչքերը չովեցին:

Զեռի Թորոս, չե՞ս ճանաչում, Անահիտն եմ,- հազիվ արտաբերեց Անահիտը: Թեր-ս միայն այս պահին հասկացավ ինչ փորձանքներից են ազատվել, սակայն այսքան օրեր եղել էր սիրած եակի հետ, - այդ օրերը հիշելու էր որպես կյանքի լավագույն օրեր:

- Ի՞նչ օրի ես, աղջիկս,- դարձավ թիկնապահին,- թռիր բերդ, ասա

իշխանութուն, որ Անահիտն է գալիս, շտա՞պ: Յայր սուրբ, հոգուր մեղք ես վերցրել, ախր սա անհմա երեխա է, բա ձմռանը այսքան ճանապարհ կանցնե՞ն: Փա՛ռը Աստծո, անփորձանք տեղ եք հասել, գևանք, գևանք:

Զիշ անց մոտեցան բերդին, որի դռները բաց էին: Իշխանութին գրկեց աղջկան, երկար ժամանակ լաց էր լինում, ասես նոր էր առել ամուսնու մահվան բոթը: Թեր-ս նորից վերապրեց ամուսնու մահը: Ազա գրկեց, համբուրեց Արփենիին, զարմացած նայեց աբեղային:

- Ներս հրամայիր, հայր սուրբ,- աբեղային բերդ հրավիրեց սեպուհ Թորոսը: Երեկոյան, ըսթորիքից հետո Թովման ու Անահիտը նստել էին պատի վառարանի մոտ, զրուցում էին: Անահիտի խնդրանքը՝ բերդում մնալու մասին, Թովման մերժեց: Այդ պահին սրահ մտած իշխանութին, որ լսել էր աղջկա խնդրանքը, չպնդեց, քանզի հասցրել էր խոսել Արփենիի հետ:

Մոր սիրտը ահ էր ընկել, երբ աղջկա աչքերում սեր էր տեսել, թե- այս աբեղան աշխարհականի տեսք ունի, շենք ու շնորհքով մարդ է եր-ում: Արփենիի պատմել էր, որ Թովման մի քանի անգամ փրկել է Անահիտի կյանքը, իսկ երբ պատմեց հովազ սպանելու մասին, սեպուհը, իրեն հատուկ անմիջականությամբ թմբթմբացրեց աբեղայի ուսին:

- Ապրե՞ս, հայր սուրբ, քաջ մարդ ես եր-ում, իսկ ձեր ուղեկիցը որտե՞ղ է, ես նրան տեղ կտայի բերդում: Յա՛, հայր սուրբ, ասացիր, որ կամենում ես վերադառնալ Մեծորա: Մարդ աստծո, ինչպես կարելի է այսպան տանջվելուց հետո...

- Պարտքս է, տեր սեպուհ: Գործեր ունեմ վանքում – ոչ միայն վանքում: Գործեր ունեմ Տարն աշխարհում – շատ հրատապ, - նայեց Անահիտին, ապա ասաց հատ-հատ, ըսդգծելով յուրաքանչյուր բառը, - գարնանը Լանկ Թամուրը կխուժի Յայաստան, հարկ է պատրաստ լինել դիմագրավելու. սեպուհը ավելի ուշադիր նայեց աբեղային: Նրա հայացքում հետաքրքրություն ծնվեց:

«Չե, սրա մեջ ինչ-որ բան կա, ինչ-որ նման չէ մնացածներին»:

Նրա պատկերացման մեջ բոլոր հոգ-որներն ել նման են հայր Պողոսին, որ իր պարարտ փորով, եռակի կզակով, ճարպակալված աչքերով զգվանք է առաջացնում, սակայն այս երիտասարդ աբեղայից հանգստություն ու իմաստություն է ճառագում:

- Այս տարի չաղաթայները չհարձակվեցին մեր գավառների վրա, - խոսեց սեպուհը, - թեր-ս վախեցան մեր լեռներից: Ա՛յ, տեսեք, նրանք միայն Այրարատն ու Սյունիքը ավերեցին, թե- այստեղ բազմաթիվ բերդեր կան, սակայն դաշտաբնակները մերոնց պես կռվող չեն, - սկսեց խաղալ ծնկների արանքում պահած սրի երախակալի հետ, - գիտե՞ս, հայր սուրբ, ամեն հայ հայ չէ: Մենք՝ հայերս, շատ տարբեր ենք: Տես. Մենք՝ տայեցիներս, ոչ մեկի առաջ գլուխ չենք ծոռում, թեպետ մենք աղքատ ենք դաշտաբնակներից, - զայրացավ, - մեր կորցնելիքը միայն հող հայրենին է, կմեռնենք ու չենք դավաճանի հայրենին...

- Այս գարևանը Լանկ Թամուրը հավասական է զարկի այլ գավառների, քանզի Այրարատն արդեն թալանել է: Ես լավ եմ ճանաչում նրանց:

Անահիտի աչքերը փայլեցին, սիրով նայեց Թովմային, ապա դարձավ քեռուն.

- Յայր սուրբը Մարտիրոս տանուտիրոջ հետ կռվել է Բարդողի վրա,- ոչ առանց հպարտության ասաց Անահիտը, - պատարագ է մատուցել լեռան վրա: Մարտիրոս դյուցազունը նրան կռչել է Բարդողի եպիսկոպոս:

Իշխանուիին որսաց աղջկա սիրահարված հայացքը, մթնոեց:

Սեպուհը բարձրացավ տեղից:

- Դու Բարդողի եպիսկոպո՞սն ես,- զարմացած, հիացած հարցուց նա: Աբեղայի ծեռքը տարավ շրթունքներին,- ապրե՞ս, հայր սուրբ, մենք ականջալուր ենք, որ Բարդողի կրիվներին հոգ-որ է մասնակցել, որ անձամբ ժայռ է շուր տվել չաղաթայների գլխին, ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ հարկիս տակ, պատմիր կռվի մասին: Մենք լսեցինք Մարտիրոսի մահվան մասին,- հոգոց հանեց,- ինչ դյուցազուն կորցրեց հայ ժողովուրդը: Տեր Աստված, ինչո՞ւ ես երես թեքում մի ժողովրդից, որ աշխարհում քեզանից զատ պաշտպան չունի: Թովման չգգաց, ինչպես սկսեց պատմել Բարդողի կռիվների մասին, հասկացավ, որ պատմում է ոգ-որված, պատմելիս տեսնում էր մարդկանց դեմքերը՝ ոգ-որված, ուրախացած, սարսափած, ահա՝ սյունեցի պատասին կոծքից զարկված, օրորվեց, նրա ճիչը խառնվեց չաղաթայների ոռնոցին... Ահա ինքը, քիչ է մնում ուժերի լարումից աչքերը դուրս թռչեն, ահա քարերը ահագնացան գլխին, ալսիուս էր, մահը քանեց կոկորդից, հանկարծ Փայլակը իրեն գրկեց ու մի կողմ նետվեց, դղրդաց Բարդողը, Մասիսի կրտսեր եղբայրը – ըմբոստ եղբայրը... Ահա հաղթության պատարագը ի փառ Աստծոն ու Յայոց քաշերի... Աչքերի առաջ նորից հառնեցին զոհվածները, Մարտիրոսին էր տեսնում՝ մռայլ հայացքը չաղաթայներին հառած: Փայլակին էր դարձյալ տեսնում՝ հսկայական քարեր գլորելիս, ծերուսի սյունեցին էր՝ դաշույնը ծեռքին... Պատմում էր ու պատմում, վերապրելով այդ հերոսական պահերը, հանկարծ տեսավ, որ Անահիտը լաց է լինում, սեպուհը աչքերն է սրբում, իշխանուիին սակվել է, հասկացավ, որ պատմում էր Մարտիրոսի նահատակության մասին:

- Շատ ենք խարվել, դարձյալ խարվում ենք,- զայրալից խոսեց սեպուհը,- բավ է, քանի՞-քանի՞ թագավոր է խարվել, մի՞թե միամիտ ենք եղել, ո՞չ, միամիտ չենք: Կամեցել ենք անձերս դնել Ազգի զոհասեղանին: Ամենքին մեր նժարով ենք չափել... Պատմությունից դասեր չենք առնում...

Թովման հարգանքով նայեց սեպուհին, որ այսքան թշնամիներով շրջապատված անկախ է ապրում, ստիպում է հար-աններին հարգել իրեն, իր իրավունքները: Բերդապահը հոր պես քաջ զորական չորս որ-

դիւներ ունի, երեք գեղանի դուստրեր: Ամենքն էլ իսկական հայարիական ասպետներ են, սեպուհը որդիներին դաստիարակել է առհավական նախնյաց օրինակով:

Եղբայրները համեստորեն կանգնել էին հոր սպասին, ամենքն էլ զրահված էին, սրակիր: Զգացվում էր՝ այստեղ թշնամին չի անցնի...

Անահիտը խորհրդավոր նայեց Թովմային, այդ հայացքը նշանակում է, որ այստեղից էլ կակսեն տարածել կոչը, սակայն իշխանուհին այլ կերպ մեկնաբանեց դստեր հայացքը, զայրացավ: Նա դստերը համարում էր թոկից փախած, երբեք չէր խրախուսել նրա այրական գործերին խառնվելը, սակայն ոչինչ չէր կարողացել անել, հայրը խրախուսում էր դստեր այրական դաստիարակությունը:

- Տե՛ր սեպուհ, մեկնելուց առաջ կցանկանայի խոսել քեզ հետ,- մի պահ սպասեց, ասես կշռադատեց ասելիքը, թեր-ս չէր ցանկանում վիրավորել ներկաներին,- երես առ երես, հուսով եմ՝ չես մերժի հոգ-որիս խնդրանքը:

- Չեմ կարող մերժել Բարդողի հերոսին, Բարդողի եպիսկոպոսին: Աստծո՝ քեզ պես ծառաները արժանի են աշխարհիկ տերերիս հարգանքին, իսկ դու փրկել ես նա- մեր Անահիտին,- Վերջին խոսքերի վրա սեպուհը ժպտաց, ժպտացին նա- որդիները, սակայն Թովման այդ ժպիտի մեջ ստրկամտություն չտեսավ, այլ ուրախություն, որ հայրը ընդունեց Երիտասարդ հոգ-որին, որ նրանց մեջ հարգանք էր առաջացրել:

Ուշ երեկոյան սեպուհը իր մոտ հրավիրեց Թովմային: Սա դեռ չէր հասցրել նստել, ներս մտավ Անահիտը:

- Հուսով եմ, քեզիս չի զայրանա, եթե մասնակցեմ ձեր գրուցին,- նստեց աթոռակին: Սեպուհը զարմացած նայեց Անահիտին:

Սա հանգիստ դիմացավ քեզու ծանր հայացքին:

- Այն, ինչ պիտի ասեմ, գիտե Անահիտ օրիորդը, ավելին, նրա ներկայությունը պարտադիր է, իսկ որդիներիցդ միայն թող մնա երեց որդիդ: Թող ների ինձ տեր սեպուհը, որ խնդրանքս հայտնում եմ ոչ հարկի խոսքերով, նա- հակիրճ:

- Խնդրում եմ, քեզի,- տեսնելով սեպուհի հայացքում հայտնվող սառնությունը, - ասաց Անահիտը, - այն, ինչ պիտի ասի աբեղան, գաղտնիք է, այս մեզ չի պատկանում: Թող այստեղ մնա միայն Պարսամը, իսկ մնացած Եղբայրներիս խնդրում եմ դուրս գալ,- զարմանալին այն էր, որ Անահիտի խոսքերն ավելի ազդեցին, քան Թովմայի խնդրանքը: Պարսամից զատ՝ մնացածները գնացին:

- Խոսի՛ր, հայր սուրբ,- ասաց Անահիտը:

Թովման մոտեցավ սեպուհին, նրան մեկնեց ավետարանը

- Երդվիր, Թորոս սեպուհ, այն, ինչ կիմանաս մեզանից, գաղտնիք կմնա,- աբեղայի ձայնը սառն էր: Սեպուհն այլ պարագայում թեր-ս կոպտեր, սակայն նրա առաջ կանգնած էր Բարդողի եպիսկոպոս հոչակված հերոսը: Որդին գլխով համաձայնության նշան արեց:

Թովման ծոցից մի մագաղաթ հանեց, մեկնեց սեպուհին: Սա բացեց փաթթոցը, ընթերցեց:

- Յայոց աշխարհի իշխաններին, սեպուհներին, բերդատերերին, ազատներին, հոգ-որսներին, շինականներին, արհեստավորներին, ողջ ժողովրդին հայոց,- սեպուհը նայեց Անահիտին ու Թովմային, սրանք կանգնել էին կողք-կողքի, լուրջ էին կենտրոնացած, սեպուհը շարունակեց, նամակը ավարտվում էր այս խոսքերով՝ ով պատրաստ է կռվելու հող հայրենիի համար, հանուն նախնյաց անանց փառքի ու ժողովրդի գոյատ-ման համար, թող ելի հանուն Յոր, Որդվո ու Յոգվուն Սրբո, ամեն:

Յայոց Գաղտնի Ուխտը Երդվեցնում է ձեզ. Ես՝ Յովիաննես Մեծոփացիս, վանահայր Մեծոբա վանքի, Աստծո ծառաներ՝ Թովմա, Յայկարամ, ազատ Վահե, շինականներ Ոսկան, Ասողիկ, Փայլակ, Զաքարիա, Անահիտ օրիորդ հայոց...

Սեպուհը համբուրեց նամակը, մոտ կանչեց որդուն: Ձեռքը դրեց ավետարանի վրա, որդին հետ-եց նրան:

- Երդվում եմ կռվել չաղաթայների դեմ՝ հոգու փրկության, մարմնի կորստյան գնով պահել գաղտնիքը: Երդվում եմ:

Թովման ու Անահիտը մոտեցան նրանց, համբուրվեցին:

- Տե՛ր սեպուհ, հարկավ գիտես հար-աններիդ, ովքե՞ր կարող էն իշխաններից սատարել Ուխտին, ո՞ւմ կարելի է վատահել: Այս կողմերում ել կան զորական ուժեր, հույժ կադ-որ է, որ նրանք ել միանան Ուխտին:

Սեպուհը օրորեց գլուխը:

- Ծանր գործ ես ուսել, հայր սուրբ, նա- աստվածահաճ, հարկ է լավ խորհել, թեր-ս Անահիտի հետ խորհենք ու քեզ լուր ուղարկենք Մեծոբա...

Ներս մտավ կրտսեր որդին՝ Շահենը:

- Յայր, իշխանուհին է գալիս, ի՞նչ կիրամայես, խնդրեմ սպասե՞լ:

- Թող գա, մենք արդեն ավարտել ենք գործը:

- Ես վաղը կարող եմ մեկնել,- ասաց Թովման, տեսավ, ինչպես ցլցվեց Անահիտը, նայեց կշտամբանքով:

- Այո՛, ես քեզ հասկանում եմ, հայր սուրբ,- արդեն իշխանուհու Ներկայությամբ ասաց սեպուհը: Իշխանուհին ոչինչ չհասկացավ, ևստեց գահավորակին:

- Քույրիկ, մենք ել գնանք, խոնջանք առնենք, նա- աբեղան, որ վաղը դժվար ու երկար ճանապարհ է գնալու:

Իշխանուհին ուրախացավ: Նա լսել էր, որ աբեղան գնալու էր երկու օրից, չհասկացավ աճապարելու պատճառը:

«ՉԵ՛, սիրահարված չեն, Արքինեն սխալվում է, թե չէ ինչո՞ւ է աճապարում, թեր-ս խելքի են եկել, հասկացել են, որ անհույս է իրենց սերը.

- Գնանք, քույրիկ,- ասաց սեպուհը, առավ իշխանուհու թ-ը,- գնանք:

- Ապասի՞ր, Թորոս, ի՞նչ է, Անահիտը մնալո՞ւ է:

- Մի անհանգստանա, նա հետո կգա: Նրանք խոսելիք ունեն,- այս խոսքերն այնքան հանգիստ ասաց, որ իշխանութիւն ակամա հետ-եց նրան

Մի վերջին անգամ նայեց աղջկան, ուսերը վեր քաշեց, գևաց, այդ-պես էլ ոչինչ չհասկանալով կատարվածից:

- Ինչո՞ւ ես աճապարում,- հարցրեց Անահիտը:

Թովման, որ ձեռքերն եր տաքացնում վառարանի մոտ, շուր եկավ դեպի աղջիկը:

- Օրիորդ, մենք ազգի ծառա ենք, մենք մեզ չենք պատկանում: Մենք Յայոց Գաղտնի Ուխտի Երդվյալ անդամ ենք: Մեզ անձնական կյանք չի վերապահված ի վերուստ,- Անահիտը ընդիուպ մոտեցավ Թովմային:

- Աստված սիրես, ինձ հետ այդպես մի՛ խոսիր: Ես սիրում եմ քեզ,- աղջիկը առաջին անգամ չեր սիրո մասին խոսում, սակայն աբեղան ցնցվեց: Անահիտը այնքան հասարակ ու պարզ ասաց այդ մասին, որ նա կարող էր խելագարվել:

- Մենք պատրաստ պիտի լինենք զոհաբերության: Դու պիտի ընդունես այս պարագան, հակառակ դեպքում, մեղանչած կլինենք մեր ընկերների առաջ, ազգի առաջ:

Անահիտը փարվեց նրան, գլուխը դրեց Թովմայի կրծքին: Չգաց, թէ ինչպես արագ-արագ բարախեց աբեղայի սիրու:

- Տե՛ր Աստված, փրկյա՛ մեր հոգիները, - աչքերը երկինք բարձրացրեց աբեղան:

* * *

- Ի՞նչ է, հաճո՞ չեն քեզ Յայոց արքաների պալատները,- հարցրեց տիրակալը Մելիքեին: Սա խոր խոնարհվեց, հրավիրեց ամուսնուն նստելու: Թամուրը թեք ընկավ բարձերին:

- Ինձ համար լավ է այստեղ, որտեղ հաճելի է իմ տիրակալին,- ասաց Մեծ թագուհին, կումիս հրամցրեց ամուսնուն: Նա գիտեր, որ այս ժամին տիրակալը պիտի գար իր մոտ, դրա համար թարմ կումիս էր պահում: Ոչ ոք այդպիսի կումիս չեր պատրաստում, ինչպես Մելիքեին:

- Որքան էլ գեղեցիկ լինեն Յայոց արքաների պալատներն ու ձմեռոցը, չես համեմատի Սամարդանդի Կապույտ պալատի հետ,- ասաց, ուշադիր նայեց ամուսնուն,- մտահոգ ես եր-ում: Ի՞նչ կա մտահոգիչ, տիրակալդ իմ: Վա՞տ լուրեր ունես...,- նայեց կկողվսծ աչքերով, այդ շարժումից այսոսկորերը ավելի ցցվեցին, նմանվեց դոդոշի:

Թամուրը լսել էր, որ Յելիհանը Մելիքեին դոդոշ էր կոչել, մտքում ծիծաղեց Մեծ թագուհու վրա, քանզի Յելիհանի գնահատականը շատ դիպուկ էր:

- Չե՛, սակայն լավ էլ չեն,- քմծիծաղ տվեց,- ինչ-որ հասու չեմ Թող-

թամիշի պահվածքին, շատ է գոռողացել:

- Պատերազմո՞վ կգա, այս գարևանը, թե միայն հրոսակներ կուղարկի թալանի համար,- հարցրեց թագուհին:

- Կարիճ է Թողթամիշը, անապատի վարան, օ՛ձ, որ խայթելուց զատ ոչինչ չգիտե: Ուուսիայի հողում ջարդ ուտելուց հետո զգուշավոր են դարձել Ոսկե Յորդայի խաները, թեր-ս Դերբենդի անցքով ներս լցվի մեր գրաված հողերը: Նրանից ամեն բան կարելի է սպասել: Նա օձ է, որին ժամանակին տաքացրեցի կրծքիս վրա: Օձը իրեն տաքացնողին է խայթում... Ուռուսներից փախավ Լիտվա, Լիտովին խարեց, քշեց Ոսկե Յորդայի վրա: Ախր Եղիգեյս էլ պակասը չէ, սա էլ Լիտովին ու Թողթամիշին զարկեց, ոչ մեկին չխնայեց: Եղիգեյը տափաստանի գայլ է, նենգ ու դաժան: Դու մի՛ հեգնիր, մեր կյանքն է այդպիսին, անսա այս ճշմարտությունը: Մենք շրջապատված ենք օձերով ու գայլերով, այլ-ս ի՞նչ խիղճ ու խղճմտանք,- սպասեց, փակեց աքերը, ապա,- դու հիշո՞ւմ ես ինչից սկսեցինք, ոչնչից: Սպասի՞ր, դեռ ժամանակ տուր, կավերեմ Ոսկե Յորդան, Մոսկվան էլ, սակայն կրծքիս չոքել է Բայազետը: Նա ո՛չ Թողթամիշ է, ո՛չ Եղիգեյ: Նա բերկուտ է, մեր տափաստաններից այստեղ թռած, մեր որսի համը առած: Նրա հետ խաղ չես անի...

- Իսկ Մոսկվան չէ, որ հզորանում է: Դմիտրի իշխանի կռվից հետո Ոսկե Յորդայի խաները սիրտ չեն անում Ուուսիայի կողմը նայել, թեր-ս միայն հրոսակներ ուղարկեն...

- Յրոսակներով Ուուսիային չես վախեցնի: Ուռուսները, ինչպես հասկացա, ծանր են ելնում, իսկ որ ելան, Ալլահը հեռու պահի, դժվար կլինի դեմն առնել:

- Հաստա՞տ ես վճռել զարկել ուռուսներին:

- Միայն Ոսկե Յորդան թափ տալուց հետո: Նրանք կարծում են կրավարարվեմ միայն կծոտելով: Ես կամենում եմ նվաճել Ուուսիան...

- Իսկ Յնդկաստա՞նը, Չինա՞ց Երկիրը,- թագուհին նստեց ամուսնու կողքին,- նրանք չեն ել դիմադրի, իսկ ավարը անհամեմատ մեծ կլինի, իսկ Ուուսիան աղքատ է:

- Աղքատը աղքատ չէ, սակայն մի բանում իրավացի ես, Չինաց Երկրում կամ Յնդկաստանում դիմադրությունը թույլ կլինի, ավարը շատ: Մեզ ոսկի է պետք, դժվար է հինգ-վեց հարյուր հազարանց բանակ պահելը:

Թամուրը լռեց, մտովի թռավ հեռու-հեռավոր Երկրները, որոնց նվաճելու մասին վաղուց եր Երազում, իսկ ճանապարհները Երկար են, դժվար, թեպետ ասաց, որ դիմադրությունը թույլ կլինի, սակայն գիտեր, որ անհաշիվ գոհեր կտա: Ուզում է քանդել Չինաց պարիսապը: Նա մեկ-մեկ քնած ժամանակ իրեն պատկերացնում է հսկա պարիսապները քանդելիս: Նա ոչ ոքի չի պատմում, որ Երիտասարդ տարիներին Երկու ընկերներով հասել են Չինաց պարսպին, ահասարսութ կանգ են առել, հազիվ են ազատվել նետերի պարսերից: Խայտառակ փախուստ են

տվել, այդ պահին էլ երդվել է քանդել դրանք, ո՞վ գիտե, մեկ էլ հնար եղավ ու հասավ այդ անհջալ պարիսպներին: Պատկերացրեց ինչպիսի մոլուցքով կը անդեր պարիսպները, ինչպես զորքերը հեղեղի պես ներս կլցվեին, կավերեին քաղաքներն ու շեները, որքան ոսկի, արծաթ կավերեին:

Ուշքի եկավ, լսեց կնոջ խոսքերը Յայաստանի մասին:

- Յայաստանը ես նվաճել եմ, - զայրացավ Թամուրը, - այն հողը որին դիպել է իմ Կարաբահի սմբակը, իմ է:

- Իսկ Բայազետը նստել է իր հողերի վրա, նրան անգամ խաչակիր խոզերը չկարողացան տեղից շարժել,- Թամուրը ծիծաղեց, ծերուսավարի կուչ եկավ:

- Եվրոպայի թագավորիկները հազիվ ազատվեցին Բայազետի ճանկերից: Այստեղ նրա անունը լսելիս տակներն են թոջում: Դեռ հորջորջում են Տիրոջ Գերեզմանը փրկելու մասին, սակայն զորքեր չեն գումարում, միջոցներ չեն հանգանակում,- գլուխը տարուբերեց, - ինձ շատ են պետք այդ զրահապատ խոզերը:

Թագուհին սկզբում նայեց զարմացած: Վախեցավ, որ անհաղորդ է տիրակալի խոհերին: Ի՞նչ կար այս խոսքերի տակ: Գլխով արեց, իբրհասկացավ, ինչ-որ անորոշ բաներ քրթմնջաց: Թամուրը հրհռաց, և ագիտեր Մելիքի այդ սովորութքը, երբ որ-է բան չէր հասկանում, այդպես եր վարվում, իր իսկ այդ պահվածքով ստիպում էր խոսելու, բացվելու: Այդ ամենը նա վերջերս էր հասկացել: Դա Մեծ թագուհու խորամանկություններից մեկն էր, որով ստիպում էր տիրակալին զարգացնելու միտքը, իսկ թագուհին իրեն էր վերագրում գիտունի այդքան տարածված համբակը, այդ ամենն անում էր տիրակալի հաշվին, ստիպելով միտքը բացել

- Վճռել եմ նամակներ գրել այդ թագավորներին, թող զարկեն Բայազետին, ես կիսուտանամ չեզոքություն: Ես նրանց ձեռքերով կթուլացնեմ Բայազետին...

- Նա կարող է զորքեր բերել տալ Բայկաններից:

- Սպասի՛ր, դրա համար նրան նավեր են պետք, իսկ նավեր չունի: Նավեր կան Կոստանդնուպոլսում, սուլթանն երազում է գրավել այդ քաղաքը,- գլուխը տարուբերեց,- Եթե գրավի Կոստանդնուպոլիսը, կղառնա Փոքր Ասիայի միանձնյա տերը,- Երկար լոեց, ձեռքի համրիչը խաղացրեց աշ ձեռքի մեջ, որի մատներից երեքը չկար,- մեր մեջ պատրազմը հասունանում է: Ափսո՛ս, Եվրոպայի թագավորներն ու այդ իշխանները իրար չեն կարողանում հասկանալ, լեզու չեն կարողանում գտնել: Եթե կարողանային մի նոր արշավանք սկսել, ոյուրին կլիներ Բայազետին զարկելը, - նայեց թագուհուն, քմծիծաղ տվեց,- գիտե՞ս, Եվրոպայում շրջող ինդրատունների մեջ ավելացել է Յայկական Կիլիկիայի թագավորը: Յուս ուսի օգնություն ստանալ: Նրա պետությունը կործանվել է, իսկ նա սին հույսեր է փայփայում, հիմար՝ մի կողմից

թուրքեղն են սեղմում, մյուս կողմից՝ ֆրանկները, իսկ L-ու թագավորը քարշ է գալիս արքունիքներում, ուժ է մուրում, մանկամի՛տ, չի հասկանում, որ իրեն ոչ ոք առանց շահի չի օգնի: Նրա թագավորությունը արդեն գոյություն չունի, իսկ նա հաստակողություն է անում, այն էլ այս դեպքում, երբ թուրքերին միացել են մամլուկները: Դա մեզ ձեռնտու է, - տեսնելով թագուհու հարցական հայացքը, ասաց, - դու խելացի կին ես, պիտի հասկանաս, երբ երկրի թագավորությունն կործանվում է, դժվար չի լինի կոտրել ժողովրդի դիմադրական ուժը: Անտեր ժողովուրդ, ինչպես հովվից գրկված ոչխարի հոտ, դժվար չէ մորթոտել, - հանկարծ չգիտես ինչու, իիշեց Բագարատին, - իսկ Բագարատը կամովին թլփատվեց: Ես խոսք տվեցի զորքեր դնել նրա հրամանի տակ, Վրաստանը նվաճելու... Մնացած զորքերը կշրջեմ Բայազետի սահմանները, կմտնեմ Հայաստան, - զայրալից նայեց թագուհուն, - ի՞նչ կա մտքումդ, կի՞ն, երբ խոսեցի Բագարատի մասին, աչքերդ կուլ գնացին խորշումների մեջ, խոսի՛ր, օձից օձ, խոսի՛ր:

Թագուհին գիտեր՝ եթե լոեր, ավելի կզայրացներ ամուսնուն, իսկ այս, ինչ ցանկանում էր ասել, կարող եր բռնկում առաջացնել, սակայն նա չէր կարող կանգ առնել կես ճանապարհին, ֆռթացրեց, ինչպես կուշտ կերած զամբիկը:

- Դու Հելիանի պարանոցին տեսա՞ր նոր շղթան, խաչով, - քմծիծաղ տվեց, որից անգամ բերանը կորավ խորշումների մեջ, - Դու Վրաց թագավորին վստահեցիր միայն Հելիանի խնդրանքով, - շղթան հայտնվեց նրա պարանոցին: Դա Կիր Աննա թագուհու ընծան է: Ես չեմ հավատում ոչ մի խաչապաշտ մարդու, առավել -ս կնոջ...

- Լոհի՛ր, - գոռաց թամուրը, - եթե Բագարատը դավաճանի, Հելիանը կպատժվի, - դառը քմծիծաղեց, - դու հասար նպատակիդ:

- Ալլահը հեռու պահի դավաճանությունից: Եթե քո մեջ կասկածներ կան, ինչո՞ւ ես զորքեր դնում վրաց թագավորի հրամանի տակ, - արդեն հաշտեցնողի դերի մեջ մտավ թագուհին: Նա իր նպատակին հասել էր, կասկած էր գցել տիրակալի սիրտը, իսկ մնացածը հետո կեր-ար:

Մեծ թագուհին կանացի խորամանկությանը գումարել էր երկար տարիների փորձը, գիտեր՝ ինչպես տիրակալին արկանել, գոհ մնաց, խոսքը հասել էր նպատակին: Արդ, հարկ է նահանջել, պահել իր վարկը, բարի կնոջ վարկը:

- Թեր-ս այս ամենը Հելիանը արել է առանց հասկանալու...

- Իսկ խաչը:

- Կարող է թագուհին այս ընծայել է մինչ- այդ խոսակցությունը:

Թամուրի հայացքը մթսնեց, մի այսպիսի դաշնություն հայտնվեց նրա աչքերում, որ Մելիքեին ընկրկեց:

- Ի՞նչ է, քո լրտեսները դեռ չե՞ն պարզել այդ պարագան, - սպառնալից ֆշշացրեց թամուրը, - դու ամենքին էլ լրտեսում ես:

- Ինձ թվում է, երբ պառկում եմ երիտասարդ կանաց հետ, դու

կանգնում ես գլխավեր-ումս,- ապա ցանկացավ ավելի դառնացնել թագուհուն, վերցրեց մտրակն ու ելավ տեղից, - գիտե՞ս, Յելիանը շատ ճարտար է անկողնում - շա՛տ ցանկալի...

ՄԵԼԻՔԵՒՆ իսուարիկվեց մինչ- գորգերը: Նա չէր ցանկանում, որպես- զի տիրակալը տեսներ աչքերում հայտնված կատաղությունը: Թամու- րը գիտեր, որ երիտասարդ կանանց մասին խոսելիս ՄԵԼԻՔԵՒՆ կատա- ղում է: Գիտեր, որ միայն վախն է զապում նրան, հակառակ դեպքում բո- լոր կանանց կթունավորեր: «Մի՞թե վրաց թագավորը կխաբի ինձ, որ հազարների եմ խաբել», - խորհեց Թամուրն ու զայրացած դուրս գնաց յուրտից:

* * *

Գարունը ուրախություն է բերում մարդկանց, սակայն ո՛չ այս գա- րունը...

Լուրջ ծանր քարի պես նստեց մարդկանց սրտերին:

Յովիաննես Եպիսկոպոսը անթարթ նայում էր Յայկարամի պանա- կեին, ասես աշխարհում դրանից զատ ոչինչ չկար:

«Ինչ եմ մտքերս շեղում գործից, ինչ եմ այդպես նայում Յայկարա- մի պանակեին, որ Վանական արքեպիսկոպոսին է, նրա հիշատակը... Յա՛, Ոսկանը լուր է բերել, որ չաղաթայները Ղարաբաղից մտել են Յա- յաստան: Սկսվեց, ի՞նչ պիտի անենք, - գլուխը թափ տվեց, - Մենք հայոց Գաղտնի Ուխտ ունենք, կո՞չ կոչենք ժողովրդին ելնելու կռվի: Ել ի՞նչ ենք թթվել: Չե, որ այս ամենը հանկարծակի չէ: Օրեն չէ նստել ձեռքերը ծա- լած»:

Նայեց հավաքվածներին: Նա ձմռան վերջին Ուխտի անդամներին հավաքել էր ՄԵԾորբայում: Արդ, եկել էր վճռական պահը, պետք է վերա- դառնային գավառները: Խոհերը ընդհատեց Յայր Թորգոմը: Ներս մտնե- լով՝ կռացավ նրա ականջին: Եպիսկոպոսը ուրախացած նայեց ներկանե- րին:

- Ժամանել է օրիորդ Անահիտը:

Թովման ամեն բան սպասում էր, սակայն այն, որ այս պահին Անա- հիտը կհայտնվեր ՄԵԾորբայում, վեր էր սպասումից: Մարդկանց զար- մանքը տեղի տվեց հիացմունքի: Զգաստացած՝ ձգվեցին: Կողմանակի մարդու աչքերով նայեցին իրենց հագ ու կապին, որպեսզի տհաճ չլի- նեին օրիորդին: Չե՞ որ նա իրենց Ուխտի դիցուհին է: Ինչ-որ լուսավոր բան հայտնվեց հայացքներում, հոգիները լցվեցին հավատով, եթե կինը եկել, հասել է իրենց, անտարակույս, կելնեն ամենքն ել: Անահիտի ժա- մանումը ասես լուծում էր բոլոր տարածայնությունները, մնում էր կրի- վը, կռվելով ապրելու վճիռը:

Ներս մտավ Անահիտը, առավ սրբազնի աջը, սա գորովանքով գրկեց, համբուրեց աղջկա ճակատը:

- Որդյա՞կ իմ, քո ժամանումը վկայություն է այն բանի, որ Տեր Աստված չի լքել մեզ: Եթե մի ազգ քեզ պես օրիորդներ ունի, կապրի: Ավսոս, երանելի հայրդ չտեսավ զավակին ազգի համար կռիվ ելնելիս: Նա կուրախանար, որ դուստրը ուս-ուսի կռիվ է ելնում ազատատեսչ այրեղի հետ:

Անահիտը լսում էր սրբազնին, թիկունքին զգալով Թովմայի հայացքը: «Սիրելի՞ս, ես եկա, կարոտել եմ քեզ, իմ սեր: Արդ, միասին կլինենք երկար ժամանակ, թեր-ս... մնացածը ինչ-որ անցավ մտքով, համարեց անհամեստություն»:

Համբուրվեց Ուխտի անդամների հետ, երբ հերթը հասավ Թովմային, մի տեսակ շփոթվեց, թեպետ պատրաստ էր նետվելու աբեղայի գիրկը, ճակատը մոտեցրեց համբույրի համար, զգաց, թե ինչպես դողացին աբեղայի շրթունքները:

- Բար-՝, Թովմա՛, սիրելի՞ս,- շշնչաց աղջիկը:

Եպիսկոպոսը ոտքի ելավ, բարձրացրեց ձեռքը:

- Ուխտի երդվալ անդամներ, որդի՞ք, հայալ է ժամը, կռվի ելնենք, ոտքի հանենք ժողովրդին, դարձյալ գալիս է Նեռ Կարապետը, գալիս կտրելու Հայոց արմատը: Ստրկությունն է բերում ազգիս հայկազուն, նափորձություն փորձվածներին: Սթափ լինենք, չինխորտանք նախնյաց փառքով, արդ, մենք թագավորություն չունենք: Ժողովուրդը անպաշտապան է, երկիրը մասնատված: Օրիաս է, հարկ է ելնել ազգովի, մեծով փոքրով, հակառակ պարագայում ստրկության կղատապարտենք ազգը, ոչնչացման մարմնապես, - լռեց հոգ-որը, ապա ասաց սառը ծայնով,- ամեն բան ունայնություն է, գերագույն նպատակը ազգի շահն է այսօր, կաղը, հավիտյանս հավիտենից: Խաչն ու սուրբ միասին պիտի լինեն, այս է փրկության հուսկ միակ միջոցը, շտկեց ծերունական ուսերը, ասես մի տաս տարով երիտասարդացավ,- Մենք՝ Ես ու Վահեն, խորհեցինք, որ Մշո դաշտ կգնան Հայկարամն ու Վահեն, Փայլակի հետ: Նրանք պիտի ս-ախոյ թուրքերի տիրապետության տակ գտնվող ընակչությանը կոչ կոչեն, եթե հնար կա, նա- Ղարա Մահմեդին: Նրան հանել չաղաթայների դեմ: Ամեն միջոց հարկի է այս պահին, սթափ լինենք, ամեն սուր բռողին մեր դաշնակից դարձնենք: Այլ ելք ու հնար չկա, լինելու-չլինելու հարց է,- հոգոց հանեց,- այո՛, այո՛, այլ ելք ու հնար չկա: Վաս կգնան Թովման ու Անահիտը: Ուկանն ու Ասողիկը կգնան իրենց գավառները: Վատահելի մարդիկ լծեք գործին, թող կոչը տարածեն ամենուր: Ես անիմա եմ ռազմի գործերին, խնդրում եմ Վահե եղբոր՝ խորհել դաշնակիցների ընտրության մասին, նա- թուրքերից, թող Թովման խոսի Վասի ամիրա Եզդինի հետ, որ ազգությամբ հայ Է՝ Արծունի Սենիքերիմյան: Լիահույս եմ, որ կարձագանքեն Հայոց Գաղտնի Ուխտի կոչին: Ես ասացի այն ամենը, ինչ ներշնչել էր Տեր Աստված: Խոսե՛ք, եղբայրներ, Ուխտի գործերում հավասար ենք, ինչպես Աստծո առաջ...

Ամեն բան ասված էր պարզ ու հասկանալի, կատարելն էր դժվար:

Դեռ երկար ժամանակ խոսում էին անելիքներից: Գիշերը տարածամել էր, բաժանվեցին իրարից առավոտյան հանդիպելու, հանուն իրենց առաքելության՝ երկար ու վտանգավոր ճանապարհ ելնելու:

Թովման վախենում էր նայել Անահիտին, վախենում էր աղջկա աչքերում սիրո կանչեր տեսնել, միասին լինելու անհագ ցանկություն:

Մտավ իր խուցը, նստեց գրակալի առաջ, մոտ քաշեց մագաղաթը, սրածայր փետուրը: Ուզում էր մագաղաթին հանձնել այս օրերի պատումը, դուռը թակեցին: Մի կողմ որեց փետուրը, նայեց դրանը, հանկարծ սիրտը արագ-արագ բաբախտեց: Սիրտը անսխալական էր, ներս մտավ Անահիտը: Մեջքով հենված դռանը, մնաց կանգնած, շփոթված, ինքն իր արածից վախեցած...

- Նե՞րս իրամայիր, օրիո՞րդ,- իրավիրեց Թովման:

Աղջիկը չշարժվեց: Աբեղան կրկնեց իրավերը, հանկարծ խորհեց, որ աղջկան այս պահին, եթե տեսնեն իր մոտ, վաղը կբամբասեն, իսկ վանքում սիրում են բամբասել, գիտեր:

- Օրիո՞րդ, գիշերը տարածամել է, Աստված մի արասց քեզ եստեղ տեսնեն, վաղը կբամբասեն,- չհասկացավ, ինչպես մոտեցավ աղջկան:

- Դու ուրախ չե՞ս, որ միասին ենք գնալու Վան: Սրբազնի մոտ տեսա, որ ուրախ չես, ինչո՞ւ:

Նրանք այնքան մոտ էին կանգնած իրար, որ Թովման կարող էր գրկել աղջկան, սակայն նրանց երդումը, ազգին անմնացորդ նվիրվելու պատգամը, որ այսօր նորից հաստատեց սրբազնը... Յոգում կռիվ էր, երկընտրանք: Մի կողմից երդումը, մյուս կողմից՝ խլխլացող երիտասարդ արյունը...

- Ես, հասու չեմ, թե ինչ է կատարվում ինձ հետ: Թվում է, թե շեղվել եմ Աստծոն ճանապարհից:

- Աստված ինքը սեր է: Նա դեմ չէ երկրային սիրուն, քանզի սերն է, որ հաղթում է մահվանը, սերն է մեզ հանել Լանկ Թամուրի դեմ... Ես քեզ սիրում եմ ու չեմ կարող ապրել առանց քեզ: Սիրում եմ ու կսպասեմ միևն-... Մի՛, մի՛ ընդհատիր ինձ, ես ել եմ ազգի ծառա, երդվել եմ քեզ հետ միասին ծառայել ազգին, սակայն ինչո՞ւ մոռանալ, որ ազգը գոյատ-ում է մասկան ճիշով, բազմանդամ ընտանիքներով: Ազգն ու ընտանիքը անքակտելի են: Ների՞ր, որ ես-՝ անիմա մի աղջիկ, քեզ պես իմաստասերին խելք եմ սովորեցնում:

- Անահի՞տ, սիրելի՞ս,- Թովման չէր ցանկանա խոսքն այդպես սկսել, սակայն չկարողացավ դեմ գնալ սրտի թելադրանքին, դողաց անծանոթ զգացմունքից, երբ աղջկա ձեռքերը օղակեցին պարանոցը, երբ զգաց աղջկա պիրկ մարմնի սեղմումը իրեն, հ-աց կուսական կրծքերի հպումից,- Անահիտ,- շշնչաց աբեղան, առաջին անգամ կյանքում զգաց կանացի շուրջերի համը, սկսեց խելագարի պես հանքուրել աղջկա շրթունքները, դեմքը, պարանոցը: Սեղմում ու սեղմում էր աղջկան կրծքին: Զգաց, որ

Անահիտը տևքում է, բաց թողեց:

- Չիչ էլ, ու ես կխեղդվեի,- շշնչաց Անահիտը,- Թովմա՛, սիրելի՛ս, ի՛մ Թովմա: Ես քեզ կսիրեմ մինչ- գերեզման: Քեզ սիրող ու հավատարիմ կին կլինեմ...

- Դժվար սեր է մեզ պարգ-ել Աստված, սիրելիդ իմ Անահիտ, չաղաթայները ուր որ է կլցվեն երկիր, արյուն են բերում ու ավեր...

- Իսկ հաղթելու է սերը, սիրելիդ իմ աբեղա: Սերն է անհաղթ, հավերժական, իսկ Լանկ Թամուրը անցողական է, սերն է հավերժ, աբեղա'

...

Զգաց, որ աղջկա շրթունքները իր շուրթերն եին փնտրում, դարձյալ սկսեց համբուրել, որքան համբուրում էր, այսքան զգում էր այրանալը...

- Բավական է, սիրելի՛ս, մենք կարող ենք անմտածված քայլ անել,- ի-աց աղջիկը, մեղմիկ ետ մղեց Թովմային, սակայն միտք չուներ հեռանալու: Ես չեմ կառող հեռանալ քեզանից: Չեմ կարող սպասել, չեմ էլ ցանականում սպասել, ուզում եմ կինդ դառնալ, քեզ համար զավակներ ծնել...

Թովման նորից գրկեց աղջկան:

- Ես կխոսեմ վանահոր հետ, միայն թե անցնի այս արհավիրքը: Վախենում եմ մայրդ չտա իր օրինանքը, քանզի աբեղա եմ, սոսկական հոգ-որ ...

- Մայրս բարի կին է: Նա կիասկանա, որ դստեր երջանկությունը սիրո մեջ է: Նա կիամածայնվի, մի՛ մոռացիր, որ մենք բարի միջնորդ ունենք,- տեսնելով Թովմայի զարմացած հայացքը, ավելացրեց,- մի՛ մոռացիր, Թորոս քերին մեզ կօգնի: Նա շատ է սիրում քեզ, կօգնի մեզ...

Մինչ- առավոտ երիտասարդ զույգը չեր կարողանում բաժանվել: Առաջին համբուրի սարսուն անցնելուց հետո չեին հագենում համբուրվելուց:

- Շատ եմ ուզում կինդ դառնալ,- ծիծաղեց Անահիտը,- Թովմա՛, իսկ ես անամոթ չե՞մ: Ես առաջինը խոսեցի սիրո մասին, իսկ դու՝ քար հոգ-որ, սպասում եիր, որ ես հեթանոսանայի ու առաջինը խոսք բացեի սիրո մասին,- համբուրեց Թովմային,- գիտե՞ս, մեկ-մեկ թվում է, թե իրոք հեթանոս եմ՝ արհական օրիորդ, այսպես շերմ ու քննույշ կարող են միայն նրանք սիրել: Ներող եղիր, հայր սուրբ,- Թովմայի գրկից ազատվելու թույլ փորձ արեց,- ես շատ եմ խորհում մեր առհավական նախնաց մասին: Յիշում եմ, որ երանելի հայրս՝ հայոց սուրբ նահատակ հայրս, շատ էր սիրում խոսել Յայարիների մասին: Երբ կանգնում եինք Բշնիի ամենաբարձր աշտարակին, ձեռքերը պարզում եր դեպի Ար-, գոչում էր՝ Յառնե՛ք, Յայարինե՛ր...

* * *

Գարուն բացվեց...

Լանկ Թամուրի գործերը խուժեցին Յայաստան: Չորքերի ծանր հ-քից տևքաց Յայոց հողը: Դարձյալ լինելու-չլինելու հարց ծագեց, ս-ա-ցավ Յայոց երկնակամարը: Յայոց ճակատագիրը կախվեց անդնդի պոն-կից...

Կապրի՞ Յայ ժողովուրդը, թե՞ բնաշինջ կկորչի պատմության քառուղիներում՝ հարց ին տալիս իրար, հանկարծ հիշում էին Մարտիրոսին, նա- անանուն ու անանց փառքով պսակված նահատակներին, հույս էր ծնվում...

Յանկարծ այդ համընդիանուր օրիասի մեջ խոսեին՝ կան մարդիկ, կան հայեր, Յայոց Գաղտնի Ուխտ են կազմել, կոչ են կոչում ելնելու սրբազն պատերազմի ընդդեմ մահմեդական հորդաների: Ասել է, թե անտեր չենք, Ուխտ ունենք, ազգի ընտրյալները ելել են պատերազմի: Ելե՛ք, հայե՛ր, հառնեք Յայարինե՛ր...

* * *

Լանկ Թամուրի մոտ հավաքվել էին մեծամեծերը, մարդիկ, ովքեր իրավունք ունեին լինելու նրա մոտ: Սպասում էին տիրակալի խոսքին: Սա էլ իր հերթին ծգծգում էր ասելիքը: Երկար լռել էր, սակայն հարկ էր խոսել:

- Թողթամիշ Խանը Դերբենդի անցքով գալիս է Ալտրպատական,- նորից լռեց, լուրս ամենքն էլ գիտեին: Դա չազդեց Ներկաների վրա, նրանց հետաքրքրում էր, թե ո՞ւմ կուղարկի Թողթամիշի դեմ: Դա Վտանգավոր արշավանք էր, ստուգ ասած, այստեղ էլ քաղցր չէ, այստեղ էլ են սպասում: Ամեն տեղ մահ է, նախ իրենք են մահ տարածում, նա- մահ են ընդունում... Սթափվեցին՝ լսելով տիրակալի խոսքերը:

- Չորքերի կեսը Թողթամիշի դեմ կտանի իրանշահ որդիս: Նա ուկեհորդացիների դեմ պատերազմի մեջ փորձ ունի: Մենք նրան հաղթանակ ենք մաղթում: Իսկ Յայաստան աշխարհում գտնվող մեր զորքերը երկրի խորքերը կգնան Լողլողանի հրամանի տակ: Դո՛ւ,- մատը տևկեց դեպի որդին, որին կանչել էր Սամարդանդից: Սա ոտքի ելավ, հպարտ կանգնեց հոր առաջ,- Թողթամիշին կհալածես մինչ- Սարայ: Ալլահը թեզ հետ: Դո՛ւ,- այս անգամ Լողլողանի հերթն էր,- կկոտորե՛ս ամենքին, կավերե՛ս, կայրես, կիհասնես մինչ- Բայազետի սահմանները: Դարա Մահմեդի զորքերը կցրես աշխարհով մեկ,- զայրացավ ինքն իր մեջ,- դաժան եղեք, մի՛ վախեցեք արյուն հեղեղուց: Այստեղ ու ամենուր պիտի սարսափեն չաղաթայ անունը լսելուց: Մենք Ալլահի զինվորներն ենք: Լա իլա, իլ Ալլահ, Մուհամեդ րասուլ Ալլահ...

- Ամեն,- ծայնեցին ներկաները, ձեռքերի ափերը քսելով երեսներին, բարեպաշտորեն հայացքները վեր հառեցին տանիքի կտավին, ո-րից այն կողմ, ինչ-որ տեղ պիտի որ լիներ Ալլահը...

- Կանչե՛ք վրաց թագավորին,- բոլորի համար անսպասելի հրամա-

յեց տիրակալը: Յասկացան, որ վճռվելու էր Վրաստանի ճակատագիրը: Այն, որ Բագարատը հսլամ էր ընդունել, ամենքն էլ գիտեին, սակայն քերը գիտեին, որ նա պայմանով է ընդունել Ալլահի կրոնը, ինչպիսի հանդգնություն մարդու կողմից, Ալլահի հետ «պայման» դնել...

Ներս մտավ Բագարատ թագավորը, նա էլ հասկացավ, եկել է պահը, վճռվելու է Վրաստանի ճակատագիրը:

«Մի՞թե պիտի մերժվեմ: Եթե մերժելու է, ինչո՞ւ է այսքան մարդ հավաքել,- թեպես գիտեր, որ Հանկ Թամուրը մեկ-մեկ սիրում էր շեշտել իր մեծությունը, սակայն, վա՛յ քեզ, Թամուր, թե մերժեցիր, դրժեցիր խոսքո՞ւ...»

- Մենք վճռեցինք, որ պիտի կատարես պարտքդ Ալլահի առաջ: Մենք քեզ հետ Վրաստան ենք ուղարկում տասներկու հազար զինվորներ: Նվաճիր երկիրն ու Ալլահի կրոնին դարձրու: Մի՛ քաշվիր արյուն հեղելուց: Յանուն Ալլահի ու մարգարեի դու պիտի նվաճես Վրաստանը: Դու դարձյալ թագավոր կլինես, մենք քեզ ենք վերադարձնում քո գահը, դու կլինես մահմեդական թագավոր: Յրի ու սրի միջոցով Ալլահի կրոնին դարձրու վրացիներին:

Բագարատը ձեռքը դրեց կրծքին, խոնարիվեց:

- Տիրակալի կամքը կկատարվի սրբությամբ,- Բագարատը նորից խոնարիվեց: Թամուրը արհամարհական նայեց վրաց թագավորին, ապա մեծամեծներին, իբր- տեսեք, թե ինչպես են մեր առաջ խոնարիվում թագակիր գլուխները: Դրա համար չեր արգելել Բագարատին յուրտ մտնել թագը գլխին, նրան պետք էր, որ իր առաջ խոնարիվեր Վրաստանի թագավորը:

Բագարատը հազիվ զապեց հոգում սեփական աևճի հանդեա զգվանքը: Չսպեց իրեն, քանզի մեծ նպատակի էր գնում, Ղստված կներեր հսլամ ընդունելը, առերես էր ընդունել օտար կրոնը: Նա այդ քայլի մեջ դրել էր ողջ կյանքը, կյանքի վերջին ճիգը, լիահույս էր, որ վրացիները կհասկանան իրեն, եթե կարողանա իրագործել այն մեծ նպատակը որին գնում էր անասելի ծանր գոհաբերության գնով: Ծանր օրեր եին սպասում նրան:

- Դու գիտես երկիրը, քո խորհուրդներով կօգնես Աղջար թումանապետին: Ալլահը քեզ օգևական, կշարժվեք երկու օրից: Ալլահ աքպար,- Թամուրը ափերը քսեց դեմքին,- գևա՛:

Բագարատը ասես երազում լիներ: Մինչ- հասավ յուրտ, զգաց, որ քրտնել էր, թե- ցուրտ էր: «Մի՞թե հասնում եմ նպատակիս: Վերջապես կմաքրեմ անվանս կպած այս կեղտը՝ մահմեդական կեղտը: Բա՛վ է, լավ է զարկվեմ մարտում, քան տանեմ այս նվաստացումը: Արդ, հարկ է լուր ուղարկել որդիներիս: Թարիելից զատ ոչ ոք ի զորու չէ լուր հասցնել Վրաստան: Յույսս նա է, միայն մի խոսք, ընդամենը մի խոսք, մի բառ՝ Դմանիսի, - ոչ մի բառ ավելի: Միայն մի բառ, որի նշանակությունը գիտեն որդիներս: Դմանիսի մոտ ես վրայիցս կթափեմ մահմեդական աղ-

տեղությունները: Յարկ է զգուշ լինել, շրջահայաց, մի անզգուշ քայլ, ամեն ինչ կձախողվի...

- ՅՌ, ի՞նչ ասաց,- տեղից բարձրացավ թագուհին: Թարիելը, որ դեռ արքայազն հագուստների մեջ էր, նույնպես ոտքի ելավ, և այեցին հարցական:

- ՈՒՓ,- տևքաց թագավորը, միվեց աթոռակին,- վերջապես, տեր Աստված լսեց ձայնս, տիրակալը մեզ տասներկու հազար գինվորով երկիր է ուղարկում, իրամանատար է կարգել Աղջար թումանապետին:

Գիտեմ, այսքան էլ խելացի չե, սակայն նեև ու խորամանկ մարդ է,- ձեռքը թափ տվեց,- ամեն բան Աստծոն ձեռքին է, մենք կամակատարներ ենք,- դարձավ Թարիելին, լսի՞ր, որդի՞՝, քեզանից շատ բան է կախված, քո ինարամտությունից, քո արագ երթից: Դու պիտի երկիր գնաս, տիրակալը իրամայեց երկու օրից շարժվել, մինչ- մենք շարժվենք, դու պիտի տուն հասնես: Նամակ չեմ տա, որդիներիս կասես մի բառ՝ Դմանիսի, - ոչ մի բառ ավելի: Կասես, որ մենք կշարժվենք երկու օրից: Դու պիտի տուն հասնես վիրավոր, թե մեռած, քո կյանքը պիտի ծառայի վրաց գահին ու ժողովրդին, տուն հասցրու մի բառ՝ Դմանիսի... Զո հագուստները կտաս Փրիդոնին, թեպետ այսքան էլ նման չեք, սակայն հոգուստներով նա կնմանվի քեզ, այսպես, որ չաղաթայները չկասկածեն,- գրկեց, համբուրեց Թարիելին,- գնա՞՝, որդի՞՝, Աստված քեզ հետ:

Թարիելը դուրս գնաց:

- Թագուհին,- Բագարատը գրկեց Կիր Աննային,- իրականանում է երազանքս,- ձեռքով սրբեց կնոջ արցունքները,- փույթ չե, թե ինչ գնով է գալիս հաղթանակը: Վրաստանը թագավոր կունենա, որ ժողովրդին կիանի սուրբ պատերազմի: Լսողաց եմ՝ Յայաստան աշխարհում Գաղտնի Ուխտ են կազմել, կեցցեն մեր եղբայրները: Մենք էլ նույնը կանենք, կուխտենք կռվել չաղաթայների դեմ: Այո՞՛, հայերը մեզանից հզոր են, թե որպես զորականներ, թե մտովի ճկուն են, կռվի մեջ հաջողակ... Յայերը այս էլ քանի դար կլինի կրծքով պաշտպանում են մեզ, իսկ մենք հաճախ չե, որ փոխհատուցում ենք այդ եղբայրական օգնությունը...

* * *

Մուշը դարձել էր Ս-ախոյ թուրքերի աթոռանիստ քաղաքը: Նրանք իշխում եին նա- Քաջբերունքում, Տարոնում, Սասնում գավառակներում:

...Յայե՞ր, հայե՞ր, մի՞թե մեր սուրբ հողը պիտի մնա օտարների լծի տակ...

Տիրելով այս գավառներին, հարկատու դարձնելով, Ղարա Մահմեդ սուլթանը հանգիստ թողեց հայերին, քանզի խորհել էր, որ ավելի լավ է հարկ վեցոցի, քան մշտական կռիվների մեջ լինի հայերի հետ, հատկապես Սասունում, որտեղ պահպանվել էին համայնքները: Սուլթանը չեր կարող ցրել համայնքները կամ կռվել նրանց դեմ: Սասունը մյուս գա-

վառների համեմատությամբ աղքատ էր, չեր կարող հագեցնել Ղարա Մահմեդի որկորը: Սա մի քանի անհաջող փորձ էր արել զենքով ճնշելու սասունցիներին, ծախողել էր այդ գործը, այլ-ս չի ցանկանում գործ ունենալ համայնքների հետ, որոնք ոտքի են հանում համայնքի բոլոր անդամներին, անխտիր բոլորին: Դե արի ու կռվիր իրենց հետ... Փորձել է, սարսափով է հիշում այդ կռիվները...

Սասունցիները քաջ ու փորձված կռվողներ են, սուլթանը այլ-ս չի ցանկանում զոհեր տալ: Սասունցիները զինվորագրպում են անգամ Բաղրատում, Մոսուլում - այլուր: Նրանք լավ հեծյալներ են, զրահված են, կարող են ելնել անգամ խաչակիրների դեմ, ստույգ են, նրանց սպառագինությունը ավելի թեթ- է, թույլ, քան խաչակիրներին, նժույգները սակայն արագավազ են: Սուլթանի արքունիքում գլահատում են սասն ասպետներին, հաճույքով են վարձում նրանց: Սասն ասպետները արդարացնում են իրենց մասին տարածված փառքը:

Մնացած գավառները բարեբեր դաշտեր ունեն: Թուրքերի եկամտի աղբյուրը Տարնո գավառն է, այստեղ առատ բերք են աճեցնում, ժամանակին տալիս են հարկերը: Այսպես որ, նրանց ու սուլթանի միջ- տարածայնություններ չկան: Յայերի վիճակը այս գավառներում ավելի տանելի է, չաղաթայներն ել չեն հասել այստեղ: Ցավալին այն է, որ այս անգամ չաղաթայները գալիս են Տարնո, այդպես է եր-ում Լանկ Թամուրի գործերի շարժից, խփում են դեպի Տարնո:

Ղարա Յուսուֆը անթարթ նայում է հորը: Նրան հետաքրքրում է հոր վերաբերմունքի փոփոխությունը հայերի նկատմամբ: Տեսնում է, որ հայրը փոխվել է, ինչ-որ սկսել է լավ վերաբերվել հայերի հետ: Դա մեկ վերագրում է հոր ծերությանը, մեկ ժիտում է այդ պարագան, հիշելով, որ հայրը մի շաբաթ առաջ կույս աղջիկ էր գնել, իբր- քիչ են կանանցի փերիները: Ներքնապետ Վալին երդվում է Ալլահի մորուքով, որ սուլթանը չի կորցրել այրությունը:

Մոռացավ այդ ամենը, տեսավ, որ հայրը իրեն էր նայում:
- Հսում եմ, տե՛ր իմ, - ձեռքը դրեց կրծքին:
- Յարցիս պատասխան չտվեցիր:
- Ներող եղիր, սուլթան, մտքերի հետ էի:
- Ի՞նչ ներեմ,- զայրացավ սուլթանը,- ո՞ւր են հասել կաղ շեյթանի գործերը:

Ի՞նչ լուր էր բերել դերվիշ Ալին,- սուլթանի դեմքին հեգնանք խաղաց:

«Կսել է, թե այդ հիմարը արդեն եղել է հորս մոտ,- խորհեց Յուսուֆը ու վճռեց պատժել դերվիշին, որը բերած լուրերը վաճառում է, իսկ իր մոտ եկել է հոր մոտ լինելուց հետո միայն: Այդ ամենը թեր-ս եր-աց նրա դեմքին, դեմքը ծռմռվեց, դժգոհեց:

Սուլթանը շարժում արեց:

- Դերվիշին ձեռք չտաս, նա պապիդ է ծառայել: Ի՞նչ գիտես Թամու-

ոի մասին:

- Թամուրը զորքերը բաժանել է երկու մասի: Մի մասը Միհրանշանի գլխավորությամբ նետել է Շիրվանի վրայով Դերենդի կողմը, փակել է Թողթամիշի ճամփան, որ այրելով ու ավերվելով գնում է դեպի Ատրպատական:

Սուլթանը քմծիծաղ տվեց:

- Ի՞նչ է, մենք չե՞նք այրում, նույն կերա ենք վարվում: Ամեն տիրող սրով է հարթում ճամփան, առանց արյուն ավերի պատերազմ չի լինում: Մենք՝ տիրողներս, իրար ենք նման: Մեզ ոչ մեկը չի սիրում: Դու աս՝ սրանք են դիմացկուն, ահա պատճառը, որ դեռ դիմանում են, ապրում... Ա՛յ, Սասունը, մեկ-մեկ, երբ նայում եմ Սասոն կողմերը, վրաս դող է գալիս: Դու նրանց լեռներում չես կռվել: Սասոն համայնքները կռվի են ելնում մեծով-փոքրով, անգամ մամիկներն են կռվի ելնում: Թո՛ւ, միևնույն չեմ մոռացել... Վայրագ կռվողներ են: Մի անգամ ինչ-որ շեն եկը գրոհում, պապդ, թող Ալլահը շենսեթում խաղաղ ու երջանիկ անի օրերը, իրամայեց առաջ նետվել, գնացի,- հեգնանքով նայեց որդուն,- վեր-ից թափվող քարերին մի կերա դիմանում եիսք, հանկարծ գլխիս մանկան բարուր շպրտեցին, հետո մոր ճիչն էր: Իմ վրա թռակ սասունցի մի կին, դաշույնից ավելի սարսափելի փայլում են աչքերը... Զկարողացա զարկել, յաթաղանս ընկավ, շենսեթի փերիները նրա համեմատությամբ վիուկներ են... - Երկար լռեց,- կնոջը զարկեց դերվիշ Ալին... Ամեն անգամ Սասոն կողմը նայելիս, այդ կնոջ աչքերն եմ տեսնում, որ լեռների չափ են, մարմինս դող է բռնում,- սուլթանը ծեռքը տարավ դեմքին, մտքում դիմեց Ալլահին, թեր-ս ներում էր հայցում, թեր-ս...

Ելավ տեղից, քայլեց սրահում: Ետ եկավ, հոգոց հանեց, նստեց գահին: Յուսուֆը նրան երբեք այդ վիճակում չէր տեսել: Սուլթանի աչքերը տամկացել եին, որդուն ասես չէր էլ նկատում: Աչքերը Սասոն կողմն էր ուղղել, ինչ-որ շշնջում էր, քիչ անց տիրապետեց իրեն:

- Չորքերի կեսի գլուխն անցած Յայաստան է գալիս Լողլողանը, եթե հայերը խելքի գան ու Այրարատում դիմադրեն, մեր վիճակը մի փոքր կթեթ-անա,- սուլթանը, որ խոսելիս դարձյալ բարձրացել էր գահից, մոտեցել պատուհանին, ծեռքի համրիչով զարկեց վարագույրին նստած ճանճին, ճանճին չվնասեց, սակայն համրիչի հատիկները շաղ եկան հատակին, անձայն գլորվեցին գորգերի վրա: «Ե՛, առաջ ճանճին օդում էի որսում, ճկուն էի, գիտեի զարկի պահը: Արդ, չեմ կարող,- քմծիծաղ տվեց,- դրա փոխարեն իմաստուն եմ դարձել: Ինչ կարող ես անել, Ալլահին ինչ տվել է, ետ է վերցնում: Ծերանում եմ, ծերանում,- սիրով նայեց որդուն,- Յուսուֆը իմ կտորն է, նա իմ սուրն է: Ես երկրի գլուխն եմ, նա՝ սուրը, իմ յաթաղանը,- ապա նախանձեց որդուն,- կանայք բարձրահասակներին են սիրում, առնական այրերին, հատկապես Յուսուֆի նմաններին, իմը պրծա՞վ, անցա՞վ...»:

- Դու լսե՞լ ես Յայոց Ուխտի մասին, Գաղտնի Ուխտի մասին: Յայե-

ող վճռել են ելսել չաղաթայների դեմ,- սղալելով սրածայր մորուքը, ավելացրեց,- հարկ է օգտվել նրանց ուժերից...

- Գյառւրները մե՞ր դրոշների տակ, Ալլահը...

- Սպասի՛ր, գյառւր: Դու զորավար ես, ի՞նչ ես մոլլայի պես խոսում: Քեզ կռվող մարդիկ են պետք, իսկ հայերը կռվող են, դա նվաճելի է: Նահավատարիմ են իրենց խոսքին, ինչպես իրենք են ասում՝ ասպետ են, փահլ-ան: Մի՛ մոռացիր, որ հայերը դեմ ելան խաչակիրներին Կիլիկիայում: Յայ փահլ-անները մեզանից վատը չեն: Յատկապես Սասն ասպետները, որոնց բոլոր երկրներում ել վարձում են: Սպասի՛ր, Յուսո՞ւֆ, Եստեղ մի կողմ դնենք կրոնը: Մենք այսօր, այս խառնակ վիճակում, Բայազետի հաշվին ընդարձակել ենք մեր հողերը: Մի՛ մոռացիր, որ գալիս է կաղ շեյքանը: Նա անապատի օձ է, աշխարհ է տիրում: Այս ել երկու անգամ մոտենում է Բայազետի սահմաններին, սակայն ներս չի մտնում, չի ցանկանում մեզ թողնել թիկունքին: Յատ՞ւ ես մտքերիս, մեզանից զատ կան հայերը, վրացիները, աղվանները: Չմոռանանք, ինչպես հայերը Թակաթալա լեռան տակ տրորեցին Թամուրի քիթը, սուլթանը անձայն հռհռաց, դաստառնակով սրբեց չեկած արցունքները, լրջացավ, - հարկ է կապվել հայերի հետ, սպասի՛ր,- զայրացած, թափ տվեց ծեռքը,- միջոցների ու դաշնակիցների մեջ խտիր չկա, չաղաթայները գալիս են, ուշքի՛ եկ: Ինչ գնով ել լինի հարկ է փոկվել Բայազետի ու Լանկ Թամուրի արանքում, պահենք մեր իշխանությունը: Դա ել քիչ չէ, մինչ- նրանցից մեկն ու մեկը կոտրի մեջքը: Ես գգում եմ՝ գալիս է ընդհարման պահը: Ես լավ եմ գգում դա – գիտեմ այս երկրները, գիտեմ ով դեմ կելսի, ով սուրը կայր կղնի, կմտնի կնկա փեշի տակ, - նայեց ներս մտած վազիր Կահրամանին: «Ի՞նչ կա, վեզիր, - դարձավ որդուն,- աշխարհի ամենապետքական ու ծախու մարդիկ վեզիրներն են, թեր-ս Ալլահը վեզիր պահեր, եթե ինքը իմաստուն չլիներ ու կստված: Խոսի՛ր, վեզիր, ի՞նչ կա:

- Տե՛ր իմ, շեյխ Շարաֆին է ցանկանում արեգնադեմիդ տեսակցությունը: Խնդրանքով է գալիս...

- Տեսնո՞ւմ ես, սրան ել է լուրը տեղահան արել, սակայն գգույշ լինենք սրա հետ: Նա կարող է խառնել մեր ու հայերի հաշիվները: Այսունարբու մարդ է Շարաֆին: Նրա համար ջուրն ու արյունը մեկ է: Ինչո՞ւ է Ալլահն այս մարդուն արարել, չգիտեմ, հասու չեմ: Նրանից արյան հոտ է գալիս:

Յուսուփը լսում է հորը, նա հորը սուլթաններից ամենաարյունաբուն է համարում, սակայն լոեց, թեր-ս այս պահին շեյխը ինչ-որ նոր բան ասեր:

- Յրավիրի՛ր,- անփութորեն ասաց սուլթանը:

Նրա աչքերում որդին գգուշավորություն տեսավ, նենգություն:

Շեյխը ներս խուժեց փոթորկի պես: Տեսքը բնավ չեր համապատասխանում սանին: Ստույգ է, սպիտակ չալմա էր կրում, սպիտակ

խալաթ, սակայն գիշատչային աչքերն այլ բան էին վկայում: Խալաթի բացվածքից եր-ում էր դաշույնի երախակալը: Շեյխը մռայլ նայեց սուլթանին, ձեռքը համբույրի համար մեկնեց Յուսուֆին, սակայն նույնը չարեց սուլթանին, գիտեր, որ Ղարա Մահմեդը վայրագ մարդ է, կարող է անգամ թքել ձեռքին: Սուլթանի համար յաթաղանից զատ սրբություն չկար:

- Նստիր, հարգելիս: Թող Ալլահը առողջություն պարգ-ի քեզ, նախաղաղություն հավատացյալներիս,- երբ սա նստեց, շարունակեց, - ի՞նչն է բերել հարգելի շեյխին մեղքերի մեջ թաղված աշխարհիկ տերերիս մոտ: Մեծ պատիվ է մեզ համար սուրբ մարդու հայտնվելը մեր ապարանքում...

Սուլթանի խոսքերում բացարձակ հեգնանք կար, սակայն շեյխը զսպեց իրեն: Սուլթանը ծափ զարկեց:

- Շեյխին շերբե՛թ,- ապա քմիջաղ տվեց,- թեր-ս գինի է ցանկանում սուրբ մարդը,- կծեց սուլթանը, որ գիտեր շեյխի թուլությունը:

- Ալլահը արգելել է մեզ գինի խմել, դա գյառուների խմիչքն է...

- Ի՞նչ իրավունքով են քո մարդիկ հարձակվել Վրեխի շենի վրա, աղջիկ են առ-անգել,- Փշշացրեց սուլթանը,- սա իմ երկիրն է, ես քո մորուքը գլխիդ հետ կկտրեմ, շուն: Քեզ ո՞վ է իրավունք տվել գիմմիի վրա հարձակվել /հարկ տվող քրիստոնյա, որ Զիմմի՝ պաշտպանություն է ստացել մահմեդականի կողմից/: Նրանք ինձ են հարկատու, իմ պաշտպանության տակ են: Մենք նրանց ամակ (պաշտպանություն) ենք տվել: Ես քո գլուխը կկտրեմ:

Յուսուֆը քարացել էր: Նա այդ դեպքի մասին տեղյակ չէր: Պարզվում է, որ դեռ շատ խակ է, հայրը մեծ սուլթան է: Ինքը շատ բան ուսի սովորելու նրանից: Չարմացած նայեց շեյխին, սա հանգիստ շոյում էր մորուքը, հայացքը կախել էր, սակայն Յուսուֆը լավ էր ճանաչում նրան: Գիտեր, որ շեյխը մեծ հեղինակություն ունի շրջակա գավառներում, կարող է մեծ գունդ հանել կռվի: Նա ոչ միայն հոգ-որ, այլ նա- աշխարհիկ իշխան էր:

Յուսուֆը ցանկացավ հաշտեցնել հորն ու շեյխին, սակայն նորից զարմացավ:

- Հայերին դեռ չես դարձրել Դար յուլ Խոլամ, շարիաթը դեռ մուտք չի գործել /խոլամին ենթակա երկիր/- Եթե հասնես այդ բանին, կփառաբանվես մահմեդական աշխարհում: Այս երկիրը Դար յուլ Խարը է /կռվող երկիր/, մի՛ մոռացիր այս պարագան: Դու դեռ այն չես նվաճել: Չես կարող արգելել աղջիկ վերցնել: Շատ էլ մի հոխորտա,- այս ամենն ասելիս հայացքը չէր բարձրացնում,- ես իմ աղխով կանցնեմ Բայազետի դրոշի տակ...

Սա արդեն ծանր հարված էր: Ղարա Մահմեդը ցևցվեց: Վերջապես շեյխը բարձրացրեց հայացքը: Նրա աչքերը վառվում էին: Յուսուֆը կգերադասեր նայել օձի աչքերի մեջ: Շեյխի աչքերն ավագի գույն ու-

Նեին, որ զսպման ճիգերից կլորացել էին, սակայն կարողանում եր իրեն զսպել:

- Աղջիկը գեղեցի՞կ է,- հանկարծ Շեյխի ու Յուսուֆի համար անսպասելի հարցուց սուլթանը:

Շեյխն ավելի արագ սթափվեց, քան Յուսուֆը:

- Զեննեթի փերի,- շրթունքները լմլմացրեց շեյխը,- աստվածային վայելք եմ ապրել,- շոյեց մորուքը:

«Ինչո՞ւ զիշեց հայրս,- հանկարծ ասես ապտակեցին,- ո՞ւֆ, մոռացել էի Լանկ Թամուրին: Երկուստեք սարսափում են, դրա համար փոխադաբար սիրալիր են: Օ՛, Ալլահ իմ, որքան երիտասարդ եմ: Նրանք իրար մոտ պաշտպանություն են փնտրում, դաշինք, այո՛, վախեցած են...»:

- Այդ ամենը մի կողմ թողնենք,- ասաց սուլթանը, - ի՞նչ կասես Լանկ Թամուրի մասին: Լուրեր ունե՞ս:

Շեյխը մի քանի բառով պատմեց իմացածը, այն ոչնչով չեր տարբերվում սուլթանին հասած լուրերից

- Ի՞նչ ես վճռել, ո՞ւմ ես միանալու: Մեզ հետ եղիր, միասին զարկենք, հակառակ դեպքում չենք կարող դեմն առնել: Չորքերը գալիս են Լողողանի հրամանի տակ, դաժան մարդ է...

- Չաղաթայներն ամենքն ել դաժան են, արևարբու:

- Ի՞նչ ես մտադիր անել,- զայրացավ սուլթանը,- գիտեմ, խորամանկ ես..

Յուսուֆը այսօր չեր ճանաչում հորը: Սուլթանը ասես հունից դուրս եկած գետ լիներ,- ասա՛ անելիքդ, մի՛ ծռմռվիր: Մենք վճռել ենք օգտագործել հայերին, նրանց ուժերը: Նրանք մեզ հետ կլինեն, կկռվեն թամուրի դեմ...

- Յա՛, Ելի՛,- հեգնեց շեյխը,- ապարանքում հայ փահլ-ան տեսա, ի՞նչ խոսք, հզոր զորական է եր-ում...

- Ի՞նչ հայ,- հանկարծակի եկավ սուլթանը,- մենք ո՛չ մի հայի չենք կանչել - ծափ զարկեց,- կանչե՛ք վեզիրին,- գոռաց սրահով մեկ:

Վեզիրը անմիջապես ներս մտավ:

- Ի՞նչ հայ փահլ-ան կա ապարանքում, ինչո՞ւ չես գեկուցել:

- Տե՛ր իմ, նոր ժամանեց:

- Յայերն արդեն ժամանում են: Սուլթան, մի՛ պղծիր շրիթ, զիմմին իրավունք չունի նժույգ նստելու...

- Լոյ՛ր, դո՛ւ,- գոռաց սուլթանը, ապա աչքերը ոլորեց վեզիրի վրա:

- Տե՛ր իմ, հայ փահլ-անը գործով է եկել:

Սուլթանը հազիվ զսպեց վեզիրին պատժելու ցանկությունը, ավելի ստույգ ցցանկացավ իր զայրությով հաճույք պատճառել շեյխին:

- Կանչիր գա՛,- միմռացրեց սուլթանը,- տեսնենք ի՞նչ մարդ է:

Կահեն ներս մտավ, թեթ-ակի խոնարիվեց սուլթանին, որև այլ պարագայում պատասխան կտար գլխով, սակայն ժամ չեր նրբանկա-

սուրբունների, սուլթանը գլխով պատասխանեց հայի բար-ին: Յուսու-
ֆը հիացած հայ ասպետի առնական տեսքով, նույնպես բար-եց: Միայն շեյխը հային բար-ի չարժանացրեց, դեմքը դարձրեց պատուհա-
նը: Դա աննկատ չմնաց Վահեից: Նրա դեմքին հեգնանք խաղաց: Սուլ-
թանն ու որդին նկատեցին հայի դեմքի արտահայտությունը, սակայն
սպասվող վտանգը սթափեցրել էր ամենքին: Դա էր պատճառը, որ
շեյխն էլ դարձավ հային: Վահեն կանգնել էր հպարտ, անկախ տեսքով,
ստույգ է, նրանից վերցրել էին սուրբ ու դաշույնը, սակայն պաղպատիկ
մարտական թաթապանները չեին վերցրել, որոնցով նա կարող էր պաշտ-
պանվել: Հայ ասպետից ուժ ու հպարտություն էր առկայծում: Նրա մեջ
ինչ-որ վախեցնող բան կար, որ վիրավորական էր սուլթանի համար:

- Սուլթանը լսում է քեզ, հայ փակի-ան,- խոնարիկելով սուլթանին՝
ասաց վեզիրը, - ի՞նչն է քերել քեզ հզոր սուլթանի մոտ:

- Թող մե՛ր Աստվածն ու ծեր Ալլահը իմաստություն տան մեզ, կա-
րողանանք սթափ խորհել սպասվող վտանգի մասին: Այն, որ Լաևկ Թա-
մուրը մտել է Հայաստան, հարկավ, գիտեք: Չորքերը Լողլողանի գլխա-
վորությամբ գալիս են Տարոնի կողմերը: Լողլողանի խուզարկուները
եր-ացել են մեր կողմերում,- դա արդեն նորություն էր ներկաների հա-
մար: Վեզիրը կծկվեց սուլթանի խայթող հայացքի տակ,- անցյալ տարի,
երբ չաղաթայները հարձակվեցին, մի քանի քերդերի տակ ու Բարդող
լեռան վրա, չարաչար պարտվեցին, ասել է թե նրանք անպարտելի
չեն...

- Մենք ել գիտենք, որ կաղ շեյթանի գորքերը գալիս են Տարոնի կող-
մը,- խոսեց սուլթանն ու մի միտք կայծակեց գլխում,- դու Հայոց Գաղտ-
նի Ուխտի անդա՞մ ես,- սուլթանին թվաց, թե հարցը անսպասելի էր հա-
յի համար, անգամ շարժվեց գահին:

Հարցը Վահեի համար հանկարծակի չէր, նրանք նախօրոք ընկեր-
ների հետ գցել - քաշել էին հնարավոր հարցերը, նա- այս հարցի պա-
տասխանը:

- Ես խոսում եմ իմ ընկերների ու ժողովորի անունից: Ներող եղիր,
սուլթան, մնացածը ուսայնություն է, - ամեն ժամ թանկ է մեզ համար,
նա- քեզ համար ժամն է գորքեր գումարելու, կարգի բերելու, գինելու:
Գիտեմ՝ սուլթանին հարց չեն տալիս, սակայն ստիպված եմ տալ այս
հարցը: Ասա՛, ո՞վ սուլթան, դու կռվից հետո չե՞ս շարունակի բռնանալ
հայերի վրա: Չե՞ս փորձի դարձյալ իսլամ պարտադրել, կամ նեղություն
տալ: Եթե խոստանաս մեզ՝ հայերիս, հանգիստ թողնել, մենք կլինենք
քեզ հետ ընդդեմ չաղաթայների,- ապա կտրուկ,- շեյխ, մենք ել գիտենք
երեկով դեպքը: Մենք ել կարող ենք քո ցեղից, կամ դուստրերիցող մեկին,
ասենք, Փաթիմային, առ-անգել, սակայն քանի կլինենք միասին կաղ
սատանայի դեմ, քեզ ձեռք չենք տա,- Վահեն այս ամենը ասաց իրենից,
քանզի ընկերների հետ խոսելիս ոչ մեկի մտքով չէր անցնում, որ Ղարա
Մահմեդի մոտ կհանդիպեր շեյխին՝ հայերի ոխերիմ թշնամուն:

Այստեղ զարմանալի բան կատարվեց, որ անգամ խորամանկ սուլթանը ապշեց: Կատաղի ու վայրագ շեյխը զսպվեց, ժպտաց, որից եր-աց, որ բավականին երիտասարդ մարդ է, թեր-ս քառասուն էլ չկար:

- Վահե՛ փահլ-ան,- այստեղ ամենքի հետ զարմացավ նա- Վահեն,- քաջ մարդ ես, եթե քո ընկերներն ել քեզ պես քաջ են, ապա մենք, Ալլահի օգնությամբ, ետ կմղենք Լանկ Թամուրի գործերը,- հաստատուն ձայնով ասաց շեյխը:

- Երբ չաղաթայները մտնեն մեր սահմանները, դու մեզ լուր ուղարկիր Յուսուֆի հետ վճռեք ձեր անելիքը,- սուլթանը հոգոց հանեց,- իրավացի ես, փահլ-ան, մնացածը ունայնություն է այս զուլումի առաջ...

* * *

Ար-ը դուրս եկավ, օրը բացվեց, բացվեց ուրախ սպասումով: Սակայն թումանապետ Աղջարը անտրամադիր էր, արգելեց գործերին ձոր մտնել: Զգիտես անապատաբնակի սովորական զգուշավորությո՞ւն էր, թե՞ հոգին աղետ էր գուշակում: Խոր ու ահասարսութ ձորն ասես գոռում էր՝ զգույշ եղիր, Աղջար, դրանից զատ կար նա- տիրակալի զգուշացումը, հարկ էր ամեն քայլ անելուց առաջ խորհել:

Լեռները սարսափ են բերում անապատաբնակներին, որ դեռ չեն կարողանում սովորել լեռներին, նայում են անհանգստացած, զգուշացած: Այստեղ հորիզոնը կտրատվում է մի ասպարեզի վրա: Ամեն լեռ ինքը հորիզոն է կապում, իսկ լեռան թիկունքում դավադիր անհայտություն է...

Դժվար է լեռներում կռվելը, ամենուր աչքերին դարաններ են եր-ում:

- Տե՛ր իմ,- մոտեցավ օգնական Օմարը,- ձորի մուտքի շենս այրեցինք, բևակիչներին սրի քաշեցինք, գեղեցիկ կանաց գերեվարեցինք: Առաջապահ ջոկատ եմ ուղարկել, զինվորները գնում են իծաշարուկով, ծուղակ լինելիս աղմուկ կբարձրացնեն:

- Հա՛, զորքերը պիտի ձգտենք, որ հարձակման դեպքում չկարողանան միանգամից վրա տալ, զարկել ողջ թումանին (թումանը՝ տաս հազար զինվոր է): Ինչ անիջալ ձոր է, իսկը դարանի տեղեր են:

Մինչ նրանք զրուցում եին, թագավորն ու թագուհին իշան կառքից, լվացվեցին գետակի ջրով: Մոլլան մոտեցավ նրանց, նամազի ժամն էր:

Թագավորը ցնցվեց, մի քանի քայլի վրա վրաց հողն էր, իսկ ինքը ստիպված է շարունակելու միմոսությունը, քիչ մնաց սրատեր մոլլային, սակայն սթափ մարդ էր, հասկացավ, որ իր ընդկզումով կարող էր ամեն ինչ փչացնել:

Սրտի մորմոքով ծնկի իշավ գորգի վրա: Զեռքերը քսեց մորուքին,

Նայեց Երկինք...«Տեր Աստված, Ե՞րբ պիտի Վերջ տաս այս ստորագմանը: Սա արդեն ուժերից վեր է, անկարող եմ դիմանալ»:

Ուսին զգաց կնոջ ձեռքի սեղմումը:

- Ոհչ էլ դիմացիր, Բագարատ, սիրելիս: Աստված մի դուռ կբանա, - Աստված մի արասցե, կասկածեն: Աղջարը խորամանկ գայլ է...

Բագարատը մռնչաց վիրավոր առյուծի պես:

- Նա այրել է ձորի մուտքի հայկական շենք, ինչպես կարող եմ հանգիստ նայել, երբ կոտորում են մեր Եղբայրներին: Սպասի՛ր դեռ, Բագարատ,- իրեն զայեց թագավորը,- կգա ժամը, վա՛յ դեմ Ելսողներին...

Թագուհին փարվեց նրան:

- Ես քեզ այդպիսին ել սիրում եմ, անզուսապ, նա- Երկաթյա կամքով հրաբուխը զսպող: Դու իրավունք չունես թույլ լինելու: Վրեժ ունես կաղ սատանայից,- վերջին խոսքերը շշնչաց ամուսնու ականջին:

Չորքերի մեջ աղմուկ ընկավ, հասկացան, պատրաստվում էին շարժվելու:

- Շարժվում ենք,- մոտեցավ Աղջարի թիկնապահը, ձին արհամարհական պտտեցրեց նրանց առաջ:

- Գևանք մեր ճակատագրին ընդառաջ,- ասավ թագավորն ու օգնեց կնոջը կառք բարձրանալու, ինքը նժույգ նստեց:

Թագավորը տարակուսանքի էր մատնված, մի՞թե թարիելը չէր հասել, նրա գնալուց հետո ոչ մի լուր չէին ստացել: Երբ թարիելին ուղարկեց Վրաստան, նրա Եղբորը՝ Գեղրգիին, որ բավականին նման էր թարիելին, հագցրեց թարիելի հագուստները, հակառակ պարագայում չաղաթայները կարող էին հասկանալ արքայազնի անհայտացումը ու կոդադարեցնեին զորքերի շարժը: Իսկ լուր Վրաստանից չկա ու չկա: Շայրալից նայեց Աղջարին:

«Խորամանկ թուլա, տես ինչպես է ձգել թումանը: Սրանց կոտորելու համար մեծ ուժեր են պետք»:

Ահա վրաց հողը: Դմանիսի բերդին քիչ էր մնացել, հանկարծ զորքերը կանգ առան: Մոտեցավ Աղջարի թիկնապահը, թագավորին հրավիրեց զորավարի մոտ: Թագավորը աշտանակեց նժույգն ու սլացավ: Երբ հասավ զորքերի կենտրոն, շունչը բերանին հասավ, տեսավ Դավիթին ու մի քանի վրացի զորականների, որ կանգնել էին չաղաթայների շրջապատման մեջ: Տեսնելով թագավորին՝ վրացիները իշան նժույգներից: Դավիթը իր հետ բերել էր ընտիր զորականներ, սրանք հսկաներ էին: Շատերին թագավորը անձամբ ճանաչում էր:

- Ովքե՞ր են սրանք,- հարցրեց Աղջարը:

- Սա իմ որդին է, սրանք էլ նրա թիկնապահներն են:

Աղջարը նայեց կասկածանքով, սղալեց բեղերը:

- Շատ չե՞ն արքայորդու համար,- նորից հարցրեց Աղջարը, այս անգամ տագնապով:

- Սրանք նա- իմ թիկնապահներն են: Տիրակալը մեզ ուղարկել է

Նվաճելու Վրաստանը, մի՛ մոռացիր, որ կլինեն իշխաններ, որ կցանկանան իմ մահը, կցանկանան սպանել մեզ: Մեր անձը պաշտպանության կարիք ունի,- զայրացած խոսեց թագավորը: Նրա խիստ տոնը ազդեց թումանապետի վրա: Թագավորի տոնի մեջ զգացվում էր տիրողի ու կամքը թելադրողի իրավունքը:

Աղջարը մի փոքր հանգստացավ, սակայն նրա սիրտը անսխալ փորձանք էր գուշակում.

- Սրանցից միայն հինգը կգան քեզ հետ, թագավո՞ր,- ասաց Աղջարը:
Թագավորը ուրախացավ, սակայն հարկ է խաղալ այսքան օրերի տհաճ դերը:

- Ես կբողոքեմ տիրակալին: Դու իրավունք չունես առանց ինձ հետ խորհրդակցելու որ-է քայլ անել: Ինչ վերաբերում է թիկնապահներին, ապա ես կարիք չունեմ քեզանից թույլտվություն հարցնելու, մի՛ մոռացիր, որ դու խոսում ես Վրաստանի թագավորի հետ, իսլամ ընդունած թագավորի հետ: Յե՛յ, զինվորներ, գևացեք կառքի մոտ,- իրամայեց զինվորներին:

Նրա տեսքն այնքան անկախ էր, ազդեցիկ, որ Աղջարը չփորձեց առարկել, միայն փնթփնթաց: Մոլլան փորձեց խոսել: Աղջարը սրտի մաղճը թափեց նրա վրա:

- Լռի՛ր, դո՛ւ, - ֆշացրեց նա, - ես եմ այստեղ իրամայում:
- Ի՞նչ ես վճռել, զորավար,- հարցրեց թագավորը, - մինչ- Տփխիս ես չեմ խոսի, իսկ այստեղ ինձ սպասում են հավատարիմ գործերը: Ես կշարդեմ իմ դեմ ելնողներին, կկատարեմ տիրակալի կամքը:

Աղջարը բարձրացրեց ձեռքը, չաղաթայները ճանապարհ տվեցին վրացիներին: Թագավորն ու թիկնապահները սլացան կառքի կողմը:

- Յը՞,- ընթացքի պահին թագավորը դարձավ որդուն,- որտե՞ղ են գործերը, ովքե՞ր են ազնաուրներից միացել գործերին:

- Յա՛յր, ամեն ինչ արվում է Կստծոն կամեցողությամբ ու քո կամքով, միայն թույլ տուր գրկեմ մայրիկին:

- Դավի՛թ, որդի՛ս,- թագուհին իշավ կառքից, մայր ու որոի գրկախառնվեցին:

- Խոսի՛ր, ես ժամանակ չունե՛մ,- զայրացավ թագավորը:
- Դմանիսի մոտ վրա կտանք, մի՛ անհանգստանա: Մեր գործերը ավելի ստվար են, քան չաղաթայներինը: Այսպիսի ջարդ տանք, որ մոռանան ետուարձի ճամփան: Ես եկել եմ մայր թագուհուն փրկելու ու պաշտպանելու:

- Դժվա՛ր է,- մռայլվեց թագավորը,- անապատի գայլը ձգել է գործերը ձորում:

- Ոչինչ, տե՛ր արքա, մենք ծուղակներ ենք սարքել, միայն թե ջոկատներ չուղարկի ձորի վեր-ներով,- ասաց Դավիթը:

Թագավորը թափ տվեց գլուխը:

- Այլ-ս ինչ խուսափել կռվից...

Զորքերը շարժվեցին, գումակից ճիշեր լսվեցին, շառաչեցին մտակները:

Գերիները մի պահ լոեցին, ապա նորից վայնասուն բարձրացավ:

- Շարժվեցինք,- քմծիծաղ տվեց Բագարատ թագավորը:

Վրաց զինվորները լարված նայում էին ձորին: Նրանք գիտեին դարանների տեղերը:

Թագավորը մոտ կանչեց որդուն:

- Դավիթ, որդի՛, հարկ է այնպես զարկել, որպեսզի չաղաթայները փակվեն ձորում, չկարողանան լուր տանել Լանկ Թամուրին: Զորի մուտքն ու ելքը պետք է ամուր փակել, վեր-ներում հեծյալ ջոկատներ կարգել...

- Ներո՛ղ եղիր, տե՛ր արքա, այդ ամենը կանխավ մտածված է: Մեզ հետ են իմերելները, ափիսազները, մեսխացիները, Դրալի քաշերը, օսթաները, մեկուները...

Թագավորը հուզված կանգ առավ:

- Տե՛ր Աստված, մի՞թե նրանք ամենքն ել եկել են փրկելու իրենց թագավորին: Մենք շնորհակալ ենք,- շտկեց ուսերը,- եթե զարկվեմ մարտում, փույթ չե, Վրաստանը ելել է սուրբ պատերազմի:

Այդ պահին չաղաթայների առաջապահ ջոկատները մտան ձոր, առաջացան քառորդ փարսախ, այստեղ դեռ կարելի էր նժույգավարել ձորի ափերով: Զորի մեջ, խոխոջալով, ուրախ աղմուկով գետակ էր հոսում, որին այսօր վիճակված էր ջուր տալու հազարավոր մարդկանց, հարյուր-հարյուրները իրենց վերքերն էին լվանալու ջրերի մեջ:

- Տե՛ր արքա, ձախից, ժայռերի մոտ մեկուներն են, Ավթանդիլ ազնաուրի գլխավորությամբ: Ազնաուրը երդվել է փրկել քեզ կամ զարկվել մարտի դաշտում, աջից Սօթխիի նետաձիգներն են, դու լավ գիտես, թե նրանք ինչ նետաձիգներ են,- Դավիթը ծիծաղեց: Թագավորը նայեց զարմացած,- Հա՛յր, մենք անցանք օսեթների դարանի մոտով, նրանք կիակեն նահանջի ճամփան, իսկ առջ-ում, Դմանիսի մոտ վրա կտան մևացածները: Երդվել ենք, ոչ մի չաղաթայ դուրս չափուի գա ձորից, կառնենք Տփիսիսի վրեժը կամ թող Տեր Աստված զրկի մեզ հաղորդումից, ամեն:

- Ամեն,- կրկնեց թագավորը, նայեց ժայռերին, որոնց մոտով ոլորապտույտ ճանապարհով անցնում էին: Վեր-ներում սկսվում էր անտառը, թիկնապահները լարվեցին, ասել է, թե այստեղ էլ դարան կա: Դարաններից երկուսի կողքով անցել էին, չեին նկատել:

- Լավ է, ձեզ մատադ: Վրա տվեք, շարդեք հանուն Յոր, Որդվո ու Յոգվուն Սիրո,- թագավորը բարձրացրեց ձեռքը խաչակնքելու համար: Զորը դղրդաց աղաղակներից, նետերի պարսեր թռան: Էսվեցին առաջին ճիշերը, վիրավորների հայիոյանքները:

- Ծուղա՛կ է, ե՛տ, ե՛տ տվեք,- գոռաց Աղջարը, մերկացրեց սուրը,- դու պատասխան կտաս, Վրաստանի թլիքատված թագավոր,- ուզեց ետ

դարձնել նժույգը, նետ ցցվեց աչքի մեջ, ընկավ նժույգից առանց ծայտուն հանելու:

Թումանապետի զոհվելը կատաղեցրեց չաղաթայներին, տափաստանի գայլերը պատրաստվեցին կռվելու: Նրանք սովոր էին կռվի անակնկալներին: Նրանց զարմացնել անհնար էր:

Առաջ նետվեց մարդ, ճոճելով սամարդանդյան երկար սուրը, գոռաց.

- Ալլահի որդի՛ք, զարկե՛ք պիղծ գյառուրներին: Մեզ հետ է Զինգիզ Խանի անմահ հոգին, մեզ հետ է Սալդեյը /Զինգիզ Խանի Աստվածը/: Յանուն աշխարհի տիրակալ Լանկ Թամուրի, շարդե՛ք գյառուրներին:

Այդ պահին, ասես ծորի ափը եռաց, հայտնվեցին հեծյալներ, հեղեղի պես նետվեցին լանջն ի վար: Մեկրելներն էին, սրանց թափին այսքան զորեղ էր, որ ճանապարհից ցած թափեցին չաղաթայներին, քանզի սրանք անշարժ կանգնել էին, իսկ հարձակվողների ծիերը թափ էին առել թեք լանջով արշավելիս: Չաղաթայները չոհմացան ցած սուրացող հեծյալների ճնշմանը, գլորվեցին ցած, դեպի գետակ: Իսկ աշ ափից դիպուկ նետահարում էին սօխմեցիները:

Սորում գոմոր էր: Ամեն ինչ խառնվել էր, սակայն վրացիների համար ամեն ինչ գնում էր կանխավ մտածված կարգով: Կոտորած էր, ստույգ է, չաղաթայները կռվում էին կատաղությամբ, սակայն ինչ կարող էին անել, թվական գերակշռությունը, նա- տեղանքը՝ վրացիների օգտին էր:

Դավթի թիկնապահները թագուհուն նժույգ նստեցնելով, փախցրեցին անտառի կողմը: Թագավորը, տեսնելով, որ խումբը անտառ մտավ, ազատ շունչ քաշեց, ժպտաց:

- Մեր ժամն էլ եկավ, ճե՛զ հետ է ճեր թագավորը,- գոռաց ահեղաձայն ծանր սուրը ճոճելով, գնաց զարկվեց չաղաթայներին, սկսեց անխնա զարկել:

- Դավի՛թ, որդի՛, մարդ ուղարկիր, թող փակեն Դմանիսի դուները...

- Յայր, ամեն բան կանխավ վճռված է, չաղաթայներն ամեն կողմից շոշապատված են: Դմանիսի մոտ Նրանց քարշարդ են անում մսխեթցիները: Բա՛վ է, տե՛ր արքա, դուրս արի մարտից: Վայել չէ քեզ հասարակ զինվորի պես կռվել,- թագավորը զարմացած, նա- զայրացած նայեց որդուն, սակայն հասկացավ, որ որդին իրավացի էր, փոխանակ մարտ վարելու, կռվում էր անձամբ:

Որքան էլ զբաղված լիներ մենամարտելով, չէր կարող չնկատել, որ ճակատամարտը վարում էր երեց որդին՝ Գեորգին, որից սուրհանդակներ էին գալիս, բերելով նրա հրամանները, իսկ այստեղ մարտը վարում էր Դավիթը:

«Գեորգին հասունացել է գլխին թագ դնելու համար: Տես, թե ինչ-պիսի հմտությամբ է ծուղակել չաղաթայներին: Կեցցե՛ս, Վրաստանի ապագա արքա: Լա՛վ է, եղբայրներն ել հետն են, միակամ են, միասին...»:

- Յայր,- մոտեցավ Դավիթը,- պատիվ արա, գևա Գեղրգիին օգևելու: Օգևիր ճակատամարտը ավարտելու, իսկ մենք այստեղ ոչ մի կենդանի չաղաթայ չենք թողնի: Երդվում եմ Վրաստանի թագավորի պատվով,- ժպտաց որդին:

Յայրը սիրով նայեց որդուն:

- Ապրե՞ս,- ասաց ու աշտանակելով Նժույգը՝ սլացավ առաջ, չեր կարող խոսել, ինչ-որ բան սեղմում էր կոկորդը, աչքերը կակծում էին: Թե-Նժույգը սլանում էր դեպի Դմանիսի, սակայն միտքն այլ հունով էր գևում.

«Ծերանում եմ, ծերանում...»:- Սակայն ժամ չեր անպատեհ բաների մասին խորհելու, առջ-ում կրիվ էր գևում:

Թիկնապահներով շրջապատված՝ հասավ Դմանիսի, չգևաց բերդաքաղաք, Նժույգը քշեց ձոր:

- Կեցցե՛ Բագարատ թագավորը,- ձորը դղոդաց կեցցեներից: Թագավորը սփրթեց, զգաց, որ անհնազանդ արցունքները հոսում են այտերն ի վար, կորչում գերության մեջ արծաթաթելած մորուքի մեջ: Տեսավ իրեն՝ շրջապատված հարազատ դեմքերով, դեպի իրեն էին գալիս ազնաուրները, զորապետերը: Չսպասեց, որ մոտենային, ցած թռավ Նժույգից, գևաց նրանց ընդառաջ:

Գրկախառնվեց, չգիտես ով էր ազնաուրներից՝ աչքերն էր սրբում, զգաց, որ համբուրում են, բարձրացրեցին ձեռքերի վրա:

- Ծնորհապարտ եմ, Եղբայրներ, որ հասաք ձեր թագավորին: Ներե՛ք ինձ կամա-ակամա տվածս նեղությունների համար: Ներեք ձեր թագավորին...

- Յրամայիր, տե՛ր արքա,- լսվեց մեկրելների հրամանատարի ձայնը,- ժա՞մ է, տեր արքա, տար մեզ ի մարտ:

- Իրավացի ես, Յերակլ ազնաուր,- ասաց թագավորը, մոռանալով իրենց մեջ եղած հակամարտությունը,- տեղերում, ազնաուրներ, զարկենք չաղաթայներին: Դմանիսի ձորը գերեզման դարձնենք թշնամիների համար:

Թագավորի հայտնվելը մարտադաշտում ոգ-որեց զինվորներին:

Թագավոր՝, ի՞նչ է թագավորը՝ բարձրագույն տիտղոս, Երկրի տեր, հպատակների հայր, բարձրագույն դատավոր, այս ամենը խաղաղ օրերի խոսք ու զրուց է, իսկ այս պահին թագավորը հաղթանակի կռվան է, դրոշ ու զրահ, ուժ տվող գաղափար, որ նա- մարտադաշտում կռվելու հրավունք է, հաղթանակի պարտադրանք...

Յզոր էր վրացիների զարկը, չաղաթայները բաժան-բաժան եղան, սկսեցին կռվել առանձին-առանձին: Միևն- ուշ Երեկո շարունակվեց կրիվը: Չաղաթայները, հույս չունենալով փրկվել գերությամբ, կռվեցին միևն- վերջ, միևն- վերջին հնարը: Զորում ոչ մի կենդանի չաղաթայ չմնաց, սպանվեցին, քարչարդ եղան: Չոհեր տվեցին նա- վրացիները, սակայն չաղաթայների համեմատությամբ անսշան էին զոհերը: Ճակա

տամարտին մասնակցեցին և շրջակա շեների բնակիչները, սրանք հմանալով, որ թագավորը փոկվել է, եկել էին շեն առ շեն:

Չաղաթայներից ոչ մեկը գերի չհանձնվեց, ամենքն էր սպանվեցին: Այսպես Վրաստանի Բագարատ թագավորը վրեժ առավ Լանկ Թամուրից:

- Կեցցե՞ն քաջերը, որ կարող են պաշտպանել իրենց պատիվը, կեցցե՞ն այսօ՞ր, վաղը՝, հավիտյանս հավիտենից...

* * *

Թուրք ծառան մոտեցրեց նրա նժույգը: Վահեն մանրադրամ նետեց նրան: Սրա ընկերները նետվեցին առաջ, բռնեցին նժույգի ասպանդակը, օզնեցին Վահեին: Վահեն մի քանի մանրադրամ էլ նրանց նետեց: Ծիծաղեց ինքն իր մեջ: Նա գիտեր իսլամի հաստատած կարգը, զիմմին իրավունք չուներ ծի նստելու, ծառաներն էլ գիտեին այդ մասին, սակայն մանրադրամի ազդեցությունը շատ մեծ էր...

Խոհերի մեջ թաղված, հասավ թիլ: Միերի երեց որդին բռնեց նժույգի սանձը:

- Միերը տա՞ն է:
- Հա,- գլխով արեց,- օրիորդն էլ է եկել, հոգ-որներն ել: Յորեղբայրներս հավաքվել են,- ոչ առանց հպարտության ասաց նա:

Վահեն սկզբում չկարողացավ զանազանել դեմքերը, մինչ- աչքերը վարժվեցին, կիսախավարին, թռնիրը թեժացրել էին, ծուխ էր օթ-անում, ապա տեսավ Թովմային, Յայկարամին, Փայլակին, Անահիտին ու Սոսին:

Միերը գրկեց նրան:
- Տղա՞ է, թե՞ աղջիկ,- հարցրեց Փայլակը, որ վերջերս շատ անհանգիստ էր դարձել, կռվից զատ ոչնչի մասին չեր ուզում լսել:

- Պայման դրեցինք, նրանք կլինեն մեզ հետ...
- Թե՞ հակառակը,- հարցրեց Թովման,- արդ, կար-որ է զարկել չաղաթայներին, իրենց իսկ հավատակիցների ձեռքով, դա մնացածներին ցույց կտա, որ Լանկ Թամուրը ևա- մահմեղականների թշնամին է: Այս պահիս Աստծո աշն է իշել մեզ վրա, մենք ենք ժողովրդի հույսը: Ամենքն էլ խոսում են Ուխտի մասին, ցանկանում են օգնել,- երդիկից մի փոքր լույսի շող էր ճառագել, ընկել էր արեղայի գլխին, ոսկեգույս մազերը փայլում էին լուսապսակի պես: Անահիտը ոյութված նայում էր սիրեցյալին,- թող ինձ՝ հոգ-որիս, ներելի լինի ասել, որ արդ, ինչպես երբեք, խելքով պիտի կռվենք, ներող եղեք, ես հասկանում եմ, թե ինչ եմ խոսում, միջոցների մեջ խտիր չպիտի դնենք: Ցավ է ինձ, սակայն մատյանիս մեջ չպիտի գրեմ այս պարագան, այս դաշինքի հեղինակների մասին՝ ոչինչ,- հոգոց հանեց,- կգա ժամը, - ժողովուրդը կիմանա... Թովման նայեց ընկերներին, թուրքերի հետ դաշինք կնքելը ոչ մեկի վրա չեր ազդել, սթափ մարդիկ էին:

- Թովմա եղբայր, ես ոչ մի վատ բան չեմ տեսնում, որ թուրքերի հետ

պիտի զարկենք չաղաթայներին, միայն թե զարկենք,- ասաց Մհերը:

Վահեն նայեց անկյունում նստած Սոսին ու Կայծենին, սրանք մի տեսակ հեռու էին քաշվել, միայն լսողի դերում էին:

- Ի՞նչ կասես, Սոս Եղբայր,- նայեց Սոսին:

Սա հայացքով ասես շոշափեց ներկաներին, հայացքը կանգ առավ Անահիտի վրա:

«Օրիորդին ել հետներն են ման տալիս: Զգիտես՝ լա՞վ է, թե՞ վատ, թեր-ս ոգ-որելու համար այրմարդկանց: Կուրմ են՝ կռվող աղջիկ է: Ե՛, ինչ օրի հասանք, սակայն լավ են կպել գործին, Աստված բարին կամենա: Մաքուր մարդիկ են, լավ է...»:

Տեսավ, որ Վահեն պատասխանի է սպասում: Սոսը հավաքվածների մեջ առանձնացնում էր Վահեին: Տեսնում էր, որ կռվի փորձ ունի, ամենքն էլ լսում են նրան:

- Ես սատանայի հետ դաշինք էլ կկնքեմ, միայն թե զարկեմ թուրքմաններին, հետո հարկ եղավ՝ Ղարա Մահմեդին: Ես նրան չեմ հավատում: Նա մեզ հանգիստ չի թողնի: Արդ, տեղը նեղ է, մեզ է դիմել: Կռիվը կգա, կկռվենք: Չերկարացնեմ, երկու հարյուր սուր ու դաշույն եմ տալիս, նա- նիզակներ մի հիսուն հատ, թող զինեն մարդկանց,- ասաց Տարոնի ավագակապետը,- իմ տղաները կլինեն մարտում, ձեր կողքին ու ձեր հետ:

- Ապրե՞ս, Սոս Եղբայր, Աստված հատուցե,- ասաց Թովման,- վաճառական Հարությունը մի մեծ քսակ է տվել, զենք կարնենք Մուշում:

- Նա-՝ թուրքերից: Ես մի թուրք ցեղապետ գիտեմ, որ մեծ քանակությամբ սրեր ունի: Լիահույս եմ, կվաճառի,- ասաց Անահիտը,- ես կհամոզեմ նրան: Սոսը զարմացած նայեց Անահիտին:

«Այ քեզ, օրին՛ող, զուր չեն ասում զմբռստ հոգի: Տե՛ս է, զենք է ուզում գնել թուրքերից,- տրտմտեց,- եթե դուստրս ողջ լիներ, սրա տարիքին կլիներ: Տե՛ր Աստված, Ե՞րբ օգնության կհասնես մարդկանց: Իմը պրծավ, մնացածներին հասնես...»:

Իրեն մոտ ու հարազատ զգաց այս մարդկանց: Վաղուց այդաես պարզ չէր զգացել գալիքը: Պատերազմը գիտեր բոլոր մանրամասներով, գլուխը թափ տվեց, գիտեր, որ այս ազնիվ մարդկանցից շատերը զարկվելու էին: Խորհեց, որ զուր էր այլ բան վիստրում, սա էր նա- իր վրեժը, որին նվիրվել էր: Իրեն ինչ, նա հաշտվել է մահվան հետ, գիտե, որ մի օր զարկվելու է դավաճանաբար, գիտե, որ իր նման մարդկանց զարկում են դարանից, ստորաբար: «Իսկ սրանք, Տե՛ր Աստված, արդար ու անվտանգ արա սրանց գործը, ազնիվ մարդիկ են»:

- Զենքի գործով կզբաղվեն Մհերը, Սոսն ու Կայծենը: Նրանք տեղացի են, մարդկանց ճանաչում են, իսկ մենք՝ մնացածներս, կոչ կանենք, նա- զենք կհայթայթենք: Եթե այլ բան չունենք իրար ասելու, եկեք մեր այս զորական խորհուրդը ավարտենք,- ծիծաղեց Վահեն,- մեր մեջ վատեր ու հոգով տկարներ չկան:

- Գործերս՝ արդար, Աստված ապավեն,- խաչակըքեց Թովման:

* * *

Լանկ Թամուրը երբեք չէր կորցնում հոգու արիությունը: Ի՞նչ է անհաջողությունը. ժամանակավոր տիաճություն, ինչպես կյանքում ամեն բան, քանզի կյանքը ուսայնություն է, իսկ եթե խորհես, որ կարող ես հետո բռնել ճակատագիր կոչված պոռնիկի օձիքից, այլ-ս ի՞նչ տրտմտել...

Սակայն արի տես, որ մեծամեծները այլ կերպ են խորհում, վիրավորվել են, լակոտները ուզում են վրեժ լուծել: Մի կողմից դա նվիրվածություն է, մյուս կողմից, երբ չափն անցնում են, դառնում է ստրկամտություն:

Աղո, ինձ ծեռնտու է, որ նրանք իմ փոխարեն վիրավորվեն, այդ պարագան դաժանություն կծնի: Ես ել պիտի վիրավորվեմ, սակայն ի՞նչ է արել Բագարատ թագավորը, խաբել է ինձ, իսկ մի՞թե ես չեմ խաբում, խաբել եմ ու խաբում եմ անգամ Դուրանի վրա երդվելով: Յաղթողն արդար է, Ալլահը վկա: Իսկ որ Բագարատը պիտի պատժվի, դա ել է հասկանալի, ընդունելի: Լավ պահ ընտրեց, ինելացի է վրաց թագավորը, - այդ ամենն արեց Յելիխանի միջոցով, հիմար կին, մի զարդով գնեցին... Սակայն նա մեղք չունի, Բագարատը ինձ խաբեց: Ես հավատացի նրան, քանզի իսլամ ընդունեց, թլիհատվեց: Վրացիների համար նա հերոս է, բատիր, սեփական նվաստացման գնով փրկեց երկիրը: Նա բատիր է, արժանի հարգանքի ու մեծարման: Կարելի է գոչել՝ Կեցցե՛ս Վրաստանի Բագարատ թագավոր,- ցևցեց իր իսկ ձայնից, հասկացվ, որ բարձրածայն էր խորհել: Տեսավ զարմացած հայացքները, քմծիծաղ տվեց:

- Այո՛, կեցցե՛ Բագարատ թագավորը, որ խաբեց մեզ ամենքիս, նա-Աստծուն, որին խաբել չի լինում: Ասել է թե մենք ինչ-որ տեղ սխալ ենք թույլ տվել: Մենք հիացած ենք նրա խելքով: Նրա գլուխն արժե թագի, նա- տապարի...., լոեց, նայեց հավաքվածներին: Գիտեր, որ մեղավոր է, չի հավատացել Բագարատին, սակայն... Այո՛, նա խաբեց ամենքիս, իսկ տափաստանի գայլը ոչ մի վիրավորանք առանց հատուցման չի թողնում: Մենք ել արժանին կմատուցենք վրաց թագավորին:

- Տե՛ր իմ, հիմնահատակ ավերենք Վրաստանը:

- Այո՛,- փևթինթաց տիրակալը,- վատ չի ասված՝ հիմնահատակ, իսկ նա տասներկու հազար զինվոր կոտորեց: Դա սարսափելի է, որ քան ծանր է հարվածը, այնքան էլ ծանր պիտի լինի հակահարվածը: Դու իրավացի ես, Շահ Մելիք, մենք սպասենք մի փոքր,- նայեց Սահրին,- ի՞նչ լուր ունես Միրանշանից, Շիրվանից:

- Տե՛ր իմ, սուրհանդակները դեռ չեն վերադարձել,- լոեց, ասես մեղավոր էր:

- Նորերն ուղարկիր, ավելի արագավազ նժույգներով: Թող ըստրեն ամենաարագավազը՝ կարաբայիները:

Չահ Մելիքը ձեռքը դրեց Ուլուկբեկի ուսին, սա, որ ցանկանում էր խոսել, լռեց: Թե- տիրակալը հանգիստ էր, սակայն Չահ Մելիքը հասկանում էր, որ նրա հոգում փոթորիկ էր: Նա կարող էր զայրանալ հասարակ բաներից, իսկ արդ, ոչչացրել էն նրա թումաններից մեկը, և այսում էր այդ մասին - այդ լռությունը սարսափելի էր շատերի համար: Փոթորիկ էր սպասվում: Այդ էր պատճառը, որ Չահ Մելիքը չթողեց Ուլուկբեկին հարց տալ: Նա գիտեր, որ տիրակալի թոռը կարող էր գրգռել նրան, իսկ պատիժը հասնելու էր որ-է մեկին, որ կապ չուներ նրա զայրույթի պատճառի հետ:

Այնպիսի լռություն էր, որ ճանճ տզզար՝ կլսվեր տիրակալի յուրտում, ճանճ չկար, եթե ձայներ էին լսվում, ապա միայն դրսից:

- Ի՞նչ լուր Լողլողանից, ինչպես են Հայաստանում նրա գործերը,-թե- և գիտեր, որ Լողլողանից սուրհանդակ չկար դեռ:

- Սահարը լուրեր ունի Հայաստանից,- ասաց Չահ Մելիքը, նայեց Սուլեյման Չահին, Շեյխ Նուրադինին, Թուսայուն, որոնց հետ պայմանավորվել էր այդ լուրը հայտնելու համար, սրանք գլխով արեցին:

- Խոսի՞ր, մի երկարացրու,- զայրացավ տիրակալը, թեր-ս ոտքի վերքը ցավեց, դեմքը ծամածովեց:

- Տիրակալ, Հայաստանում դիմադրական ուժեր են գումարվում, գործեր են կուտակվում: Կազմել են Գաղտնի Ուխտ...

Տիրակալը նայեց հետաքրքրված:

- Ովքե՞ր են գիխավորները:

- Հայերը գաղտնի են պահում Ուխտի անդամներին, գիխավորին պարզել անհնար է: Ամեն տեղ խոսում են Ուխտի մասին, սակայն ոչ ոք չգիտե նրանց անունները...

- Եթե գաղտնիքը հայտնի է երկու մարդու, այն արդեն գաղտնիք չէ: Վատ եք փևտրում, ի՞նչ է՝ հայերի մեջ դավաճաններ չկա՞ն: Մի ծիծառեցրեք մեզ, ասածներից անգամ ուղտը կիրիար... Լավ չեք փևտրում, ուսի եք խնայում... Ի՞նչ եք խորհում այս մասին, խոսեք, Մահմուդ, Չահա՞պ, Թաճիրե՞թ, Ահմե՞դ,- չգիտես ինչու տիրակալը սկսեց թվել ներկաներին, ասես ցանկանում էր առանձնացնել նրանց պատասխանատվությունը: Հավաքվածներն, իրար նայեցին, ապա ատենապետ Չամսետինին: Սա քայլ արեց առաջ:

- Հայերը թագավորություն չունեն, չեն կարող լուրջ դիմադրություն կազմակերպել, երկիրն անգլուի է...

- Դրանում իրավացի ես, Չամսետին:

Հանկարծ Թամուրը զգաց Զահիրի պակասը, ստուգ է, Սահարը վատ չէ որպես գաղտնապահ, սակայն Զահիրը կարողանում էր ավելին ասել, քան մնացածները, և այլ կերպ էր խորհում, կարողանում էր վճիռներ հուշել: Սարսափելի է, երբ դավաճանում են խելացիներն ու

Նվիրվածները: Ինչպե՞ս եղավ, որ Զահիրը դավաճանեց, իսկ եթե իրավացի է թոռը՝ Ուլուկբեկը, իբր- Զահիրը քրիստոնյա է եղել: Պարզվում է՝ թոռը ավելի գիտե, քան մնացածները: Նա ել գիտե Զահիրի հորը՝ քրիստոնյա եր: Խոհերում պատկերացրեց ահարկու ձորը, ուր թուման-ներից լավագույնը կոտորվեց: Որպես զորական կորուստ, նրան դա չեր անհանգստացնում, ևա չեր խղճում զինվորներին: Զինվորները նրա համար են, որ կրվեն ու զոհվեն, այստեղ այլ բան կար... ի՞նչ կխորհեր Բայազետը: Կասի Լանկ Թամուրը պարտվել է վրաց թագավորից: Թեր-ս դա արագացնի իրենց ընդհարումը,- հոգնեց ծանր խոհերից,- իսկ եթե սրանց մեջ էլ իմ նկատմամբ հավատը ճաք տա, չե՛, հարկ է շարդել Բագարատին: Վե՛րջ, այլ-ս ինչ բարդացնել վիճակը, առաջին անգամ չե՛, որ ըմբոստացել են հպատակները, պատժել է պետք, որ դաս դառնա, այնպես, ինչպես պատժեցի Սարտիրոս տանուտիրոջը,- մի փոքր հանգստացավ: Նշան արեց՝ հեռանան:

Ուշ գիշեր եր, գնաց Մելիքեի մոտ: Մեծ թագուհին արթուն եր, սպասում եր նրան:

«Սա արթուն է, իսկ մնացածները քնել են, երազում ի՞նձ են տեսնում, թեր-ս այլ այրմարդու՝ երիտասարդի, թո՛ւ, այրմարդուց զատ ո-չինչ չեն ուզո՞ւմ, թո՛ւ»...

Մելիքեն կումիս լցրեց: Թամուրը կիսապառկեց բարձերին:

- Չեմ ուզում, գինի՝ բեր, թունդ գինի: Յարկավ, գիտես, որ վրաց թագավորը ջարդել է Աղջարի թումանը: Բագարատը ավելի խելացի գտնվեց, քան կարծում էի... Գիտե՞ս, ուշքս ու միտքս Բայազետն է, աչքաթող արեցի Բագարատին, ևա ել... Տեղն է ինձ, հարկ է մշտագույշ լինել: Խարեց ինձ, ի՞նչ կասես, Մեծ թագուհի:

Մելիքեն գիտեր, որ այս պահին պետք է լրեր, ախ ու վախ չեր կարելի անել, ավելի կզայրացներ ամուսնուն: Նա գիտեր, որ ամուսինը պիտի խոսեր պատճառների մասին, ասեր, որ մեղմել է, դարձել է բարի, մարդկային, դրանից հետո արյուն կհեղեր: Լռել եր բազմափորձ կինը, սպասում եր: Տիրակալը երկար-բարակ խոսեց իր նպատակների մասին, լրեց: Մելիքեն հասկացավ, եկել եր իր խոսելու հերթը:

- Ե՛, Աղջարը վատ թումանապետ եր: Տիրակալ, դու ես մեղավոր, շատ ես մեղմել, ամենքին լավություն ես անում: Մի՛ մոռացիր, որ մոտենում է Բայազետի հետ բախվելու պահը, հպատակներդ պիտի սոսկան անունդ լսելիս...

Թամուրը բարձրացավ տեղից, նստեց աթոռակի վրա, ձեռքերը դրեց ծնկներին, այնքան նմանվեց անուժ ծերունու, որ կինը հազիվ զապեց ծիծաղը: Նա գիտեր, որ ամուսինը խաղ է անում, արդ, կսկսի ախ ու վախ անել, ապա կժպտա խորամանկ, կասի, որ վճռել է անելիքը: Յանկարծ խորհեց, որ եկել է Յելիանին կործանելու պահը:

- Դու մոռանում ես, որ պարտության համար մեղավոր է Յելիանը... Նա ոսկեպաշտ է, թումանի կործանման պատճառ դարձավ, այլ մեղա-

Վոր մի՛ փևտրի՛:

Սա արդեն շատ համարձակ քայլ էր, կարող էր կորցնել ամուսնու բարեհաճ վերաբերմունքը, ստույգ, դա կլիներ ժամանակավոր, սակայն դրանից կօգտվեին մնացած կանայք, երիտասարդ կանայք:

- Բավ է, «Մեծ» թագուհի,- մեծ բառը շեշտելով, ասաց Թամուրը, - դառն է գինիդ, ել չեմ խմի,- ասաց ու զավաթը նետեց յուրտի պատին: Գինին կարմիր ներկեց պաստառը, բազմաթիվ շիթերով ցած հոսեց, երկար կարմիր գծեր քաշելով: Աշտանակների լույսերի տակ կարմիրը արևագունեց: Թամուրը տևքալով ելավ տեղից, կողոված աչքերով նայեց կոնջը: Սա խոնարհվեց:

Այդպես, առանց խոսելու Թամուրը դուրս գնաց յուրտից: ՄԵԼԻՔԸ գոհ էր, թույնը ներարկված էր: ՅԵԼԻԽԱՆԻ գլուխը մի պղնձադրամ էլ չարծեր:

* * *

Աղավնին իշավ գորականի աջ բազկին, դուսդուսաց, գլուխը նազելիորեն թեքեց, նայեց զորականին: Սա ժպտաց, բացեց ձախ ափը: Աղավնին սովոր շարժումով սկսեց կտցել փշրանքները: Չորականը շոյեց աղավնու գլուխը, սա թափ տվեց գլուխը, ասես պահանջում էր չխանգարել: Կերավ հացի փշրանքները, ապա տոտիկ-տոտիկ շարժվեց դեպի դաստակ: Տեղավորվեց հանգիստ, սկսեց մաքրել փետուրները: Չորականը անշարժացել էր, որպեսզի չխանգարի աղավնու առավոտյան հարդարանքին:

Ոտևաձայներ լսեց, ուսի վրայով ետ նայեց: Մի հսկա զորական մոտեցավ, բարի լույս ցանկացավ: Չորականը ժպտաց, ցույց տվեց աղավնուն:

- Բարսե՛ղ սեպուհ, չեմ հասկանում, ինչո՞ւ չի մոտենում արուն, ախր քաղցած է, հասու չեմ, թեր-ս հպարտ է:

Սեպուհը տրամադրված չէր խոսելու աղավնիների մասին, նրա ուշըն ու միտքը զբաղված էր սուրհանդակի ուշացումով: Նայեց զորավարին՝ ԶԵԼԱՀԻՐՅԱՆՆԵՐԻ գահաժառանգ Թահիրին: Սրա աչքերի գիշատչային արտահայտությունը մեղմել էր, միշտ այդպես էր լինում, երբ խաղում էր աղավնիների հետ:

- Ես աղավնի չեմ սիրում,- զայրացած խոսեց սեպուհը, - գեղեցիկ թռչուն է, միակը թռչունների մեջ, որի եգը կտցահարելով՝ սպանում է արուին... Չեմ սիրում, ինչո՞ւ են սրբացրել այս թռչունին, մեր կրոնի մեջ էր, Աստված աղավնու միջոցով, որ Սուլբ Յոգին է, արարեց իր որդուն...

- Ես էլ եմ նկատել, սակայն ինչ կարող ես ասել մարդուն, այս թռչունը որպես գեղեցկության ու բարության թռչուն է համարում: Ավելացնեմ քո ասածին, դու էիր պատմում ձեր նոյ նահապետի մասին, որ աղավնու միջոցով ստուգել էր ջրհեղեղի ավարտը,- հանկարծ հոհուաց,- ներող եղիր,

տեր սեպուհ, այս, որ ձեր Աստված աղավնու միջոցով արարեց որդուն,- նորից հոհուաց,- ախր աղավնածինը, ի՞նչ օգուտ: Սակայն սեպուհ, դու մի նեղացիր...

- Թողլսե՞նք դա, զորավա՛ր,- ասաց սեպուհը,- սուրիանդակը ուշացավ... Արդեն մի տարի է Բարսեղ սեպուհը, թահիր գահաժառանգի հետ պաշտպանվում են Երջնկայում: Ինչ գործ է գտել իր համար Գևթունյաց սեպուհը, պահպանում է Զելահիրյանների գանձերը, հայերից իւլված գանձերը: Ճակատագրի դառը խաղ է, ի՞նչ կարող ես անել՝ ասպետ է Բարսեղ սեպուհը, արիական է իրեն համարում սեպուհը, խոսք է տվել ու հավատարիմ իր խոսքին, մնացել է իր զինվորների հետ բերդում: Կռվում են չաղաթայների դեմ, դա է միակ միջթարանքը, դրանից զատ, թահիրն էլ նման չէ մնացածներին, թեպետ թուրք է, ի՞նչ կարող ես անել, թուրքը թուրք է մնում...

Բարսեղ սեպուհը ասպետություն չի խաղում, նա, իրոք, հոգով ասպետ է, խոսք է տվել... Այս, հայե՛ր, հայե՛ր, Ե՞րբ պիտի հասկանաք, որ այս դարում, արյան ու ավերի դարում չպիտի մոռանաք նախնյաց պանդը՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման... Ասպե՛տ, ազնվություն, ախր բացե՛ք աչքերդ, նայե՛ք չորս կողմ, ախր ծիծաղում են ձեզ վրա, մինչ- Ե՞րբ հար-աններին ծիծաղեցնեք, ուշքի՛ եկեք, հայեր, ախր արիական ցեղ եք, ուշքի եկեք...

Երկուստեք հոգևել են անօրինակ պաշարումից՝ մեկ տարի, խելագարվել կարելի է, - զարմանք բան ո՞չ խելագարվում են, ո՞չ բացում բերդի դռները...

Պարսպից ցած են նայում, մի տարի կրկնվող սովորական պատկեր է, չաղաթայները նամազից հետո ալարկոտ մոտենում են բերդին, ո՞չ գրոհում են, ո՞չ ետ քաշվում: Նրանք ել են զգել: Յայերը բերդը չեն հանձնի, ինչո՞ւ հանձնեն, հաց ունեն, ջուր ունեն... Սակայն մի տարի Եղավ, մարդ կարող է խելագարվել, սակայն ոչ հսկա սեպուհն է խելագարվում, ոչ զորավար թահիրը: Նրանք իրար հույս տալով մի տարի է դիմադրում են:

Լանկ Թամուրը իրամայել է բերդը գրավել պաշարյալներին սովի մատնելով, սակայն պաշարյալների մեջ ոչ սովահարություն կա, ոչ հուսահատություն:

Չաղաթայները մեկ-մեկ գրոհում են, սակայն այնքան անկամ ու ալարկոտ, որ զգացվում է՝ սա միայն վարժանք է, որ չմոռանան զինվոր լինելը ու չճարպակալեն:

Բարսեղն ու թահիրը տեղյակ են Յայաստանի դեպքերին: Նրանց էլ է հասել Մարտիրոս տանուտիրոջ անօրինակ կռվի լուրը, գիտեն, որ Լանկ Թամուրը ձմեռել է Արցախում: Այսօր սպասում են սուրիանդակի: Սուրիանդակը՝ Վարդ անունով զինվորը, երկար տարիներ գերի է եղել Սամարդանդում, գիտե չաղաթայների լեզուն, սովորույթները, այնքան խորամանկ մարդ է, որ նրա համար չեն անհանգստանում, գիտեն, որ

դժոխքից էլ լինի, դուրս կարծնի: Մի շաբաթ ուշացել է Վարդը: Ամեն անգամ նա հայտնվում է բակում, թափ է տալիս վրայից հողն ու փոշին, քանզի վերջին կես ասպարեզը սողալով է գալիս գաղտնուղով: Վարդը միշահասակ, նիհար մարդ է, թեր-ս չաղաթայների խալաթն է բարձրահասակ ցույց տալիս:

Այս պահին Վարդը գաղտնուղուց դուրս եկել, հագուստներն է թափ տալիս: Զինվորների հարցերին չի պատասխանում, ծուռ ժպտում է, գնում զորապետի մոտ: Սրանք ուրախացած, անհամբեր նայում են նրան, բար-ում:

- Տե՛ր իմ,- դիմում է սեպուհին, այսքան հանգիստ է, ասես ոչ թե վտանգներից է ազատվել, այլ վերադառնում է զբոսանքից,- լուրերս հուսադրող են,- ժպտում է, - ներող եղեք ուշանալու համար:

- Կա՛րծ կապիր, Վարդ, մի՛ չարաշահիր համբերությունս,- զայրացավ սեպուհը:

- Տե՛ր իմ, Բագարատ թագավորը Աղջարի թումանը ծուղակել էր Դմանիսի ծորում, մինչ- վերջին գինվորը կոտորել են, ոչ մի գերի չի վերցորել: Վրաց թագավորը վրեժ է առել իր նվաստացման համար: Վրացիները տասներկու հազար չաղաթայ են կոտորել Դմանիսի ծորում:

- Կեցցե՞ն մեր վրացի եղբայրները,- սեպուհը ձեռքը զարկեց սրի Երախակալին,- կեցցե՞ս, Բագարատ թագավոր:

- Այո՛, կեցցե՞ս Բագարատ թագավոր, որ կարողացավ խաբել աշխարհի տիրակալին, թլխատվեց, նվաստացման գնով վրեժ առավ Տիհիսի ավերման համար: Թահիրն այս լուրը այլ կերպ ընդունեց, քանզի մահմեդական էր: Յոգում տվայտանք ծնվեց, սակայն պաշարումից փրկվելու, գանձերը տուն հասցելու հնարավորությունը մոռացնել տվեց կրոնական նկատառումները: Լոեց, զարմացավ սուրհանդակի խոսքերից:

- Բագարատը մտել է Յայաստան, հալածում է չաղաթայներին: Երդվել է վրեժ առնել չաղաթայներից ամեն տեղ:

- Այո՛, թե զորքերը շուր տար մեր կողմը, կփրկվեինք,- ասաց սեպուհը,- կազատվեինք այս անհջալ պաշարումից:

Վարդը քթի տակ ինչ-որ բան մօմօացրեց, որից միայն այսքան հասկացան:

- Ամեն բան հնարավոր է, վրաց թագավորը այնպես է ոգ-որվել հաղթանակներով, որ կարող է իրոք զորքերը շուր տալ դեպի Երջնկա...

- Դու ստույգ բա՞ն գիտես,- անհամբեր հարցուց թահիրը,- խոսի՞ր:

Սուրհանդակը գլուխը թափ տվեց, քթի տակ ինդաց, սեպուհի թույլտվությամբ գնաց հանգստանալու:

Սեպուհն ու Թահիրը չեռացան աշտարակից:

- Կարծյոք, սուրհանդակը չասաց ամենը, ինչ-որ բան կար մտքում,- ասաց Թահիրը:

- Այո՛,- պատասխանեց սեպուհը,- նա խելացի մարդ է – հնարավոր

Ե համարում, որ թագավորը գործերը շուտ տա մեր կողմը: Սիրտս վկայում է, փրկվելու ենք:

Երկար չմնացին աշտարակի վրա, գնացին ճաշելու, դեռ չեն հասցրել սեղան նստել, երբ ներս ընկավ թիկնապահը:

- Տե՛ր իմ, լեռներից գործեր են իշխում, մեզ են գալիս, հայտնի չեն, թե ինչ գործեր են, դեռ շատ հեռու են:

Սեպուհին ու Թահիրը իրար նայեցին: Ասես նրանց սպասումը պիտի հաջողությամբ պսակվեր:

- Սիրտս վկայում է՝ Բագարատի գործերն են,- ասաց սեպուհը:

- Ի՞նչ են անում չաղաթայները,- հարցրեց Թահիրը, մի կողմ դրեց գիլու գավաթը:- Յանգիստ են, տեր իմ, թեր-ս չեն նկատել, ես աշտարակից տեսա, քիչ անց նրանք ել կտեսնեն:

Սեպուհը բարձրացավ տեղից:

- Վարդան ավագ, գենքի կոչիր գինվորներին, սակայն առանց շեփորահարման, հարկ չկա ժամանակից շուտ զգուշացնել չաղաթայներին, թե վրացիներն են, թող հանկարծակի զարկեն, իսկ եթե չաղաթայներն են, թող չուրախանան, մեկ է՝ մենք բերդը չենք հասնենի: Տեր Աստված դու մեզ ապավեն:

Թահիրը նայեց հարգանքով:

- Գիտես, սեպուհ Բարսեղ, ես ել եմ խորհում, որ Ալլահը մեզ միանման խոհեր է ուղարկում, ասել ե, թե կիրականանա մեր երազանքը: Իմ սիրտն ել է կրծքի տակ զարկում՝ փրկություն, փրկություն...

Դուրս եկան սրահից, բարձրացան աշտարակ:

Առջ-ում հորիզոնից պոկված գործեր եին գալիս, հեծյալների խմբեր եին:

Զգացվում էր, որ եկողները գիտեին ճանապարհը, գումակ չէր եր-ում: Դա ժիտում էր չաղաթայներ լինելու վտանգը, թեպետ նրանք կարող եին գումակը ետ թողած լինել:

- Յը՛, զորավա՛ր, կարծյոք չաղաթայները չեն,- սեպուհը ձեռքը դրեց Թահիրի ուսին,- Տեր Աստված, բա՛վ է, այլ-ս մի փորձիր մեզ: Մի տարի է, ինչ տանչվում ենք...,- սեպուհը խոսում էր հայերեն, որին Թահիրը տիրապետում էր, քանզի ծնվել ու դաստիարակվել էր Յայաստանում:

Յանկարծ չաղաթայներն աղմուկ բարձրացրեցին, ինչեցին շեփորները, չարագուշակ ոռնացին կառնայները:

Բերդականները տեսան, որ չաղաթայները մարտակարգ են ընդունում:

Սեպուհը կանչեց ավագին, հարցական նայեց Թահիրին. սա անխոս հասկացավ նրան, գլխով համաձայնություն տվեց: Բերդում ինչեցին հայկական շեփորները, զարկեցին թմբուկները: Բերդապահ հայ ու թուրք գինվորները իշան պարիսպներից ու աշտարակներից, սկսեցին շարվել դռների մոտ:

- Վարա՛գ, վերջապե՞ս,- խոսեց գինվոր Պողոսը, սրբելով արցունքնե-

ո՞յ:

Վարագը սիրով նայեց ընկերոջը, ապա ավագին, մազ ու մորուքի մեջ կորած մռայլադեմ մի զորականի, որից բոլորն էլ վախենում էին:

- Յը՝, ավա՛գ, պրօանք անօրեններից...

Ավագը զայրացած նայեց զինվորներին:

- Արագ շարվեք, գոնե երկարաբեղին զարկեմ, ախոր կյանքս կերավ: Ել բան չեմ ուզում, միայն թե զարկեմ անօրենին: Նա ելի առաջին շարքում է, ես դրա մերը...

- Փախչո՞ւմ են, փախչո՞ւմ են,- գոռաց աշտարակի ռիտորի զինվորը:

Այդ պահին հարձակվողներն ընկան չաղաթայների վրա:

- Բացե՛ք դուռը,- գոռաց սեպուհը,- Յակոր ավագ, իմ հետ-ից ի մա՞րտ...

- Յանուն հայ աստվածների,- զգիտես ինչու այդ պահին հեթանոսացած գոռաց Բարսեղ սեպուհը,- առա՛ջ, - սուրը ճոճելով դուրս թռավ դրսից, զինվորները հետ-եցին նրան:

Սեպուհի կողքին հայտնվեց Թահիրը, մերկ յաթաղանը ձեռքին, ապա ավագները՝ Յակոբը, Տրդատը:

Մեկ տարի տանջված, նվաստացած, ծաղրի ենթարկված զինվորները կատաղի թափով նետվեցին չաղաթայների վրա, որ այս պահին կրվում էին վրաց հեծյալների դեմ: Բերդակները զարկեցին իրենց թիկունքով դարձած չաղաթայներին, սրանք ընկան երկու կրակների արանքը: Չաղաթայները հասկացան, որ կործանման են դատապարտված, փախան, մտրակելով իրենց ծիերը: Վրացիները հետամուտ եղան, սկսեցին կոտորել փախչողներին:

- Փախա՛վ, լամուկը փախա՛վ: Ես քո մերը... գոռում եր ավագ Յակոբը,- ախր կրվող էի կարծում, տեսա՞ք, ոևս փախավ, ես քո...

Զինվորները հռհռացին: Փաթաթվեցին իրար, համբուրվում էին, շատերը լաց էին լինում, մեկ տարի պաշարված մնալ...

Բարսեղ սեպուհն ու Թահիրը մոտեցան Բագարատ թագավորին, որ կանգնել էր ազնաուրներով շրջապատված: Թահիրը ծալեց ծունկն ու սուրը մեկնեց թագավորին:

- Վերցրո՛ւ սուրդ, դու այս պատվով ես կրել: Դու հորդ արժանի զավակն ես,- մի պահ լոեց, ուշադիր նայեց Թահիրին,- ինձնից քեզ խորհուրդ՝ մի՛ մոռացիր հայերին, որ մեկ տարի կողքիդ են եղել, պաշտպանել են քեզ: Ծնորհակալական զգացումը այրմարդու ամենամեծ, արժանի հատկությունն է, չմոռանաս նա- մեզ...

Երկու օր անց, Թահիրը մեծ քարավան կապած հեռացավ Երջնկայից, հեռացավ իր հետ տանելով Զելահիրյանների գանձերը: Սա -ս մեկ հարված էր, որ վրաց Բագարատ թագավորը հասցրեց Լանկ Թամուրին, փա՛ռք քաջին...

* * *

Անահիտն ու Թովման դեռ ներս չեին մտել, դեռ չեին ներկայացել նրան, իսկ Եգիին իշխանը գիտեր նրանց ով լինելը: Ոչ ոք չէր ասել նրանց ով լինելը, տրամաբանորեն իշխանը եկել էր այդ Եղրահանգմանը: Ելավ տեղից համբուրեց Անահիտի ճակատը, առավ աբեղայի աջը:

- Ես ճանաչում եի լուսահոգի հորդ,- աղջկան նայեց բարեկամի անկեղծ վշտով,- Վահան իշխանն այն հայերից էր, ովքեր իրենց հայարիական եին համարում, - նրանց համար Յոդ Յայրենին լոկ խոսքեր չեին: Ափսո՞ս, հազար ափսոս: Մենք սգո պատարագ մատուցեցինք Վանական արքայիսկոպոսի ու Վահան իշխանի պատվին: Թող Տեր Աստված հոգիներին խաղաղություն պարգ-ի: Դստրիկս, դժվար ժամանակներ ենք ապրում, եթե կարողանանք այս դժոխքի միջով անցնել... Դժվար է, իշխաններից շատերը դեմ են դիմադրությանը, ձգտում են ազգի նվաստացման գնով անձերի ապահավություն ծեռք բերել: Իսկ դուք, մի բուռ մարդիկ, ելել եք Յայրենիին ապավեն, կարեվեր դժվար է ծեր առաքելությունը,- ծեռքով հրավիրեց նստել:

Իշխանը գեղեցիկ այրմարդ էր, հայի պատկեր՝ արծվաքիթ էր, գռուղ մազ ու մորուքով, մազերը թափվում եին հաղթ ուսերին:

- Չխոսենք Յայոց Գաղտնի Ուխտի մասին: Գաղտնի է, թող գաղտնի մնա: Ինձանից քաշվելու պատճառ չունեք, սակայն զգույշ եղեք, չաղաթայները փնտրում են ձեզ: Բացատրելու կարիք չկա, գիտեք, որ ոսկին ամեն տեղ նրանց համար լրտեսներ, օգնականներ կգտնի,- իշխանը լռեց երկար ժամանակ, երիտասարդները չփորձեցին խանգարել նրան: Իշխանը իր խորաթափանցությամբ նրանց փակուղի էր դրել, ինքը ել պիտի ցույց տար այստեղից դուրս գալու ճանապարհը:

Իշխանին դուր եկավ երիտասարդների համեստությունը:

- Գիտե՞ք, որդի՞ք, երբ ձեզ նայում եմ, խորհում եմ հայի անմահ հոգու մասին, մեր Յայարիական նախնյաց մասին: Նրանք ինձ համար լոկ խոսքեր չեն, ոչ ել պահի ոգ-որանքի ժամանակ հիշվող: Նրանք իմ արյան մեջ են, և ա- ձեր արյան մեջ: Ազգս որքան է տուժել, չհասկանալով Յայարիական հոգին է մեր մեջ,- տրտմեց, տիսուր նայեց Թովմային,- ես լսել եմ քո մասին, Մարտիրոս ոյուցազնի հետ միասին կռվելու մասին, և այս մասին, որ ևս քեզ կոչել է Բարդողի եպիսկոպոս: Ինչ խոսք, դու իսկական հայ ես, Յայարիական ասպետ: Ներեք ինձ, թեր-ս մենք այլ-ս չհանդիպենք, խորհուրդ քեզ՝ պարզի՛ր նախաքրիստոնեական պատմությունը, գտիր մեր Յայարիական պատմությունը, դա կա՛, կա այն հայերի հոգիներում, - ո՛չ խոչով, ո՛չ խարուկներով այն չես այրի, չես հանի մեր հոգիներից...,- Դարձյալ լռեց, ապա խոսեց մի փոքր այլ ծայնով, - Յայր սուրբ, ինձ մի մեղադրիր, քանի չես կատարել խորհուրդս, իսկ այդ դեպքում կփնտնես ինձ, խոսելու համար...,- հանկարծ խորամանկ ժպտաց, աչքերը կորան վաղաժամ խորշումների մեջ,- դուք եկել եք ինձ համոզելո՞ւ, որ պատրաստ լինեմ դիմակայելու Լանկ Թամուրի գորքերին: Դա է ծեր առաքելու-

թյունը: Ինձ ոչինչ մի ասեք ձեր նպատակների մասին: Դու Վահան իշխանի դուստրն ես, դա բավական է, որ քեզ հավատամ, իսկ Բարդողի փառապանծ Եպիսկոպոսի մասին առասպելներ եմ լսել: Յաշվեք ձեր առաքելությունը կատարված,- ծափ զարկեց, ներս մտած սենեկապետին նշան արեց սեղան գցելու,- ընթրենք, հանգամանք, չի կարելի օրիորդին այսքան տանջել: Յայր սուրբ ամեն ինչի էլ կղիմանա,- ծիծաղեց,- Որդի՛ք, ես այնքան խոսեցի, որ ձեզ ասելիք չմնաց,- հյուրերին հրավիրեց սեղանի մոտ:

- Յզոր ենք եղել... իմ երանելի առհավական նախնիք, նահահայր Մերուժան Արծրունին կռվել է Մեծն արհական Տիգրանի դրոշի տակ: Մի՛ զարմացեք, որ ես այսքան բաներ խոսեցի արիների մասին: Մեր դժբախտությունը հենց իսկ դրանից է գալիս, որ մոռանում ենք մեր նախնյաց, մոռանում ենք մեր ժողովրդի նախաքրիստոնեական անցյալը, ավա՛ղ մեզ...

Արդ, Լանկ Թամուրը դաներս է ծեծում: Իսկ ի՞նչ կարող ենք անել, մեծաքանակ են անօրենները, անհաշիվ: Տեսք, թե որքան երկրներ են գրավել,- ձեռքը թափ տվեց,- անգամ Բաղդադը զդիմացավ, էլ ուր մնաց, որ մենք ետ մղենք հորդաները... Մեզ միասնությունն է պակասում, հակառակ պարագայում խիստ կտուժենք...

- Ի՞նչ կասես այն իշխանների մասին, որ կարողանում են լեզու գտնել թուրքերի հետ – այդ ամենն անում են առանց սեփական արժանապատվության կորստի, - ասաց Թովման, հարգանքով նայեց տանտիրոջը:

Իշխանը ժպտաց, տրտմտեց:

- Ծնորհապարտ եմ, Յայր սուրբ, եթե դա ինձ էլ է վերաբերում: Յավատա որդի՛, դժվար է, միակ պայմանը զենքն ու ուժն է: Միայն ուժն են ընդունում թուրքերը – ոչ միայն նրանք, ցավ ի սիրտ ասեմ՝ իրավացի են:

Թովման նայեց Անահիտին, սա գլխով արեց:

- Ի՞նչ ես վճռել, իշխան,- հարցրեց Թովման, թե – պատասխանը հայտնի էր, - ի՞նչ պատասխան տանենք մեր ընկերներին:

Թովման այս պահին հասկացավ, ինչ գիևվորագրվել էր Յայոց Գաղտնի Ուխտին, ավելի էր մտերմացել աշխարհիկ իշխանավորներին: Ասել է, թե հասկացել է, նրանք են, որ փրկելու են ժողովրդին: Այ, իշխանին դիմում է տիտղոսով, ոչ Որդյակ, մի՞թե հեռանում եմ կրոնից, սանիցս... ՉԵ՛,- թափ տվեց գլուխը, - դիմելած-ը կար-որ չէ, սակայն այն, ինչ սպասվում է առջ-ում, պարտադրում է մտերմանալ աշխարհիկ տերերի հետ:

- Մի պատասխան՝ Վանը կպաշտպանվի: Մենք քաղաքը չենք դնի կաղ սատանայի թաթի տակ: Յենց նոր խելացի միտք ասացիր հայ իշխանների մասին, որ կարողանում են լեզու գտնել: Օրինակ, Ածեկի իշխան Սահանդը, ինձանից վատ հայ չէ, հավատացած եմ՝ սուրը վայր կղնի, թեր-ս, դրանով փրկի իր գավառը,- լոեց,- կար-որ է փրկել երկիրը՝ մարդկանց, ապա հարց եմ տալիս՝ արժե՞ ստորանալու գնով ապ-

րել... Զգիտեմ, խելացի մարդիկ եք, խորհեք, ցավոք հենց այդպիսի մարդիկ են արդարացվում պատմության կողմից՝ փրկել են ժողովուրդը, իսկ իմ նմանները՝ կռվի են հանել ժողովրդին: Դե՛, ասեք, ո՞վ է իրավացի, ո՞վ սխալ... Պատմություն կոչված անաշար դատավորը կասի իր խոսքը,- գլուխն առավ ափերի մեջ,- իսկ սիրտս զարկում է կրծքիս տակ՝ հպարտ ապրի՛ր, մերկացրո՛ւ սուրդ, ապրիր հպարտ, մեռիր հպարտ, ինչպես մեր փառապանձ նախնիք՝ Յայարիները... Ժամանակը կասի իր խոսքը,- ծիծաղեց դուրեկան,- ծերանում եմ, սկսել եմ շատախոսել: Դուք ինձ մի՛ լսեք, անուշ արեք,- Նրա նշանով մատովակը նորից գինի լցրեց գավաթները:

- Խմենք ու երդվենք չարատավորել առհավական մեր նախնյաց պատիվը, արժանանանք անանց փառքի: Վե՛րջ, սա է պատասխանս, Եթե դրժեմ խոսքս, թող անցորդները թքեն այն հողաթմբին, որի տակ պարկած կլինեմ:

Լոեցին, ոչ Թովման, ոչ Անահիտը չեին սպասում իրենց առաքելության այդպիսի հանկարծակի ու հաջող ավարտի: Նրանց համոզեցին, որ Եզրին իշխանը կկռվի, քանզի տեսել եին, որ քաղաքի պարիսավերը ամրացվում էին, մթերքներ էին բերում քաղաք, դարբինները քափ ու քրտինք մտած գենք էին կռում: Քաղաքը պատրաստվում էր դիմակայելու արհավիրքին:

- Իշխան, որքան հասկացա, պնդում ես, որ Սահանդ իշխանը կհնագանդվի...

- Այո՛, Սահանդի համար Երկիր փրկել նշանակում է հնագանդվել, չգիտեմ, ինչպես գնահատեմ այս պարագան: Յետո չմոռանաք, որ Նրա համար շահ կա, և այս էլ է վաճառական: Սահանդը աղի հանույթից ու վաճառքից մեծ շահ է ստանում, եթե հնագանդվի, Լանկ Թամուրը ճանապարհները չի փակի, դրանից զատ վաճառականները խորհուրդ կտան հնագանդվել, որպեսզի ճանապարհները չփակվեն: Նրանց Աստվածը ուսկին է, սա համարեք վերջնական: Չեր ընկերներին ասեք՝ Վանը կպաշտպանվի – թող մեզ դատի պատմություն կոչված տիեզերական մեծությունը...

* * *

Սահարը ծնկել էր տիրակալի առաջ, սպասում էր Նրա խոսքին, իսկ սա էլ ասես կանչել էր միայն սպասեցնելու համար: Լանկ Թամուրը ընկել էր խոհերի հորձանուտը: Նրան հանգիստ չէր տալիս Յայոց Գաղտնի Ուխտը, ինչպես Եր-ում էր, հայերը սկսել են ուժեր գումարել: Երկրում դիմադրական ուժերը պատրաստվում էին գոյամարտի, ամեն քաղաք ու շեն, բերդ պատրաստվում էր պաշտպանվելու... Այդ ամենի Ոգին Յայոց Գաղտնի Ուխտն էր, իսկ բռնել Նրա մարդկանց, այդպես էլ չէր հաջողվում: Նրանք ամեն տեղ են, սակայն ոչ մի տեղ չես կարող

հայտնաբերել, բռնել, անգամ այս գավառներում են, ուր արդեն մտել են չաղաթայները: Այ, Եթե Սահարը բռնի նրանցից մեկն ու մեկին, խալաթ կը նծայի՝ ոսկեպատյան սամարդանոյան սուր, զարդեր, գեղանի գերուհիներ: Եթե հանկարծ Սահարը իմանար, թե որքան ընծաներ եր վճռել իրեն ընծայելու տիրակալը, այն էլ մի հատիկ հայ բռնելու համար, գլուխը կկորցներ:

- Ի՞նչ լուր Դարա Մահմեդից, չի՞ փոխել միտքը, դիմադրե՞լ է ցանկանում: Յոտոտիր, արդյո՞ք հայերի ու նրանց միշ- դաշինք չկա մեր դեմ:

Սահարը զարմացած նայեց տիրակալին:

- Ի՞նչ է, կա՞ այդպիսի դաշինք:

- Տիրակալ, Ալլահն իր իմաստության շտեմարաններն ե բացել քո առաջ: Ես խոնարհվում եմ իմ տիրակալի առաջ: Դու Ալլահի աչքն ես երկորի վրա, դու կրահում ես մարդկանց ամենախորունկ մտքերը: Դարա Մահմեդը հայերի հետ պատրաստվում է դիմադրել:

- Ումի՞ց են լուրերը:

- Վաճառականներից:

- Փուչ մարդիկ են, շահի համար մեր լուրերն ել նրանց կվաճառեն,- ծափ զարկեց, իրամայեց կանչել Թուսայուն, Շահ Մելիքին, գրագիր Թաճիրեթին, Շամսետին պատմիչին: Թե- բավականին ուշ էր, սակայն ամենքն ել ներկայացան: Տիրակալը նայեց նրանց քնատ դեմքերին, հեգնեց:

- Իսկ Դարա Մահմեդը չի քնում: Նա հայերի հետ պատրաստվում է դիմադրել: Դուք ամենքդ ել քնած եք ուղտի ականջներում, ոչինչ չեք տեսնում, ոչինչ չեք լսում: Ես պիտի ծեր ամենքի փոխարեն խորհեմ, մեկդ մի խելացի միտք չեք հուշում: Լողլողանը մտել է Վասպուրական աշխարհ, ի՞նչ աշխարհ է, ի՞նչ դիմադրություն կարող ենք սպասել: Կռվո՞ղ ժողովուրդ են, թե խաղաղ՝ մենք գիտենք: Մենք չենք ուզում, որ մեր գործերի առաջ ամեն քաղաք ու շեն բերդ դառնան: Շամսետին պատմիչ, ասա, ի՞նչ երկիր է այս Վասպուրական աշխարհը. լեռներ, գետեր: Ի՞նչ մարդիկ են՝ լեռնեցիների հետ մենք արդեն հանդիպել ենք: Ովքեր են ապրում Բայազետի սահմանակից գավառներում:

Շամսետինը մի քայլ առաջ եկավ, շոյեց մորուքը, ձեռքերը քսեց երեսին.

- Տիրակալ, այդ գավառներում կան նա- դաշտային հողեր: Մուշ քաղաքում է նստում Դարա Մահմեդը իր Յուսուֆ որդու հետ: Սուլթանը ծեր է, սակայն որդին, որ փաստացի տիրություն է անում երկրում, կրակի կտոր է, կռվող մարդ: Վասպուրականի հայերը ենթակա են Դարա Մահմեդին: Սուլթանը հայերի հետ հաշտ է ապրում...

- Ով հարյուր սուր բռնող ունի, իրեն սուլթան է հոչակում,- մօմօաց- րեց տիրակալը,- շարունակի՞ր:

- Մշո դաշտը հացառատ է, կարող է ողջ երկիրը կերակրել: Շինարար

Ժողովուրդ են, նա- կռվող, եթե Նրանց չկաչեն, չկաչեն Եկեղեցիներին ու հնձաններին,- պատմիչը մի պահ լռեց, ասես Մտքերն եր հավաքում,- տիրակալ, ինում այդ գավառը պատկանել է Մամիկոնյան կոչվող տոհմին, ո-րից Յայաստան աշխարհում կարգվել են զորավարներ, ինչպես հայերն են կոչում՝ սպարապետներ: Տիրակալ, ես վախենում եմ, որ հայերն ու Ղարա Մահմեդը դաշինք կապեն մեր դեմ, ե՞ս...

- Կեցցե՞ս, պատմի՞չ, խելացի մարդ ես եղել, զուր չես հաց ուտում, տեսա՞ր Սահա՞ր: Մենք, ասել ե թե՝ ուշացել ենք... Յետո լեռներ, գետեր, դաշտեր, ճանապարհների վիճակը, կաև ճանապարհներ:

Պատմիչը խոր շունչ քաշեց:

- Տիրակալ, Մշո դաշտը կպած է Սասուն լեռնային երկրին, ժողովուրդը կռվարար է: Յոչակված ասպետներ են, կռվել են անգամ խաչակիրների դեմ, տոկուն են մարտում:

- Չոկատներ ունե՞ն երկրում:

- Մշտական ջոկատներ չկան,- պատմիչին ընդհատեց Սահարը:

- Ընտանիքներում մնացել են ծերերն ու կանայք, գերդաստանների երեց որդիները, ամենքն էլ կռվողներ են: Անգամ կանայք են կռվում, բնավ ետ չեն մնում այրմարդկանցից: Երիտասարդները ծառայում են հար-ան սուլթանների զորքերում, տանը մնացածներն էլ պակաս կռվողներ չեն, մորթեղեն զրահներ են կրում, որ չի զիշում մետաղականին... Կռիվներին մասնակցում են անգամ ծեր կանայք՝ մամիկները, այդ կատաղի վիուկները...

- Սպասի՞ր, պատմիչ, դու հրեշների երկիր ես նկարագրում:

- Շամսետինը իրավացի է, տիրակալ,- պատմիչին միացավ Թուսային,- կռվող ժողովուրդ են:

- Ա՛, դու՞ էլ ես վախեցել սասունցիներից: Մնացած գավառները բնավ պակաս կռվողներ չեն, նա- խութը: Մենք էլ բաներ գիտենք այդ երկրի մասին: Որքան էլ հզոր ու կռվող լինեն, չեն կարող դիմադրել մեզ: Մեզ հետ է Զինգիզ Խանի Ոգին, մեզ հետ է Սալդեյը՝ Զինգիզի Աստվածը: Մենք պիտի գնանք Լոռիողանի հետ-ից, մոտենում է՝ Բայազետի հետ ընդհարվելու պահը...

Ներկաները պատերազմի շունչ առան, Մեծ պատերազմի, թող Ալ-լահը խելք ու զորություն տա մեզ...

* * *

- Մա՛րդ Աստծո, աչքերս ջուր դառավ,- Վահեն սիրով գրկեց Թովմային ու Անահիտին,- երկար սպասեցինք: Զաքարիան էլ է Եկել:

Ուխտի անդամները գրկախառնվեցին, վաղուց իրար չեին տեսել:

- Խոսե՞ք, ի՞նչ լուրեր եք բերել, առաջին հերթին Վանի մասին, ծովակի գավառների մասին, պատմե՞ք:

- Վանը պատրաստվում է դիմադրության: Մեզ հարկ չեղավ համոզե-

լու Եգիլն իշխանին: Նա ազնիվ հայ է, սակայն Սահանդ իշխանին չհանդիպեցինք, կասկած կա, որ վայր դնի սուրբ Լանկ Թամուրի առաջ: Ամենքն էլ՝ հոգ-որ, թե աշխարհական, պարսավում են նրան:

- Թեր-ս խոսեիր Ուխտի անունից, խելքի գար,- ասաց Միերը:
- Խելացի են վարվել, որ չեն դիմել,- ասաց Վահեն,- ինչո՞ւ փորձության ենթարկել Ուխտի անդամներին: Իշխանը կարող էր կալանել նրանց ու հանձնել Թամուրին, դրանից լավ, ինչո՞վ կարող էր ծառայել նրան:
- Այդ կարծիքին էր նա- Եգիլն իշխանը,- ասաց Անահիտը ու այդ պահին էլ հասկացավ, որ ստույգ մահից են փրկվել:

Ներս մտավ Զաքարիան:

- Եղբայրներ, Լողլողանը մտել է Մշո դաշտ: Յապաղելը հղի է վտանգներով: Ցավոք, մենք շատ ենք խոսում, հարկ է աճապարել: Վահեն թող գնա Ղարա Յուսուֆի մոտ, իսկ մենք շտապով բարձրանանք Սասուն ու Խութ, հարկ է կռվողներին հավաքել իրար գլխի, զորք կազմել, խոսելու ժամն անցավ:

Ամենքն էլ համամիտ էին նրա հետ:

- Սպասեք, իրավացի Ե՝ Զաքարիան, ես կգնամ Ղարա Յուսուֆի մոտ, կպայմանավորվենք: Դուք սպասեք իմ վերադարձին, այնժամ կվճռենք, ով ուր գնա...

Վահեն անվերապահորեն դարձել էր խմբի գլխավորը: Մեծ հեղինակություն էր վայելում ընկերների մոտ:

Չերկարացնենք սպասումը, Վահեն երկար սպասեցնել չտվեց, վերադավագ երկու ժամից: Յանգիստ էր, այդպես լինում է զորականների հետ, երբ կռվի պայման են դնում, մնում է միայն սուր մերկացնելը:

- Հը՛, պայման դրեցի՞ք,- Փայլակն էր, հարցորեց անհամբեր, - Վահենում եմ կռվից հետո Ղարա Մահմեդը բռնի կոկորդներից: Նա Թամուրից բնավ պակաս վայրագը չէ, երկուստեք մահմեդական շներ են, տարբեր շնանոցներից...

- Փայլակը իրավացի Ե: Ես լուր ուսեմ՝ Շարաֆին խոստացել է ցեղը տանել «Մեծ» ավարի, - խոսեց միևնույն այդ լուր նստած Ոսկանը,- մեկը հարցնի, ո՞ւմ ես թալանելու հայերից զատ: Կռվից հետո մեր դեմ են ելնելու: Դետո Էլ չմոռանանք, նա հայ աղջիկ առ-անգեց, իսկ մենք...

- Այս պահին կար-որը Լանկ Թամուրն է,- խոսեց Յայկարամը,- պարտ ենք ժողովրդին փրկելու, սա է մեր սուրբ գործը: Ի՞նչ կարող ենք անել՝ հայի ճակատագիր է, բարեկամներ չունենք: Յույսներս՝ Աստված ու մեր սուրը...

- Ի՞նչ պայման դրեցիք, ի՞նչ ուժերով ենք կռվելու, որտե՞ղ ենք կռվելու,- հարցրեց Թովման:

- Ղարա Մահմեդն ու Յուսուֆը վճռեցին՝ ամենահարմարը Մայրիների պուրակն է, այն չաղաթայների ճանապարհին Ե: Չորքերի մի մասն էլ կարելի է թաքցնել: Մեզ հրամայեց,- Վահեն քմծիծաղ տվեց,- ի՞նչ կարող

Ես անել, այլ ելք չկա, մեր գործերի կեսը պիտի անցնամու թշնամու թիկունքը, որ զարկի կռվի պահին: Թուրքերը հավատում են, որ միացյալ ուժերով կհաղթենք: Նրանք մեր գինվորների թիվը չեն ել իմանա: Յարկ է ջոկատները շարժել անհապաղ: Լանկ թամուրը Լողողանի հրամանի տակ չորս-հինգ թուման գինվոր է դրել: Եթե դիտարկենք Սասունն ու Տարոնը, այդքան կռվող չենք հանի...

- Ունեցածով ու Աստծով կհաղթենք,- ասաց Թովման,- չե՞ք տեսնում ինչպես է ժողովուրդը գալիս, օր չի լինում, որ շեներից ջոկատներ չկազմվեն: Օրիասի առաջ մարդիկ սթափվել են, գինվում են ով ինչով կարողանում է: Յարկ է շտապել, շարժվենք անհապաղ:

- Եղբայրներ, այսպես կանենք՝ Թովման ու Անահիտը կգնան Տարոն, Սասուն կգնա Փայլակը: Ես Զաքարիայի հետ՝ խութ, մեզ հետ կգա Ոսկանը, Յայկարամն ու Կողիկը կգնան ծովակի ջոկատները բերելու: Մի սպասեք Վերջին կռվողին, մեկ է, վերջ չի լինելու: Ազգը սուրբ պատերազմի է ելնում, ցանկանք բարին: Մայրիների պուրակ եկեք գաղտուղի ճանապարհներով, թող թուրքերը չկարողանան հաշվել մեր ջոկատները: Մի մոռացեք, Լողողանի լրտեսներն իրենց հերթին շրջում են ամենուր: Մշտագույշ եղեք, եղբայրներ: Ի՞նչ ասեմ կռվից առաջ, աշխատեք կռվի բերել գրահվածներին, գենք ունեցողներին, մի բերեք, զուր զոհեր չտանեք, ո՛չ առաջին կռիվն է ու ո՛չ էլ Վերջինը: Լա՛վ հիշեք, Մայրիների պուրակում վճռվելու է Յայոց Գաղտնի Ուխտի ճակատագիրը: Ամենքն էլ գիտեն, որ Ուխտն է այս ամենի գլուխը: Աստված մի առասցե... ժողովուրդը կլքի մեզ, կասեն անօգնական թողեցիք ու անձար գտնվեցիք... Աստված սիրեք, ինտրանքս է, աղաչում եմ, հարազատներս, ո՛ղջ մնացեք... Եկեք համբուրվենք կռվից առաջ...

Գրկախառնվեցին, համբուրվեցին: Նրանք դաժան փորձության եին ելնում: Ապավինել եին Աստծուն ու իրենց սրին, ցանկանք բարին մեր արիական եղբայրներին...

* * *

Լողողանի մասին առասպելներ եին պատմում, ասում եին Չինգիզ Խանի տոհմից է, ոչ հերքում եր, ոչ հաստատում, իսկ որ անմարդկային դաժան էր, դա ամենքն էլ գիտեին: Իսկ Չինգիզիդ լինելը մեծ պատիվ էր: Նա իր դաժանությամբ արդարացնում էր այդ պատիվը: Արդ, ստորադաս հրամանատարները կանգնել են նրա հրամանին պատրաստ, սպասում են:

Անսախարեա բան է կատարվել, անլուր հանդգնություն, աշխարհի տիրակալի բանակի դեմ կանգնել է մի բանակ՝ թշնամու բանակ: Ո՞վ զարմանք, չեն ել երկնչում...

Յայերն ու Դարա Սահմեդի գորքերը գրավել են գետի աջ ափի բլրակներն ու սպասում են կռվի: Միայն այն հանգամանքը, որ Յայա-

տան աշխարհում տիրակալի դեմ բանակ է ելել բաց դաշտում, արդեն մտահոգիչ է: Եթե դա լիներ որ-է քաղաքի պաշտպանության ժամանակ, կարելի էր ընդունել, սակայն այսպես, անամոթաբար ելնել տիրակալի բանակի դեմ... Վաղուց այդպիսի բան չեր եղել: Դա կասկած է գցել փորձված զորավարի սիրտը: Յաղթանակի մասին բևավ չի կասկածում, սակայն այդչափ հանգնել կարող են միայն ինելագարներն ու շատ մեծ ուժեր ունեցողները, իսկ սրանց եղած-չեղած բանակը սա է, գետի աջ ափին կանգնած այրուծին ու մեջ-մեջ կանգնած հետ-ակը, իսկ եթե անտառում էլի զորքեր կան, հարց է... Ստուգ է, հատկապես սասունցիները սպառագեն են, սրանց մասին զորավարը լսել է, մնացածներն ել պակաս կովողներ չեն: Լողլողանը սովոր չէ թշնամուն թերագնահատել: Գիտեմ, դա հոյի է վտանգներով, անսպասելի է շրջադարձներով:

Ոհա զորքերից կես նետընկեց առաջ կանգնել են մի խումբ ընտիր զրահված հեծյալներ: Չորավարին ասացին, որ Ղարա Մահմեդի կողքին կանգնած հայ փահլ-անը հայերի գլխավորն է, ասում են իսկական բատիր է, կատաղի կովող: Անցյալ տարի մեր գիւղներից մի քանիսին զարկեց: Կողքին կին է կանգնած:

- Յա՛, Ալլա՛հ,- ձեռքերը երկինք կարկառեց Լողլողանը,- ի՞նչ եմ տեսնում, Ղարա Մահմեդը ինձ փերի է ընծա բերել, թե՞ ուզում է զարմացնել,- բարձրացավ ասպանդակների վրա,- ամբողջ թափով զարկեք Մահմեդին: Ալի՛, թափի՛ Ալիմարդանի մոտ, ասա չշարժվի տեղից մինչ-հրամանս չառնի: Վախենում եմ հայերը անտառում դարանակալներ ունենան, հարկ է զգույշ լինել, սրանք խարդախ ժողովուրդ են: Մահմեդն ել բարի պտուղը չէ, թե- մեր կրոնին է: Դե՛, Ալլահը մեզ հետ, Ալլահ Աքբար,- գոռաց ու մերկ սրով ցույց տվեց թշնամուն,- թող Ալլահը հաղթանակ պարգ-ի մեզ, առա՛շ:

Կառնայների խռպոտ ոռնոցից կենդանացավ շրջապատը, ուր հազարավոր մարդիկ էին հավաքվել, հավաքվել էին իրար սպանելու, ինչպիսի անհեթեթություն - , ցավոք, այդ ամենը պահի հրամայականի մեջ անհրաժեշտություն էր, գիտակցված անհրաժեշտություն:

Կառնայներին թշնամու բանակում պատասխանեցին հայերի շեփորներն ու թուրքերի ծնծղաները, ու զարկեցին մեծ գուշերը: Սկսվեց ճակատամարտը, որն առանց սխալվելու կարելի է սպանդանոց կոչել: Չուր են զորականները սպանությունը արդարացնելու համար այն կոչել ճակատամարտ, սպանդանոց է:

Լողլողանը առաջ նետեց երկու թուման: Զաղաթայներն անցան գետը ու գրոհեցին բլուրները: Յայերը սպասում էին դեռ, դա զարմացրեց Լողլողանին, ապա կռահեց պատճառը:

- Ա՛, գյառիւները սպասում են, որ մեր հեծյալները կոտրեն թափը, ախր մերոնք բլուրներն ի վեր են գրոհում: Յենց դա է, որ կա, լավ էլ տեղ են ընտրել, արդ, ժամ է, ես նրանց փոխարեն այս պահին կզարկեի...

Ասես ի պատասխան գորավարի խոհերի՝ հայոց ու թուրքերի հեծյալները պոկվեցին տեղից, առանց աղմուկ-աղաղակների նետվեցին չաղաթայների վրա: Դա զարմացրեց գորավարին, որ սովոր էր թշնամու աղաղակներին, գիտեր՝ թուրքերը կռվում են աղմուկ-աղաղակներով, իրենց քաջալերելով:

Նա չէր կարող իմանալ, որ Վահեն խնդրել էր առայժմ «համր» գործել, դա ավելի է ազդում, քան աղմուկը: Վահեն հասավ իր նպատակին, չաղաթայները տարակուսած կոտրեցին թափը, մնացել էր մեկ նետընկեց, հայերն ու թուրքերը դրողացրեցին մարտադաշտը իրենց մարտակուչերով: Այն ասես ապտակ լիներ թշնամու երեսին: Սարսափելի է, երբ այսոյանդ գալիս է ատամները սեղմած, գալիս է թամբին կռացած, գալիս է համր հայացքով՝ փնտրելով քո աչքերը, ասես աչքերով շանթում է, իսկ արդ՝ պայթեց աղաղակն այնպիսի ուժով, որ մարդկանց մազերը բիզ-բիզ կանգնեցին սաղավարտների տակ:

Ոհա առաջին շարքերն իրար եկան: Ամենաընտիր քաջերն եին առաջին շարքերում, ամենից հմուտ կռվողները, կռվի խենթերը: Մարտակոչերն ու աղաղակները փոխվեցին հայինյանքների ու հիշոցների:

Սկսվեց պատերազմի ամենաանհեթեթ պահը՝ ճակատամարտը, մինչ այդ, գորական շարժերը, գենքերի ու գորքերի կուտակումները այս իսկ պահի համար եին, այդ ամենը ճակատամարտի նախերգանքն էր միայն: Սկսվեց ճակատամարտը, որով հաճախ վճռվում էր պատերազմի ելքը, ո՞ւմ ինչ կտա այն..

Առաջին բախման պահին շատերի նիզակները կոտրվեցին, շատերը գլորվեցին նժույգներից: Որ կողմից քանի ասպետ ընկավ, անհնար էր, խառնվել եին իրար: Շարքը պահելս անհնար էր: Առաջին բախման ժամանակ նրանք, ովքեր մնացել եին թամբերի վրա, հաղթեցին առաջին պահի սարսափը, անցան թշնամու շարքերի մեջ, կտրվեցին ընկերներից: Արդ, կռվում եին, ձգտելով միանալ ընկերներին, շարք կազմել, միացյալ հարված տալ:

Այստեղ սասունցիներն ավելի քիչ տուժեցին, քանզի հմուտ եին շարքային կռվին:

Կոհիվը թեժացավ, վայնասուն ու աղաղակներ բարձրացան, շատերը սմբակածեծ եին լինում խելահեղ պտտվող նժույգների սմբակների տակ:

Դղոդոց էր, մետաղի ճռինչ, փշրվող ոսկորների խշխշոց, արյան խլխլոց: Որքան էլ հայերն ու թուրքերը քաջաբար կռվեին, դարձյալ զգացնել տվեց թվական գերակշռությունը, չաղաթայները կհաղթեին, քանզի եռակի շատ զինվոր ունեին:

Ամեն ճակատամարտի ու գորավարի մեջքը կոտրողը թվական գերակշռությունն է, սակայն դրա դեմ են ելնում գորավարական փորձով, գորական խորամանկությամբ, գորաշարժեր անելով: Հայերին կարող էին փրկել թշնամու թիկունք անցած հայկական ջոկատները: Դրանով

Վահեն հակակշիռ էր ստեղծում թվական գերակշռությանը, հայերը դրան էին սպասում:

Լողլողանը պատրաստ էր հրհռալու, սակայն ինչ-որ շատ դանդաղ են հայերը նահանջում, սակայն դա խաբկանք էր, չկար նահանջը, չկար մարտում թշնամուն զիշելը, չե՛, չեն զիջում: Սասունցիները կրվում են միակամ, զարկում են միասին, ասես հազարաեռ լինեն: Ում զարկում եմ, ստույգ մաս է, կտոր-կտոր են անում, զարկում են խմբովի, պրծում չկա նրանց ծանր սրերից, գուրգերից:

Ուխտի անդամներն ամենքն ել կրվի մեջ են, չեն խնայում իրենց: Կրվի ոգին Վահեն է: Չաղաթայները, որ տեսել են նրա կրիվը, արդ, խույս են տալիս նրանից՝ հայոց փահլ-անից, այդպես են կնքել նրան չաղաթայներն ու թուրքերը: Նրա նիզակի կայծակնային զարկերից ընկնում են չաղաթայների լավագույն բատիրները, քաջերի քաջ հռչակ-ված զորակաները: Յայերը կրվի պահին անգամ մորանալով վտանգը, նայում եին Վահեին, նրա կրվին: Նրանից շատ բան կար սովորելու: Յայ ասպետը կրվում էր ատամները սեղմած, նրա ամեն զարկի մեջ ուժ կա, նա- հարուստ փորձ: Չարմանալին այն է, որ Վահեն հաճախ իրեն այնպես չի պահում, ինչպես հարկ է, որ պահի ասպետը, խղճա, ների թշնամուն: Նա ասես հոգեառ հրեշտակ լինի, նա սպանում է, հեռանում է թշնամուց միայն սպանելուց հետո, չի ներում թշնամուն, որ անգամ ներում է խնդրում: Չգիտես որտեղից նրա մեջ հառնել է արիական հայ զորականի ոգին, այսքան դարեր մեզ են սպանել, մորթագերծ առել, գլխատել, այրել են խարուկների վրա, քառատել, իսկ նա ասպետ է, արիական ասպետ, պիտի ոչնչացնի թշնամուն, ներում չկա նրա հոգում: Նա զարկվածների վրեմն է առնում, կործանված ընտանիքի, հազարավոր զարկված հայերի, – արդար է նա Աստծո առաջ, հաղթողն է արդար, Ար-ը Վկա...

Ղարա Մահմեդը Յուսուֆին ուղարկում է մարտը վարելու: Որդին արդարացնում է նրա մասին տարածված հռչակը, հմուտ կրվող է: Յայրն ուրախանում է՝ տեսնելով, որ որդին զորավար է դառնում, իսկ երբ աչքն ընկնում է Վահեին, մթնոլում է, ինչ-որ անհասկանալի բաներ է մոմոացնում քթի տակ՝ սա պատուիաս է դառնալու մահմեդականների համար...

Յայկարամն ու Փայլակը վիրավորվել էին, ետ էին քաշվել վերքերը վիրակապելու համար: Որքան ել ցանկանային Անահիտին հեռու պահել կրվից, ինար չկար: Աղջիկը կրիվ էր մտել, կորցրել էր սաղավարտը, մազերը քամուն տված արշավում էր մարտադաշտում, ոգ-որում զինվորներին: Ամենքն ել ոյութված ճանապարհ էին տալիս նրան: Թեր-ս զարմացած չաղաթայները չեին ցանկանում առաջին պահին զարկել նրան, դա միայն առաջին պահին, երբ բերանքաց նայում էին հայոց դիցուհուն: Դա վիրավորում էր Անահիտին: Նա ախոյան էր գտնում, խոյանում էր, այնպիսի ուժով էր զարկում, որ ստիպված ընդունում էին որ-

աես հավասար կռվող գորական, որպես արժանի ախոյան: Անահիտը մի քանիսին վերջ էր տվել, երկու չաղաթայ սպանել, մի քանիսին ցած նետել ձիերից, սմբակածեծ արել: Չուր չեին նրան ըմբոստ հոգի կոչում Բշնիում, զուր չեր Վահան իշխանը գորական դարձրել դստերը:

Թովման կռվում էր ծանր սրով: Նա մանկուց սովոր էր մահակակռվի, բավական եղավ Վահեի մի քանի օրվա ուսուցումները, – նա ընտիր սրամարտիկ դարձավ:

Յայերն ու թուրքերը կռվում էին՝ հույսերը դրել էին դարանակալների վրա, իսկ նրանք ուշանում էին: Դա ստիպում էր թուրքերին զգուշանալ:

Ճակատամարտը վարում էր Յուսուֆը, սակայն մարդկանց մարտի էր տանում Վահեն, որին համհարզ էին դարձել Ոսկանը, Սիերը, կողքերից պաշտպանում էին նրան: Ասես մի մարմին դարձած, անխոցելի, անպարտելի...

Այդպիսի եռյակին կնախանձեր ամենահօչակավոր ասպետը Եվրոպայում, ել ուր մնաց, որ չնախանձեր Ղարա Յուսուֆը: Նա տեսնում էր, որ Վահեն է կռվի ոգին, փաստացի գորավարը:

Յանկարծ Վահեն կողքին տեսավ Յուսուֆի թիկնապահին:

- Փակլ-ան, չաղաթայները անցնում են մերոնց թիկունքը: Յուսուֆ գորավարն ասաց, թող հայերը փակեն ճամփան:

Վահեն քմծիծաղ տվեց: Նա այդ ուղղությամբ արդեն երկու տասնյակ սասունցիներ էր ուղարկել:

- Ասա Յուսուֆին, որ ջոկատ եմ ուղարկել չաղաթայների ճամփան փակելու...,- իսկ այդ միջոցին չաղաթայները հայերին ու թուրքերին սեղմում էին անտառին, ստույգ է, անտառը նա- փրկություն էր, թեր-ս Լողլողանը նրանց նահանջելու ճանապարհ տար, նրան շատ էր վախեցնում հայերի կատաղի դիմադրությունը, տեսնում էր, որ զոհերը տասնապատիկ ավելի են, այդպես որ գնար, ճակատամարտի ելքը կդառնար վիճելի... Այո՛, նա կես թուման զինվոր ուղարկեց հայերին անտառից կտրելու, վճռեց փոխել մարտավարությունը, վճռեց հայերին թեքել դեպի գետ, քաշել պարկի մեջ, շրջապատել: Շրջապատում այդ քայլը համարեցին զորավարական խելացի քայլ, սակայն Լողլողանը ինքը դժգոհ էր իր այդ քայլից:

«Եթե հայերին օգնության գան, կգան անտառի միջով ու իմ ուղարկած զինվորներին առաջին ալիքով կտրորեն, ապա կզարկեն մնացածներին կողքից, – այդ հարվածը կլինի կործանարար...»:

Վահեն հասկացավ, որ Լողլողանը այդ քայլին գնում է հետագայում տիրակալի առաջ արդարանալու համար միայն:

Յայերի վիճակը ծանրանում էր: Եթե դարանակալները չհասնեին, փրկություն չեր լինի, կկոտորեին:

- Թովմա՛, վերցրու սասունցիներից Օհանի հարյուրյակն ու զարկ չաղաթայներին, մի թող անցնեն մերոնց թիկունք, հակառակ պարագա-

յում մեզ պարկի մեջ կքաշեն: Լողողանը այդ է միտում, իսկ մերոնք ուշանում են...

- Ես ել գնամ սասունցիների հետ,- ասաց Անահիտը,- կգնամ թով-մայի հետ:

- Պետք չե՞,- մռայլ ասաց Թովման:

- Ո՞չ, ես կգնամ,- ասաց Անահիտը, ապա անցավ շշուկի,- ես դեռ քո կինը չեմ,- ժպտաց,- ես միայն Վահեի հրամաններն եմ կատարում:

Վահեն, որ լսել եր նրանց խոսակցությունը, մանր-մունք ծիծաղեց, սիրով նայեց նրանց: Յիացավ Անահիտի տեսքով:

- Դու վիրավոր ես, մնա ինձ մոտ,- ապա դարձավ Թովմային,- գնա՞՝, հայր սուրբ, Աստված քեզ պահապան, աճապարի՛ր:

Թովման ուրախացավ, որ կարողացավ Անահիտին այս պահին հեռու պահել կռվից, մտրակեց նժույգն ու գնաց սասունցիների մոտ:

Քիչ անց, նա ու Օհան պետը, սասունցիների գլուխն անցած, նետվեցին չաղաթայների ճանապարհը փակելու:

Անահիտը կարոտով նայեց Թովմայի հետ-ից, սիրտը ճմլվեց ինչ-որ անհասկանալի սպասումից: Աչքերը շաղվեցին, զրահված ձեռքով սրբեց արցունքները:

Վահեն հանկարծ նկատեց, որ թուրքերի աջ թ-ը կռվելով նահանջում է, մի՞թե կլքեն մարտադաշտը: Նա հասկանում էր, որ թուրքերը կռվում են իրենց հավատակիցների դեմ, թեր-ս գերությամբ փրկվելու հույս ունեն, սին հույսեր, չաղաթայները առաջին հերթին նրանց կուտորեն:

Նայեց անտառին, որտեղից պիտի հայտնվեին դարանակալները, սրանք երեք փարսախ հեռացել են, չաղաթայների թիկունքն անցնելու համար: Օգնությունը ուշանում էր: Տեսավ, թե ինչպես Յուսուֆը սրատել տվեց նահանջողներից մի քանիսին, սակայն դա միայն մի պահ պահեց վիճակը:

- Եթե մերոնք այդ պահին չհասնեն, թուրքերը կլքեն մարտադաշտը,- ասաց Վահեն,- հարկ է կանգնեցնել թուրքերին, դժվար թե Թովմային հաջողվի կայունացնել վիճակը, այդ ուղղությամբ Լողողանը մեծ ուժեր է նետել:

- Թույլ տուր, Վահե եղբայր,- ասաց Անահիտը,- թուրքերն ել մարդեն, չեն մերժի կնոջ խնդրանքը, կանգ կառնեն:

Վահեն, որ կլանված դիտում էր մարտադաշտը, չլսեց նրան: Անահիտը թօքրեց նժույգն ու սլացավ թուրքերի կողմը: Երկու բջնեցի երիտասարդներ հետ-եցին նրան: Սրանք, միանալով շոկատին, ճանաչել են իրենց իշխանի դստերն ու անքածան են նրանից, թիկնապահ են դարձել:

- Կանգ առ,- գոռաց Վահեն, ուզեց օգնության գնալ Անահիտին, սակայն մի ստվար շոկատ կտրեց ճամփան:

Լողողանը հասկացել էր, որ ճակատամարտը վարում է հայ

փահլ-անը: Նրա հրամանով չաղաթայները նետվեցին Վահեին գերելու: Վահեի մոտ եղած զինվորները սակավ էին չաղաթայների դեմս առնելու համար, սրանք տասնապատիկ ավելի էին, իսկ Վահեի հետ էին մի տասնյակ սասունցիներ, Միերն ու Փայլակը:

- Եղբայրնե՞ր, մեր ժամն էլ եկավ,- ծիծաղեց Վահեն, ծառացրեց նժույգը, քշեց առաջ: Սասունցիները «Սասո՞ւն, Սասո՞ւն» գոչելով հասան նրան:

Վահեն հաստաբուն նիզակը սեղմեց թ-ի տակ, մրրկեց առաջ: Յոդը եռած նժույգների սմբակների տակ, կոշտեր ու քարեր թռան:

Մարդկանց խռպոտած կոկորդներից այս պահին միայն ոռնոց էր լսվում, սարսափելի ոռնոց: Ամեն ինչ մոռացվեց, մնաց առջ-ում արշավող չաղաթայների զանգվածը, որ խաթարում էր մարդու միտք ու կամքը, սրանք էլ իրենց հերթին հույսները Ալլահի վրա դրած՝ գալիս էին սպանելու, հաղթելու էին գալիս... Ահա՛, մինչ- չաղաթայները մնաց հինգ, երկու նիզակաչափ: Երկուստեք փախցրեցին նժույգները բախվելուց: Վահեն վերջին պահին տեսավ չաղաթայի կատաղի հայացքը, ոռնոցից ծոսոված բերանը: Իսկ նա լուռ էր, նրան կարիք չկար գոռոցով քաջալերեր իրեն: Նիզակով զարկեց չաղաթային, պոկեց թամբից, ինչպես հասկացավ՝ հրամանատար էր, ընտիր կարաբայիր նժույգ էր նստել, փայլուն գրահներով էր: Վահեն չհասցրեց նորից զարկել, մետաղի այնքան ծանոթ ու զգվելի կրծտոց լսվեց, տեսավ, թե ինչպես Փայլակը սրով կիսեց չաղաթայի գլուխը, ինքն էլ նիզակահար ընկավ նժույգից, զգաց, ինչպես տաքացավ կողը, հետո նոր միայն ցավ զգաց: Չհասցրեց դիմադարձ հարված տալ, զարկեց անցնող չաղաթայի ծոծրակին, սա գլորվեց: Նետվեց Փայլակի կողմը, չհասցրեց, իինք չաղաթայներ նիզակներով խոցոտեցին նրան: Դրանից հետո Միերի ահասարսուր գոռոցն էր, տեսավ, ինչպես չաղաթայները ցրվեցին, չդիմացան Միերի սարսափելի սրի զարկերին: Յնար չկար որ-է բան խորհել, հարկ էր կռվել, պաշտպանվել կարկտի պես տեղացող հարվածներից: Կոտրված նիզակը մի կողմ նետեց, մերկացրեց սուրը, այստեղ նրան ախոյան չուներ:

Փայլակի մահը, Միերի գոռոցը ականջներում էր, այնպես կատաղեց, որ մոռացավ ամեն բան, անգամ պաշտպանվելը, միայն մի բան էր տեսնում՝ չաղաթայների ցավից ու սարսափից աղճատված դեմքերը, մետաղի կրծտոցը, ոսկորների փշրվելու խշրտոցը, արյան շիթերը զարկում էին դեմքին:

Միակ նպատակը վրեժն էր, զարկել, փշրել, մահ տալ, մա՛հ, մա՛հ... Սա կրիվ չէր, սա մոլագարություն էր, արյունը արյամբ խեղդելու ցանկություն...

Թեր-ս այսպիսի կատաղությամբ կռվել են մեր Յայարի նախնիք, այնպիսի կատաղությամբ ու սարսափ են տարածել, այո՛, այո՛, սարսափը իրենցից առաջ գլորելով տարել է աշխարհի չորս ծեգերը, եղե՛լ է, ե-

դե՛լ է, կիստրեք մեր մեջ, ձեր հոգիներում, ամեն անգամ մարտի դաշտ իշնելուց հիշեք Յայարիական նախնյաց, ոգեկոչելով նրանց, կռվեք հանուն այս սուրբ հողի, հանուն Ար- Աստծո...

Զաղաթայները չդիմացան արիական ասպետի սրին, սկսեցին Ետետ տալ, ապա նահանջեցին, սակայն տափաստանի գայլը գայլ է մնում, անմիջապես սկսեցին նետ-նետի հետ-ից արձակել, սակայն Վահեի զրահները դիմացան նետերի պարսին: Վերջապես օգնության հասան սասունցիները, սկսեցին նեղել չաղաթայներին:

Վահեն նետվեց դեպի Փայլակը: Միերը ընկերոջ դիակը գրկած, փորձում էր կտրված գլուխը կացնել մարմնին, տեսնելով, որ անհնար է, պոկեց օղազրահից մի կտոր, գլուխը օղազրահով ամրացրեց ուսերին: Նայեց Վահեին չտեսնող հայացքով:

- Փայլակը չկա՛, չկա մեր Փայլակը...

Վահեն ցած թռավ նժույգից, Միերի հետ հազիվ կարողացան հսկայի դիակը բարձրացրեցնել նժույգի վրա: Բարձրացան բլուր, դիակը իշեցրեցին քարերին:

Այդ պահին Անահիտը քշնեցիների հետ հասավ թուրքերին: Նժույգը ծառացրեց, գոռաց, ավելի ստուգ՝ ճչաց սպառնալից:

- Կանգ առեք, ս-ախո՛յ թուրքեր, ամոթ ձեզ: Ես՝ հայ օրիորդս, ձեզ եմ դիմում, մի՞թե այրմարդ չեք, կռվեք ինչպես վայել է զորականներին,- չասաց, ինչպես վայել է ասպետներին, գիտեր թե ում հետ գործ ուներ:

Աղջկա հերարձակ տեսքը, զայրույթից փայլող աչքերը մոգական ազդեցություն ունեցան:

- Փերի՛ է, Ալլահը վկա, Զեննեթի փերի,- մռմռացրեց մի երիտասարդ զինվոր, դարձավ ընկերներին,- ամո՞թ է, Ալի՛, Յեյդա՛ր, խայտառակ չիննենք հայ աղջկա առաջ: Ե՛տ տվեք,- -գոռաց ինքն իրենից ելած,- Ալլա՛հը օգնական, Ե՛տ տվեք,- թուրքերը, Անահիտի տեսքից ազդված, իրենց ընկերոջ ծայնից սթափված՝ ետ-ետ նայել տվեցին շարքերը, սկսեցին նորից կռվել:

Լողլողանը, որ հետ-ում էր մարտին, հույս ուներ այստեղից էլ սկսել ճակատամարտի բեկումը, հուսախար եղավ:

- Ալիմարդան, գերի վերցրու եղ քածին: Ես պիտի նրան քերթեմ, ինձ մոտ բերեք եղ լրին, ես դրա..

Ալիմարդանը երեք հարուրյակ ուղարկեց կռվի այդ հատվածը: Անհավասար կրիվ սկսվեց, թուրքերը կռվեցին, սակայն ուժերը անհավասար էին: Նրանց մի մասը գերի հանձնվեց, հույս փայփայելով, որ չաղաթայները կիսայեն հավատակիցներին, չարաչար սխալվեցին, չաղաթայները անխնա կոտորեցին նրանց:

Չեմ ցանկանում նկարագրել կրիվը այդ հատվածում, Անահիտը գերի ընկավ, քշնեցի երիտասարդները սրատվեցին:

Օրը կիսվեց, թեր-ս աստվածները վճռել էին փրկել հայերին ու թուրքերին՝ չաղաթայների թիկունքում աղմուկ բարձրացավ, Վահեն ա-

զատ շունչ քաշեց:

- Արիացե՛ք, Եղբայրնե՛ր, մեզ օգնության են շտապում,- գոռաց՝ հաշվի չառնելով կողքի ու ուսի վերքերը, նորից մարտ մտավ:

Զաղաթայների թիկունքում հայտնված հայերը այնպիսի թափով զարկեցին, որ սրան չդիմացան, քանդեցին շարք ու կարգ: Չորականի պարզ հաշիվ էր, ընկան երկու սրերի արանքը, չաղաթայներին կոտորած էր սպասում: Յայերն ու թուրքերը սաստկացրեցին ճնշումը:

Լողողանը հասկացավ, որ միայն հրաշքը կարող էր փրկել իրենց: Վճռեց անձամբ մարտ մտնել: Եթե պարտվեր, չեր ազատվի տիրակալի պատժից, լավ է այստեղ, մարտի դաշտում որպես բատիր զարկվելը, թեր-ս Ալլահը տեսնի իր անձնազոհությունը, փրկի իրեն, անպարտ անի տիրակալի առաջ:

Նժույգը քշեց դեպի հայերը, այս պահին ոգ-որված հայերի հարձակմամբ, մարտի դաշտ իշավ Ղարա Յուսուֆը: Նա հասկացավ. Եթե մարտի դաշտ չիջնի, անձամբ կկռվի, հաղթանակի պատիվը կմնա Վահեին:

- Յա՛, Ալլա՛հ, Ալլա՛հ աքպար,- գոռաց ու յաթաղանը ճոճելով մարտի ելավ:

Ամենքն էլ մարտի դաշտում զգացին հաղթանակի շունչը: Սակայն կռիվը շարունակվում էր, չաղաթայները չեին նահանջում - այս պահին էլ երեք անգամ ավելի զինվոր ունեին, քան հայերն ու թուրքերը միասին:

- Յե՛, Չինգիզ Խանի անհաղթ սերունդ, Մեծ Թամուրի քաջեր, մեզ հետ է Չինգիզ Խանի ոգին, մեզ հետ է անհաղթ Սալդեյը, զարկեք պիղծ հայերին ու շարիաթը մոռացած թուրքերին:

Չորավարի մարտի մտնելը մի պահ ոգ-որեց զինվորներին, սակայն այն չեր կարող երկար տ-ել:

Մարտի դաշտում ամեն ոգ-որություն ժամանակավոր է, կախված է զինվորի տոկունությունից, զորավարի հմտությունից:

Այդ միջոցին Վահեն, զարկելով աջ ու ձախ, առաջացավ դեպի Լողողանը:

- Չաղաթայ զորավար, արի վերջ տանք կռվին, դու շրջպատված ես: Թե՞ դու չես ընդունում մարտահրավեր, թե՞ սովոր ես անզեն մարդկանց սպանելու,- գիտեր, որ գոռոզ մարդ էր Լողողանը - չսխալվեց: Չաղաթայը կռվի համար զինվեց նիզակով: Սասունցի ասպետներից մեկը Վահեին նետեց ծանր նիզակը, սա գլխով շնորհակալություն հայտնեց, նիզակը սեղմեց թ-ի տակ, նետվեց առաջ: Երկուստեք հմուտ նիզակավորներ էին, խոլյա տվեցին նիզակներից: Վահեն նորից նժույգը լարեց չաղաթայի դեմ: Այս անգամ նրանց վիճակված չեր խոլյա տալու նիզակներից: Երկուսի նիզակներն էլ հասան նպատակին, Լողողանը, կրծքից խոցված, ընկավ նժույգից, ծանր վերք ստացավ նա- Վահեն:

Երերաց, գերմարդկային ճիգով իրեն պահեց թամբին:

«Չընկնե՞ս, - նրա մեջ գոռում էր ինչ-որ մեկ այլ զորական, ինչ-որ հզոր զորական պահում էր նրան, ասես ուսով պատ էր տվել, պահում էր թամբին,- չընկնե՞ս, դու հայարիական ասպետ ես, դու քեզ փառքով պսակեցիր, նա- մեզ...»:

Նժույգը կենդանական բնազդով զգաց տիրոջ վիճակը, սկսեց ետեւ տալ, այնպես, որ տերը չընկներ:

Յայերն ու թուրքերը դողոդարեցին մարտադաշտը «Կեցցե»-ներից՝ ի պատիվ հայ ասպետի:

Զաղաթայսները վերսկսեցին կռիվը, սակայն զորավարի մահը կոտրել էր նրանց ոգին, սկսեցին նահանջել: Արդարամիտ լինենք, չաղաթայները գիտեին նահանջել, չխուճապեցին:

Արդ, ամենքն էլ ենթարկվում էին Ալիմարդանին, որ ասես Լողլողանի սպանվելուն էր սպասում, որպեսզի զորքերը հավաքի իր հրամանի տակ: Թե- կային այլ թումանապետեր, սակայն Ալիմարդանը արագ տիրապետեց իրեն: Նա մեկ վճռեց հարձակվել հայերի վրա, մեկ ել՝ միտքը փոխեց, չցանկացավ վտանգել ստանձնած պաշտոնը: Յասկացավ, որ իրենից վճիռ են սպասում, մի վճիռ, որով կանոնավոր նահանջի մեջ պիտի դրվեին զորքերը, հեռանային, փրկել զորքերը լիակատար կոտորածից: Նա ուրախ էր կռվի ելքից, տիրակալին կզեկուցեն, որ նա փրկել է զորքերը, իսկ երբ հիշեց հայ աղջկան, զգաց, որ այս պարագան իրեն օգուտ կրերի: Կարող է ստանալ Լողլողանի պաշտոնը: Մի՞թե ավելին կարող է երազել անանուն մի զորական, որի միակ ունեցածը քաջությունն է: Նա չինգիզիդ չէ, այլ կերպ, քան քաջությամբ չի կարող բարձր դիրքի հասնել:

Դարա Մահմեդը ջոկատներ ուղարկեց չաղաթայներին հալածելու, ապա հրամայեց հավաքել ռազմավարը, գենքերն ու գումակի հարստությունները: Նա գոհ էր հայերից, հատկապես փակիլ-ան Վահեից, որին անսքող նախանձով էր նայում Յուսուֆը:

Ուխտի անդամները հավաքվել էին իրար գլխի, կատաղած էին, զոհվել էր Փայլակը, գերի էին տարել Անահիտին: Յայերի այդօրինակ տրամադրությունը անհասկանալի էր Դարա Մահմեդին: Ինչպե՞ս կարելի է չուրախանալ այսպիսի հաղթանակի համար, այս ճակատամարտի լուրը կթնդա աշխարհով մեկ, Լանկ թամուրը պարտվել է Դարա Մահմեդից, այս է կար-որը նրա համար:

Երբ Անահիտի մասին լուրը հասավ Թովմային, ասես երկնակամարը փուլ եկավ գլխին, այնպես տնքաց, որ Վահեն բռնեց նրա ուսերը, որպեսզի վայր չընկներ, կամ կաթվածահար չլիներ:

Ծանր վիրավորվել էին Յայկարամը, Մհերը, Ոսկանը: Թեթ- էին պրծել Կայծենն ու Սոսը: Նրանք եղել էին դարանակալների հետ: Կայծենը, արդ, իր սովորական վիճակի մեջ էր, պատրաստ հայիոյելու, լաց լինելու, եկեղեցին ու արար աշխարհը անիծելու:

Ինչ վերաբերում էր Սոսին, ապա նրա ու ջոկատի մասին խոսելն ավելորդ էր, միայն այսքանն ասաց.

- Մեծ կոհիվ էր, կռվեցինք, պրօանք: Մերոնք շատերին զարկեցին, մերոնցից էլ մեկը զարկվեց, երեքը վիրավորվել են,- ոչ մի բառ ավելի, քանզի կոհիվը նրա համար սովորական գործ էր, այնպես, ինչպես շինականը կխոսեր հողի մասին:

Յաղթանակի բերկրանքը մթագնել էր Անահիտի գերեվարումը: Դարա Մահմեդի շնորհավորանքներն ու հավատարմության խոստումները ընդունեցին անտարբեր, քանզի ամենքն էլ անկեղծ սիրում էին Անահիտին:

Ամենքից արագ սթափվեցին սասունցիները, քանզի ի ծնե ռազմիկներ էին: Սրանք առաջինն էին, որ սկսեցին փնտրել սպանվածներին ու վիրավորներին: Չոհվածների դիակները, նա- վիրավորներին վերցնելով սայլերի վոա, բռնեցին Սասոն ճամփան: Դարա Մահմեդը մեծ բաժին հանեց նրանց ռազմավարից, փոխադարձ օգնության պայման դրեց նրանց հետ: Սասունցիները մռայլ գլխով արեցին, գլացին, այդպես ել սուլթանը չհասկացավ, ընդունեցին, թե՞ չընդունեցին իր առաջարկը: Ռազմավարից ստացած գենքերը Միերը թաքցրեց Թիլում:

Նրանց տանը հավաքվեցին Ուխտի անդամները: Երբ իրար նայեցին, նոր ասես հասկացան, որ չկան Փայլակն ու Անահիտը, նորովի բորբոքվեց նրանց վիշտը:

Վահեն առաջարկեց միրկագնել Անահիտին: Նա այլ ելք չէր տեսնում, թե- ինքն էլ էր կասկածում գործի հաջողությանը: Վճռեցին այդ գործը հանձնել Կայծենին, քանզի չաղաթայները խենթերին ձեռք չեն տալիս: Վճռեցին առավոտյան ոսկի հայթայթել փրկագնի համար:

Այսպիսով, հայերն ու Դարա Մահմեդը ծանր հարված տվեցին չաղաթայներին, կանգնեցրին Լանկ Թամուրի գործերի առաջխաղումը Յայոց աշխարհում, նա- դեպի սուլթան Բայազետի սահմանները...

* * *

Յաջորդ օրը Ուխտի անդամները զբաղված էին ոսկի հայթայթելով: Օգևեց, չգիտեն որտեղից հայտնված, Յարություն վաճառականը: Նա մի մեծ քսակ ոսկի տվեց, խոստացավ այդ գործում օգնել Կայծենին:

Ծանր սրտով Թիլի գերեզմանցում հողին հանձնեցին Փայլակին ու մյուս զոհվածներին: Փայլակը զոհվեց, այդպես ել չիմանալով ընտանիքի ճակատագիրը: Յողը սիրով ընդունեց իր անձնազոհ զավակներին...

... Յո՞ղ Յայոց, սրբության սրբոց, անձնազոհ զավակներիդ վերջին հանգրվան՝ ցողված զավակներիդ սուրբ արյամբ, որ ծիլ ու ծաղիկ ես տալիս, հաց արարում, նա- գերեզման դառնում: Յայոց սո՞ւրբ Յող, Յո՞ղ Յայրենի՝ Մայր Յայաստան...

Ինչպես Եր-ում էր, Ուխտի անդամներին բախտ չէր վիճակված հանգիստ առնելու, անսպասելի լուր ստացվեց, լրաբերը Միերի եղբորորդին էր՝ Թորգոմը: Յայ ուխտավորների վրա հանկարծակի հարձակվել էին Շարաֆին ու Յուսուֆի զիսվորները, – այդ ամենը հայոց հևմենի՝ Գլակայի շրջակայքում:

Շարաֆին կատարել էր խոստումը, ցեղը տարել էր մեծ թալանի...

Յայերը հեռացել էին Խութի կողմերը, հանկարծ վրա էին տվել այս անգամ չաղաթայները, շրջապատել էին տանջահար հայերին: Չաղաթայները վճռել էին պարտության վրեժը հանել անպաշտպան ժողովրդից: Օրհասական այս պահին այնպիսի տեղից էր եկել օգնությունը, որ զարմացրել էր հայերին: Թուրք փիր Յասան զորապետը հարձակվել էր չաղաթայների վրա, ցրիվ էր տվել Նրանց, մի մասին էլ կոտորել էր: Փրկված հայերին ուղեկցել էր մինչ-լեռները: Ուխտի անդամները զարմացած իրար էին նայում: Այն, որ Ղարա Յուսուֆը դրժել էր երդումը, չեղ զարմացրել, այլ այն, որ օգնության էր հասել մեկ այլ թուրք՝ Փիր Յասան զորապետը:

- Իրավացի էինք, որ չեինք հավատում Շարաֆին ու Յուսուֆին: Դե, Շարաֆին հայերի ոխերիմ թշնամին է,- խոսեց Վահեն,- Նրանից այլ բան չեի սպասում, իսկ ո՞վ է Փիր Յասանը, հարկ է պարզել, շնորհակալություն հայտնել:

- Թեր-ս նախնյաց մեջ հայ արյուն կա,- ասաց Ասողիկը,- թե չէ՝ թուրքը միշտ էլ թուրք է մնում, լավ բան մի սպասիր: Խնդրենք Զաքանիային պարզելու այս պարագան:

Զաքարիան գլխով արեց:

Խուսափում էին Անահիտի մասին խոսել, չեին ուզում վշտացնել Թովմային: Անահիտին հիշում էին որպես հարազատ քրոջ, տանջվում էին նրա համար, խղճում էին Թովմային, գիտեին նրանց սիրո մասին:

- Այլ-ս չե՞մ կարող սպասել, գնում եմ Անահիտին փնտրելու, թեր-ս կարողանամ օգնել Յարությունին ու Կայծենին:

- Դու Վիրավոր ես, հայր սուրբ,- դժգոհեց Վահեն:

Թովման ուսերը թոթվեց՝ ի՞նչ փույթ:

- Չաղաթայները գնում են Վասի կողմերը: Անահիտը գումակում է, Նրան մի ամբողջ ջոկատ է հսկում: Փախցնելու հևար չկա,- հավաքվածները զարմացած իրար նայեցին, ապա Զաքարիային, որ չգիտես ինչպես էր հասցրել իմանալ այդ տեղեկությունները: Այստեղ, Ուխտում, Զաքարիան ստանձնել էր Յայոց Գաղտնի Ուխտի լրատուի, սուրիանդակի ու խուզարկուի գործը: Թե ինչպես էր մարդիկ գտնում այդ գործի համար, ոչ ոք չգիտեր: Երբ իմացավ Կայծենի ու Յարություն վաճառականի առաքելության մասին, ասաց, որ հնարավոր է, եթե տիրակալը չիմանա, որ Անահիտը Ուխտի անդամ է: Տիրակալը որքան ոսկեպաշտ, այնքան էլ հետ-ողական է թշնամիներին պատժելու գործում: Երբեք չի ների Անահիտին, միայն թե այդ մասին չհայտնեն Շահ Մելիքին ու Սա-

հարիս, մնացածների մտքով ել չի անցնի խորանալ այդ գործի մեջ:

Մինչ նրանք խորհում եին Անահիտին փրկելու մասին, Վերջինս կապկապած պառկած էր սայլի մեջ: Չաղաթայները աչալուրջ հսկում եին նրան: Յայ գորապետ աղջկա մասին ամենքն ել զիտեին, խորհում եին, որ հայերը կփորձեն ազատել նրան: Այդ պարագայի մասին խորհում էր նա- գաղտնապահ Սահարը: Նրա մեջ ինչ-որ անհասկանալի բան էր կատարվում: Նա առաջին անգամ էր կյանքում կռվող կին տեսել, կին, որ գնում էր անձնազնության հանուն Յայրենիքի, այսինքն կին Բատիր... ինչ տեսել էր Անահիտին, դարձել էր անտարբեր շրջապատի հանդեա: Վճռել էր խնդրել տիրակալից իրեն տալ աղջկան: Երբ չեին խանգարում, երազում էր Անահիտին, նրան իր գործում էր պատկերացնում: Այս, որ հայուիին կույս աղջկա էր, հասկացել էր առաջին իսկ պահին: Բռնել էր աղջկա ամոթխած հայացքը, երբ ցանկացել էր ծածկել մերկացած ուսը: Թե- վիրավոր է, սակայն սեղմվում էր սայլի ճաղերին, որպեսզի զինվորները չտեսնեն մերկ ուսը:

Մոկս քաղաքի մոտ պարտված զինվորներին էր սպասում տիրակալը: Լանկ Թամուրը վճռեց գնալ Վանի վրա, քանզի շրջապատի գավառներից միայն Վանն էր դիմադրում, մնացածները՝ Բաղեշի ու Խուրի Շարաֆ Ամիրան, Ածեկի Սահանդ իշխանը ճանաչել էին նրա իշխանությունը:

Սահարը, թաքցնելով սրտի կակիծը, տիրակալին հայտնեց, որ հավանական է այդ աղջկը Յայոց Գաղտնի Ուխտի անդամ է, գորապետ:

Լանկ Թամուրը վճռեց Անահիտին այրել Վանում, իսկ մինչ այդ, աղջկան ընծայեց Սահարին: Սահարը մի սխալ էլ թույլ տվեց, ասելով, որ Անահիտը Բժնիի բերդապահ իշխանի դուստրն է, տիրակալը կատադեց:

- Աղջկան էլ կայրենք հոր պես, թող նա ել զգա հոր տառապանքները, իսկ մինչ այդ, քեզ եմ ընծայում, վայելի՞ր, Սահա՞ր: Յամոզված եմ, որ այդ քածը ոչ մեկին ընկերներից չի մատնի: Ես լավ եմ ճանաչում հայերին, սակայն հարկ է բռնել Ուխտի անդամներին ու այրել մեկիկ-մեկիկ, մինչ- վերջին մարդը, որպեսզի հայերը հասկանան, որ Ուխտը այլ-ս գոյություն չունի...

Ներկաները հասկացան՝ հայոց հողը ծածկվելու է դիակներով, այրվելու են քաղաքներն ու շեները, քանզի տիրակալը այսպիսի պարտություն առաջին անգամ էր կրում: Արդ, նա ցույց կտա, որ Զինգիզ Խանի արժանի հետևորդն է:

Այդ ամենին անտեղյակ, սպասելիք վախճանին անտարբեր, Անահիտը երազում էր Թովմային, իրենց նոր հանդիպումն էր երազում: Նա վաղուց իրեն վարժեցրել էր իրենից հեռու վանել անխուսափելի վտանգն ու խորհել, երազել՝ եթե փրկություն չկա, ինչո՞ւ վախենալ, կծկվել վտանգի առաջ: Թովման ասում էր, որ հոգին անմահ է, ինչպես Պղատոնն է ասել՝ մարդ մեռնում է, իսկ հոգին, անջատվելով մարմնից,

տիեզերական անհուսության մեջ միանում է համաշխարհային հոգուն, նորից այլ մարմնի մեջ վերամարմնավորվելու համար, այլ-ս ի՞նչ վախենալ...

Այդ է պատճառը, որ իր հանգստությամբ զարմացնում էր շրջապատողներին:

Պահապան զինվորները, որ Սահարի Ենթականերն են, զարմացել են իրենց պետի վրա: Առավոտյան պատմում են, որ ցախատնից Սահարի մօնչոցներն են լսել, որ նրան կնախանձեր տափաստանի հովատակն անգամ, հովատակը, որը խելագարվում է զամբիկի հոտից...

Սահարը ամեն անգամ խոսք էր տալիս իրեն, զգնալ գերուհու մոտ, սակայն հենց երեկոյանում էր, ոտքերն իրենք էին տանում Անահիտի մոտ: Երբ թումանապետերից մեկը առաջարկեց գերուհուն մի գիշերով իրեն զիշել, կատաղեց, կարող էր սպանել ընկերոջը, եթե այդ պահին տաղավարից դուրս չգար Շահ Մելիքը:

Սահարը առաջին անգամ չէր կույսի տիրում, գիտեր, որ մի երկու օրից նախկին կույսն ինքն իրեն էր ծգտում մերձեցման, սակայն հայուհին ամեն անգամ զգվանք էր արտահայտում, ճանկուտում, կռվում էր մինչ- ուշաթափվելը, ու Սահարը բռնաբարում էր ուշաթափ կնոջը: Նորից ու նորից էր իրեն խոսք տալիս՝ զգնալ Անահիտի մոտ, սակայն չի կարողանում չգնալ: Հույս է փայփայում, որ գոնե մի անգամ Անահիտը կարձագանքի իր փաղաքշանքներին:

Ամեն բան մոռացել է, լավ է, որ օգնականը՝ Օրդուն, խելացի մարդ է, կարողանում է անհրաժեշտ լուրեր հայթայթել տիրակալի համար:

Մինչ Սահարը զբաղված էր գերուհուն լլկելով, զորակայանում դեպքերը զարգանում էին պատերազմական սովորական հունով: Տիրակալը զայրացել էր, մի քանի թումանապետերի էր պատժել, սակայն բերդաքաղաքը կանգուն էր:

Լանկ Թամուրը զայրանում էր Եզրին իշխանի համառության վրա: Շատ ու շատ թագավորներ էին խոնարհվել իր առաջ, իսկ այս հայը դիմադրում է: Այս քաղաքի քանի չեղանակամարդությունը կազմակերպում է Սահարը պարզել է, որ Եզրին իշխանը հռչակավոր Արծրունիների տոհմից է, մի տոհմ, որ վաղուց մարել է, գոյություն չունի: Տիրակալը վճռել էր այսպես պատժել քաղաքի պաշտպաններին, որպեսզի դաս ու հիշողություն դառնա մևացների համար: Նա չինական վառող է սպասում Սամարդանդից, ուզում է իր հզորությունը վկայել դեռ չտեսնված, չլսված պայթյունով, ցնցել աշխարհը...

- Վերջապես տեղ հասավ վառողը: Յուրտ մտավ թումանապետ Փեքշը:

- Որքա՞ն ժամանակ է քեզ պետք պարիսապը քանդելու համար: Որտե՞ղ ես դնելու ականը, տեղը ընտրե՞լ ես:

- Այո՛, տիրակա՞լ: Երկու տեղ եմ դնելու ականները, մեկը գլխավոր

դռան մոտ: Պարիսավ այդ մասում կառուցողները դրել են ժայռի վրա, կապը պարսպի ու ժայռի միջ- շատ թույլ է, դժվար չեն տալ...

- Ե՞րբ կպայթեցնես:

- Վաղը առավոտյան տիրակալի զորքերը կմտնեն քաղաք, թող երկու...

- Սպասի՞ր, ինչ ասացիր՝ բավական է, մնացածը քո գործը չէ: Գիտեմ, քեզ գիտունի տեղ ես դրել, ամենքին խելք ես սովորեցնում... Ավսու, Էստեղ չէիր՝ կուղարկեի Թակաթալան գրավելու,- դարձավ Շահ Մելիքին,- երկու թուման դիր ականսերի դիմաց, ինար չտաս հայերին ուշքի գալու, թող ներս լցվեն: Գևացե՛ք, Ալլահը ձեզ հետ:

Այս գիշերը նման չէր մնացած գիշերներին: Տիրակալի հրամանով դարձյալ հարձակվեցին պարիսավների վրա, սակայն այս անգամ այնպիսի տեղերում, որտեղից դեռ փորձ չէին արել հարձակվել: Դա արկում էր քաղաքի պաշտպանների ուշադրությունը շեղելու համար: Եզդին իշխանի մեջ կասկած ծնվեց, խստացրեց հսկողությունը, ջոկատներ տեղաբաշխեց պարիսավների այդ նոր գրոհվող հատվածների վրա:

Իշխանը այդ քառասուն օրերի ընթացքում նիհարել էր, քամու տակ մշտապես լինելուց ս-ացել էր, մորուքի մեջ ավելացել էին սպիտակ մագերը: «Արդյոք իրավացի՞ եմ, որ կռվում են Լանկ Թամուրին, փրկեց քաղաքը, մարդկանց: Իսկ ես ինչի՞ վրա եմ դրել հույս: Տեր Աստված, մի՞թե դատապարտված ենք, մի՞թե չես սատարելու, փրկիր քեզ հավատացողներին... Իսկ ինչպե՞ս կվարվեին արիական նախնիք, մի՞թե նրանք չեին կռվի, մի՞թե այլ ելք կա, որ ես չգիտեմ, թեր-ս միահամուռ ու միակամ զարկեին չաղաթայներին, ինչպես զարկեցին Լողլողանին ու կոտարեին երկրից, իսկ դավաճաններին բոլորին սրի կքաշեին, թույլ չէին տա մասնատելու ուժերը, համոզված եմ այդպես կվարվեին Յայարիները...

Այլ բան խորհեց ու վախեցավ խորհածից... «Իսկ եթե այս ամենը բարբաջանք է, որ Աստված ի գորու չէ մեզ փրկելու, դե՛, թող փրկի չ՞ո՞ որ արդար ենք, ազնիվ, պատվիրանները կատարում ենք: Ինչո՞ւ ես Տեր Աստված պաշտպանում Լանկ Թամուրին, այդ գազանին: Չե՞ որ քեզ ենք և սվիրված... Մի՞թե ի գորու չենք փրկելու երեխաններին, կանանց ու ծերերին... Ես խելագարվում եմ, մեղա՛, մեղա՛: Տեր Աստված, - գլուխը դրեց սրի երախակալի վրա դարսած ձեռքերին,- իսկ եթե այս ամենը սո՞ւտ է, երկինքը դատա՞րկ... Դարձյալ մեղա, իսկ եթե մենք՝ հայերս, սիսալվե՞ցինք ու լքեցինք մեր հեթանոս աստվածներին, մեղա՛, մեղա՛...»:

- Ի՞նչ կա, Պարգ-՝, հարցրեց, նայեց զարմացած, գիտեր, որ թիկ-նապահին վախեցնել դժվար էր, սակայն սա նայում էր վախեցած,- ի՞նչ է պատահել:

Թիկնապահի այլայլված դեմքին քաղաքի կործանումն էր դրոշ-

ված, սոսկաց, ուզեց իրենից վասել տեսիլքը՝ այրվող քաղաք, դիակներ, դիակներ... Խելակորուս մայրեր, ագռավների երամներից ս-ացած երկինք...

- Տեր իմ, գլխավոր դուան մոտ չաղաթայները խարույկ են վառում, սյունին սպիտակազգեստ կին են կապել,- կախեց հայացքը,- ներո՞ղ եղիր, տեր իմ, գումական եմ: Դա այն օրիրողն է, որ եկել էր աբեղայի հետ...

- Անահի՞տը,- ապշեց, վրա տվեց,- չե՞ս սխալվում:

- Տեր իմ, դու ի՞ն գիտես, թե որքան սրատես եմ: Յետո հիշո՞ւմ ես, Մայրիների պուրակի կովի մասին լուր բերողն ասաց, որ գերել են Ուխտի օրիրոդին՝ Անահիտին:

- Լոի՞ր,- մօմօացրեց իշխանը,- գևանք:

Բարձրացան գլխավոր դուան աշտարակը, ճանաչեց Անահիտին: Կյանքում հազար մահ տեսած իշխանը սոսկաց:

- Խեղճ ազգ: Ինչո՞ւ ես այսքան անմիաբան, մի տեղ անգամ աղջիկն է մարտի ելնում, զարկվում մարտում, մեկ այլ տեղ՝ մի իշխան, որ հզոր զորական է, սուրը վայր է դնում՝ առանց թաթախելու թշնամու առյան մեջ: Տեր Աստված սա՞ է քո աստվածային արդարությունը... Խեղճ աղջիկ,- ձեռքը տարավ ճակատին,- ինչ ճակատագրի արժանացրեցին աղջկան... Յրեշը աղջկան էլ հոր պես այրելու է: Ո՞ւմ մեղքով, այն մարդկանց, որոնք ծախեցին ազգը՝ Սահանդները, Վարդեսները, Պողոսները, սակայն,- մինչաց, - ազգը ապրելու է Անահիտներով, Թովմաներով, Միերներով, Մարտիրոսներով, Յայկերով, Վահագներով: Սո՞ւտ է, չես կարող ստրկացնել ազգս հայկազյան: Դու էլ կանցնես, տափաստանի շնագայլ, ու միայն անեծք կթողնես քեզանից հետո...

Լանկ Թամուրը անսխալ հաշիվ էր արել: Գիշերով վճռեց խարույկ վառել, դրանով շեղեց հայերի ուշադրությունը, ական դնողները հասան իրենց նպատակին:

Զաղաքի բնակիչները հավաքվել եին պարսահի վրա: Կանայք հեկեկում եին, այրմարդիկ սեղմում եին բռունցքները, երդվում եին կռվել մինչ- վերջ ու մի բան էլ ավելին:

Վան քաղաքի վրա բացվեց մի մառախլապատ առավոտ:

- Թող կատարվի Ալլահի կամքը, այրե՛ք, պայթեցրե՛ք: Ալլա՞հ աքպար,- վերջին խոսքերը գոչեց տիրակալը, վեր բարձրացրեց ձեռքերը:

Մի քանի վառված կպրաջահեր գցեցին հսկա փայտի կույտի վրա, որի կենտրոնի սյանը կապված էր Անահիտը: Խարույկը բռնկվեց մեկեն, քանզի դույլերով յուր էին լցրել փայտերի ու խոհիվի վրա: Ծուխն ու բոց երկինք ելավ, ևա- հայերի հայացքները, երկինք, առ Աստված հայացքները, ևա- հայերի աղերսը...

- Տե՛ր Աստված, փրկյա ազգս Յայկազյան... Մի՞թե չես լսում, Տեր Աստված, մի՞թե անհույս է մեր սպասումը, այլ-ս ի՞նչ հավատք առանց հույսի...

Յանկարծ շրջապատը դորդաց ահավոր պայթյունից: Պարսպի մի ամբողջ հատված երկինք բարձրացավ... Երկինք թռան քարեր, հող ու մարդկային մարմիններ, մարմամասեր՝ այլանդակված ձեռքեր, գլուխներ, ոտքեր...

Պարսպի մեջ բացվեցին երկու մեծ անցքեր:

Յայերն առաջին անգամ էին տեսնում, լսում այսպիսի պայթյուն, առաջին անգամ տեսնում այսպիսի սարսափ, սա կայծակի զարկ էր, ամպի որոտ, նա- անկասելի, հանկարծակի, աննկարագրելի սարսափ, անմեկնելի, թեր-ս այսպես է փլվել երկինքը, թեր-ս այսպես են փլվում աստվածների գահերը...

- Առաջ,- գոռաց Լանկ Թամուրը,- Ալլա՞հ աքպա՞ր իմ բատիրներ...

Թումանները հեղեղվելով, լցվեցին քաղաք...

... Ի՞նչ գոել, ինչպե՞ս պատմել հայերի հուսահատ կռվի մասին, ինչպե՞ս նկարագրել կռվող, մեռնող հայերին... Ինչպե՞ս հետայսու աղոթել Աստծուն, ինչպե՞ս անիծել Աստծուն, որին պաշտելով, որի անունը շուրջերին՝ մեռնում էին հայերը: Բարեգութ Աստծո աչքի առաջ մեռավ Վանը...

Լանկ Թամուրը գազանությամբ գերազանցեց ինքն իրեն, գերազանցեց բոլոր այն գազաններին, որ Յայոց հողն էին մտել...

Կանանց ու երեխաններին գերեվարեցին, այրմարդկանց իրար կապելով ցած նետեցին պարհսպներից: Գահավիժածները այնքան շատ էին, որ վերջինները չէին սպանվում, քանզի ընկնում էին դիակների կույտերի վրա: Դիակների կույտերը հասնում էին մինչ- պարսպապունկ:

Արյան գոլորշի էր բարձրանում մեռնող Վանից: Յոթ հազար մարդ սպանվեց քաղաքում: Վերջին հայը Եզդին իշխանն էր: Յաթաղաններից խոցոտված, նետը կրծքին մեխված, սրին հենված կանգնել էր պարսպի եզրին, ցած էր նայում: Արյան գոլորշի պարուրեց Նրան, գլուխը պտտվեց: Մարող աչքերով նայեց Ար-ին՝ Ար- Աստծուն: Նրա աչքում հապատություն կար, մեռնում էր չպարտված Յայարիական ասպետը... Երկար-Երկար նայեց Ար-ին, սրին հենված, Ար- Աստծո առաջ մեղավոր ու անմեղ հայարիական հայը, հանգավ սրին հենված, մեռավ կանգնած...

Զանի - քանի տարի է պետք, որ Վանը Վան դառնա, քանի-քանի սերունդ պիտի ողբային անդառնալի կորուստը, որքան լաց ու կոծ պիտի լսի մեռնող, սակայն չընկճված Վանը...

* * *

Աշխանային մանր անձր- էր մաղում: Օրը մօայլ էր, համահունչ Թովմայի խոհերին: Զեռնափայտին հենվելով՝ քայլում էր Վանի փողոցներում:

Ամենուր դիակներ էին, դիակներ... որ կողմ շուր գայիր, դիակներ են: Յրդեհները վաղուց հանգել են, այլ-ս նյութ չկա այրվելու, ս-ացել են տների պատերը, անկենդան ս-, ինչպես հայոց երկնակամարը, ինչպես հայոց ճակատագրի ճամփաները...

Թովման փնտրում է գլխավոր դուռը, ինչպես պատմել են, այնտեղ էր Անահիտի խարուկը: Գնում էր մի բուր մոխիր վերցնելու իր մոխրացած սիրուց:

Ամեն բան ունայնություն է, ոչինչ արժեք չունի այս կյանքում, չկան ո՞չ Լանկ Թամուրը, ոչ չաղաթայները, անգամ այս ծովակը չկա, որին նայում է ու չի տեսնում, չկա այս երկինքը, այս դատարկ երկինքը...

Վանում միայն շներն են մնացել, որ քաղցած ոռնում են, ոռնում են վանի քաղցած շները...

Ոհա գլխավոր դուռը: Դուրս եկավ դոնից, առջ-ում մի մեծ մոխրակույտ կար: Այս մեկն էր, այլ մոխրակույտեր չկան, սա է Անահիտի մոխրակույտը, այս, ինչ մնացել է իրենց սիրուց: Ս- մոխիր, - ուրիշ... Ամեն բան ունայնություն է, քանզի վերջը մահն է: Ոչինչ չկա արժանի ուշադրության, ապրելու արժանի, ունայնություն է, համապարփակ ունայնություն... Արժե՞ ապրել, ամեն օր մոտենալով մահին... Վե՞րջ, կարելի է գրկել այս մոխրակույտն ու փակել աչքերը, սպասել, մինչ- Տեր Աստված կբարեհաճի մահ ուղարկել, որպես ավարտ այս տանջանքներին, որ նա- կյանք է կոչվում... Ինչո՞ւ ապրել, միայն նրա համա՞ր, որ ուտես, թնես, աղոթես Աստծուն, որ խարի ու խարվի, որ ապրի, ամեն օր մահվանը մոտենալով... Իսկ սա Անահիտի մոխրակույտն է...

Մի բուր մոխիր հավաքեց, լցուց քսակի մեջ, պահեց ծոցում: Սա էր, այլ բան չկար Անահիտից: Նա իր հետ է, իր ծոցում, իր կինը է, իր աղոթքների ընկերը, իր աստվածուին, մնացածն ունայնություն է...

- Ո՞վ ես, հայր սուրբ,- մի ծանր ձեռք իշավ ուսին, ետ նայեց, քահանա էր, լանջախաչով, սպիտակամազ:

Թովման իրեն տեսավ շրջապատված շինականներով, եկել էին դիակները թաղելու, Յայարիական սովորությութ էր, անթաղ չեն մնում Յայաստանում մեռելները...

- Մեծորբայից եմ, Թովմա աբեղա,- հազիվ լսելի, ասաց Թովման:

Զահանան գրկեց նրան:

- Ականջալուր եմ, հայր սուրբ, գիտեմ գործերդ ու հոչակդ: Պաշտում են քեզ հայոց աշխարհում, Բարդողի եպիսկոպոս, քանզի խաչի հետ սուր ես կրում: Մեծ է վիշտդ, ապավինիր Աստծուն,- շոյեց աբեղայի ուսը,- Թովմա՝, որդի, արդ, չաղաթայները հեռանում են Մավրինահր, տուն է գնում իրեշը, գնում է թալանը լափելու: Օ՛, Տեր Աստված, դու պատժիր նրան:

Թովման խաչակնքեց շինականներին, բռնեց Մեծորբայի ճամփան:

* * *

- Տե՛ր Աստված, մի՞թե մեղանչել ենք, Տե՛ր Աստված, որ արդարադատ ես, բարեգութ, մի՞թե չես տեսնում մեր տառապանքները:

Յովիաննես Եպիսկոպոս ալեգարդ գլուխն առել էր ափերի մեջ, օրորվում էր բազմականուն նստած:

Սով էր Յայաստան աշխարհում...

Սով, ի՞նչ է սովը, խորհում էր վանահայրը, երբ շտեմարաններում ու հորաններում մկներն են վազվզում: Դա դեռ սով չէ: Սովը մարդկանց աչքերում է, կանաց սառած աչքերում, շինականի անզորությունից կատաղած հայացքում: Յարյուր-հարյուրավոր անթաղ մեռելների բաց աչքերում է սովը, մամիկների կիսակույր աչքերում, երբ փեշի տակ մի կտոր հաց է պահել ու չգիտե թոռներից որին տա: Նրա կիսակույր աչքերից թափվող արցունքներում են սովի գույժերը... Սո՞վ, սո՞վ, տեսել է վանահայրը, սով, երբ մեռյալների վրայից ագռավները չեն դադարում կրնչալուց, քանզի քաղցած են ագռավները: Դիակների վրա ոսկորներից զատ ոչինչ չկա... Սովը նոր է սկսվել Յայաստան աշխարհում, չէ, այսօր դեռ կուշտ են ագռավները, գոհ են ագռավները...

Վանահայրը շրջել է Ծովակի շեներում, տեսել է հազարավոր սովյալներ: Դառևացած ու դժբախտ, եկել է վանք: Որքան կուզեր մեռնել, չտեսներ հոտի դատապարտվածությունը:

Մարդիկ մեռնում են առանց հաղորդման: Յաճախ մնում են անթաղ: Բորենիներ են հայտնվել ծովակի շեների մոտակայքում:

Ծովակի շեների վիճակը դեռ մի փոքր տանելի է, ծուկ կարելի է որսալ, թեպետ այս եղանակին ծուկ չի բռնվի: Եթե մի փոքր էլ դիմանան, կիասնեն փրկարար քանչարին, եթե հասնեն...

Վանահայրը վանքի շտեմարանի ցորենն ու այսուրը բաժանել է շեների սովյալներին, արդ, վանքում էլ սով է:

- Թող բոլոր վանքերն ել բացեն շտեմարանները, օգնեն սովյալներին, - խոսեց Թովման, հայացքը կախեց: Դաժանացել էր աբեղան, ասես փոխել էին նրան, կենսախինդ մարդը մռայլվել էր, ոչ ոքի հետ չեր խոսում, քայլում էր մտամոլոր:

Վանահայրը կռահում էր, որ Թովման սկսել է պատմության նորագրումը:

- Գրիր, Յայր սուրբ, գրիր մեր օրերի պատմությունը, վիշտդ կմոռանաս, կմոռամաս նա- սովյալներին: Գրիր, թող հետնորդները իմանան, թե ինչ ծանր է եղել, հայ լինելը, հայ մնալը...

Թովման գլխով արեց:

- Սիրազան, գրում եմ, միայն նոթագրում, ամփոփել ի գորու չեմ: Խորհում եմ, որ մի կտոր հացը ավելի է, քան իմ...

Եպիսկոպոսը գլուխն օրորեց, նայեց սիրով, նա- ներողամտությամբ:

- Յոգուդ մեղք մի՛ արա, որդի՛: Դու ավելին ես անում, քան մենք ա-

մենքս: Այլ-ս արգելում եմ, շեները չգնաս, դու զբաղվիր նորագրելով, մատենագրելով:

- Սրբազն, չեմ կարող չգրել սովի մասին...

- Դու, Թովմա՛, սիրելիս, շատ քան ես տեսել, զգացել... ժողովուրդը քեզ սրբերի դասն է հանում, դու հայոց Գաղտնի Ուխտի հոգ-որ սյունն ես: Գրի՛ր, որդի՛,- հոգոց հանեց, նայեց հավաքվածներին,- լուրեր կան, որ Լանկ Թամուրը հանգիստ կթողնի Յայաստանը:

- Ինչի՞ն է պետք սովյալների երկիրը, եթե այստեղ լիներ Վահեն, կասեր, որ տիրակալը գործերը չի քշի սովյալների երկիր, թալան չկա, մթերք չկա, ինչո՞վ պիտի պահի բանակը:

- Իրավացի ես, իցիվ այս տարի հանգիստ թողներ մեզ, շինականը կկարողանար վար ու ցանքս անել, հակառակ դեպքում սովը իսպառ կբնաշնչի ժողովրդին:

- Սրբազն, եթե ամեն վանք օգներ ժողովրդին, թեր-ս մի փոքր մեղմեր սովը,- Թովման խոսելիս զայրացավ, ինչպես վերջերս հաճախ էր պատահում նրա հետ,- շատ հոգ-որներ մոռանում են, որ ժողովրդին են վերադարձնում նրանից վերցրածի միայն մի հատիկը:

Տեղապահը զայրացավ Թովմային, թեր-ս ցանկանում խիստ խոսել նրա հետ, գիտեր, որ վանահայրը կպաշտպաներ հերոս աբեղային, Բարդողի Եպիսկոպոսին:

- Յայր սուրբ, չմեղանչեմ արդարությանը, մեծ-մեծ գործեր ես արել, անծ ես դրել ազգի զոհասեղանին, սակայն վայել չէ հոգ-որիդ այդպես խոսել, զի մենք ապրում ենք Աստծո ստեղծած կարգով, շինականը պիտի տասնորդ տա Եկեղեցուն...

Թովման չհասցրեց պատասխանել, ոչ ել տեղապահը կարողացավ շարունակել:

Վանահայրը գավազանը զարկեց հատակին:

- Լոի՛ր, Վրթանե՛ս, օրե՛ն չէ սպանել Թովմային: Յարգե՛նք նրա վիշտը: Դու, Վրթանե՛ս, չգիտես այն ամենը, ինչ արել ե ու անում է Թովման,

- Նորից գավազանը զարկեց հատակին,- իրավացի է հայր սուրբը, ավելի քան իրավացի, ժողովուրդն է սնում ու պահում մեզ, հարկ է այս պահին սատար լինենք նրան: Աստված մեզ ամենքիս՝ դատավո՛ր, ստույգ է, ծանր կյանքով է մեզ ապրեցնում,- Նորից զայրացավ, զարմացրեց ներկաներին,- թեր-ս ավելիին արժանի չենք, Նորից գավազանը զարկեց հատակին, խոլ զնաց հոնի փայտը: Երբեք այսչափ զայրացած չեին տեսել նրան: Թեր-ս վիրավորվել էր Թովմայի փոխարեն,- քիչ չեն հարուստները, որոնց շտեմարանները պայթում են առատությունից...

- Ավելին չարժենք,- մռմռացրեց Թովման, կրծքի տակ խլրտում զգաց, սեղմեց կրծքի վրայի քսակը, որտեղ Անահիտի Նշխարներն եին՝ խարույկի մի բուռ մոխիրը,-- Ներիր, սրբազն, եթե ոչ մենք, ապա ել ո՞վ, իսկ հարուստներին հարկ է պարտադրել բացելու շտեմարանները,

Ժամ ու պահ չե համոզելու, հարկադրանք է պետք այս ժամին:

Դարձյալ խլրտում զգաց կրծքի տակ, սեղմեց քսակը, դուրս գնաց, զարմացած թողնելով ներկաներին:

Գնաց խուց: Մութ էր, սովոր էր մթանը, գտավ աշտանակը: Վերջին մոմը մնացել էր մի մատնաչափ: Աբեթը զարկեց կայծքարին, վառվեց քուղը, փչելով թեժացրեց բոցը, կացրեց մոմը: Լույսը թրթռաց խուցի պատերին ապա վառվեց հաստատուն, լուսավորեց միայն մի պատը, խուցի միայն կեսը:

Թռվման սարսրաց, իրեն ու Անահիտին տեսավ լուսավորված պատին, տեսավ գրկախառնված, ապա Անահիտն էր հերարձակ արշավում մարտադաշտում, ապա բոցերը բարձրացան, լիզեցին սիրեցյալի ոտքերը, ահա բոցերը վեր բարձրացան, աբեղան այնպես տևքաց,- ասես հոգին դուրս էր թռչում մարմնից: Ջսակը սեղմեց կրծքին:

- Տե՛ր Աստված, ինչո՞ւ, անգութ Աստված,- ցնցվեց, պատին այլ-ս Անահիտը չկար: Ծնկեց հատակին,- Մեղա՛ Տե՛ր Աստված, ների՛ր մեղավորիս, մեղա՛, մեղա՛... Վիշտս կուրացրել է ինձ, ներիր նվաստ ծառայիս: Մեկ-մեկ խորհում եմ, որ սուրս վարսեմ սիրտս, վերջ տամ այս տանջանքներին, սակայն անավարտ կմնա պատմությունը, հարկ է ապրել թեկուզ միայն դրա համար, որպեսզի առաքելությունս հասցնեմ ավարտին: Դա իմ վրեժն է Լանկ թամուրից, բոլոր թամուրներից...,- պատին աշտանակի վերջին մոմը մարեց, խուցը թաղվեց խավարի մեջ, ամեն ինչ անեացավ, անգամ խոհերը խաթարվեցին:

- Այսպես ել մարդու կյանքն է մարում, ու չես ել զգա, երբ է գալու վերջը,- մոմ չուներ, դուրս եկավ իսից: Միջանցքում մութ էր, կիսաբաց դռնից եր-ում էր երկսքի մի կտորը, բակ ելավ:

Լուսինը չեր եր-ում, ծածկվել էր ամպի շղարշով, դա միայն երկնակամարի մի մասն էր, մնացածը բաց էր, աստղալից ու ժպտուն: Տանիք բարձրացավ, ակնակիր մթան մեջ թաղվեց աստղերի մեջ: Ոչ մի լույս չեր խանգարում աստղերին միաձուլվելու: Փնտրեց, գտավ Մեծ Արջի համաստեղությունը, ահա թաթի վրայի երկու աստղերը, թաթի վրայի երկու աստղերից ծայրերը Անահիտին էր, մյուսը՝ իրենը, թվաց թե թաթի ծայրի աստղը ուր որ է կընկնի տիեզերական չարագուշակ խավարի մեջ: Եթե մնացել է, ուրեմն հոգին անմահ է... զգաց, որ տանիքին մենակ չէ, հինգ-վեց քայլի վրա ինչ-որ մեկը կանգնած, երկինք էր նայում: Անսխալ որոշեց՝ Կիրակոսն էր: Երիտասարդ, պրատուն մտքի տեր, զուսպ ու անժախտ մարդ էր: Նա թեր-ս վիշտ ուներ, է, ո՞վ այս աշխարհում վիշտ չունի:

- Կիրակո՞ս,- մեղմ կանչեց, տեսավ, ինչպես սա ձեռքից ինչ-որ բան գցեց, որ թրմփաց տանիքին:

- Յայր սուրբ, ներող եղիր, մտքերի հետ էի...

- Այդ ի՞նչ է,- ցույց տվեց Կիրակոսի ոտքերի տակ ընկած գլանաձառարկան, ինչո՞վ ես զբաղված,- հանկարծ հասկացավ, ապշեց,- դու

աստղե՞րն էիր դիտում: Աստված իմ, սա դիտա՞կ է, որտեղի՞ց, Կիրակո՞ս, դու վաղուց ես դիտում երկինքը...

- Ներիր, հայր սուրբ,- լրեց մի պահ,- եթե իմանա վանահայրը, կվտարի վանքից, թեր-ս բանադրանքի ենթարկի...

- Սպասի՛ր, Կիրակո՞ս, մի շտապիր եզրահանգումներ անելու: Ես միտք չունեմ վանահորն ասելու այս մասին, նա- չմոռանանք, որ դու հերձվողական բան չես անում, այլ դիտում ես երկինքն ու աստղերի ընթացքը: Կիրակոս, դու ինձ բացատրիր այս դիտակից օգտագործելու կարգը, ինչպե՞ս նայել, ո՞ւր նայել:

- Ծնորհակալ եմ, հայր սուրբ, Աստված հատուցե:

Թովման հանկարծ վճռեց երիտասարդ հոգ-որին ուղղություն ցույց տալ կյանքում, որպեսզի զուր տեղը չխախտվի,- դու լսել ես Մեծն Համարող Անանիայի մասին...

- Լսողաց եմ, հայր սուրբ, սակայն ես դեռ նրա մատյաններից ոչ մեկը չեմ ընթերցել, իմ ուսեցածը միայն այս դիտակն է:

- Ես քեզ կօգնեմ, քեզ կտամ Մեծն Անանիայի «Յաղագս Աստղաբաշխության» մատյանը, որը քեզ երկար ու երկար տարիների ուղեցույց կդառնա, սպասի՛ր, չե՞ որ քեզ կոչում են Կիրակոս բանասեր, մի՞թե բանասիրության մասին ուսեցածդ կիրքը հանգել է:

- Բնավ, հայր սուրբ, թեպետ ես դրանց համեմատականում գտնում եմ ինձ հետաքրքրող բաներ, ասենք մեկի ազդեցությունը մյուսի վրա...

- Այդ մասին հետո կխոսենք, ոչ այստեղ, տանիքին - ոչ մթան մեջ, թեպետ տեսնում եմ, որ սիրում ես առանձնանալ ու խորհել մթան մեջ, հասկանալի է, գրույցդ աստղերի հետ է: Ե՞րբ ես տանիք բարձրացել:

- Երեկոյան, աղոթքից հետո տանիք բարձրացած:

- Սակայն տեսքդ, տիրացն՝, սգավորի է, ման ես գալիս գլուխս կախ: Պատմիր վիշտդ, կթեթ-անաս, կիսվիր ինձ հետ: Տեսնում եմ՝ հոգիդ տվայտանքի մեջ է:

- Հայր սուրբ, թույլ տուր աշակերտեմ քեզ, զի քեզանից զատ այլ մարդ չեմ տեսնում այդ կոչմանն արժանի...

- Չեղա՛վ, Կիրակո՞ս, մեղք մի վերցրու վրադ, վանքում շատ կան եր-ելի հոգ-որներ, որ շատ ավելի իմաստուն են, քան Աստծոն ծառա Թովմա աբեղան, նա- Աստծուն մատուցած ծառայություններով:

- Ո՞չ, Հայր սուրբ, թույլ տուր առարկեմ, դու քո մեջ մարմնավորել ես իմաստասերին ու մարտնչող հոգ-որին: Դու սուրբ ես հոչակված երկրում, ժողովուրդը պաշտում է քեզ, Դու կովել ես Մարտիրոս դյուցազնի հետ կողք-կողքի, դու Բարդողի եպիսկոպոս ես հոչակված: Ո՞ւմ ընտրեմ ինձ ուսուցիչ, եթե ոչ քեզ, որ նա- այսչափ վիշտ ես տեսել...

Թովման նայեց երիտասարդին, որի երկար մազերը ծփծփում էին ուսերին:

«Գեղեցիկ է Կիրակոսը, կարող է ուզածդ աղջկան երջանկացնել, դառնալ ընտանիքի հայր... ինչո՞ւ է իրեն նվիրել եկեղեցուն: Տեր Աստ-

ված, ինչո՞ւ ես այս Երիտասարդին գրկում ամուսնանալու Երջանկությունից, սուր կրելուց», - զգաց, որ հոգում Կայծենի բողոքն էր ահագնանում...:

- Տեր Աստված փորձություն է ուղարկում մեզ, զիսվենք համբերությամբ,- մտովի համաձայնվեց տիրացուի խնդրանքին, որոշեց օգնել Կիրակոսին,- սովից հարյուրավոր մարդիկ են մեռնում, վանքերի օգնությունն էլ սակավ է մարդկանց փրկելու: Եթե Լանկ Թամուրը գարնանը չգա պատերազմով, ինար կլինի սովի դեմս առնել: Տարիներ են պետք, որպեսզի երկիրը դուրս գա սովի ճիրաններից, դժվար է մի վար ու ցանքսով մի բերքով սովից չես փրկվի:

- Յայր սուրբ, հավատում եմ, Աստված մեզ չի լքի, կփրկի, զի մենք հավատով հավատում ենք նրան ու նվիրված ենք մեր սուրբ կրոնին,- Թովման սիրով գրկեց Երիտասարդին:

- Յայր սուրբ, ուսուցիչ, չեմ թաքցնում քեզանից,- Կիրակոսը հոգոց հանեց,- վճիռ եմ դրել՝ նվիրվել եկեղեցուն, սուրբ կուսակցության վճիռ եմ դրել... Սիրած աղջիկ ունեի, սակայն Աստծոն սերը չեմ կարող կիսել Երկրային սիրո հետ: Յավատքին ես բերում իմ ողջակեզը: Սա է վճիռս:

Թովման շոյում էր Կիրակոսի գլուխը, սա կանգնել էր խոնարի Երեխայի պես:

- Ծանր վճիռ ես դրել, Աստված փրկե հոգիդ, ընդունելի անի վճիռդ: Կիրակոնս, մաքրիր հոգիդ, ջինջ ու ջինջ պիտի լինի Աստծուն նվիրվողի հոգին: Քեզ ծանր օրեր են սպասում, զի հրաժարվում են Երկրային սիրուց: Պիտի կռվես գայթակղության դեմ, պահեր կլինեն, երբ պատրաստ են գլուխդ պատին զարկելու, վերջ տալու տանջանքներիդ, անհամեստ Երազներիդ... Տոկա ի փառս Աստծոն,- Թովման հասկացավ, որ այս ամենն իրեն էլ էր վերաբերում, զի նրա մեջ իրական ու հրամայական հառնում էր սիրեցյալի պատկերը, կրծքին սեղմեց նշխարների քսակը:

«Ո՛վ բարեգութ Տեր Աստված, ինչո՞ւ ես ընդունում այս զոհը, չե՞ որ գրկում ես Երկրային սիրուց, հանուն ինչի՞՝, հանուն քո հզորության վկայությա՞ն,- և այեց ծովակին, ոչինչ չտեսավ, ոչ մի աստղ չեր անդրադարձվում ջրերի մեջ, մթնել, ս-ացել էր ծովակը: Յոցոց հանեց,- ամեն կուսակրոնի հոգին կյանքի գեղեցկությունից պոկված Երջանկության մի պատառիկ է: Ամեն կուսակրոն քո հզորության վկայությունը լինելուց զատ, և- քո թուլության վկայությունն է: Տեր Աստված, ինչո՞ւ ես այսչափ դաժան...»:

- Ակիսո՞ս, հազար ափսոս,- ասաց Թովման, ասես այս խոհերը չեն եղել,- մոմ էի փնտրում, ինձ մոտ մոմ չի մնացել,- ապա ավելացրեց,- գևանք ինձ մոտ: Դու մոմ բեր, Տեր Աստված հուշեց, որ դու պիտի լինես առաջինը, ում պիտի կարդամ նոթերս,- ասաց ու զարմանալիորեն զգաց իրեն, միաժամանակ անչափ հարուստ իր ունեցածով, իր գրելիք

պատմությամբ:

Ամեն ստեղծագործության մեջ հեղինակի կյանքն է անփոփած, նրա երազները, չկայացած սերը, նրա փնտրութը, նա- հարգանքը սեփական անձի նկատմամբ: Ծանր է ստեղծագործական երկունքը, ծանր է, երբ տքնում ես յուրաքանչյուր տողի ու բարի վրա, վախենում ես մագաղաթին հանձնել քո մտքերը, վախենում ես չիասկանան, ինչ տալիս ես պատմության ու մարդկանց դատին...

Կիրակոսը մոմեր բերեց, կացրեց աշտանակի բոլոր երեք մոմերը: Ինչ-որ բան էր մտմտում, ապա դարձավ Թովմային:

- Հայր սուրբ, անշնորհակալ մի կարծիր աշակերտիդ, թույլ տուր կանչեմ աբեղաներին, թող ամենքն էլ լսեն:

Թովման մի պահ խորհեց, գտավ, որ Կիրակոսը իրավացի էր, ցանկացավ իմանալ ինչպես կընկալեն իր նոթերը, ինչպես կընկալեն հայոց պատմության այս օրերի պատումը, մարդիկ, որ նուևան այս դեպքերի վկաներն են ու ժամանակակիցները: Գլխով արեց:

- Թող գան:

Զիշ անց Կիրակոսը վերադարձավ մի քանի աբեղաների հետ, իրենց հետ բերել էին խշտյակներ, աթոռակներ: Թովման չեր հասցրել բացել մագաղաթները, երբ ներս մտավ սարկավագներից մեկը, հայտնեց, որ Հովհաննես Եպիսկոպոսը իր մոտ է իրավիրում Թովմային, ավելացրեց՝ ժպտալով, որ պատմության ընթերցման լուրը հասել է սրբագանին: Վանականները հավաքվել են նրա խցում, ամենքն էլ կարոտ են լսելու Թովմայի նոթերը: Սպասում են սրբազանի մոտ:

Թովման վերցրեց մագաղաթների կապուկը, առանց ետ նայելու գնաց վանահոր մոտ: Երբ հասավ խցի դռանը, տեսավ, որ շոշապատված է վանականներով:

- Հայր սուրբ, ժամ է լսելու նոթերդ, չե՞ որ խոստացել էիր ընթերցել,- ժպտաց Հովհաննես սրբազանը, գորովանքով նայեց Թովմային,- Տեր Աստված ծանրագույն փորձությունների ենթարկեց քեզ, նա- իմաստություն պարզ-եց, նա- անհատնում կամք ու ուժ՝ գրելու այս դժևդակ օրերի պատումը: Սիրով ու շնորհակալությամբ կունկնդրենք քեզ:

Թովման նայեց հավաքվածներին, ծերերը նստել էին, երիտասարդները կանգնել էին պատերին հենված, սպասում էին: Նա վանականների հայացքներում հարգանք տեսավ, նա- խրախուսանք, ինչ-որ մեկի հայացքում նախանձ, սա փախցրեց հայացքը, սակայն ժամ չեր խորհելու այդ մեկի մասին:

Վերցրեց մագաղաթներից մեկը.

- Պատմութիւն Լանկ Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, - ինչ-որ խեղդող բան բարձրանում էր կոկորդն ի վեր, զգաց, որ հուզվում է: Ահա մոտ է կյանքի նպատակին, գրել է պատմության նախաբանը, շատ ու շատ դեպքեր ե նոթագրել, թափ տվեց գլուխը: Խոր շունչ քաշեց, նայեց վանահորը, որ գավազանին կոթնած, աչքերը կիսախուփ նայում էր սա-

Նին, շարունակեց.

... Արդ՝ այր մի Թամուր-լանկ անուն, դաւանութեամբ – օրինօք պղծոյն Սահմետի՝ նեռին կարապետի, յայտնեալ, երեւեցաւ ի յարեւելս – ի Սմրդանդ քաղաքի, անողորմ, անգութ, անագորոյն, լցեալ ամենայն չարութեամբ, պղծութեամբ – ինարիւք բանսարկուին սատանայի: Չոր ո-մանք ի Սարթափու ասեն գոյ զնա, որ ի գաւառն Կոգովիտ՝ մերձի լեռն Սասիս ուր տապանն է Նոյի – մերձ ի յԱրտազ գաւառ: Որ զնացեալ ի Թաւրեզ – Ղանորեիցն յղեալ զնա առ ի քեշիկս /պահակ/ պահել զթշնամիս ի ճանապարհին Խորասանու: Եւ նորա ելեալ անտի զնաց ի Խորասան. – անտի անցեալ զգետն Զահուն – ընթացեալ ի Սմրդանդ քաղաքն Արեւելից – տեսեալ անտերունչ զաշխարհն ամենայն, եղեւ աւագակապետ – գլուխ մարդասպանից: Եւ ժողովեցան առ նա ոգիք հինգ հարիւր ինգետասան աւելի կամ պակաս՝ չար – նման ինքեան: Եւ երթեալ գաղտագողի ի յանդաստան քաղաքին եւ յափշտակեալ զերամակ նոցին՝ առեալ զնացին: Եւ իշխանք քաղաքին ելեալ զիետ նոցա պատերազմել. եւ նոցա յետս դարձեալ պատերազմեցան. հարին զնուս – սպասին. – մտեալ ի քաղաքն՝ առին զտերութիւն քաղաքին, եւ զկին նորա Խանում անուն տիկին նորին. – սակաւ սակաւ զօրացեալ՝ եառ զԲուխարայ քաղաք. Եւ անցեալ յայնկոյս Զահուն զետոյն – մտեալ յերկիրն Խորասանու՝ առնոյր զբազում քաղաքս նոցա – կոտորեր սրով զամենեսին: Եւ ահ – երկիրդ անկեալ ի վերայ նոցա՝ ետուն զաշխարհն ի ձեռս նորին..

Այժմ (քանզի) Լենկ-Թեմուր անունով մի մարդ՝ պիղծ Սահմեդի՝ նեռի առաջնորդի դավանությամբ – կրոնով, հայտնվեց (Եր-աց) Ար-Ելքում – Սմրդանդ քաղաքում, անողորմ, անգութ, դժուի, ամենայն չարությամբ լցված, բանսարկու սատանայի պղծությամբ – ինարներով: Ոմանք ասում են, որ Սարթափուում է եղել նա, որ Կոգովիտ գավառում էր, Մասիս լեռան մոտ, ուր Նոյի Տապանն էր – մերձ էր Արտազ գավառին: Գնալով դեպի Թավրեզ՝ Ղանորեայք ուղարկում են նրան պահակ՝ Խորասանի ճանապարհի վրա թշնամինսերին պահելու և պատակով:

Եվ նա այստեղից ելնելով զնաց Խորասան, անցավ Զահու գետը, ընթացավ դեպի Ար-Ելքի Սմրդանդ քաղաքը – ամբողջ Երկիրն անտերունչ տեսնելով, եղավ ավագակապետ – մարդասպանների պարագլուխ: Նրա մոտ (շուրջ) հավաքվեցին չարաբարո – իր նման մարդիկ՝ հինգ հարյուր տասնինգ հոգուց ավելի կամ պակաս: Գաղտագողի գնալով քաղաքի անդաստանը – հափշտակելով նրանց երամակը՝ առնելով զնացին (փախան):

Քաղաքի իշխաններն ելան նրանց հետ-ից պատերազմելու, – նրանք հետ դառնալով պատերազմեցին, խփեցին (զարկեցին) նրանց – սպանեցին, մտան քաղաքը, – գրավեցին քաղաքի իշխանությունը: Եվ նրա կնոջը՝ Խանում անունով (նույն տիկնոջը) քիչ-քիչ զորանալով գրավեց (Լենկ-Թեմուրը) Բուխարա քաղաքը – անցնելով Զահու գետի այն

կողմը – մտնելով խորասան երկիր, զավթեց շատ քաղաքներ – սրով կոտորեց ամենքին: Եվ ահ ու սարսափ գցելով նրանց վրա երկիրը տվեցին նրա ձեռքը:

Թովման լոեց, կոկորդը չորացել էր: Խնդրեց մի գավաթ գինի տան: Երիտասարդներից մեկը փութաց գինի բերել: Կացարանում լոել էին: Նրանք ամենքն ել վկա էին ու ժամանակակից այդ դեպքերին, զարմացած էին, որ Թովման այդքան համառոտակի ու դիպուկ է նկարագրել դեպքերը:

Հար-ան երկրներում Լանկ Թամուրի կատարած վայրագությունների մասին լսել էին հպանցիկ, իսկ Թովման նկարագրում էր ականատեսի ու այդ դեպքերի մասնակցի բերանից, դա բացատրեց Հովհաննես Եպիսկոպոսը, ասելով, որ այդ ամենը պատմել է եղբորորդին՝ Զաքարիան:

Թովման գինին խմեց դանդաղ, ասես ցանկանալով նա- հանգստանալ, սրբեց բեղն ու մորուքը: Նա ոչ ոքի չեր տեսնում, նա իր մազադաթների հետ էր:

... Եւ նա զոմասս խաբեր սուտ կաշառօք, ոմանց երդնոյո, զոմասս որդեգիրս առնոյր, ոմանց զդստերս իւր ի կնութիւն տայր, – դստերօքն սպանաներ զիւսայսն: Որ – /Էառ/ զՅրէ քաղաքն թագաւորանիստ. Ետ զդուստի իւր իշխանի նոցա, եւ կացեալ զաւուրս ինչ առ նա՝ սպան զայր իւր սրով. – յղեաց առ հայրն գալ առնուլ զքաղաքն. – Նորա գնացեալ եառ – առար քաղաք թագաւորական: Իսկ իշխան ոմն Շահ-Մանսուր անուն ընդդեմ կացեալ նմա աւելի քան զութն ամ. – ոչ տայր ի նա զՇիրազ, զՔիրման – զՂսպահան: Եւ պիղծն Թամուր խաղաղութիւն արարեալ ընդ նմա, եւ հնարիւք յետս դարձեալ ընդ Արեւելս – Շահ-Մանսուրն դեսպան – աղերս առաքեալ նմա բազում յոյժ: Եւ նորա տեսեալ զեկեալ դեսպանն՝ սուտ հիւանդ անկեալ, ետ բերել գառն մի, – զենին զնա, – եարբ զախին գառինն: Եւ հրամայեաց կոչել զդեսպանն ի մեջ բազմութեանն, – եցոյց զդեմս կերպարանաց իւրոց իբրեւ զմեռելոտի: Եւ ետ բերել զանօթ պղնձի – դարձոյց յետս զարին գառին առաջի ամենայն բազմութեանն: Եւ եկեալ դեսպանին տեսեալ՝ յոյժ ուրախ լիներ ի միտս իւր, եւ ասէ, այսօր վաղին սատակի: Եւ ի գիշերին այնմիկ ելեալ ի ծի – հասեալ առ Շահ-Մանսուր իշխանն – ամենայն աշխարհին ետ աւետիս ուրախութեան. – արարիչ մեծ արարին այսինքն է հանդես: Եւ ամենայն մարդիկ աշխարհին, որ կային ի նեղութեան, ի քաղ, ի ծառաւ – ի վտանգ տագնապին՝ ելեալ ցրուեցան յիւրաքանչիւր բնակութիւնս ուստի եկեալ էին:

Եվ նա ոմանց խաբում էր սուտ կաշառքներով, ոմանց երդվում էր, ոմանց որդեգրում, ոմանց իր դուստրերն էր կնության տալիս – դուստրերի ձեռքով սպանում էր փեսաներին:

Գրավեց թագավորանիստ Յրե քաղաքը. իր դստերը տվեց նրա իշխանին, (դուստրը) որոշ օրեր մնալով նրա մոտ՝ սպանեց ամուսնու իր

սրով – (սուրիանուակ) ուղարկեց հոր մոտ գալու վերցնելու քաղաքը, ևա գնալով գրավեց – դարձրեց թագավորական քաղաք:

Իսկ Շահ-Մանսուր անունով մի իշխան, ավելի քան ութ տարի ըսդ-դիմացել էր նրան – չեր տվել Շիրազը, Ջիրմանը, Ղսպահանը: Դիդջ Թե-մուրը խաղաղություն կնքելով նրա հետ, հնարքներով (խորամանկու-թյամբ) հետ է դառնում դեպի Ար-Ելք, իսկ Շահ-Մանսուրը դեսպան – ա-դերս է առաքում նրա մոտ՝ խիստ շատ: Նա տեսնելով եկած դեսպանին, սուտ հիվանդ ձ-անալով, բերել է տալիս մի գառ, մորթում են – խմում է (այս) գառի արյունը: Յրամայում է կանչել դեսպանին բազմության մեջ – իր դեքս և կերպարանքը ցուցադրում է իբր- մեռելոտի: Բերել է տա-լիս պղնձե ամանը (անոթ) – ամբողջ բազմության առաջ հետ է տալիս (թափում է) գառի արյունը: Դեսպանը տեսնելով՝ սաստիկ ուրախանում է իր մտքում – ասում է՝ այսօր կամ վաղը կսատակի: Եվ այս գիշեր ձի հեծնելով հասնում է Շահ-Մանսուր իշխանի մոտ, ամբողջ երկրին ու-րախ ավետիս է տալիս – մեծ հանդես (խնջույք) են անում:

Եվ երկրի բոլոր մարդիկ, որոնք նեղության, քաղցի, ծարավի, տագ-նապի ու վտանգի մեջ եին գտնվում, ցրվում են յուրաքայուրն իր բնա-կավայրը, որտեղից որ եկել եին:

Թովման նայեց վանահորը:

- Յայր սուրբ, եթե հոգնել ես, հանգիստ առ ժամ: Մենք կսպասենք մինչ- հանգստանաս,- Ժպտաց Յովհաննես սրբազանը:

Թովման գինին խմեց դանդաղ, ասես ցանկանալով նա- հանգս-տանալ, սրբեց բեղը:

- Ո՞չ, սրբազան, չեմ հոգնել,- ասաց Թովման, տեսավ, թե ինչպես ա-զատ շունչ քաշեցին հավաքվածները, ուրախացավ:

- Շնորհակալ եմ ուսուցիչ, - 22նշաց Կիրակոսը, որ ամբողջ ժամա-նակ բռնել էր աշտանակը:

Ամենքն էլ ուրախ եին, քանզի ներկա եին մեծ գործի, որ արարվել է իրենց վանքում, անգամ տեղապահը, որ չէր հավանում ոչ մի նորու-թյան, նոր մագաղաթի ու նոր խոսքի, հիացած էր:

Ե

Լ ականջալուր էի այդ ոճրագործությանը, սակայն այդպիսի մանրա-մասները չգիտեի: Առաջին անգամ եմ լսում: Ապրե՛ս, հայր սուրբ, դու լուս ես սփռում դեպքերի վրա,- հիացավ տեղապահը:- Շարունակիր, որդի,- խնդրեց վանահայրը:

Թովման հոգոց հանեց, շարունակեց.

... Դարձեալ – այս գիտելի է. զի նախ քան զգալ Թամուրին ի յաշ-խարիս մեր, ի 835 թուականին, թագաւորն հիւսիսոյ թօխթամիշ անուն՝ տերն Ոտոսաց ու Ազախի, որ նստեր է Սարայ մերձ ի Ղրիմն, ռաեա դես-պան առ զան Թալրիզու սուլդն Ահմատ անուն՝ որդի Օսիսին, վասն սիրոյ – խաղաղութեան. իսկ նա չար – պիդջ գործովք խայտառակեաց զնա: Եւ դեսպանն գնացեալ առ նա՝ պատառեաց զօձին իւ աաշի նորա:

Եւ նա բարկութեամբ լցեալ. առ ինքնկոչեց գիշխան մի ճանիբեկ անուն, - ետ բազում զօրս ձեռս նորա: Եւ նա դրամբն Ալանաց եւ Դարբանդի եկեալ ի վերայ նորա: Եւ նա խոյս ետ ի նմանէ - եկն յՈստան. - անտի գնացեալ ի Պաղտատ: Եւ զօրքն հիւսիսոյ պաշարեցին զԹաւրեզ: Եւ աւուրս եօթն պատերազմեալ առին զԹաւրեզ. զբազումս սպանին, զբազումս կողոպտեցին - աւարի առին զամենայն գաւառս նորին: Եւ անտի չուեալ ի Նախնուան քաղաք - յամենայն երկիրն Սիւնեաց՝ երկոտասան գաւառս աւերեցին. զբազումս սպանին - գերեցին: Եւ էին յաւուրս ծմերայսոյ: Իսկ ի հրամանէն Կստուծոյ յանկարծակի ծիւն սաստի են վերայնցա յաւուր Յայտնութեան Տեառն մերոյ. Եւ բազումք գերծան ի գերութենէ նոցին: Եւ զբազում մասն աւարին ի բաց ընկեցեալ՝ գնացին յաշխարին իւրեանց նոյն ճանապարհաւն, ուստի եկեալ էին անասնաբարոյ ազգն թաթարաց որ Տողտողան կոչէին՝ խաղաղութիւն արարեալ երկրին Շամիւլյ վասն զի բացին գդուռն Ալանաց խաղաղութեամբ ընդդեմ նոցին:

Նույնպես - այս իմանալի է, որ նախքան Թեմուրի մեր աշխարհ գալը՝ 835 թվականին, Յյուսիսի Թողթամիշ անունով թագավորը՝ Ուլսաց - Ազախի տերը, որ նստում էր Սարայում, Ղրիմին մոտ, դեսպան ուղարկեց Թավրիզի խան Սուլթան Ղհմատի որդի Օսիսին՝ սիրո - խաղաղության համար, իսկ նա չար ու պիղծ գործերով խայտառակեց նրան: Եվ դեսպանը գնալով նրա մոտ՝ պատառուտեց իր օձիքը նրա առաջ: Եվ նա /Թողթամիշը/ բարկությամբ լցված, իր մոտ կանչեց ճանիբեկ անունով մի իշխանի - նրան հանձնեց մեծ զորք: Ճանիբեկը Դարբանդի ու Ալանաց դռնով եկավ նրա վրա /Օսիսի/: Եվ նա խոյս տվեց նրանից - եկավ Ոստան, այստեղից գնալով Պաղտատ: Յյուսիսի զորքերը պաշարեցին Թավրիզը, շատերին սպանեցին, շատերին կողոպտեցին - ակարառեցին նրա բոլոր գավառները: Եվ այստեղից գնալով Նախճան քաղաք - Սյունյաց ամբողջ երկիրը՝ 12 գավառներ ավերեցին, շատերին սպանեցին - գերեցն: Վ յնեղէին (գտնվում) ծմեռային օրերին: Կստծո հրամանով, մեր Տիրոջ Յայտնության օրը, նրանց վրա հանկարծակի ծյուն տեղաց , - շատերը փրկվեցին նրանց գերությունից: Ավարի մեծ մասը հեռու նետելով՝ գնացին իրենց աշխարհը, նույն ճանապարհով, որտեղից եկել էին անասնաբարո թաթարների ազգը, որ կոչում էին Տողտողան՝ Շամախի երկրը խաղաղություն արարելով, քանի որ Ալանաց դուռը խաղաղությամբ բացին նրանց դեմ...

Նորից լուց Թովման, կես գավաթ գինի խմեց: Վերցրեց մի այլ մագաղաթ, սիրով, երկյուղածությամբ շոյեց այն:

- Արդ, կկարդամ մի քանի տող, ինչ գրել եմ մեր երկրի մասին: Ես պատումը շատ եմ առաջ տարել, սակայն կկարդամ միայն մի քանի տող,- Թովման ծանր աշխատանք կատարած, նա- վաստակած ու գոհ աշխատանքից, շարունակեց.

... Դարձեալ դարձուք յառաջիկայ պատմութիւնս պիղծ թագաւո-

ոին Արեւելից: Յ 836 թուականին մեր առեալ էր զաշխարհն Խորասանու ութամեայ պատերազմաւ - անտի չուեալ եկն եառ զԳանձակ շահաստանի քաղաքն Թաւրեզ: Եւ անտի չուեալ եկն յԵրկիրն Սիւնեաց ի վերայ դդեկին Երնշակու. Ե ապա ի վերայ Երկրին ճակատուց՝ եառ զքաղաքն սուրբ Մարի ի հիմանց տապալեալ զամուրն մեր զոր էր ամրափակեալ պատուական ազգին Բագրատունեաց եւ գերեաց զքաղաքն եւ զամենայն շրջակայ գեղորայսն: Իսկ բարեպաշտ տանուտեր մի Մարտիրոս անուն՝ յոյժ զօրեղ զօրական, ողորմած - աղքատասեր ի գեղջեն Կողբայ, Ելեալ ի լեառն Բարդող, որ կոչի յայլոց ազգաց Թակալթու, յոյժ արի - քաջ մանկամբք գեղջն ապրեցոյց զամենայն հաւատացեալսն մեծաւ պատերազմաւ - սրտապինդ զօրութեամբ՝ օգնութեամբ հզօրին Աստուծոյ Յիսուսի Ջրիստոսի Փրկչին մրո: Վ թէպէտ բազում անգամ պատերազմեալ՝ ոչ կարացին առնուլ զլեառն զայն: Որ յետոյ այրն այն նահատակեցաւ ի պիղծ Թուրքմանեն Սահաթ անուն, հեղձուցեալ ի ջուրն Արագու անտես ի մարդկաւ: Դարձյալ դառնանք Ար-Ելքի պիղծ թագավորի նախկին (սկզբում հիշաակված) պատմությանը: 836թ. 8-ամյա պատերազմով գրավել էր Խորասանի Երկիրը, այստեղից Եկավ, գրավեց Գանձակը, Շահաստանի Թավրիզ քաղաքը: Այստեղից շարժվեց Եկավ Սյունյաց Երկիրը, Երնշակի դյանկի - ապա Ճակատք Երկրի վրա, գրավեց սուրբ Մարի քաղաքը, հիմքից տապալելով մեր բերդերը, ուր ամրափակված էր Բագրատունյաց պատվական ազգը, գերեց քաղաքն ու ողջ շրջակա գյուղերը:

Իսկ Մարտիրոս անունով մի բարեպաշտ տանուտեր՝ Կողբ գյուղից, չափազանց զորեղ զօրական, ողորմած - աղքատասեր, Ելենելով Բարդող լեռը, որև այլազգիների կողմից կոչվում է Թակալթու /Թակաթալա/ խիստ քաջ ու արի զինվորներով փրկեց գյուղը, բոլոր հավատացյալներին, մեծ պատերազմո - սրտապինդ զօրությամբ, մեր փրկիչ Յիսուս Ջրիստոսի՝ հզոր Աստծո օգնությամբ: Թեպէտ - բազմաթիվ անգամ պատերազմեցին, բայց չկարողացան վերցնել այն լեռը: Յետո Մարտիրոսը նահատակվեց Սահար անունով պիղծ թուրքմանի ծեռքով՝ խեղդվելով Արագի ջրի մեջ՝ մարդկանցից անտես... Մեծ սուզ Եղավ Յայոց մեջ...

Թովման կախեց գլուխը, Երկու անհնազանդ արցունքներ հոսեցին, կորան մորուքի մեջ, ասես վերապրեց Բարդողի կրիվները: Ասես նորից տեսավ Մարտիրոսին՝ Յայոց դյուցազունին, իսկ նրա սարսափելի վախճանը

ազդեցւ էր ամենքի վրա: Կարծ ու հակիրծ արված այս պատումը, որի ժամանակակիցներն եին ամենքն Ել, սարսափելի էր, նա- հերոսական, նառւանելի...

Յովիաննես սրբազնը, մոտեցավ, գրկեց Թովմային:

- Ապրես, որդի, դու պարզ արեցիր մեզ Աստծո առաջ, զի կարողացը աստվածահաճ գործ անել: Խնդրանքս Ե՝ շարունակես պատմու-

թյուն: Մեր ժողովուրդը կարոտ է պատմությանդ, նա- ստույգ մեկնության ժամանակիս դեպքերի,- հանկարծ դուրս նայեց, առավոտյան լույսն էր ընկել սրահ: Յավաքվածները ազատվեցին դյութանքից,- ա-դոթք հղենք առ Աստված, թող բարին ավետի աշխարհին հայոց...

* * *

Յելիան տիկինը, պառկած բարձերին, նարգիլե էր ծխում: Յաշիշի թմրաբեր գոլորշիները ներս քաշելով, լսում էր Մարիամին, մտերիմ նա-ժիշտին, որին հետը բերել էր Աղրիատիկի ափերից: Ամուսնանալով Լանկ Թամուրի հետ՝ հելենուիին շատ շուտ հասկացավ, թե որքան դժ-վար է մահմեղականի կին լինելը: Նա չէր ցանկանում ամուսնու սերը կիսել մնացած կանանց հետ: Սարսափում էր Մելիքեից, որն աչալուր հսկում էր բոլոր կանանց: Յելիանը գիտեր, որ Մեծ թագուիին վաղուց դադարել է կին լինելուց, սակայն նրա իշխանությունը սահման չուներ, դա նախանձ էր ծնում, իսկ պայքարել նրա ձեռքից խլել իշխանությունը, չկարողացավ, հասկացավ, որ Թամուրը ծեր կնոջ հետ կապված է տասնամյակների ընթացքում միասին ապրած մտերմությամբ, միասին էին արարել այս պետությունը, միասին են նվաճել աշխարհը, այո՛, ա-յո՛, միասին են նվաճել: Մելիքեին մեծ խորհրդատու է: Երբ լսում էր, որ Մեծ թագուիին գեղանի գերուիիներ է ընտրում տիրակալի համար, Մա-րիամի միջոցով մի քանիսին թունավորեց, սակայն դա ել ցանկալի ար-դյունք չտվեց: Իսկ թունավորել Մելիքեին չհամարձակվեց: Նա ամեն քայլափոխի իր վրա էր օգում Մելիքեի ծանր շունչը: Յանդուզն քայլի դիմեց, որ կարող էր կյանք արժենար, կապվեց մի երիտասարդ զորա-կանի հետ, իսկովն զգաց սխալը, երիտասարդին սպանեցին, ինքը փրկվեց, քանզի նրանց կապը շատ կարճատ- էր, Մելիքեին չէր հասցրել բռնեցնել նրանց, հակառակ դեպքում Յելիանը կյանքը կավարտեր կա-ռափնարանում: Երբ Մեծ թագուիին այդ մասին խոսեց նրա հետ, սա Մեծ թագուիիու աշքերում արհամարհանք տեսավ, հասկացավ, որ սիրե-կանը չէր մատնել նրան:

- Տիրակալի կանայք սրբություն են չաղաթայների համար, իսկ ան-հավատարիմ կանայք կքառատվեն,- միայն այսքանը ու մի ժլատ ծերու-նական քմծիծաղ, որից անգամ օձը կխայթվեր:

Սակայն Յելիանը չէր կարող զսպել մարմնական ցանկությունները: Ամուսինը մոռանում էր նրան, մեկ պատերազմների մեջ էր, մեկ՝ մնա-ցած կանանց, մեկ՝ որ-է գեղանի գերուիու հետ: Վերջերս նկատել էր, որ ամուսինը սառել է իրենից, սակայն գոհ էր, քանզի չպատժեց իրեն Բա-գարատի դավաճանության մասին լուրն առնելուց:

Նա գիտեր իր գեղեցկությունից օգտվելու գաղտնիքները, գիտեր, թե ինչպես կարելի է ծերացող ամուսնուն մի պահ երիտասարդացնել: Չուր չէր հերթական կրթություն ստացել: Նրա յուրաքանչյուր շարժում

մշակված էր, ամեն շարժում կիրք էր առաջացնում: Նա կարող էր անգամ զառամյալ ծերունուն խելքից հանել, երիտասարդացնել նրան այնքան ժամանակ, որքանով նա իրեն կբավարարեր որպես այրմարդ, ել ուր մնաց Թամուրի պես իգասեր մարդուն...

Յելիանը չէր կարող մոռանալ ամուսնու սառը հայացքը: Երբ ներս մտավ, ինքը նազանքով սկսեց հանվել, ամուսինը մոտեցավ րա, թեթ-ակի իրենից հեռացրեց իրեն գրկող կանացի բազուկները, մատով կրծքերի արանքից բարձրացրեց ադամանդակուր խաչը, ասաց.

- Ծանր է,- մի փոքր լրեց,- ծանր է սրա գինը...

Արհամարհական քմծիծաղը դեմքին, ետ քաշվեց կնոջից, երկարերկար նայեց նրան: Ասես վճռում էր պատժե՞լ, թե՞ ներել: Յելիանը փորձեց ամուսնուն հասցնել անկողնին, մացածը դժվար չէր, միայն թե անկողին մտնեին: Տիրակալը գգուշացել էր, գիտեր Յելիանի ճարտարությունը անկողնում, ուր անսպառ էին նրա գգվանքները:

- Ծանր է գինը,- մռմռացրել էր տիրակալը, դուրս գնացել, սովորականից ավելի կաղալով:

Այդ օրվանից անցել են շաբաթներ, սակայն նա ոտք չի դոել Յելիանի տաղավարը: Լանկ Թամուրը գիտե արհամարհանքով սպանել: Մի քանի ընդունելությունների ժամանակ, որին պարտադիր մասնակցելու էին բոլոր թագուհիները, Յելիանին չհրավիրեցին: Սա շատ ծանր հարված էր հելենուհու համար: Դա հասկացան ամենքն էլ՝ Յելիանը արհամարհված էր..

Աստիճանաբար Յելիանի մեջ բթացավ պատժի սպասումը, հասկացավ, որ ընկել է Մելիքեի ցանցը, թեր-ս նրա խորհրդով է տիրակալը «Ներել» իրեն: Ասել է թե՝ Մեծ թագուհին սպասում է ավելի մեծ սխալի կամ հանցանքի: Մելիքեի թշնամանքի համար մեղավոր էր ինքը, քանզի անզգուշություն էր ունեցել մի զրույցի ժամանակ Մելիքեին «Ծեր կով» անվանել, հասկանալի է, խոսքերը հասել էին Մեծ թագուհուն:

Այո՛, պատժի սպասումը բթացավ, տեղի տվեց շրջապատի ու ամուսնու նկատմամբ կատաղի ատելության: Հասկացավ, որ այս վիճակին իրեն հասցրել է Մեծ թագուհին:

Սա է պատիժը: Տեր Աստված, ո՞ւր եմ ընկել սրանք տափաստանի գայլեր են: Ավագից ու քակորից զատ ոչինչ չունեին, իսկ արդ, աշխարհ են տիրում: Գիշերանոթները արծաթից են պատրաստել տալիս... անհծյալ ճակատագիր: Զգիտես ինչպես եղավ - ինչո՞ւ, Յելիանը իր վիճակը բնորոշեց այսպես՝ այս ամենն ունայնություն է, քանզի վերջը մահն է, այլ-ս ինչո՞ւ տանչվել, նվաստանալ, եթե գիտես, որ ամեն ինչի վերջը մահն է, ևա- այս նվաստացման... Սպասածին հակառակ, այս հայտնագործությունը ավելի սաստկացրեց ատելությունը ամուսնու նկատմամբ: Կտելությունը նրա մեջ վրեժ առնելու բուռն ու անդիմադրելի ցանկություն առաջացրեց, իսկ վրեժ կարող էր առնել միայն դավաճանելով ամուսնուն: Վճռեց գնալ այդ քայլին:

«ՄԵԼԻՔԵՒՆ ԱՋԼ-Ս ՀԻ ԻԵՏ-ՈՒՄ ԻՆԾ, ԱՍԵԼ Է ԹԵ ԻՆԾ ՈՅՆՉԱԳԱԾ Է ԻԱՄԱ-
ՐՈՒՄ, ՍՊԱՍԻՌ, պառավ կով... Այս Վայրենիները համարձակվում են ար-
համարհել ինձ՝ հելենուհուս, լա՛վ...»:

Սկսեց ամեն տեղ եր-ալ, շողարձակել պերճախոս գեղեցկությամբ,
բացօծիզ հագուստներով, որոնց կրելը իրեն արգելել էր ամուսինը, սա-
կայն դա էլ ծանծրացրեց նրան, քանզի տիրակալը լռում էր: Յելիանը ե-
րազում էր ամուսնուն քարշ տալ անկողին, այո՛, կպատժեր, ցույց
կտար, որ նա անուժ ծերունի է: Դա որոգայթ էր, որից Թամուրը խուսա-
փեց, թեր-ս ՄԵԼԻՔԵՒՆ խորհրդով: Մեծ թագուհին սկսեց ամուսնու մոտ
գերուհիներ ուղարկել, որոնցից շատերին սպասնում էին, դուրս նետում
զորակայաններից: Յելիանը հռհռում էր ՄԵԼԻՔԵՒՆ վրա, սակայն ոչ ոք չէր
կարող խոսել տիրակալի այրմարդկային անզորության մասին, քանզի
գերուհիները մեռած էին: ՍպասիՌ, կա՛ղ սատանա, այնպե՞ս դադեմ,
ո՞ր...

Երկար հարկ չեղավ սիրեկանի թեկնածու փևտրել, վաղուց էր նկա-
տել Սահարին, որի բարձրահասակ, առնական տեսքը, գրգռում էր հե-
լենուհուս: Զաշիշի գոլորշիների մեջ Սահարն ավելի բարձրահասակ էր:
Մեկ իրեն տեսնում էր Սահարի հզոր գրկում, մեկ՝ սիրուց խոնչացած,
նրա կողքին պառկած:

- Սսում են՝ Սահարը չի կարողանում մոռանալ հայ օրիորդին,
նրան, որին այրեցին խարույկի վրա: Դու տեսե՞լ ես այդ աղջկան:

- Տեսել եմ, տիրուհի, գեղեցիկ կին եղ, սակայն չէր կարող մրցել տի-
րուհուս հետ: Չենքը կոպտացրել էր նրան: Զայուհու մարմինը ավելի
շուտ պատանեկան էր, քան կանացի: Ստույգ է, մազերը շատ երկար
էին, առատ, խոպոպավոր, սակայն պարանոցը նիհար էր, երկար...

- Մարիամ, դու նրան տեսել ես գերության մեջ, կապյալ վիճակում,
վիրավոր, անլվա,- ցանկացավ պաշտպանել Անահիտին,- այդ վիճա-
կում նրան տիրել է Սահարը, թո՛ւ, վայրենի՛, ինչպե՞ս կարելի է պառկել
անլվա կնոջ հետ: Միայն սրանք, այս վայրենիները կարող են այդպես
վարվել,- լոեց, ապա ճիգ գործելով ասաց,- Սահարը մնացածներից
լավն է, նրան չես համեմատի մնացածների հետ:

Նաժիշտը, որ տիրուհու բոլոր զաղտնիքների պահապանն էր, գոր-
ծերի միջնորդը, հետաքրքրվեց: Յելիանը չէր կարող առանց նրան ոչ մի
քայլ անել: Մարիամը տիրուհուց տաս տարով մեծ էր, խորամանկ կին
էր, կարողանում էր տիրուհուց ոսկի կորզել: Յելիանը նրա քռան մեջ էր,
այդ էր պատճառը, որ մնացած նաժիշտները վախենում էին
Մարիամից:

Նաժիշտը ձեռքը դրեց կրծքին, նայեց՝ իբր- թե վախեցած:

- Տիրուհի՛, մի՛, վտանգավոր է,- Մարիամը իր վարձն էր մեծաց-
նում,- մի՛ անի, վտանգավոր է...

- Լոի՛ր,- զայրացավ Յելիանը,- դու ել բարի պտուղը չես: Լա՛վ, լա՛վ,
գիտեմ, դժվար է, եթե պատժեն, ինձ են պատժելու, քեզ ինչ կա, դու քո

վարձը կստանաս ինձանից,- հռհռաց Յելիանը,- հիմար կին, ինձ լքել է տիրակալը...

Այս անգամ Մարիամը իրոք վախեցավ:

- Վտանգավոր է, իսկ որտե՞ղ պիտի հանդիպես,- արդեն հաշտված, մտքում ուկիները հաշվելով, հարցրեց նաժիշտը,- որտե՞ղ:

- Այստե՞ղ, ես դաս պիտի տամ տիրակալին, կաղ սատանա...

Վերջին բառերը արտասանեց մտքում:

- Տիրուհի՛...

- Լոի՛ր, բոզ, ու կատարիր հրամանս, եթե չես ուզում, որ այս շահավետ գործը ուրիշի հանձնեմ:

Մարիամը վախեցավ զոկվել այդ շահավետ գործից: Նա կարող էր գործը հանձնել անփորձ մեկին ու խայտառակվել, իսկ հետո, հետոյի մասին խորհելն անգամ սարսափելի էր:

- «Նա ինձ լքել է... Տաս ոսկի կտամ Մարիամին այդ գործը գլուխ բերելու համար: Նա ինձ լքել է, ես միայն այսպես կարող եմ վրեժ առնել թամուրից:

Տեսավ նաժիշտի աչքերի փայլը, երբ ոսկիներն եր հաշվում:

«Օ՛ձ, Աղրիատիկից բերած օձ: Տեր Աստված, ես այստեղ հավատարիմ ոչ ոք չունեմ, ով գիտե, մեկ էլ տեսար Սահարը ինձ համար հարազատ ու նվիրված սիրեկան դարձավ...»:

- Ա՛ռ ոսկիները, զգույշ եղիր,- հիշեց տիրակալի խոսքերը... «Ճատ ծանր է գիւնը»: Այս անգամ չվամեցավ, քանզի այլ սպասելիք չուներ, չեր վախենում, գունե կյանքի մեջ փոփոխություն կմտցներ:

Երեկոյան Մարիամին հաջողվեց հանդիպել Սահարին, մոտեցավ, իբր- իհանում է Սահարի կարաբայիրով:

- Տիկինս կեսգիշերին սպասում է տաղավարում,- կոտրատելով պարսկերենը՝ ասաց, մատը շրթունքներին դրեց:

Սահարը նայեց զարմացած, ապա գլխով արեց:

- Խո՛ֆ,- ցածրածայն ասաց նա:

Նաժիշտը շոյեց նժույգի բաշն ու հեռացավ համաշափ շարժելով գիրուկ հետույքը: Չինվորները հռհռացին:

* * *

- Գառնեցի՛ աղջիկ, ուշանում ենք, աճապարի՛ր,- դռներից ներս կանչեց Ասողիկը:

- Ծտապեցրու,- ասաց Ուկանը,- տեսնո՞ւմ ես, ձեռ ու ոտք է ընկել, հետո էլ, մարդ աստծո,- Ժպտաց, ակնարկելով Ծողերի վիճակը, սա վեցերորդ երեխային էր սպասում:

- Ծողերս պիստ կին է, խոստացել է տասը տղա պարգ-ել,- Ժպտաց Ասողիկը:Կանայք հար-անսերի օգնությամբ սայլերն էին բարձում: Գյուղացիները վճռել էին մի քանի սայլ չորացած ձուկ ուղարկել Գառն-

իի սովյալներին:

Ծովափին մի տասնյակից ավելի հարսներ կային Գառնիից: Սայլերը պիտի ուղեկցեին Ոսկանն ու Ասողիկը: Ոսկանի առաջարկը՝ մինչ- Առեստ Մթերքները ծովով տանելու մասին, մերժեցին ձկնորսները, քանզի ծովը փոթորկվել էր: Թե- իրենք ել ուտելու բան չունեին, սակայն մի կերպ ծայրը ծայրին են հասցնում, չորացած ծուկ կար, իսկ Այրարատ աշխարհում սովը հնձում էր մարդկանց: Գյուղացիները հավաքել եին ով ինչ կարողացել էր: Յազիկ մեկուկես պարկ ալյուր հավաքեցին, պտղունց առ պտղունց: Մթերքները բարձեցին երեք սայլերի վրա: Սայլապանները գինվել եին, քանզի ճանապարհները վտանգավոր եին, կարող եին հարձակվել սովյալները, նա- ավազակներ կային: Ասողիկը վճռել էր սայլերից մեկի մթերքները բաժանել ճանապարհին, մնացածը, ինչ գնով ել լիներ, պիտի հասցներ Գառնի:

- Շողե՛ր, ել բան չկա՞,- մեջքը շտկեց Շողերի գեղեցկուիի ընկերուին, որ տարիներ առաջ ծանոթացրել էր Ասողիկին ու Շողերին: Նա ել էր ամուսնացել ծովափի տղաներից մեկի՝ Ասողիկի ընկերոջ հետ, երկու տղա, մեկ աղջիկ էր պարգ-ել ամուսնուն:

- Սակա՞ Ե, սակավ, ախր երեխաներ են մեռնում,- տևաց Շողերը,- ախր մեծի մահի հետ կհաշտվենք, երբ երեխա է մեռնում, այն ել սովից...-Սրբեց ճակատի քրտինքը,- տաժանք ծանր բան է, չես կարող նայել, ամեն մեռնող երեխայի հետ դու ել ես մեռնում...

- Լա՞վ, լա՞վ, դու քեզ շատ մի տանջիր, Աստծո կամքն է, մի օր սով կանի, մի օր՝ լիություն, կապրենք մի կերպ,- ասաց Մագթաղը:

- Տիգրան, դու ինչո՞ւ ես հագել-կապել,- զարմացած նայեց որդուն, ապա Մագթաղին,- դու մի սրան ևայիր, գլխիս այրմարդ է դարձել...

- Գառնի՝ եմ գնում, ասաց Տիգրանը, աչքի տակով նայեց մորն օգնող աղջիկներին,- օրե՞ն չէ, որ ազգականներիս տեսության գնամ:

- Յայրդ կարգելի,- Մագթաղն էր:

- Կիսդրեմ՝ կտանի: Ես աղեղս ել եմ վերցրել, դաշույնս ել...

- Յա՛, քո աղեղս է փրկելու մեզ,- զայրացավ մայրը,- գնա՛, պարանքեր:

Տիգրանը խեթ ևայեց մորը, հասկացավ, որ աղջիկները լսել են մոր խոսքերը, քչիչացին իրար մեց: Նա չգիտեր, թե աղջիկներից որևս էր ամենալավը, բոլորն ել գեղեցիկ են, սակայն չէր կարողանում ընտրել...

Տիգրանի զինված տեսքը զարմացրեց հորը: Ոսկանը ինդաց քթի տակ: Պատանու տեսքը բավականին ազդեցիկ էր: Յոր ընծայած երկար դաշույնը, նիզակը, նետերով լի կապարճը հասուն զինվորի տեսք եին տալիս ևրան:

Ասողիկը որդիներին սրամարտիկներ էր դարձրել: Կարող էր հանգիստ լինել երեց որդու՝ Տիգրանի համար: Տիգրանը նա- դիպուկ նետաձիգ էր:

Տիգրանը մորն էր նման, ավելի ստույգ՝ միայն աչքերն եին մորը,

դա բավական էր, որ շենի աղջիկները խելքահան լինեին, մնացածը հորն էր՝ բարձրահասակ էր, ժառանգել էր հոր ուժը:

- Ի՞նչ կա,- կեղծ զայրացավ Ասողիկը, դարձավ կրտսեր որդիներին,- Գառնի կգա միայն Տիգրանը: Դուք մնացեք մայրիկին օգնելու,- դարձավ Ոսկանին,- ի՞նչ կասես, չտանե՞նք հետներս, Ոսկան եղբայր, թե կարող է մրսել, ծմեռ է,- ուրախ ծիծաղեցին, գիտեին, որ Տիգրանը ձմռանը լողանում է լճում:

- Քա՛, ես երեխուն ո՞ւր ես տանում, իիդք ու խղճմտանք չունե՞ս,- Ծողերը բռնեց ամուսնու թ-ը, և այեց ամուսնու աչքերի մեջ, որից սրա սիրտը թունդ առավ,- դու գնում ես, ընդունելի է, երեխին ո՞ւր ես տանում:

- Յայրի՛կ, մեզ էլ տար,- վրա տվեցին Վռամն ու Տրդատը:

Ասողիկը լրջորեն զայրացավ:

- Լու՛ք,- գոռաց նա,- քարավանի հետ կգա Տիգրանը, վե՛րշ:

Ծողերը լուց, եթե Ասողիկը ասաց՝ վերջ, այլ-ս խոսելն անօգուտ է: Լուցին նա- տղաները, նախանձով նայեցին Տիգրանին:

- Զգույշ եղեք, Աստված ձեզ հետ,- ասաց Ծողերն ու խաչակնեց, ձեռքերը երկինք բարձրացրեց,- հայոց աստվածները ձեզ հետ,- հիշել էր գառնեցի լինելը...

Սայլերը ճռճռալով դուրս եկան գյուղից: Ծովից սառը քամի է փչում: Տիգրանը կծկվեց այծենակաճի մեջ, չե՛, չեր մրսում, սակայն մարմինը սարսռաց, պատանին առաջին անգամ էր տանից դուրս գալիս: Նրա առաջ փռվել էր մի հսկայական աշխարհ: Առաջին անգամ անհայտ ժամանակով բաժանվում էր մորից, բաժանվում էր պատանեկությունից:

Այրմարդու համար անխուսափելի շրջան էր – ամեն բան կախված էր նրանից, թե ինչպես կընթանար սկիզբը, ո՞ւմ ձեռքի տակ կլիներ պատանին, ո՞ւմ կընդօրինակեր, նա այս օրերին է գալիս այդքան երազած, անհասկանալի սերը... Ցանկանք բարին պատանուն...

- Չե՞ս լսում,- հայրը կրացավ նժույգի վրայից, մտրակով հրեց որդուն: Քարավանում հեծյալ էին միայն Ոսկանն ու Ասողիկը: Մնացածները՝ թվով երեք մարդ, նստել էին սայլերին: Ամենքն էլ զինված էին սրերով, նիզակներով,- նստիր առաջին սայլին, ձոր մտնելիս աչքերդ չորս արա, ճանապարհները անվտանգ չեն, դարանի տեղեր են: Եթե իմանան, որ մթերք ենք տանում, վրա կտան:

- Ի՞նչ, զարկեմ,- զարմացավ պատանին:

- Յարկավ, կփորձենք խելքի բերել, եթե սովորական են, ձուկ կտանք, եթե ավագակներ են, էլ ինչ խոսք ու գրուց, որդի,- ծիծաղեց, ապա լրջացավ,- չաղաթայների դեմ չենք ելել, հայ են...

- Նրանք կզարկեն ու չեն էլ հարցնի հայ ես, թե չաղաթայ,- Ոսկանը նժույգը մոտեցրեց նրանց,- մի քանի մարդ են զարկել Արծեկի մոտ:

- Յայ են, ձուկ կտանք,- քրթմնջաց Ասողիկը:

- Բաժանելով, ի՞նչ պիտի հասցնես Գառնի,- գայրացավ Ոսկանը:

Մոտեցան ձորին: Տիգրանը հասկացավ, որ հոր ու Ոսկանի անհանգստությունն անհիմն չէր, իրոք, դարանի տեղեր են, ինքն էլ էստեղ դարան կսարքեր, ինչպես գայլերի համար դարան էր սարքում:

* * *

Լանկ Թամուրը մռայլ նայում էր Սահարին, սա հանգիստ էր, սակայն տիրակալը հասցրել էր նրա աչքերում անհանգստություն տեսնել: «Դայ աղջկանից հետո Սահարը շատ է փոխվել, թեր-ս սիրել է այդ աղջկան, ասել է թե սրան այլ-ս չես վախեցնի: Մեծ սերը փոխում է մարդուն: Անկախ ու հպարտ դառնում: Նա շատ էր տեսել մարդկանց, որոնք դահճի տապարի տակ սոսկացել էին, արցունք թափել, ներում հայցել, իսկ սա շատ հպարտ տեսք ունի»:

Սահարը դարձել էր հմուտ գաղտնապահ: Մեկ-մեկ նրան համեմատում էր Զահիրի հետ, թեպես Սահարը շատ բաներում զիջում էր Զահիրին, սակայն վճռեց Սահարին հանձնարարել Զահիրին գտնելու գործը: Պատժել էր պետք այդ բուխարացուն: Նա չէր կարողանում մոռանալ այդ վիրավորանքը, որ նրան հասցրեց Զահիրը: Նրան Եղիլ աղայի պես կեփի կաթսայի մեջ, ինչպես մատղաշ արջառին են եփում, կկանգնի կաթսայի մոտ, սոսկաց, քանզի խորհել էր, որ կյանքում ամեն բան փողձել է, մարդու մսից զատ: Զգվանքը չկարողացավ զապել, որձկաց, թքեց գորգին: Մեծամեծները զարմացած իրար նայեցին: Տիգրակալը տիրապետեց իրեն, նայեց Սահարին:

- Կրկին, չլսեցի:

- Տիգրակա՞լ,- Սահարը նորից խոնարհվեց,- Սարայի Թողթամիշ խանը գալիս է Դեշտ ի Դիզե:

- Չորքերո՞վ է գալիս, թե՞ միայն հրոսակներ է սփռել:

- Տեր իմ, զորքերով է գալիս, գումարած հպատակների զորքերը: Խորհում եմ, որ չի գալիս պատերազմով, նրան թալան է պետք: Տիգրակալի հաղթական պատերազմներից հետո Ֆարիստանում ու Իրաքի Շահ Մանսուրի դեմ պետք է, որ խելացի զորավարի համար զգուշացում դառնա: Ես հասու չեմ, ինչի՞ վրա է հույս դրել, ինչո՞ւ է գալիս Դերբենդի կողմերը: Եթե նպատակը թալանն է, ապա բավական է մեր զորքերը շարժվեն, ետ կքաշվի:

Թամուրը երկար լռեց, մեծամեծները ոտքից-ոտք էին փոխվում, իսկ տիրակալը միտք չուներ արձակել նրանց, ասես ցանկանում էր խոհերի պատասխանատվությունը կիսել նրանց հետ: Ապա ձեռքով նշան արեց՝ հեռացե՞ք:

Մենակ մնաց յուրտում, եթե չհաշվենք թիկնապահ Զինգիզին, որ մերկ սուրը ձեռքին կանգնած էր թիկունքին: Նա հաշիվ չէր, նա մարդ չէր, նա տիրակալի սուրն է, իսկ սուրը միայն մետաղ է...

«Գարուսը բացվելուն պես զորքերը կըշեմ Շիրվան, Դերբենդ: Զարկել է պետք Թողթամիշին - այսպես սաստկագին, որ մոռանա Դերբենդի ճամփան: ՉԵ՛, սա Բայազետ չէ,- և չեր մոռացել սուլթանին,- այդ բազեն դեռ չի փորձում թռչել մեր կողմերը, ավելի լավ, ձեռքերս ազատ կլինեն: Արդ, սուլթան Խալիլին կուղարկեմ Թողթամիշի դեմ, թող փորձի ուժերը: Թոռս խելացի զորավար է դարձել, հետև էլ խելացի թումանապետ կդնեմ, ինքս էլ կամաց-կամաց կգնամ հետ-ից, այդ պարագան կստիպի Խանին ետ դառնալ, Խալիլն էլ կկարծի, թե խանը իրենից վախեցավ: Այդպես պիտի լինի, կամքս է, Ալլահ աքար,- ոտքի ցավը այսօր սաստկացել է: Ծափ զարկեց: Ներս մտավ Ծահ Մելիքը, կանգնեց ձեռքերը կրծքին խաչած:

- Բուժակին կանչե՛լ տուր, թող թուրմ բերի, փոխի ոտքիս վիրակապը:

Ծահ Մելիքը, որ կար-որ խոսակցություն էր սպասում, հուսախաք եղավ, դուրս գնաց, քթի տակ ինչ-որ փնթփնթալով:

Զորակայանում լարվել էին, քանզի գաղտնապահի բերած լուրերը հասել էին անգամ զիսվորներին: Վերջերս Թամուրի հետ տարօրինակ բաներ էին կատարվում, սկսել էր վճիռ կայացնել առանց երկար բարակ խորհելու:

Սկզբում դա վերագրեց փորձին, ապա իմաստությանը, վերջապես հասկացավ, որ նմանօրինակ վիճակներում շատ է եղել, այդ է պատճառը, որ վճիռը թելադրվում է հիշողությամբ: Սոսկաց, դա ծերության նշան էր, միայն ծերերն են վճիռ ընդունելուց առաջ քրքրում հիշողությունը, նման դեպքեր են փնտրում ել ինչո՞ւ գլուխներին զոռ տան, երբ պատրաստի վճիռ կա: Ծիծաղեց բուժը, որ վերջն էր վիրակապում, և այց հարցական:

Այս, այդ վերջը, այդպես միայն ծեր ծիու վերջն է, որ ամբողջ կյանքում չի սպիանում թամբի տակ, թարախակալում է: Բուժը թուրմ տվեց: Խմեց թուրմը, դառը համ զգաց, զարմացած և այց բուժին:

- Տե՛ր իմ, թուրմը փոխել է համը, անանուխը չորացած է...
- Ի՞նչ, թուրմ, անանուխ չկա՞,- զայրացավ Թամուրը:
- Տե՛ր իմ, անանուխը գարնան է լինում:
- Որտեղի՞ց կարելի է բերել տալ:
- Տեր իմ, Ղարաբաղի դաշտոտ տեղերից:
- Մարդ ուղարկեք, բերեն: Մեկ էլ չորացած անանուխով թուրմ պատրաստեցիր, գլուխդ կգնա, թուրմի հետ կաթսայում կեփեմ:

Բուժն այսպես խոնարհվեց, որ հասկանալի դարձավ՝ կաթսայում եփելու սպառնալիքը հավանական չէր:

- Կանչե՛ք զորապետներին, Ծահ Մելիքին, բոլորին, բոլորին, բոլոր թոռներին,- գոռաց տիրակալը,- թող գան աճապարանքով:

Զորակայանում խառնվեցին իրար: Ամենքն էլ հասկացան, մեծ արշավանք էր սպասվում: Աշխարհի տիրակալը վճռելու էր Թողթամիշի

ճակատագիրը:

* * *

Զանի հեռանում էին ծովակից, այնքան սովը սաստկանում էր:

- Զուկն այստեղ մարդկանց դեռ ապրեցնում է, տեր Ղատված, սրա վերջն ի՞նչ է լինելու:

- Ամեն սով էլ կանցնի: Ի՞նչ է, քի՞չ սով է տեսել Յայաստանը: Այ, գարնանը վար ու ցանքս կանենք ու վերջ սովին: Շինականը կմեռնի քաղցից, սակայն սերմացուն կպահի:

Ուկանը զայրացավ:

- Դու ձկնորս ես, ծովը կողքիդ է, դրա համար մեծ-մեծ ես բրդում: Գարնանը ձկան որսը կհեշտանա, մի կերպ կապրենք: Շինականը ի՞նչ անի, դեռ պիտի հատիկը հողին պահ տա, հատիկը ծիլ տա, հասկ դառնա, իսկ մինչ այդ սովը իր հունձը կանի: Մարդիկ կմեռնեն՝ բանջարի փոխարեն թունավոր խոտ ուտելով: Տեսել եմ, թե ինչ տանջալի է սովից մեռնելը...

Տիգրանը ուշադիր լսում էր մեծերի գրույցը: Յիշեց, թե ինչպես երկու օր առաջ ճանապարհը կտրեցին մահակներով զինված մի խումբ մարդիկ, սովուներ էին, չհարձակվեցին, հաց խնդրեցին: Ոչ մի սպառնալիք, եթե ասեին, որ հաց չկա, սայլերը կթալանեին, իրենց էլ մի լավ շարդ կտային: Զուկ տվեցին, խումբը ցրվեց, գնացին՝ իրենց ավարը Երեխաներին հասցնելու, չե՛, ավազակ չեին...

Այդ ամենը մնացել էր հետ-ում, հասնում էին արքայական պողոտայի գյուղերից մեկին՝ Շահապիվանին դեռ չհասած, գիտեին այստեղ սովը իր ս- գործն էր արել, քիչ հեռու Չար-անն էր:

Գյուղը դիմավորեց անծուխ երդիկներով, սոված շների ոռնոցով: Քաղցած էին շները, չեին հաչում, ոռնում էին սարսափազդու, հիշել էին գայլազգի լինելը:

- Ուկան, դատարկ տուն գտնենք, հանգիստ առնենք, եզներն ել կիանզստանան:

- Ինչ-որ մարդիկ են եր-ում,- խոսքն անավարտ մնաց, ձայներ լսեցին: Դիմացի բակում մի քանի հոգ-որներ եր-ացին, մոտեցան:

- Օրինի՞ր, Տե՛ր հայր,- լանջախաչով հոգ-որին դիմեց Ուկանը:

- Ղստված օրինե, որդյա՞կ: Ո՞ւր եք գնում այս ծյուն-ձմռանը: Ղնապահով չեն հայոց ճամփաները:

- Գառնի՛,- թաքցնելն ավելորդ էր - չորացած ձուկ ենք տանում մեր սովյալ ազգականներին:

- Ղստված անփորձանք անի ճամփաներդ: Ամեն տեղ էլ հայեր են՝ սովյալ հայեր, ինձ ու քեզ ազգական հայեր... Այս տանը հանգիստ առեք: Կանահոր կարգադրությամբ մթերք բաժանեցինք, մենք էլ ենք քաղցած, մեռելներն ել թաղեցինք, շատ են... Խեղճ ազգս ինչեր է քա-

շում...

Զահանան հավաքեց քամուց փողփողող փեշերն ու շտապեց ընկերների մոտ: Ասողիկը հիշեց Կայծենին, նա կասեր՝ նման է մեռել ու տելուց կշտացած ագռավի:

Ուսկանը առաջինը տուն մտավ, ձայն տվեց, կանչեց Ասողիկը: Սրան թվաց, թե ձայնը վախվորած էր:

- Ասողիկ, նե՞րս արի, թող Տիգրանը մնա դրսում:

Ուշ էր, Տիգրանը հորից առաջ էր ընկել: Կիսախավարի մեջ, որին կամաց-կամաց ընտելացան, տեսան Ուսկանին, որ չոքել էր սյանը հենված կնոջ առաջ: Յայր ու որդի սահմուկեցին: Սյանը հենված կինը մեռել էր՝ ծծկեր երեխան սեղմել էր կրծքին: Երեխան վերջին պահին շրթունք-ներով ամուր կառչել էր մոր չորացած կրծքից:

- Աստվա՛ծ, անգո՛ւթ Աստված, սպանիր միանգամից, ի՞նչ ես տանջում, վերջանանք գնանք,- մռմռացրեց Յակոբը ու չախմախը զարկեց կայծքարին, մի խուրց կայծեր թռան, ակնթարթորեն լուսավորեցին օթ-անը: Տեսան կնոջ բաց աչքերը...

Նորից կայծեր, նորից կնոջ աչքերն եին: Յասցրեցին աղերս տեսնել առ երկինք ուղղված, նորից բռնկում... Խե՞նձ կին... երկինքն անտարբեր, մարդիկ՝ խուլ, մարդիկ՝ կուրացած.... քաղցած ժողովուրդ, անպաշտպան ժողովուրդ ու անթաղ մեռելներ...

- Վերցրե՛ք, բակում կթաղենք,- Ասողիկի ձայնը դողաց,- դո՛ւ, որդի՛, հեռու մնա,- մարիս հաղաց Յակոբի ձեռքին, լուսը շարժվեց, տանիքը ասես ծռվեց, ուր որ Ե՛ կփլվի հայոց երկնակամարը – այն փլվում է մի բարեպաշտ ժողովորի գլխին, որ աղոթել գիտե, տաճարներ կերտել, գիտե սիրել... Սակայն չգիտե ատել... ժողովուրդ, որ չարի ու բարու կովում միայն բարու հաղթանակն է ակնկալում, իսկ ելքը գիտե Բարձրյալ, գիտե՞ որ...

Յակոբն ու Ուսկանը գրկեցին կնոջն ու երեխային, որ անկշիռ եին, հոգու հետ նա- մարմինն էր համբարձվել առ երկինս: Անհոգի ու անտարբեր երկինք, որ կախվել էր Յայաստանի վրա...

Բակ ելան, այստեղ հինգ գերեզմաններ կային:

Սկզբում մեռելներին թաղում եին գերեզմանոցում, իսկ երբ մեռելները շատացան, սկսեցին թաղել բակերում, թաղում եին առանց հաղորդման ու քահանայի... Մորն ու երեխային թաղեցին, առանց երեխային մորից բաժանելու, չկարողացան բաժանել, մահն էր միացրել, մահն էր ամենաարդարն աշխարհում...

Տիգրանը սարսափեց, երբ տեսավ հոր արցունքները: Ուսկանը դեմքն էր փախցնում: Մահեր տեսած, մահեր տված, կարծեցյալ քարսիրտ մարդիկ լալիս եին:

Մեծերը, որ այսքան կռիվներ են տեսել, այդքան մահեր, եթե նրանք չեն դիմանում, այլ-ս ի՞նչ ասել պատանու մասին, որը գլուխը կորցնում էր մի քանի օրվա ընթացքում տեսածներից:

Յար-ան բակում ծայսեր լսվեցին, առանձնանում էր կնոջ ծայսը, չգիտես օգնություն էր կանչում, թե՞ Աստծուն էր դիմում:

Բակ մտան, տեսան մի կին, նրան փարված երեք երեխաներ: Կինը ձեռքերը երկինք էր կարկառել:

- Տե՛ր Աստված, հաց կամ մա՛հ ուղարկիր, անխի՛ղճ Աստված, մի կտոր հաց...

Մոտեցան, կինը երեխաներին սեղմեց կրծքին:

- Չե՛մ տա, դեռ ողջ են, մի՛ թաղեք, ախր դեռ ո՛ղջ են, եսօր հայրը հաց կրերի, երեխաները հացի անունը լսելով, նվազացին:

- Քույրի՛կ, ներս գնանք, կրակ վառենք, մենք քեզ ալյուր կտանք, չորացած ծուկ, - կինը զարմացավ, լսածը խարկանք համարեց:

Այս անծանոթ մարդիկ ինչո՞ւ պետք է իրեն ալյուր տան: Ալյուրը կյանք է, Աստծո միսն ու արյունն է, չե, խարում են: Ո՞վ է սովահար Յայստանում մարդուն հաց տալիս... Ի՞նչ կարող են իրենից վերցնել այս կուշտ ու կուռ մարդիկ, տանք արժեքավոր բան չկա, հացի հետ են փոխանակել, թե՞ մարմինը, մարմին ել չի մնացել, ոսկոր ու կաշի, անմաքուր մարմին...

Կինը լաց եղավ, նայեց խեղճացած: Ախր ինչո՞ւ են այս մարդիկ հացի անուն տալիս:

- Աստված չտվեց, դո՞ւք եք տալու: Մի՛ տանցեք երեխաներին, մեղք են: Մի՛ տանցեք, հացի անուն մի՛ տվեք, հետո ինչո՞վ լցնեմ փորերը...

Մինչ նրանք տուն կմտնեին, Յակոբը օջախում կրակ էր վառել: Կրակի բոցերը խաղացին կնոջ աչքերում, մլմլացին նախկին գեղեցկության մոխիրների վրա:

- Լավ մարդիկ եք, Աստված հասնի, Վարդանս եկավ, կպատմեմ, կասեմ Աստծո մարդիկ եկան, փրկեցին,- լռեց, փարվեց Ասողիկին,- եղբա՛յր, թող քո կինը վատ օր չտեսնի, թող չոր աչքով ապրի:

- Աստված ինձ մի քույր է տվել, արդ, երկուսն ունեմ: Երդվում եմ Աստծո սուրբ սեղանով, զոհվածս ընկերներիս հիշատակով, չեմ մոռանա տանդ ճամփան: Եթե ես չեղա, որդիս՝ Տիգրանը կգա, կօգնի, մինչ-Աստված մի դուռ բանա, մինչ- հասնենք փրկարար բանջարին: Տիգրան, որդի՛, հոգուր պարտ, ես չեղա, կգաս, կօգնես:

Տիգրանը միայն գլխով արեց, հոգված էր: Մինչ նրանք խոսում էին, Յակոբը շիլա եփեց: Կինը դողդողալով շիլա լցրեց երեխաների համար, երբ սրանք սկսեցին ուտել, ամոթխած նայեց հարազատ դարձած մարդկանց, այդպես ել զսպելով իրեն, կերավ իր բաժին շիլան, որ երեխաների բաժնից ել քիչ էր: Աղի արցունքները թափվում էին շիլայի մեջ:

Երեխաներից մեծը՝ տասնչորս տարեկան մի աղջիկ, ամոթխած, վախվորած նայում էր հյուրերին, ապա երկար ժամանակ զարմացած նայում էր Տիգրանի աչքերին: Սա կամաց-կամաց սովորեց աղջկա հայացքին, ապա ինքն էլ նայեց նիհարած այդ եակին, որ մի քանի ամիս առաջ գերդաստանի ուշադրության կենտրոնում էր: Աղջկա աչքերի մեջ

կշտանալու հետ հետաքրքրություն էր ծնվում, ապրելու ձգտում: Նա, որ պիտի զարգանար, օրիորդ դառնար, ինչ-որ մեկի հոգին լուսավորեր, այս պահին իր պարտքը չգիտակցելով, նայում էր պատանուն: Տիգրանը ուրիշ պայմաններում կզայրանար, այս պահին հոգում հաճելի զգացմունք ծնվեց, որ նա- անհասկանալի էր, որպեսզի չխորհեր այդ անհասկանալիի մասին, պարկից ծուկ հանեց, մի-մի հատ տվեց Երեխաներին: Ամենամեծ ծուկը տվեց աղջկան: Սա ծուկը կիսեց, տվեց Տիգրանին, ժպտաց, որից նրա ներս ընկած այտերին փոսիկի փոխարեն խորշումներ գոյացան:

Ասողիկն ու Ուկանը նայեցին իրար:

- Տղադ մարդացավ, քանզի ուրիշի վշտի ընկեր դարձավ,- հուզված ասաց Ուկանը: Ասողիկն ի պատասխան ժպտաց:

Յակոբը գևաց եզներին նայելու, ասաց, որ գիշերը կհսկի: Մսացածները քնելու պատրաստվեցին: Յանկարծ խորհեցին, որ Յակոբի նման անձնազոհ ընկեր ունեն, ամեն բանում հասնում էր իրենց: Մարդը ճանապարհին է փորձվում, մեկ էլ փորձության ժանական, թե չէ՝ ամեն մարդ էլ գյուղամիջում իրեն մարդ է կարծում:

Կիսը՝ Տիգրանուշը, փսիհաթներ բերեց, փռեց հատակին: Երեխաները կուչուրեցին օջախի մոտ:

Ասողիկի հայացքից չվրիպեց տան մեծ շտեմարանը, մեծ գոմը, ասել է, թե հարուստ ու կուշտ ապրող գերդաստան է եղել:

Տիգրանուշը որսաց նրա հայացքը, սրբեց աչքերը:

- Մեծ գերդաստան էինք, ապրում էինք, պապ, տատ, Երեք որդիներ, դուստրեր: Որդիներս կռվի ժամանակ զարկվեցին, Վարդանը՝ գլխիս տերը, գևաց հաց բերելու... Ապրում էինք, ուրախ էինք, հաց կար, շերմություն: Յողը մեզ պահում էր, հար-աններին էլ էինք օգնում: Ես եմ մնացել,- դաստառակով սրբեց աչքերը:

Ասողիկը զարմացավ, Ե՞րբ էր հասցրել լվացվել, դեմքը շառագունել էր, սակայն դեռ պահպանել էր սովյալի դալկությունը: Աղջիկներից ավագը՝ Աստղիկը, նույնաես լվացվել էր, մազերը մի երկար հյուս էր արել, նստել էր Տիգրանի կողքին: Մի անմեղ ժպիտ էր լուսավորել աղջկա դեմքը, այրմարդու նայող, նա- իմաստավորող հայացքն էր դա: Նրա կողմից չգիտակցված, բնության կողմից թելադրված...

Տիգրանը քնի մեջ էլ զգում էր այդ հայացքը, մի քանի անգամ արթնացավ, աղջիկը անթարթ նրան էր նայում:

- Յո չի՞ մեռել,- սարսափահար խորհեց, կռացավ աղջկա վրա: Ասողիկը ժպտում էր, նա դյութվել էր գառնեցի աղջկա որդու աստվածային աչքերից:

- Քնի՞ր, այ տղա, վաղը երկար ճանապարհ ենք կտրելու,- հայրը փետրինթաց, ուսով իրեց նրան,- քնի՞ր, մի՛ խլվա:

- Ես կգամ, կփրկեմ քեզ,- շշնչացին Տիգրանի շրթունքները: Թվաց, թե աղջիկը հասկացավ, այնպես հնազանդ ու ապահով ժպտաց, որ

Տիգրանի մեջ ինչ-որ մինչ այդ չգիտակցված շերմություն հոսեց երակ-ներով: Այդպես էլ չհասկացավ ինչպես քնեց: Արթևացավ, երբ բոլորը ոտքի վրա էին:

- Այ' տղա, քնով ընկար,- ծիծաղեց Ոսկանը, թե- ինքը չեր թողել արթևացնեին,- վե՛ր կաց, զինվո՞ր, ուշանում ենք:

Որքան էլ Տիգրանը հայացքով փնտրեց, զգտավ աղջկան: Տիրա-նուշն օգնեց կապելու իրերը: Ասողիկը նրանց համար մթերք թողեց: Յրաժեշտի պահին Տիրանուշը համբուրեց Ոսկանի ու Ասողիկի ձեռքե-րը:

- Աստված հատուցե, ի՞մ եղբայրներ: Անվնաս անի ձեր ճանապար-հը: Թող ձեր երեխեքը վատ օր չտեսնեն:

- Քույր Տիրանուշ, հետդարձի ճանապարհին կայցելենք: Մնաք խաղաղությամբ:

Տիգրանը շնչահեղձ էր լինում, Աստվիկը չկար ու չկար: Արդեն շարժվելու էին, երբ գոմի մոտ նկատեց աղջկան: Սա, պատին հենված, լալիս էր:

Տիգրանը ամաչեց հորից, չմոտեցավ աղջկան, սակայն երդվեց ան-պայման գալ, օգնել:

Դուրս եկան արքայական պողոտա, կողքերից բլուրներ էին, առջ-ում մի քանի փարսախի վրա Զահր-անն էր: Տիգրանը հանկարծ տեսավ, որ հայրն ու Ոսկանը լարվել են, զգուշորեն շրջապատն են դի-տում: Չգաստացավ, վտանգի զգացում մտավ սիրտը:

- Մեզ հետ-ում են,- մռայլ ասաց Ասողիկը,- դու սայլից չիջնես, սայ-լի վրայից էլ նետահարիր: Սայլի մեջ վահան կա, հազգրու թ-իդ: Ոս-կան, Յակոբի հետ ե՛տ ընկեք, ամեն մեկդ մի կողմը բռնեք, նետերը դրեք լարերին: Նետահարեք մարմնի բաց մասերին, եթե զինվոր լինեն, դժվար կլինի, միայն թե զրահված չլինեն, եթե ավագակներ են, դյուրին կլինի գործերս:

Անցնում էին Երկու բլուրների արանքով, եթե դարան են սարքել, սրա-նից հարմար տեղ չկա, ճանապարհի շարունակությունը բաց է, բլուկներ չկան: Զահր-անի մոտ էլ ճանապարհը կդառնա մարդաշատ, չեն հար-ձակվի:

- Եստեղ էլ վրա կտան,- ծուռ ժպտաց Ոսկանը,- Ասողի՛կ, շատվոր են, սակայն զինվոր չեն, ձիերն էլ բանի պետք չեն: Թե- առաջին գնացո-ղի նժույգը վազկան է, կարաբայիր է, չաղաթայներից են խլել: Արդ, բլ-րակների արանքում ենք, ինչո՞ւ են ուշանում, դանդալոշներ,- մի լավ հայինեց,- դե՛, արե՛ք, շան ծիծ կերածներ: Զաղաթայների դեմ կռվելիս մեկդ չկար, մեր դեմ Ելնելուց առյուծ եք կտրել, թո՛ւ, ես ձեր մերը...,- Այ-ծենակաճը նետեց սայլի վրա: Ասողիկը հետ-եց նրա օրինակին: Եր-կուստեք մնացին ասպետական ծանր զրահներով, որ փայլեցին ար-ի տակ: Ավագակները, որ հույս ունեին կռվելու սայլավորների դեմ, մի պահ կարկամեցին: Երկու հաղթանդամ ասպետներ, նստած մարտա-

կան նժույգներին, հանգիստ սպասում են: Առացածները հաշիվ չեն,թե- տեսել են, որ զինված են նիզակներով, աղեղներով, սակայն ավա- զակների ուշքն ու միտքը ասպետներն են:

- Ե՛, փահլ-աններ, ի՞նչ եք տանում,- ձայնեց ճանապարհի մեջտեղը կանգնած հեծյալը, որ նույնպես զրահված էր, կողքին երկու զինակից- ներ են կանգնած, սակայն սրանց ծիերի տեսքն այնքան խոսուն էր, որ հասկացան, նոր են կանել լծի տակից:

- Երբ չաղաթայների դեմ ենք կրվում, քեզ չտեսանք, փահլ-ան,թե՞ դու հայերին թալանելով եր զբաղված: Դու հայ չես, սրիկա՛: Ես քո ականջները կկտրեմ:- Ասողիկը եռում էր նժույգի վրա, որ ծառս-ծառս էր լինում,- անունդ ասա՛, որ իմանամ ում ականջներն եմ կտրելու,- գո- ռաց Ասողիկը:

Նրա տեսքը այնքան ազդեցիկ էր, որ ավագակապետը մի պահ հա- պաղեց, սակայն նա չէր կարող խայտառակվել ենթակաների առաջ, ո- րոնցից շատերը երեկով շինականներն են: Իրենք տասնութ հոգի են, սրանք՝ երկու ասպետ, երեք սայլապան ու մի մատ երեխա: Ավագակ- ներից մեկը պարսատիկից քար բաց թողեց, քարը կպավ Ոսկանի կրծ- քի զրահին, զրահը խուլ զնզաց, հասկանալի դարձավ՝ կրիվը անխու- սափելի էր:

Ավագակապետը բարձրացրեց նիզակը, երեք հեծյալներ նետվե- ցին առաջ, կողքերից սայլերի վրա հարձակվեցին յոթական մարդ: Ասո- ղիկը աշտանակեց նժույգն ու սլացավ: Տիգրանի նետը սուրաց հոր ա- կանջի տակով, ավագակներից մեկը ճչաց, կրծքից խոցված ընկավ ձիուց:

- Կեցցե՛ս, Տիգրան, որդի՛,- ավագակապետը խուս տվեց Ասողիկի նիզակից, ինքն էլ փորձեց զարկել, նիզակը չհասավ նպատակին, իսկ Ասողիկի նիզակի հարվածը բաժին ընկավ ավագակներից մյուսին, որ գալիս էր ավագակապետի կողքով: Սա անշունչ ընկավ: Ասողիկը պտ- տեցրեց նժույգը, տեսավ, որ յոթ-ութ ավագակ շրջապատել են Ոսկա- նին: Սա կոտրել էր նիզակն ու կրվում էր սրով: Նրան օգնության շտա- պեց Յակոբը, զարկեց ավագակներից մեկին, ինքն էլ սրի հարված ստացավ, ընկավ սայլի մոտ: Տիգրանի նետերից երկուսն էլ հասան նպատակին: Տեսնելով, որ Ոսկանի վիճակը ծանր է, պատասխն շտա- պեց օգնության: Ավագակները սխալ թույլ տվեցին, սկսեցին թալանել սայլերը, փոխանակ միացյալ ուժերով նետվեին Ոսկանի ու Ասողիկի վրա: Ավագակներից մեկը սրով զարկեց Տիգրանին, սա պաշտպանվեց վահանով, ապա կայծակնային արագությամբ դաշույնը զարկեց ավա- զակի կոկորդին: Ավագակը անձայն տապալվեց: Նրա ընկերներից մե- կը Տիգրանին զարկեց թիկունքից: Պատանու ճիչը ցլցեց Ասողիկին, ա- սես երկինքը փուլ եկավ գլխին, այնպես գոռաց, որ դեմք կանգնած ա- վազակը մի պահ շփոթվեց, Ասողիկը նիզակով զարկեց դեմքին, ուղեղը ցրեց մի կողմ: Ապա նետեց նիզակն ու սրամերկ նետվեց որդուն օգնելու,

որին երկու ավագակ փորձում էին սրատել: Ասողիկը սրով մի սարսափելի զարկ տվեց նրանցից մեկին, կիսեց գլուխը մինչ- ուսերը, մյուսին դաշույնով զարկեց վիրավոր Տիգրանը: Դա նրա վերջին զարկն էր, որ արվեց ինքնաբերաբար, ապա ընկավ: Տիգրանն այդ զարկին տիրապետում էր կատարելապես, քանզի անտառում երկար վարժանքներ էր արել: Ասողիկը ցած թռավ նժույգից, գրկեց որդուն: Ուկանն իր անհավասար կրիվն էր շարունակում, Յակոբը վիրավոր ընկած էր սայլի մոտ:

Պողոսին զարկել էին առաջին պահին: Դժվար էր Ուկանի գործը, թեպետ չորսին զարկել էր, մեկին ծանր վիրավորել, սակայն նա էլ էր վիրավորվել:

- Յայրիկ,- ճչաց Տիգրանը:

Ասողիկը կայծակնային արագությամբ գլխին քաշեց վահանը, ավագակապետի սուրը կրճտացրեց վահանը, իջավ ուսին, զրահը դիմացավ, հետ-յալ պահին զարկեց Ասողիկը, զարկեց ցածից վեր, շեղակի, որից ավագակապետի գլուխը մի կողմ թռավ, գլորվեց, զարկվեց քարին, մնաց աչքերը բաց, որոնց մեջ անլուծելի հարց կար, ախր, ի՞նչ գործ ուներ ասպետների հետ...

Յանկարծ մարտի դաշտը շրջապատեցին գինվորները, սկսեցին անխնա կոտորել ավագակներին, անգամ նրանց, ովքեր գերի էին հանձնվում:

Ասողիկը զարմացած նայեց սպիտակամազ ասպետին, որ կռվի ժամանակ հանել էր սաղավարտը, թեր-ս խորհել էր, որ ասպետին վայել չէ սաղավարտ դնել ավագակների դեմ կռվելիս:

- Սեպո՛ւհ Տիրան,- ճայնեց Ասողիկը:

Չորականը սուրը դրեց նժույգի բաշին, նայեց ուշադիր:

- Դեմքդ ծանոթ ե, ասպե՛տ, լավ էլ կռիվ ես արել, ասա՛, անունդ, ինձ որտեղի՞ց գիտես: Սպասի՛ր, սպասի՛ր, հանի՛ր սաղավարտդ,- ծիծաղեց ուրախացած, ցած թռավ նժույգից, գրկեց Ասողիկին,- Եղբայր Ասողիկ, ես ի՞նչ գործի ես: Չեզ են ծուղակե՞լ,- հռհռաց լիաթոք,- Ուկա՞նն ել հետո է: Ավագակապետ Ծատուրի բախտը չբերեց, թե իմանար ում հետ գործ ունի, չեր մոտենա: Ներող եղի՛ր, չգիտեի, որ դուք եք, ուշացրեցի, մինչ- շրջապատեին ձեզ, մի քանի օր է, ինչ հետ-ում եմ սրանց: Մի քանի անգամ խոլոյս են տվել ինձանցից, շատ լարձուն էր Ծատուրը: Յա՛, վարպետ հարված ես տվել: Ապրե՞ս, գործս թեթ-ացրիր: Ընդունիր շնորհավորանքներս: Սպասի՛ր, տղա՞դ է, շատ է նման,- մոտ կանչեց բուժին,- Պողո՞ս, շտապ նայիր տղային՝ Եղբորս որդին է,- գրկախառնվեց Ուկանի հետ,- եթե իրար հետ եք, մի բան կիհշենք: Ես ձեզ լավ գիտեմ, ափսո՞ս, թովման հետներո չէ, մի լավ կիսուեինք երկրի գործերի վրա: Ծանր է վիճակը, շա՞տ ծանր...

Սեպուհ Տիրանը Մայրիների պուրակի կռվի հերոսներից էր:

- Կյանքին վտանգ չկա, արյուն է կորցրել, մեկ ամսից ոտքի կելնի: Մարմինը երկաթ է, երիտասարդ է, կղիմանա:

- Փա՛ռք Աստծո, Տիգրան որդի, սա քո մարտական մկրտությունդ էր...

- Ըսդունելի լինի,- ասաց Տիրանը,- Յայոց Ուխտի ասպետի որդին չեր կարող վախկոտ լինել,- Ժպտաց բեղի տակ:

Ասողիկն ու Ոսկանն իրար նայեցին զարմացած: Տիգրանը, որքան ել թույլ լիներ, չկարողացավ հանգիստ ընդունել այդ լուրը: Այն, ինչ լսել եր, մոռացնել տվեց ցավը: Յայոց Գաղտնի Ուխտի մասին խոսում էին մի ամբողջ տարի, խոսում էին շշուկով, խոսում էին ամենուր, սակայն Ուխտի անդամները այդպես ել անհայտ մնացին: Ովքե՞ր էին ազգի հերոսները,- շատ քչերը գիտեին, որտեղից եր իմացել սեպուիը:

- Այդ պարագայի վրա հետո կխոսենք,- ասաց սեպուիը,- Ես փևսում եի Ծատուրին, փաստորեն դուք ոչչացրեցիք ավազակախումբը: Վրթանես եպիսկոպոսը շատ կուրախանա: Քեզ հետ մի քանի զինվոր կղնեմ մինչ- Գառնի: Պարտը եմ քեզ, ավելի հարմար պահ չկա պարտը մարելու:

- Ի՞նչ պարտք, տե՛ր սեպուի,- Ասողիկը լարեց հիշողությունը, օգնության հասավ Ոսկանը:

- Տևաշեն, Մայրիների կռվին չեր, քիչ անց կատարվեց: Յիշո՞ւմ ես՝ չաղաթայները չեին հեռանում Լողողանի յուրտից: Չաքարիան ասաց, որ հայերից թալանված ոսկին ու թանկարժեք իրերը զորավարի յուրտում են...

- Յա՛, հա՛, հա՛,- հռհռաց Ասողիկը,- հիշեցի, տե՛ր սեպուի: Ում հետ չի պատահի: Մեզանից ո՞վ եր այդքան ոսկի տեսել, քո զարմանքը հասկանալի եր, որ մի պահ շվարել եր, մոռացել եր պաշտպանվել, չաղաթայը դաշույնը վրա բերեց: Ես զարկեցի դաստակին, դաստակն ու դաշույնը մի կողմ թռան, դու ել սրատեցիր չաղաթային...

Սեպուիը չեր մոռացել այդ դեպքը: Այն, ինչ խորհել եր ու չեր կարողացել հասկանալ, այս պահին պարզվեց նրա համար. այս ռամիկներն իրենց նվիրվածությամբ ու ազևությամբ հասան ասպետության, որ ամենքն ել, անգամ տոհմիկ իշխանները ընդունեցին նրանց: Չմոռանանք, որ թուրքերի հետ դաշնակցելու նրանց գաղափարը տվեց ցանկալի արդյունք: Այո՛, այո՛ Յայաստանում միայն նրանք եին, որ հասկացան այդ անհրաժեշտությունը ու կարողացան հաղթել, իսկ իրենց... - Ճտկեց ուսերը, - սակայն նրանց հետ եր Վահեն, որ իշխանական տոհմի մարած շառավիղն ե... իսկ սրանք, այդ ռամիկները դարձան ազգի նվիրյալ ասպետներ, քանզի ոսկին չի ապականել նրանց հոգիները,- հանկարծ ասես մեկը լուսավորեց միտքը,- Տե՛ր Աստված, նրանք են, հիրավի, Արիական ասպետները հայոց...

Յասան Զահր-ան: Սեպուիը, որքան ինար կար, պատվով ընդունեց նրանց: Տիգրանին պառկեցրեցին, բուժը խոստացավ մի ամսից ոտքի հանել պատանուն: Սեպուիը Ոսկանին ու Ասողիկին առաջնորդեց Վրթանես եպիսկոպոսի մոտ, սա շերմորեն շնորհակալություն հայտնեց

Ծատուր ավագակապետի խումբը ոչչացնելու համար:

Երկու օր անց Ասողիկի փոքրիկ քարավանը բռնեց Գառն ճանապարհը: Սեպուհ Տիրանը կատարեց խոստումը, նրանց հետ երեք զինվոր ուղարկեց: Եպիսկոպոսը իրենց սուրբ միջոցներից մի քանի պարկ այսուր տվեց Գառնիի սովորական համար:

* * *

Գաղտնապահի միտքն ամեն տեղ ազատ էր: Սահարը ուշադրություն չդարձրեց պահապան զինվորներին, սրանք ել իրենց հերթին չնայեցին նրան: Ամեն տեղ, անգամ տիրակալի մոտ գաղտնապահի մուտքը ազատ էր:

Յելիան տիկնոց տաղավարի մոտ հայտնվեց Մարիամը, բռնեց Սահարի ձեռքը: Կնոջ ձեռքը դողում էր, սակայն դա չազդեց Սահարի վրա:

«Հասու չեմ, ինչո՞ւ է կանչել: ՉԵ՞ որ թագուհի է, կարող է դիմել զորապետներին, ներքինիներին, մթերապահներին: Գաղտնապահի հետ ի՞նչ գործ ունի: Թեպետ իրավունք ունի կանչելու: ՉԵ՞ գուր եմ գլուխ կոտրում, քիչ անց կիմանամ իրավերքի պատճառը»:

Մտավ տաղավար, նաժիշտը մնաց դրսում:

Յելիանը բազմել էր բազմոցին, նարգիլե էր ծխում: Նա այնպես էր հագնվել, այնպես պճնվել էր, որ կարող էր ուզածդ այրմարդուն շլացնել: Նրա հագուստները, ինչպես նկատեց Սահարը, ավելի շատ ցուցադրում էր մարմինը, քան թաքցնում: Սահարը փախցրեց հայացքը, չնայեց կնոջ կիսաբաց կրծքերին, օրեն չէր այդպիսի հանդգնություն թույլ տալ տիրակալի կնոջ հանդեպ: Գիտեր, որ տիրակալը սիրում էր Յելիանին: Ստույգ է, Սահարը գիտեր, որ Վրաց թագավորի ու Յելիանի հետ կապված գործից հետո տիրակալը փոխել է վերաբերմունքը տիկնոց հանդեպ, սակայն դա ժամանակավոր էր, բավական էր մի անգամ գա տիկնոց մոտ, կսկսի դարձյալ հաճախ այցելել: Այդ ամենը գիտեր Սահարը, չէր կարող չգիտենալ: Նա պիտի իմանար ոչ միայն դրսի աշխարհի գործերը, այլ նա- այստեղ, գորակայանում, այդպիսին էր նրա պաշտոնը:

«Ինչո՞ւ է կանչել թագուհին...»:

Խոր խոնարհվեց թագուհուն, դարձյալ փախցրեց հայացքը:

- Շնորհ արա, Սահար զորապետ,- թովիչ ժպտաց Յելիանը,- գինի խմիր, չէ, մոտ նստիր,- մոտ կանչեց, տեսնելով, որ Սահարը ուզում է նստել հեռու դրած աթոռակին:

Տիկինը երկու գավաթ գինի լցրեց, մեկը մեկնեց Սահարին: Սա մի շնորհ խմեց գինին, անգամ համը չզգաց:

- Զեղա՛վ,- ծիծաղեց Յելիանը,- այս գինին խմում են կում-կում: Սա դեռ պապս էր քաշել: Նա ինքն էր գինին քաշում, ոչ մեկին չէր վստահում: Գինին բերել են Աղրիատիկի ափերից: Շուտ էր զարկում մարդու գլխին, ստույգ է, ոտքերը չեն ենթարկվում, սակայն գլուխը սթափ է

մուլմ,- նորից ծիծաղեց: Սահարի լարվածությունը մի փոքր անցավ:

- Տիրուհի՝, ես պատրաստ եմ կատարելու իրամաններդ,- Սահարը տակավին անհաղորդ էր տիկնոց նպատակներին:

- Յրամաննե՞րը,- հարցրեց, նորից ծիծաղեց Յելիանը,- ի՞նչ իրամանների մասին ես խոսում, գաղտնապահ: Մո՛տ նստիր, այստեղ, կողքիս,- ասաց ու տեղ տվեց կողքին: Սահարը ամեն բան հասկացավ, սակայն զգուշացավ, վճռեց վերջին քայլը թողնել տիկնոջը: Վախեցավ որոգայթից, ամեն բան կարելի էր սպասել տիրակալից: Նա կարող էր զորապետի հավատարմությունը ստուգել անգամ իր կնոջ միջոցով: Սահարը իրեն վտանգված զգաց:

- Տո՛ւր ձեռքդ, ուզում եմ ճակատագիրդ գուշակել,- Սահարը չէր կարող անսալ թագուհու պահանջը, երկարեց ձեռքը: Յելիանը Սահարի ձեռքը մոտեցրեց իրեն: Սա ստիպված ավելի մոտ նստեց, ապա մի փոքր վեհերոտ ծնկեց տիկնոց առաջ: Յելիանը այնքան մոտ էր, որ Սահարը կարող էր կորցնել գլուխը... Երկմտեց, եթե սա որոգայթ է, այս պահին ներս կլցվեն զիսվորներն ու կշղթայեն իրեն: Նայեց Յելիանին, սրա աչքերը շաղվել եին, կուրծքը վեր ու վար էր անում: Կիսը նրա ձեռքը սեղմեց կրծքին: Սահարը մի վերջին թույլ փորձ արեց կանխելու համար այն, ինչի համար հետագայում պիտի անհծեր իրեն... Մոռացավ ամեն բան, համբուրեց տիկնոց պարանոցը, գտավ շրթունքները, որ կարոտ էին այրմարու համբույրի: Յելիանը տեսնայնորեն հանում էր հոգուստները, չմոռանալով պատասխանել Սահարի գգվանքներին:

Խելահեղ ու անկրկնելի սիրո բռնկում ապրեցին նրանք...

Սահարը իրեն գիտակ էր կարծում սիրո գործերում, սակայն այն, ինչ զգաց Յելիանի գոկում, վեր էր ամեն սպասելիքից, ինչ-որ աստվածային սեր էր սա: Չեր կարող պատկերացնել, որ կարող են լինել այդպիսի գգվանքներ, չեր էլ լսել անգամ: Նախկին հեթերան կարող էր ուզածդ այրմարդուն խենթացնել, ուր մնաց Սահարի պես երիտասարդին...

Սահարը չէր հագենում տիկնոց գգվանքներից: Յելիանը ակամա Սահարին համեմատում էր ամուսնու հետ: Ափսոսաց Թամուրի հետ անցկացրած կյանքը, որ միայն նրա համար էր, որպեսզի շերմացներ Թամուրի ծերացող արյունը: Սեր չէր եղել, կատարել էր պարտականություն, չեր զգացել այն, ինչ զգաց Սահարի պես ուժեղ ու երիտասարդ այրմարդու հետ: Այլ-ս ի՞նչ խորհել, Յելիանը գտել էր նրան, ում գրկում կարող էր ի հեճուկս տիրակալի իրեն երշանիկ զգալ, հատուցել անցած երիտասարդության համար, թեկուզ կյանքի գնով...

Երբ անցավ սիրո պոռթեկումը, երբ հագեցած, վայելած մարմինները հանգիստ էին ձգտում, պառկեցին իրար կողքի, իրար սեղմված, նորից իրար գրկելու անհագ ցանկությամբ: Յելիանին ձգում էր Սահարի պողպատ մկանները, համեմատում էր ամուսնու հետ, սրա լինկող մարմնի հետ, որից ձիու ու կաշու հոտ էր գալիս, նա- ոտքի վերքի թա-

ռախի, հիշելիս անգամ քիչ մնաց սիրտ թափեր: Սահարը հրաշք էր նրա համար: Նա իրեն սիրահարված էր զգում, չեր ուզում խորհել վտանգի մասին: Ե՛, ո՞ր սիրահարվածն է խորհում ապագայի մասին, դրանից միայն հաշվենկատ սառնություն է փչում:

Յելիանը ելավ տեղից, գինի լցրեց գավաթի մեջ, մոտեցավ Սահարին: Գինուց մի կում արեց, բերանի գինին խմեցրեց Սահարին: Այդպես մի քանի կում խմեցին: Սահարը խենթանում էր: Նա տափաստանի անսանձ հովատակի պես փևացնում էր, կրծքին սեղմում անխոնչ սիրուհուն, որ սիրո մեծ գիտակ էր՝ հեթերա...

- Դու չե՞ս զարմանում, որ տիրակալի կինը քեզ ընտրեց, - չե՞ս վախենում հետ-անքներից:

- Սիրելի տիկին, ես սիրո մի հատիկ պահի համար պատրաստ եմ կյանքս տալու,- Սահարի մտքով իսկ չեր անցնում, որ մարգարեություն է անում,- ես միայն այս պահին ինձ այրմարդ զգացի: Ես քեզ հետ զգացի սիրո գեղեցկությունը...

- Չաղաթայի համար խոսքերդ բավականին գեղեցիկ են,- ժպտաց Յելիանը,- անկեղծ եղիր, հայ աղջկան չե՞ս մոռացել:

Չգաց, ինչպես Սահարի մկանները պրկվեցին:

- Ի՞նչ է, դեռ հիշո՞ւմ ես, - անձկացավ Յելիանը,- ասում են՝ թքել է երեսիդ, ասել է, որ մահմեդականներդ անմաքուր եք, որ ծեզանից անասունի հոտ է գալիս: Կեցցե՞ս, հայ աղջիկ: Դրանից հետո, ասում են՝ օրը երկու անգամ գետում լողանում ես: Լա՞վ, լա՞վ, մի՛ թթվիր:

Սահարը վիրավորվեց, թեր-ս տիկնոջը խոցելու, ավելի ստույգ՝ ճշմարտությունն ասաց, կարճ կապեց.

- Քիշում եմ Անահիտին, նա ոչ մի անգամ չարձագանեց գգվանքներիս:

Յելիանը ծիծաղեց:

- Այս հարցում աղջիկն անարդարացի է եղել, ինչպե՞ս կարելի է չսիրել քեզ նման այրմարդուն,- Յելիանը ծգվեց դեպի Սահարը, համբուրեց կուրծքը, սկսեց շրթունքներով խաղալ Սահարի կրծքերի հետ, ինչ-որ անհասկանալի բառեր շշնչալ, որից Սահարը մեղեդու պատրասք զգաց: Յեթերան գիտեր կիրք առաջացնելու խորունկ գաղտնիքները...

* * *

Չաքարիան սիրում էր Բաղդատի առավոտները, երբ դեռ շոգ չեր, երբ քաղաքը դեռ չեր լցվել քարավանների զնգզնգուներով, ուղտերի ոտնատրոփուկ, մտրակների շառաչով: Նա սիրում էր քաղաքի խաղաղ պահը:

Այստեղ, այս քաղաքում, այս իշ-անատանը, որի տերը հնամենի ու անդավաճան ընկերն էր՝ Ալին, իրեն ապահով էր զգում, այսքան ապահով, որքան կարող է ապահով զգալ Լանկ Թամուրին վիրավորանք հասցրած մարդը, գիտենալով հանդերձ, թե որքան երկար են տիրակա-

Ի ձեռքերը: Ինչպես են դրանք շոշափում երկրներն ու ճամփաները, քաղաքներն ու շեները: Իրեն անհրաժեշտ մարդուն գտնելու համար Լանկ Թամուրը միջոց չի խնայում:

Չաքարիան այս ամենը գիտե, քանզի մի քանի ամիս առաջ այդ գործով ինքն էր զբաղվում: Նա գիտե, որ իրեն փնտրում են, մարմնի վրա զգում էր իրակալի մատների սառնությունը, դա է, որ թունավորում է կյանքը, ստիպում է մշտագգույշ լինել:

Չաքարիան ուժեղ մարդ է, նա չի ցանկանում իրեն հանձնել ճակատագրի քմայքին, հարկ է գործել:

Երեկ Փարվիզը շահաստանում տեսել է տիրակալի խուզարկունեցից Ռովշանին, մի խորամանկ ու նենգ մարդու, որին ամենավտանգավոր գործերն են հանձնարարում: Փարվիզը լեղապատառ հասել է իշ-անատուն, միայն գինի խմելուց հետո կարողացավ խոսել:

- Ռովշանը...

- Մոտեցա՞վ քեզ,- հետաքրքրվեց Չաքարիան:

Այդ հարցից շատ բան էր կախված, եթե մոտեցել է, վտանգ չկա, իսկ եթե հետ-ում է, չի մոտենա, վերջ, իրեն գտել են: Դժվար կլինի Ռովշանից պոկ գալ:

- Չմոտեցավ, տեր իմ, հետ-ում եր...

- Լա՛վ, լա՛վ, մի նվազված,- վճիռը ծնվեց հանկարծակի,- Ռովշանը պիտի մեռնի: Նախ հարկ է ստուգել: Փարվիզը այսպես է վախեցել, որ նրան կարելի է միայն որպես խայծ օգտագործել: Յետ-ելու կզնան Յակոբն ու Կորյունը: Նրանք գիտեն իր ով լինելը: Վատ չէր լինի ինքն ել գնար: Զայն տվեց Փարվիզին:

- Բե՛ր դերվիշի խալաթը, բոժոժները, ներկերս,- ծառան, մի փոքր զարմացած, գնաց կատարելու հրամանը: Չաքարիան դերվիշի կերպ մտած, հինա դրած մորուքով, ձեռին ողորմածության գավաթ, գնում էր Փարվիզի հետ-ից: Նրանից մի քայլ ետ ընկած, գալիս էին Յակոբն ու Կորյունը:

Մտան Բաղրադի հոչակավոր շահաստան, այստեղ մարդ փնտրելը դժվար էր, կորցնելը դյուրին: Մեծ հմտություն էր պահանջվում, սրանք էլ այդ գործում փորձված մարդիկ էին: Ամենադյուրինը Փարվիզի գործն էր: Նա պիտի շահաստանում մաս գար: Ահա մի մեծ բուռ արմավ գնեց, լցրեց դաստառակի մեջ, ուտելով քայլեց վաճառատնից վաճառատուն:

Դերվիշը, կեղծելով ձայնը, ծոր տալով, մարգարեին փառաբանելով, քայլում էր՝ տեսադաշտից Փարվիզին դուրս չթողնելով:

Մի տեղ վաճառականին երկարեց թասը, սա մի քանի ս- դրամ գցեց թասի մեջ:

- Աղոթի՛ր ինձ համար, սրբազն եղբայր:

- Ալլահը հաջող անի գործերդ, թող քո կանայք քեզ արու զավակներ ծնեն: Թող քեզ սիրեն առաջին գիշերվա պես, թող քեզանից ծնված-

Ները... - Անացած բառերը ծամծմելով, վաճառականին տարակուսանքի մեջ թողնելով, հեռացավ, քանզի Փարվիզի բոխարական՝ նախշազարդ գլխարկը, մի պահ անհայտացավ բազմության մեջ: Լարեց տեսողությունը, գտավ ծառային:

Փարվիզին մոտեցան երկու կին, ինչ խոսեցին հետը, չլսեց, անցան գնացին: Եթե հետո կանայք չգնային ծառայի հետ-ից, Զաքարիան չէր անհանգստանա, ավելին, կատարվեց այն, ինչից վախենում էր, դարձյալ կանաց ու ծառային կորցրեց տեսադաշտից, ուզեց արագացնել քայլերը:

- Դերվի՛շ բաբա,- հանկարծ կողքին կին հայտնվեց: Կինը նրան սեխի հյութալի շերտ էր մեկնում,- կե՛ր, անուշ արա, Աստծո մարդ, հոգնել ես:

Զաքարիան ծուռ ժպտաց, ձեռքը դրեց կնոջ գլխին:

- Թող Ալլահը բարիքներով լցնի տունդ,- ասաց, աչքի տակով գննեց կողքին կանգնած կնոջը,- Զեննեթին արժանանաս...

Կինը անզուսապ քրքաց: Զաքարիան հասկացավ, որ կինը շահատանի այն բողիկներից է, որ այրմարդ են որսում տուն տանելու: Ուզեց բարձրացնել կնոջ թափանցիկ չադրան, հանկարծ իր վրա ս-եռուն հայացք զգաց: Բողիկի կողքը կանգնած բարձրահասակ կինն էր իրեն նայում: Սրա չադրան անթափանց էր: Չսպեց իրեն, չնայեց բարձրահասակի կողմը: Չգուշացավ, եթե բարձրահասակը Ռովշանն է, նրան չես խաբի: Ռովշանը գիտեր, որ Զահիրը կարող է ուզած մարդու ձայնով ինսել, երգել: Ռովշանը Զաքարիայի ամենաուշիմ աշակերտներից մեկն էր, նրան չես խաբի:

«Ռովշան, դու կռիվ ես ելել ուսուցչի դեմ, գգույշ եղիր»: Նրան շահաստանում բռնել կամ սպանել անհինար էր, աղմուկ կբարձրանար, հարց է՝ ճանաչե՞լ է իրեն: Նա, հետ-ելով ծառային, կգտնի տիրոջը: Ուզեց ասել՝ կեցցե՛ս, Ռովշան, խելացի ես վարվում: Ջմծիծաղ տվեց: Կանգ առավ մանրավաճառի մոտ, նրան երկարեց թասը, սա մի սդրամ գցեց թասի մեջ: Զաքարիան չօրինեց մանրավաճառին, կծի մարդ էր: Նայեց, կանայք դեռ հետ-ում էին Փարվիզին: Սա շարունակում էր անհոգ ման գալ արմավ ուտելով: Բարձրահասակը անկասկած Ռովշանն էր, հարկ է, որ Յակոբը հետ-ի նրան, իսկ Կորյունը կփոխարինի նրան: Փարվիզը, հասնելով շահաստանի վերջը, պիտի գնար իշ-անատուն:

Երկար քոլոզով սրբեց դեմքը, դա նշան էր: Յակոբը պարապ քարշ եկողի պես մոտեցավ նրան: Նա էլ էր արմավ ուտում:

- Յետ-իր բարձրահասակ կնոջը, պարզիր որտեղ է գիշերելու, թող Կորյունը մնա, իսկ դու լուրերով կգաս իշ-անատուն,- Յակոբը լսում էր առանց Զաքարիային նայելու: Նա քրքում էր արմավը, ասես ողջ ուշադրությունը արմավի կորիզն էր, գտավ, մի կողմ նետեց, ժպտաց ապուշավարի, քայլեց կանաց կողմը:

Չաքարիան վճռեց հասնել Ռովշանին: Նա ոգ-որվել էր՝ «ինչպես որսահալած շունը» խորհեց, ծիծաղեց մտքում: Նա հավատում էր իր մարդկանց, սակայն ոգում էր անձամբ համոզվել, որ բարձրահասակը Ռովշանն է: Սա մեկ-մեկ մոռանալով ծպտյալ լինելը, քայլում էր այր-մարդավարի, լայնաքայլ:

Այ, թե Փարվիզի խելքը հասներ, դուրս գար շահաստանից, ամեն ինչ կպարզվեր: Կանայք կարող են բաժանվել: Յիշեց, որ Փարվիզին հրամայել էր դուրս գալ շահաստանից: Եվ պատահեց այն, ինչի համար պատրաստ էր գովել ծառային, սա քայլեց դեպի շահաստանի ելքը: Բարձրահասակ կինը գևաց նրա հետ-ից, բողիկը քաշեց նրա թ-ից, ուղում էր տուն տանել: Նա այսօր դեռ ոչ մի այրմարդ չի որսացել: Բարձրահասակը, նրանից ազատվելու համար իրեց նրան, այդ շարժումից Չաքարիան տեսավ Ռովշանի մազմզոտ ձեռքը:

- Ռովշանն է,- եթե մինչ այդ կասկածում էր, ապա հիմա հաստատ գիտեր: Ամեն ինչ տեղև ընկավ, Ռովշանը պիտի մեռնի, այլ ելք չկա: Եթե նա իրեն հետ-ելով հասել է Բաղդադ, ապա Պերազ վաճառականը մի քանի օրվա ընթացքում կմեռնի, կամ դաշունահար կանեն, կամ կթունավորեն, մի խոսքով ինչպես լինում է սովորական դեպքերում: Յանկարծ ցնցվեց, իսկ եթե Ռովշանը մենակ չէ, թեր-ս երկուսով են, կամ առանձին-առանձին, անգամ կարող են իրար չճանաչել: Տիրակա-լի ինարավորությունները անսահմանափակ են, ինչ-իցե, Ռովշանից պետք է ազատվել:

Յասավ իշ-անատուն, բակում բար-եց Ալիին, սա ժպտաց, ինչպես անձանոթի, չէ որ ճանաչել ընկերոջը, թե- նրա ներկայությամբ շատ անգամներ էր կերպարանափոխվել: Մտավ օթ-ան, գինու կուլան քա-շեց գլուխը, չցանկացավ գավաթով խմել: Սկսել էր անհանգստանալ, քանզի տեսավ, որ գավաթի մեջ գինի կար: Ծածպացրեց լեզուն, չէ, գի-նու համը սովորական էր, չեն թույնել:

Նա գիտեր, որ Լանկ Թամուրը ուղարկած մարդասպանին թույլ է տալիս ընտրելու սպանության եղանակն ու ձ-ը, եթե այդ մասին Սահա-րը հրաման չի տվել, Ռովշանն ինքը կընտրի...

Երեկոյացավ: Մուզեիդեների մելամաղձոտ աղոթքը տարածվեց քաղաքի վրա:

Ծնկեց գորգի վրա, ձեռքերը քսեց երեսին, արդեն թել-թել սպիտա-կող մազերին: Յայացը երկինք բարձրացրեց, ո՞չ Ալլահին, այլ Զրիս-տոսին դիմեց, կամա ակամա գործած մեղքերին թողություն խնդրեց, նա- նրանց համար, որ պիտի գործեր, գիտեր, որ այստեղ էլ իրեն կա-րող են հետ-ել: Դուռը թակեցին:

- Ես եմ, տե՛ր իմ, Յակոբը,- լսվեց դռան հետ-ից:
- Նե՛րս արի, Յակոբ,- ասաց, ելավ գորգի վրայից:
- Յակոբը ներս մտավ, փակեց դուրը:
- Տե՛ր իմ, իշ-անել է Ալ-Բեքիր իշ-անատանը, են, որ քաղաքի ծայ-

ոին է: Անշութք, աչքից հեռու իշ-անատուն է, ուր իշ-անում են աղքատ-ներն ու անհաջողակ վաճառականները, նա- շեներից Բաղդադ եկող գյուղացիները: Կորյունը մնաց, հետ-ում է Ռովշանին: Տեր իմ, մի բան եմ նկատել, հաստատ չգիտեմ, սակայն...

- Ասա՞՛, Յակո՞բ, մեր գործում մանրութք չկա: Ի՞նչն է քեզ անհանգստացրել:

- Տե՛ր իմ, թվաց թե անառակ կինը ինձ է հետ-ում,- տեսավ, ինչպես ցևցվեց վաճառականը,- երբ մտա իշ-անատուն, թվաց, թե տեսա անառակին, իսկ նա այստեղ գործ չունի, քանզի աղքատներ են իշ-անում: Յետո, որքան փնտրեցի, զգտա: Կասկածում եմ, որ բարձրահասակն ու անառակը մի մտքի են: Երկուսն ել մեզ են հետ-ում: Մենք ուշանում ենք, Կորյունը կանհանգստանա: Նա սպասում է Ռովշանի խցի մոտ:

Զաքարիան մթնողել էր:

«Կետել է թե՝ Ռովշանը ինքն իրեն գերազանցեց: Չեի սպասում նրանից այդպիսի նուրբ խաղ: Սակայն զուր եմ զարմանում, ես եմ սովորեցրել, կար-որ մարդկանց հետ-ել երկուսով... ՉԵ՛, հարկ է գտնել բողիկին...»:

- Յակոբ, նա ինձ վաղուց է նկատել, դրա համա ինձ մոտեցրեց բողիկին, դեմքս ցույց տալու համար, նա- ծայնս լսելու, դրա համար ել խոսեց բողիկը, որ ստիպված պատասխանեմ: Այս գիշեր Ռովշանը պիտի մեռնի, եթե չկարողանանք բողիկին գտնել, փորձանք կգա գլխներիս: Գևանք, Յակո՞բ, գիշերը տարածամեց,- ասաց, լայնաքայլ քայլեց Բաղդատի փողոցներով: Նրան հետ-ում էին Յակոբն ու Երեք պահնորդներ, սրանք գալիս էին Յակոբից մի փոքր ետ ընկած:

Զիսվորները նվիրված էին Զաքարիային, չգիտեին ով լինելը: Վաճառականը նրանց նվիրվածությունը շահել էր մարդկային վերաբերմունքով, ժամանակին վարձը տալով, հարձակումների ժամանակ ետ չեր մնում զիսվորներից, չեր թաքնվում նրանց թիկունքների հետ-ում:

Յասան Ալ-Բեքիրի իշ-անատուն, դուռը բաց էր, ներս մտան: Նրանց վրա ուշադրություն դարձնող չեղավ, ելումուտը շատ էր: Երբ մոտեցան վերջին հյուղակին, նրանց մոտեցավ Կորյունը:

- Տե՛ր իմ, հյուղակում է, մոմ չի վառել: Մի ժամ առաջ, երբ ծառան ընթրիք բերեց, քաշկռտուկի ծայներ լսեցի, ներս նայեցի, Ռովշանը կապկպում էր ծառային, ապա գինու կուլան ձեռքին մտավ հար-ան հյուղակ, դեռ դուրս չի եկել: Նայեցի՝ ապրելու տեղ չէ, սակայն հետ-ի կողմից մի մեծ անցք կա, որտեղից ազատ կարող է դուրս գալ:

- Մո՛տ արեք,- ասաց Զաքարիան,- չանսանք ճշմարտությանը, Ռովշանը խելացի մարդ է, սակայն Կորյունը գերազանցել է նրան: Եթե մենք մտանք Ռովշանի հյուղակ, նա այս հյուղակում կլսեր մեր ծայներն ու դուրս կպրծնի վերջին հյուղակի անցքից: Եթե մտնենք վերջին հյուղակը, ապա նա մեզանից երկուսին անմիջապես կզարկի: Նա երկու ձեռքով դաշույն է նետում - շատ դիպուկ: Կանենք այսպես, մենք կշար-

դենք այս հյուղակի դուռը: Ոովշան իրեն դուրս կնետի մյուս հյուղակի անցքից ու կընկնի մեր պահնորդների ձեռքը – չի կարող վնասել մեզ: Յակո՞բ, դու գինվորներին բացատրիր նրանց անելիքը:

Այդ պահին լուսինը դուրս եկավ ամպի տակից, ասես այսքան ժամանակ թաքնվել էր, Զաքարիային ժամանակ տվել, որպեսզի մարդիկ գրավեն իրենց տեղերը:

- Գնացինք,- ասաց Զաքարիան,- Կորյո՛ւն, ջարդի՛ դուռը:

Կորյունի ոտքի հարվածից դուռը դուրս թռավ ծխնիներից:

Կորյունը դաշույնը ձեռքին ներս խուժեց, Զաքարիան ներս չմտավ: Սա աղմուկ էր սպասում մյուս հյուղակից, – այն սպասել չտվեց:

Աղմուկ լսվեց, հայիոյանքներ ու մի թրմփոց: Մինչ- Կորյունը հյուղակում մարիս կվառեր, Յակոբը գինվորների հետ քարշ տալով բերեց Ոովշանին. սա ուշաթափ էր:

- Ուշքի բերեք,- ասաց Զաքարիան:

Յակոբը ծնկեց Ոովշանի մոտ, շփեց քունքերը, անօգուտ:

- Ծանր ձեռք ունի գինվոր Բաղդասարը,- ծիծաղեց Յակոբը:

- Ասում են, թե իմ էլ թեթ- չէ,- ասաց Կորյունն ու մի շառաչուն ապտակ հասցրեց Ոովշանին: Սա բացեց աչքերը: Մարիս թրթռացող լույսի տակ տեսավ Զաքարիային, ծուռ ժպտաց:

- Ա՛, Զահիր պետ...

Զաքարիան կայծակնային արագությամբ ծունկը սեղմեց Ոովշանի կրծքին, խլեց դաշույնները:

- Ախր ասում էի, չԵ՞ս, սա կարող է երեսուն քայլի վրա մարդու կոկորդ ծակել - մի կողմ նետեց դաշույնները:

- Թակարդ ընկա, Զահիր պետ, ափսոս, չանսացի Սահարի զգուշացումներին, կարծում էի մոռացել ես արհեստդ, Ալլահը պատժեց:

Զաքարիան զայրացավ:

- Ալլահը պատժեց նա- անշնորհակալ լինելուդ համար, մի՞թե մոռացել ես, որ աշակերտ ես: Քի՞չ եմ լավություն արել, մոռացա՞ր ոսկիների գործը: Սոտո՞ր մարդ, արդ, կստանա՞ս պատիժդ:

Ոովշանը փակեց աչքերը, գիտեր, որ փրկություն չկա: Տուժում էր շահամոլության պատճառով, քանզի բոլոր խուզարկուներն ել հրաժարվել էին հետապնդել Զահիրին, միայն նա էր...

- Ո՞վ է բոզիկը, որտե՞ղ գտնենք նրան:

- Դա՞ էլ ես հասկացել: Ալլահը վկա, տիրակալի մերձավորներից ամենախելացի մարդն ես: Չուր չեր ասում տիրակալը, վատ է, երբ դավաճանում են խելացիներն ու նվիրյալները...

- Դա նրա խոսքերն են:

- Այո՛, սակայն դու շատ էլ հույս մի դիր այս հաջողության վրա: Դու ին գիտես, որ երկար չես ապրի, եթե ինձանից լուրեր չստանան, տիրակալը ուրիշ մարդ կուղարկի, որին դու չես ճանաչում... Ախր ի՞նչդ էր պակաս, ինչո՞ւ հեռացար... Լա՛վ, լա՛վ, մեկ է, ճակատագիրդ վճռված է:

Դու կմեռնես վատագույն մահով, Պերազ վաճառական, Զաքարիա հայ:
Դու գիտես, որ տիրակալը մեծ վարպետ է այդ գործերում...

Ներկաները զարմացած մեկ Ռովշանին էին նայում, մեկ՝ Զաքարիային: Զարմանում էին, որ Ռովշանը մահվան շեմին հասած՝ ներում չի հայցում: Նրանք չգիտեին, թե ինչ գայլային օրենքներով են ապրում չաղաթայները:

- Զահի՞ր պետ, ես, Ալլահը վկա, չգիտեմ այդ կնոջը, միայն վերջին պահին հասկացա, որ նա էլ է քեզ հետ-ում, նա- ինձ... Ծառ ուշ հասկացա: Գտի՞ր այդ կնոջը, կյանքդ վտանգված է, Զահիր պետ...

- Վե՞րջ տուր,- մռայլ ասաց Զաքարիան:

Ռովշանն անգամ չխռինաց, Կորյունի դաշույնի հարվածից անշարժացավ: Հակոբը Ռովշանի մարմինը խոթեց պարկի մեջ:

- Տե՛ր իմ, ի՞նչ անենք ծառային, առավոտյան ամեն բան կպատմի...

- Ի՞նչ կարող ենք անել, երբ շրջապատված ենք Լանկ Թամուրի մարդկանցով: Ապրում են գայլային օրենքներով, եթե չես ուզում, որ քեզ հոշոտեն, դու պիտի հոշոտես... Կորյուն, Հակոբ, հարկ է գտնել բոգիկին, եթե այրմարդ լիներ, ոյուրին կլիներ, կին է, չաղրան էլ գլխին: Փորձենք գտնել, մեզ երկու օր ժամանակ է մնում: Պետք է հեռանանք Բաղդադից, այստեղ օդն անգամ ապականված է Թամուրի շնչով...

* * *

Լանկ Թամուրը չէր մոռացել ՄԵԼիքԵՒ խոստումը՝ կար-որ լուր հայտնելու մասին: Խոսելիս ՄԵԼիքԵՒի աչքերում վիրավորանք էր տեսել, անշուշտ նա վիրավորվել էր, որի հետ այս էլ քանի տասնյակ տարիներ քարշ են տալիս այս ճռճռան սայլը, որը պետություն է կոչվում:

Ի հեճուկս Սաղո /փոքր/ ՄԵԼիքԵՒ, վճռեց գնալ Մեծ թագուհու մոտ, հետո ի՞նչ, որ Սաղո ՄԵԼիքԵՒին Չինգիզ Խանի սերունդից է, թո՛ւ, դարձել է մսակույտ...

Երեկո էր, սկսեցին խարույկներ վառել: Յուրտի պաստառները խարույկների լուսերից արևագունեցին: Ետ նայեց, Չինգիզի սրի փայլը ճառագեց ծերունական աչքերում: Երբ հասավ Մեծ թագուհու յուրտին, պահապանները խոր խոնարհվեցին: Դոան միշանցք բացելով նրա առաջ, ներքինիները ծնկի իշան, ճակատները կպցրեցին գետնին: Թամուրը մտրակով բարձրացրեց դռան վարագույրը: Հանկարծ ծիծաղեց, այս քանի տարի մտրակը ձեռքից չի գցում, մտրակով է բացում վարագույրները, մտրակով է բարձրացնում թագուհիների կզակները, նա- գերուհիների, որպեսզի տեսնի աչքերի գույնը: Ողջ կյանքում հեծյալ է եղել, իրեն առանց մտրակի չի պատկերացնում: Յուրտ մտավ:

ՄԵԼիքԵՒն խոր խոնարհվեց տիրակալին, բռնեց ձեռքից, նստեցրեց բարձերին: Թամուրը տևքաց ոչ ցավից, վերջերս սովորութ էր դարձել տևքտևքալ: Թագուհին գիտեր, որ սկսելու է բողոքել զորականներից,

որ մեղմել են, ավելի շատ գերի են վերցնում, քան սպանում: Գերիսերի առ-տրով են զբաղվում: Մոռացել են Զինգիզ Խանի պատգամները, իսկ ինքն ու Մելիքեին հավատարիմ են այդ պատգամներին, մնացածները, թո՛ւ...

Երիտասարդները միայն վայելքների մասին են խորհում, չեն խորհում ծերության մասին, մսիում են իր կուտակած հարստությունները: Ամեն ինչում հետ-ում են գրաված երկրների իշխաններին, նրանց հղացած վարք ու բարքին, թո՛ւ...

Մելիքեին կումիս հրամցրեց: Տաք գոլորշի էր բարձրանում գավաթից, թամուրը սիրում էր տաք-տաք խմել, լեզուն այրելով: Դա բարձրացնում էր տրամադրությունը, ստույգ է, քրտնեցնում էր, սակայն դա ոչինչ, առօղջարար է:

- Դու պարզեցի՞ր ասելիքդ, ստուգեցի՞ր կասկածներդ: Ի՞նչ կա մեր ուշադրության արժանի: Ո՞ւմ մասին է խոսքդ, որդիների՞ս, թոռների՞ս, ո՞ւմ մասին է:

Մելիքեին լռել էր, ասես դժվարանում էր խոսել, ապա խոսեց կատվային մռմռոցով, որ չէր համապատասխանում նրա տեսքին, ոչ ել դիրքին:

- Թող տիեզերքի տիրակալը ներող լինի: Ես չեմ կարող միանգամից ասել: Այ, ինչ պարզել եմ, ցավ է պատճառում, սիրտս է ցավում տիրակալիս համար...

- Բավական է, ի՞նչ ես կեղտի շուրջը պտտվող ճանճի պես բզզացնում, ասա՝ մտքինդ,- այնպես մռայլ նայեց թագուհուն, որ սա վրա տվեց:

- Տիրակա՞լ, քո կանացից մեկը դավաճանում է քեզ...

- Քելիա՞նը,- ոչ թե հարցրեց, այլ մռնչաց թամուրը:

Թագուհին վախեցած ետ քաշվեց: Նա վաղուց ամուսնուն այդպես կատաղած չէր տեսել: Թամուրի աչքերը դուրս եին թռչում ակնախոռոչներից, ծնոտը այնպես էր սեղմել, որ կարող էր ատամները փշրել:

Թագուհին հասկացավ արյուն էր հեղվելու, ցանկացավ այդ արյունը, քանզի ամուսնու պատիվն իրենն էր համարում, նա- խայտառակությունը:

- Ո՞ւմ հետ է ինձ պատվագրելում, ասա, պառա՞վ, գիտեմ՝ մտքում ուրախանում ես, ծիծաղում ես:

- Ես քո պահապան հրեշտակն եմ...

- Անո՞ւնը,- որոտաց թամուրը:

- Սահար գաղտնապահ,- արագ ասաց Մելիքեին, հասկացավ, որ եթե մի փոքր ուշացներ, ինքը կպատժվեր:

Թամուրը մի կողմ նետեց գավաթը, ելավ տեղից:

- Արի՞,- նետեց առանց ետ նայելու, գնաց դուրս:

Տիրակալի տեսքն այնքան մռայլ էր, որ հանդիպողներից շատերը ծնկածալ էին լինում: Նրան վաղուց այդպես կատաղած չէին տեսել:

Չիսգիզը կրնկակոխ հետ-ում էր նրան, մերկ սուրը ձեռքիս: Յուրտի մոտ Թամուրը ծափ գարկեց, մոտ վազեց Շահ Մելիքը:

- Կանչե՛լ մեծամեծներին, միայն չինգիզիներին, թոռներիս նա-, ամենքին, շտապ,- Շահ Մելիքը առաջ հեռացավ, կարգադրություններ անելու, ապա ներս մտավ ու կանգնեց տիրակալի առաջ, ձեռքերը կրծքին խաչած:

Զի՞ս անց ներս մտան թոռները՝ Սուլթան Խալիլը, Ուլուկբեկը, Միրզա Խստիկարը, Մեհմետը, մի քանի թումանապետեր:

Ներս մտավ Մելիքեին, ներկաները խոնարիվեցին Մեծ թագուհուն: Նրա հետ-ից եկան մնացած թագուհիները: Ամենքն էլ կանգնած էին, անգամ Մելիքեին: Ոչ ոք Մելիքեից զատ չգիտեր հրավերքի պատճառը: Տիրակալի մռայլ տեսքը ոչ մի լավ բան չեր ասում:

Ներս մտավ Հելիանի ներքինապետը, ծնկեց տիրակալի առաջ:

- Հելիան տիկինը տկար է, խնդրեց թույլ տալ...

- Կանչե՛լ անհապաղ,- գոռաց Թամուրը, նայեց Շահ Մելիքին,- անհապա՞ղ:

Ներկաները հասկացան, որ Հելիան տիկնոց ներկայությունը պարտադիր էր: Ծշուկներ էին լսել Սահարի ու Հելիանի մասին, սակայն դրանք լուրջ չեն համարում, դավաճանե՛լ տիրակալին... անհավանական էր...

Տիրակալը լռեց, սակայն Մելիքեին գիտեր, որ նրա հոգում հրաբուխ է խլթիլթում, որ այդ հրաբուխը կարելի է շիշել միայն արյուն հեղեղով:

Վերջապես ներս մտավ Հելիան տիկինը, խոնարիվեց տիրակալին:

- Տիկին, դու մեզ ստիպեցիր քեզ երկար սպասել, չխոսես տկարության մասին,- տիրակալը բարձրացրեց ձեռքը, կանխեց Հելիանի խոսելու փորձը:

Հելիանը հասկացավ՝ սա վերջն էր: Տիրակալը հավաքել է չաղաթայ հարազատներին՝ իրեն պատժելու համար: Մի՞թե Թամուրը իր անձնական խայտառակությունը մեջտեղ կիանի, դա վայել չէ նրան: Յանկարծ Հելիանի աչքն ընկավ Մելիքեին, սա քինոտ ժպտաց: Ամեն ինչ պարզ դարձավ Հելիանի համար, նա մոռացել էր պառավ շանը, ծեր կապիկին, ուռած դոդոշին...

Ներս բերեցին շղթայակապ Սահարին, հագուստները պատառուված էին, գլխից արյուն էր հոսում: Սահարը դիմադրել էր, դժվար էր նրա պես հսկային շղթայելը, ստիպված էին զարկել գլխին, նոր միայն շղթայել:

Սահարը, կարծյոք, հասկիստ էր, հասկացել էր, որ ներում հայցել չի կարող: Նա մահացու վիրավորանք էր հասցրել տիրակալին, իրեն ստույգ մահ էր սպասում, ել ինչո՞ւ ստորանալ, երբ գիտեր, որ տիրակալը չի ների: Նրան այդ պահին հետաքրքրում էր Հելիանի պահվածքը, կդիմանա՞ր կտտանքներին: Ի՞նչ կաներ տիրակալը «Սիրելի» կնոջը:

Մահվան մոտալուտ սպառնալիքն անգամ չեր կարող եղծել Յելիանի գեղեցկությունը. հավաքվածները չեին կարող թաքցնել իրենց հիացական հայացքները: Մեկ-մեկ Սահարին եին նայում թաքնված նախանձով, քանզի այդպիսի գեղեցկություն էր վայելել: Թագուհիները Յելիանին նայում եին անթաքույց ատելությամբ:

- Կի՞ն, ինչո՞ւ մոռացար ով լինելի՞: Մի՞թե վրաց թագավորին օգնելու համար ներելս դաս չեղավ քեզ համար, կարծում ես դարձյա՞լ կներեմ: Դու կմեռնես տափաստանի խելքը թոշրած զամբիկի պես, որին արկանում են տիրոջ նշանը խարանելու համար: Դու մոռացար, որ կրում ես իմ նշանը՝ եռանկյունի, վրան երեք օղակներ: Այն արյամբ կցողվի...

- Շույլ տուր հեռանամ տիրույթներից, մեծ եղիր...

- Լոի՞ր, կատաղած քա՞ծ: Չինգի՞զ,- գոռաց ահեղածայն:

Չինգիզի սուրև այնպես շառաչեց, որ մարդիկ վախեցած կռացան, սակայն անհանգստանալու կարիք չկար, մի գլուխ պիտի թռչեր, այն արդեն գլորվել էր տիրակալի ոտքերի տակ:

Մարմնից զատված անգամ գեղեցիկ էր Յելիանի գլուխը, քանզի չեր հասցրել վախենալ, թեր-ս ցավ ել չեր զգացել: Ո՞չ ճիչ, ո՞չ ծպտուն, միայն գլուխը գորգին զարևվելու, նա- մարմինը ընկնելու խուլ թրմփոցը, :

Ներկաները սահմոկեցին: Ահավոր պատիժն ամեն ոք յուրովի ընդունեց: Այրմարդիկ ափսոսանքով նայեցին գեղեցիկ կնոջը: Կանայք ցնծացին: Թագուհիների մեջ միակ գեղեցկուիին չկար, մնացել եին իրենք՝ ծեր ու գեր կանայք, որոնցից տիրակալը զզվում էր, քանզի չեր կարող հաճույք ստանալ մասկույտ դարձած այդ նախկին կանացից... Նա բավարարվում էր գերուհիներով, որոնցից ձանձրանալով, նրանց ընծայում էր զորապետներին, – սրանք պարտ եին հպարտանալ ընծայով...

Միակ մարդը, որ իրոք վշտացավ, Սահարն էր: Նա իրեն մեղավոր էր համարում Յելիանի մահվան համար, թե- առաջին քայլս արել էր տիկինը: Յասկացավ, որ հասել է իր հերթը, փրկություն չկար – չեր ել կարող լինել:

- Խոսի՞ր, Սահա՞ր, ինչո՞ւ դավաճանեցիր բարերարիդ: Դու կմեռնես,- տիրակալը սուր ցավ զգաց, մտրակով զարկեց ոտքի վերքին,- ցավ է ինձ, որ դավաճանում են խելացիներն ու նվիրվածները: Այս ամենը սկսվեց Զահիրից: Նա վարակ էր, մինչ- նրա փախուստը, դավաճաներ չկային: Յելիանը ստացավ իր պատիժը: Յերթը Սահարինն է, ի՞նչ պատիժ տամ նրան, որ կարողանամ հանգստանալ,- նայեց թագուհիներին, հանկարծ ամենքին էլ գլխատված տեսավ, գեր մարմիններ գորգերին փռված,- թո՞ւ,- թքեց հատակին,- ամենքն էլ դավաճան են, մի՞թե քիչ եմ գուրգուրել ձեզ, կամ Յելիանին, կամ քի՞չ ընծաներ եմ տվել,- նորից նայեց թագուհիներին, ափսոսանքով Յելիանին հիշեց, որի մարմի-

Նև արդեն դուրս էին տարել: Գորգին մնացել էին արյան մուգ բծեր, ո-
րից ինչպես թամուրին թվաց, գոլորշի էր բարձրանում:

- Դու կմեռնես առավոտյան,- հոգնած ասաց Թամուրը: Զեռքը թափ
տվեց, ներկաները դուրս գնացին: Ետ և այեց, հանդիպեց Չինգիզի հա-
յացքին,- դու որ-է բան հասկացա՞ր,- թե- գիտեր, որ պատասխան չի
ստանալու,- հարկ չկա, որ հասկանաս այս ամենը: Դու իմ պատժող
սուրն ես: Դու միշտ ժպտա՛: Իսկ ես դեռ երկար կապրեմ, ու դու դեռ
շատ գլուխներ կկտրես: Սպասի՛ր, իսկ եթե քեզ գլխատեմ,- թիկնապա-
հի հայացքում վախ չտեսավ, - գիտեմ, եթե հրամայեմ, քեզ կսպանես,-
ելավ տեղից,- եթե հրամայեմ, դու քեզ կսպանե՞ս...

Թիկնապահը գլխով դրական շարժում արեց, սուրն արագ շուր
տվեց, մոտեցրեց կոկորդին:

- Կանգ առ,- գոռաց Թամուրը,- հիմա՞ր, եթե մեռար, ո՞վ կմնա այս
աշխարհում,- սարսաց, Չինգիզի աչքերից արցունքներ էին հոսում,
ժպիտ ու արցունքներ, - Օ՛, Ալլա՛հ, Չինգիզը լաց է լինում: Դու մա՞րդ ես
եղել, Չինգի՛զ, իսկ ես չեմ իմացել,- դա հայտնագործություն էր տիրա-
կալի համար:

Թեք ընկավ բարձերին, վերջերս սկսել էր քնել այստեղ: Յելիանի
դավաճանությունից հետո խուսափում էր որ-է կնոջ մոտ գնալ: Մելի-
քին ուրիշ էր, նա խորհրդատու էր, ընկեր:

- Ինձ շրջապատել են դավաճանները,- մռմռացրեց քթի տակ, քնեց
ծերունական ծանր քնով: Ներս մտավ ներքինապետը, նրան ծածկեց
ուղտի մազից գործած ծածկոցով:

Առավոտյան Թամուրը արթևացավ առույգ ու թարմ, գիշերվա մղ-
ծավանցից հետք էլ չեր մնացել: Ծափ զարկեց, հրամայեց կանչել մեծա-
մեծներին, առաջին հերթին Ծահ Մելիքին: Սա անմիջապես ներկայա-
ցավ, բարի լույս ցանկացավ տիրակալին:

- Ծահ Մելիք, երեկով գործը անավարտ թողեցին, ավարտենք:

Չինակիցը խոնարհվեց: Թամուրը նրա խոնարհման մեջ ինչ-որ
անբացատրելի բան տեսավ, խորհեց, որ դժգոհ է իրենից:

- Յը՛, ի՞նչ կա, անբաժանելի զինակից:

- Տե՛ր իմ, վճիռդ անկասելի է, սակայն ի՞նչ կխորհեն: ՉԵ՞ որ թագու-
հիների անձը անձեռնմխելի է, զորքերի մեջ կխոսեն...

- Որ ծեր եմ, ու իմ կանայք ձգտում են երիտասարդների,- հօհռաց
Թամուրը,- թող հարցնեն գերուհիներին,- նորից հօհռաց,- մի բանում ի-
րավացի ես, վճիռս անկասելի է,- զայրացավ,- ասա, յուրտիս առաջ,
շտապ,- վերջին բառերը գոռաց:

Քիչ անց Ծահ Մելիքի հրամանով տիրակալի յուրտի մի կողմը
բարձրացրեցին, որպեսզի տիրակալը տեսներ մահապատիժը:

Սկսեցին հավաքվել զինվորները: Դահիճները քարշ տալով բերե-
ցին Սահարին, սա կատաղորեն դիմադրում էր, սակայն ի՞նչ կարող էր
անել, շղթակապ էր, դահիճներն էլ հսկաներ էին:

Սահարին պառկեցրեցին գետսին, ոտքերին առանձին-առանձին պարաներ կապեցին: Դահիճներից մեկը սրած գերանը մոտեցրեց Սահարի ոտքերի արանքը, նայեց դահճապետին: Սա գոհ ժպտաց, երբ ստուգեց գերանի սրությունը, մոտեցավ տիրակալին, կանգնեց ձեռքերը կրծքին խաչած, սպասեց:

- Սկսի՞ր, - ձեռքը թափ տվեց տիրակալը:

Դահճապետը կանչեց քան զինվոր, սրանք տասական հոգի ամեն կողմից բռնեցին պարաներից, նայեցին դահճապետին: Սահարը գերմարդկային ճիգեր էր անում ոտքի ելնելու, խփում էր ոտքերով:

Յանկարծ հիշողությունը խայթեց, հիշեց Մարտիրոսին, որին գետն էին գցում, և այսպես խփում էր ոտքերով, մռնչում էր, չէ, չէր ճչում, չէր գոռում, մռնչում էր... Օ, Ալլահ, դու գիտես պատճել... զգաց, որ ոտքերի արանքն էր մտնում գերանը, գլուխը բարձրացրեց, ուզեց տեսնել տիրակալին, ուզեց գոռալ, որ Յելիանը իրեն է սիրել, որ խորշել է նրանից եկող թարախի հոտից, սոսկալի ցավից սիրտը խառնեց, ուզեց մռնչալ այնպես, ինչպես մռնչում էր Մարտիրոսը, խռխռացրեց, ո՛ւժ տուր Մարտիրոս, խռխռացրեց, ո՛ւժ տուր, տանուտե՞ր:

Ցնցվեց ներքին ինչ-որ ձայնից, ինչ-որ ուժից:

- Թամո՞ւր, Յելիանը ինձ է սիրել: Ես թքել եմ ձեզ վրա: Ես աշխարհի ամենագեղեցիկ կնոջն եմ սիրել,- ուզեց հռհռալ, մռնչալ,- շնորհակալ եմ, տանուտե՞ր, ներիր ինձ, տանուտե՞ր...

Գերանը պատռեց որովայնը, սակայն արդեն ցավ չէր գցում, հիշել էր Անահիտին, Օ՛, Ալլահ, մեղավոր եմ հայ աղջկա առաջ, որին ես չեմ մոռանա...

Սկսեց անեանալ, ահա՝ Անահիտը, թեքվել է նրա վրա.

- Սահա՞ր, դու սատկում ես շան պես, քեզ շուն է ցնկնել...

- Անահիտ, Անահիտ, ես, ես... - ամեն բան անեացավ, ոչինչ չկա, միայն հայրենի անապատի քամին է ոռնում, սլանում են անսանձ նժույգները, ու ոռնում է քամին...

Բյուրակնյա լեռները անհյուրընկալ դիմավորեցին քարավանը: Եթե հարթավայրում ու Կամախի սարահարթում արդեն ամառ էր, ապա Բյուրակնյա լեռներում, հատկապես Մսծորի գետի հոսանքն ի վեր, որ իշնում էր Սուլբ Լույս լեռնամատով, նոր էր գարուն բացվել, հորդառատ ար-ներ էին գալիս:

Քարավանում ամենքն էլ զարմացել էին, և ապա տագնապել. ինչո՞ւ Պերոզ վաճառականը հանկարծ թողեց ճանապարհը, ինչո՞ւ դուրս եկավ բանուկ ճանապարհներից, ընկավ լեռնային բավիղները:

Մնձոր գավառը սահմանակից է Դարանաղի ու Խորձյան գավառներին – կիսվում է Գայլ գետով, ուր հարթահատակ ձոր կա, որտեղ հանգստի համար կանգ է առել քարավանը:

Չաքարիան հանկարծակի փոխել է ուղղությունը, փոխանակ գևալու ար-մտյան Եփրատով Երզնկա, քարավանը գիշերով հանել է պողոտայից, Եփրատով իջել է Խարբերդի կողմերը, ապա նորից զարմացրել է ամենքին, թեքվել է Սուրբ Լուս լեռնամատով: Քարավանում միայն Յակոբն ու Կորյունը գիտեն ճանապարհից խոտարվելու պատճառը, մնացածներն ել հիմարներ չեն, տեսնում են, որ վաճառականը հետքերն է խճում: Թեր-ս ավագակներից է փախչում, ո՞վ գիտե, թեր-ս ինքն իրենից... Քարավանում մեծ մասամբ պարսիկ ու արաբ գինվորներ են, որոնց Պերոզը լավ է վարձատրում: Ամենքն ել հարգում են նրան: Չաքարիան այս ել քանի օր է ուղտ չի նստում: Խելացի կենդանին, որ մնացել է առանց տիրոջ, հայացքով նրան է փնտրում, զարմանում է, որ իրեն նժույգի հետ են փոխել: Ո՞վ կիասկանա մարդկանց, որ ճանապարհներից ու ուղտերից ոչինչ չեն հասկանում:

Առաջին անգամ քարավանում կողմնակի մարդիկ չկան: Նա անգամ ծանոթ վաճառականներին ասել էր, որ դուրս է գալու Բաղդադից մի շաբաթ հետո, սակայն դուրս եկավ նույն գիշեր, զարմանք պատճառելով ճանաչողներին, քանզի նրան ճանաչում էին որպես խոսքի տեր մարդու: Նրա քարավանը ամենաապահովն էր, քանզի մեծ պահուրդ ունի, ինքը ել գիտակ ռազմի գործերում:

Չաքարիան ուզում է կտրվել օտար հայացքներից, սակայն զուր էին փորձերը, ծոծրակին զգում եր բողիկի հայացքը, որին երկու օր անհույս փևտրելուց հետո ստիպված հեռացան: Խճճեց հետքերը, քմծիծաղ տվեց, գիտեր, որ ինչքան ել գազանը խճի հետքերը, վերջը ընկնելու է որսորդի թակարդը: Զգում էր, ընկել է տիրակալի ձեռքը, սակայն թողնել գործը չեր կարող, քանզի ուսել էր Յայոց Գաղտնի Ուխտին գենք մատակարարելու գործը: Ընկերները խորհուրդ տվեցին մի քանի ամսով պատսպարվել վանքերից մեկում: Մեկ-մեկ իրեն պատկերացնում էր տիրակալի առաջ կանգնած, նրա երեսին է նետում նախատինքի խոսքեր: Ասում է, որ մահից հետո կթքեն նրա գերեզմանին...

- Կանգնեք,- լսեց օգևականի, արաբ Սուստաֆայի ձայնը, սթափվեց:

Ճանապարհի մեջտեղը կապել, դերվիշ էր կանգնել:

«Ի՞նչ գործ ունի եստեղ դերվիշը,- սոսկաց, հասկացավ ամեն բան,- սա ել ինձ պես դերվիշ է, ինչպես ես՝ Բաղդադում: Արդ, վրա կտան դարանակալները: Մի՞թե հասել եմ կծիկի ծայրին, թելի վերջին կանգուն է, վե՛րջ: Տեսնես եստե՞ղ կզարկեն, թե՞ քարշ կտան տիրակալի մոտ: Ի՞նչ կա որ, մենք ել կկովենք, կոհիվն ել ելք է, չեմ հանձնվի նրա ողորմածությանը, ինչպես ասում է Թովման, ես արիական ասպետ եմ, չեմ նվաստանա...»:

- ՏԵ՛Ր իմ, դարան է, հարկ է ետ քաշվել, քանի չեն փակել ետդարձի ճամփան,- ասաց Մուստաֆան: Նա արդեն կարգադրել էր պահորդներին ու ուղտապահներին դիրքեր գրավել: Նրանք դեռ ոչ մի ավազակ չեն տեսել, սակայն անսխալ գիտեին՝ դարան էր: Դերվիշն էլ կամ ավազակապետն է, կամ նրա օգնականը: Սա մոտեցավ, մի կողմ նետեց դերվիշի խալաթը: Նրանց առաջ կանգնեց մի բարձրահասակ զորական:

- Չահիր բուխարացի, ես աշխարհի տիրակալ Լանկ Թամուրի թումանապետ Ալիմարդանն եմ: Նրա հրամանով, կալանում եմ քեզ,- գլխից վեր բարձրացրեց Լանկ Թամուրի պայզան,- ենթարկվի՛ր, հակառակ դեպքում՝ կշղթայվես, իսկ սրանք ամենքն էլ կսրատվեն,- պայզան նորից վեր բարձրացրեց, ժայռերի վրա հայտնվեցին մի քանի հարյուր չաղաթայներ, աղեղներն ուղղեցին քարավանին:

- ՏԵ՛Ր իմ, չիավատաս սրանց, քեզ կշղթայեն, մեզ ամենքիս էլ կզարկեն: Սրանք Աստված չունեն, նա-՝ ոչ մի սրբություն: Երդվել եմ, քեզ չեմ լքի: Ես իմ տասնմեկ զինվորներով կլինեմ քեզ հետ: Իսկ դու, զորական, որ Լանկ Թամուրի պայզայով ես փակում ճամփաս, կսատկես շան պես ու քո չաղաթայ շները կտեսնեն, թե ինչպես է կռվում առաք փահլ-անը: Ես թքել եմ քո տիրակալի վրա: Զինվորնե՛ր, ի մա՛րտ, չիայտառակվե՞նք:

Զինվորները դիրքավորվեցին հակերի հետ-ում, պատսպարվեցին պատասխանելու չաղաթայների նետերին:

- Չահի՛ր գաղտնապահ, դու գիտես, որ քեզ փրկություն չկա, քո մոռը սպանել են Բուխարայում, արդ, քո հերթն է: Յանձնվի՛ր, Չահի՛ր բուխարացի,- տեսնելով Մուստաֆայի զարմանքը, ավելացրեց,- իսկ դո՛ւ, արաք շուն, դեռ հասու չե՞ս, ոչ մի Պերոզ էլ չկա, սա Չահիր բուխարացին է, տիրակալի գաղտնապահը, ազգությամբ հայ, կռվել է մեր զորքերի դեմ Յայաստան աշխարհում: Դու Ալլահի առաջ կարող ես մեղքդ քավել, եթե մեզ հանձնես հային: Խոստանում եմ ազատ արձակել քեզ ու քո մարդկանց, անգամ ձիերը չեմ վերցնի: Արագ վճռիր, ես ժամանակ չունեմ: Մենք քառասուն անգամ ավելի զինվոր ունենք, քան դուք: Ինչո՞ւ ես օգնում գյառուրին,- մոտ կանչեց զրևորներից մեկին, սա սանձից բռնած բերում էր զորականի նժույգը: Ալիմարդանը թռավ թամբին,- ես քեզ բավականին ժամանակ տվեցի խորհելու...

Չաքարիան բարձրացրեց ձեռքը:

- Սպասի՛ր, Ալիմարդան, իմ մարդիկ կամ արաբները մեղք չունեն: Թույլ տուր հեռանան: Տիրակալին պետք է միայն իմ կյանքը, կարող ես վերցնել, սակայն մի՛ հեղիր սրանց արյունը, թող հեռանան:

Մուստաֆան նժույգը թոցրեց Չաքարիայի մոտ:

- Չեղա՛վ, վաճառական Պերոզ, շատ էի լսել քո մասին, չեի կարծում, որ այսքան ազնվություն կա վաճառականի մեջ, թեպետ հասկացա, վաճառական չես: Մեզ քեզանից պակաս ասպետ մի՛ կարծիր, այս

շնագայլերը քեզ կիսաբեն, մեզ էլ հետո կսրատեն, թեկուզ միայն ձիերին տիրելու համար: Դու մեզ հետ ազնվությամբ ես վարվել, կռվի պահին չես թաքնվել մեր թիկունքներում: Ես՝ արաք փահլ-անս, քեզ չեմ լրի, սպասի՛ր, սրիկա՛,- գոռաց ու աշտանակելով նժույգը մի քանի ոստյունով հասավ փախչող զինվորին, սրատեց նրան: Նրա զինվորներից մեկը պակասեց, զինվորը ցանկացավ գերի հանձնվել, փրկվել, խեղճ զինվոր, չգիտեր ում ձեռքն է ընկել:

- Եթե ձեր մեջ Վալիի պես ստոր մարդիկ կան, հեռացե՛ք,- տեսնելով, որ մնացած զինվորները լրում են, դարձավ Զաքարիային,- կռվենք, Պերող վաճառական, հույս չփայփայես, սրանք մեզ ամենքիս էլ կսրատեն, սրանք անապատի շներ են: Առա՛ջ, ի՛մ քաշեր,- գոռաց Մուստաֆան, արագ քառատրոփով պտտվեց քարավանի շուրջը:

Այդ պահին Ալիմարդանը բարձրացրեց ձեռքը, նետերի մի ստվար պարս թռավ դեպի քարավանը: Միայն մի ուղտապահ վիրավորվեց, այն էլ իր մեղքով, չեր թաքնվել հակերի հետ-ում:

Զաքարիային մի քանի նետ զարկեցին, սակայն չվնասեցին, քանզի խալաթի տակ դամասկյան ընտիր զրահներ եր կրում, միայն խալաթը մի քանի տեղից պատվեց:

- Յե՛, Ալիմարդան, արի՛ մենամարտենք: Չեմ ժխտում, լավ տեղ ես բռնացրել մեզ: Սակայն ինձ պակաս ասպետ չկարծես՝ քան Մուստաֆային: Գիտեմ ինչ է սպասում ինձ դրա համար, ինձ մնում է պատվով մերնելը, մինչ- ձեզանից մի քանիսին չուղարկեմ այլ աշխարհ, չեմ զիշի,- գոռաց Զաքարիան:

- Պերող վաճառական, չաղաթայը սխալ վարվեց, ոչ թե պիտի այսքան խոսեր, այլ հանկարծակի զարկեր: Նա կորցրեց իր համար նպաստավոր պահը, ո՞ւմ են պետք այս միմոսությունները, դերվիշի կերպ մտնելը, հիմար չաղաթայ...

- Նա ցանկացավ, որ գերի հանձնվեի:

- Եթե քեզ վաղուց է ճանաչում, այլ-ս ինչո՞ւ այսքան ձգձգեց: Պերող վաճառական, Պերող պետ, չհանձնվես, Լանկ Թամուրը քեզ կտորկտոր կանի, հում-հում կուտի: Եթե քեզ բռնելու համար այսքան զինվոր է ուղարկել, ասել է թե ժամանակին խիստ վիրավորել ես նրան, ապրե՛ս, Պերող վաճառական:

Զաքարիան ծիծաղեց:

- Ես ժամանակին օգնել եմ ոչնչացնելու նրա երկու լավագույն գնդերը: Նա- լսած կաս՝ Յայաստան աշխարհում խութ գավառում Լողլողանի պարտության մասին, այդ ճակատամարտին էլ եմ մասնակցել:

- Կեցցե՛ս, Պերող պետ,- անկեղծորեն ուրախացավ Մուստաֆան,- կարող եմ պարծենալ, որ ճանաչել եմ քեզ պես ասպետի, ա՛խր մի փոքր վաղ իմանայի ով լինելդ...

- Լանկ Թամուրը խոստացել է ինձ եփել կաթսայի մեջ: Այնպես որ, քո ասածը միայն կեսով է համապատասխանում իրականությանը, նա ինձ

կուտի, ոչ թե հում-հում, այլ կեփի՝ նոր կուտի... Դու իրավացի ես, Ալիմարդանը ժամանակն ու պահը կորցրեց, թեր-ս չի ցանկանում վնասել հակերը:

Չաքարիան ու Մուստաֆան սկսեցին շրջել գինվորների ու ջորապահների մոտ, խրախուսում էին, քաջալերում, պահանջում էին դիպուկ նետահարել: Զվախենալ չաղաթայների նետերից, քանզի նրանց աղեղները թույլ էին հայկական մեծ աղեղներից, որով գինված էին արաբներն ու պարսիկ գինվորները: Դրանից զատ դարանակալների կեսից ավելին դեմքով դեպի ար-ս էին դարձել, չեին կարող դիպուկ նետահարել:

Վտանգավոր հարձակումն էր, որի ժամանակ չաղաթայները կմոտենային քարավանին, դիմահար կնետահարեին, իսկ թե որքան էին նրանք, հայտնի չէր:

Ալիմարդանին ծանծրացրեց նետահարությունը, որից ավելի շատ տուժում էին, քան օգուտ ունեին, վճռեց գրոհել: Այն կարող էր ճակատագրական լինել քարավանի համար, քանզի թվական գերակշռությունն իրենց կողմն էր:

- Առա՞ջ,- գոռաց, մերկ սուրը պտտեցրեց գլխից վեր,- մեզ հետ է Սալդեյը,- սլացավ առաջ, չաղաթայները հետ-եցին նրան: Աղմուկ-աղաղակներով շրջապատեցին քարավանը, հողմի արագությամբ սկսեցին պտտվել քարավանի շուրջը, միաժամանակ ավելի ու ավելի սեղմելով քարավանը: Չաղաթայները անընդհատ նետահարում էին, այն ել այս անգամ մոտ տարածությունից:

Յուս դնել հրաշքի վրա, գուր կլիներ: Քարավանում գիտեին, որ գերի չեն վերցնի, կսրատեն: Ամեն պահնորդի դեմ կռվում էին քանից-երեսուն չաղաթայ: Սրանք ոռնոցով նետվում էին պահնորդներից մեկի վրա, մի քանի կողմից նետահարում էին, այն ել մի քանի քայլ հեռավորությունից:

Չաքարիան կռվում էր Կորյունի ու Յակոբի հետ կողք-կողքի:

- Ա՛խ,- ճշաց Յակոբն ու ընկավ նժույգից:

- Կորյուն, օգևի՛ր Յակոբին,- գոռաց Չաքարիան:

Կորյունը նետվեց Յակոբին օգնելու, զոհ գնաց Ալիմարդանի սրին: Չաքարիան բարձրացրեց սուրը, սակայն Ալիմարդանը գիտեր ում հետ գործ ուներ, խուս տվեց մահացու հարվածից: Չաղաթայ հրամանատարը կռվում էր հովազի պես, զարկերը նենգ էին, խաբուսիկ շարժումներ էր անում, պտտվում էր կռվողների մեջ:

- Վաճառականին չզարկեք,- գոռաց Ալիմարդանը,- տիրակալի հրամանն է:

Չաղաթայները կտոր-կտոր արեցին Յակոբին ու Կորյունին:

Յարձակվողները ճանաչել էին գաղտնապահին, փորձում էին գերել նրան: Արաբներից -ս մեկին, որ փորձում էր գերի հանձնվել, չաղաթայները սրատեցին, ապա բարձրացրեցին նիզակների վրա, ասես

ցույց էին տալիս կռվողների մոտակա վախճանը:

Միակ կռվողը, որին չէին կարողանում զարկել, Մուստաֆան էր, որն իր արաբական արագաշարժ նժույգով խույս էր տալիս չաղաթյաներից, ապա կայծակի պես շանթում էր չաղաթայներին, ցրում այս ու այն կողմ: Նա կարող էր հեռանալ, սակայն հավատարիմ տված խոսքին, կռվում էր, մի քանի անգամ փրկեց Զաքարիային:

Մարտն ավարտվում էր, նժույգների վրա էին մնացել Զաքարիան ու Մուստաֆան: Սևացձները սրատվել էին, նիզակահար արվել:

Ալիմարդանը վճռեց վերջ տալ մարտին:

- Արկա՞ն նետեք,- գոռաց թիկնապահին, երեք արկան միանգամից թռան Զաքարիայի կողմը, որոնցից երկուսը նա կարողացավ սրատել օդում, մյուսը, որ լայն բացվածք ուներ, չնկատեց, իսկ երբ չաղաթայը մտրակեց նժույգը, պոկվեց տեղից, պարանը ական չթոթափած, ծգվեց: Զաքարիան ուժգին ցնցումից տապալվեց, փորձեց բարձրանալ գետնից, զուր էին փորձերը, մի քանի չաղաթայներ վրա ընկան, կապկացին: Վերջ, կատարվեց տիրակալի հրամանը, գաղտնապահը գերված էր: Ալիմարդանը ուրախությունից վեր-վեր էր թռչում թամբին:

- Կապե՞ք, ամո՞ւր կապեք: Դուք երկուսդ սանձը չթողնեք, գլխով եք պատասխան տալու: Վերջ տվեք վիրավորներին: Ուղտերը բարձեք, հակերին ձեռք չտաք:

- Թումանչի, արաբ փահլ-ան մնաց,- ասաց թիկնապահը:

Նրա խոսքերն ուշքի բերեցին Զաքարիային, տեսավ, որ մարտադաշտում մենակ Մուստաֆան է մնացել:

- Մուստաֆա՛, փախի՛ր, փրկվի՛ր,- գոռաց Զաքարիան,- ազատվիր, դու իսկական ասպետ ես,- տնքաց, չաղաթայ զինվոր զարկեց մտրակով:

Մուստաֆան պտտեցրեց նժույգը:

- Տափաստանի շնագայլեր, թող Ալլահը պատժի ձեզ, ափսոս, Պերոզ վաճառականին,- աշտանակեց նժույգն ու հողի պես սլացավ, անհայտացավ տեսադաշտից:

Ալիմարդանը ուշք չդարձրեց արաբի փախուստին, կար-որն այն էր, որ գերել էր Զահիրին:

Մոտեցավ առաջին հակին, բացեց, զենքեր էին՝ սրեր, դաշույններ, նիզակի ծայրապաններ, օղազրահներ: Երկրորդը բացեց, դարձյալ զենքեր էին, երրորդը՝ զենքեր էին:

- Ահա թե ո՞վ է հայերին զինում մեր դեմ...

* * *

Ամեն ոք, ով ծգտում է իշխանության, հարկ է գիտենա, այն գալիս է դժվարությամբ, տքնանքով, իսկ եթե մեկը ի ծնե իշխանություն ունի, պիտի գիտենա, պատրաստ լինի ամեն տեսակի փորձությունների:

Կարա Յուսուֆն այսօր բազմել է հոր գահին, հասել է անսահմա-

Նափակ իշխանության, կարող է մատի մի շարժումով, ամենաեր-ելի մարդուն գլխատել տալ, աղքատին վեզիր կարգել, իշխան: Յայրը չկա, նա Զենսեթի հուրիների հետ սեր է վայելում: Իսկ նա՝ Յուսուֆը կարող է այդպիսի ճակատագիր ակնկալել, ի՞նչ է արել Յուսուֆը, շարդել է Լողլողանին: Նա հասու է, որ այդ հաղթանակը չեր կարող լինել առանց հայերի: Ս-ախոյ թուրքերը նրան երկինք են հանում, սակայն նրա փառքի կողքին կա գյառու ասպետի փառքը: Վեհերի մասին թուրքերը խոսում են ակնածանքով: Ստույգ է, իրեն են համարում Լողլողանին շարդողը, սակայն նա չի մոռացել, որ մարտը վարում էր հայ ասպետը, ինչպես կարող է մոռանալ հայերին: Երբ հիշում է ճակատամարտը, տեսնում է Անահիտին, որ հերարձակ արշավում էր մարտադաշտում: Յիշում է այն պահը, երբ հուրին կանգնեցրեց իր նահանջող գինվորներին: Չեր մոռանում Անահիտի ողբերգական վախճանը: Տրտմտում էր, հոգու խորքում նախանձում Թովմային, այդ զարմանալի մարդուն՝ նրա աստվածային սիրո համար, որին աստվածներն արարել են հրաշագործությունների համար, որպեսզի մարդկանց իր հետ-ից տանի մարտի ու սիսրանըների: Մարդ, որին անվերապահորեն հավատում են ու լսում են թե՛ հայերը, թե՛ թուրքերը: Նա իր կապուտակ աչքերով լույս է սփռում շուրջը: Աստվածները Թովմային ըստրել են մեծագործությունների համար, չես կարող դա ժխտել: Չի զարմանում հայի մասին այդպիսի մեծարանքով խորհելու համար...

Իսկ մնացածները՝ Աստղիկը, Ոսկանը, այդ ավագակապետը, հապա Միերը, իսկ Կայծենի մասին հիշելիս կատաղում է, հայերն անգամ խենթերին մարտի հանեցին, այո՛, զարմանալի ժողովուրդ են հայերը:

Նա բոլորին հիշում է հականե հաևկանե: Նրա վեզիրը կաշվից դուրս է գալիս լուրեր հայթայթելու համար: Յուսուֆը հասկացել է, որ Երեկով դաշնակիցները Յայոց Գաղտնի Ուխտի անդամներն են, թե՛ նա ու վեզիրը անխոս պայմանավորվել են չխոսել այդ մասին, սակայն չեն ել մոռանում:

Նրանք գիտեն, որ Լանկ Թամուրը նորից կգա Յայաստան, դարձյալ ստիպված կլինեն դիմելու հայերին:

- Վեզիր, միշոց մի խնայիր: Մենք պիտի իմանանք Լանկ Թամուրի մասին ամեն ինչ, նրա յուրաքանչյուր քայլը: Թող մերոնք հետ-են նրան, Բայազետ սուլթանին, Թողթամիշ Խանին: Ամենքին, ումից կարող ենք վտանգ սպասել: Յայրս խելացի մարդ էր, սակայն նա միշոցներ չեր տալիս խուզարկուներին, իսկ ես ոչինչ չեմ խնայի: Մենք պիտի իմանանք, թե մեր թշնամիները ինչ են փսխում իրենց կանաց ականջներին անգամ, ամեն-ամեն ինչ: Մենք չենք ների մեր անտեղյակությունը, դա աններելի է մեզ համար:

- Տե՛ր իմ, դու արժանի տեղ կգրավես Ղարա Ղոյունլի սուլթանների մեջ, դու գիտես, որ Թամուրը Դաշտի Ղփչաղում ու Ֆարիստանում շարդել է իր թշնամիներին: Ոչ Թողթամիշը, ո՛չ Շահ Սանսուրը չեն կարողա-

ցԵԼ ՌԻՄԱԴՐԵԼ: Արդ, նա դարձյալ գալիս է Յայատան:

- Ի՞նչ ես պարզել, մտադի՞՞՞ չէ պատերազմել Բայազետի դեմ, պատասխան տուր առանց աճապարելու, քանզի այս պարագան կար-որ է մեզ համար: Յայատանն ու վրաց աշխարհը չաղաթայներն ավերել են: Լավ է՝ խորհիր, պաշտոնդ է, դրանով ես հաց վաստակում: Չխոսես, որ Լանկ Թամուրը պատերազմում մեծ կարուստներ է կրել, իսկ Բայազետը մեծ պատերազմի մեջ դեռ չի մտել, մի քանի տարի նա հանգիստ է ապրում, ուժ է կուտակում: Նա նախապատրաստվում է Մեծ պատերազմի: Դու նոր բաներ ասա, որ մենք դեռ չգիտենք:

Վեզիրը խոնարհվեց, ապա շոյեց մորուքը:

- Տե՛ր իմ, իմ գիտեցածները միայն լուրեր են,- սուլթանը զարմացավ, քանզի վեզիրի հայացքում քծնանք չտեսավ, հասկացավ, որ պատասխանելու համար հարկ էր խորհել, ոչ թե կեցվածք ընդունել: - Դա հաճո էր սուլթանին,- Տե՛ր իմ, դու ասացիր պատճառները, որոնք անհնար են դարձնում կադ շեյթանին պատերազմելու Բայազետի դեմ: Լիահույս եմ, այս անգամ չեն պատերազմի, թեպետ Լանկ Թամուրը, ի զարմանս աշխարհի, կարող է թքել պատերազմական բոլոր օրենքների վրա: Իսկ Բայազետին էլ հարկավոր է պահել Բալկանների հողերը, սերբերը շատ անհանգիստ են դարձել: Բայազետի կյանքի գերագույն նպատակը Կոստանդնուպոլիսի գրավումն է, որը գրավելուց հետո միահեծան տեր կդառնան Ասիայում...

Յուսուֆը հասկացավ, որ վեզիրի անհանգստությունը անհիմ չեր, նա կարող էր երկու տիտանների արանքում ճգմվել, անհետանալ աշխարհից...

- Սպասի՛ր, վեզիր, ի՞նչ է՝ մեզ հաշվի չեն առնում նրանք,- ստիպեց իրեն հանգստանալ,- այո, մեր զորքերը սակավ են նրանց հետ չափվելու համար,- զայրացավ, քանզի այն, ինչ խորհեց, որպես վտանգ կախվել էր իր գլխին,- զարմանում եմ, որ նրանից ոչ մեկը չի փորձում վերացնել մեզ: Դա վիրավորական է, նա- ուրախալի, ինար է ապրելու, դա սակայն խարկանք է, իսկ հետո...

- Այ, տե՛ր իմ,- վեզիրը հարգանքով նայեց սուլթանին,- դու ավելի հեռատես ես, մենք ստիպված կլինենք ընտրել: Բայազետը նստած է իր հողերի վրա, Թամուրը եկվոր է: Նա չի մնա Յայատանում, ետ կքաշվի, չի կարող ձմռանք հսկա բանակը կերակրել Յայատանում: Զմոռանանք նա- Լողողանի պատմությունը: Աստված մի արասցե այդ մասին մեզ հիշեցնի Լանկ Թամուրը: Մենք, տեր իմ, ստիպված ենք անցնել Բայազետի կողմը...

Սուլթանը մռայլվեց, կախեց գլուխը, ասես ամենը նոր էր նրա համար, սակայն վեզիրի ասածները նորություն չեին նրա համար:

- Բայազետը մեզ կուլ կտա, չե՞ս խորհել այդ վտանգի մասին:

- Ցավոք, կա այդ վտանգը...

- Յարկ է խորհել այս պարագայի վրա: Եթե հաղթի Լանկ Թամուրը

- Ետ քաշի բանակը, մենք դարձյալ կմնանք մեր հողերի վրա, իսկ Բայազետը բագե է: Նա մեզ կրզկտի նա- որպես դաշնակցի: Նա կգրավի Կոստանդնուպոլիսը, հետո կգա Յայաստանի հերթը, Վրաստանի, Աղվանքի, լեռնականների, դուրս կգա Կասպից ծով:

«Դժվար է սուլթան լինելը,- հիշեց հոր մշտագբաղ դեմքը,- այո՛, դժվար է, Միթե՞ հայրս չեր խորհում այս հզոր գազաններից մեկն ու մեկն կողմից հոշոտվելու վտանգի մասին: Ափսոս, քանի կար հայրս, անհոգ կյանք էի վայելում: Արդ, պիտի խորհեմ երկրի մասին: Այո՛, կամ պիտի գլխիդ գոռ տաս, կամ գնաս ոչխար արածացնելու»:

- Այո, դժվար գործ է,- մռմռացրեց քթի տակ,- մեզ մնում է հայերի հետ սերտ կապեր հաստատել, որպեսզի պատերազմի դեպքում դարձյալ լինենք միասին:

Վեզիրն ուշադիր նայեց սուլթանին: Նրան զարմացնում էր սուլթանի պահվածքը: Յուսուֆը սուլթան դառնալուց հետո շատ էր փոխվել: Նա հասկացել էր պատասխանատվության մեծությունը: Նա մանկուց գիտեր Յուսուֆին, գիտեր նրա անսանծ քնազրությունը, իսկ այս պահին Յուսուֆը զարմացնում էր իր զսպվածությամբ, որի տակ վեզիրը ինչ-որ գիշատչային բան էր տեսնում:

- Վեզիր, ի՞նչ կասես հայերի մասին, կդաշնակցե՞ն մեզ հետ, խոսի՞ր, վեզի՞ր:

- Դժվար է, տե՛ր իմ: Մայրիների պուրակի ճակատամարտից հետո դու ընկար Շարաֆիի լարած թակարդը, քո մարդիկ հարձակվեցին հայ ուխտավորների վրա,- վեզիրը լռեց, հասկացավ, պաշտոնին վայել նրբանկատ չեր եղել, տեսավ, ինչպես սուլթանի քունքի երակը լցվեց առյունով, սկսեց արագ-արագ բարախել: «Կպատժի՞, թե՞...»: Ուրախացավ, քանզի սուլթանը խոսեց հանգիստ ձայնով:

- Ոչինչ, մեծ վտանգի առաջ հայերը կմոռանան նախկին վիրավորանքը: Նրանք սթափ մարդիկ են, հատկապես Վահեն, որ նրանց Ուխտի գլխավորն է: Նա արժանի է վստահության ու հարգանքի, հետո չմոռանանք, որ ուխտավորներից ոչ մեկին մերոնք չեն սպանել: Այո, Վահեն արժանի է հարգանքի,- տեսնելով վեզիրի զարմացած հայացքը, ավելացրեց,- չեմ կարող մոռանալ նրա քաջությունը, մարտ վարելու հստությունը, եթե նա չլիներ, դժվար կլիներ հաղթել Լողլողանին:

Սուլթանը ծեր վեզիրին այնպիսի դաս տվեց, որ սա մնաց բերանքաց:

«Այս ի՞նչ է պատահել Յուսուֆին, հոր մահից հետո Վահեի անունը լսելիս կատաղում է: Օ՛, Ալլահ, ինչպես է կարողանում տիրապետել ի-րեն,- հանկարծ հասկացավ, որ սուլթանին հաճո է իրեն զարմացած տեսնել, ծիծաղեց մտքում,- իսկ ի՞նչ կա որ, ես ել ինձ զարմացած կձ-ացնեմ, դա ավելի կզսպի նրան, տե՛ս, Ե՛, լակո՞տ: Դու չես խաբի ծեր վեզիրիս»:

- Չե՞մ կարող թաքցնել զարմանքս, տեր իմ: Դու ատում եիր Վահե

փահլ-անին, սակայն ինչպես պատահեց...

- Մենք սուլթան ենք,- մռայլվեց սուլթանը,- հասկացա՞ր, վեզիր: Ի՞նչ են խորհում Յայոց Գաղտնի Ուխտի մասին: Չե՞ն տալիս ժողովորի մեջ նրանց գլխավորների անունները:

- Տեր իմ, քանի հեռանում է Թամուրը մեր երկրից, այնքան ավելի քիչ են խոսում Ուխտի մասին: Երբ դարձյալ լսեն Թամուրի նոր արշավանքի մասին, դարձյալ... Մեկ է, հայերը չեն խոնարհվի, դարձյալ կել-նեն կռվի:

- Ի՞նչ լուրեր ունես Վահեից, Թովմայից, մասցածներից՝ մեր դաշ-նակիցներից: Մեր «սիրելի, զինակիցներից», - Ժպտաց սուլթանը:

- Վահեն Դվինում է, ազգականներից մեկը նրան փոքրիկ կալվածք է ընծայել, գնացել է տիրություն անելու: Յարկ եղած դեպքում անմիջապես գործի գլուխը կանցնի: Ազնիվ մարդ է... Աբեղան ողջ է, Մեծորայում է: Յայերը նրան սրբերի դասն են հանել: Մնացածներն ել իրենց շե-ներում են, համոզված եմ, հարկ եղավ, դարձյալ կլինեն միասին: Յայերը գիտեն և սիրվել գաղափարի, նա- խորամանկ են: Մեկ-մեկ, երբ դանակը ուկորին է հասնում, միավորվում են, ինչպես անցյալ պատերազմի ժամանակ, սակայն մեր օգուտն է, որ ազգովի չեն միավորվում, դժվար կլի-նի դեմս առնել...

- Ի՞նչ է անում ավագակապետը:

- Սոսն իր գործն է անում: Թալանում է միայն հարուստներին, թե մեր, թե հայերի: Նրան հայ, թե թուրք՝ սիրում են, պաշտպանում: Ըս-տիր կռվող է, անհնար է բռնել, ժողովուրդը սիրում է ու թաքցնում...

- Իսկ շնով ման եկողը: Ի՞նչ գիտես նրա մասին:

- Ման է գալիս շեներում, խենթը խելոքացել է, - ծիծաղեց վեզիրը, - նա իրենց կրոնի ու եկեղեցու դեմ է ելել...

- Գիտեմ, - իր հերթին ծիծաղեց սուլթանը, - Աստծուն դեմ չե, սակայն չի ընդունում Խաչյալին, ասում է՝ ոչ դրախտ կա, ոչ դժոխք: Գոռում է, որ մարդիկ այս կյանքում մարդավարի ապրեն, ասում է, մի խարվեք հան-դերձյալ կյանքով, սրանով ևա Շարիաթին ել է զարկում: Այդպիսի մի քանի խենթեր կարող են աշխարհը շուր տալ, - մի պահ լռեց, - վեզիր, չեմ կարողանում մոռանալ հայ աղջկան, հուրի Անահիտին, որին այրեցին Վանի պարիսպների տակ:

- Աբեղան ել չի մոռացել, սիրել են իրար...

- Վեզիր, հարկ է պատրաստվել մեծ պատերազմի, - հայերը պիտի մեզ հետ լինեն:

* * *

Թովմայի նետած տափակ խիճը մի քանի անգամ զարնվելով ջրին, սուզվեց: Նա մի քանի անգամ կրկնեց խաղը, դա մի պահ զբաղեցրեց նրան: Կռացավ, ընտրեց մի տափակ խիճ, որ նախորդներից տարբեր-

վում եր գույնով, պուտպուտիկ էր: Նայեց քարին, շուր ու մուռ տվեց, քարը փայլեց, ավելի ուշադիր նայեց, հասկացավ, որ քարը չի տեսնում: Ոչ վաղուցվա անցած-գնացած դեպքերը պատկերացրեց, ասես արթմ-նի երազ էր տեսնում:

Վերջերս նրա հետ տարօրինակ բաներ էին կատարվում, անցյալից այնպիսի բաներ էր հիշում, որ ժամանակին ուշադրություն չէր դարձ-րել: Տնքաց, իրեն ու Անահիտին տեսավ, իրենց անդրանիկ հանդիպու-մը: Ինքը զարմացած նայում է իշխանի «երես» առած աղջկան, ապա նրանց անդրանիկ համբույրն էր, իրենց ճանապարհորդությունը, քա-րանձավը, կրիվը հովազի հետ: Յիշեց Կայծենին, աչքերը փակեց, ուզեց իրենից վասել Անահիտի մոխրակույտը, որ միարճվել էր հուշերի մեջ, տիրում էր նրան, այս նորից էր մխում. ինչո՞ւ, Տեր Աստված, ինչո՞ւ եր-կուսին էլ՝ հորև ու աղջկան... ինչո՞ւ այդ դառը ճակատագրին արժա-նացրեցիր: Մի՞թե այս այրվող, սակայն չմոխրացող ազգի ճակատագ-րի կրողները նրանք պիտի լինեին: Տեր Աստված, ինչո՞ւ ամեն անգամ զոհասեղանին բարձրացանք՝ հաստատելու սպրելու մեր իրավունքը, չէ՞ որ արիական ազգ ենք, արիսերի ծննդավայրը Յայաստան լեռնաշ-խարին ե...

- Յայր սուրբ,- Թովման ցևցվեց, ետ նայեց, Կիրակոսը կողքին էր:

Երիտասարդը զարմացած հայացքից հասկացավ, որ բարձրածայն էր խոսում, կախեց գլուխը:

- Յուշերի հետ էի, Կիրակոս: Իսկ դրանք ծանր են, ինչպես ազգին ճակատագիրը,- նստեց խճերին, Կիրակոսը նստեց կողքին:

- Օրեն է, հայր սուրբ, որ ճակատագիրդ կապես ազգի ճակատագ-րին, քանզի մեծամեծ գործեր են արել, և անում ես այս պահին, ի-րավամբ սուրբ ես հռչակված՝ կռվելով զենքով, և ա-գրելով հայոց պատմությունը...

- Լավ, լավ,- անձկացավ Թովման,- անում եմ միայն կարելին, ինչ ներշնչում է Տեր Աստված, ավելին կցանկանայի, սակայն, հազար ափ-սոս, տկարացել եմ հոգով ու մարմնով...

- Մի՛ մեղանչիր, հայր սուրբ, դու հզոր ես մտքով ու բարեպաշտու-թյամբ, տա Աստված՝ ավելանան թեզ պես ազգանվեր մարդիկ...

- Ինչո՞վ ես զբաղված, ի՞նչ ես ընթերցում,- գովասանքը մի կողմ թողնելով՝ հարցրեց Թովման:

Կիրակոսն ավելի մոտ նստեց:

- Ուսուցիչ, Պղատոն եմ ընթերցում,- հայացքը շերմացավ, ասես լուս ճառագեց,- հիացած եմ իմաստասերով:

- Ի՞նչն ես հավանում իմաստասերի գործերում: Յուսով եմ, ընթեր-ցել ես նրա բոլոր գործերը, որ կան թե բնագիր, թե թարգմանաբար: Գի-տեմ, կարդում ես բնագրով, քանզի տիրապետում ես հունարենին:

- Այո, ուսուցիչ, բնագրով եմ ընթերցում: Շատ եմ խորհում Պղատո-նի մասին, հատկապես՝ համաշխարհային հոգու մասին, ինչ խոսք,

դրանք մի փոքր հակասում են մեր կրոնին, քանզի նա նյութականացնում է նա-, այդպես եմ խորհում,- տեսավ, ինչպես Թովման դադարեց խճերի հետ խաղալը, նայեց հետաքրքրված:

- Սպասի՛ր, Կիրակոս, իմաստասերի այս մտքերը, որոնք եկեղեցու հիմքերն են ամրացնում, ընդունելի են մեզ: Իմաստասերի բերած երեք գոյերի միությունը մեր աշխարհազգացողությունն է: Առաջին գոյը առաջնամիակն է, ողջ իրականության հիմքը...

- Ուսուցիչ, չԵ՞՞ որ երկրորդը միտքն է, այս ծնվում է առաջնամիակից...

- Տեսնում եմ, իրոք, ուսումնասիրել ես իմաստասերի գործերը, իսկ երրորդը Յամաշխարհային հոգին է, որ թափանցում է ամենուր, որ իր մեջ ամփոփում է ինքնաշարժման սկզբունքը:

- Իսկ հոգին, մեր հոգին,- Կիրակոսը անհանգիստ շարժում արեց,- հայր սուրբ, հոգին կա ամենուր, նա- իմ ու քո մեջ, ամեն կենդանի եակի մեջ: Ես ոչ մի տող չգտա, թե ինչպես է հոգին միանում համաշխարհային հոգուն: Յասու չեմ, իմաստասերը ոչինչ այդ մասին չի ասում, թեր-ս ևա չի հասել նման բացահայտման...

- Անհատի հոգին Յամաշխարհայինի մասնիկն է, որ իմ ու քո մեջ է նա-, քանի ողջ ենք, երբ կկնքենք մեր մահկանացուն, այս կիամբառնի ու կմիանա Յամաշխարհային հոգուն, զի նրանից բաժանվել է ժամանակավոր: Իսկ ինչպե՞ս, որտե՞ղ, դեռ ոչ մի իմաստասեր չի բացահայտել տիեզերական այդ գաղտնիքը: Մեկ-մեկ խորհում եմ, որ եթե մարդ հասնի այդ բացահայտմանը, այլ-ս ի՞նչ կմնա կյանքում գաղտնի, ոչինչ, թեր-ս այդ գաղտնիքների բացահայտումը բացի անմահության դռները մահկանացուներիս համար...

Զկարողացան շարունակել գրույցը, մոտեցավ մի երիտասարդ հոգ-որ, Թովմային հրավիրեց վանահոր մոտ:

- Սիրելիդ իմ, Կիրակոս, մենք մեր գրույցը կշարունակենք մի փոքր հետո, ես դեռ չեմ նայել բերածդ նկարները: Գիտե՞ս, դրանք հայտնագործություններ չեն, այդպիսի կեռխաչեր կան ամենուր, իսկ դու միայն գեղամա լեռներում տեսածներդ ես նկարել: Մենք քեզ հետ դեռ շատ ու շատ կգրուցենք Յայարիների մասին, կեռխաչերի ու հավերժության նշանների մասին: Այդ ամենը մնացել է որպես հիշատակ մեր հեթանոս նախնյաց... Ներիր, ես պիտի գնամ վանահոր մոտ, սրբազնը տկարացել եմ,- բարձրացավ տեղից, թափ տվեց հագուստները, գնաց ծանր քայլքով:

Կիրակոսը սիրով նայեց ուսուցչի հետ-ից:

- Կգա ժամանակը, հետևորդները կիմանան, կըսթերցեն Թովմա Մեծորացու պատմությունը, այդ դժնդակ օրերի պատմությունը... Այս, մեծ գործ է անում հայր սուրբը... Ամեն ոք հիշվում է իր գործերով, իսկ անմահանում են նրանք, ովքեր ազգանվեր գործեր են անում, անմահանում են մարդկանց հուշերում ու հայ ժողովրդի պատմության մեջ:

* * *

Այն, որ շուտով կանգնելու էր Լանկ Թամուրի առաջ, լսելու էր արհամարհական խոսքերը, ավելի էին ազդում, քան մահապատժի հեռանկարը: Իսկ երբ խորհում էր մահապատժի մասին, կամաց-կամաց համոզվում էր, որ տիրակալը իրեն չի պատժի հասարակ զորականի պես, մի նոր պատիճ կինարի, ասենք մեղրով կօծեն մարմինն ու կգտնեն մժեղսերի թնի վրա կամ փակ օթ-անում իր վրա բաց կթողնեն մի քանի մեղվազնտանիք, կամ կեփեն կաթսայում, ինչպես եփեցին Եղիլ իշխանին:

Այդ բոլոր մահերը ընդունում էր, կմեռներ արժանապատվությամբ, հաշտվել էր այդ մտքի հետ, դեռ այն ժամանակ, երբ հեռացավ տիրակալից: Արդ, նրան հետաքրքրում էր իրենց միջ- կայանալիք խոսակցությունը:

- Ավսո՞ս, որ դավաճանում են նվիրվածներն ու խելացիները...

Տիրակալի խոսքերը լսել էր Ռոշվանից, արդ, օրորվելով նժույգի թամբին, պատկերացնում էր իրենց հանդիպումը:

- Զեռքերն ազատեք, հաց ու ջուր տվեք,- լսեց Ալիմարդանի ձայնը, սթափվեց խոհերից: Նայեց Ալիմարդանին, որ նժույգավարում էր կողքին:

Զեռքերն ազատեցին կապանքներից, շղթաները գնալով կախ ընկան թամբի կողքերից, սկսեցին օրորվել նժույգի քայլքին համընթաց:

Ալիմարդանն առաջին օրը նրան կապել էր թամբին, ապա լսելով Զահիրի նախկին խուզարկու գինվորին, նրան նստեցրել էին թամբին, քանզի երկար չէր դիմանա գլուխը կախ վիճակում, արևագեղում կստանար:

Արդ, նստել էր թամբին, դիտում էր շրջապատը:

Մի խոսքով գինվոր Յասանը վարձահատույց եղավ տարիներ առաջ Զահիրի կողմից արված լավության դիմաց:

Չաքարիային հաց ու մի գավաթ ջուր տվեցին: Յացը չկերավ, երբ գավաթը մոտեցրեց շրթունքներին, տեսավ, որ գինի էր, իսմեց միևնշտակը: Ալիմարդանը հետ-ում էր նրան, դրանից հետո Յասանին արգելեց մոտենալ գերուն:

- Զահիր, դու իմ գերին ես ու քեզ մահ է սպասում, Ալլահի սիրուն, ասա՛, ինչո՞ւ զրկվեցիր տիրակալի բարեհաճ վերաբերմունքից, ախր նրա մտերիմն էիր, քեզ նախանձում էին, ինչո՞ւ դավաճանեցիր:

- Սպասի՛ր, Ալիմարդան, ես քո բոլոր ինչուներին մի պատասխան կտամ, նա- քեզանից շնորհակալ եմ, որ նստեցրեցիր թամբին, գլուխս արդեն տրաքվում էր: Լավ ես վարվում հետո, թող Ալլահը հատուցե, թե- այս ամենն անում ես ողջ ու առողջ զորակայան հասցնելու համար: Ես դավաճան չեմ, հայի դաժան ճակատագիրն ինձ հեռու էր նետել հայ-

ունիքից, իմ ժողովրդից: Ես ասացի այդ ամենս, ինչ չէի ցանկանա ասել: Այլ-ս ինձ հարց մի տուր, ես խորհել եմ ուզում:

Անգամ շղթայված՝ Զահիրը հարգանք էր Ներշնչում Ալիմարդանին: Յանկարծ նրա հոգում զարմանալի բան ծնվեց, սկսեց նախանձել Զահիրին, այ, դավաճանել է տիրակալին, վիրավորել է նրան, մի բան, որ անգամ արջաները չեն համարձակվում, – տիրակալը նրան ձերբակալելու համար մի ամբողջ գունդ է ուղարկել: Վճռեց հանգիստ թողնել գերուն, սակայն արագացրեց երթը: Զաքարիան անտարբեր շրջապատի հանդեպ, դարձյալ խոհերի հետ էր:

Օրերն անցնում էին չաղաթայների համար սովորականի պես, հանդիպակած շեները թալանվում էին, ավերվում: Ալիմարդանը թալանից բաժին էր հանում զինվորներին, սրանք պատրաստ էին նրա հրամանով անգամ սեփական ծնողներին դավաճանել, թալանել:

Զաքարիան, որքան էլ իրեն նախապատրաստած լիներ, չկարողացավ չսոսկալ, երբ մտան զորակայան:

«Ես իմ խաչը պատվով եմ տարել, հանգիստ կմեռնեմ», - խորհեց ու ժպտաց:

- Զահիր, դու բուլատ ես: Ախր տիրակալը քեզ կքառատի, ցից կհանի, իսկ դու ժպտում ես, հասու չեմ...

- Ալիմարդան, ինչ փուլյթ, վաղ թե ուշ մեռնելու եմ: Մարդ պիտի մաքուր խղճով մեռնի: Եթե վերջին պահին մարդ իրեն մարդ զգաց, ապա դրախտ կընկնի: Մարդ պիտի բարի հիշողություն թողնի իր մասին..

Չորակայանում հետաքրքրությամբ դիմավորեցին Զաքարիային: Փսփսացին, որ տիրակալի ապօրինի որդին է հայ կնոշից: Մի մասն էլ՝ թե թագուհիներից մեկի սիրեկան է, փախել էր տիրակալի պատժից: Այն, որ գերին հանգիստ երանգամ ժպտում էր, չեր զարմացնում՝ խորհում էին, որ արդեն խելքը թռցրել է: Տիրակալին զեկուցեցին, որ Ալիմարդանը կալանել ու զորակայան է բերել Զահիր զաղտնապահին: Թամուրի տրամադրությունը ընկավ, մեծամեծները զարմացան, նրանք հակառակ էին սպասում: Ասես տիրակալն ափսոսում էր, որ գերել են Զահիրին, հասու չեին տիրակալի խոհերին:

- Ներս բերեք գերուն,- ասավ ու թեք ընկավ բարձերին, ապա կտրուկ նստեց, դիք նստեց, ինչպես մեկ-մեկ իրենց ուժեղ ցույց տալու համար նստում են ծերերը:

- Տիրակալի հրամանը կատարված է, կալանել ու բերել եմ Զահիր զաղտնապահին - գորգերին ծնկի իշավ ու զեկուցեց Ալիմարդանը:

- Ապրե՞ս, Ալիմարդան, արժանի՞ ես պարգ-ի, նե՞րս բեր Զահիրին: Ծղթաներից բռնած, այսպես, ինպես կատաղած հովազներին կամ կատվառյուծներին, ներս բերեցին գերուն:

Զինվորներն ուժով ստիպեցին գերուն ծնկի գալու: Զահիրը պառկեց հատակին, սակայն չծնկեց, ապա գերմարդկային ճիգով ոտքի ելավ, կանգնեց հպարտ: Զինվորներից մեկը, որ մտրակը բարձրացրել էր

հարվածելու համար, հանդիպելով տիրակալի սառը հայացքին, իշեց-
րեց մտրակը:

Չահ Մելիքը, որ ափսոսանքով ու կարոտով նայում էր ընկերոջը,
փորձեց մոտենալ գերուն, սակայն սաստվեց տիրակալի հայացք,
կախեց գլուխսը:

- Օ՛, Ալլահ, արժե այսպես ապրել,- մռմռացրեց տիրակալի հավա-
տարիմ զինակիցը,- ափսո՞ս, հազար ափսոս,- ասաց ու ձեռքերը կրծ-
քին խաչած, անշարժացավ:

- Չահիր բուխարացի, Չահիր գաղտնապահ, ինչո՞ւ դավաճանե-
ցիր, ինչո՞ւ հեռացար...,- Չաքարիան ուշադիր նայեց թամուրին, տե-
սավ, որ սա իրենց վերջին հանդիպումից հետո ծերացել է, ասես կրել է
տարիների ծանրության տակ, ոտքն էլ անքնական ճգված է պահում:

- Յարցիս պատասխանելու փոխարեն, նայում ես խղճահարու-
թյամբ: Ասես ոչ թե դու ես գերի, այլ ես: Դու միշտ էլ անկեղծ ես եղել,
դրա համար էլ քեզ բարձրացրեցի մնացածներից...

- Ծերացել ես, տիրակալ: Դու էլ ես մահկանացու, ի՞նչ կլինի սրանց
վիճակը, երբ կնքես մահկանացուդ,- մի քիչ սպասեց, - սրանք կբզկտեն
պետություններ, դա արձագանք կտա աշխարհով մեկ, ստրկացված ժողո-
վուրդները կփշրեն չաղաթայների լուծը: Նա- իմ ժողովուրդը՝ հայերը...

Տիրակալը բարձրացրեց ձեռքը, Չաքարիան հին սովորույթով լուց,
որից նրա մեջ դժգոհություն ծնվեց:

- Դու պատասխանեցիր իմ մի հարցին, ինչո՞ւ հեռացար, մի՞թե քեզ
չեի վստահում: Ես քեզ հավատում եի...

- Այո՛, տիրակա՞լ, դու ինձ հավատում եիր: Ես քեզ նվիրված եի,
պատրաստ եի կյանքս տալ քեզ համար:

- Դրա ժամն էլ եկավ:

Չաքարիան քմծիծաղ տվեց, որից տիրակալը անախորժեց, սա-
կայն չհասցրեց խոսել:

- Տիրակա՞լ, ինձ համար, որ անցել եմ ահն ու մահը, այլ-ս ի՞նչ սար-
սակի: Ես կատարել եմ պարտք ժողովրդիս հանդեա: Ես այստեղ իմա-
ցա ծննդյանս գաղտնիքը, դարձի եկա Քրիստոսի կրոնին, արեցի այն,
ինչ կարող եի: Խիղճս հանգիստ է, ես հանգիստ կմեռնեմ:

- Սպասի՛ր, Չահի՛ր: Չահ Մելիք, որտե՞ղ են թագուհիները, թռօ-
ներս, մեծամեծները, զինակիցներս,- ծանր տնքոցով ոտքի ելավ,- կան-
չեք ամենքին, շտապ թռղ գան: Չահ Մելիք, գիտեմ՝ ընկերոդ է այս հայի
լակոտը, սիրում ես նրան: Չահիրը փրկել է կյանքը: Մի՛ կախիր գլուխսդ:
Ես էլ եմ այս լակոտին սիրում, սակայն նա պիտի մեռնի հանուն մեր սր-
բությունների, որոնց համար մենք ապրում ենք, որոնց պաշտպանելու
համար մենք կարող ենք մեռնել: Դու քանդեցիր այն ամենը, ինչ ստեղծել
եր Մեծն Զինգիզը:

Մոտեցավ Չաքարիային, մտրակով բարձրացրեց ծնոտը, նայեց
աչքերի մեջ:

- Զի Ել վախենում: Ո՞ւր Են թագուհիները,- այսպէս գոռաց, որից Ներկաները ընկրկեցին, տիրակալը ստիպեց զապել իրեն, սակայն չդիմացավ, նորից գոռաց,- իրամայել Եի կանչել, ի՞նչ եղան:

Թագուհիները Ներս մտան հուշիկ քայլերով, անգամ Մելիքեին կարկամեց, ևա վաղուց ամուսնուն այդպէս կատաղած չեր տեսել:

Նայեց հավաքվածներին, դառը քմծիծաղ տվեց:

- Դանդաղ եք շարժվում, գիրացել եք, մտքով տկարացել: Վճիռներ չեք կարողանում ընդունել: Չեր մեջ մեռել է չինգիզիների ոգին, դուք ի՞նչ չինգիզներ , - աչքն ընկավ Զահիրին, սա, առանց թաքցնելու արհամարիանքը, նայում եր ասթարթ: Տիրակալը կատաղեց,- Զարախնդո՞ւմ ես, հայի լակոտ: Ես քեզ սրանցից խելացի ու բարձր Եի համարում, բացատրիր սրանց, ինչ՞ու դավաճանեցիր, ի՞նչդ եր պակաս: Չիսուս պարտքից, դու, թլփատված լակոտ: Մենք քեզ մարդ դարձրինք, իսկ դու...,- սպասածին հակառակ հանգստացավ:

Առաջինը Շահ Մելիքը հասկացավ, որ այս ամենը խաղ էր, տիրակալը արդեն վճռել էր Զահիրի ճակատագիրը, մնացածը սրանց վախեցնելու համար էր:

Տիրակալը նստեց, մնացածները ոտքի վրա էին:

- Ի՞նչ ես ուզում մահից առաջ: ՉԵ, դու Էստեղ չես սպանվի,- ձեռքով ետ քաշվելու իրաման տվեց Չինգիզին, սա, որ մի քայլ առաջ էր Եկել, ետ քաշվեց, սուրը սեղմեց ուսին,- կանչե՛ք դահճապետին:

Ներկաները լարվեցին, ի՞նչ վճիր էր կայացնելու տիրակալը, ի՞նչ մահ էր ընտրել Զահիրի համար:

Ներս մտավ կարմրազգեստ դահճապետը, յուրտի դռանը հավաքվեցին նրա օգնականները, իրենց պետի նման հսկաներ:

- Զահի՛ր, դու հասարակ զինվոր չես, դու Եղել ես իմ խորհրդատուն: Չո մահն էլ կլինի ոչ հասարակ,- հայացքը փախցրեց, չնայեց Ուլուկբեկին: Գիտեր, որ թոռան հայացքում կշտամբանք է տեսնելու: Դարձավ դահճապետին,- սրան կեփեք կաթսայի մեջ, հենց այստեղ, յուրտիս առաջ: Ես մեր շներին մարդու մսով պիտի կերակրեմ, ասում են դրանց հետո կատաղում են մարդու պես... Արա՛գ, կաթսա՛ բերեք, շուր Եռացնեք,- նայեց սարսափից քարացած թագուհիներին,- գնացե՛ք, սպասե՛ք դրսում, չիեռանա՛ք, ամենքդ Ել պիտի տեսնեք այս պատիժը: Գնացե՛ք,- թափ տվեց ձեռքը:

«Եթե Զահիրը դավաճանեց իր ժողովրդին ծառայելու համար, ապա սրանք կդավաճանեն սեփական շահի համար... Ափսոս, որ դավաճանում են խելացիներն ու նվիրվածները»:

- Դո՛ւ, հայի լակո՞տ, հասկացա՞ր, ինչ արեցիր, դու իմ մեջ սպանեցիր հավատը սրանց հանդեպ, լակոտ...

- Քեզ ամենքն էլ դավաճանում են, տիրակալ, Եկել է վախճանդ... Դու ծեր ես, անուժ...

- Լոի՛ր, լակո՞տ: Ես դեռ որպէս այրմարդ ու զորական զորեղ եմ...

Չաքարիան հոհուաց:

- Ի՞նչ ես խրխնջում տափաստանի հովատակի պես,- զարմացավ տիրակալը: Ապշեց, երբ Չաքարիան նստեց գորգերին:

Տիրակալը նստել էր բարձերին, մահապարտը՝ գորգերին: Թիկնապահ Չինգիզը երբեք այդպիսի բան չէր տեսել, ինչպես չզարմանար թիկնապահը:

- Դու վտանգավոր մարդ ես, Չահիր: Սակայն դու իրավացի չես, ես ծեր չեմ, այդ ժամանակն ու տարիներն են իմ մեջ ծերացել: Գիտե՞ս, Չահիր, դուք՝ հայերդ, զարմանալի ժողովուրդ եք: Երբ մեկը դավաճանում է, ուզում ես խորհել, որ փուչ ժողովուրդ եք, հանկարծ մի Մարտիրոս է ծնվում: Մի իշխան իր սուրը դնում է ոտքերիս տակ, մյուսը պատրաստ է գլուխս կտրել... Զգիտես ի՞նչ խորհել հայերիդ մասին: Այո՛, այո՛, իրավացի է պատմիչ Շամսետինը, այդ ամենի պատճառը արիական լինելն է: Ավսո՞ս, այո՛, ավսոսում եմ քեզ հայի լակոտ, սակայն չեմ կարող ներել, դա դեմ կլինի Չինգիզի պատգամին, քանի որ մեռնելու ես, կասեմ այս, ինչ հասկացա հայերի մասին: Մենք շատ երկրներ ենք գոավել, կոտորել ժողովրդին - հասկացանք, որ դուք՝ հայերդ, ապրելու եք, քանզի արիական ազգ եք, ձեր մեջ արիավիրքի պահին հառնում են նրանց հոգիները - ծնվում են Մարտիրոսներ, Չաքարիաներ, - նրանք ավելի են, քան դավաճաններ... Երկար լռեց, ապա թափ տվեց գլուխոդ, - դու մի բանում ես իրավացի, ես, իրոք, ծերանում եմ... Դու պիտի մեռնես, որ պեսզի քեզ հետ տանես իմ այս խոստովանությունը, դու պիտի մեռնես, որ ես հանգիստ ծերանամ... Վե՛րջ, շատ խոսեցինք, ավսո՞ս...

Ծափ զարկեց, ներս մտավ Շահ Մելիքը, ապշեց, տեսավ տիրակալի ժպիտը: Գորգերին հանգիստ նստել էր Չահիրը: Շատ բաներ տեսած, զարմանալուց ետ սովորած զորավարը, խորհրդականը, տիրակալի մտերիմը կորցրեց իրականության զգացումը, ի՞նչ խորհեր խեղճ մարդը, մի՞թե ներում է...

- Խարույկի հոտ չեմ առնում, ինչո՞ւ է զլանում դահճապետը: Ինչո՞ւ չես պատժում դահճապետին:

- Ներող եղիր, տիրակալ:

- Խարույկ վառեք,- գոռաց Լանկ Թամուրը: Նրա աչքերը փայլում էին,- շտա՛պ,- Շահ Մելիքը ետ-ետ գևալով՝ դուրս եկավ յուրտից:

Զիշ անց խարույկի ծխի հոտը լցվեց յուրտ: Թամուրը ժպտաց Չաքարիային:

- Խարույկը պատրաստ է, ի՞նչ կասես, Չահիր...

- Յայերն ասում են՝ ով մեռնում է ժողովրդի համար, անմահանում է...

- Ավսո՞ս,- մռայլ ասաց տիրակալը, իրամայեց տանել գերուն...

* * *

Ասողիկը, ականջը ձայնի պահած, քամու ոռնոցի մեջ ձայներ էր լսում:

Ավել մոտ էր, սակայն քամին սաստկանում էր: Առագաստը վաղուց եին հավաքել, առատ որս եին արել, իսկ ափ հասնել... Հսկայական ալիքները նավակը քշում եին ափամերձ ժայռերը:

Մի մեծ ալիք փլվեց նավակի վրա, այս դիմացավ, քամին բզկտեց ամպերը:

Տեսան ափը, մարդիկ եին հավաքվել, ուզում եին օգնել ձկնորսներին, սակայն ինչպե՞ս օգնել: Վաղուց այդպիսի թարթառ չէր եղել:

Քամին համառորեն նավակը ժայռերն ե քշում, քիչ էլ՝ ու ջարդ ու փշուր կլիներ նավակը: Նավակում եին Ասողիկը, որդին՝ Տիգրանը, ծերունի Աստուրը, Ասողիկեսց հար-ան Հաբեթնակը:

Փրկությունը լողալով պարան ափ հասցնելն էր, ափից պարանով նավակը կքաշեին, կիեռացնեին ժայռերից: Մի նոր ալիք փլվեց նավակի վրա, այս անգամ էլ նավակը դիմացավ:

- Ասողիկ,- քամու ոռնոցի մեջ գոռաց Ասատուրը,- չեմ իշխում, ավագը դու ես, ախր ջարդ ու փշուր կլինենք, ձուկն էլ կթափվի, ափսոս է, այսպիսի առատ որս արած չկայինք... Հարկ է պարանը լողալով ափ հասցնել: Այս, երիտասարդ տարիներիս մի անգամ...

Խոսքն անավարտ մնաց. մի նոր ալիք փլվեց նրանց վրա, ծերունին մի կում ջուր կուլ տվեց, թքեց ու մի լավ հայիոյեց,- ափսո՞ս, ծեր ես...

- Հայրիկ, ես կլողամ:

Ասողիկը վախեցավ, սակայն վախը տեղի տվեց հիացմունքին:

- Դու ձկան պես ես լողում, հարկ է զգույշ լինել, չզարկվես ժայռերին, ստույգ մահ է:

- Հայրիկ, մերոնք այս ու այն կողմ են վազում, իսկ օգնել չեն կարող:

- Հա՛, եղբայրներդ են,- նկատել էր կնոջը, չխոսեց նրա մասին, հանկարծ պատկերացրեց նավակը ժայռերին զարնվելիս, ապա տեսավ ինչպես են իրենց դիակներն ափ հանում,- թո՛ւ, թքեց կատաղած,- պարանն էլ կարճ է: Կարծյո՞ք, քամին կտրվում է, թե՞ մեղմում:

- Ինձ տվեք պարանը, ես կլողամ,- Հաբեթնակն էր:

- Պարանը տո՛ւր,- իր հերթին շտապեցրեց Տիգրանը:

- Դու գործ չունես, կնկանդ փորը բերանին է հասել,- ծիծաղեց Հաբեթնակը,- անհեր կմնա աղջիկը...

Ասողիկը հարգանքով նայեց Հաբեթնակին, հանկարծ նրա գիտակցությանը հասավ ընկերոջ ծիծաղի պատճառը:

- Մարդ Աստծո,- մոռանալով գլխներին կախված վտանգը, զայրացավ Ասողիկը,- ինչո՞ւ աղջիկ, լեզուդ չորանա: Ես տղա թոռ եմ ուզում, որ թ- ու թիկունք դառնա պապին...

- Ե՛, ինչ է, ծովափի բոլոր տղաները ձեր հարկի տա՞կ պիտի ծնվեն,- հոհոաց ծերունի Ասատուրը, հասկացավ, ընկել էր Հաբեթնակի լարած թակարդը,- գործ եք գտել, երբ ջարդ ու փշուր ենք լինում... Թող Տիգրանը լողա: Իսկական այրմարդ է, երեք ավազակ է սպանել, որդիդ իսկական ձևնորս է, թող լողա: Սակայն սպասի՞ր, Ասողիկ, քամին մեղմում է...

- Թքա՞ծ, մինչ- քամին կտրի, մեզ կփշորի ժայռերի վրա,- ասաց Հաբեթ-

Նակը: Տիգրանը հոր ձեռքից խլեց պարանը, կապեց մեջքին, հաջորդ ակնթարթին հայտնվեց ջրի մեջ: Ասողիկը բռնեց պարանի ծայրից, ասես որդու շերմությունը պարանով անցավ նրան:

Ձևորսները տեսնում էին միայն Տիգրանի գլուխը, որ մեկ ասհայտանում էր, մեկ՝ հայտնվում ջրի վրա: Ասողիկը սեղմել էր ատամները, աչքի տակով նայում էր ժայռերին, որ ահասարսուա մոտենում էին, ավելի սույզ, նավակն էր քշվում դեպի ժայռերը:

- Տիգրան, զո՞՞ տուր, մի քիչ էլ, որդի՞,- գոռում էր Ասատուրը:
- Չջից ժայռերն են, Տիգրան,- գոռաց Յաբեթնակը,- ա՛յ տղա, ջրի տակով լողա, ալիքները չեն խանգարի,- ձայնը խզվեց:

Թեր-ս Տիգրանը լսել էր Յաբեթնակի ձայնը, սուզվեց, երկար ժամանակ չէր եր-ում, Ասողիկի շունչը կտրվեց, քիչ մնաց քաշեր պարանը, սակայն Յաբեթնակը ձեռքը դրեց նրա դաստակին:

- Չքաշե՞ս, կխանգարես...

Յանկարծ Տիգրանի գլուխը հայտնվեց ժայռերից մի փոքր աշ: Ասողիկը գրկեց Յաբեթնակին:

- Ապրե՞ս, եղբա՞յր, ժամանակին զգուշացրեցիր, ել վտանգ չկա:

Սա աչքերն եր սրբում, չգիտես արցունքներ էին, թե ծովի աղի ջուրը:

Վերջապես Տիգրանն ափ հասավ: Նրան դիմավորեցին ջուր մտած դիմավորողները: Նավակը ցնցվեց, ափից սկսեցին պարանը քաշել: Ասատուրը ձեռքերը երկինք կարկառեց.

- Փառք շատ, Ծովինա՞ր աստվածուիի, այսօ՞ր, վա՞ղը, հավիտյանս հավիտենից,- ծերունին լալիս էր:

- Փրկվեցինք,- ծիծաղեց Ասողիկը, - տեսեք ինչ պատիվ են անում մեզ, մեզ սուրբ թովման է դիմավորում: Յաբեթնակ, թե տղա ծնվեց, ծովափին ինչույք կսարքեմ, քեզ կստիպեմ ծովի ջուր խմել՝ մի կուլա, թե աղջիկ ծնվեց, ես կխմեմ,- ուրախ ծիծաղեցին, փրկվել էին ստույգ մահից:

Նավակի հատակը քսվեց խճերին, կանգ առավ: Ասողիկն ու Յաբեթնակը թռան ջուրը, նավակը ափ հրեցին: Նրանց միացան Ասողիկի որդիները, նավակը ափ հանեցին:

Ասողիկը, ասես ոչինչ չէր եղել, հանգիստ ասաց տղաներին:

- Կողովները բերեք ծուկը տուն տանենք,- նայեց կնոջը: Մրա աչքերը ճառագում էին, փարվեց ամուսնուն:

- Աչք լույս, Ասողիկ պապ, տղա թոռ ուսեցար,- Ասողիկին թվաց, թե Շողերի աչքերի լույսը լուսավորեց ծովափը:

- Ապրե՞ս, գառնեցի աղջիկ:
- Ջա՞, ասա՞ ապրե՞ս, Ասողի՞կ...

- Ես ասելիքս գիտեմ,- Ասողիկը ժպտաց երջանիկ,- դու ինձ ու ծովափին երջանկություն բերեցիր, գառնեցի աղջիկ,- գրկեց կնոջը,- դու դեռ երեք որդի պիտի պարզ-ես ինձ...

- Ամոթ է, ջա՞ կլսեն, խայտառակ կանեն,- ամուսնու բերանը ձեռքով փակեց Շողերը, իսկ աստվածային աչքերը շողարձակում էին...

- Ասողի՞կ, աչք լո՞յս, ե՞րբ գանք աչքալուսանքի,- հարցրեց Ասատու-

ո՞յ:

- Բա կիարցնե՞ն,- ծիծաղեց Ասողիկը,- հա՛, Յաբեթնա՛կ, չմոռանաս, հետդ մի կուլա ծովի ջուր կբերես, մենք գինի կխմենք, դու ծովի աղի ջուռը...

- Ասողիկ եղբայր, դու տղա թոռներ ունեցիր, Ես ծովն Ել կխմեմ,- հոհոց Յաբեթնակը:

Ասողիկը գրկեց Տիգրանին:

- Ես հարսիս ցավը տանեմ, ապրե՛ք, որդի՛ք:

... Ասողիկը խոսքի տերն էր, խոստացել էր օգնել Տիրանուշին, կատարեց խոստումը, իսկ երբ իմացավ, որ Տիրանուշի ամուսինը սպանվել է, վճռեց Տիրանուշին ընտանիքով բերել ծովափ, իրենց շենքը: Նորից զնաց Տիրանուշենց տուն: Տիգրանը զնաց հոր հետ, այս անգամ եղբայրները հետն էին, ամենքն էլ գինված էին, խումբը ազդեցիկ տեսք ուներ: Ասողիկը հպարտությամբ էր նայում գինվոր դարձած որդիներին:

Ասողիկին տված խոսքն էր առաջնորդում, Տիգրանին՝ սերը: Երբ տեսան Տիրանուշին, հասկացան, շենում մնալը ստույգ մահ էր նրանց համար, շենք ավերակի էր վերածվել: Յանկարծ Ասողիկի աչքն ընկավ Ասողիկին, սա այնպես էր նայում Տիգրանին, որ միտք հղացավ նրանց ամուսնացնել: Վախեցավ, որ Տիգրանը կարող էր հակառակել, զարմացավ, երբ Տիգրանը ամոթխած ժպտաց, տվեց իր համաձայնությունը:

Ասողիկը երջանիկ ծիծաղեց:

- Գառնեցի աղջիկ, որդիդ քո աչքերն Ե ժառանգել, իմ աստվածուիի...

Մյուս օրը քամին դադարեց, բացվեց մի պայծառ առավոտ, ասես ոչինչ էլ չեր եղել, ո՛չ չաղաթայ, ո՛չ ահ ու մահ, ո՛չ թարթառ, սակայն ոչ, Տիրանուշի աչքերում երջանկությունը դժվարությամբ էր տեղավորվում... Ուրախ է դստեր երջանկությամբ, ափսո՛ս, ամուսինը չտեսավ դստեր երջանկությունը:

- Աստված փորձում Է մեզ,- խոսեց Թովման: Զգիտես ինչու, վերջերս շատ էր խորհում մեղքերի ու սպասվող փորձությունների մասին:

Ասողիկը հրավիրեց շենի քահանային՝ Արիստոդոմին, սա տեսնելով Թովմային, հարգանքով խոնարհվեց նրան: Երբ Ասողիկը խնդրեց կնունք կատարել, քահանան հրաժարվեց, ասելով, որ օրեն չէ իրեն այդպիսի եր-ելի հոգ-որի ներկայությամբ ու առանց նրա թույլտվության կնունք կատարել, իսկ երբ Թովման էլ խնդրեց, քահանան կատարեց նրանց խնդրանքը: Թովման տեսավ, որ Արիստոդոմը բավականին խելացի մարդ էր, գիտակ իր գործին:

Կնունքի ժամանակ Թովման հանկարծակի եկավ, երբ Տիգրանը որդուն կոչեց Թովմա: Ասողիկը երջանիկ էր, որդին արդարացնում Է նրա հույսերը:

Թովման համբուրեց Տիգրանին, նայեց Շողերին, սրա աչքերը ճառագում էին, անծանոթ մեկը ապշահար կլիներ, տեսնելով այդ կնոջ աչքերի փայլը, նրա ճառագայթները:

Որքան Ել Թովման հուզված լիներ իրեն արված պատվից, չեր կարող

չնկատել Ասողիկի վիճակը: Սա ներս ու դուրս էր անում, անհանգիստ նայում ծովակին: Նրա աչքերում թովման անըմբռնելի սպասում էր տեսնում: Յարցրեց պատճառը: Սա քորեց ծոծրակը, գրկեց աբեղային, փսփսաց ականջին:

- Ներող եղիր, եղբայր, մեղանչելու եմ Աստծո առաջ,- տեսնելով թովմայի զարմացած հայացքը, շարունակեց,- ի՞նչ է, մոռացել ես ծովափի սովորույթը:

- Շատ ես մոռացկոտ դարձել, հայր սուրբ:

Թովման ավելի զարմացավ, զայրացավ:

- Խենթացա՞ր, մարդ Աստծո:

Ասողիկը մեղմ ու մեղավոր ժպտաց: Թովման գլուխը օրորեց, հիշեց, ծովափին պահպանվել էր Ծովինար աստվածուիու պաշտամունքը: Զցանկացավ խաթարել Ասողիկի ուրախությունը, այսքան ծանր օրերին հաջորդած մի լուսի հյուկե, պարզ- այսքան տքնանքի ու թափված արյան դիմաց...

Ծովի հետ կապված մարդիկ պահպանել էին Ծովինարի պաշտամունքը՝ հեթանոսական արիական պաշտամունքը, որ մարդկանց հոգու մեջ էր ու չէր մոռացվել ու երբեք էլ չի մոռացվի...

Ամենքն էլ դա գիտեին ու աչք էին փակում դրա վրա, հոգ-որներն էլ չեին հալածում:

Շենի բնակիչները հավաքվեցին ծովափին, Ասողիկի անդրանիկ թռան ծնունդը գյուղովի էին տոնում, որպես հարգանքի տուրք Յայոց Գաղտնի Ուխտի գլխավորներից մեկի, ստույգ է, այդ մասին չեին խոսում բարձրածայն, սակայն ամենքն էլ գիտեին, հպարտանում էին համազուղացու հռչակով, իսկ որ այստեղ էր նա- Թովմա աբեղան, Բարդողի Եպիսկոպոսը, այլ-ս ինչ վախ...

Թովման վճռեց չխանգարել խնջույքն ու արարողությունը... Երբ գյուղից դուրս եկավ, ոտևածայներ լսեց, ետ նայեց: Աքիսողում քահանան գալիս էր կրոնկակոյն:

- Գովելի է քայլդ,- ասաց Թովման,- հարկ չկա բռնանալ մարդկանց հոգու վրա, ստիպել մոռանալ անմոռանալին... Եթե Աստծուն հաճո չէ այս սովորույթը, ապա ծովը կփոթորկվեր, կայծակներ կզարկեին, ծովափի ավազը կայրվեր, լեռները շուր կզային գլուխներիս, ծովը դուրս կգար ափերից, իսկ եթե այս ամենը չկա՝ Աստված ընդունում է հոգու ազատությունը: Այն ինչ արվում է հոգու թելադրանքով, բարձրյալի կամքն է...

- Իմաստուն մեկնեցիր, հայր սուրբ, քեզանից շնորհակալ եմ, քանզի բացեցիր աչքերս, միևնէ- օրս չէի կարողանում հաշտվել այս սովորույթի հետ, որ հեթանոսական է, նա- արիական, արդ, ամեն ինչ ընդունելի դարձավ:

- Շնորհակալ եմ, հայր սուրբ, դու մեծ հոգու ուժով մեկնեցիր այս ամենը, Թովման սիրով գրկեց քահանայի ուսը:

- Գևանք, չխանգարենք ծկնորսներին: Գևանք, Աստծուն աղոթենք, մեղյա գանք, կամա, թե ակամա գործած մեղքերի համար...

Այս պահին Ասողիկը կտրեց գառան գլուխը, արյունը հոսեց ջրերի մեջ: Գլխից վեր բարձրացրեց գառան մարմինը.

- Աստվածուիի՛, մա՛յր մեր, մեզ ապրեցնող, մեզ կերակրող: Ընդունի՛ր զոհը քո պատվին,- հավաքվածները ծնկեցին խճերի վրա, ձեռքերը ծովին կարկառեցին...

... Ծովը ճաճանչվե՞ց, թե՞ իրոք իրաշք կատարվեց՝ թվա՞ց, թե՞ իրոք... Ծովը ճեղքվեց, լուսաշող ապարանք եր-աց մարդկանց... Յրաշք էր, իրաշք էր, ապարանքից դուրս եկավ պերճաշուք Ծովինար Աստվածուիին, ջրերի վրայով ափ քայլեց, մարդիկ ապշահար երկրպագեցին Աստվածուին...

Ծովինարը շողարձակում էր ոսկյա ձկնափուլ զգեստներով, նրա ոսկեգույն վարսերը լույս էին ճառագում: Նա հայացքով զգվում էր մարդկանց: Ամեն ոք հոգում լսում էր Աստվածուին, խոսում հետը, իր վրա զգում նրա շոյող մայրական հայացքը:

- Զկնորս Ասողիկ, դու պատվով ես ծառայում ժողովրդիդ, արժանի այր ես: Մենք քեզ մեծ պատվի կարժանացնենք, զի ազնիվ ես ու բարի: Մենք անհիշելի ժամանակներից արարվել ենք Յայարիների կողմից, արիական աստվածարար Յայարիների կողմից, իսկ դուք այսօր հայերդ մոռացել եք ձեր աստվածներին, հեթանոս - արիական աստվածներին: Սա է պատճառը ձեր նվաստացման, սակայն դուք՝ Ծովափի բնակիչներդ, սակավ է ձեր մեղքը, զի ձեր Մորը չեք մոռացել: Մենք կպաշտպանենք ձեզ օտարներից, կպաշտպանենք ձեր իսկ ձեռքով: Ավսոս, որ հայերդ մոռացաք Ձեր Յայ Աստվածներին ու երկրպագեցիք օտար աստծուն: Դուք, որ մեր աշակցությամբ հզոր էիք մարտում, երջանիկ սիրո մեջ, օտար Աստծուն երկրպագելով ուժազրկվեցիք, դա է պատճառը ձեր բազում դժբախտությունների այսօր, վաղը, հիշեք սա: Դուք ուրացաք մեզ, դա է պատիժը ուխտադրժության...

Արդ, հայտնում ենք ձեզ՝ դարձյալ արիավիրք է բարձրանում Յայոց Սուրբ Լեռնաշխարհի վրա, դո՛ւ, Ասողիկ, չես մոռացել մեզ: Մենք քեզ ուղարկեցինք աստվածներից սերված գառնեցի աղջկան, աստվածային մեր քրոջը... Մի ճգտիր ավելիին, քան ուսես: Դու երջանիկ ես գառնեցի աղջկա հետ,- Աստվածուիին մի պահ լրեց, հանկարծ աչքերի մեջ կայծակներ զարկեցին, նրա թիկունքին ալիքները ծառացան, ար-ոտ օրվա երկնքում կայծակներ զարկեցին, երկինքը որոտաց:

- Յայե՛ր, որդի՛ք, դարձյալ արիավիրք է գալիս, մի՛ մոռացեք, որ Յայ աստվածները սատարում են հզորներին ու միաբաններին...

Ծառացած ալիքները մեկն փլվեցին, ծովը խաղաղվեց, լաշվարդ կապեց ջուրն ու շրջապատը: Աստվածուիին սկսեց հեռանալ, իրաշողքը սկսեց իշնել ջրերի մեջ, ահա Աստվածուիին ապարանք մտավ, իրաշողքը մարեց, ջրերը որոտմունքով իրար եկան, ասես ոչինչ էլ չեր եղել...

... իսկ եթե այս ամենը միայն իրաշք էր, իսկ եթե թվացե՞լ էր...

Ասողիկը ծնկեց խճերի վրա: Նրան հետ-եցին հավաքվածները:

Ի՞նչ եղավ, ինչի՞ ականատես եղանք, ո՞վ իրաշքներ արարող Յայոց

Աստվածներ, մի՞թե դարձյալ արհավիրք եք գուշում...

Հառնե՛ք Հայարիներ, ելեք մաքառման...

